

9(47.325)

7-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՐԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մասնաճյուղի անվան համալսարանի քոլեջում

ՎԱՐԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՐԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՎԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՐԴԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈՒ

4023



Ե Ր Ե Վ Ա Ն

Գեղինակային հրատարակություն
2008

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(27)+63.3(0)

Բ 260

Խմբագիր՝ պրոֆեսոր Ռուբեն Սահրաստյան

Վ. Բայբուրտյան

Բ 260 Քրդերը, հայկական հարցը եվ հայ-քրդական հարաբերու-
թյունները պատմության լույսի ներքո.- Եր.: Հեղինակային
հրատարակություն, 2008.- 420 էջ:

Գրքում քննարկման է ենթարկվում նոր և նորագույն շրջանում
Օսմանյան կայսրության, իսկ ապա Հանրապետական Թուրքիայի
կազմում բնակչության մի ստվար զանգված կազմած քուրդ ժողովրդի
քաղաքական և տնտեսական պատմության դրվագները, հայ-քրդական
հարաբերությունների զարգացումները, դրանց վերելքներն ու
վայրէջքները: Համակողմանի կերպով քննարկվում են նաև հայկական և
քրդական հարցերի արժարժանները միջազգային դիվանագիտության
ատյաններում, ինչպես նաև երկու դրացի ժողովուրդների քաղաքական
պատմության աղբյուրները վերջին մի քանի դարերի ընթացքում: Ընդ
որում, Հայկական հարցը շոշափվում է լոկ այնքանով, որքանով որ այն
առնչվում է քրդական խնդրի հետ: Ցույց է տրվում, որ այսպես կոչված
«քրդական գործոնը» բացասաբար է անդրադարձել Հայկական հարցի
զարգացումների վրա, հանդիսանալով նաև հայ ազատագրական
շարժման ձախողման պատճառներից մեկը:

ԳՄԴ 63.3(27)+63.3(0)

ISBN 978-9939-53-136-6

© Բայբուրտյան Վ., 2008

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

VAHAN BAIBOURTIAN

THE KURDS, THE ARMENIAN QUESTION AND HISTORY OF
THE ARMENIAN-KURDISH RELATIONS IN THE CONTEXT
OF INTERNATIONAL DIPLOMACY

YEREVAN 2008

Գիրքը ծնունդ է առել
«Վարդանանց ասպետներ»-ի հովանավորությամբ

Տպագրությունը իրականացվել է
«Թեքեյան մշակութային միության» կողմից
մատենաշար թիվ 11

Մեկենասներ՝

Փանիկ Քեշիշյան

Վահե Իմաստունյան

Թորոս Եթենեկյան

The book came into being upon research grant
awarded by
the Knights of Vartan

Published by
Tekeyan Cultural Association

Sponsors:

Panig Keshishian

Vahe Imastunian

Toros Yetenegian

Մ Ո Ւ Տ Ք Ի Խ Ո Ս Ք

Քրդերը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական խմբին: Նրանց ծագումը (եթնոգենեզը) մինչև օրս դեռևս հանդիսանում է գիտական չպարզաբանված խնդիր:¹ Ստույգ հայտնի չէ նաև նրանց նախահայրենիքը: Առայժմ պատասխան չունի նաև այն հարցը, թե ե՞րբ, ո՞ր դարից սկսած քրդերը մուտք են գործել պատմության ասպարեզ, ե՞րբ են հաստատվել Մերձավոր ու Միջին Արևելքի այն տարածքներում, որոնք ներկայումս ընդունված է անվանել «Քրդստան», ի՞նչ կրոն են դավանել նրանք մինչև իսլամի ընդունումը, վերջապես որտեղի՞ց է ծագել «քուրդ» ինքնանվանումը (հոգնակին «աքրադ»):

Գրականության մեջ «Քրդստան» հասկացությունը գործածվել է մեր օրերում էլ գործածվում է ոչ որպես քաղաքական սահմաններ ունեցող պետական կազմավորման իմաստով, այլ որպես աշխարհագրական մի տարածք, ուր բնակվել է քրդական էթնոսը: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ քուրդ ժողովրդին, իր անցած պատմական զարգացման ընթացքում, ոչ մի անգամ չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն: Ուստի Քրդստանի տարածական չափերը տարբեր ժամանակներում նկատի են առնվել տարբեր մոտեցումներով: Հենց այդ պատճառով պատմագիտության մեջ «Քրդստան» կամ «Քուրդիստան» անվանումը օգտագործվում է սոսկ ազգագրական և աշխարհագրական իմաստով (Իրանի կամ Իրանական Քրդստան, Իրաքյան Քրդստան, Թուրքական Քրդստան), որովհետև երբեք գոյություն չի ունեցել նման անվամբ քաղաքական միավոր: Հետևաբար նաև Քրդստան տերմինը զուտ պայմանական է և ժամանակի ու տարածության մեջ մշտապես ենթարկվել է փոփոխության:

Արաբ հեղինակների աշխատություններում որոշ տեղեկություններ են պարունակվում Օմայան և Աբբասյան խալիֆայությունների կազմում բնակվող քրդերի մասին:² Արաբները հաճախ նրանց անվանում էին Ազ-Ձավձան (քրդերեն «զոզան» բառից, որ նշանակում է «ամառային արոտավայր»): Նրանց մոտ հաճախ օգտագործվում է նաև ալ-Ջիբալ ալ-Աքրադ բառակապակցությունը, որը նշանակում է «քրդերի» կամ «քրդական լեռներ»:³ «Ջիբալը» «ջաբալ», այսինքն լեռ բառի հոգնակին է: Այդ անունով արաբական խալիֆայությունում կոչվում էր վարչա-աշխարհագրական այն միավորը, որի կազմի մեջ մտնում էին Իրանի հարավարևմտյան շրջանները (այսպես կոչված «Պարսկական Իրաքը») և պատմական Մարաստանի մի մասը:

Հավաստի հայտնի է, որ երբ արաբական արշավանքների ժամանակ խալիֆի բանակը 640 թ. գրավեց Յուսիսային Միջագետքի Թաքրիտ, Չոլվան և Սոսուլ քաղաքներն ու նրանց շրջակա տարածքները, այնտեղ արդեն առկա էր հոծ քուրդ բնակչություն: Ենթադրվում է, որ հենց այդ ժամանակ (VII դ. 30-ական թվականներին) արաբների կողմից բռնի կերպով իսլամը պարտադրվել է քրդերին:⁴ Սակայն քրդերի զանգվածային իսլամականացման գործընթացը, հավանաբար, սկսվել է միայն IX դարից:

Միջնադարում քրդական ցեղերի բնակության հիմնական վայրեր են եղել Սոսուլը, Ջեզիրեն, Ջիբալը, Խուզիստանը (հայկական աղբյուրներում «խուժաստան», (գտնվում է Իրանի հարավ-արևմուտքում), Լուրիսթանը և Ֆարսը (Իրանի տարածքում):⁵

Ըստ Նիկողայոս Աղոնցի, պատմական Քրդստանի տարածքը ընդգրկում է հետևյալ հողերը՝ Ջագրոսի լեռնաշղթայի լայնածավալ բարձրավանդակը՝ Ուրմիա լճից և Բոհրան գետից համարյա մինչև Լուրիսթանի տափարակները և երկու կողմից նրան հարող արևմուտքից Տիգրիսի և արևելքից Դիզֆուլի գետահովիտները: Այս տարածքի մեջ են մտնում Սոուջուլաղի մարզը, Արդեշանը և Դիզֆուլ գետի ավազանը մինչև պարսկական Արաքստան, ինչպես նաև Յուսիսային Միջագետքը կամ Սոսուլի վիլայեթը:⁶ Քրդստանի համար նման սահմաններ գծելիս Ն. Աղոնցը առաջնորդվում է ոչ միայն տվյալ տարածքային միավորում տիրապետող էթնիկական բնույթով, այլև նրա պատմամշակութային էությամբ և տնտեսական ամբողջականությամբ: «Նշված սահմաններում են պարփակվում, - գրում է նա, - քրդերով, նրանց ազգակից լեռնական ցեղերով, որոնք գերազանցապես իրանական ծագում ունեն, բնակեցված հողերը: Աշխարհագրական առումով ամբողջական այդ տարածքը լիովին համապատասխանում է նրա բնակիչների հովվական-քոչվորական կենսաձևին: Ջագրոսի ալպերը իրենց գեղատեսիլ գահավանդակներով, որոնք ցածրանում են դեպի հիշյալ գետերի հովիտները, հնագույն ժամանակներից իրանական հովվական ցեղերի բնակավայր էին»:⁷

X դարում ձևավորվում են քրդական ծագում ունեցող մի շարք տեղական հարստություններ՝ Սարվանյան (Դիարբեքիր-Ջեզիրե), Հասանվահիտյան (Դայնավար և Շահրեզուր), Ֆադլույան (Լուրիսթան), Էյուբյան (Սիրիա), Շեդդադյան և այլն: Այս պետական կազմավորումները տիրապետում էին լայնածավալ երկրամասերի, սակայն անտեսելով սեփական ազգային պետության ստեղծումը:

Քրդերը հանդիսացել են միջնադարյան վայրիվերումների, արյունահեղ պատերազմների, ապստամբությունների և այլն գործուն մասնակիցներ: Նրանք աստիճանաբար տարածվել են ողջ Մերձավոր ու Միջին

Արևելքով մեկ՝ նույնիսկ հասնելով մինչև Եգիպտոս և Ալժիր: Եգիպտոսի սուլթանները քրդերին օգտագործել են մոնղոլների դեմ պայքարելու համար:

«Քրդստան» և «քրդեր» բառերը առաջին անգամ մտել են շրջանառության մեջ XII դարում, սելջուկների տիրապետության շրջանում: Գրական աղբյուրներում քրդեր անվանումը առաջին անգամ հիշատակվում է ավելի ուշ՝ Ռաշիդադդին Ֆազլալլահ Համադանիի «Ջավան աթ-թամրիխ»-ում և Համդալլահ Մոսթուֆի Ղազվինիի «Նուհզաթ ալ-քուլուբ» աշխատության մեջ⁸, որպես վաչկատուն և խաշնարած ցեղեր: Արաբական միջնադարյան հեղինակները «քուրդ» ցեղանունը հաճախ օգտագործում են «Թափառակենցաղ խաշնարած» իմաստով:⁹

Նոր ժամանակներում, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, Քրդստան հասկացությունն ընդգրկող տարածքը հիմնականում բաժանված էր Օսմանյան կայսրության և Ղաջարական Իրանի միջև: Աշխարհամարտի ավարտից հետո Մերձավոր և Միջին Արևելքի քրդաբնակ տարածքները մտան Թուրքիայի, Իրանի և նորաստեղծ պետությունների՝ Իրաքի և մասամբ Սիրիայի կազմի մեջ: Նշված ժամանակներից սկսած պատմական գրականության մեջ կարելի է հանդիպել «Իրանական Քրդստան», «Իրաքյան Քրդստան» և «Թուրքական Քրդստան» տերմիններին, թեև դրանից առաջ էլ գործածական է եղել (պայմանական իմաստով) նշված հասկացությունները: Դրա տակ պետք է հասկանալ այն իրողությունը, որ քուրդ ժողովուրդը ցրված է Մերձավոր ու Միջին Արևելքի վիթխարի տարածքներում և պետական սահմաններով իրարից մասնատված ու բաժանված ապրում է Իրանի, Իրաքի, Թուրքիայի, ինչպես նաև Սիրիայի տարածքներում: Ներկայումս բացի նշված պետություններից, որոշակի թվով քրդեր կան նաև Հարավային Կովկասում, Ռուսաստանի Դաշնությունում, Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետություններում, եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և այլուր:

Այն, որ իրենց բազմադարյան պատմության ընթացքում քրդերին երբեք չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն, անշուշտ դրան խանգարել է նրանց տարաբաժանումն ու ցրվածությունը տարբեր պետությունների միջև, որն անկասկած արգելք է հանդիսացել այդ ժողովրդի քաղաքական ու ազգային համախմբման համար: Դրա կարևորագույն պատճառներից մեկը հանդիսացել է այն, որ տևական ժամանակ, ընդհուպ մինչև XX դարը, այդ ժողովրդի մոտ մթագնված էր ազգային միասնության ու ընդհանրության գիտակցությունը: Նրանց մոտ ցեղային կազմակերպության առկայության պատճառով հավաքական անկախության գաղափարը ընդհանուր մտահոգության առարկա չի հանդիսացել և վերջնական իդեալ է եղել ցեղապետական անկախությունը: Քրդերի մոտ

եղած «ծայրահեղ անկախության զգացումը,– գրում է քրդական հարցի գիտակ Կարո Սասունին,– դարերու ընթացքին քաղաքական ձև չէ ստացած, և քյուրտերը չեն մղված ազգային պետություն մը կերտելու և հավաքական հայրենիքի մեջ փնտրելու իրենց ապահովությունն ու անկախությունը»:⁹ Իհարկե, տարբեր ժամանակներում Մերձավոր Արևելքի տարբեր վայրերում նրանք կարողացել են ստեղծել փոքր կամ մեծ ավատական իշխանություններ, որոնք, սակայն, չի կարելի դասել ազգային անփոփ պետություն հասկացության շարքը:

Չարկ է նշել, որ հաճախ «Թուրքական Քրդստան» հասկացության տակ կամայական և բռնազբոսիկ կերպով մտցվում է նաև ողջ Արևմտյան Չայաստանի տարածքը, թեև «Թուրքական Քրդստանը» աշխարհագրական առումով, միանգամայն առանձին տարածք է: Արևմտյան Չայաստանը Քրդստան անվանելու և այն շրջանառության մեջ մտցնելու քայլը անշուշտ իր մեջ պարունակում է զուտ քաղաքական ենթատեքստ: Այդ երևույթը սկզբնավորվում է դեռևս XIX դարի կեսերից, երբ առաջնորդվելով իրենց որդեգրած հակահայ քաղաքականության շահերով, թուրքական կառավարող շրջանները, որոնք մինչ այդ Արևմտյան Չայաստանը կոչում էին «Էրմենիստան» և նույնիսկ «Էրմենիստանի քեբիր» («Մեծ Չայաստան»), այդ երկրամասը սկսեցին անվանել Քրդստան:

Բրիտանական քաղաքագետները, որոնք մտահոգված էին արևմտահայության ռուսասիրական ձգտումների հարաճուն վերելքից և իրենց մերձավորարևելյան քաղաքականության հիմնական սկզբունքն էին հայտարարել Օսմանյան կայսրության ստատուս-քվոյի պահպանումը, հաճույքով ընդօրինակեցին թուրքական դիվանագիտության կամայական այդ հնարքը: Չենց որ Անգլիան վերջնականապես համոզվեց, որ հայերի ռուսական կողմնորոշումն այլևս անշրջելի է, նա «իր օգնությունն ու համակրանքն ուղղեց դեպի քրդերը՝ ի հակադրություն հայերի, որոնց դիտում էր որպես Ռուսաստանի դաշնակիցներ և համախոհներ»,– գրում է Ն. Ադոնցը:¹⁰ Ռուսաստանի դեմ պատվար ստեղծելու նպատակով Քրդստանը քաղաքական օրգանիզմ դարձնելու գաղափարը պատկանում է անգլիական հյուպատոս Փայզրեյվին:¹¹

Այսպիսով, բրիտանական արտաքին գործոց նախարարության ֆորին օֆիսի պաշտոնական փաստաթղթերում, դիվանագիտական գրականության մեջ և այլև Արևմտյան Չայաստանը սկսեցին կոչել Քրդստան, իսկ Էրզրումի իրենց հյուպատոսին անվանեցին «Քրդստանի հյուպատոս»:¹² Անշուշտ հայերի համար զարմանալի էր տեսնել, թե ինչպես թուրքական հայեցակետը Չայաստանի նկատմամբ հավանություն էր գտնում անգլիացիների շրջանում: (Ուստի 1879 թ. նրանք ստիպված եղան Կոստանդնուպոլսում իրենց պատրիարք՝ Ներսես Վարժապետյանի միջոցով

բարձրաձայն բողոքել այդպիսի անբարյացական քայլի դեմ: Սակայն դրանից հետո ևս թուրքական կառավարող շրջանները պատասխանատու փաստաթղթերում Չայաստանն անվանում էին կամ «Քրդստան» և կամ «Արևելաանատոլիական մարզեր», իսկ հաճախ նաև «Արևելյան նահանգներ» («վելայաթ-ի շարքին»):

Միաժամանակ թուրքական կառավարության կողմից ընթանում էր «եռանդուն և ծրագրավորված աշխատանք, որպեսզի Չայաստանի նոր անվանման տակ դրվի համապատասխան եթնիկական շերտ, կամ ուժեղացնել առկա օտար տարրը: Դրան հասնում էին փորձված միջոցառումներով՝ բնիկ հայ ազգաբնակչության կոտորածով, նրա արտաքսմամբ, հողերի բռնի զավթումով և նրանց հայրենի օջախներում քրդերի և ուրիշ ցեղերի բնակեցմամբ, որոնք հաճախ բերվում էին հեռավոր վայրերից»:¹²

Արտառոցը սակայն այն էր, որ ռուսները ևս, ընդօրինակելով իրենց քաղաքական ախտյանին ու մրցակցին՝ Մեծ Բրիտանիային, աստիճանաբար իրենց դիվանագիտական գրագրության մեջ Արևմտյան Չայաստանը սկսեցին անվանել «Թուրքական Քրդստան», կամ պարզապես «Քրդստան»: Նույնիսկ հայտնվեցին ռուսական զինվորական և սովորական աշխարհագրական քարտեզներ, որոնցում Չայակական բարձրավանդակը նշվում էր որպես «Քրդական բարձրավանդակ»: Ընդ որում, Էրզրումի գոտին անվանվում էր Չյուսիսային իսկ Բիթլիս-Վանը՝ Չարավային Քրդստան: «Ռուսներից մի քանիսը այնքան հեռուն էին գնացել,– գրում է Ն. Ադոնցը,– որ անգամ պնդում էին, թե քրդերն են Չայաստանի իսկական բնիկները, և որ Չայաստանը միշտ էլ եղել է քրդերի երկիրը»:¹³ Անվանի գիտնականը իրավացիորեն գտնում է, որ Ռուսաստանի նման դիրքորոշումը առավել անհասկանալի է, «քանի որ նա ինքն էր Չայաստանի նկատմամբ Անգլիայի կասկածամտության պատճառը: Չայաստանում իր դիրքերն ամրապնդելու փոխարեն նա հանդես էր գալիս որպես Անգլիայի մրցակից՝ քրդասեր քաղաքականության մեջ»:¹⁴ Ն. Ադոնցի կարծիքով, ռուս քաղաքական գործիչները ակնհայտորեն հույսը դրել էին Անգլիային քրդերի աջակցությունից զրկելու վրա:

Միանգամայն ակներև է, որ հայ ժողովրդի բնօրրանի նկատմամբ այդ վտանգավոր խաղերը հանդիսանում էին մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ճակատագիրը որոշող մեծ պետությունների հեռահար ծրագրերի դրսևորումը: Չիրավի, XIX դարի կեսերին աշխարհի այդ պայթյունավտանգ շրջանում ստեղծված քաղաքական իրողությունները դրսևորվել էին մի այնպիսի ձևով, որ շատերին էր հաճելի «փոխադրել քրդական հարցը հայկական սարահարթ և այստեղ փնտրել նրա լուծումը: Որոշ շրջանակներում կարծիք գոյություն ունի՝ այժմ շատ տարածված, ըստ որի քրդական հարցը համարվում է անխաղիչորեն կապված

հայկական դատին, ավելին, ոմանք հակված են նրան գերակշիռ նշանակություն տալ հայոց հայրենիքում: Հայաստանը Քրդստանի վերածելու տխուր ջանքերում մտերմացել են հայության բշնամիներն ու բարեկամները: Եթե թուրքական քաղաքագետները դարեր շարունակ ջանում էին լցնել Հայաստանը քրդերով և վերածել էրմենիստանը Քրդստանի, ապա դա դեռ հասկանալի է. բայց որ հայկական հողերի նման փոխակերպմանը զաղտնի կամ բացահայտ համակիր լինեին եվրոպական տերություններից նրանք, որոնք կոչված էին պաշտպանել հայերին թուրքական բռնության դեմ, դա պետք է սրտխառնուք առաջացնի իր անբարոյակամությանը»,- գրում է Ն. Ադոնցը:¹⁵

Մեր օրերում ևս, տարբեր երկրներում գործող քուրդ որոշ ազգայնամուլներ, որոնք տարված են պատմության կեղծարարությամբ, կամ կատարում են ինչ-ինչ քաղաքական պատվերներ, իրենց մտավարժանքների արգասիքը հանդիսացող գրքերում, քարոզչական բնույթի հրատարակություններում և նույնիսկ քարտեզներում, առանց այլևայլության Արևմտյան Հայաստանը անվանում են «Թուրքական Քրդստան», կամ պարզապես «Քրդստան»: Իրենց այդ արարքը նրանք փորձում են առավելապես «հիմնավորել» նրանով, որ ներկայումս Արևմտյան Հայաստանի տարածքում հայեր չկան և այդ տարածքը գերազանցապես բնակեցված է քրդերով: Այսպիսով, միանգամայն անտեսվում է այն իրողությունը, որ հայ ժողովրդի պատմական բնօրրանը իսպառ հայաթափ է եղել ցեղասպանության մորիկի հետևանքով: Սա դեռ բոլորը չէ: Քաղաքական արկածախնդրությունը իրենց գործունեության հիմք դարձրած ազգայնամուլ քուրդ գործիչները Արևմտյան Հայաստանում «քրդականության» արմատները տանում են դեպի այնպիսի խորը հնություն, որի վերաբերյալ առհասարակ գոյություն չունեն հավաստի տվյալներ:¹⁶ Իրենց պատմաբան հորջորջող այդ մարդիկ, առանց փաստարկների ու գիտական հիմնավորումների, զուտ կամայական ձևով, հաճախ իրենց անգիտությունը հասցնելով զավեշտի աստիճանի, ոգի ի բռին փորձում են «ապացուցել», որ Արևմտյան Հայաստանում քրդերը տեղաբնիկներ են (ավտոխտոն բնակչություն), որ նրանց պատմական կյանքը այդ տարածքում սկսվել է անհիշելի ժամանակներից և Հայաստանը հնուց ի վեր եղել է քրդերի բնակեցման վայր և այլն: Անտարակույս դրա ենթատեքստը զուտ քաղաքական է և օբյեկտիվ իրականության հետ ոչ մի առնչություն չունի: Պարզապես «այդ բոլորն արվում է միայն այն բանի համար, որպեսզի հիմնավորվի քրդերի իրավունքը Հայկական լեռնաշխարհի վրա հայերի հետ համահավասար»:¹⁷

Իրականում ընդհուպ մինչև ուշ միջնադարը, Արևմտյան Հայաստանում զանգվածային ձևով քուրդ բնակչություն գոյություն չի ունեցել:

Նշված տարածքում քրդական հոծ էթնիկական տարրի առկայության մասին տեղեկություններ չկան ինչպես օտար, այնպես էլ հայկական աղբյուրներում:

Հայաստանի և առհասարակ Առաջավոր Ասիայի միջնադարյան պատմության փայլուն գիտակ Նիկողայոս Ադոնցը իր գիտական պրպտումների ընթացքում Հայկական բարձրավանդակում չգտնելով քրդական ազդու հետք, աներկբայորեն հանգել է հետևյալ եզրակացության. «Քրդերը Հայաստանում ապրում են ամենևին էլ ոչ անհիշելի ժամանակներից, ինչպես որ սովորաբար պնդում են քիչ իրազեկ անձիք, երկրամասի պատահական այցելուները, մեծ մասամբ զանազան տերությունների քաղաքական գործակալները»:¹⁸ Մեկ այլ առիթով նա գրում է. «Քրդերը չեն ապրել Հայաստանում անհիշելի ժամանակներից, այլ տեղափոխվել են այստեղ թուրքական կառավարող շրջանների կողմից»:¹⁹ Իհարկե, չի բացառվում, որ VII դարում, արաբական արշավանքների շրջանում, արաբների նոր կրոնը՝ իսլամը ընդունած քրդական մի քանի ցեղեր, արշավող բանակների հետ մուտք գործած լինեն Արևմտյան Հայաստան, հաստատվելով նրա հարավային շրջանների առանձին վայրերում: Աղբյուրների վկայությամբ, XI-XIII դարերում, սելջուկյան և մոնղոլական արշավանքների ժամանակ, քրդական ավազանու մի մասը, ծառայության մեջ մտնելով նրանց մոտ, Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում հողային տիրույթներ ստացավ՝ փորձելով զրավված այդ հողերում ստեղծել ցեղային անկախ կամ կիսանկախ միավորումներ: Դրանցից էին, օրինակ, Բիթլիսի, Ախլաթի, Սասունի, Չմշկածագի և այլ վայրերում հաստատված քրդական ցեղային միությունները:

XIV-XV դարերում ևս նկատվել է քրդերի որոշ շարժում Տավրոսից հյուսիս դեպի Արևմտյան Հայաստան: Այսպիսով, «բացառությամբ Վանի և Բիթլիսի (քրդական Վ. Բ.) իշխող տների, որոնք գալիս են Թեմուրի ժամանակներից, մնացյալ քրդական տիրույթները Հայաստանի նշված շրջաններում էփրատի երկայնքով և Տիգրիսի ակունքներում առաջացել են թուրք-պարսկական պատերազմների ժամանակ XV և XVI դարերի սահմանագծին»:²⁰

Ինչպես հայտնի է, XVI դարի դարի հենց արշալույսին քաղաքական ասպարեզ իջավ մի նոր հզոր ուժ՝ Սեֆյանների (Սեֆևիների) իրանական տերությունը, որը ծնունդ առնելուց անմիջապես հետո դարձավ ռազմաավատական Օսմանյան կայսրության ախոյանը: Այդ նոր պետության հրապարակ իջնելով Մերձավոր Արևելքում հիմնավորապես փոխվելու էր պատմության ընթացքը, առավել ևս, որ սեֆյաններն անհապաղ ձեռնամուխ եղան Օսմանյան Թուրքիայի նկատմամբ ծավալապաշտական քաղաքականության իրականացման:

Ի սկզբանե Իրանի նոր տիրակալի շահ Իսմայիլ I-ի (1502–1524) քրդական քաղաքականությունն աչքի էր ընկնում կրոնական ու քաղաքական ծայրահեղ անհանդուրժողականությամբ: Պետք է նկատի ունենալ, որ նշված դարաշրջանում Իրանի տարածքում (Իրանական Քրդստանում) բնակվում էր քրդական տարբեր ցեղերի ու ցեղախմբերի մի խոշոր զանգված, որն ապրում էր վաչկատուն ցեղերին բնորոշ ինքնագլուխ կյանքով և չէր ճանաչում որևէ պետական իշխանություն: Շահ Իսմայիլը, որը ծագում էր ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն, բնականաբար չէր կարող հանդուրժել այդ իրողությունը: Բացի այդ, իսլամի շիա ուղղությունը պետական կրոն հռչակած շահին նաև անհանգստացնում էր քրդերի դավանակցությունը թուրք-սուննիների հետ: Ուստի նա սկսեց քրդերին բռնությամբ պարտադրել շիականությունը, այդ ճանապարհով միաժամանակ նպատակ ունենալով նրանց ենթարկել սեֆյան պետականությանն ու օրենքին: Շահի քրդահալած քաղաքականությունը իր էությամբ վերին աստիճանի բազմաբովանդակ ու ծավալուն էր: Ենթադրվում էր իր ենթակայության տակ գտնվող քրդական անկախ ու կիսանկախ բոլոր իշխանությունները վարչականորեն ենթարկել իր պետությանը, վերացնել քրդական ցեղային ավագանուն, նրանց տիրույթները հանձնել իր դրածոներին կամ, ծայրահեղ դեպքում, քրդական առաջնորդներին վերածել հլու ղզլբաշների: Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ քրդերը համակվեցին շահ Իսմայիլին դիմադրելու անկոտրում վճռականությամբ:²¹ Միաժամանակ թե՛ Իրանի և թե՛ Թուրքիայի քրդերը սկսեցին հակվել դեպի Օսմանյան կայսրությունը, հանձին նրա՝ պաշտպանություն փնտրելով շահ Իսմայիլի հալածանքներից:

Օսմանյան պետությունը չհապաղեց օգտվել սեֆյանների նկատմամբ քրդերի թշնամական տրամադրություններից: Հակառակ շահ Իսմայիլի, որը քրդական բեյերին վճռում էր նրանց հողային տիրույթներից, թուրքերը, ընդհակառակը, բաշխում էին հողեր՝ աշխատելով նրանցից պարսիկների համար ստեղծել թշնամի ուժ: Այդ շրջանում հանձին Սեֆյան պետության՝ օսմանցիները տեսնում էին մի ուժ, որը ոչ միայն ի վիճակի էր կաշկանդելու իրենց հարձակողական եռանդը, այլև կարող էր լուրջ արգելք հանդիսանալ Եփրատից արևելք կայսրության ծավալման ճանապարհին:

Երկու հարևանների թշնամական հարաբերությունների գլխավոր պատճառներից մեկը Հայաստանն էր՝ շնորհիվ ռազմաստրատեգիական իր կարևոր դիրքի: Առավել ևս, որ Հայկական լեռնաշխարհը «հառնում է Միջագետքի հարթավայրի վրա» (Ն. Ադոնց): Լեռնի արտահայտությամբ Օսմանյան պետությունն անկարող էր թողնել Հայկական բարձրավանդակը Պարսկաստանի ձեռքին, որովհետև այդ կնշանակեր արգելել թուրքե-

րի շարժումները Միջագետքի և Սիրիայի շրջաններում և մշտական վտանգի մեջ պահել նույնիսկ բնիկ օսմանյան հայրենիք Փոքր Ասիան և Միջերկրական ու Սև ծովի ափերը»:²²

1507 թ. նախահարձակ լինելով, շահ Իսմայիլը գրավեց Արևմտյան Հայաստանի զգալի մասը, հասնելով մինչև Բաբերդ (Բայբուրդ) և Երզնկա (Երզնիցյան): Այնուհետև 1508 թ. նա նվաճեց Արաբական Իրաքը՝ Բաղդադ քաղաքով հանդերձ, որը միջագային քարավանային առևտրի կարևորագույն հանգույցներից մեկն էր: Սեֆյանները թուրք-օսմանցիների նկատմամբ իրենց նվաճողական քաղաքականությունն իրագործում էին «պատերազմ հանուն հավատի» նշանաբանի ներքո, որը մեծ արծազանք էր գտնում սուլթանների կենտրոնածիզ քաղաքականությունից դժգոհ Անատոլիայի թուրք բնակչության մի մասի և հատկապես շիա դավանանքին հետևող թուրքմենական ցեղերի մոտ: Շահը իր դերվիշ գործակալների միջոցով Փոքր Ասիայում մղում էր եռանդուն կրոնական քարոզչություն, որի ազդեցությամբ ամենուրեք ստեղծվում էին ռազմաշունչ ոգով տոգորված ղզլբաշական գաղտնի կազմակերպություններ: Թուրքերի համար այս ամենը դարձավ խիստ վտանգավոր հատկապես այն բանից հետո, երբ 1511 թ. Փոքր Ասիայում բռնկվեց հզոր ապստամբություն՝ շահ Իսմայիլին աջակցելու նշանաբանի ներքո:

Օսմանյան գահը ստանձնած սուլթան Սելիմ I Յավուզը (1512–1520), որը «Մեկ պետություն, մեկ ազգ և մեկ կրոն» նշանաբանով ծրագրել էր ստեղծել միասնական ուղղադավան (սուննի) մահմեդական աշխարհ, դեպի արևելք ծավալվելու իր քաղաքականության կարգախոսը դարձրեց սուննիականության պաշտպանությունը հերետիկոս հորջորջված շիաների դեմ: Դրանով իսկ Օսմանյան կայսրությունում ստեղծվեց Իրանի դեմ պատերազմների կրոնական վարկած՝ «ղզլբաշների կողմից ոտնահարված և սրբապղծված» հավատի վերականգնման անվան տակ: Պատերազմը կրոնական մոլեռանդության հունով տանելու և միաժամանակ Անատոլիայի շիաների ապստամբություններն իր թիկունքում բացառելու նպատակով, սուլթան Սելիմ I Յավուզը դաժան հաշվեհարդար տեսավ Փոքր Ասիայում շահ Իսմայիլի կողմնակիցների հետ՝ նախապես կազմված ցուցակներով անխնա սրի քաշելով ավելի քան քառասունհինգ հազար մարդու:²³ Ոչնչացվեց յոթից մինչև յոթանասուն տարեկան ողջ շիա բնակչությունը: Այդ դաժան գործողությունը նպատակ ուներ նաև շիաներից մաքրել Իրանի հետ սահմանակից նահանգները, որոնց վրայով Սելիմը մտադիր էր իր զորքերը շարժել շահի դեմ:

Իրականում Մերձավոր և Միջին Արևելքի ռազմավարական և աստվածապետական այս երկու հզորագույն պետությունները հետապն-

դում էին միանգամայն հստակ քաղաքական – ծավալապաշտական և տնտեսական նպատակներ:

Թուրք – իրանական թշնամական առճակատումն անխուսափելիորեն իր ջրապատույտի մեջ առավ մի շարք ժողովուրդների: Պատերազմի նախապատրաստվող կողմերը մեծ եռանդով աշխատում էին կողմնակիցներ ձեռք բերել ռազմական ընդհարումների հավանական թատերաբեմի ժողովուրդների շրջանից: Մասնավորապես թուրքական քաղաքականության նպատակը դարձավ դավանակից (սուննի) քրդական ռազմաշունչ ցեղերի ներգրավումը իրենց կողմը: Սուլթանն առատ խոստումներ էր տալիս ցեղային առաջնորդներին՝ նրանց հողային տիրույթներ շնորհելու, վաղեմի իրավունքներն ու սովորույթները ամբողջությամբ պահպանելու և նոր շնորհներ ու արտոնություններ պարգևելու: Դրա արդյունքը եղավ այն, որ Իրանի և Արաբական Միջագետքի քրդերը, դժգոհ լինելով շահ Իսմայիլի քրդահալած քաղաքականությունից, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական նկատառումներով արդեն պատրաստ էին առաջիկա պատերազմում օգնելու սուլթանին և այդ ճանապարհով վերականգնելու իրենց անկախ գոյությունը:²⁴ Ինչ վերաբերում է պատերազմի հավանական թատերաբեմի մնացած բնակչությանը, այդ թվում նաև Դարաբադի ու Նախիջևանի հայությանը, ապա նրանց քաղաքական կողմնորոշումը Իրանի կողմն էր:²⁵

1514 թ. «հավատի պաշտպանության» կեղծ նշանաբանի ներքո սուլթան Սելիմ Յավուզը պատերազմ սանձագերծեց իր իսկ արտահայտությամբ «հերձվածող և իսլամը ապականող» շահ Իսմայիլի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ օգոստոսի 22-ին Վանա լճից հյուսիս-արևելք ընկած Չալդրանի դաշտավայրում, որտեղ սուլթանը, իր տրամադրության տակ ունենալով ուժեղ հրետանի, ջախջախեց ղզլբաշական զորքերին:²⁶ Շահ Իսմայիլը դիմեց մազապուրծ փախուստի՝ թշնամուն թողնելով իր գահը, հարեմը և զանձարանը:²⁷ Օսմանյան բանակը սրընթաց արշավով հասավ Թավրիզ և գրավեց այն:

Չալդրանի դաշտավայրում ձեռք բերած հաղթանակը Օսմանյան կայսրության համար ունեցավ քաղաքական կարևոր նշանակություն: Նախ այդ արշավանքը սկիզբ դրեց ողջ Հայկական բարձրավանդակի նվաճմանը, որի հետևանքով կայսրությունն իր համար ապահովեց բնական ստրատեգիական մի կուռ ամրոց արևելքից Իրանի և առհասարակ ամեն տեսակի ներխուժումների դեմ, դրանով իսկ արմատապես փոխելով ուժերի հարաբերակցությունն Ասիայում: Այնուհետև, այդ հաղթանակը վերջնականապես կանխորոշեց մրցակցող պետությունների նկատմամբ քրդերի քաղաքական դիրքորոշումը. քրդական ցեղերի մեծամասնության մոտ սկսեց ձևավորվել թուրքական կողմնորոշում: Չալդրանի ճակատա-

մարտում մի շարք քուրդ իշխանապետեր, օժանդակելով օսմանյան զենքի հաջողությանը, մեծապես նպաստեցին թուրքերի հաղթանակին: Իրենց թափած արյամբ նրանք ապացուցեցին, որ պատրաստ են համագործակցել Օսմանյան կայսրության հետ: Օգտվելով պատերազմից, օսմանցիների հրահրմամբ Իրանի քրդերը բռնկվեցին ապստամբական ոգով՝ ձգտելով վերականգնել իրենց իրավունքներն ու անկախությունը, որը վերացվել էր շահ Իսմայիլի կողմից:²⁸ Ճակատամարտից հետո քրդական ազդեցիկ 25 առաջնորդներ, ինչպես, օրինակ, հզոր աշիրեթներից մեկի առաջնորդ Մալեք շահը, Հիսն Քայֆայի ամիրը, Մեյաֆարեքիյի Ահմեդ բեյը, Սասունի Սուհամեդ բեյը, Ազիլի Դասըմ բեյը, Բալուի Ջամշիդ բեյը, Մոսուլի, Քիրքուքի, Սղեղի իշխանները և ուրիշներ, որոնք նախկինում չեզոք էին, անցան թուրքերի կողմը²⁹ և վերականգնեցին իրենց ավատապետական իրավունքները: Անշուշտ, գտնվեցին նաև քրդական առաջնորդներ, որոնք մինչև վերջ հավատարիմ մնալով շահին՝ հրաժարվեցին թուրքերի դաշնակիցը լինել և մասնակցել Չալդրանի ճակատամարտին: Նրանցից էր, օրինակ, Ջուլբադարի տիրակալ Ալա-ուդ-Դոուլեն: Նրան պատժելու նպատակով Սելիմ Յավուզը հրամայեց զորավարներ Սիման փաշային և Շահսուվար օղլի Ալի բեկին իրենց ենդիչերից մեկը ներխուժել Ջուլբադարյան բեյլիք և պատժել նրա անհնազանդ տիրակալին: Թուրանդադ լեռան ստորոտում տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը ջախջախեցին Ալա-ուդ-Դոուլեն և երկու որդիների հետ գերեվարեցին: Սուլթանը հրամայեց հարքունիս բռնագրավել նրա տիրույթները:³⁰

Չալդրանի ճակատամարտից հետո Սելիմ Յավուզը որոշեց լիովին վարձահատույց լինել այն քուրդ առաջնորդներին, որոնք զորավիզ էին եղել օսմանյան զենքի հաջողությանը: Այդ քաղաքականության գործնական իրագործման նպատակով նա Բաղեշի (Բիթլիս) քրդական տիրող իշխանական տան այն ժամանակվա ներկայացուցչին՝ Իդրիս Բիթլիսցուն (որը նախկինում ծառայության մեջ էր եղել աղ-ղոյունլուների առաջնորդի մոտ և պետական-վարչական գործեր վարելու բավականաչափ փորձ ուներ և որը Չալդրանի ճակատամարտի նախօրյակին համոզել էր մի շարք քուրդ ցեղապետերի միանալ օսմանյան բանակին, իսկ ճակատամարտի ժամանակ քրդական զորամիավորումների գլուխ անցած միացել էր սուլթանի դեպի Իրան արշավող բանակին՝ քրդերի շրջանում տանելով թուրքամետ քաղաքականություն և նրանց հակելով դեպի օսմանցիների կողմը), նշանակեց քրդերի ընդհանուր կառավարիչ՝ հաքիմ, և նրան հանձնարարեց իշխանության կազմակերպումը նորանվաճ հողերում: «Այդ քրդի ազդեցության ներքո, – նկատում է Ն. Ադոնցը, – հիմք դրվեց քրդերի հովանավորության քաղաքականությանը՝ նրանց տրամադրելով ավատական իրավունքներ մասամբ նրանց կողմից զավթված, մասամբ էլ սուլթաններ-

րի կողմից զիջված հողերի վրա: XVI դարի սկզբից ուժեղանում է քրդական ցեղերի շարժումը դեպի Հայաստան, թուրքական իշխանությունների աջակցությամբ: Առաջ մղելով քրդական տարրը Հայաստանում ... օսմանյան կառավարությունը գիտակցաբար հետամուտ էր մահմեդականների տիրապետության հաստատմանը քրիստոնյա ռայաների վրա»:³¹

Իդրիս Բիթլիսցին, որը փայտաշու էր քրդական իշխանապետերի ընդհանուր դաշինք ստեղծելու և սուլթան Սելիմի օգնությամբ քրդական մեծ իշխանապետություն կյանքի կոչելու գաղափարը, մեծագույն եռանդով գործի անցավ: «Յետ այնորիկ եկն յարքայե պատուէր հրամանի առ Իտրիս բարեկարգել զաշխարհն ըստ իւրումն զգօնութեան, և ընդ հրամանին հասին ևս պարգևք քսան և հինգ հազար ոսկւոյ, հինգ հարիւր պատմուճանաց, և եօթնտասն դրօշուց՝ առ ի բաշխելոյ յիշխանս քրդաց: Եւ Իտրիս յիննտասն գավառաց աշխարհին միջագետաց զմետասանն և եթ յաւել ի նահանգս օսմանեան պետութեան, իսկ զամուրս լեռնական վայրացն եթող ի մէն մի պետս քրդաց ազատս»:³² Իր քաղաքականության հիմքում Իդրիս Բիթլիսցին, որը գրականության մեջ հաճախ հորջորջվում է նաև մուլլա Իդրիս, դրեց քրդական մանր ցեղապետերի շահերի պաշտպանությունը, որոնք ձգտում էին ավատատիրական իրավունքներ ձեռք բերել Արևմտյան Հայաստանի նվաճված մարզերում:³³

1514-1515 թթ. Իդրիսի միջնորդությամբ սուլթան Սելիմ Յավուզը քուրդ էմիրների, բեկլարբեկերի ու աղալարների հետ կնքեց զինական դաշինք, որտեղ ասվում էր. դաշնագիրը ստորագրող բոլոր իշխանապետությունները (ամիրայություններ) պահպանում են իրենց անկախությունը և իրենց տիրույթները, 2. դրանք ժառանգաբար անցնում են հորից որդուն: Սուլթանը կայսերական ֆիրմանով (հրամանագրով) վավերացնում է հաջորդի օրինականությունը, 3. քրդերը պարտավորվում են մասնակցել Օսմանյան կայսրության մղած բոլոր պատերազմներին, 4. կայսրությունը պարտավորվում է քրդական իշխանապետությունները պաշտպանել արտաքին հարձակումներից, 5. քրդերը պետք է ավանդական կրոնական նվերներ մատուցեն խալիֆայությանը, իսկ սուլթանական գանձարանին մուծեն հարկեր և տուրքեր:³⁴ Ըստ Շերեֆ-էդ-դին պատմիչի՝ այս ֆիրմանը ստորագրված և վավերացված էր սուլթանի կողմից, իսկ քուրդ իշխանապետերի անունների տեղը բաց էր թողնված և վստահված էր հաքիմ Իդրիսին, որ ինքը գրի անունները, այլ կերպ ասած՝ նրան տրված էր քարտ-բլանշ:

Վերոհիշյալ դաշնագիրը առաջին հերթին ստորագրեցին քրդական այն 25 առավել ազդեցիկ ցեղերի առաջնորդները, որոնց ցեղերը բերվել և բնակեցվել էին Ջեզիրեյի, Հաքյարիի (Աղբակ), Սղերդի, Դիարբեքի, Բալուի, Գենջի, Ճապաղջրի, Հագոյի (հարավային Սասուն), Չմշկա-

ծագի, Բաղեշի և այլ վայրերի մեջ: Ըստ քուրդ պատմիչ Շարաֆ խան Բիթլիսիի հաղորդած տեղեկությունների՝ միայն Վանի էյալեթում, զբաղեցնելով լայնատարած շրջաններ, հաստատվեցին հետևյալ քրդական ցեղերը. սեմիրան (կամ սեմիրան), մահմուդի, դումբուլի, փազուլի: Հարավային Հայաստանում հաստատված նրա հիշատակած ցեղերն են՝ հաքյարի, բելիլան, բիլբասի, կավալիսի, քիսյանի (քեսյանի), շեքբաքի և այլն:³⁵ Իրենց դիրքով ու ազդեցությամբ այստեղ հատկապես աչքի էին ընկնում Բաղեշի խաները՝ ռուզակի ցեղից, որոնց պետական-պաշտոնական վավերագրերում մեծաբուն էին «վեհաշուք իշխան», «ինքնակալ իշխան», «աշխարհիկ ու հոգևոր տեր» անվանումներով:³⁶

Օսմանյան կայսրության խրախուսմամբ և Իդրիս Բիթլիսցու եռանդուն գործունեության շնորհիվ քրդերը Հայաստան էին շարժվում գլխավորապես երեք կետերից. Դիարբեքի կողմից, Մուսուլից Հաքյարիի վրայով և Իրանից՝ Սուլթուլարի շրջակայքից:³⁷ Այսպիսով, Տավրոսյան լեռների հարավից, Միջագետքի հյուսիսային շրջաններից (Ներկայիս իրաքյան Քրդստանից) և Իրանի կողմից քոչվոր քրդական ցեղերն իրենց հոտերով շարժվում էին դեպի Արևմտյան Հայաստան: Իդրիս Բիթլիսցուն նույնիսկ հաջողվեց Իրանից սեֆյանների դաշնակից մոտ 20 քուրդ ցեղապետերի համոզել անցնելու թուրքերի կողմը, որոնք գաղթեցին Դիարբեքի շրջան և բնակություն հաստատեցին այնտեղ:³⁸ Մծբինից Դերսիմ ընկած ամբողջ լայնածավալ երկրամասը Իդրիսը միավորեց Դիարբեքի նահանգ անվան տակ և դրանք բաժանեց 19 սանջակների (դրոշմների), այսինքն՝ ռազմաավատատիրական միավորների: Դրանցից 8 սանջակ նա տվեց քրդական ամիրներին [Քուլբ, Միհրանի, Թերջիլ, Աթաք, Պերտեք, Ճապաղջուր, Օչերմիք, Սաղման (Սաքման)]: Համաձայն նման վարչական բաժանման, Վանի վիլայեթը տրոհվեց 37 սանջակների: Դրանք անցնում էին քրդերին որպես ժառանգական տիրույթ: Բացի այդ, Իդրիսը քուրդ ցեղապետերին տրամադրեց 5 ոչ մեծ շրջաններ Տիգրիսի ակունքներում, դարձյալ սեփականության իրավունքով, ինչպես հյուքումաթ: Նա մի քանի քրդական ցեղեր վերաբնակեցրեց Էրզրումի շրջանում՝ դրանով իսկ սկիզբ դնելով Արևմտյան Հայաստանի «սրտում» քրդերի հիմնավորմանը: Նա մեծ թվով վաչկատուն, կիսաքոչվոր և նստակյաց քրդեր բնակեցրեց նաև հարուստ արոտավայրեր ունեցող Վասպուրականի, Կարսի և բազմաթիվ այլ շրջաններում: Այս նորեկ ցեղերի առաջնորդներն ավատատիրոջ իրավունքով և զենքի ուժով գավթեցին հայկական հողերը՝ իրենց հռչակելով դրանց իրավատեր: Իր հերթին օսմանյան կառավարությունը ևս իրենց բնակավայրերից տեղահանում էր հայերին և ազատված հողերը նվիրում քուրդ ցեղապետերին ու նրանց աշիրեթներին: Հատկապես մեծ թվով հայեր տեղահանվեցին Իրանի սահմանամերձ շրջաններից՝ Մասիսի

արևելյան լանջերից, Բայազետից, Դիադիմից, Ալաշկերտից, Վանա լճից հյուսիս ընկած գավառներից:³⁹ XVI դ. վերջին թուրքերը քրդական բազմաթիվ ցեղեր բնակեցրին նաև Անդրկովկասում, Արարատյան դաշտի, Շարուրի, Սյունիքի և Արցախի միջև սեպ կազմելու ու տեղի հայ բնակչությանը քաղաքականապես հաշմելու մտադրությամբ:⁴⁰

Մի խոսքով XVI դ. սկզբներից քրդական ցեղերի էթնիկական ներխուժումն ընդգրկեց ողջ Արևմտյան Հայաստանը: Այն շարունակվեց նաև հետագա դարերում, հատկապես, XVII դարում: Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվեցին քրդական հյուժումաթներ, օջաքլըքներ, յուրթլուքներ, էքրադ բեյլիքներ և այլն: Իդրիս Բիթլիսցուն սուլթան Սելիմը նշանակեց Հայաստանում ստեղծված հյուժումաթությունների գերագույն տիրակալ կամ կառավարիչ: Դրանք կատարելապես ինքնուրույն վարչական միավորներ էին և չէին ենթարկվում օսմանյան վարչությանը: Ընդ որում, հարկ է նշել, որ գրավյալ հողերում խոշոր և անկախ քրդական իշխանությունների ու ամիրայությունների գոյությունը չէր համապատասխանում վարչական նոր համակարգ ստեղծելու սուլթան Սելիմի ծրագրերին, քանի որ այդ դեպքում իշխանապետությունների ինքնագլխության և կատարյալ անկախության հավանականությունն ավելի մեծ կլիներ: Այդ հարցում սուլթանի և Իդրիս Բիթլիսցու տեսակետները կատարելապես համընկնում էին, ուստի նրանք մշտապես աշխատում էին գրավյալ տարածքներում թույլ չտալ վարչական խոշոր միավորների ստեղծումը, իսկ եղածներն էլ վերածում էին ավելի փոքր միավորների՝ սանջակների, որոնք կառավարվելու էին սանջակբեյերի կողմից: Հետևաբար, քրդական նորաստեղծ հյուժումաթները, օջաքլըքները, յուրթլուքները, էքրադ բեյլիքները և չպետք է լինեին վարչական առումով խոշոր միավորներ: Ղ. Ինժիճյանը հետևյալ կերպ է մեկնաբանում հյուժումաթի էությունը, «Հյուժյումաթ է այն երկիր՝ որ սեփական ստացուած է տոհմի ինչ եւ տեարք նորա են իշխանք, որ պայազատ եւ յորդուց յորդի ի նոյն տոհմէ ըստ ժառանգութեան նման իշխանութեանց՝ որք գտանին ի Գերմանիա, եւ այլ կողմանս Եւրոպիոյ: Բազում գտանին այսպիսի իշխանութիւնք յԱնատոլու ի մէջ քրդաց, ի փաշայութեան Տիարպեքիոու, Վանայ, եւ Պաղտատու, յորոց և ոմանք երբեմն, երբեմն ապստամբին ի փաշայից և մարտ մղեն ընդ նոսա»:⁴¹ Նույն հեղինակը նշում է, որ ինչպես հյուժումաթների, այնպես էլ յուրդլուքների և օջաքլըքների խնդիրն էր նաև սահմանների պաշտպանությունը, ուստի որպես կանոն դրանք տրվում էին պետական սահմաններին մոտ գտնվող տարածքներից:⁴²

Շարաֆ խան Բիթլիսին համապարփակ գաղափար է տալիս, թե ինչպիսի հսկայական իշխանություն ունեին զինված ջոկատներ ունեցող քուրդ աշիրեթապետերը. «Նրանք չնայած չէին հավակնում սուլթանական

տիտղոսին, սակայն իրավունք ունեին մզկիթներում իրենց անուններով խուրթե (մեծարման աղոթք. – Վ. Բ.) կարդալ տալ և սեփական դրամ հատել»:⁴³ Հայկական աղբյուրներում ևս այդ ցեղապետ իշխանապետերը հորջորջվում էին «տեարք ընտանեաց եւ տանց եւ գեօղից եւ անդաստանաց»:⁴⁴

Ի՞նչ նպատակներ էր հետապնդում օսմանյան սուլթանների կողմից Արևմտյան Հայաստանի քրդականացման քաղաքականությունը և ի՞նչ հետևանքներ ունեցավ այն: Նախ, ծրագրված էր նորանվաճ այդ տարածքում քրդական ցեղեր բնակեցնելու ճանապարհով ողջ Արևելյան Անատոլիայում կայսրության համար ապահովել կայուն հենարան հանձին դավանակից էթնիկական մի նոր խմբի, որին կարելի կլիներ օգտագործել երկրամասի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող քրիստոնյա բնակչության հայ ժողովրդի դեմ, նրան հնազանդության մեջ պահելու համար: Միանգամայն ակներև է, որ հայ-քրդական հարաբերությունների նկատմամբ թուրքական կառավարող շրջանների քաղաքականությունը XVI դարից սկսած խարսխվել էր մահմեդականներին քրիստոնյաների նկատմամբ առավելություն տալու օսմանյան հայտնի սկզբունքի վրա: Ողջ XVI–XVII դդ. ընթացքում համարյա անընդմեջ տեղի ունեցող թուրք-իրանական պատերազմների ժամանակ քրդերն իսկապես անընկճելի բերդերի շղթա էին ստեղծել Իրանի դեմ կասեցնելով վերջինիս ծավալապաշտական ձգտումները դեպի արևմուտք: «Հայաստանի ամբողջ քրդությունը,– նշում է Լեոն,– մղվում էր մի համառ պատերազմի Պարսկաստանի դեմ»:⁴⁵

Սուլթան Սուլեյման I Փառահեղի (1520–1566) արտահայտությամբ՝ իրեն հաջողվեց Վրաստանից մինչև Բաղդադ, Բասրայից մինչև Շահրիզոր կառուցել մսից ու արյունից բաղկացած անխորտակելի մի պատնեշ: Ընդ որում, սահմանի յուրաքանչյուր հատվածի պաշտպանությունը հանձնարարված էր քրդական կոնկրետ որևէ առաջնորդի: Այսպես, օրինակ՝ Բերկրիի ամրոցի պաշտպանությունը դրված էր Շիրվանի քուրդ կառավարիչ Մուհամմադ-բեկի վրա, Բայազետի շրջանը պարտավոր էր պաշտպանել սուլեյմանի կոչված ցեղի էմիր Բահուլու-բեկը և այլն: Այդ գործի մեջ ընդգրկված էին ցեղերի ամբողջ համադաշնություններ, որոնց «կերակրման» համար հատկացվում էին լավագույն հողերն ու արտավայրերը, իսկ նրանց տերերը հայտարարվում էին զեանթների և սանջակների տերեր: Սահմանամերձ շրջաններում բնակվող քրդական ցեղերն օգտվում էին նաև այլ արտոնություններից ու իրավունքներից, այդ թվում նաև ազատվում էին հարկեր մուծելու պարտավորություններից:

Այսպիսով, քրդերը դարձան թուրքերի դաշնակիցը ոչ միայն Արևմտյան Հայաստանը զավթելու և Օսմանյան կայսրության տիրապե-

տուրքյան տակ պահելու, այլև Մերծավոր Արևելքում նրանց ռազմական նվաճողականությունը ծավալելու գործում: Շնորհիվ դաշնակից քրդական ցեղերի զենքի աջակցության, Օսմանյան կայսրությունը կարողացավ նվաճել նաև Միջագետքի արաբական հողերը:

Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության հետապնդած նպատակներից մեկը նաև այն էր, որ նա աշխատում էր այնտեղ ապահովել «քրդական ազնվականության առաջնությունը և տիրապետող դիրքը»:⁴⁶ Դրա հետևանքով օսմանյան տիրապետությունը «գալիս էր ավելի ևս հաստատելու և ամրապնդելու քրդական իրականությունը Հայաստանում»:⁴⁷ Սուլթան Սելիմ I-ը աշխատում էր հին ժառանգական ազնվականությունը փախարհիներ և նոր զինվորական ազնվականությամբ, որն անմիջական կախման մեջ լիներ սուլթանից և, հետևաբար, հավատարմորեն ծառայեր նրան: XVI–XVII դդ. Արևմտյան Հայաստանի մշակվող հողատարածությունների և արոտավայրերի զգալի մասն արդեն գտնվում էին քրդական ցեղապետերի ձեռքում, որոնք այդ հողերին տիրում էին սեփականատիրական իրավունքով: Դրանք ենթակա չէին ոչ հաշվառման և ոչ էլ վերաբաշխման, և եկամուտները չէին մտցվում պետական հարկացուցակների մեջ: Այդ տիրույթներում չկային օսմանյան պաշտոնյաներ և սուլթանական զորքեր: Նման հողերի կառավարման գործը իրականացնում էին իրենք՝ քուրդ ավատատերերը, հենվելով զինված ջոկատների վրա:⁴⁸

Սուլթանի վերոհիշյալ քաղաքականության հետևանքով Հայաստանում աղ-ղոյունլու և դարա-ղոյունլու թուրքմեն իշխողները փոխարինվեցին քրդական բեյերով:⁴⁹

Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ, որտեղ քուրդ և թրքախոս քոչվորական ցեղերի տեսակարար կշիռը հետզհետե մեծանում էր, ենթարկվեցին նոմադականացման (քոչվորականացման): Իսկ դա իր հետ բերեց առևտրի, արհեստների և առհասարակ տնտեսական կյանքի անկում: Ուժեղացնելով քրդական համայնքը Հայաստանում, արաբականը՝ Սիրիայում և թուրքականը՝ Անատոլիայում՝ Օսմանյան կայսրությունը գիտակցաբար իրականացնում էր մահմեդականների գերազանցության սկզբունքը քրիստոնյաների նկատմամբ: «Սուլթանների կամքով, – նկատում է Ն. Ադոնցը, – երկրագործական երկիրը կանգնում էր հետընթացի և նախնադարյան կացության՝ քոչվորական հովվական կյանքի վերադարձի ուղու վրա, որն անխուսափելիորեն իր հետ բերելու էր երկրի մշակութային և տնտեսական կյանքի քայքայում»:⁵⁰ Այսպիսով, ստացվել էր մի այնպիսի վիճակ, երբ հետամնաց հովվական ցեղերը գրավում էին քաղաքական կառուցվածքի վերին հարկերը, իսկ զարգացած գյուղատնտեսություն և արդյունաբերություն ունեցող բնակչությունը ստիպված էր պարզա-

պես քարշ տալ իր գոյությունը: Օսմանյան քաղաքականությունն առաջնորդվում էր այդ երկընտրանքով և ուղղված էր քրիստոնյա բնակչության մշտական թուլացմանը: «Եիշտ հասկացված պետական շահերը չեն կարող հաշտվել այն անհեթեթ դրության հետ, որի դեպքում անքաղաքակիրթ ցեղերը, որոնք լճացել են հովվական կենցաղի փուլում, գրավեն պետական շինության վերին հարկերը, իսկ քաղաքակիրթ երկրագործական և արդյունաբերական ազգաբնակչությունը քշվի նկուղները: Այդպիսի կարգը դատապարտված է տապալման: Եվ կամ էլ կարող է դիմանալ քաղաքակիրթ խավերի աստիճանական վայրենացման և մինչև վայրագ վերևների մակարդակը իջնելու դեպքում: Օսմանյան քաղաքականությունը գերադասում էր այս վերջին հնարավորությունը և իր առջև խնդիր էր դնում հետևողականորեն թուլացնել և անզորացնել քրիստոնյա բնակչությանը»,⁵¹ – նշում է Ն. Ադոնցը:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյա բնակչությունը համարվում էր ռայա: Դա նշանակում է, որ նա, մահմեդականների համեմատ, իրավագուրկ մի զանգված էր և պարտավոր էր մուծել քիզե (գլխահարկ), որը նվաստացուցիչ հարկատեսակ էր: Քրիստոնյա եկեղեցին ևս ենթարկվում էր իսլամական պետությանը: Օսմանցիների կողմից կրոնական փոքրամասնությունների համար ստեղծված միլլեթների համակարգը, ճիշտ է, որոշ չափով երաշխավորում էր ազգային և կրոնական ինքնության պահպանումը: Միլլեթները, ըստ էության, կրոնական փոքրամասնությունների ստատուսի երաշխիքների մի համակարգ էր: Դրանք ինքնակառավարվող համայնքներ էին, որոնք ունենալու էին իրենց սեփական օրենքները և կառավարվելու էին իրենց հոգևոր առաջնորդի կողմից, որը կենտրոնական իշխանության առջև պատասխանատու էր իր ղեկավարած հոտի համար: Սակայն այդ բոլորով հանդերձ, օսմանցիներն ամեն կերպ աշխատում էին կասեցնել քրիստոնյաների զարգացումը՝ դրա մեջ տեսնելով մեծ վտանգ պետության համար: Ուստի նրանց դեմ ուղղված միջոցառումները «դառնում էին կառավարության ծրագրային խնդիրը»:⁵²

Կարո Սասունին գրում է. «Թուրքիա իր տիրապետության առաջին դարերուն հովանավորեց և պաշտպանեց հայ տարրը, որպես շինարար ձեռք, և մանավանդ քաղաքականապես անվնաս»:⁵³ Սակայն անմիջապես ավելացնում է, որ այդ հովանավորությունը «կը հասներ մինչև Քյուրտիստանի ու Հայաստանի սահմանները: Անկե անդին, հայության բախտը թողնված էր քյուրտ իշխանապետերուն և էրզրումի ու Տիարպեքիի բեյերբեյերուն: Թուրք կառավարությունը իսպառ կը բացակայեր այդ վայրերուն և կերևնար իր զորքով պարսկական սահմաններուն վրա (էրզրումի և Մոսուլի ճանապարհներով), երբ թուրք-պարսկական պատե-

րագ՞ընթ քրքական ուժերը այդ կողմը կը քաշեր»:⁵⁴ XVI դ. Կ. Սասունին պայմանականորեն անվանում է «քրդական անկախության շրջան՝ օսմանյան անվանական գերիշխանությամբ»: Այդ շրջանում Արևմտյան Հայաստանում հայերը, փաստորեն, դարձել էին քրդական ցեղապետ-ավատատերերի հպատակներ, թեև իրավական տեսակետից գտնվում էին օսմանյան գերիշխանության ներքո: «Հայկական նահանգները, եթե զինվորական և պետական տեսակետով Օսմանյան կայսրության դրոշի տակ էին, իրական կյանքով ենթակա էին քրդական իշխանապետությանը»:⁵⁵

Հիրավի, պահանջվելու էր ևս մեկ դար, որ Օսմանյան կայսրությունը կարողանար իր իրական տիրապետությունը հաստատել արևելյան ընդարձակ երկրամասերի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Դա տեղի ունեցավ այն պատճառով, որ Օսմանյան կայսրությունը չէր կարող հանդուրժել, որ ստրատեգիական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող այդ տարածքներում գոյություն ունեցան քրդական անկախ ու կիսանկախ իշխանապետություններ, մանավանդ որ այդ հատվածի բնակչության բացահայտ համակրանքը Իրանի հետ էր: Արդեն XVII դարից սկսած օսմանյան կառավարությունը ձեռնամուխ էր եղել արևելքում վարչական կենտրոնացման քաղաքականության, քանի որ քրդական ցեղերի կողմից այդ տարածքների գերակշիռ հսկողությունը և նրանց կիսանկախ կամ անկախ գոյությունն արգելք էր հանդիսանում այդ վայրերում թուրքական վարչության տեղավորմանը: Սակայն այդ քաղաքականությունը բնավ չէր նշանակում, որ օսմանյան կառավարող շրջանները մտադիր էին էապես սահմանափակել քրդական ցեղապետ-ավատատերերի իրավունքներն ու արտոնությունները և նրանց իսպառ դուրս մղել ասպարեզից: Քրդերն անհրաժեշտ էին սուլթաններին պետության համար կենսական կարևորություն ունեցող մի շարք խնդիրներ լուծելու համար: Ընդ որում, այդ խնդիրները չէին սահմանափակվում լոկ կոնկրետ ժամանակաշրջանի պայմաններով: Դրանք ռազմավարական նշանակություն ունեցող և երկարատև ժամանակների համար հաշվարկված խնդիրներ էին: Այսպես, օրինակ, սուլթան Սելիմ Յավուզի տիրապետությունից (XVI դ.) մինչև օսմանյան հարստության վերջին սուլթանը՝ Մեհմեդ VI Վահիդդինը (XX դ.), Օսմանյան կայսրության արևելյան քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն է եղել քրդական զինված աշիրեթների օգնությամբ հայ ժողովրդի ազատագրական ոգորումների կանխումն ու սրատումը: Օսմանյան Թուրքիան Արևմտյան Հայաստանում իր քաղաքականության անկյունաքարն էր դարձրել հայ-քրդական հակամարտության սրումը և քրդերի օգնությամբ հայ ժողովրդին ճնշելն ու սանձահարելը:⁵⁶ Այդ տեսակետին համամիտ է նաև քուրդ պատմաբան

Նուրի Դերսիմին: «Սուլթան Սելիմ Յավուզը,– գրում է նա,– աշխատում էր քրդերին հրահրել հայերի դեմ»:⁵⁷

XVI դ. սկսած թուրքական կառավարող շրջանները հետևողականորեն ձգտել են նաև փոփոխության ենթարկել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը ի վնաս հայ բնակչության: «Թուրքական քաղաքագետները դարեր շարունակ ջանում էին լցնել Հայաստանը քրդերով և վերածել էրմենիստանը Քրդստանի»⁵⁸, – գրում է Ն. Ադոնցը: Հայաբնակ շրջաններում քրդական ցեղերի բնակեցումը հիմք դրեց Հայկական լեռնաշխարհում ազգային կազմի փոփոխությանը և Հայաստանը կորցրեց իր բնակչության միատարրությունը: Այդ ժամանակներից սկսած եկվոր քրդական տարրը հայ ժողովրդի բնօրրանում սկսեց ձեռք բերել զգալի տեսակարար կշիռ: Արձանագրելով այդ փաստը՝ Արևմտյան Հայաստան այցելած անգլիացի Գ. Լինչը նկատում է, որ «... այդ ժողովրդի (քրդերի: – Վ. Բ.) նշանակալից գաղութները, ըստ երևույթին, զբաղեցրին Հայաստանում իրենց ներկա վայրերը, շնորհիվ թուրքական կառավարության պետական քաղաքականության վճռական գործողության»:⁵⁹ Այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունը հանդիսացավ հայ ժողովրդի աստիճանական դուրս մղումը հայրենի բնաշխարհից: Դիմելով արտագաղթի՝ հայությունն ալիք առ ալիք լքում էր հայրենիքը՝ ապաստան և կյանքի համեմատաբար ապահով պայմաններ որոնելով օտար երկրներում, այլ երկնակամարների տակ:⁶⁰

Գրիգոր վարդապետ Կամախեցին (Դարանաղցին) խոսելով երկրի դատարկման մասին գրում է. «...եւ յորժամ ի Կաֆայէն յԵստամբուլ եկանք, ելն ամենայն հայոց աշխարհքն ի Թեոդուպոլսէն ի վայր, ոմանք երկու ամառ յառաջ եկեալ էին եւ ոմանք բազումք ընդ մեզ եկին, որ էր 1605-ին, եւ շատ այլք յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատոլ, եւ յԱռուսէլ, յամենայն քաղաքս մինչի Պելլըրատ, մինչ Պուղտանաց աշխարհքն եւ ի Լեհաց»:⁶¹

«XVI և XVII դարերու զարհուրելի քաոսի հետևանքով հայկական շատ մը զավառները դատարկված էին. հայութեան թիվը չնչին քանակի մը իջած էր: ... Ընդհանրապես կարող ենք ըսել, որ մինչև XVIII դարու սկիզբը, հայկական զավառները զորավոր արտագաղթի դիմած են, կամ սանձարձակություններու զոհ երթալով՝ հալած»⁶², – գրում է Կ. Սասունին: Հայ ժողովրդի ապազգայնացող ավատատերերի տեղը դարձյալ գրավում էին գլխավորապես քրդական ցեղապետերը: Իրենց ձեռքում հողային ուրոշ տիրույթներ կարողացան պահպանել միայն հայ եկեղեցին ու վանքերը, հին ֆեոդալական տների մնացորդները և գյուղական համայնքների հարուստ խավերը: Հայ բնակչության մոտ «ազգային իշխանական գիտակցությունը և ձգտումները կը տարրալուծվեին, տեղի տալով անհա-

տական փոքրիկ փառասիրությունների և կրոնական-եկեղեցական մտահոգությունների»:⁶³

Արևմտյան Չայաստանում հայ ավատական փոքր իշխանությունները պահպանում էին իրենց գոյությունը միայն երկրի հարավային լեռնազավառների անմատչելի մասերում՝ Ջեթրունում, Սասունում, Սավուրում, Իսյանում, Ճապաղջրում, Խնուսում, Սոկսում, Շատախում, Դիարբեքիի հյուսիսային լեռնային շրջաններում և այլն:⁶⁴ Չայկական այդ իշխանությունները, որոնք ընդգրկում էին ոչ մեծ տարածք, կարողանում էին պահել իրենց գոյությունը ու հարատևել օսմանյան պետության թուլացման և քուրդ բեկերի հակակառավարական անվերջ ապստամբությունների շնորհիվ: Չայկական այս կիսանկախ շրջանների բնակչությունը օսմանյան պետությանը հարկ չէր վճարում: «Ազատությունը, սակայն, շատ թանկ էր նստում լեռնականներին: Նրանք կտրված էին լինում ամբողջ աշխարհից, պիտի լինեին զգուշ և կասկածամիտ, մշտապես զինված և իրենց ամբողջ ուշադրությունը իրենց զենքին ու կռվին տված»:⁶⁵ Ուշագրավ է, որ քրդերը հարգել են հայկական փոքրիկ իշխանությունների գոյությունը, որը սահմանափակված մնաց վերոհիշյալ մի քանի լեռնազավառների մեջ:⁶⁶ Ինչ վերաբերում է մնացած հայությանը, ապա օսմանյան վարչության, ինչպես նաև քուրդ ցեղապետ-աշիրեթապետների ենթարկողական քաղաքականության նկատմամբ նրանց դիմադրության ամեն մի փորձ զենքի օգնությամբ ճնշվում էր:⁶⁷

XVI դ. սկսած երկու հարյուր տարի շարունակ տեղի էր ունենում քրդական ցեղերի չդադարող հոսք դեպի Արևմտյան Չայաստան: Արդեն XVIII դ. սկզբին այդ ցեղերը տարածվել էին երկրամասի համարյա բոլոր շրջաններում:⁶⁸ Արևմտյան Չայաստանում և նրա հարևան Քրդստանում ու հարակից շրջաններում կային քրդական 5 մեծ իշխանապետություններ՝ Բիթլիսը, Չաքարին, Ամադիան, Ջեզիրեն և Բայազեդը: Դրանց գրաված տարածքը վարչական տեսակետից ձևակառուցված մտնում էր համանուն վիլայեթների մեջ, սակայն իրականում դրանք վիլայեթների փաշաններից անկախ իշխանություններ էին:

«Չայոց աշխարհի մակերևութի ավատատիրական այդ զարդանկարի փոփոխությունները արդյոք փոփոխում էին համապատասխան ձևով նաև նրա էթնիկական հիմնամերկը: Վերնաշերտերի փոփոխությունը արտացոլվում էր արդյոք նաև ստորին խավերի կազմի վրա», – հարց է տալիս Ն. Ադոնցը, և ինքն էլ պատասխանում. «Ինչպես որ մոնղոլների տեր ու տնօրինության օրոք երկիրը չմոնղոլացավ, ինչպես թուրքմենների օրոք այն չթուրքմենացավ, այնպես էլ իշխանությունը քրդական ցեղապետների ձեռքն անցնելով հայկական երկիրը քրդական չդարձավ: Նստակ-

յաց, աշխատավոր բնակչության հիմնական կորիզը ինչպես որ եղել էր, այնպես էլ մնաց հայկական»:⁶⁹

Այսպիսով, ուշ միջնադարում քրդերը դարձան օսմանցիների դաշնակիցը ոչ միայն Եվրոպայում և Ասիայում իրենց մղած անվերջ պատերազմների ժամանակ, այլև Արևմտյան Չայաստանը նվաճելու և կայսրության կազմում պահպանելու համար: Հիրավի, դժվար թե օսմանյան պետությանը հաջողվեր հարյուրամյակների ընթացքում պահպանել իր տիրապետությունը Արևմտյան Չայաստանում առանց քրդերի ռազմաքաղաքական աջակցության:

Օսմանյան պետության տիրապետության տակ հայ և քուրդ ժողովուրդները կողք կողքի ապրեցին ավելի քան հինգ հարյուրամյակ: Առանց վերապահության կարելի է ասել, որ այդ ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ և դժոհակ շրջանն էր: Սակայն քուրդ ժողովուրդը ևս, թեև թուրքերի հետ համադավան լինելու պատճառով չի ենթարկվել կրոնական հալածանքների, ավելին, օգտվել է որոշակի արտոնություններից ու իրավունքներից, բայց և այնպես, երբ փորձել է դրսևորել ազգային անկախության ձգտումներ, կամ հանդես է եկել իր ուրույն դիմագիծը և մշակութային ավանդույթները պաշտպանելու հարցադրումներով, մշտապես ենթարկվել է թուրք պետականության անողոք հարվածներին: Հանրահայտ իրողություն է, որ Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ ազգային հարցը լուծելու միակ ձևը եղել է ժողովուրդների ու ազգային հավաքականությունների ֆիզիկական բնաջնջումը, համաձուլումն ու ազգային դիմահեղումը: Ընդ որում, եթե հայ ժողովրդի նկատմամբ այդ քաղաքականության իրագործման ամենատարածված եղանակը եղել է ջարդը, ապա քրդերի նկատմամբ առավելապես գործադրվել է համաձուլման ու թրջացման, ինչպես նաև որպես թնդանոթի միս օգտագործելու քաղաքականությունը՝ դարեր շարունակ նրանց մաշեցնելով իրենց մղած զավթողական անվերջ պատերազմներում:

«Չորս հարյուր տարվան պատմական անցքերը նորեն վերհիշելով, – գրում է Կարո Սասունին, – երբ այս երկու դժբախտ ժողովուրդներու արյունալի երթը կը դիտենք պատմության բեմին վրա, առանց վարանելու կուզանք այն եզրակացության, որ անոնց քաղաքական, տնտեսական, ֆիզիկական և մտավոր դժբախտությունները թեև ծնունդ առած են թրջական տիրապետությամբ, բայց սնած, աճած և աղետալի դարձած են հայքրտական հակամարտության մեջ»:⁷⁰

Դարեր շարունակ բռնատիրական վարչակարգ ունեցող Օսմանյան կայսրության քաղաքականության անկյունաքարը եղել է իր տարածքում բնակվող ժողովուրդների հրահրումը միմյանց դեմ: Հատկապես վախենալով երկրի ծայր արևելքում բնակվող ժողովուրդների միավորման և օսմանյան լծի դեմ համատեղ պայքար մղելու հնարավորության վտանգից, հայերի և քրդերի նկատմամբ Օսմանյան կայսրությունը վարել է «բաժանիր որ տիրես» քաղաքականությունը, նպատակ ունենալով նրանց հանել միմյանց դեմ:

Թուրքական տիրապետող շրջանները քուրդ ժողովրդի մեջ մշտապես աշխատել են մեռցնել ազգային ինքնագիտակցության զգացումը և, մահմեդականությունն օգտագործելով որպես լծակ, փորձել են քրդերին դարձնել զուտ մահմեդական մի համայնք: Այդ նպատակով մշտապես պրոպագանդվել է թուրքերի և քրդերի ցեղակցության վերաբերյալ կեղծ և հակազիտական տեսություն:

Օսմանյան պետական դեմքերը եռանդուն ջանքեր են գործադրել նաև կասեցնելու քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորման, ինչպես նաև նրա քաղաքական համախմբման ընթացքը: Հանրահայտ իրողություն է, որ առհասարակ կրոնական-աստվածապետական սկզբունքներով առաջնորդվող, ավատական կարգեր ունեցող Օսմանյան կայսրությունն ամեն կերպ աշխատում էր արգելակել իր տարածքում բնակվող ոչ թուրք ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացումը, նրանց դատապարտելով անկման, բնականոն աճի կասեցման, հոգևոր ընդունակությունների սահմանափակման և այլն: Եվ այդ հոռի ու այլանդակ քաղաքականության արդյունքները իրենց ցայտուն դրսևորումն են ունեցել Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, կասեցնելով հայ և քուրդ ժողովուրդների զարգացումն ու առաջընթացը:

Շշմարտությունը պահանջում է նշել նաև, որ թուրքական լծի դեմ հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական շարժումները հիմնականում ընթացել են միմյանցից անջատ ուղիներով: Ավելին, քրդերը, որպես կանոն, թուրքական կառավարության ձեռքին հանդիսացել են գործիք հայ ժողովրդի ազատագրական ոգորումները սրատելու ու ոչնչացնելու համար: Օսմանյան պետությունը աշխատում էր քրդական տարրի օգնությամբ հայ ազգային-ազատագրական շարժմանը ստեղծել հակակշիռ և, երկու ժողովուրդների քաղաքական ձգտումները հակադրելով միմյանց, կանխել նրանցից սպասվող վտանգը և ոչնչացնել նրանց մոտ օսմանյան լծից ազատագրվելու և իրենց ազգային պետությունները կերտելու երազանքները:

Հանրապետական Թուրքիան ևս ազգային հարցի բնագավառում հիմնականում շարունակեց օսմանյան ավանդույթները: Թուրք ազգայնականները իր ավարտին հասցրին հայերի բնաջնջման գործը Արևմտյան Հայաստանում, իսկ քրդական հարցի կապակցությամբ անթաքույց ձևով դրսևորեցին իրենց քաղաքական այլամերժության ու շովինիզմի էությունը:

Չնայած այն հանգամանքին, որ քրդական գործոնը էական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության և հատկապես Հայկական հարցի զարգացումների վրա, սակայն դժբախտաբար այդ խնդրի գիտական հետազոտությունը, առանձին բացառություններով, դուրս է մնացել հայ հետազոտողների ուշադրությունից: Հավասարապես հայ իրականության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձվել նաև քուրդ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրության հարցերին, որն անկասկած ունի ինչպես գործնական-քաղաքական, այնպես էլ ճանաչողական խոշոր նշանակություն: Բացի այդ, այդ երկու ժողովուրդների պատմական զարգացման զուգահեռ ուսումնասիրությունը կարող է նպաստել նրանց պատմության մի շարք հարցերի նորովի լուսաբանմանը:

Մեր օրերում ևս քրդական հարցը դեռևս պահպանում է իր հրատապությունը և արդիականությունը: Այն դարձել է միջազգային քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Կասկածից վեր է, որ այդ հարցը իր որոշակի ներգործությունն ունի մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական զարգացումների և միջպետական հարաբերությունների վրա: Այն անմիջականորեն ընդգրկված է նաև արևմտյան տերությունների մերձավորարևելյան քաղաքականության շրջանակների մեջ:

Ներկայումս Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում Թուրքիայում, Իրաքում, Իրանում, Սիրիայում, ինչպես նաև արաբական մի շարք այլ երկրներում բնակվում են տասնյակ միլիոնավոր քրդեր: Քրդական սփյուռք գոյություն ունի նաև Եվրոպայի և Ասիայի բազմաթիվ երկրներում:

Քուրդ ժողովուրդը մինչև օրս բավարար չափով համախմբված ու կոնսոլիդացված չէ և քրդական պետության բացակայությունը անխուսափելիորեն դանդաղեցրել է քրդերի էթնոազգային զարգացման գործընթացները, որի հետևանքով իր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակով քուրդ ժողովուրդը նշանակալից չափով հետ է մնացել Արևմտյան Ասիայի պետական կարգավիճակ ունեցող ազգերից ու ժողովուրդներից: Բավական է ասել, որ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը ողջ Քրդստանում (Թուրքական, Իրանական և Իրաքյան) գոյություն չի ունեցել և ոչ մի քրդական դպրոց: Այդ տարածքներում գրա-

գետ քրդերի թիվը կարելի էր մատնների վրա հաշվել: Այդ ժամանակ չէին հրատարակվում ոչ քրդական գրքեր, ոչ թերթեր և այլն, քանի որ գոյություն չուներ նույնիսկ քրդական գիր (այբուբեն): Այդ բոլորով հանդերձ պատմության տրամաբանությունը հուշում է, որ այդ ժողովուրդը, որ մեր օրերում իր թվաքանակի համեմատ միակն է ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում որ զուրկ է պետականությունից, վաղ թե ուշ նրան հաջողվելու է կերտել իր սեփական ազգային պետությունը:

Յետևաբար տեսանելի կամ հեռավոր ապագայում հայ և քուրդ ժողովուրդների ճակատագրերը, որպես տարածաշրջանային անմիջական հարևաններ, կրկին անխուսափելիորեն խաչաձևելու են: Անցյալի ու ներկայի ճակատագրերով միմյանց հետ կապված այդ դրացի ժողովուրդները պետք է պատրաստ լինեն դրան, որպեսզի չկրկնվեն անցյալի ցավալի սխալները...

Գ Լ ՈՒ Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

XIX դարի սկզբին քրդերը ցրված էին Իրանից մինչև Փոքր Ասիայի խորքերը և հարավում՝ մինչև Միջագետք, սակայն չուներին տարածքային որևէ ընդհանրություն: Այդ հսկա երկրամասում, որը գտնվում էր Ղազարական Իրանի և Օսմանյան կայսրության կազմում, նրանք ապրում էին ցեղերով, որոնց մեծ մասը միավորված էր ցեղային միությունների՝ աշիրեթների մեջ: Գոյություն ունեին նաև բազմաթիվ թաիֆեներ, որոնք պահպանում էին իրենց գոյությունը, չմտնելով ցեղային միավորումների մեջ: Ցեղը կառուցվում էր հիմնականում արյունակցական կապերի հիմքի վրա, թեև դա միշտ չէ, որ պարտադիր էր:

Ընդհուպ մինչև XIX դարի վերջը քրդերի ճնշող մեծամասնությունը քոչվորներ կամ կիսաքոչվորներ էին, որոնք գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ, մասնավորապես ոչխարաբուծությամբ:¹ Սակայն առկա էր նաև հողագործությամբ զբաղվող նստակյաց բնակչություն, որը կոչվում էր ռայա կամ ռայաթ, ինչը բառի լայն առումով մշամակում էր հպատակ:² Սրանք գլխավորապես զբաղվում էին երկրագործությամբ, հատիկային կուլտուրաների մշակմամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև արտավայրային անասնապահությամբ:

Նստակյաց քրդերը, համարյա առանց բացառության, ենթարկվում էին քոչվոր ցեղերին, որոնք նաև քրդական հասարակության արտոնյալ մասն էին: Բացի այդ, նստակյաց քուրդ բնակչությունը պարտավոր էր ծառայել ցեղերի առաջնորդներին, մտնելով նրանց զինված ջոկատների մեջ:³ Առհասարակ քրդերի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական կյանքում կարևորագույն դերը պատկանում էր քոչվոր քրդերին: Ռուս զինվորական Ա. Կարցևը այդ առթիվ մշում է. «Քրդստանի ճակատագրում ռայաթները դժվար թե կարողանան խաղալ որևէ դեր. վճռական ծայրը միշտ պատկանելու է քոչվորական և կիսաքոչվորական աշիրեթների ավագանուն»:⁴ «Քոչվոր ցեղերի առաջնորդներն իրենց տրամադրության տակ ունեին ուժեղ ջոկատներ, որոնց վրա հենվելով իրականացվում էր նստակյաց բնակչության արտատնտեսական հարկադրանքը: Հենց նրանք էլ պաշտպանում էին վերջիններին այլ ցեղերի հարձակումներից և ավագակային ասպատակություններ էին կատարում ուրիշների տիրույթների նկատմամբ»:⁵ Վաչկատուն քրդերի բազմաթիվ խաները, էմիրները, շեյխերը, բեկերը և այլն, որպես կանոն, թշնամական առձակատման մեջ էին գտնվում մեկը մյուսի նկատմամբ, հաճախ արտավայ-

րերի, ջրի ակունքների և այլ խնդիրների շուրջ իրենց վեճը լուծելով մեծ ու փոքր ընդհարումներով ու պատերազմներով:

Քոչվոր քրդերի մեծամասնությունը, սովորաբար մտնում էր այս կամ այն ցեղային միավորման մեջ: Մի շարք ցեղերի առաջնորդներ իրենց տիրապետության տակ միավորում էին բազմաթիվ ցեղերի: Արտավայրերի համար ցեղերի միջև մղվող անընդհատ պայքարի, ավատական այս կամ այն տան տիրապետությունը ռազմական ճանապարհով մյուսների վրա տարածելու ձգտումը, արյան վրիժառությունը և այլ մերթին գործոններ առաջ էին բերում ցեղերի հաճախակի տրոհում ու քայքայում և ստեղծվում էին ցեղային նոր միավորումներ: Յուրաքանչյուր աշիրեթում կար ցեղային ազնվականություն (թոռուններ), որի ավագ անդամը ճանաչվում էր աշիրեթապետ և իր ցեղակից հպատակների նկատմամբ ուներ համարյա անսահմանափակ իշխանություն: «Ցեղի առաջնորդը հանդիսանում էր իսկական նահապետական բռնակալ... նա ըստ իր հայեցողության տնօրինում էր ցեղի ցանկացած անդամի սեփականությունն ու կյանքը»:⁶

Ցեղապետերի ուժը և հզորությունը նրանց զինված ջոկատներն էին (ղուլամները), որոնք կազմված էին ցեղի շարքային անդամներից: Ցեղերի ռազմատենչությունը պայմանավորված էր քոչվորական կենցաղի ծանր պայմաններով, տոհմացեղային կացութաձևի առանձնահատկություններով: Վաչկատուն քրդերը միշտ զինված էին և համախմբված իրենց ցեղային առաջնորդների շուրջը:⁷ Սակայն ցեղերի շարքային անդամները ցեղապետերից կիսաճորտական կախվածության վիճակում էին և անվերապահորեն ենթարկվում էին նրանց: Հարկ է նշել, որ շարքային քրդերի համար այդ ճորտական վիճակը «նշանակալիորեն մեղմանում էր ազգակցական զգացման և ցեղային շահերի ընդհանրության գիտակցության շնորհիվ»:⁸

Չողագործ կամ ռայա քրդերը քրդական հասարակության ամենաընչազուրկ մասն էին կազմում:⁹ Նրանք ենթարկվում էին կրկնակի շահագործման, ինչպես իրենց աշխարհիկ և հոգևոր վերնախավի, այնպես էլ օսմանյան կառավարության կողմից: Ընդ որում, ռայաները իրենց սոցիալ-տնտեսական դիրքով ավելի մեծ կախման մեջ էին կառավարությունից, քան աշիրեթային քրդերը:

XIX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող քրդական ցեղերի մեծ մասը դեռևս գտնվում էր տոհմացեղային, նահապետական հարաբերությունների աստիճանում: Հասարակական զարգացման այդ մակարդակի վրա էին գտնվում ոչ միայն քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերը, այլև նստակյաց բնակչության զգալի մասը: Նշված շրջանում նկատվող երևույթներից մեկը այն էր, որ վաչկատուն ցե-

ղերի մի մասը անցնում էր նստակեցության: Ընդ որում, անցումը քոչվորական կյանքից նստակեցության տեղի էր ունենում միջանկյալ, կիսաքոչվորական փուլն անցնելու միջոցով:¹⁰

Իր տիրապետության հիմքերը պահպանելու համար քրդական ցեղային վերնախավը շահագրգռված էր ցեղերի միջև պահպանել տոհմացեղային հարաբերությունները, «որովհետև տոհմացեղային կապերի առկայությունը երաշխիք էր հանդիսանում նրանց ռազմական, հետևաբար նաև տնտեսական գերիշխանության պահպանման համար շրջակա շրջանների խաղաղ բնակչության նկատմամբ»:¹¹

Անհրաժեշտ է նշել, որ քրդերի մոտ ցեղային կառուցվածքի առկայությունը ոչ միայն այդ ժողովրդի մոտ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետևանք էր, այլև Օսմանյան կայսրության թույլ կենտրոնացվածության:¹²

Չափազանց լայն էին քրդական ցեղային վերնախավի առանձնաշնորհումների ու իրավասությունների շրջանակները: «Թեև քրդերը Թուրքիայի և Պարսկաստանի հպատակ են համարվում, — գրում է Յ. Առաքելյանը, — բայց ժողովրդի կառավարությունը ազնվական դասի ձեռքում է: Յուրաքանչյուր ցեղապետ իր ցեղի տերն է և ինքնիշխան կառավարիչը, դատավորը: Ցեղապետերն իրանք ուղղակի վճարում են տերությանը մի որոշ հարկ, այնուհետև ժողովրդի ներքին գործերի կարգադրությունը, դատավորությունը իրան, աղային է վերաբերում. յուրաքանչյուր աղա (աղայությունը ժառանգական է) կամ ցեղապետ հավաքում է իր գավառի հարկերը, տուրքերը, որոշում է նրանց քանակությունը, չափը, և հետո ինքը վճարում է տերությանը որոշ հարկ մի մասը փողով, մի մասը բերքով»:¹³

Բազմազան էր նաև քրդերի կրոնական դավանանքը: Նրանց հիմնական զանգվածը ուղղադավան մահմեդական էր կամ սուննիներ: Նրանք հետևում էին սուննիթական ուղղության շաֆիական կամ հանիֆիական մազհաբներին: Որոշ տոկոս էին կազմում նաև իսլամի շիա կամ ալի-իլաիի ուղղության հետևորդները: Ի դեպ, սուննի և շիա քրդերի միջև առկա էին լուրջ տարածայնություններ, որոնք հաճախ վեր էին անցնում անհաշտ թշնամանքի:

Կային նաև եզիդականություն կամ եզիդականություն դավանող քրդեր, որոնց անվանում էին նաև «շեմսիե»:¹⁴ Եզիդական դավանանքի ծագման արմատները առ այսօր գիտության համար դեռևս լրիվ պարզված չեն: Գիտնականները մերթ այն կապում են մովսիսականության, մերթ հին իրանական հավատալիքների, մերթ գրադաշտականության, արևապաշտության և այլ կրոնական ուսմունքների հետ: Այն պարունակում է նաև քրիստոնեության և մահմեդականության տարրեր: «Հայտ-

նություն» և «Աև» կոչված գրքերում շարադրված են եզրիականության հիմնական դրույթները բնության, աշխարհատեղծման, աստծո հավերժականության վերաբերյալ: Նրանց հիմնական սրբավայրը շեյխ Ադիի՝ եզրիականության մարգարեի գերեզմանն ու դամբարանն է, որը գտնվում է Մոսուլի շրջանի Լալեշ գյուղում:

XIX դարի հայ որոշ հեղինակներ եզիզներին համարել են հայկական եկեղեցուց տրոհված հերձվածողներ: Առհասարակ եզիզների դավանանքը պարուրված է խորհրդավորության մշուշով: Դա պայմանավորված է նրանով, որ եզիզները հարատևորեն կողմնակի աչքից թաքցրել են իրենց դավանանքի ծեսերն ու խորհուրդները:

Գիտության մեջ հայտնի են նաև կարծիքներ այն մասին, որ եզիզները առնչություն չունեն քրդերի հետ, որ նրանք կազմում են միանգամայն առանձին ժողովուրդ: Եզիզական համայնքը հիմնված էր կաստայական սկզբունքի վրա և նրան բնորոշ էր ինքնամփոփությունն ու մեկուսացվածությունը, ինչպես նաև կաստայական կենսաձևը:

Եզիզական համայնքը համեմատաբար սակավաթիվ էր, սակայն նույնպես ցրված էր մեծ տարածության վրա: Եզիզիները բնակվում էին գլխավորապես Միջագետքի դաշտերից հյուսիս՝ Սինջարի լեռներում, Մոսուլում, Չաքլարիում, բայց հանդիպում էին նաև այլ վայրերում, մասնավորապես Վանի և Էրզրումի բարձրավանդակների վրա, Իրանական Քրդստանում, իսկ ավելի ուշ հայտնվեցին նաև Անդրկովկասում:¹⁵ Եզիզների նկատմամբ մահմեդական քրդերը վերաբերվում էին անհաշտ թշնամանքով: «Քուրդ մահմեդականների ատելությունը եզիզների նկատմամբ, - գրում էր ռուս զինվորական դիտորդ Ա. Մ. Կոլյուբակինը, - արդարև ապշեցուցիչ է: Քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողաբար վերաբերվող հայդերանլի, ջելալի, զիլանլի, հասանանլի, միլանլի, թողուրի և այլ ցեղերը խորապես ատում և արհամարում են եզիզներին, նրանց համարելով իրենց ոխերիմ թշնամիները և միշտ պատրաստ լինելով հասցնել նրանց որևէ վնաս»:¹⁶ Մահմեդական քրդերի մի կողմից, և եզիզի քրդերի միջև մյուս կողմից, գոյություն ունեցող ատելությունն էր գլխավոր պատճառներից մեկը, որ վերջիններս ունեին առանձնահատուկ հարաբերություններ հայերի հետ, հաճախ նրանց հետ համատեղ հանդես գալով մահմեդական քրդերի հարստահարությունների ու բռնությունների դեմ:

Առհասարակ պետք է նշել, որ հայ-քրդական հարաբերություններում կրոնի դերը չափազանց մեծ է եղել: Մահմեդական կրոնը, որի մեջ դարերի ընթացքում ամփոփվել է մահմեդական աշխարհի համարյա ամբողջ մտավոր-բարոյական կյանքը, չէր կարող չունենալ իր խոշոր ներգործությունը մանավանդ մի ժողովրդի վրա, որն ապրում էր դեռ հովվական կյանքով, նահապետական-ցեղային զարգացման մակարդակի վրա:

Ե՛վ օսմանյան կառավարության, և՛ քրդական ցեղային վերնախավի կողմից իսլամը օգտագործվում էր հայ ազգաբնակչության նկատմամբ իրենց տիրապետությունը պահպանելու և ամրապնդելու համար:

XIX դարի սկզբին քրդական ցեղերի տնտեսությունը հիմնականում բնամթերային էր: Ե՛իշտ է որոշ շրջաններում նրանց արտադրանքը սկսել էր արդեն ձեռք բերել նաև ապրանքային բնույթ (գորգագործություն, բրդյա գործվածքների արտադրություն, տեղական հումքի վաճառք և այլն)¹⁷, սակայն, այնուամենայնիվ, գերակշռող բնամթերային քոչվորական տնտեսությունն էր: Իսկ այդ պայմաններում քրդական ցեղերը ի վիճակի չէին առանց եկամուտների հավելյալ աղբյուրների ապահովել իրենց սննդամթերքով և գոյության համար անհրաժեշտ այլ միջոցներով:

Քրդական ավատական վերնախավը՝ աղաները, բեկերը և այլն կազմում էին քրդական հասարակության պորտաբույծ մասը. աշխատանքը խորթ էր նրանց համար: Նրանք բնավ չէին զբաղվում հանրօգուտ որևէ գործով. ո՛չ հողագործությամբ, ո՛չ առևտրով և ո՛չ էլ արհեստներով:¹⁸

Այսպիսով, քրդական վերնախավի հարստացման աղբյուրը նրա ձեռքում կենտրոնացված հողերն ու անասուններն էին, հպատակ ցեղերի շահագործումը, պատերազմները, ավարառությունները, նստակյաց հողագործ բնակչության շահագործումն ու կողոպուտը: «Այդ երևույթը, - գրում է ռուս քրդագետ Մ. Ս. Լազարևը, - բնորոշ է Ասիայի մյուս ժողովուրդների համար ևս (և ոչ միայն Ասիայի), որոնք գտնվում էին հասարակական զարգացման այն նույն աստիճանի վրա, ինչ քրդերը (օրինակ արաբ-բեդվինները, աֆղանները, թուրքմենները): Սակայն քանի որ քրդերն ապրում էին նստակյաց բնակչության հետ խառն, նրանց մոտ (ի հակադրություն, ասենք, Արաբիայի բեդվինների) ավելի մեծ տարածում գտան ոչ թե միջցեղային բախումները, այլ խաղաղ գյուղացիների կողոպուտը»:¹⁹ Իսկ նստակյաց խաղաղ բնակչության մեծ մասն այն ժամանակ «բաղկացած էր հայկական և նեստորական դավանանք ունեցող քրիստոնյաներից, որոնք ըստ անգլիական հյուպատոս Թեյլորի վկայության, որն այդ վայրերն էր այցելել 1860 թ., հանդիսանում էին երկրի միակ աշխատող և արտադրող ուժը»:²⁰ «Պատերազմն ու կողոպուտները քրդերի գլխավոր զբաղմունքն է», - գրում էր օտարերկրացի դիտորդ Իզաբելլա Բերդը:²¹

Բացի ավարից ու կողոպուտից, քրդական ցեղային ավագանու կողմից հայ հողագործ բնակչության շահագործման ձևերից մեկը հարկազանձումներն էին: Որպես կանոն Արևմտյան Չայաստանում հողային հարկի (աշար) գանձման իրավունքը հիմնականում պատկանում էր քրդական ավատատերերին: Բացի պետական հարկերից, քուրդ հարկահավաքները բռնի կերպով հայերից գանձում էին նաև այլ կամայական հարկեր: Քուրդ ավատատերը հայ գյուղացուն հատկացնում էր նաև դրան կամ ցորեն, հե-

տագայում նրանից բազմապատիկ հետ գանձելու պայմանով: Այդ համակարգը կոչվում էր սելեմ կամ սելեֆ, որը քրդական բեյերին հսկայական եկամուտներ էր բերում: Հայ, քուրդ կամ ասորի ռայան սելեֆդարից ստանալով դրամ, սերմ, քարշող անասուններ և այլն, սկզբում դառնում էր մարաբա, որը կիսաճորտական վիճակ էր, իսկ երբ կորցնում էր իր հողակտորը, պարզապես դառնում էր ճորտ, պահպանելով սակայն անձնական ազատությունը: Մարաբայությունը տարբեր վայրերում, նայած տեղական պայմաններին, ավանդույթներին և այլն տարբեր էր: Ավելին, մարաբայության պայմանները ըստ ժամանակի, տեղի և ավատատիրոջ հեղհեղուկ տրամադրության կարող էր ռայայի համար կտրուկ փոփոխության ենթարկվել: Կային մարաբաներ, որոնք մշակում էին բեկի հողը, դառնալով նրա «մարդը», ճորտը: Իսկ կային նաև մարաբաներ, որոնք ունեին իրենց երկրագործական գործիքները, քարշող անասունները և այլն, և վարելով ու ցանելով բեկի հողերը աշար (տասանորդ) էին վճարում պետությանը, իսկ բեկին նրա հասանելիք հարկը՝ նոգսանը: Այս տիպի մարաբան ևս պարտավոր էր իր ընտանիքով հանդերձ բեկի կամ աղայի համար կատարել տնային կամ դաշտային աշխատանքներ, առանց որևէ վարձատրության:²²

Այսպիսով, ըստ էության, մարաբաները ոչ պաշտոնական ճորտեր էին, առանց որևէ իրավունքի և զուրկ պետության հովանավորությունից:

Անառարկելի է, որ Արևմտյան Հայաստանում առկա էին ճորտատիրական կարգեր, ընդ որում միջնադարին բնորոշ ամենածանր ձևով: Թուրքական իշխանություններն աշխատում էին անփոփոխ վիճակում թողնել քուրդ ավատատերերի և հայ գյուղացիության միջև եղած հարաբերությունները, որովհետև քրդական ավատատերերի գյուղացիությունից կողոպտված դրամի մի մասը զարտուղի ճանապարհով մտնում էր նրանց գրպանը:

Աշիրեթապետի համար, որը հսկայական հողատարածություններ ուներ, սակայն չգիտեր և չէր էլ ցանկանում զբաղվել երկրագործությամբ, հայ հողագործը հարստության անսպառ աղբյուր էր. «Քիրտը որս էր անում կամ կռիւ, իսկ հայը նրա համար հաց էր վաստակում, տան ծառայութիւն էր անում ձրիաբար, աղայի տան ամեն պէտքերը հոգում անվարձ, աղայի համար գնում էր Վան կամ Կարանի գնումներ անելու, նրա համար սուրհանդակություն էր անում, տօն օրերին աղային նուէրներ էր տանում և այլն»:²³

Գերմանացի ճանապարհորդ Մյուլլեր Սիմոնիսի վկայությամբ, Բոհթանում քրդական աղաները հայ գյուղացիներից բնամթերային հարկերն այնպիսի չափերով էին գանձում, որ նրանք ստիպված էին լինում միայն փախուստով փրկվել:²⁴ Կոռավճարից (օլամ կամ անգարիա) և

բնամթերային հարկից բացի հայերը պարտավոր էին ավատատերերին և կառավարությանը մուծել նաև դրամական հարկ:

Վերջին հաշվով մարաբայության համակարգը հանգեցնում էր գյուղացիության հողագրկմանը, մանավանդ որ թուրքական օրենսդրության մեջ գոյություն ուներ մի հողված, ըստ որի, եթե մեկը տասը տարուց ավելի տիրեր որևէ կալվածքի, այն դառնում էր նրա սեփականությունը: Այդ օրենքի համաձայն քրդական քոչվորական ցեղերի ավագանին աստիճանաբար ձեռք էր բերում հայ բնակչությանը պատկանող հողերը, արտատեղերը և այլն:

Քրդական ավատատերերից հայ գյուղացիության ճորտային կախվածությունը կոչվում էր «քյաֆիրություն»²⁵ կամ «խաֆիրություն», որը Ռ. Բեկգուլյանցը բնորոշում է որպես «կամայականություն ու բռնություն»:²⁶ Նա նշում է, որ Արևմտյան Հայաստանում քրդական բեկերը պինդ կառչել են խաֆիրության իրավունքից և ոչ մի կերպ չեն ցանկանում զրկվել նրանից:

Բացի նստակյաց հողագործ բնակչության տնտեսական շահագործման ձևերից գոյություն ունեին նաև հարստահարման այլ ձևեր: Դրանցից էր, օրինակ, այսպես կոչված դշլաղայնությունը:²⁷ Խ. Աբովյանը դշլաղայնությունը բնութագրում է հետևյալ կերպ. «խոտառատ լեռներից և հովիտներից իջնելուց հետո, նրանք (քրդական ցեղերը: - Վ. Բ.) իրենց անհամար ոչխարների և եղջերավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում էին հայերի մոտ, առանց որևէ վարձատրության: Դրա համար էլ սրանք ստիպված էին տարվա պատշաճ եղանակին անչափ կեր ու ձմեռվա պաշար պատրաստ պահելու, որպեսզի ազատ մնային նրանց զարհուրելի վրեժխնդրությունից: Ո՛չ մի օրենք, ո՛չ մի իշխանություն չէր կարող պաշտպանել սրանց այդ ճնշումից: Ամենաթեթև դիմադրությունը հատուցվում էր ամենավայրագ դաժանութամբ»:²⁸

«Ամբողջ ամիսներ ապրելով հայկական գյուղերում, - գրում է Ա. Մ. Կոլյուբակինը, - և նրանց վրա դնելով բազմապիսի հարկեր ու տուրքեր, նրանք (քրդերը: - Վ. Բ.) պատրաստ էին ամեն մի հարմար դեպքում կողոպտել գյուղացիներին, քշել տանել անասունների հոտը, այրել խոտը, անասուններին արածեցնելով փչացնել դաշտերը և այլն»:²⁹

Դշլաղայնությունից բացի գոյություն ունեին արտատնտեսական հարկադրանքի այլ ձևեր ևս: Հայ մարաբաները պարտավոր էին ձրի աշխատել բեկերի համար, զանազան ծառայություններ մատուցել, նրանց ապրանքները և վրանները ձրի տեղափոխել, որսորդության գնալու ժամանակ նրանց տրամադրել ձիեր և ուղեկցող տղամարդկանց: Այս կամ

այն բեկի «աղալըխի» սահմանների մեջ մտնող գյուղերից հարսնացու վերցնողը պարտավոր էր բեկին վճարել բաժ (փրկագին):

Որպես խաֆիրության տուրք աշիրեթապետները հայերից նույնիսկ հագուստի կտոր էին պահանջում, ավելին, ստիպում էին վճարել նաև կարելու վարձը:³⁰ Ոչ մի ռայաթ, առավել ևս հայ, իրավունք չունեին բեկին կամ աղային ներկայանալ առանց նվերի: «Գերի տեր խաֆերներ» երբ մասն էր ծնանելու լինին, հանձնյուր ճորտի տունեն ոչխարով և գառամբ այն լուսի պիտի երթան, աղայի զգեստացու պիտի տանին, այնինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մեջ կգտնվին: Երբ պատանեկության հասնի, զենք պիտի պատրաստեն անոր: Կին առելու ատենը՝ դալան (պաշլըղ) պիտի տան հարսնացուի ծնողաց և հարսանյաց պիտույքը պատրաստեն: Եթե մեռանիլ պատահի՝ ոչխար, յուղ, պանիր և այլն տանելով կը մխիթարին գխաֆիրները: Բայց ընդհանուր ազգության նախատինք այն կետն է, որ նախապետազն հայոց պարկեշտության առաջատի հարսներ և սրբության քողի ներքև սնած աղջիկներ՝ այսօր հուլանի եղած խաֆիրներու տան մեջ իբրև հարձ օրերով ծավարը, կորկոտը շինելու, լաթը լվանալու և կարկատելու սպասարկություն կընեն՝ լռին արտասուլք: Եվ անոնց կըլկըլի արտերը քախնելու շաբաթներով կաշխատին մերկ անձամբ և բոկ ոտամբ, արևակեզ և փշահար եղած՝ զիրենց կանաչ արևը կողբան, զիրենց խավար աստղը կանիծանին: Քրիստոս պատարագող քահանայի սրբագործ ձեռքը մատուցված պատարագուցի լուծաներեն՝ խաֆիրներու բաժին պիտի հանվի: Մանավանդ քահանա չգտնված գյուղերը պատարագի երթացող քահանայն յուր ընդունած նվերներեն իբրև սոսկ արտոնություն պատարագի բաժին պիտի տա անոնց:

Չայերու ոմանց կիները՝ եթե ամուլ լինին կամ մանչ զավակ չծնանին, խաֆիրները բռնի երկրորդ կին մը առնել կուտան, որպեսզի զավակ յարուցանելով տարեկան տուրքը տալու յաջորդեն:³¹

Գոյություն ունեին նաև սուրեհի հաշտության զին հարկատեսակը, որը քուրդ բեկերի կողմից գանձվում էր հայերի հետ հաշտ ապրելու համար:^{31ա} Քուրդ ավատատերերի կողմից լայնորեն կիրառվող կամայական հարկերից մեկն էլ այսպես կոչված գյավուրի հարկն էր, որը նույնիսկ պարտավոր էին վճարել հայ հոգևորականները: Այս հարկատեսակի իրականացման արդարացնող հիմքն այն էր, որ հայերը «անհավատ», «գյավուր» են:

Չայ գյուղացիությանը կողոպտելու ձևերից մեկն էր նաև նրանց ուրիշ բեկերից «պաշտպանելու» համար հարկ հավաքելը: Առհասարակ նստակյաց բնակչությունը և առաջին հերթին, իհարկե, հայերը քոչվորների ավերիչ հարձակումներից իրենց ապահովելու համար քուրդ աշիրե-

թապետերին վճարում էին հատուկ հարկ: Ընդ որում, աղաներն իրենց մարաբա հայերին, որոնց անվանում էին ֆըլա, պաշտպանում էին այլ ցեղերի հարձակումներից ու թալանից իբրև իրենց գույքը, ստացվածքը: «Ես երբ քիւրտ աղա մը յարծակեր ուրիշ քիւրտի մը հայուն վրայ, այդ միւս քիւրտն ալ՝ իբր փոխ վրեժ, կը յարծակեր դիմացինին հայուն վրայ, այնպէս որ՝ երկու կողմեն տուժողը միշտ հայը կըլլար»:³² Աշիրեթական արյունախանձ ցեղերի միջև կռիվների ժամանակ հայերը պարտավոր էին կռվողներին անգամ սնունդ մատակարարել, հակառակ դեպքում նրանք չէին կարող խուսափել կողմերի վրիժառույթունից:³³

Այսպիսով, իրավունք չունենալով ինքնապաշտպանության համար զենք կրել, հայ գյուղացիությունը կամա թե ակամա պետք է ընկներ այս կամ այն քրդական առաջնորդի «հովանավորության» տակ, նրան վճարել «բարեկամության հարկ», իսկ դրան չունենալու դեպքում հանձնելու նույնիսկ իր հողակտորը, այդ ճանապարհով փորձելով ձեռք բերել անձնական ապահովություն: Բացի այդ, յուրաքանչյուր հայ ընտանիք պարտավոր էր իրեն պաշտպան ընտրել որևէ մզկիթ կամ թեքքե, նրան վճարելով յուրաքանչյուր բերքի տասանորդը:³⁴

Ավելորդ չէ նշել նաև, որ Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր քրիստոնյա ժողովուրդներից միայն հայերի վրա էր դրված քոչվոր քրդերին ձրի ձմեռային ապաստան տալու պարտավորությունը:³⁵

Չաճախ քուրդ աղաները իբրև իրենց ինչքը, ստացվածքը իրար էին վաճառում կամ նվիրում իրենց մարաբա ճորտ հայերին: «Պէկերը՝ ստացուածքին տէրը ըլլալով, ինքզինքնին տէրը կը նկատէին նաև իրենց «մարապա»-ներու կեանքին: Ուզած ատենին կրնային ծախել, փոխանակել կամ սպանել: Բացարձակ ազատութիւն ունեին ընելու այն, ինչ որ կը կամենային»:³⁶

Աշիրեթական քրդերի մոտ օրենք դարձած սովորույթ էր նաև հայ աղջիկների առևանգումը: Որոշ վայրերում քրդական ավատատերերը սահմանել էին նույնիսկ առաջին գիշերվա իրավունք:³⁷ Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան պաշտոնյա կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ուներ ապաստանել քրիստոնյաների բնակարաններում, որոնք պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձիերին և այլն: Արևմտյան Չայաստանում թուրք և քուրդ կալվածատերերը, ցեղապետերը, շեյխերը, բեկերը, զինվորական ու ոստիկանական աստիճանավորները չէին խորշում օգտվել այս օրենքից: Նրանք գյուղերում թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում էին կանանց, իրենց հետ տանում աղջիկներին, բռնությամբ քշում տանում անասուններին, գողանում կամ վերցնում էին թանկարժեք իրերը և այլն:³⁸

Ցեղապետերը իրենց ղուլամների հրոսակախմբերով ասպատակելով հայկական գյուղերը, հարյուրավոր տղաների ու աղջիկների գերում էին և վաճառում էրգրումի և մյուս քաղաքների շուկաներում:³⁹ Դա իսկական ստրկավաճառություն էր: Առհասարակ հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում XIX դարում առկա էր ստրկավաճառությունը: Բազմաթիվ վայրերում կային ստրկավաճառանոցներ կամ «եսիր բազարներ»: Արևմտյան Հայաստանում կային նաև ոչ մեծ քանակությամբ ստրուկներ:⁴⁰ Այդ նույնը հաստատում է նաև Ա. Համբարյանը. «XIX դարի սկզբին, - գրում է նա, - Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում դեռ գոյատևում էր քաղաքակիրթ աշխարհին ամոթաբեր ստրկությունը: Շահագործելով գլխավորապես տնային աշխատանքներում, տիրապետող վերնախավը շարունակում էր վաճառել ստրուկներին, դարձնելով դա հարստության աղբյուր: 1909 թ. երիտթուրքերը հատուկ օրենք հրապարակեցին ստրկության վերացման մասին, բայց այն չկիրառվեց կյանքում»:⁴¹

Ռուս արևելագետ Վ. Նիկիտինը դիտել է. «Քրիստոնյաներին քրդական առաջնորդները անվանում էին «զիր խուրլի», այսինքն դեղինով (ոսկով) գնված: Այդ արտահայտությունը չափազանց ճշգրիտ է, քանի որ նրանք գնվում և վաճառվում էին իբրև անասուններ»:⁴²

Հատկանշական է՝ որ կեղեքող քրդական վերնախավի համար շատ անգամ ազգությունը ոչ մի նշանակություն չուներ: «Քուրդ աղան խղճի նույն հանգստությամբ կեղեքում, տանջում է հայի հետ միաժամանակ նաև իրեն ցեղակից ու հավատակից քրդին», - գրել է հայ իրականության մեջ քրդական հարցի լավագույն գիտակներից մեկը՝ Ա.Ռոն:⁴³

Հայերի կողմից դպրոց կամ եկեղեցի հիմնելը քրդական վերնախավն ու թուրքական կառավարությունը դիտում էին որպես ըմբոստ քայլ (մուստաշուր): Թեև առանձին վայրերում կային աղաներ, որոնք աշխատում էին հայ եկեղեցին ևս օգտագործել իրենց շահերի համար: Նրանք «կուզեն, որ իրենց գիւղին մեծ եկեղեցի և քահանայ գտնուի, որպեսզի սէր, միութիւն և հնազանդութիւն քարոզէ իշխանավորներու հանդէպ»:⁴⁴

Ռուս արևելագետ Վ. Բարտոլը գրում է. «Քրդերը, չնայած իրենց անառարկելի բնատուր ընդունակություններին, մնացին որպես ելուզակային ժողովուրդ, հաճախ հանդես գալով մշակույթի թշնամու դերում, հատկապես Հայաստանում»:⁴⁵ XIX դարի սկզբին իր զարգացման շավղում քուրդ ժողովրդի մեծ մասը հազիվ էր բարձրացել մինչև նահապետական-ցեղային կացութեան մակարդակը: Այդ առթիվ մեկ այլ ռուս արևելագետ-քրդագետ Մ. Ս. Լազարևը նկատում է, որ քրդերը «XIX դարի սկզբին իրենց զարգացմամբ հետ էին մնացել նույն ժամանակաշրջանում հարևանության մեջ ապրող թուրքերի, արաբների, պարսիկների, հայերի, աղբրեջանցիների և մի շարք այլ ժողովուրդների համեմատ»:⁴⁶

Ցեղային կազմակերպությունը նաև լուրջ արգելք էր ազգային գաղափարների ծննդի, համաքրդական հայրենասիրության և քրդերի՝ որպես ժողովուրդ ձևավորվելու գործընթացի համար: Ցեղակիցը և այլացեղը նրանց համար համանիշ էին բարեկամ և թշնամի իմաստներին: Առավել ևս, որ միևնույն երկրում երկու տնտեսական կացութեան նստակյաց և քոչվորական առկայությունը իր մեջ կրում էր որոշակի հակասություններ և բախումնային իրադրություն:⁴⁷ Այդ էր պատճառը, որ միևնույն երկրում անմիջական հարևանությամբ բնակվող երկու ժողովուրդների՝ հայերի ու քրդերի համակցությունը և նրանց փոխհարաբերությունները XIX դարում շարունակում էր մնալ խիստ բարդ ու դժվարին:

Ռուս դիվանագետ և ակադեմիկոս արևելագետ Վ. Ֆ. Մինորսկին անում էր հետևյալ կարևոր դիտումը. «կյանքը առավել պակաս ռազմաշունչ տարրերի հետ (թուրք-շիաների և հայերի) անկասկած երես է տալիս քրդերին: Ստեղծվում է երկու բարոյականություն. մեկը նրանց համար, ովքեր հարվածին կարող են պատասխանել հարվածով, իսկ մյուսը նրանց համար, որոնց թուլությունը միայն գայթակղեցնում է դեպի հեշտ բռնությունն ու ավարը: Միայն մանր շահերից վեր կանգնած ամուր պետական իշխանությունն է ի վիճակի հավասարակշռելու հարաբերությունները քրդերի ու մյուս ժողովուրդների միջև, սակայն... Թուրքիայում քրդերը մշտապես նեղում են հայերին, իսկ այդ կոպիտ քաղաքական քսությունը անպատիժ հարստացման հեռանկարի հետ հանդիսանում էր մի գայթակղություն, որի առջև չէին կարող դիմանալ նաև շատ ավելի քաղաքակրթված բազմաթիվ ժողովուրդներ»:⁴⁸

XIX դարում քրդական ավատատերերի կողմից հայ գյուղացիության շահագործումը, հարստահարությունները և բռնությունները օսմանյան կառավարությունը ոչ միայն չէր կանխում, այլև, հակառակ խրախուսում էր, որովհետև հայերի հաշվին այդ ավատատերերի դիզած հարստության մի մասը զարտուղի ճանապարհներով անցնում էր թուրքական իշխանություններին: Մյուս կողմից, այդ սադրիչ ու նենգ դիրքորոշումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակներ: Անտարակույս, քրդական ավատատերերի լուծը և նրանց բռնություններն անջրպետ էին ստեղծում երկու հարևան ժողովուրդների միջև, նպաստելով նրանց փոխադարձ հարաբերությունների լարվածությանը: Իսկ դա թուրքական կառավարության համար երաշխիք էր Արևմտյան Հայաստանում իրենց համար կայուն և խաղաղ վիճակ ապահովելու համար: Քրդական աշիրեթապետերի կողմից հայերին սարսափի մեջ պահելը, թալանը, կեղեքումներն ու հարստահարությունները ձեռնտու էին օսմանյան պետությանը, որովհետև նման պայմանները զրկում էին հայ ժողովրդին համախմբվելու և դիմադրելու կարողությունից: Այդ բոլորի պատճառով թուրքական իշխա-

նությունները ոչ թե զսպում, այլ խրախուսում էին աշխրեթապետերի ավերող տենչը:

Այն հանգամանքը, որ հայերի ձեռքում էր կենտրոնացված առևտուրը, դրամական միջոցները և առհասարակ գործարար կյանքի կարևորագույն լծակները, նույնպես օգտագործվում էր թուրքական կառավարող շրջանների կողմից հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանք սերմանելու և եղածը խորացնելու համար:

Թուրքական վարչությունը աշխատում էր քրդական զանգվածների մոտ հայերին ներկայացնել որպես տգորուկներ, շահագործողներ: «Ազգի առաջնորդները», հատկապես Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, հիանալի գիտակցում էին, թե ինչ հրաբխի վրա է նստած արևմտահայությունը և այդ պատճառով կոչ էին անում լինել հնազանդ և չզրգռել մահմեդական մոլեռանդ ամբոխի կրքերը:⁴⁹

4. Պոլսի հայոց պատրիարքարանը կոչ էր անում Արևմտյան Հայաստանի բնակչությանը չխառնվել այնտեղ ծավալվող հակապետական շարժումներին, գտնելով, որ դա կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ հայության համար: Կոստանդնուպոլսի Պողոս Ադրիանոպոլսեցի պատրիարքը 1821 թ. ապրիլի 27-ին գավառների առաջնորդներին ուղղված շրջաբերականում գրում էր. «Առաքեցաք առ քեզ զկոնդակս եւ գիրս, զգուշացնել զբոլոր ժողովուրդս վիճակի ձերոյ, զի մի ոք ընդ ապստամբացն լինելով կամակից ի մահ մատնեսցեն անխնայ համայն ընտանեօք, ընդ նմին եւ ազգս մեր առաջին տերութեան վատահամբավ երեսեցի...»:

Իր այդ հորդորը պատրիարքը հիմնավորում էր նրանով, որ «մենք ռայա ենք, պարտիմք տերութեան հնազանդիլ եւ այլազգաց ամենեցուն եւ յարածամ աղօթիլ կենաց արքային մերոյ...»:⁵⁰

XIX դ. սկզբին Արևմտյան Հայաստանը և թուրքական Քրդստանը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի քուրդ բնակչություն ունեցող շրջանները, բաժանված էին ութ փաշալիքների, որոնց նկատմամբ մինչև 40-ական թվականների վերջը սուլթանի իշխանությունը պարզապես անվանական էր: Դրանք փաստորեն կառավարում էին առանձին քրդական իշխանապետեր, որոնց կախվածությունը կենտրոնական կառավարությունից արտահայտվում էր միայն նրանով, որ նրանք ամեն տարի սուլթանի գանձարանն էին մուծում որոշակի հարկեր: Ընդ որում, այն շրջաններում, որտեղ տարածված էր տեղի տիրակալ-ֆեոդալների բացարձակ իշխանությունը, գոյություն ունեին իրենց իրավական նորմերը, կառավարման օրենքները, հարկային համակարգը: Այնտեղ, ուր թուրքական իշխանու-

յունը դեռևս ուժ ուներ, այն միաշխուսվում էր տեղական ավատատերերի ինքնավարության հետ, իրավական և սոցիալ-տնտեսական հարաբերությունները ձեռք էին բերում չափազանց բազմազան և խայտաբղետ երանգավորում: Յուրաքանչյուր շրջան, նայած իր տիրակալի քմահաճույքին, ուներ իր օրենքներն ու կարգերը:⁵¹

Այսպես, Բայազետի Բայուլ փաշայի ավատական տունը իր տիրապետության տակ գտնվող շրջանը կառավարում էր ժառանգական իրավունքով, որպես միանգամայն ինքնիշխան տիրակալ, հարկեր չմուծելով սուլթանական կառավարությանը: Բաղեշի շրջանը ևս կենտրոնական կառավարության կողմից ճանաչվում էր որպես քրդական իշխանապետություն, որի սահմանները տարածվում էին մինչև Վան ու Դիարբեքիր: Նրա մեջ մտնում էին բուն Բաղեշի, Մուշի, Սասունի, Չըտըզանի, Խիզանի և մի շարք այլ շրջաններ:⁵² Բաղեշի շրջանում ընդհուպ մինչև 1849 թ. կառավարում էր քուրդ ավատատեր Շերիֆ բեյը, որն իր անկախությունը պահպանելու համար անընդհատ զինված պայքար էր մղում թուրքական իշխանությունների դեմ:⁵³ «Այս պէլը ոչ թուրքիոյ սուլթանը կը ճանչնար և ոչ ալ Պարսից շահը: Երկուքն ալ հավասարապէս զայն կը փաղաքէին, քաղաքին ռազմագիտական դիրքին պատճառով, որը կը գտնուէր Հալէպի և Դաւրեթի հաղորդակցութեանց գծին վրայ»:⁵⁴

Իր տրամադրության տակ ունենալով հսկայական քանակությամբ զինված մարդիկ, Շերիֆների տոհմը աշխատում էր ընդլայնել իր հողային տիրույթները: Նրանց այդ անսանձ տենչին հագուրդ կարող էին տալ միայն հայերի հողերն ու ունեցվածքը, որոնք բռնագրավվում ու միացվում էին էմիրի կալվածքներին:⁵⁵

Վանի փաշալիքում գլխավոր քրդական իշխանապետությունը Հաքյարիի (Աղբակ) իշխանությունն էր, որը կառավարում էր Ջուլաներիկում նստող էմիրը: Նա նույնպես չէր ճանաչում թուրքերի գերակայությունը և բարեկամական հարաբերությունների մեջ էր Իրանի հետ:⁵⁶ Այս իշխանությունը կարողացել էր իր տիրապետությունը հաստատել նաև հարևան Շատախի նկատմամբ:⁵⁷ Թեև փաշայության կենտրոնում նստում էր Բ. Դռան ներկայացուցիչը՝ փաշան, սակայն նրա իշխանությունը զուտ ծնական էր, որովհետև իրական իշխանությունը կենտրոնացված էր քրդական էմիրի ձեռքում: Մինչև թանգիմաթն ընկած շրջանը քաղաքի կառավարմանը մասնակցում էին նաև հայ ամիրաները, որոնց անվանում էին նաև հոճա, չորբաջի կամ օնիլքեր:⁵⁸

Հաքյարիի էմիրության մի շարք շրջանների (Դապրաշեն, Թիյարի, Թորի և այլն) բնակչությունը իր հիմնական մասով հայեր ու ասորիներ էին: XIX դ. սկզբին Հաքյարիի էմիրի տիրապետության տակ էր գտնվում նաև Սոքսի շրջանը:⁵⁹

Ղաջարական Իրանը հավակնություններ ուներ այդ էմիրության տարածքի նկատմամբ: Այդ ուղղությամբ հատուկ եռանդ էր դրսևորում թագաժառանգ, Ատրպատականի կառավարիչ Աբբաս Միրզան, որին հաջողվել էր իր կողմը գրավել էմիրության խոշորագույն ցեղերից մեկին՝ բեյլամ ցեղին և նրան հանել Չաքարիի էմիր Մուստաֆա-փաշայի դեմ: Վերջինս, թեև իրավական առումով հանդիսանում էր թուրքական սուլթանի վասալը, սակայն փաստացի կերպով ճանաչում էր իրանական շահի գերիշխանությունը:⁶⁰

Ամենամեծ և ամենաուժեղ քրդական իշխանապետություններից մեկը Ջեզիրեն էր, որը մտնում էր Դիարբեքիի էյալեթի մեջ և կառավարվում էր Բադրխանների հզոր ընտանիքի կողմից, որը ծագում էր իր շուրջը համախմբել քրդական մնացած իշխանություններին, իրեն միացնել Վասպուրականի նահանգը, Տարոնն ու Բիթլիսը և այդ հսկա տարածքի վրա ստեղծել Օսմանյան կայսրությունից միանգամայն անջատ «անկախ Քրդստան»:

Թուրքական տիրապետությունը բնավ չէր ճանաչում նաև Դերսիմի⁶¹ իշխանությունը, որն ընկած էր Եփրատի արևելյան կողմում և Կամախի հարավային մասում:

Առհասարակ, համարյա ողջ Արևմտյան Չալաստանի տարածքում ցրված էին քրդական մեծ ու փոքր անկախ իշխանապետություններ, որոնք հրաժարվում էին ենթարկվել թուրքական թևարկությանը: Նրանց միջև տարածքների և իշխանության համար անընդհատ մղվում էր համառ ու անզիջում արյունոտ պայքար, որի հետևանքով երկրամասը գտնվում էր անկման ու տնտեսական քայքայման վիճակում:

Եվ այսպես, XIX դարի սկզբին Արևմտյան Չալաստանում քրդական իշխանապետությունների իրավասության ներքո գտնվող շրջաններում հայ ժողովուրդը գտնվում էր քրդական ավատական վերնախավի լծի տակ: Միայն առանձին շրջաններում դեռ շարունակում էին իրենց գոյությունը պահպանել հայկական կիսանկախ իշխանությունները: Դրանք սովորաբար գտնվում էին լեռնային անմատչելի վայրերում, որտեղ թուրքական վարչությունը և քրդական ֆեոդալները ի վիճակի չէին հաստատել իրենց հսկողությունը: «Միայն մնացած էին մի քանի լեռներ, – գրում է Արշակ Ալպոյաճյանը, – որոնց վրա հայ մարդիկ զենքի ույծով կը պահպանեին իրենց ազատությունը: Այսպես, քանի մը լեռնային փոքրիկ գաւառներու մէջ պահուած էին հայկական կիսանկախութիւններ»:⁶²

Այդպիսի իշխանապետություններից առավել աչքի ընկնողները գտնվում էին Սասունում, Վասպուրականի նահանգի մեջ մտնող Շատախում և Մոքսում, Բայազետի փաշայության Սավուր վայրում, Իսյանում, Խնուսում, Ջեյթունում, Դիարբեքիի նահանգում, Դերսիմում, ճապաղջ-

րում, Էրզրումի փաշայության մեջ մտնող Տուժիկում, Մանազկերտում և այլն: Սասունի լեռնաշխարհի գյուղերը, օրինակ, «երկար դարերու վարժությունը ստացած էին կիսանկախ կյանքի մը և միշտ մերժած քուրդ աշիրթներու հարկատվությունը և նույնիսկ պետության անմիջական և ուղղակի հսկողությունը»:⁶³

Օսմանյան կառավարության ենթարկողական փորձերին դիմադրելու համար հայկական այդ իշխանությունները ստիպված էին դաշնակցել հարևան քրդական իշխանապետությունների հետ: Այս «...մի քանի գաւառներու հայերը, իբրեւ քաջ եւ պատերազմասէր լեռնականներ՝ ազատութիւնը կը պահէին քիւրտերուն հետ միացած», – գրում է Ա. Ալպոյաճյանը:⁶⁴

Լեռնային Չալաստանի անմատչելի բարձունքներում գոյություն ունեցող այս կիսանկախ և անկախ համայնքները, որոնք կառավարվում էին ռազմական դեմոկրատիայի սկզբունքներով,⁶⁵ հարևան քրդական ցեղերի հետ գտել էին զինական դաշնակցության մի ձև, որի շնորհիվ և՛ քրդերը, և՛ հայերը կարողանում էին պաշտպանել իրենց ազատությունը: «Ըստ երևութիւն նման վարչակարգեր կամ կոնֆեդերացիայի նույնատիպ ակտեր են գոյություն ունեցել հայկական մյուս իշխանությունների մեջ ևս, քանի որ ամենուրեք առանց բացառության հայերն ու քրդերը խառն էին բնակվում և օսմանյան հզորությանը դիմագրավում միասնաբար, իրար հետ վարվում բարեկամաբար, իբրև զենքի հավասարազոր եղբայրներ, պաշտպանում երկու ժողովրդին հավասարապես թանկ ազատությունն ու անկախությունը»:⁶⁶

Չալակական իշխանապետությունների առաջնորդները՝ մելիքները, իշխանները, իրենց երկրամասերի իսկական տերերն էին, նրանց ձեռքում էր կենտրոնացած ողջ ռազմական և վարչական իշխանությունը:⁶⁷ Նրանց մի մասը նույնիսկ սեփական դրամ էր կտրում: Այսպես, Դերսիմում, Միրաքյան իշխանության իշխաններից Միրոն հայկական տառերով և հայ թագավորների պատկերներով սեփական դրամ էր հատում:⁶⁸

Չալ-քրդական հարաբերությունների մեջ առավել բարդ իրավիճակ էր ստեղծվել հողային հարաբերությունների հարցում: Ինչպես հայտնի է, XIX դարի սկզբին հողօգտագործման ռազմաավատական համակարգը, որը բնորոշ էր Օսմանյան կայսրությանը, արդեն սպառել էր իրեն: Քուրդ առաջնորդները, որոնք ժամանակին սուլթաններից հողատարածություններ էին ստացել ռազմական ծառայության, թուրք-իրանական սահմանը պաշտպանելու և այլ ծառայությունների դիմաց, այդ հողերը դարձրել էին ժառանգական հյուքյումաթներ, օջաքլըքներ, յուրդլուքներ, դառնալով դրանց ինքնիշխան դերբեյներ: Սուլթանը այլևս ի վիճակի չէր տնօրինելու քրդական ցեղային ավագանու տրամադրության տակ

գտնվող պետական հողերի վերաբաժանման գործը: Հյուքյունաթների, օջաքլըքների և յուրդլուքների նկատմամբ պետական հեղինակությունը դարձել էր լոկ ձևական: Ողջ Օսմանյան կայսրությունում կենտրոնախույս ծագումների ուժեղացման պայմաններում քրդական ծորապետ-դերեբեյների կենտրոնական կառավարությունից լրիվ անջատվելու և սեփական երկրամասի տեր ու տնօրեն լինելու ցանկությունը հասել էր աննախընթաց չափերի:

Պ. Ի. Ավերյանովը գրել է. «Քրդերը հասցրին նշանակալից չափով ազատվել Պարսկաստանի և հատկապես Թուրքիայի իշխանությունից և XIX դարի սկզբին Քրդստանի (Արևմտյան Հայաստանի: - Վ. Բ.) նշանակալից մասը փաստորեն օգտվում էր համարյա լրիվ անկախությունից, աննշան հարկերը և ռազմական միավորումները հատկացվում էին Թուրքիայի և Պարսկաստանի կառավարություններին միայն ուժի ճնշման ներքո»:⁶⁹

Նման պարագաներում, երբ թուրքական իշխանությունը դեռ իր ամբողջ ուժով հաստատված չէր Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, Բ. Դուռը ստիպված էր դիմել խուսանավելու քաղաքականությանը: Նա «ստիպյալ կհաստատեր ու կքաջալերեր այն իշխանությունը, որ գործը կներկայանար, թեկուզ նա ապստամբեր, հաղթեր ու սպաներ իր ներկայացուցիչներին անգամ»:⁷⁰

Ամենուրեք թափով շարունակվում էր քրդական դերեբեյների կողմից հայերի հողերի բռնագրավումները: Դերսիմի, Չարսանջակի, Խարբերդի, Բալուի, Արաբկիրի, Ակնի, Մալաթիայի, Դիարբեքիի և այլ վայրերի «...հայերըն ըլ իրենց մէջ թախսիմ (բաժանում: - Վ. Բ.) երած էին. ինչու օր ամենքս ըլ անունց եսիր (գերի) էանք: Հիքմաթ (կառավարություն) չի կար... աս տեղաց հիքմաթն ըլ իրենց էին ու թագաւորն ըլ: ...Էրկրի հողերը, ջրերը, տները, մալերն ու միլքերը պիտունն (բոլորը) ըլ տարապակիներունն էր: Տարապակին թէ օր ուզէր՝ մեզի կը պէլէր (պահեր), թէ օր չուզէր՝ չէր պէլէր ինչպէս հիմա ըլ. թէ օր ուզէր՝ կմորթէր, թէ օր չուզէր՝ չէր մորթէր: ...Հայերս տարին տասներկու ամիս՝ օլուկով ու ճուճուկով (երեխաներով) կը բանէանք, կդատէանք միմակ անոնց համար: Շատ հեղու (անգամ) կըլլէր օր, եր/բ մէկ տարապակին մէկալ տարապակուն դէմ տուշմանութն ունենար՝ մեզ-էրկու կո(դ)մի պատկերուն հայերս-դիմաց դէմ կկայնըցընէին ու մէկմէկու դէմ ծեծիվ (կռիվ) էնել կուտային, հազկէ օր (միմչև որ) մէկ կո(դ)մինը աղկէկ մի քարդուէր ու ալք ըլլէր (պարտվեր): Եր/բ որ հայերուս մէջ աղկէկ հարս մի, աջխիմ (աղջիկ) մի, եա՛ (կամ) կըր-րիճ տղայ մի օր տեսնային՝ եա՛ /ս/պաննել, եա՛ տաճկցնել պիտի տային... վար հասըլի (վերջապես), մենք պիթունս ըլ անոնց համար կապ-

րէանք ու կաճեանք... մէկ խօսքով-մեղա՛, մեղա՛յ-մեր ասուազն (աստված) անոնք էին»:⁷¹

Հիրավի, դերեբեյների սանձարձակությունները, շահատակությունները, բռնություններն ու կամայականությունները չափ ու սահման չունեին. նրանք ստիպում էին հայ գյուղացիներին նստել դաշտի փոսերի մեջ, որպեսզի իրենք նրանց գլխի վրայով «ջիրիթ» խաղան: Նույնիսկ հայերի տներում նրանց հացը ձրիաբար ճաշակելու համար պահանջում էին «դիշ քիրասի» (ատամների վարձ):⁷²

«Արարատ» ամսագիրը գրում էր, որ դերեբեյությունների շրջանում «իւրաքանչիւր գաւառաց կը տիրէր մի քիւրդ պէլ կամ շեյխ, որոյ ոչ մահմետական բնակիչները իրենց հայերը կանուանէին: Յարքունուստ կանոնաւոր տուրք հաւաքողներ չկային, իրենք բեզերը ըստ հաճոյս կստանային հասարակութիւնից, որից չնչին մաս մը ժամանակ առ ժամանակ հազիւ կը մտնէր կառավարութեան սնտուկը, մնացեալն իրենք կը կլանէին:

...Յայտնի աւարառութիւնք անպակաս էին, ամեն մի բեզի ասպատակներ կը շրջէին ոչ իւր, այլ մի ուրիշ գաւառի հայերը կողոպտելու, որ յաճախ այս պատճառով գաւառապետաց մէջ կռիւք կծագէին, որի հետևանքը այն կլիմէր, որ յաղթանակ տանող պէլը՝ յաղթվողի աշխարհը տակն ու ու վրայ կանէր, լիապես գոհանալով նորա հայերի կողոպուտով»:⁷³ Քրդական բեկերն ու աշիրեթապետերը նույնիսկ վաճառքի էին հանել հայկական վանքերի վանահայրերի պաշտոնները:⁷⁴

Անգլիացի Ջոն Մակդոնալդ քինները, որը 1812 թ. ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, վկայում է, որ «Հայաստանի մեծ մասը ենթարկվում է ուժեղ փաշաների (իմա՛՝ քուրդ: - Վ. Բ.), որոնք անվանական կերպով էին միայն կապված Բ. Դռան հետ և արհամարում էին նրա հրահանգները»: Որ «հայերը հպատակ են մասամբ թուրքերի և մասամբ քուրդ բեկերի, սակայն հավասարապես ճնշվում էին այդ երկուսի կողմից էլ...»:⁷⁵

Սոցիալական և ազգային ճնշումներից, հարստահարություններից ու կողոպուտից փրկվելու համար դերեբեյությունների շրջանում ևս - ծայր է առնում արևմտահայության արտագաղթը հայրենիքից, որը ժամանակ առ ժամանակ ընդունում է զանգվածային բնույթ. «...Չունեն գօտի մեջքունք կապած բոկ և հետի իրենց թշուառ ընտանեաց ձեռքէն բռնած յերկրտ յերկիր կածէին, յԱյրարատ, Արտագ, ի Կեսարիա, ի Տիտտա և ի Հի-ճագ...»:⁷⁶

Այսպիսով հայությունը զանգվածորեն մաշվում ու դուրս էր մղվում իր հայրենի բնօրրանից: Այդ առթիվ Լեոն բերում է հետևյալ տվյալները. Բաղեշն ուներ 25 հազար տուն ազգաբնակչություն, որ

սպառնալից և ուրիշ տեղեր փախչելով, դառավ 500 տուն: Պատերազմները նվազեցրել էին նաև Մուշի հայ ազգաբնակչությունը, որ առաջ մեծամասնություն էր կազմում քաղաքում, իսկ XIX դարի սկզբին խիստ կրճատվել էր:⁷⁷ Ազգաբնակչության նվազման միևնույն իրականությունն էր տիրում Մանազկերտի և Բուլանջիի շրջաններում: «Այդտեղ կային 360-ից ավելի գյուղեր, մեծագույն մասամբ հայաբնակ, բայց դարի վերջերում ազգաբնակչությունն այնքան ջնջվել էր, որ հազիվ 20 հատ գյուղ էին մնացել: Իսկ Բասեն գավառի ազգաբնակչությունը բնաջնջումից ազատվելու միակ միջոցն այն էր դարձրել, որ իր գյուղերը շարժական դրության մեջ էր պահում, անընդհատ փոխելով նրանց մի տեղից մյուս տեղը և այսպիսով խույս տալով քրդական և թուրքական կեղեքումների մշտական վայրեր դառնալու դժբախտությունից»:⁷⁸

Այսպիսով, դերբեյությունների տիրապետության շրջանում հայքրդական հարաբերությունները գտնվում էին ծայրահեղ լարված վիճակում: Այստեղ ազգային և սոցիալական ճնշումներն ընթանում էին կողք կողքի, լրացնելով մեկը մյուսին: Հենց այս շրջանից սկսած հողային հարցը դարձավ ազգային հարցի անբաժան, բաղկացուցիչ մասը:

XIX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը թուրք պատմաբանների իսկ գնահատմամբ թևակոխել էր իր քայքայման, վայրէջքի ու անկման շրջանը:⁷⁹ Սուլթան Սելիմ III (1789–1807) կառավարման ժամանակաշրջանը նշանավորվեց երկրի սոցիալական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում հնի և նորի հակամարտությամբ: Գիտակցելով, որ երկիրը կանգնած է փակուղու առջև, 1792–1798 թթ. ընթացքում սուլթանը ձեռնամուխ եղավ բարեփոխումների իրականացման, որոնք հայտնի են նիզամի ջեդիդ (նոր կարգ) անունով: Սելիմ III և նրա մերձակա շրջապատի հիմնական նպատակը, անշուշտ, կայսրության նախկին ռազմական հզորության վերականգնումն էր: Սակայն ռազմական բարեփոխումների իրականացման ընթացքում աստիճանաբար գիտակցվում էր, որ հույժ անհրաժեշտ է զարգացնել նաև տնտեսությունն ու առևտուրը, ամրապնդել կենտրոնական իշխանությունը, մի խոսքով իրականացնել լուրջ բարեփոխումներ:

Օսմանյան տիրապետող շրջանները ակնառու կերպով տեսնում էին, որ ճգնաժամն ու անկումը անխուսափելիորեն իրենց հետ բերում են կայսրության ճնշված ժողովուրդների կենտրոնախույս ձգտումների արագ զարգացում և թուրքական բռնատիրական լծի դեմ ազատագրական շարժումների հարաճուն վերելք: Այդ պրոցեսն արագանում էր համընդ-

հանուր տնտեսական քայքայման և նահանգներում կենտրոնական իշխանության դիրքերի թուլացման հետևանքով:

Կայսրության առջև հառնած մարտահրավերներից էր նաև այն, որ XVIII դարի վերջին և XIX դ. սկզբին վիթխարի պետության տարբեր մասերում տեղի էին ունենում նահանգական փաշաների անջատողական ելույթներ: Օրինակ, Ռումելիան վեր էր ածվել Կըրջալիների վայրագ սանձարձակությունների մի ասպարեզի: Վիդինի փաշա Օսման Փազվանդ-Օղլուն ևս պարզել էր անհնազանդության դրոշ, որի հետևանքով այդ երկրամասը փաստորեն դուրս էր եկել սուլթանական հսկողությունից: Գլուխ էին բարձրացրել նաև անատոլիական այանները: Այդ երկրամասում անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ելուզակությունը հասել էին անսխալընթաց չափերի: Անատոլիայում անջատողական ավատատերերի մեջ աչքի էին ընկնում նաև քրդական ինքնիշխան ծորապետ-դերբեյները: Կառավարության բազմաթիվ փորձերը «կարգի հրավիրելու» նրանց, ավարտվեցին ծախողմամբ: Զախողման մատնվեցին նաև Սելիմ III բարեփոխումները:

Ողջ Արևելյան Անատոլիան հայտնվել էր այանների և դերբեյների տիրապետության տակ, որոնք դարձել էին կատարելապես ինքնագլուխ և չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը: Վերջինիս միայն ուժի օգնությամբ էր հաջողվում Արևմտյան Հայաստանում և Քրդստանում ինքնիշխան ծորապետ-դերբեյներից գանձել աննշան քանակությամբ հարկեր և նրանցից ստանալ զինված ջոկատներ:⁸⁰ «Օտտոմանյան կայսրությունը,– գրում էր թուրքիայում ռուս ռազմական դիտորդներից մեկը,– ինչպես հայտնի է, ընդգրկում է լայնատարած երկրներ, որոնց նկատմամբ սակայն իրականում Բ. Դուռը չունի ոչ մի ազդեցություն, և անկասկած փառիշափին դեռևս սպասում են մեծ նվաճումներ իր սեփական պետության սահմաններում»:⁸¹ Իսկ Օսմանյան կայսրությունում զինվորական ծառայության մեջ գտնվող պրուսական սպա Հելմուտ ֆոն Մոլտկեն, անդրադառնալով կառավարության և քրդական իշխանապետությունների փոխհարաբերությունների հարցին, գրում էր. «Բ. Դուռը երբեք չի հաջողվել այս լեռներում ժառանգական իշխանությունը գետին տապալել... Քրդական ավազանին մեծ իշխանություն ունի իր հպատակների վրա: Նրանք մշտապես գծովում են միմյանց հետ, վիճարկում են Բ. Դուռն իշխանությունը, հրաժարվում են հարկեր մուծելուց, չեն հանդուրժում ոչ մի զինակոչություն և ապաստանում են բարձր լեռների ամրոցներում»:⁸² Օսմանյան կայսրության պաշտոնական փաստաթղթերից մեկում ուղղակի նշվում էր, որ պետության նահանգային ղեկավարության և դերբեյների միջև ստեղծվել էր սերտ համագործակցություն. «վալիներից ոմանք,– ասվում էր այդ փաստաթղթում,– դերբեյների ա-

ջակցությամբ, ի չարը գործադրելով իրենց իշխանությունը և գործելով բռնությամբ, ձեռք են բերում հպատակների ունեցվածքը և արյունով ողորում նահանգները: Մինչդեռ գերագույն իշխանությունը, այդպիսի հանդգնության վկան, ի վիճակի չէ սանձահարելու այդ անկարգությունները»:⁸³

Կառավարության կողմից քրդական դերերեյների դեմ պայքարելու միակ հնարավոր ձևը նրանց մոտ վարձու մարդասպան ուղարկելն էր: Հաճախ էր պատահում, որ այս կամ այն խռովարար դերերեյը ճաշելուց հետո անմիջապես մեռնում էր, կամ առավոտյան նրան գտնում էին դաշույնը կրծքի մեջ խրված:⁸⁴

Սակայն պայքարի այդ ձևը ավելի շուտ վկայում էր կենտրոնական իշխանության թուլության մասին: Երկրի արևելյան շրջաններում պետության կենտրոնացման խնդիրը դժվարանում էր ոչ միայն կենտրոնից այդ նահանգների աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական մեկուսացվածությամբ, այլև այն պատճառով, որ այնտեղ զգալի տեսակարար կշիռ էին կազմում վաշկատուն ցեղերը, որոնց քուջվորական կենցաղը մեծապես արգելակում էր պետությանը նրանց նկատմամբ հսկողություն սահմանել: «...Ցեղերի նկատմամբ հսկողության սահմանումը, — նշում էին եվրոպացի դիտորդները, — եղել և մնում է կենտրոնական կառավարության համար մշտական պրոբլեմ»:⁸⁵

Անշուշտ թուրքիայի առավել հեռատես պետական գործիչները հասկանում էին, թե ինչ վտանգներ է այդ բոլորը պարունակում պետության հետագա ճակատագրի համար: Նրանց կարծիքով երկրի արևելյան շրջաններում հույժ անհրաժեշտ էր պետության անվանական տիրապետությունը դարձնել իրական: Հենց այդ գործիչների ճնշման ներքո XIX դարի առաջին տասնամյակներին կառավարությունը փորձեց զենքի օգնությամբ իրականացնել երկրի կենտրոնացման քաղաքականություն, որը, սակայն, ինչպես ողջ կայսրության տարածքում, այնպես էլ հատկապես Արևելյան Անատոլիայում, հանդիպեց կատաղի դիմադրության: Միանգամայն ակներև դարձավ, որ քրդական դերերեյությունները լի են վճռականությամբ՝ արյան գնով պաշտպանելու իրենց անկախ վիճակը: 1806 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը, որն Օսմանյան կայսրությանը դրեց դժվարին վիճակի մեջ, էլ ավելի ոգևորեց դերերեյներին ու այաններին:

Առաջինը 1806 թ. ապստամբեց Սուլեյմանիեի բաբան քրդական ցեղի առաջնորդ Աբդուրրահման փաշան, որը ոչնչացրեց իր դեմ ուղարկված սուլթանի զորամասերը: Հավակնություններ ունենալով Սուլեյմանիեի նկատմամբ, Իրանը քաջալերում էր քրդական այս շարժումը, ընդհուպ մինչև թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու վճռականությամբ:⁸⁶ Թուրքերի վիճակը ավելի էր բարդանում մանավանդ այն պատ-

ճառով, որ նրանք ստիպված էին միաժամանակ պայքար մղել արաբական երկրներում ծավալված վահաբիական շարժման դեմ:

Ուժերի մեծ լարումով թուրքական բանակին հաջողվեց ջախջախել Աբդուրրահման փաշայի վտանգավոր շարժումը: Սակայն այդ ապստամբությանը հետևեց 1815 թ. Վանի և Բայազետի փաշայությունների քրդերի ապստամբությունները, որոնց միացան նաև Իրանի քրդական ցեղերը: Այնուհետև 1818, 1820 և 1822 թթ. տեղի ունեցան քրդական ապստամբական նոր բռնկումներ:⁸⁷

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում մի շարք վայրերի՝ Ուսանդուզի, Բոհթանի, Բեհբեհանի, Հաքյարիի և այլն քրդական ցեղապետերը իրենց աշիրեթներով հրաժարվեցին մասնակցել պատերազմին և բացահայտ ձևով հանդես եկան սուլթանի դեմ: Իսկ Բայազետի Բայուլ փաշան նույնիսկ կապի մեջ մտավ ռուսական ռազմական իշխանությունների հետ:⁸⁸ Շուտով նրա օրինակին հետևեց նաև Մուշի Էմին փաշան: Ի դեպ, գեներալ Պասկևիչը, որին քաջ հայտնի էին այդ ցեղապետերի տրամադրությունները, իր կառավարությունից թույլտվություն ստացավ 100 հազար ռուկի ծախսել նրանց ընծաներ բաժանելու նպատակով:⁸⁹ Պատերազմի ժամանակ քրդական ապստամբությունների առանձին օջախները ի վերջո միաձուլվեցին և բռնկեց մի հսկայական ապստամբության բոց:⁹⁰

Օսմանյան կայսրության համար հատկապես վտանգավոր էր Ուսանդուզի լեռնային շրջանում սկսված քրդերի հակակառավարական հուժկու շարժումը, այդ շրջանի միր (կառավարիչ) Ահմեդ փաշայի գլխավորությամբ: Վերջինս բացահայտորեն ձգտում էր իր իշխանության ներքո ստեղծել քրդական պետություն, որն ընդգրկելու էր ողջ Իրաքյան Բրդստանը և Իրանական քրդաբնակ հողերի մի մասը: Նա դարձավ Բադդադի քյոլեմենների առաջնորդ Դավուդ փաշայի գաշնակիցը, որը նույնպես փորձում էր ազատվել սուլթանական գերիշխանությունից: Ահմեդ փաշան նաև կապեր հաստատեց Իրանի հետ, ինչպես նաև բուն թուրքիայում կառավարության նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող գործիչներ Մուհամմեդ փաշա Ինջե Բայրաքթարի և Մուստաֆա Ռեշիդ փաշա Դիփլոմաթլուի հետ:

Սիրիայի եգիպտացի կառավարիչ Իբրահիմ փաշայի գաղտնի գործակալները, իրենց հերթին, եռանդուն աշխատանք էին տանում ապստամբների շրջանում, նրանց մոտ «հույսեր բորբոքելով թուրքիայից լրիվ անջատվելու վերաբերյալ»:⁹¹

Կայսրության արևելյան շրջանները ըստ էության դուրս էին եկել սուլթանի տիրապետությունից: Ահմեդ փաշայի հսկողության տակ էին անցել հսկայական երկրամասեր, որոնք տարածվում էին Տիգրիսի ափե-

րից մինչև Ատրպատականի քրդաբնակ շրջանները, ընդգրկելով այնպիսի կարևոր ռազմատնտեսական հանգույցներ, ինչպիսիք էին Նիսիբիսը (Մծբին), Մարդինը, Մոսուլը ու Սուլեյմանիեն:⁹²

Չնայած նրան, որ պատերազմի տարիներին քրդական ցեղերի շրջանում բռնկել էին հակակառավարական ապստամբություններ, օսմանյան կառավարությանը հաջողվեց Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներգրավել մի շարք քրդական ցեղերի:⁹³

Մեկնաբանելով այդ իրողությունը, ֆրանսիացի արևելագետ Լյուդովիկոս դը Քոնթանտոնը գրում է, որ քրդերը «մինչև հիմա կուզեն իրենց անկախությունը ձեռք բերել, երբ ատենը գայ տուրք վճարելու և զինուոր տալու, բայց սուլթանին հաւատարիմ հպատակները կը դառնան, երբ քրիստոնեայ գիւղերուն վրայ ճնշում ի գործ դրուի»:⁹⁴

Ռուսական բանակների արագ առաջխաղացումը քրդական ավատատերերի մոտ ծնում էր այն մտայնությունը, որ իրենց տիրապետության տակ եղած երկրամասերը այլևս երբեք չպետք է մնան իրենց ձեռքում, որ դրանք այսուհետև անցնելու են Ռուսաստանին: Դա նրանց մոտ առաջ էր բերում ամեն ինչ քանդելու, ավերելու ձգտում: Այդ ավատատերերը «հայ ժողովուրդը այլևս իրենց ապրանքը չէին նկատեր և հետևաբար հայ գյուղացիության պահպանումը, զոնէ ֆեոդալական շահախնդրութեամբ, քիւրտ իշխանապետերու մտահոգութենէն իսպառ կը բացակայեր»:⁹⁵

Երբ ռուսները գրավում են Երզրումը «մարացիք նայեցան թե իրենք պիտի գրկվին Յայաստան երկրեն, սկսան հարծակվիլ հայոց վրա, ու կողոպտեցին շատ զեղեր ու վանքեր: Մշո ս. Կարապետ վանքն ալ մտան և չարաչար թալլեցին», - վկայում է Սասունի Յեթինք գյուղի բնակիչ Սիմեոն Դավթյանը:⁹⁶

Ռուսական զորքերից պարտված թուրքական բանակը և նրա կազմի մեջ մտնող քրդական աշիրեթական զորամասերը, ինչպես նաև բանակին հետևող բաշիբոզուկները իրենց մաղձը թափում էին հայ ազգաբնակչության վրա, թալանելով հայկական գյուղերը և կոտորելով բնակչությանը: Ականատեսի վկայությամբ «յառաջացան զունդ զունդ ալազակաց խմբեր, որք որպէս մորեխ ցրուելով հայ գիւղօրէից մէջն ու նոցա սահմանները՝ Բագրևանդայ, Կարնոյ, Տարօնոյ, Սալնոձորոյ, Վասպուրականի և ի մասնաւոր տեղիս ինչ պարսկահայոց զրկեցին յամենայն ընչից և ստացուածոց, առանգեցին զգեղատեսիլ հարսունս ու աղջկունս, զոմանս գերի վարեցին յանդարձ օտարութիւն, անմեղ սպանելոց արիւնով ներկեցին նոցա յարդածածուկ խրճիթներն ու ծաղկաւետ դաշտերն: ... Ոչ միայն վրանաբնակ քիւրդքն առնէին զայս ամենայն, այլ նաև նոցա առաջնորդ տեղակալ պէյերն ու փաշաներն իսկ»:⁹⁷

Քրդական ավատական վերնախավի այդ խժոճությունները հասել էին այնպիսի չափերի, որ կառավարությունը իսպառ կորցրել էր իր հսկողությունը նրանց ենթակայության տակ գտնվող շրջանների վրա:

Ստամբուլում գնալով հասունանում էր այն մտայնությունը, որ այլևս չի կարելի հետաձգել դերեբեյությունների ջախջախումը և առհասարակ եկել է ժամանակը վերջ տալու քրդական իշխանապետությունների ավատական առանձնաշնորհումներին և նրանց կողմից հարուցվող անիշխանությանը: Այդ շարժման եռանդուն ու վճռական նախահայրը եղավ թանգիմաթի բարեփոխումների դարաշրջանի խոշոր պետական գործիչ Մուստաֆա Ռեշիդ փաշան: Նրա առաջ քաշած բարեփոխումների գաղափարը ոգևորել էր նաև սուլթան Մահմուդ II և նրա շուրջը գտնվող մի շարք պետական դեմքերի, որոնց կարծիքով կայսրությունը տագնապալի վիճակից դուրս բերելու միակ ելքը բարեփոխումների իրականացումն էր, մասնավորապես պետական-վարչական համակարգի վերափոխումը: Ի-զուր չէ, որ թուրքական պետական դեմքերից մեկը՝ իսալի փաշան ասել է. «Եթե չչտապենք մեր պետությունը եվրոպականացնել, ստիպված պիտի լինենք վերադառնալու Ասիա»:⁹⁸ Ռեշիդ փաշայի նպատակն էր նաև կայսրության ոչ մահմեդականներին, հատկապես քրիստոնյաներին, աննշան զիջումներ կատարելու ճանապարհով նրանց ամուր կապերով կապել Օսմանյան կայսրության հետ և դրանով իսկ բթացնել արտաքին ազդեցությունների նկատմամբ նրանց ընկալողականությունը: Ուստի նա առաջ էր քաշում «սուլթանի բոլոր հպատակների միասնության գաղափարը», որն ըստ էության անիրագործելի մի բան էր Օսմանյան կայսրության պայմաններում: Առհասարակ 1839 թ. նոյեմբերի 3-ին հրապարակված Գյուլհանեի հաթթը շերիֆը, որով խոստացվում էր երաշխավորել կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի, ունեցվածքի անվտանգությունը և հանդիսավոր կերպով հայտարարում էր մահմեդական և ոչ մահմեդական հպատակների հավասարությունը իրենց իրավունքների ու պարտականությունների մեջ՝ առանց դավանանքի տարբերության, չէր կարող գործնական կենսագործում ստանալ նախ այն պատճառով, որ Մուստաֆա Ռեշիդը և նրա համախոհները թերագնահատում էին օսմանյան հասարակության տարբեր խավերի դիմադրության ուժը բարեփոխումներին, Յաթթը շերիֆում պարունակվող նոր օրենքները նշանակալից չափով հակասում էին շարիաթին ու ավանդույթներին և վերջապես բարեփոխումների նախաձեռնողները բուրժուական բնույթի վերափոխումների հետ համատեղ անիրաժեշտ էին համարում պահպանել ավանդական մահմեդական հասարակության հիմնական ինստիտուտները: Յաթթը շերիֆը, օրինակ, չէր փորձում թաքցնել այն իրողությունը, որ աստվածապետական Օսմանյան կայսրության պետական կառուցվածքի

հիմքում ընկած է իսլամիզմի գաղափարախոսությունը: Պատահական չէ, որ մոլեռանդ պահպանողական թուրք և քուրդ տարրերը սվիմների վրա ընդունեցին Մահմուդ II-ի ծրագրերը, որոնք նրանց կարծիքով գալիս էին իրենց գրկելու, տիրելու և կառավարելու իրավունքներից: Նրանք հպտկապես չէին համակերպվում այն մտքի հետ, որ քրիստոնյաներին կարող են տրվել մահնդականներին հավասար իրավունքներ: Այդ պատճառով Մահմուդ II-ին նրանք մականվանեցին «գյավուր Մահմուդ»:

Հարկ է նշել, որ Գյուլիանեի Հաթթ-ը շերիֆի բարեփոխումների ծրագիրը մշակելիս Ռեշիդ փաշայի օգնականները հիմնականում հույներն էին և հայերը, այսինքն այն ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք ամենաշահագրգռվածն էին նմանատիպ բարեփոխումների իրականացման հարցում: Մահմուդ II շտապում էր օգտվել երկրի քրիստոնյա բնակչության այդ տրամադրություններից: Ղեռնս մինչև թանգիմաթի բարեփոխումներին ձեռնամուխ լինելը, սուլթանը ջախջախեց ենիչերիական «օջախները» և նրանց հոգևոր կազմակերպությունը՝ սուֆիական բեքթաշի միաբանությունը: Այնուհետև ենիչերիական ու սիփահի գնդերի ոչնչացումից հետո սուլթանի հաջորդ քայլը եղավ պետության կենտրոնախույս և անհնազանդ տարրերի ջախջախումը:

Իրականացնելով երկրի կենտրոնացման քաղաքականություն, Մահմուդ II հնազանդեցրեց հզոր Յանիկի, Վիդիկի, Բադլադի փաշաներին, իր իշխանությանը ենթարկեց Ալբանիան, ջախջախիչ հարված հասցրեց Արաբական թերակղզում ծավալված վահաբիական շարժմանը, որից հետո հերթը հասավ քրդական դերեբեյություններին: Դա օրակարգի հրատապ խնդիր էր նաև այն պատճառով, որ դերեբեյներն արդեն բացեիբաց հրաժարվում էին հարկատու լինել կառավարությանը և նրան հատկացնել զինվորներ, նրանցից շատերի մոտ դրսևորվում էին լրիվ անկախություն ձեռք բերելու ձգտումներ:

Սակայն միջազգային և ներքին բնույթի մի շարք բարդություններ (1821–1823 թթ. թուրք-իրանական պատերազմը, 1821–1829 թթ. հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը, ապստամբությունները Ալբանիայում և Սիրիայում, 1831–1833 թթ. առաջին թուրք-եգիպտական պատերազմը, 1830 թ. Ֆրանսիայի կողմից Ալժիրի գավթումը և այլն) միառժամանակ հետաձգեցին Մահմուդ II մտահղացման շուտափույթ իրականացումը:

1833 թ. մայիսի 9-ին Քյութահայում թուրք-եգիպտական հաշտություն կնքվելուց և այդ նույն թվականի հուլիսի 8-ին Ռուսաստանի հետ Ունեյար-Իսկելեսիի դաշնագիրը ստորագրելուց հետո, Օսմանյան կայսրության համար ստեղծվեցին միանգամայն բարենպաստ պայմաններ «արևելյան» գործերով զբաղվելու համար: Մահմուդ II որոշեց վերջ

տալ դերեբեյների ինքնիշխանությանը:⁹⁹ Դա օրակարգի հրատապ հարց էր նաև այն պատճառով, որ սուլթանը պատրաստվում էր վերացնել հողատիրության ռազմաավատական համակարգը (այդ մասին նա հատուկ հրամանագիր՝ ֆիրման հրապարակեց 1834 թ.): Սակայն այդ օրենքի իրականացումը տարածքային առումով կսահմանափակվեր միայն Կենտրոնական Անատոլիայով: Դրանից այն կողմ, այսինքն Արևմտյան Հայաստանում, Քրդստանում, արաբական երկրներում, ինչպես նաև կայսրության եվրոպական շրջաններում ամեն ինչ կարող էր մնալ նախկինի պես, որովհետև կառավարության ձեռքն անզոր էր հասնելու ծայրամասային անհանգիստ շրջանները:¹⁰⁰ Հետևաբար սուլթանին մնում էր իր հրամանը հիշյալ շրջանների ավատատերերին պարտադրել միմիայն զենքի ուժով:

1833 թ. Մահմուդ II-ը Արևմտյան Հայաստան ուղարկեց մի ուժեղ բանակ, որը ռազմերթի դուրս եկավ երկու ուղղություններով: Առաջինը Սըվասի նահանգապետ Մեհմեդ Ռեշիդ փաշայի գլխավորությամբ դեպի Սեբաստիա (Սըվաս) և Արաբկիր, երկրորդը՝ կայսերական թիկնապահ Սամիի փաշայի հրամանատարությամբ դեպի Էրզինջան և Էրզրում Վասպուրականի վրայով: Սրանց էին միանալու նաև Բադլադի վալի Մուհամմեդ փաշայի ուղարկած օժանդակ զորքերը:¹⁰¹ 1834 թ. ամռանը թուրքական 40 հազարանոց բանակի և քուրդ դերեբեյների զինված ջոկատների միջև Դիարբեքիրի, Բըշերիկ-Սիլվանի, Խարզանի, Սասունի և Ջեզիրեյի շրջաններում ծավալվեցին արյունալի և համառ մարտեր: Թուրքական բանակի հրամանատարությունը պատժիչ գործողություններ էր իրականացնում ոչ միայն պետական իշխանությանը չենթարկվող և ինքնագլխության ձգտող քուրդ դերեբեյների, այլև քուրդ զանգվածների նկատմամբ, որոնք հարկերի ծանրության պատճառով ամեն մի հարմար առիթի դեպքում ընդվզում էին օսմանյան վարչության սանձարձակ բռնությունների և կամայականությունների դեմ:

Հելմուտ ֆոն Մոլտկեն, որը որպես ռազմական հրահանգիչ մասնակցում էր օսմանյան բանակի արշավին, թվարկում է այդ բանակի անգթությունների մի ամբողջ շարան. «Քրդերի հնազանդեցումը,– վկայում է նա,– իրականացվում է հազարավոր անմեղ մարդկանց, այդ թվում նաև կանանց ու երեխաների, ոչնչացման ու տանջահարումների թուրքական ավանդական ոճով, քրդերով բնակեցված ամբողջ շրջանների ավերածություններով ու կրկնվումներով»:¹⁰² Շարժվելով առաջ, թուրքական բանակն իր հետևում թողնում էր միայն ավերակներ: «Հազարավոր անմեղ կյանքեր ոչնչացան, հազարավոր գյուղեր ավերվեցին: Սակայն, չնայած դրան քրդերը բնավ չէին ընկճվում: Մինչև որ մի լավ վարչություն չստեղծվի նրանց համար,– եզրակացնում է Մոլտկեն,– այս ամենը դատապարտված է լոկ անցողական ազդեցություն ունենալու»:¹⁰³

Խոսելով կառավարության նկատմամբ քրդական զանգվածների դժգոհության պատճառների մասին, Մուլտկեն գրում էր. «Քրդերը տրտմջում են գլխավորապես երկու բանի վրա, հարկերի և զինապարտության: Այդ դժգոհության իսկական պատճառը կայանում է ոչ թե նրանում, որ հարկերը չափազանց մեծ են (sic !), այլ նրանում, որ դրանք կամայական են... Քրդստանում զինակոչիկների հավաքագրումը դառնում է իշխանությունների զիջատիչ ասպատակություն տեղական բնակչության նկատմամբ: Որոշ գյուղերում բոլորովին չեն մնացել աշխատանքի ունակ երիտասարդ տղամարդիկ. միայն նա, ով անձամբ մասնակցել է մարդկանց նման որսին և տեսել է զինակոչիկներին ետ ուղրված ձեռքերով, հայացքներում զսպված կատաղությամբ, կհասկանա, թե ինչ աստիճանի է կառավարությունը... իր դեմ հանել այդ ողջ ժողովրդին»:¹⁰⁴

Մուլտկեն հաղորդում է, որ ոչ մի քուրդ երկու տարուց ավելի չէր կարողանում դիմանալ ռազմական ծառայությանը: Նա կամ հիվանդանում ու մեռնում էր, և կամ դիմում դասալքության:¹⁰⁵

Մուլտկեի տվյալներով լեռնային շրջաններում քրդական նույնիսկ ամենափոքր ու ամենշան ամրոցի գրավումը տևում էր 30-40 օր: Նա քրդերի դիմադրությունը նույնիսկ անվանել է «ժողովրդական պատերազմ»:¹⁰⁶

Թուրքական բանակը նաև պարտության մատնեց Ռևանդուզի Ահմեդ փաշային, որն օսմանյան կառավարության առավել վտանգավոր հակառակորդներից էր: Նա շղթայակապ ուղարկվեց Կոստանդնուպոլիս սուլթանի դատաստանին:¹⁰⁷ Մահմուդ II հրամանով նրան մահապատժի ենթարկեցին: Թուրքերը վերացրին Ռևանդուզի միջուկները և նրա բնակչությանը հարկադրեցին ճանաչել սուլթանի վեհապետական գերիշխանությունը: Թուրքական բանակը առանձնակի կատաղի դիմադրության հանդիպեց Դերսիմում, Երզնկայի և Կամախի շրջաններում, Ջիզիրեյում, Խախնի և Խասոյի շրջաններում, Սասուն-Մոթկանի ստորոտում, Բիթլիսի հարավային շրջաններում և այլն: Ընդ որում, պարտվածների նկատմամբ սուլթանի բանակը վերաբերվում էր անողորմ դաժանությամբ: Ջինվորներն անխնա հրդեհի ճարակ էին դարձնում քրդաբնակ գյուղերը, սվինահար անելով այնտեղ մնացած խաղաղ ռայա քրդերին: Ճնշելով Սինջարի և Վերանշեհի եզիդներին, Ռաշիդ փաշան հրամայեց սրի քաշել ողջ Սիհրանի ցեղը:¹⁰⁸ Այդ դեպքերի մասին Դելմուտ ֆոն Մուլտկեն գրում է. «Վրյունոտ վերքերով տղամարդիկ ու կանայք, կրծքի, ինչպես նաև տարբեր հասակի երեխաները, կտրված զլուխներն ու ականջները, այդ բոլորը կիտվում էր մի տեղ և դրանց բերողներին վճարվում էր 50-ից մինչև 100 պիաստր... Քրդերի լուռ տառապանքը և կանանց արցունքոտ հուսահատությունը իսկապես իրենցից ներկայացնում էին սրտաճմլիկ տեսարաններ»:¹⁰⁹

Թուրքական բանակի այս արյունախում գործողություններին քրդերը պատասխանում էին վրիժառության պատերազմով: «Երկու ճամբարներն իրարու դեմ վայրագ ատելությամբ կը կռուին: Քիւրտերը իրենց ձեռքը ինկած թուրքերը ողջ-ողջ կերէին, բայց նախ մէ մը անոնց աչքը փորելէ և եղունգները քաշել հանելէ յետոյ: Թուրքերն ալ՝ իրենց ճանկը ինկած քիւրտերը ցիցի կը զարնէին»:¹¹⁰

Ռեշիդ փաշայի Արևմտյան Հայաստանը և Քրդստանը հրով ու սրով վերանվաճելու տարիներին, դերբեյական տիրապետության շրջանում, հայ ժողովուրդը տնքում էր քրդական ցեղապետ-ավատատերերի լծի ծանրության տակ:¹¹¹ Նա ստիպված էր անմունչ ենթարկվել իր ճակատագրին, որովհետև ամեն մի ըմբոստ քայլ պատժվում էր ահավոր դաժանությամբ: Սակայն մեզ հասած մասնակի ու կցկտուր վկայություններից իսկ մենք տեղեկանում ենք, որ հայ ժողովուրդը այնուհանդերձ առանձին վայրերում քուրդ դերբեյ - ավատապետերի լծից ազատվելու փորձեր է արել, դիմելով զինված դիմադրության: Սակայն փրկություն գտնելու առավել հեշտ ձևը արտագաղթի դիմելն էր: Դրա հետևանքով Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ ուղղակի հայաթափ եղան ու ամայացան: Երկիրը դառնում էր ավերակ: Գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, առևտուրը, որոնք առանց այն էլ տուժել էին 1828-1829 թթ. պատերազմի հետևանքով, հայերի արտագաղթի պատճառով ապրեցին աննախընթաց չափերի հասնող անկում: Դա չէր կարող չանհանգստացնել օսմանյան կառավարող շրջաններին, որոնք հայությանը դիտում էին որպես շինարար, աշխատող և տուրք վճարող տարրի: Կառավարությանը անհանգստացնում էր նաև այն, որ երկրից հեռացած հայերի տեղը զբաղեցնում են վաչկատուն քրդերը, որոնք ձեռք բերելով նոր հողեր, էլ ավելի էին ամրապնդում իրենց դիրքերը: Իսկ դա անխուսափելիորեն նրանց մոտ ուժեղացնում էր անկախության ձգտումները: Բնական է, որ օսմանյան վարչությունը չէր կարող հույս ունենալ, որ այդ վաչկատուն, անհնազանդ ու անկառավարելի ցեղերից կկարողանա զանձարանի համար ապահովել կայուն եկամուտներ, առավել ևս հավաքագրել զինակոչիկներ:

Չենց այս նկատառումներն էլ դրդում էին կառավարությանը Ռեշիդ փաշայի կողմից քրդական դերբեյությունները ջախջախելու շրջանում արևմտահայության նկատմամբ վարել «հատուկ» քաղաքականություն: Ռեշիդ փաշան, օրինակ, ծրագրել էր առանձին շրջաններում վերջ տալ նույն վայրերում հայերի և քրդերի համատեղ բնակությանը և ստեղծել միատարր հայ բնակչություն ունեցող նահանգներ, որտեղ, ազատված լինելով քուրդ դերբեյների հարստահարություններից, հայ բնակչությունը կարող էր զարկ տալ արհեստներին, առևտրին, գյուղատնտե-

սությանը և այդպիսով գանձարանի համար ապահովել եկամտի կայուն աղբյուր: Փաշան խարբերոյի հայ բնակչութանը առաջարկեց տեղափոխվել Դիարբեքիր, խոստանալով, որ այդ շրջանի քուրդ բնակչութանը մինչև վերջին մարդը կտեղափոխի Դերսիմ և Չարսանջակ: Նա նույնիսկ խոստանում էր հայերին զենք բաժանել, ստեղծել հայկական ոստիկանություն, Դիարբեքիրում նշանակել ազգությամբ հայ կառավարիչ և այլն: Յնարավոր է, որ այդ ծրագրի նպատակներից մեկն էլ այն էր, որ անհրաժեշտության դեպքում կառավարությունը կարողանար հայերին հակադրել ինքնազլխության ձգտող քուրդ ավատատերերին: Հայերը խնդրեցին չտեղահանել իրենց և թողնել ապրելու հարազատ վայրերում:

Այդ բոլորի համար քրդերը Ռեշիդ փաշային անվանեցին «գյավուր փաշա» ասելով, որ «ասի կեավում ա, ու կեավումներուն թագաւորութիւն տի կայնըցնա»:¹¹²

Հայ գյուղացիությունը, այսինքն արևմտահայության մեծամասնությունը, քաղաքային հայ բնակչությունը, արհեստավորները, առևտրականները և այլն, որոնք առանձին ծանրությամբ էին իրենց վրա զգում քրդական ինքնիշխան ավատատերերի ճզմող լուծը, որոնց համար իսպառ գոյություն չունեի ոչ միայն գույքի ու կայքի, այլև կյանքի ապահովություն, հակված էին պաշտպանելու թուրքական կառավարության քաղաքականությունը դերբեյներին հնազանդեցնելու ուղղությամբ: Օսմանյան վարչությունը համարելով նվազագույն չարիք, ակնկալելով, որ կենտրոնացված պետության առկայությունը ի վիճակի կլինի ստեղծել քիչ թե շատ կայուն իրավական իշխանություն, որն ընդունակ կլինի հայ ժողովրդին հարաբերական խաղաղություն և ապահովություն տալ, կնվազեցնի քրդական ավատատերերի կողմից գործադրվող հարստահարություններն ու կամայականությունները, հայ բնակչության վերոհիշյալ հատվածը համակրանքով էր վերաբերվում Ռեշիդ փաշայի քաղաքականությանը: Ավելին, շատ վայրերում հայ բնակչությունը եռանդուն աջակցություն էր ցույց տալիս նրան: Այդ գիծը ոչ միայն պաշտպանվում, այլև ընթացք էր տրվում Կոստանդնուպոլսի հայ բարձրաստիճան հոգևորականության և բուրժուականացող տարրերի կողմից, որոնք շահագրգռված էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հարցում:

Մինչդեռ այն գավառների հայերը, որոնք ապրում էին լեռնային շրջաններում և ունեին ազատ համայնքներ, զինված էին, զերծ էին քրդական աղալարների լծից, հարկատու չէին օսմանյան կառավարությանը, նույնպես ենթարկվում էին Ռեշիդ փաշայի հարվածներին: Շահերի միասնության հիմքի վրա նրանք շատ վայրերում նույնիսկ միանում էին քրդերի հետ և նրանց հետ կողք-կողքի հանդես գալիս օսմանյան կառավարու-

յան դեմ, որը, ինչպես և քրդերին, փորձում էր գրկել անկախությունից, հնազանդեցնել պետական իշխանությանը և դարձնել հարկատու:

Կասկածից վեր է, որ հայության մեծ մասի կողմնորոշումը դեպի օսմանյան բարենորոգումները, դերբեյական սանձարձակությունների սահմանափակումը և այլն, անխուսափելիորեն էլ ավելի էին սրելու հայ-քրդական հարաբերությունները: Դերբեյները իրենց մաղձը թափեցին հայ խաղաղ բնակչության վրա: «Երկու սրի արանք ընկած հայ ժողովուրդը մաշվում էր թե՛ տնտեսապես, թե՛ ֆիզիկապես»:¹¹³

1837 թ. հունվարին Դիարբեքիրում Ռեշիդ փաշայի անակնկալ և հանելուկային մահից հետո քրդերի հնազանդեցման գործի շարունակումը Ստամբուլի կողմից հանձնարարվեց Մեհմեդ Հաֆըզ և Օսմանյան փաշաներին:¹¹⁴ Սրանք իրենց դաժանությամբ գերազանցեցին Ռեշիդ փաշային: «Երբ քրդերը մեղմանում են, - գրում է Մուլտկեն, - Հաֆըզ փաշան սաստկացնում է իր խստությունը: Իմ տված խորհուրդները նրա վրա ոչ մի ազդեցություն չեն ունենում»: Նրա գործելու եղանակներն էին քրդերի զանգվածային ջարդերը, իրենց բնակչության վայրերից բռնի տարագրությունը դեպի կայսրության ծայրամասային շրջաններ, ունեզրկումը, քրդական գյուղերի հրկիզումը և այլն:

Հաֆըզ և Օսման փաշաների 80 հազարանոց բանակը հրով և սրով անցավ հսկայական տարածք ունեցող երկրամասերով: Նա ջախջախեց Անտիտավրոսյան լեռներում, Ջեզիրեյում, Դիարբեքիրում, խարբեքիրում, Մալաթիայում, խարզանում, Սասունում և այլ բազմաթիվ շրջաններում ծվարած անկախ քրդական աշիրեթներին, նրանցից շատերին ստիպեց անցնել նստակեցության, հնազանդվել օրենքին, օսմանյան զանձարանին վճարել տուրքեր և այլն: Մուլտկեն թվարկում է թուրքական բանակի անգթությունների մի ամբողջ շարան: Այդ բանակը անխնայ կերպով հրդեհի էր մատնում քրդական գյուղերը, սպիռահար անելով գյուղերում մնացած նստակյաց (ռայա) քրդերին:

Թուրքական բանակը առանձնակի դաժանությամբ վարվեց Սինջարի եզիդների հետ: Սրանք, որ «սերունդից սերունդ ապրում էին ինքնավար հասարակապետությամբ իրենց ժայռերի ամրոցներում, մեծ մասամբ ջնջուեցան 1838-ին: Ծովս տուլին քարայրներում, ուր նրանց մեծ մասը ապաստանած էր, կանանց ծախեցին իբրև ստրուկ և ցեղի թշուառ մնացորդները ստիպուեցան տեղ ճանաչել մուսուլմաններին»:¹¹⁵

Մուլտկեն հաղորդում է, որ թուրք զինվորները քրդերին բանակ զինակոչելու համար նրանց շներով էին որսում, խտրություն չդնելով ո՛չ առողջների, ո՛չ հիվանդների, ո՛չ տարեցների և ո՛չ պատանիների միջև, նրանց կապկպում ու տանում էին ճամբարները, որտեղ հսկում էին ինչպես գերիների: «Առաջին իսկ հնարավորության դեպքում քրդերը փախ-

չում էին և Չաֆըզ փաշան յուրաքանչյուր փախստական դասալիքին որսացողին վճարում էր 200-250 պիաստր»:¹¹⁶ Քրդերի նկատմամբ իր արյունախում վարքագծով հատկապես աչքի ընկավ Բաղդադի կառավարիչ Մուհամմեդ-փաշան: Արշավանքից վերադառնալուց հետո նա Բաղդադի քաղաքային դարպասներից կախեց մեծ քանակությամբ կտրված ականջներ ի տես բոլոր «խռովարարների»: Նա խոստանում էր ցից բարձրացնել բոլոր նրանց, ովքեր մեկ անգամ ևս կհանդգնեն խռովություն բարձրացնել:¹¹⁷

Սակայն, չնայած այս զազանություններին, այնուամենայնիվ Չաֆըզ փաշային չհաջողվեց վերջնականապես ընկճել ու ճգնել քրդական աշիրեթներին: Վերջիններս ապաստանեցին անառիկ լեռներում, շարունակելով դիմադրությունը: Առանձին վայրերում (օրինակ Սասունում և այլն) թուրքական բանակը հանդիպում էր լեռնական հայ և քուրդ բնակչության համատեղ դիմադրությանը:¹¹⁸

Բացի Չայաստանի լեռնային շրջաններում (Սասուն, Խարզան, Շատախ, Մոկս, Խնուս և այլն) բնակվող հայերից, որոնք աշիրեթային քրդերի նման ապավինելով իրենց զենքին չէին ենթարկվում օսմանյան իշխանություններին և հարկատու չէին նրանց, հայության մնացած մասը, որը զբաղվում էր հողագործությամբ և իր վրա զգում էր քրդական բռնակալ դերբեյների ամենօրյա լուծը, հակված էր թուրքական կառավարության կողմը և «ամեն կերպ կը բաղձար ճգնված տեսնել քրդական աշիրեթապետությունները»:¹¹⁹

Քրդական տարբեր ցեղերի, ինչպես նաև դերբեյական տարբեր խմբերի դիմադրությունը թուրքական զորքերին ընթանում էր միմյանցից անջատ: Ցեղային-ավատական կարգերի տիրապետության հետևանքով քրդերի մոտ կատարելապես բացակայում էր ընդհանրական կամ համազգային շահերի գիտակցությունը: Շատ ցեղեր ընդհանուր ոչինչ չունեին միմյանց հետ, նրանց չէր միացնում որևէ հասարակական կապ: Ամեն մի ցեղ առանձնացած էր և ապրում էր իր նեղ, սահմանափակ կյանքով: Յուրաքանչյուր աշիրեթ պաշտպանում էր իր տիրապետության տակ գտնվող շրջանը, իր կյանքն ու գույքը, անհրաժեշտության դեպքում ոչ միայն օգնության ձեռք չմեկնելով հարևան ցեղերին, այլև շատ հաճախ թուրքական սրի շեշտակի հարվածից խուսափելու համար թույլ տալով, որ օսմանյան բանակը անարգել շարժվի իրենց հողերով, որպեսզի հարվածը հասցվի ուրիշներին: «Ջորավոր գրեթե բոլոր ցեղերը թշնամի էին թրքական պետության և իրենց փաշայության սահմաններում վրա կը կռվեին օսմանյան զորքերուն դեմ: Սակայն անոնք դուրս չէին գար իրենց սահմաններեն և օգնության չէին հասներ կյանքի ու մահվան կռվի բռնվող

ուրիշ քրդական փաշայության մը»:¹²⁰ Ավելին, շատ հաճախ ցեղերը կռվի էին բռնվում միմյանց հետ, հեշտացնելով թուրքական զորքերի գործը:

1839 թ., երբ Չաֆըզ և Օսման փաշաների բանակները շարունակում էին ոտնատակ տալ Արևմտյան Չայաստանն ու Քրդստանը, Օսմանյան կայսրության համար ստեղծվեցին քաղաքական նոր բարդություններ այս անգամ սուլթանի վասալ, եզիպտոսի փաշա Մուհամմեդ Ալիի կողմից, որը Մահմուդ II-ին սպառնում էր նոր պատերազմով: Սուլթանի հրամանով քրդերի նկատմամբ պատժիչ գործողությունները դադարեցվեցին և Չաֆըզ փաշայի զորքերը հետ կանչվեցին ահեղ ու վտանգավոր թշնամու դեմ մեծ պատերազմի նախապատրաստվելու համար: Ավարտվեց «Քրդստանը նվաճելու» առաջին էտապը: Բազմաթիվ շրջաններում արմատավորվեց թուրքական քաղաքացիական և ռազմական վարչություն: Օսմանյան կառավարությանը մեծապես մտահոգում էր առաջիկա ռազմական բախման ընթացքում թիկունքի կայունության հարցը: Թեև Չաֆըզ փաշային հաջողվեց հիմնականում ճնշել քրդական դերբեյներին, բայց նա համոզված չէր, որ քրդերը կրկին չեն ապստամբի, երբ թուրքերը մարտի մեջ մտնեն եզիպտացիների հետ:¹²¹ Այդ վտանգը չեզոքացնելու համար 1839 թ. Չաֆըզ փաշայի մոտ միտք հղացավ խախտելով դարավոր ավանդույթը և իսլամի կողմից դրված արգելքը, քրիստոնյա հայերին ընդգրկել թուրքական բանակի շարքերը: Ընդ որում, Չաֆըզ փաշան նկատի էր առել նաև հայ բնակչության մեծամասնության քաղաքական հակումը: Զախջախված տեսնել քրդական դերբեյությունները: Որպես ակաճատես Մոլտկեն կատարում է հետևյալ դիտումը. «Ասիայի հայերը կորույն և մեծ թիվ կազմող մի ժողովուրդ են, իշխանությանը ընտելացած, գործունյա: Նրանց մեծ մասը վարում է բարեկեցիկ կյանք: Թվում է, թե այս պահին նրանք ապացույցներ են տալիս ավելի հավատարմության և անձնվիրության հանդեպ Բ. Դուռը, քան քուրդ և արաբ մահմեդական ազգաբնակչությունը»:¹²² Պետք է խոստովանել, որ աստվածապետական սկզբունքների վրա խարսխված օսմանյան պետության համար Չաֆըզ փաշայի որոճած մտահղացումը վերին աստիճանի համարձակ ծրագիր էր: Չայերին պետք է ցրեին թուրքական բանակի մեջ այն հաշվով, որ յուրաքանչյուր քսան զինվորներից մեկը լիներ հայ: Իր հերթին Չաֆըզ փաշայի զինվորական խորհրդական Յելմուտ ֆոն Մոլտկեն, որը հայերին համարում էր քաջ և կարգապահ մի ժողովուրդ, առաջարկում էր յուրաքանչյուր գնդի չորրորդ գումարտակը կազմել բացառապես հայերից և այդ գումարտակի հրամանատար նշանակել միայն հայի: Սակայն հասկանալի է, որ այս առաջարկը կառավարությունը չէր կարող ընդունել, որովհետև կստեղծվեին միատարր հայկական զորամասեր, որոնց գոյությունը, թուրք պետական գործիչների ենթադրությամբ, կարող էր սպառնա-

լիք դառնալ կայսրության անվտանգության համար, մանավանդ որ վերջին ռուս-թուրքական պատերազմից հետո օսմանյան կառավարող շրջանները հայերին սկսել էին դիտել որպես անբարեհույս, Ռուսաստանին համակիր տարրի: Յեւնուտ ֆոն Մոլտկեն հենց սկզբից կասկած հայտնեց վերոհիշյալ ծրագրի իրագործման հնարավորության նկատմամբ, որովհետև այն նրա կարծիքով, «վիրավորանք կհասցնեք թուրքերի նախապաշարմունքներին, որոնք իրենց կույր ամբարտավանությամբ չեն ցանկանում տեսնել, թե որքան զառամյալ է դարձել իրենց վարչակարգը»:¹²³

Մի խոսքով Յաֆըզ փաշայի ծրագիրը տապալվեց: Ստամբուլում համարեցին, որ դա վտանգավոր և օսմանյան պետականության սկզբունքներին հակասող մի ձեռնարկ է: Հիշյալ ծրագրի իրագործման անհրաժեշտությունը վերանում էր նաև այն պատճառով, որ Օսմանյան կայսրության «քրդական» քաղաքականության մեջ նշմարվում էին փոփոխություններ: Ստամբուլում գիտակցում էին, որ թեև քրդական դերբեյություններին հասցված էր ծանր հարված, բայց դրանք վերջնականապես ընկճված չէին: Քրդական կռվող տարրերը ապաստանել էին լեռները և շարունակում էին դիմադրությունը: Թուրքական բանակին նույնիսկ չէր հաջողվել մտնել Բոհթան և Յաքյարի: Բռնի կերպով հավաքված քուրդ զինվորները, մեկ-երկու ամսից հետո դիմելով դասալքության, կամ բարձրանում էին լեռները և կամ անցնում Սիրիա՝ Իբրահիմ փաշայի բանակին միանալու:¹²⁴ Թուրքական կառավարող վերնախավը հիանալի գիտակցում էր, որ առանց քրդական աշիրեթապետերի և նրանց զինված ջոկատների աջակցության, դժվար թե կառավարությանը հաջողվի իր միանձնյա տիրապետությունը հաստատել Արևելյան Անատոլիայում: Այսպիսով, օրակարգի հրատապ հարց էր դառնում կառավարության քրդական քաղաքականության մեջ շրջադարձ կատարելու հրամայականը: Ըստ այդ ծրագրի, քուրդ ծորապետ-դերբեյները թշնամուց վերածվելու էին դաշնակցի: «Սուլթան Մահմուտը ուլեմաներէ կազմուած ժողով մը կը դրկե Յայաստան և Քիւրդիստան, կը գծէ ամէն մէկ տէրէպէյի իշխանութեան սահմանը ու կճանցնա այդ իշխանութիւնները իրաւասու՝ ամէն մէկը իր սահմանին մեջ: Տէրէպէյական իշխանութիւնները այսպիսով է, որ կունենան իրենց անկախութեան ֆիրմանները»:¹²⁵

Միանգամայն ակնհայտ էր, որ Արևմտյան Յայաստանում քրդական դերբեյական իշխանությանը փոխարինելու էր գալիս թուրքական վարչությունը՝ դաշնակցած քուրդ աշիրեթապետերի ու ցեղային վերնախավի հետ: Բնութագրելով Արևմտյան Յայաստանում ստեղծված նոր իրավիճակը, ռուս դիտորդ Ի. Բերեզինը գրում էր. «Երկրում ծնված և մեծացած առաջնորդների նահապետական կառավարմանը փոխարինելու ե-

կան Ստամբուլի գիշատիչ սատրապները, որպեսզի իրենց պաշտոնի կապալային վարձը վերադարձնեն հնարավորին չափ կարճ ժամկետում»:¹²⁶ Բացի այդ, ջախջախված դերբեյներին փոխարինելու էին գալիս արդեն ֆեոդալականացած կամ ֆեոդալականացման ճանապարհին գտնվող քուրդ ցեղապետ-աշիրեթապետերը, աղաներն ու բեկերը: Մի խոսքով հօդս ցնդեցին հայ ժողովրդի փայփայած հույսերը քրդական աղալարների բռնություններից ու շահագործումից ազատագրվելու վերաբերյալ: Օսմանյան կառավարության կամքով արևմտահայությունը կրկին թողնվեց իր նախկին վիճակին:

1839 թ. հուլիսի 24-ին Նիսիբիսի (Մծբին) մոտ տեղի ունեցավ թուրք-եգիպտական երկրորդ պատերազմի վճռական ճակատամարտը, որի հետևանքով Յաֆըզ փաշայի բանակը ջախջախիչ պարտություն կրեց Սիրիայի եգիպտական կառավարիչ Իբրահիմ փաշայի կողմից: Գնկատամարտի դաշտը առաջին լքեցին քրդերը:¹²⁷ Մոլտկեն պատմում է, որ նրանք սկսեցին կրակել իրենց իսկ հրամանատարների և թուրք զինվորների վրա, կողոպտել ռազմական գույքը և այլն: Բազմաթիվ զինվորներ մետեցին զենքը և մեկնեցին իրենց գյուղերը: Մեծ քանակությամբ քուրդ զինվորներ անցան թշնամու կողմը, զենքը ուղղելով օսմանյան բանակի դեմ: Յաֆըզ փաշայի ջախջախված բանակի նահանջող մնացորդներին Այնթաբից հյուսիս ընկած լեռներում ոչնչացրին քրդերը, արաբ բեդվինները և թուրքմենները:¹²⁸

Նիսիբիսի ճակատամարտում քրդական զինվորների վերոհիշյալ վարքագիծը օսմանյան կառավարության նկատմամբ քրդական զանգվածների տրամադրությունների ցայտուն արտահայտությունն էր:

Հիշյալ ճակատամարտում թուրքական բանակի կրած ջախջախիչ պարտությունը լրջորեն թուլացրեց Օսմանյան կայսրությանը, վտանգի տակ դնելով նույնիսկ նրա գոյությունը: Իբրահիմ փաշայի եգիպտական բանակը ոչ միայն ամբողջապես իրեն ենթարկեց Սիրիան, այլև նվաճելով Կիլիկիան հասավ մինչև Կոնիա: Օսմանյան կայսրությունը կանգնած էր կործանման վտանգի առջև, ընդ որում մահմեդական պետության եգիպտոսի փաշա Մուհամմեդ Ալիի կողմից: Այս պարագաներում քրդական վերնախավի մոտ իրենց նախկին դիրքերը վերականգնելու հույսեր ծնվեցին: Դերբեյները նոր շունչ ու ոգի առան և Արևմտյան Յայաստանի ու Թուրքական Քրդստանի տարածքում քրդությունը կրկին սկսեց փոթորկել: Առաջինը կրկին ապստամբեցին Սուլեյմանիեի շրջանի քրդերը: Ապստամբներին օգնելու միտումով 1842 թ. իրանական բանակը սրընթաց անցավ սահմանը և ներխուժեց Միջագետք: Թուրք-իրանական պատերազմը դարձավ համարյա անխուսափելի այն բանից հետո, երբ Բաղդադի կուսակալ Ալի Իիզա փաշան և նրա տեղակալ Մուհամմեդ Նաջիբ փա-

շան 1843 թ. սկզբին շիաների սրբազան քաղաք Քարբալայի բնակչության զարհուրելի կոտորած կազմակերպեցին, անգործն սրի քաշելով 15-ից 18 հազար պարսկահպատակ շիաների:¹²⁹ Ի պատասխան դրա, իրանական զորքերը ներխուժեցին Բայազետի շրջան, նպատակ ունենալով ոտքի հանել քրդերին և թուրք կառավարության դեմ օգտագործել նրանց մոտ կուտակված դյուրավառ նյութը: Թեև գործը հարթվեց Ռուսաստանի և Անգլիայի վճռական միջամտության շնորհիվ,¹³⁰ սակայն այդ բոլորը վկայում էր, որ քրդերը դեռ վերջնականապես նվաճված չեն:

Արևմտյան Ղաթստանի նահանգներում Բ. Դուռը 1839 թ. Գյուլիհանեի հաթթը-շերիֆի դրույթները փորձեց իրագործել 1842 թվականից: Սակայն ինչպես ողջ կայսրությունում, այնպես էլ այստեղ, այդ բարենորոգումները կամ մնացին թղթի վրա և կամ եական փոփոխություններ չմտցրին ինչպես տնտեսական կյանքում, այնպես էլ ազգային հարաբերությունների մեջ: Այսպես, թեև ճորտատիրությանը պաշտոնապես վերջ տրվեց, սակայն գործնականում այն ոչ միայն պահպանվեց, այլև որոշ դեպքերում ստացավ ավելի արտառոց ու այլանդակ ձևեր: Նոր կալվածատիրական կարգի համաձայն բեկերին ու աղաներին պատկանող հողերը հռչակվում էին միրի (պետական), սակայն կիսանկախ աշիրթների ձեռքում գտնվող հայ գյուղերը մնացին նախկինի պես ճորտական վիճակում, տուրք վճարելով և՛ քուրդ կալվածատիրոջը և՛ պետությանը:¹³¹

Քրդական ճորտատիրական մարաբայական համակարգը ըստ էության թողնվեց անփոփոխ, որովհետև երեկվա հողագուրկ գյուղացին մարաբան, դառնում էր իբր ազատ հողագործ, սակայն իրականում մնում էր ճորտ: Թանգիմաթի հողային այս բարեփոխումից օգտվեցին միայն թուրք և քուրդ կալվածատերերը, ցեղապետերը, վաշխառուները և այլն, ավելի տաժանակիր դարձնելով հայ գյուղացիության կյանքի պայմանները: Մի շարք վայրերում իր գոյությունը պահպանեց նաև խաֆիրության ճորտական համակարգը:

Այս բոլորը վկայում էր այն մասին, որ թանգիմաթի բարեփոխումների օգնությամբ ձգտելով նախկին քուրդ դերեբեյներին պահել իր հսկողության տակ, սուլթանական կառավարությունը աշխատում էր ոչ միայն խուսափել նրանց հետ հարաբերությունների լարվածությունից, այլև շարունակում էր համաձայնության եզրեր փնտրելու քաղաքականությունը, այդ բանը անելով գլխավորապես հայերի հաշվին: Այդ քաղաքականության մեջ ոչ մի արտառոց ու զարմանալի բան չկար, քանի որ այն ամբողջապես բխում էր աստվածապետական սկզբունքներով առաջնորդվող օսմանյան պետականության բուն էությունից: «Չնարավո՞ր էր արդյոք Դուրանի առջև հավասարեցնել ուղղադավանի և գյավուրի, մահմեդականի և ռայայի իրավունքները, դա անպայման կնշանակեր իրապես Դուրա-

նը փոխարինել նոր քաղաքացիական օրենսգրքով, այլ կերպ ասած, դա կնշանակեր խորտակել թուրքական հասարակության համակարգը և նրա փլատակների վրա ստեղծել իրերի նոր վիճակ», - գրում է Կ. Մարքսը:

Թուրքական կառավարությունը բնավ չահագրգռված չէր նաև բուն քրդական հասարակության կառուցվածքի մեջ փոփոխություններ մտցնելու: Քրդերի «...ավանդական առաջնորդների ժառանգաբար անցնող իշխանությունը սասանվել էր, սակայն միաժամանակ ոչ մի լուրջ բան չէր ձեռնարկվել, որպեսզի այն փոխարինվեր մեկ այլ իշխանությամբ, որն ի վիճակի լիներ այդ ժողովրդին ներգրավել նորմալ պետական կառուցվածքի ոլորտի մեջ»:¹³²

Գյուլիհանեի հաթթը-շերիֆի ընդունումից ու գործադրության մեջ դնելուց հետո «թուրքական ֆեոդալիզմը իր նախնական ձևով սկսեց իջնել թատերաբեմից, նահանգների մեծ մասում իր տեղը զիջելով խոշոր և միջին կալվածատիրական հողատիրությանը: Բացառություն էին կազմում այնպիսի ժայռամասերը, ինչպես օրինակ Քուրդիստանը, որտեղ տիրապետող հողային հարաբերությունները ըստ էության վերաբերում են ոչ թե զուտ ֆեոդալական, այլ ցեղային տիպին»:¹³³

Գյուլիհանեի հաթթը-շերիֆի վերափոխությունները ի վիճակի չեղան դույզն-ինչ բարեփոխելու կայսրության ասիական նահանգներում տիրապետող դրությունը և արմատապես դիպչելու քուրդ ավատական դասի շահերին: Իսկ ազդեցիկ և խոշոր ցեղապետերը սվինների վրա ընդունեցին հաթթը-շերիֆը և որոշ վայրերում նույնիսկ թույլ չտվեցին, որ թուրքական վարչության ներկայացուցիչները ոտք դնեն իրենց տիրապետած շրջանները և ձեռնամուխ լինեն կայսերական հրովարտակի դրույթների իրականացմանը: Թանգիմաթի «գործադրութան դեմ էին բոլոր բռնակալները, որոնք Ղաթստանի անմատույց լեռներում վրայ որջացած էին»:¹³⁴ Քրդական ցեղապետերը հատկապես չէին կարող համակերպվել այն մտքի հետ, որ իրենք զրկվում են դարավոր սովորությամբ հայ ռայաթներից գանձվող հարկերից, որ այդ խոշոր եկամուտները այսուհետև անցնելու են պետությանը:

Եթե հայ ժողովուրդը որոշակի հույսեր էր տածում թանգիմաթի բարեփոխումների նկատմամբ, ապա քրդական վերնախավը դրա մեջ տեսնում էր օսմանյան նոր ոտնձգություն իր իրավունքների հանդեպ: Դրա անխուսափելի հետևանքը եղավ արևմտահայության և քրդական ավատական վերնախավի միջև հարաբերությունների նոր սրումը: Այդ հավանարտ կողմերի փոխհարաբերությունների պատկերը Լեոն ներկայացնում է հետևյալ կերպ. «Իր կալվածական ճորտատիրական արտոնությունները պաշտպանելու համար, քուրդ բեկը ուժ էր գործադրում, բայց ոչ թե կառավարության դեմ՝ որի հանդեպ նա ազատ էր, այլ՝ այն անգեմ ու

անլեզու մշակի դեմ, որ երեկ նրա ճորտն էր, իսկ այսօր՝ թափուի (կայքագիր: - Վ. Բ.) սխտեմով դարձել էր ազատ հողագործ. հարկադրում էր հայ գյուղացուն, որ նա՝ անտեսելով նոր օրենքը, շարունակի իր նախկին ճորտային կացությունը, իսկ, հակառակ դեպքում, դուրս վտարի նրան թափուի դիրքով ստացած հողից՝ զենքի ուժով կամ այլ ազդու միջոցներով - ահա ինչ տեսակ հարաբերություններ էր այժմ ստեղծվում քուրդ կալվածատիրոջ և հայ գյուղացու միջև»:¹³⁵ Եվ այնուհետև. «Այս շատ վտանգավոր հանգամանքի մեջ թույլ և անզոր հայը կարող էր պահպանել պետական վարձակալ հողագործի դիրքը միայն մի միջոցով, այն է՝ եթե թուրք կառավարությունը՝ իր սեփական օրենքի կիրառությունն ապահովելու համար, հողագործի կողմը պահպաներ՝ նրա կատարած նախկին տիրոջ դեմ: Բայց այսպիսի պաշտպանություն չէր տեսնում... Դուրս էր գալիս, որ նա չէր ազատվել, այլ ընկել էր երկու կրակի մեջ, մինչդեռ, մի կողմից՝ քուրդ կալվածատերն իրենն էր համարում հայի մշակած հողը և պահանջում էր, որ այդ հողի վրա հաստատվեն նախկին կալվածատիրական իրավունքները, մյուս կողմից՝ կառավարությունը նույն այդ հողը համարում էր իրենը, և պահանջում էր վարձագինը: Այսպիսով, երկու կեղեքիչները դաշտում կանգնած էին՝ գյուղական մի հատ արօրի վրա»:¹³⁶

Եվ այսպես, թանգիմաթի իրականացման փորձերը Արևմտյան Հայաստանում էլ ավելի էին շիկացնում մթնոլորտը: Քրդական վերնախավի հետ հայ գյուղացիության համակեցությունը ուղղակի դառնում էր անտանելի ու անհնար: Արտահայտելով այս տրամադրությունները, Տարոնի առաջնորդ, Եպիսկոպոս Պետրոս Ավրանցին քուրդ Ալադին փաշային ասում է. «Կամ դուք պիտի հեռանաք այս երկրեն և կամ մենք: Այլևս իրարու հետ չենք կրճրնար ապրիլ...»:¹³⁷

Չնայած այն հանգամանքին, որ թուրքական կառավարությանը հաջողվել էր մահացու հարված հասցնել քուրդ դերբեյներին և Արևմտյան Հայաստանում ու թուրքական Քրդստանում ամրապնդել իր դիրքերը, սակայն XIX դարի կեսերին դեռևս առկա էին քրդական այնպիսի ազդեցիկ առաջնորդներ, ովքեր ձգտում էին ցեղերին միավորել իրենց տիրապետության ներքո, դուրս գալ կառավարության հսկողությունից և դառնալ իրենց շրջանների ինքնիշխան կառավարիչներ: Նման ազդեցիկ ցեղապետերի մասին ժամանակակիցներից մեկը գրում էր. «...հանձինս նրանց, ժողովուրդը տեսնում է ոչ միայն իրենց դատավորներին և նահապետական տիրողներին, այլև նահանգային կառավարիչների հարստահարություններից իրենց պաշտպանողներին և նաև առաջնորդների, ո-

րոնք իրենց անձի մեջ կենտրոնացնելով ցեղի ուժն ու հզորությունը, ստիպում են հարգանքով վերաբերվել նրա նկատմամբ»:¹³⁸ Նման ավատատերերի մեջ այժի ընկնող դեմքերից մեկը Ջեզիրե-Բոհթանի տիրակալ Բադրխանն էր, որը կարողացավ հնտորեն օգտագործել քրդերի «համընդհանուր դժգոհությունը թուրքական բռնատիրության նկատմամբ»:¹³⁹

Բադրխան բեյը Ջեզիրեյի և Բոհթանի մեծ էմիրների շառավիղն էր, որոնք յոթերորդ կամ ութերորդ դարից սկսած անկախ էին: XIX դ. սկզբներին այդ ընտանիքին ենթակա էր նաև Դիարբեքրի, Սղերդի և Բիթլիսի քուրդ բնակչությունը: 1821 թվականից Բոհթանի նկատմամբ ժառանգական իրավունքն անցել էր Բադրխանին: Վերջինս թեև 30-ական թվականներին մասնակցել էր քրդական շարժումներին, սակայն այն ժամանակ դեռևս չուներ այնպիսի ազդեցություն ու կշիռ, որպեսզի համարձակորեն կարողանար ձեռնամուխ լինել իր մտահոգացած հեռահար քաղաքական ծրագրերի իրականացմանը: Սակայն 40-ական թվականների սկզբին, Ֆերուհ-խան Բարունակ բեյի վկայությամբ, նա արդեն իր տրամադրության տակ ուներ խոշոր զինված ջոկատներ, որոնց վրա հենվելով հրաժարվում էր կառավարությանը հարկեր վճարել և զինակոչիկներ տրամադրել:¹⁴⁰

30-ական թվականներին Բադրխան-բեյին հաջողվել էր խուսափել Ռեշիդ-փաշայի զորքերի հետ ուղղակի բախումներից և անխաթար վիճակում պահպանել իր ռազմական ուժերը: Նրա հետ լրջորեն հաշվի էին նստում նույնիսկ Բադրդադի և Մոսուլի փաշաները: Նա իր ինքնազվխության ձգտումները չէր թաքցնում նաև սուլթանական կառավարությունից: Օգտվելով թուրք-եգիպտական պատերազմում թուրքական բանակի կրած պարտությունից, Բադրխանը ընդարձակեց իր տիրապետության սահմանները:¹⁴¹ Նրան հաջողվեց հաշտվել և կարգավորել իր հարաբերությունները իր նախկին հակառակորդ Հաջայրիի կառավարիչ Նուրուլլա բեկի հետ և նրա հետ պայմանավորվել սուլթանի դեմ համատեղ ելույթի վերաբերյալ:

1843 թ. Բադրխանը բացահայտորեն ապստամբեց օսմանյան կառավարության դեմ, նպատակ ունենալով իր տիրապետության ներքո միավորել քրդական ցեղերին և ստեղծել Օսմանյան կայսրությունից անկախ մեծ ու ընդարձակ մի Քրդստան:¹⁴²

Բադրխանի իշխանության ներքո գտնվող քրդական ցեղերը պատրաստ էին արձագանքել կառավարության դեմ ապստամբության կոչին, քանի որ 1843 թ. թուրքական բանակի վերակառուցման մասին հրապարակված սուլթանական ֆիրմանը (հրամանագիր: - Վ. Բ.) նախկին անկանոն հավաքագրումը փոխարինել էր կանոնավոր զինահավաքագրմամբ, որը մեծ դժգոհության տեղիք էր տվել քրդական շրջաններում:¹⁴³

Մեկնաբանելով Բաղրխանի հետապնդած քաղաքական նպատակները, ֆրանսիացի հետազոտող Էլիզե Ռեկյուն գրում էր, որ «այն լեռնադաշտերը, ուր քրդերը խմբված են հոծ ցեղերով, մասնավորապես մեծ Ջաբի ավազանը, նրանք կազմում են այն աստիճանի մի ուժեղ ժողովուրդ, որ ունեն թուրքերի և պարսիկների դեմ ազատ պետություն կազմելու փառասիրություն»:¹⁴⁴ Այդ նույն կարծիքին է նաև եվրոպական մեկ այլ հետազոտող՝ Մյուլլեր Սիմոնիսը, որը նշում է, որ Բաղրխանի գլխավորությամբ սկսված այդ շարժումն ուներ քրդական պետություն ստեղծելու հավակնություններ:¹⁴⁵

Բաղրխանը իր ծրագիրն իրականացնելու համար իրար հետևից սկսեց իրեն ենթարկել մանր բեկերին ու նվաճել նրանց տիրույթները: Ուլքեր չէին համաձայնվում նրա դաշնակիցը լինել, դաժանորեն պատժվում էին: Նախ նա ձեռնամուխ եղավ Բոհթանի քրդական իշխանությունների հնազանդեցմանը: Ուժի սպառնալիքի ներքո շուտով նրան հարեցին նաև Ջեզիրեյի, Ջախոյի, Ամադիայի և Չեքյարիի առավել ազդեցիկ ցեղապետերը: 1843 թ. նա հարձակվեց Չեքյարիի մեջ մտնող Թիար լեռնազավառի ասորական համայնքի վրա, որը համառորեն չէր ցանկանում ճանաչել Բաղրխանի դաշնակից Չեքյարիի էմիր Նուրուլլա բեկի գերագայությունը և դիմադրում էր նրան:

Դեռևս XIX դ. 30-ական թվականներին ամերիկյան բողոքական միսիոներները Թիարի գավառում կենտրոն էին ստեղծել, նեստորական ասորիներին դավանափոխ անելու նպատակով: Ամմիջապես լուրեր տարածվեցին, որ ֆրանկները մտադիր են ողջ Քրդստանում քրիստոնեություն տարածել: Բաղրխանը, որը վաղուց առանձնահատուկ հետաքրքրություն էր դրսևորում հարուստ ասորիների նկատմամբ, «իսլամի պաշտպանության» պատրվակի տակ հարձակվեց Թիարիի վրա:¹⁴⁶ Ասորիները ստիպված էին բողոք ներկայացնել Մոսուլի փաշա Մուհամմեդ Ինջե-Բայրաքթարին, որն էլ ավելի սրեց քրդերի թշնամանքը:¹⁴⁷

Գրավելով ասորական համայնքի միջնաբերդը՝ Ջուլամերիկը, Բաղրխանը և Նուրուլլա բեկը սրի քաշեցին 10-12 հազար ասորիների: Չենրի Լեյարդը ցնցող փաստերով նկարագրելով ասորի բնակչության ջարդը, գրում է, որ նրանք «բոլորը սառնասրտորեն սպանվեցին»:¹⁴⁸

Բաղրխանը շատերին ստիպեց դավանափոխ լինել և ընդունել մահնեդականություն, շատերին գերեվարելով վաճառքի հանեց ստրկավաճառանոցներում, իսկ մի մասին էլ բռնի ստիպեց մտնել իր բանակի շարքերը:¹⁴⁹ «Առաջնորդվելով կրոնական փաստարկներով, – գրում է Վ. Նիկիտինը, – Բաղրխանը աշխատում էր իրականացնել համաձուլման քաղաքականություն: Նա իրեն համարում էր թուրքական տիրապետությունից ազատագրված շրջանների հոգևոր առաջնորդ»:¹⁵⁰

Սուլթանական կառավարությունը դավադրաբար քաջալերում էր Բաղրխանի վայրագ գործողությունները ասորական բնակչության նկատմամբ, հույս ունենալով, որ ռազմաշունչ ասորիները չեն ընկճվի և այսպիսով կսկսվի տեղական մի անվերջանալի պատերազմ, որը կթուլացնի երկու կողմերին էլ: Այդ նույն քաղաքականությունից ելնելով, Բ. Դուռը Բաղրխանի կողմնակիցներին հրահրում էր նաև հայերի ու եզիդների դեմ: Ի դեպ, այդ ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն էր ծավալել Մոսուլի Մուհամմեդ (Քերեթի) փաշան:¹⁵¹

Ասորիների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Բաղրխանը իր զենքը ուղղեց Մոկսի քուրդ էմիր Աբդուլ խանի դեմ: Վերջինս իրեն դաշնակից ունենալով Մոկսի հայ բնակչությանը, ամրացավ իր բերդերում և համառ դիմադրություն ցույց տվեց: Սակայն Բաղրխանի գերակշիռ ուժերի ճնշման ներքո տեղի տվեց և ստիպված էր դառնալ նրա դաշնակիցը:

Այնուհետև նրա կողմն անցան բազմաթիվ ցեղապետեր. Գավաշի բեյ Խան-Մահմուդը, Խիզանի Դերվիշ և Խալիտ բեկերը, Մոսուլի շեյխ Մահմուդը, Ջախոյի շեյխ Յուսուֆը, Շատախի ցեղապետերը և այլն: «Պետերխաններու ընդարձակ իշխանութիւնը, իրեն հնազանդեցուցած էր Վանեն մինչև Բաղէշ տարածուած երկրները եւ անոց մէջ գոյություն ունեցող բոլոր քուրտ փոքրիկ իշխանութիւնները»:¹⁵² Բաղրխանի ազդեցությունը տարածվեց նույնիսկ Մոսուլի, Դիարբեքիի, Սեհաբադի և Ուրմիայի վրա:

Ուժի ճնշման ներքո ստեղծված քրդական ցեղապետերի «սրբազան դաշինքի» մեջ մտան ոչ միայն Օսմանյան կայսրության քրդերը, այլև Իրանի խոշոր քուրդ կառավարիչներից մեկը՝ Արդալանի վալին:¹⁵³ Բաղրխանը փաստորեն դարձավ անկախ կառավարիչ: Նրա տիրապետության տակ անցան ընդարձակ տարածքներ, որոնց նկատմամբ սուլթանը կորցրել էր իր հսկողությունը: Բաղրխանը սկսեց հատել նաև սեփական դրան, որի մի երեսին գրված էր «էմիրի Բոհթան Բաղրխան», իսկ հակառակ երեսին գրված էր թվականը՝ հիջրեթի 1258 թ. (1842 թ.): Բաղրխանը իր տիրապետության մայրաքաղաք հռչակեց Ջեզիրե (Ջիզրե) քաղաքը, որտեղ բարձրացվեց քրդական դրոշ:¹⁵⁴

Սուլթանական կառավարությունը ուղղակի խուճապի էր մատնվել: Բ. Դուռը պարզորոշ տեսնում էր, որ Բաղրխանի գլխավորությամբ ծավալված շարժումը լոկ առաջնություն ձեռք բերելու համար սովորական միջոցդային պայքար չէ, այլ իրենից ներկայացնում է լուրջ սպառնալիք: Համոզվելով, որ զանազան դավերի միջոցով ապստամբական ուժերը պառակտելու քաղաքականությունը ցանկալի արդյունքներ չի տալիս, սուլթան Աբդուլ Մեջիդը 1845 թ. հրամայեց բանակ ուղարկել Բաղրխանի դեմ: Սակայն քրդերի միացյալ ուժերը Վանում պարտության մատնեցին

թուրքական զորքերին և քաղաքի կառավարիչ նշանակեցին Բաղրխանի զինակիցներից մեկին՝ Խան Մահմուդին:¹⁵⁵

1846 թ. հաղթանակներով արբեցած Բաղրխանը որոշեց իրեն ենթարկել նաև Չեքյարիի նեստորական ասորիներով բնակեցված Թխոնա գավառը: Ասորիների դեմ Բաղրխանին հատկապես հրահրում էր Աբդուլ-Ազիզ անունով քրդական մուլեռանդ շեյխերից մեկը:¹⁵⁶ Բաղրխանի անգթությունը և դաժանությունը այստեղ հասավ իր գագաթնակետին: Նա հրամայեց բոլորին անխտիր սրի քաշել, չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ մանուկներին:¹⁵⁷ Ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը դիմեց ռուսական կառավարությանը, օգնություն աղերսելով: Պետերբուրգի կառավարողների գուրջը շարժելու համար նա կտրեց կոտորված ասորիների ականջները և ուղարկեց ռուսական մայրաքաղաք:¹⁵⁸ Ասորիները թախանձագին օգնություն էին խնդրում նաև Մոսուլում անգլիական հյուպատոս Ն. Ռասսամից:¹⁵⁹ Իր անձը փրկելու համար Մար-Շիմունը ստիպված փախավ Ուրմիա:¹⁶⁰

Մինչ եվրոպական տերությունները իրենց մամուլում և դիվանագիտության միջոցով «զայրույթով» դատապարտում էին Բաղրխանի բարբարոսությունները անպաշտպան ասորիների նկատմամբ, առանց ձեռնարկելու սակայն գործուն միջոցներ, նորահայտ տիրակալը հասցրեց կազմակերպել նաև Մոսուլի վիլայեթի եզիզ քրդերի կոտորած, որոնք չէին ցանկանում մասնակցել իր ծրագրերին:

Չաշվեհարդար տեսնելով անհնազանդ ուժերի հետ, «սրբազան դաշինք» կնքած քրդական առաջնորդները պայմանավորվեցին գրաված հողերը բաժանելու վերաբերյալ: Այսպես, Խան-Մահմուդին պետք է անցներ Ոստանը, Գավաշը, Շատախը, Մոկսը, Չայոց ձորը, Նորդուզը, Նուրուլլա բեկին՝ Ջուլամերիկի շրջանը, Աղբակը և Իրանական Քրդստանի հողերի մի մասը, Խան-Մահմուդի եղբայր Աբդուլխանը ստանալու էր Խոշաբը, Մուստաֆա բեկը՝ Վանը, իսկ Բիթլիսի իշխանությունը նախկինի պես մնալու էր նրա ժառանգական տիրակալ Շերիֆ բեկին և այլն:

«Մեծ Քրդստանի» իրենց մտահոգացած ծրագիրն իրականացնելու միտումով 1847 թ. Բաղրխանի դաշնակիցները ձեռնամուխ եղան նոր նվաճումների, հատկապես նպատակ ունենալով ծավալվել դեպի Դիարբեքիի կողմը: Ընդ որում, քաջ գիտակցելով, որ դժվար է առանց դրսի օգնության իրականացնել այդ ծրագիրը, առավել ևս պահպանել ստեղծվելիք քրդական բեյլիքի գոյությունը Օսմանյան կայսրության հարվածներից, Բաղրխանը որոշեց օգտվել իրանական կառավարության աջակցությունից և նույնիսկ ընդունել Իրանի հովանավորությունը:¹⁶¹

Ուշագրավ է նշել, որ լեռնային շրջաններում տեղավորված հայկական կիսանկախ համայնքները, որոնք նախանձախնդիր էին պահպա-

նելու իրենց վաղեմի իրավունքները և դիմադրում էին օսմանյան վարչության արմատավորմանը իրենց շրջաններում, հանդես եկան որպես Բաղրխանի կողմնակիցներ, նույնիսկ նրան տրամադրելով զգալի թվով մարտիկներ: Դրանցից էին, օրինակ, Դըհի հայերը: Չայկական այս շրջանը, որն ընկնում էր Բոհթանի սահմանների մեջ, հենց սկզբից պաշտպանեց Բաղրխանի շարժումը: Նրա բանակի մեջ մտավ նաև Շատախի, Մոկսի և մի շարք այլ լեռնային շրջանների հայկական ազատ համայնքների բնակչությունը: Բոհթանի էմիրը նույնիսկ կազմակերպեց հայ-քրդական մի խառը բանակ, որը կոչված էր նեցուկ հանդիսանալու նրա լայնահուն քաղաքական ծրագրերին: Ուշագրավ է նշել, որ Բաղրխանը փորձում էր ստեղծել ոչ միայն աշիրեթական, այլև քաղաքական մի միություն, որի մեջ պետք է մտնեին ինչպես քրդական իշխանապետությունները, այնպես էլ հայկական կիսանկախ համայնքները: Վերջիններիս իր կողմը գրավելու համար Բաղրխանը խոստացավ, որ Օսմանյան կայսրությունից անկախություն ձեռք բերելուց հետո ինքը հայերին կթողնի հայաբնակ վայրերը, որպեսզի նրանք քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո ստեղծեն անկախ Չայաստան:¹⁶² Նա աշխատում էր օգտվել նաև Վանի հայ ունևոր խավի նյութական և բարոյական օգնությունից, խոստանալով, որ եթե ինքը հաղթանակ տանի և անկախ Քրդստանի ծրագիրը իրականություն դառնա, հայերին կտա «կառավարության տնտեսական բաժնի մատակարարությունը»:¹⁶³ Մասնավորապես նա ծրագրում էր հայերի օգնությամբ իր ապագա պետության մեջ ստեղծել զինագործարաններ, կազմակերպել կանոնավոր նավագնացություն Վանա լճի վրա և այլն: Բաղրխանը խոստանում էր նաև հայերին ընդգրկել իր բանակի շարքերը և հակառակ իսլամական արգելքների նրանց շնորհել բարձր զինվորական կոչումներ:¹⁶⁴

Գայթակղությունը իսկապես չափազանց մեծ էր: Արծազանքելով նրա կոչերին ու հորդորներին, հայ բնակչությունից գտնվեցին մարդիկ, որոնք հարելով Բաղրխանին ոչ միայն դարձան զինվորներ, այլև ստացան քաղաքական խորհրդականների, զենք հայթայթողների, բանակը ֆինանսավորողների պաշտոններ և այլն: Այսպես, միր (իշխան) Մարտո (Մարտիրոս) Բաշկալեցին դարձավ Բաղրխանի բանակի զորավար, Ստեփան Մանողլյանը՝ «Ասող» մականունով, Չովհաննես Չալկատրյանը և ուրիշները դարձան Բոհթանի էմիրի խորհրդականները և այլն:¹⁶⁵

Ինչ վերաբերում է հայ արհեստավորական և առևտրական դասին, ապա նա հետաքրքրություն հանդես չբերեց Բաղրխանի խոստումների նկատմամբ, որոնք ոչնչով երաշխավորված չէին: Այդ դասը «պետք ուներ հանգիստ ու խաղաղ բարգավաճման, և երբեք չէր դիմի նման վտանգավոր և անորոշ քայլերի»,¹⁶⁶ մանավանդ որ Բաղրխանն աշխատում էր

հայ առևտրականներին և արհեստավորներին ներգրավել իր կողմը ոչ թե նրանց իրապես շահագրգռելու ճանապարհով, այլ բռնի ուժի, հարկադրման միջոցով: Պետք է նկատի ունենալ նաև, որ Բաղրխանի շարժումը ուղեկցվում էր գյուղերի քայքայմամբ, հողագործության, արհեստների և առևտրի անկմամբ: Դա արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը, խափանում ներքին առևտրական կապերը, այլ կերպ ասած, ուղղակի վնաս էր հասցնում արհեստավորական և առևտրական դասին:

Բաղրխանի շարժման նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի հիմքեր չունեն նաև հայ հողագործ դասը: Նա վերջինիս վերաբերվում էր ինչպես ճորտերի: «Այս քուրդ-թրքական պատերազմի մեջ հայ ռայեա գիւղացիութիւնը պարտաւորուած էր կանգնելու քրդութեան հետ որպէս ճորտ, ինչպէս յաճախ կը պատահէին միջցեղային քրդական ընդհարումներու ատեն, երբ հայ թէ քուրդ եղբայրասպան արիւնայեղութիւններու կենթարկուէին ականայ»: ¹⁶⁷

Բռնի ուժի ճնշման ներքո հայ գյուղացիությանը ստիպում էին մասնակցել միջցեղային կռիվներին, հաճախ նույնիսկ իրենց ազգակիցների ու եղբայրակիցների դեմ: ¹⁶⁸ Այսպես, երբ Բաղրխանը շարժվեց Մոկսի Աբդուլ բեյի վրա, հակառակորդ զորքերի կազմում հարկադրաբար կռվում էին նաև հայերը՝ մի մասը հարձակվողի, մյուսը՝ պաշտպանվողի դերում: «Չայերը դերեբեյական այս կռիվների մեջ մեծ վնասներ կը կրեին, թողնելով արհեստ ու հողագործություն, և մտնելով ասպատակի ու ասպատակության ենթակա դրության մեջ՝ բռնի»: ¹⁶⁹

Բոհթանի էմիրն ամենադաժան պատիժների էր ենթարկում այն հայ գյուղացիներին, որոնք խուսափում էին ծառայել իրեն: «Ֆըլա եղածին կծգէին ձեռաց երկու թաթերու վրայ ու դարձնելով չորքոտանի անասուն, յարդով լեցուն էլի գլխին անցնելիք տոպրակը կկախէին անոր գլխէն, ու ամուր կապելէն յետոյ, երկաթ մեխերով անոր կը խթին ... կը տանջէին, ֆըլան հարուածներ կրելով շունչը կը կըտրուեր տոպրակին մէջ ու կըմեռներ»: ¹⁷⁰

Բաղրխանը ստիպում էր հայ գյուղացիությանը հարկեր մուծելուց բացի կատարել ծրի հարկադրական աշխատանք, կառուցել ամրություններ ու ճանապարհներ, պատրաստել զենք ու զինամթերք և այլն: Նա հայ գյուղացիներին համարում էր իր ապրանքը, ստացվածքը, ուստի իր թևարկության ներքո գտնվող շրջաններում աշխատում էր թույլ չտալ, որ ամեն ոք ինքնագլուխ կողոպտի ու կոտորի նրանց:

Չայ գյուղացիության վիճակի բարդությունը կայանում էր նաև նրանում, որ իր կամքից անկախ Բաղրխանին ծառայելու պատճառով նա ենթարկվում էր նաև թուրքական իշխանությունների հալածանքներին:

Կասկածից վեր է, որ Բաղրխանի շարժումը ոչ միայն հայերի, այլև տեղացի մյուս ժողովուրդների՝ հատկապես ասորիների մոտ առաջ էր բերել սարսափի, արհավիրքի զգացումներ:

Երկու սրի արանք ընկած հայ գյուղացիությունը և քաղաքային բնակչությունն ի վերջո թուրքական տիրապետությունը գերադասեցին Բաղրխանի քմահաճ իշխանությունից: Տվյալ դեպքում թուրքական պետականությունը համոզիսանում էր «կարգի ներկայացուցիչը անկարգության մեջ»: «Բեդր-խանի սահմանած վարչակառավարչական ձևը, հարկապահանջության չափերն ու գանձման եղանակները, հպատակ այլազգիների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ավելի վատթար էին ու սոսկալի, քան թուրքական պետությանն ու նրա պաշտոնյաներինը: Այդ էր հիմնական պատճառը, որ պետականությունից զրկված հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև ասորիները՝ չարիքներից փոքրագույնը ընտրելով, գերադասում էին սուլթանների հպատակությունը, քան Բեդր-խանի անսահմանափակ բռնապետությունը»: ¹⁷¹

Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանը և անձամբ Մատթոս Չուհաճյան պատրիարքը, քաղաքների առաջնորդներն ու առևտրականները, արհեստավորները և ուրիշներ կառավարությանն ուղղված իրենց բողոքագրերում աղերսում ու պահանջում էին սանձահարել ասպտամբ քրդական ավատատերերին ու վերջ տալ նրանց կամայականություններին:

Սուլթանին ուղղված իր բողոքագրերից մեկում Մատթոս պատրիարքը գրում էր. «...անողորմ եւ ասպտամբ ազգն Մարաց ունելով ի գլուխ իւրեանց զխան Մահմուտ եւ զՊէտրխան պէյ, հարստահարէին զբնակիցս Վանայ և Տարօնոյ եւ շրջակայ գիւղօրէիցն, կողոպտէին զվանօրայս և զեկեղեցիս, կեղծէին եւ սպանանէին»: ¹⁷² Պատրիարքը զգուշացնում էր Բ. Դռանը, որ «բնակիչք Վանայ ոչ կարելով այլեւս տոկալ անըմբեր տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք ի վերայ նոցա, որոշեալ են ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ եւ գաղթել ի Ռուսստան»: ¹⁷³

Իհարկե չափազանցություն է Ա. Պերպերյանի հայտնած այն տեսակետը, որ իբր օսմանյան կառավարությունը Բաղրխանի դեմ պատժիչ բանակ ուղարկեց հայոց պատրիարքի բողոքի հիման վրա: Պարզապես կառավարության համար նման քայլ ձեռնարկելու ժամանակը վաղուց հասունացել էր: Բաղրխանի շարժումը ուղղակի հանկարծակիի էր բերել սուլթանական կառավարությանը, որի աչքի առջև քրդական այդ խռովարար առաջնորդը մեկը մյուսի հետևից իրեն հնազանդեցնելով օսմանյան հպատակության մեջ գտնվող մեծ ու փոքր ավատատերերին՝ նրանց տիրույթները միացնում էր իր տիրապետություններին, նպատակ ունենալով

ստեղծել «միապաղաղ մի քրդական իշխանություն»,¹⁷⁴ ասել է թե Օսմանյան կայսրությունից անկախ քրդական պետություն կամ բեյլիք:

Օսմանյան կայսրության միջազգային դրությունը ևս տվյալ պահին միանգամայն բարենպաստ էր քրդական հարցով զբաղվելու համար: Թուրք-եգիպտական պատերազմից հետո երկիրը սկսել էր ուշքի գալ և վերակազմակերպել իր բանակը: Մյուս կողմից սուլթան Աբդուլ Մեջիդի վրա ճնշում էին գործադրում անգլիացիները, պահանջելով արագացնել Բաղդիսանի շարժման ջախջախումը: Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Ստրատֆորդ Ռեդկլիֆը (հայտնի է նաև Ստրատֆորդ Քաննինգ անունով), որն իր պաշտոնավարության ընթացքում դիվանագիտական և քաղաքական դավերի մի բարդ ցանց հյուսեց Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ, խիստ անհանգստացած էր, որ Պետերբուրգը կարող էր օգտագործել Բաղդիսանի շարժումը Օսմանյան կայսրությունից քաղաքական զիջումներ կորզելու համար: Բրիտանական կառավարությանը մեծապես անհանգստացնում էր նաև Ռուսաստանի առևտրատնտեսական ներթափանցման վտանգը դեպի Մերձավոր Արևելքի շուկաները, որը լուրջ հարված կարող էր հասցնել անգլիական գործարար աշխարհի շահերին:

Թուրքական կառավարող շրջանները կասկածներ ունեին, որ Իրանը ևս փորձում է օգտվել Բաղդիսանի շարժումից: Նրանք հավաստի տեղեկություններ ունեին, որ Մելիքզադյան ազգանունով մի պարսկաստանցի հայի միջոցով, որի եղբայրը շահի պալատականներից էր, Բաղդիսանը հովանավորության խնդրանքով դիմել է շահական կառավարությանը:¹⁷⁵ Ստամբուլին հավանական էր թվում, որ օգտվելով նպաստավոր առիթից, Իրանը կփորձի Թուրքիայի հետ ունեցած հողային վեճերը լուծելու հօգուտ իրեն: Յետևաբար Բաղդիսանի շարժման ջախջախումը օսմանյան ղեկավար շրջանների կողմից դիտվում էր որպես մի քայլ, որն անհրաժեշտ էր ապահովելու կայսրության սահմանների անձեռնմխելիությունը իրանական, ինչպես նաև ռուսական վտանգից:

Մինչև վճռական գործողությունների անցնելը, սուլթանական կառավարությունը որոշեց փորձել հարցը լուծել խաղաղ ճանապարհով, աշխատելով համոզել Բաղդիսանին հետ կանգնել իր բռնած ընթացքից:¹⁷⁶ Մերժումն ստանալուց հետո որոշվեց դիմել զենքի: 1846 թ. մի խոշոր բանակ դրվեց Արևելյան Անատոլիայում թուրքական բանակի հրամանատար մարշալ Օսման փաշայի տրամադրության տակ, որին հրամայվեց գրոհել Բաղդիսանի ուժերի վրա: 1847 թ. մայիսի կեսերին բանակը արդեն պատրաստ էր ռազմական գործողություններ սկսելու համար:

Թուրքական կառավարությունը որոշեց հայերին ներգրավել այդ ձեռնարկի մեջ, որովհետև նա քրդերին հնազանդեցնելու և քրդական հոծ զանգվածներ ունեցող նահանգներում ամրապնդվելու համար տեղական

օժանդակ ուժերի աջակցության կարիք էր զգում: Սուլթանը մտադիր էր նախ՝ օգտագործել հայերին բանակում որպես կռվողների և ապա, որ ամենակարևորն էր, խորացնել հայ-քրդական հակամարտությունը և երկու ժողովուրդների միջև սերմանել մի այնպիսի թշնամանք, որը նրանց միշտ պահեր թշնամական առճակատման վիճակում:

Առաջնորդվելով այս նկատառումներով, Օսման փաշան սկսեց անխտիր զինվորագրել տեղական հայ բնակչությանը և ներգրավել իր բանակի շարքերը:¹⁷⁷ Այնուհետև կառավարությունը Բաղդիսանի դեմ ձեռնարկված արշավանքին աշխատում էր տալ այնպիսի երանգ, որ իբր այն կազմակերպվել է միայն հայերի իրավունքների պաշտպանության համար: Կոստանդնուպոլսում հրատարակվող «Լրո գիր մեծի տերութեանն օսմանեան» հայերեն լրագիրը, որն իրականում կառավարական ծայնափող էր, մեծ քանակությամբ հաղորդագրություններ ու հրովարտակներ էր տպագրում, տպավորություն ստեղծելու համար, թե իբր Բաղդիսանի և մյուս քուրդ ցեղապետերի ապստամբությունը ճնշելու նպատակն է «հարստահարությանը ենթակա եղող խել մը բնակիչները ու հպատակները հանգստացնելը»:¹⁷⁸

Այսպիսով, օսմանյան կառավարությունը իր նպատակները վարագուրում էր շողշողուն խոստումներ տալով հայ ժողովրդին և իր ձեռնարկելիք քայլերը ներկայացնելով որպես մեծ շնորհ, որ «բարեխնամ» կառավարությունն անում է հայության համար:

Ստամբուլը միաժամանակ պարզորոշ հասկացնում էր հայերին, որ եթե նրանք իր հետ չլինեն, իր թշնամին կդառնան և նույնպես կարժանանան յաթաղանի շեշտակի հարվածին:

Մատթոս պատրիարքը տեղեկություններ ուներ, որ Բաղդիսանի բանակում զգալի քանակությամբ հայեր կան և ահաբեկված ապագա վտանգի սարսափից, «հավատարմության հավաստիք» տալու համար ոչ միայն հորդորող կոնդակներ էր ցրում, այլև կոչ էր անում իր ժողովրդին օժանդակություն ցույց տալ օսմանյան «ազատարար»բանակին, «որ պիտի գար ոչնչացնելու քրդական իշխանապետությունները և ազատագրելու հայ ժողովուրդը»: Դիմելով Դիարբեքիի, Բիթլիսի, Բալուխի և Վանի առաջնորդներին, պատրիարքը հորդորում էր, որ «ժողովուրդը իւրեանց ելցեն ի վոժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լիցին եւ ծառայեսցեն արքունի բանակին եւ զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի»:¹⁷⁹

Բացառված չէ, որ Մատթոս պատրիարքի այս կոնդակները գրված լինեն թուրքական կառավարության թելադրանքով, կամ նրան հաճոյանալու նպատակով: Սակայն կասկած չի հարուցում, որ դրանցում

պատրիարքն արտահայտում էր արևմտահայության որոշ խավերի տրամադրությունները:

Որոշելով քրդերին ջախջախել առանձին-առանձին, Օսման փաշան իր բանակը բաժանեց երեք մասի և շարժվեց տարբեր ուղղություններով՝ դեպի Վան, Էրզրում, Խարբերդ և Մոսուլ: Նախ օսմանյան բանակը մտավ Մոկս, ջախջախեց Աբդալ խանին, գերեվարեց նրան և քսորեց Հռոդոս կղզի: Վան-կուլիների ղեկավար Քյոռ Մուստաֆա փաշան, վախենալով թուրքական բանակի հրամանատարի վրեժխնդրությունից, կամովին զենքը ցած դրեց և հանձնվեց նրան:¹⁸⁰

Որոշելով պատժել հայերին, որոնք հրաժարվում էին իր ջոկատների կազմում կռվել թուրքական բանակի դեմ, Խան Մահմուդը պաշարեց Այգեստանը: Հայերը դիմադրեցին քաջությամբ և թուրքական բանակի մոտենալուց հետո անցնելով հակահարձակման, ձերբակալեցին արյունախում ցեղապետին և հանձնեցին Օսման փաշային: Վերջինս սրի քաշեց պարտվածներին, իսկ Խան Մահմուդին քսորեց Սիլիստրե:¹⁸¹

Այնուհետև թուրքական բանակը շարժվեց դեպի իր գլխավոր նպատակակետը՝ Ջեզիրե, որի Բոհթան գավառում ամրացել էր Բադրխանը: Առաջին իսկ բախման ժամանակ Օսման փաշայի բանակը լուրջ պարտություն կրեց, որը թուլացրեց նրա զորքերի հարձակողական թափը: Կռիվները շարունակվեցին, հաջողություն բերելով մերթ մեկ, մերթ մյուս կողմին: Օսման փաշան որոշեց թուրքական դարավոր դավադրական գիճանոցից հանել բազմիցս փորձված զենքերից մեկը՝ ցեղապետերի միջև փոխադարձ թշնամանք բորբոքելու և կաշառքով ու բարձր դիրքերի խոստումներով Բադրխանի դաշնակիցների մեջ դավաճաններ գտնելու քաղաքականությունը: Այս փորձը տվեց իր պտուղները: Օսման փաշային հաջողվեց դավաճանության մղել Բադրխանի եղբոր որդուն՝ Եզդանշիրին, որին հանձնարարված էր իր ջոկատով պաշտպանել ապստամբների դիրքերը ռազմաճակատի ծախս թևում: Վերջինիս դավաճանության հետևանքով թշնամու առջև բացվեց Բոհթանի ճանապարհը:¹⁸² Եզդանշիրի օրինակին հետևեց նաև ազդեցիկ ցեղապետերից մեկը՝ Միրզա բեյը, որը տիրում էր Մշո դաշտի Զխուրի շրջանում, տարածելով իր ազդեցությունը մինչև Բիթլիս:

Այս դեպքերից հետո թուրքական զորքերի հաջողությունները արագորեն զարգացան: Բադրխանը թեև իր հինգ հազարանոց ջոկատով Օրագ (Արուխ) ամրոցում համառ դիմադրություն էր ցույց տալիս, սակայն նրա կողմնակիցները լքեցին իրեն ու աստիճանաբար ցրվեցին: Օսմանփաշայի կողմից ստանալով անձի անվտանգության երաշխիքներ, Բադրխանը ցած դրեց զենքը և հանձնվեց:¹⁸³ Թուրքական զորքերը ավերակների վերածեցին Ջեզիրեյի շրջանի բազմաթիվ գյուղեր: Բադրխանի կալ-

վածքները վաճառվեցին:¹⁸⁴ Բադրխանը իր ընտանիքի հետ ուժեղացված պահակախմբի ուղեկցությամբ ուղարկվեց Ստամբուլ, այնտեղ նրա ճակատագիրը որոշելու համար:

Բոհթանի էմիրին հնազանդեցնելու գործում ևս թուրքական զորքերին եռանդուն աջակցություն ցույց տվեցին շրջակա բնակավայրերի հայերը և եզիդները: «ժողովեցան հայք Վասպուրական աշխարհին, եւ մարտ եղեալ յարձակեցան ի վերայ ճեզիրէ նահանգին, ուր որջացեալ ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, եւ այնչափ ի նեղ արկին զպէտերխան պէ նոցա, մինչեւ յոգիս լինել նմա ապաստան, եւ յուսահատեալ յանձնեաց զինքն սպարապետ Օսմանփաշային հանդերձ իւրով զգերդաստանաւն»:¹⁸⁵

Վարկած կա այն մասին, որ Բադրխանին իր Ջիզիրեյի Օրագ ամրոցում ձերբակալել են Վանի հայերը և հանձնել Օսման փաշային:¹⁸⁶ Ձերբակալված ցեղապետերը աքսորվեցին Կրետե կղզին:¹⁸⁷ Ապստամբության բազմաթիվ մասնակիցներ փախան Իրան և Անդրկովկաս, շատերը քաշվեցին անառիկ լեռները:¹⁸⁸ Ստեփան Մանուկյանը և Հովհաննես Զալկատրյանը ևս Բադրխանի հետ գերի ընկան և քսորվեցին նախ Կեսարիա, իսկ ապա Կապան Մատեն:¹⁸⁹

Քրդերի հետ համատեղ թուրքական բանակին ուժգին դիմադրություն ցույց տվեցին Դըհի և Բոհթանի շրջանի հայկական կիսանկախ համայնքները: Պարտությունից հետո Օսման փաշայի հալածանքներից խուսափելու համար այդ շրջանների բազմաթիվ հայեր ստիպված էին դիմել արտագաղթի:

Բոհթանում ձեռք բերած հաղթանակից հետո Օսման փաշան իր բանակը բաժանեց մի քանի զորասյուների պատժիչ գործողությունները շարունակելու համար: Նա ներխուժեց Արևմտյան Հայաստանի և Քրդստանի այն բոլոր վայրերը, որոնք ունեին անկախ կամ կիսանկախ վիճակ և չէին ենթարկվում օսմանյան թևակցությանը: 1848-1849 թթ. ընթացքում թուրքական բանակը ընկճեց Խոշաբի, Մուշի, Բիթլիսի իշխանապետությունները, ձերբակալեց տեղական քուրդ աշիրեթապետերին և նշված վայրերի կառավարիչներ նշանակեց Բ. Դռան թուրք պաշտոնյաներին:¹⁹⁰ Այնուհետև մի զորամաս ուղարկեց Բայազետ-Ալաշկերտի շրջանը, որտեղ վերջ տրվեց քուրդ տիրակալ Բայուլ փաշայի իշխանությանը: 1849 թ. Գյոզլուքլու Ռաշիդ փաշան ճնշեց Հաքարիի քրդերի վերջին դիմադրությունը և վերջնականապես նվաճեց այդ ապստամբ ու ըմբոստ շրջանը: Թուրքական բանակը քանդեց Մշո Զաուրմե բերդը, Մոկաց բերդը, Բոհթանի, Բիթլիսի, Գյավաշի, Խնուսի և Բայազետի բերդերը, իսկ նրանց տիրակալ ցեղապետերին քսորեց Արաբական թերակղզի և այլ

վայրեր: մուտք գործելով Սղեղ, թուրքական ասկյարները կազմակերպեցին տեղի եզիզ (եզիզի) բնակչության սարսափելի կոտորած:

Քրդերին թուլացնելու նպատակով կատարվեցին նաև վարչական վերափոխություններ: Դեռևս 1847 թ. վերջին մի շարք քրդաբնակ վայրեր միավորվեցին և դրվեցին նախկին վեզիր Էսադ Մուխլիս փաշայի ընդհանուր կառավարչության ներքո:¹⁹¹ Այնուհետև քրդական ցեղապետ-ավատատերերի լեճային տիրույթները վերածվեցին թուրքական վարչական միավորումների, որոնցում ցեղապետերը պահպանում էին միայն անվանական ինքնուրույնություն:¹⁹²

Քրդերի նկատմամբ իր տիրապետությունը ամրապնդելու և ապագայում հակակառավարական ելույթները եթե ոչ խստապարտադրելու, ապա գեթ ինչ-որ չափով նվազեցնելու նպատակով օսմանյան կառավարությունը միջազգային-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող մի քայլ արեց: Քանի որ Իրանը Թուրքիայի քրդերին անընդհատ հրահրում էր հակակառավարական ելույթների և քանի դեռ այդ հարցում շահական կառավարության հետ չէր կայացվել որևէ համաձայնություն, Կ. Պոլիսը քրդերին ի վիճակի չէր լինի պահել հանգիստ վիճակում:¹⁹³ Այդ պատճառով թուրքական դիվանագիտությունը պնդեց, որ 1847 թ. մայիսի 19-ին (հիջրեթի 1246 թ.) երզրումում կնքված թուրք-իրանական պայմանագրի մեջ քրդական հարցի վերաբերյալ հատուկ կետ մտցվի: Ըստ նրա, շահական կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ Իրանի սահմանամերձ շրջաններում տեղավորված քրդական ցեղերի հարձակումները թուրքական տարածքի վրա և չհրահրել նրանց օսմանյան կառավարության դեմ: Պայմանագրում նշվում էր նաև, որ այն ցեղերը, որոնց հպատակության հարցը վիճելի էր, «մեկ անգամ ընդմիջտ» պետք է որոշեին այն և ընտրեին իրենց համար բնակության վայր կամ Իրանում, կամ Օսմանյան կայսրությունում:¹⁹⁴

Սուլթանական կառավարությունը Բաղրիսանի դեմ տարած հաղթանակը այնքան կարևոր էր համարում, որ այդ առթիվ նույնիսկ հատուկ կրծքանշան սահմանեց:¹⁹⁵ Ցնծության մեջ էր նաև Կոստանդնուպոլսի հայությունը: Մատթեսս պատրիարքի հրամանով հայկական բոլոր եկեղեցիներում կարդացվեցին գոհաբանական աղոթքներ և երգում էին «Ցնծացեք առ աստված, օգնական է մեզ»: Սուլթան Աբդուլ Մեջիդը իր ներքինապետ Թեյֆուր աղայի միջոցով շնորհակալություն հայտնեց Մատթեսս պատրիարքին «հայության համակիր դիրքի համար»: Պատրիարքն անմիջապես «կայսերական մեծ շնորհին» ազգասիրական ջերմ զեղումներով ավետեց իր ժողովրդին, միաժամանակ բուռն հավաստիացումներ անելով, որ «հայի երկիրը, դրախտավայր Դայաստանը, կրկին պիտի ծաղկի ու բարգավաճի»:¹⁹⁶ Պատրիարքը կոնդակ հղեց Օսմանյան կայսրության

բոլոր ծայրերում ապրող հայերին, որտեղ նա հորդորում էր շնորհակալ և բարեմաղթող լինել արքայի և «իւրոյ մեծագօր տէրութեան, և տօն ցնծութեան կատարել վասն ազատութեան ազգիս հայոց ի բռնութենն անողորմ բարբարոսաց»: Ավետելով, որ «ազատեցավ Դայաստան աշխարհը աս դառն վիճակեն, աս անտանելի գերութենն», նա հույս էր հայտնում, որ այսուհետև հայերի համար սկսվելու են նոր ժամանակներ, «տոն ազատութեան», որ Դայաստանը «այսուհետև կը նորոգի, կը պայծառանայ, և իւր առաջին սքանչելի տեսիլը եւ գեղեցկութիւնը կստանայ»:¹⁹⁷

Մայրաքաղաքի հայկական պաշտոնաթերթ «Լրո գիրը» երկարակետության մաղթանքներ էր ձոնում «մեծափառ» սուլթանին հայերին քրդերի բռնություններից ու ասպատակություններից ազատելու, նրանց գլխին կախված վտանգը վերացնելու, հանցագործներին «շղթայակապ» Պոլիս բերելու համար: Շնորհակալության այդ խոսքերը մինչև երկինք էին հանում թուրքական «բարեխնամ» կառավարության հոգատարությունը:¹⁹⁸ Իսկ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի պաշտոնաթերթ «Դայաստանը» գրում էր. «Ժամանակ մը մեր Ասիայեն միշտ ցավալի լուրեր կ'առնեինք, զանազան քյուրդ ցեղերուն գործած անգութ չարությունները կ'լսեինք. կողոպտել, քանդել, կործանել, գերել, սպանել, վերջապես ... ապստամբ ժողովրդե մը ինչ անօրենություններ կսպասվի նե՛ անոնց ամենը: Մեր ողորմելի Դայաստանին թշվառությունը որին երեսն է, թե որ ամոնց երեսն չէ նե, Դայաստանին այն զվարճալի դաշտերուն երեսը ո՛վ տխրեցուց, ո՛վ ծածկեց ամոնց երեսը սգո կտավով, քյուրդերուն ապստամբությունը և անկախությունը չէ՞ մի ... վեհափառ և գթած արքայն իր բոլոր երկրին երջանկությունը ցանկալով այս ապերջանիկ երկրին ալ պետք եղած հոգը տանելու սկսեց մեկ երկու տարիե ի վեր»:¹⁹⁹

«Դայաստանը» նույնպես լավատեսորեն էր տրամադրված, և նույնիսկ պնդում էր, թե իբր Արևմտյան Դայաստանում սարսափը և բռնատիրությունը այլևս վերացել են և ամենուրեք «բարերար օրենքների» թանգիմաթի շնորհիվ իշխում է խաղաղությունը: Սակայն երկար ժամանակ չպահանջվեց համոզվելու համար, որ հայերի սպասելիքները չեն արդարանալու:

Օսման փաշայի բանակի անլուր գազանությունների հետևանքով քրդերի մեջ բավականին տևական ժամանակ սարսափ էր տիրում: Թուրքական կառավարության արյունոտ հաշվեհարդարը թեև կտորեց քրդերին, բայց միևնույն ժամանակ այն ծայրահեղորեն գազազեցրեց նրանց թուրքերի դեմ:²⁰⁰ Այդ կապակցությամբ Բաֆֆին նկատում է, որ Բաղրիսանի շարժումը ճնշելու ժամանակ քրդերի նկատմամբ թուրքերի գործադրած դաժանությունները առաջ բերեցին «մի սաստիկ թշնամություն դեպի թուրք կառավարությունը մասնավորապես և դեպի առհասարակ թուր-

քերն ընդհանրապես... Այդ ատելությունը դեպի թուրքերը առիթ տվեց քրդերին ավելի մոտենալ հայերին և ավելի մտերմանալ նրանց հետ»:²⁰¹

Ստամբուլում անշուշտ գիտակցում էին, որ օսմանյան կառավարության նկատմամբ քրդերի տածած ատելությունը կարող էր տեղիք տալ նոր պոռթկման, որովհետև «Պետերխանի գաղափարը տակաւին ատեն մը կենդանի մնաց իր ցեղին մէջ»:²⁰² Ապստամբական հիմնական օջախները արդեն ջախջախված էին, այլևս իմաստ չունէր շարունակելու խստութիւնները: Ժամանակն էր, որ «մտրակի քաղաքականությունը» փոխարինվեր «կարկանդակի» քաղաքականությամբ, մանավանդ որ քրդերը անհրաժեշտ ու կարևոր գործոն էին կառավարության համար Արևելյան Անատոլիայում քրիստոնյա հոծ բնակչությանը՝ հայերին «հավասարակշռելու» համար: Առաջինը այդ քաղաքականությունը կիրառվեց հենց Բաղրխանի նկատմամբ: Կոստանդնուպոլիս տարագրելու ճանապարհին նրան տարան Դիարբեքի: այստեղ նա քաղաքային իշխանությունների կողմից արժանացավ մեծ հյուրին վայել հարգանքի ու պատիվների: Քաղաքի ամրոցի հրապարակում դրվեց Բաղրխանի փայտաշեն խամաճիկ արձանը, որը լցված էր վառողով և իր աչքի առջև «իր առանցքին վրա քանի մը շրջադարձիկ շարժումն ահեղ որոտումով կը պայթեր: Քիչ մը հեռուն, հանդիսատեսներն ձայն կը բարձրանար, հանցավորը հանցանքը քավեց»:²⁰³

Սուլթանական կառավարության կամքով քրդական հուժկու ապստամբության առաջնորդը այսպես կրեց իր անհավատալի ու խորհրդանշական պատիժը: Ի դեպ, Բաղրխանն ինքը սկզբում զարմացած ու ապշած էր կառավարության այդ վերաբերմունքից: Կոստանդնուպոլիսի «Չայտարար գիր լրոյ» թերթում տպագրվեց նրա շնորհակալական նամակը՝ ուղղված իր նկատմամբ «հայրական» հոգատարությունը դրսևորած սուլթանին: Նամակում նա անկեղծորեն խոստովանում է. «...կմտածեի, եթե բռնվելու ըլլամ, իզմե շատ գանձ կպահանջեն, ի վերա այսր ամենայնի այն կողմերու բնակիչներուն հույս ըրածին չափ իմ քովս այնքան ստակ չկա. ապա քովս ստակ չգտածուն պես՝ զիս կտանին բանտը կղնեն և կնեղեն, անանկ որ խմելու մը ջուրով ու քիչ մը հացով կյանքս բանտին մեջ անցունել կուտան: Այս մտածությունները ընելով՝ առաջի դրվածքներուն վրա կերթայի, սակայն հովանավորությամբ ինքնակալին՝ անծի ու ստացվածքի վրայոք լազատություն կա եղեր. ես՝ մեկ խմելու ջուրի վրա մտածելն իքեն, ապաստան եղած օրս ճեզիրեի մեջ մնացած ստացվածքս ու կալվածքս վավերական մուրհակով... գրելու համար՝ իմ կողմանե փոխանորդ ղնելին տեսածիս պես՝ ապշեցա մնացի, և ահա զիս մայրաքաղաքս բերին, աստված նորին վեհափառությանը երկար կյանք պարգևէ, անանկ մեկ տեղ մը դրին, որ իմ նախնիքս տեսած չէ, և անոնցմե

մեկը իր երազին մեջը անգամ ասանկ տեղ մը նստած չէ, փառք բարերարին՝ մեզի նստեցուցին ու ասանկ պատիվ ալ ցույց կուտան: Մենք ասիկա տեսնելով ու մեր ըրած պակասությունը մտածելով՝ մեր անծին հանդիմանություն կընենք կոր»:²⁰⁴

Քրդական այս ահարկու առաջնորդի մանկական անմիջականությամբ կատարված խոստովանության մեջ կարևորը վերջին նախադասությունն էր: Այն պարզորոշ կերպով վկայում է նախ այն մասին, որ Ստամբուլը վարպետորեն մեջտեղ էր բերել իր հին ու փորձված «կարկանդակ» մատուցելու քաղաքականությունը, իսկ Բաղրխանն էլ եկել էր այն համոզման, որ «այն ձեռքը, որ չես կարող կտրել, պետք է համբուրել ու ղնել ճակատին»: Այնուհետև նշված գործելակերպով թուրքական կառավարությունը հույս ուներ քրդերի մոտ մեղցնել «Բաղրխանի գաղափարը», այսինքն քրդական պետություն ստեղծելու երազանքը:

Իսկապես, կառավարությունը իր առջև ծնկի եկած քրդական այդ առաջնորդի ժառանգորդներին թողեց նրա բոլոր կալվածքները, նրա որդուն վերցրեց զինվորական ծառայության, շնորհելով նույնիսկ փաշայի տիտղոս: Կառավարությունը չպատժեց նաև ասորիների ջարդի կազմակերպիչներից մեկին՝ Չաքյարիի նախկին էմիր Նուրուլլա բեկին (հայկական աղբյուրներում՝ Յուր ալլահ): Չակառակը, նրան շնորհեց բարձր վարչական պաշտոն:²⁰⁵

Այս շրջանում սուլթանի քրդական քաղաքականության եությունը ոչ միայն հանգում էր նրան, որ ըմբոստ խառնվածքի տեր ցեղապետերը սիրաշահումների ճանապարհով պահվեն հնազանդ վիճակում, այլ նաև նրան, որ քրդական խոշոր իշխանությունները հնարավորության սահմաններում մանրացվեն ու թուլացվեն, իսկ հին ցեղապետերի փոխարեն առաջ քաշվեն նորերը, որոնք իրենց բարձրացումով պարտական լինեին սուլթանին: «Շարք մը շրջաններ, որոնք մեկ զորավոր ցեղապետի կենթարկվեին, բաժանվեցան քանի մը ցեղապետերու միջև, որոնք իրենց նոր իրավունքներից ոգևորված մեկը մյուսին դեմ կը լարվեին: Այս լարված դավադրական ցանցը իրական շահ մը կապահովեր թրքական կառավարութան, որ ինքզինքը սկսած էր ապահով զգալ քրդական նոր բռնկումներն»:²⁰⁶

Չայ ժողովուրդը ակնառու կերպով տեսնում էր, որ սուլթանի կողմից քուրդ ավատապետ-ցեղապետերի դեմ ձեռնարկված միջոցառումները մնում են կիսատ: Նա կռահում էր, թե կառավարությունը որտեղից է սկսել և որտեղ պիտի վերջացնի: Թե՛ 4. Պոլսի հայ հոգևոր և քաղաքական գործիչների և թե՛ մահանգների հայության հույսերն ու խանդավառությունները հօդս ցնդեցին և կասկածը թուրքական վարչության նկատ-

մամբ համակեց անխտիր բոլորին, հուսախաբ անելով նույնիսկ ամենալավատեսներին:

Բաղրխանի շարժման ճնշումից հետո նրա արհավիրքները ճաշակած հայության համար շատ կարճ ժամանակ պահանջվեց համոզվելու համար, որ քրդական «վարչությանը» փոխարինելու եկած թուրքական պետության լուծը, նրա հարկապահանջության կազմակերպված համակարգը, օսմանյան դատարանը, ոստիկանությունը, կաշառակեր պաշտոնեությունը և առհասարակ ողջ վարչական ապարատը նույնքան դաժան են, բռնակալ ու կեղեքիչ:

Թեև Օսման փաշան Արևմտյան Հայաստանի քրդական դերբեյներին, էմիլ Դիլլունի արտահայտությամբ, «մահացու հարված» հասցրեց, վերացվեցին քրդական անկախ ու կիսանկախ էմիրությունները, ավատական անջատողականության գլխավոր օջախները և այլն, իսկ սուլթանը 1849 թ. չեղյալ հայտարարեց այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից օգտվում էին դերբեյները, սակայն Բաղրխանի խռովությունների շրջանում օսմանյան կառավարության նկատմամբ հայերի տածած հույսերը բնավ չարդարացան: Ավելին, Բաղրխանի շարժման ժամանակ, այսպես կոչված «թափուի համակարգի» ընձեռնած հնարավորության շնորհիվ որոշ վայրերում հայ ճորտ գյուղացիներին հաջողվել էր ոչ մեծ քանակությամբ հողեր ձեռք բերել, անշուշտ օգտվելով թուրքական կառավարության բարյացակամ վերաբերմունքից, որը հետևանք էր կառավարության քաղաքականության նկատմամբ հայության որդեգրած համակիր դիրքորոշման:

Սակայն այն բանից հետո, երբ Բաղրխանի շարժումը ջախջախվեց, քրդերը կրկին սկսեցին իրենց հին գործը՝ հայերին պատկանող հողերի բռնագրավումները՝ տեղերում կրկին վերականգնելով հայ ռայաթների ճորտական վիճակը, որը թանգիմաթի հռչակած սկզբունքներով «թղթի վրա» վերացել էր: Ընդ որում, հայ գյուղացիության համար տարօրինակն ու զարմանալին այն էր, որ հաճախ քրդական բեյերի ու աղաների «գործընկերոջ» դերում հանդես էին գալիս օսմանյան տեղական իշխանությունների մարմինները, որոնք կոչված էին Արևելյան Անատոլիայում կյանքի կոչել թանգիմաթի սկզբունքները:²⁰⁷ Հայ գյուղացիության բողոքներին երկրի վարչական ու դատական հիմնարկներում կամ պատասխանում էին հայտնի թուրքական «օլմազ» (չի լինի, հնարավոր չէ) արտահայտությամբ և կամ առհասարակ չէին պատասխանում: Օսմանյան պետության ու նրա վարչական մարմինների նման գործելակերպը կայսրության քրիստոնյա ժողովուրդների մոտ խորտակում էր հավատը թանգիմաթի հռչակած մահմեդականների ու քրիստոնյաների «իրավունքների հավասարեցման» վերաբերյալ սկզբունքների նկատմամբ, որոնք առաջին

պահ մեծ ոգևորությամբ ու հույսերով էին ընդունվել արևմտահայության կողմից: Մարդիկ տեսնում ու համոզվում էին, որ կառավարության ընդունած օրենքները ոչ միայն չեն փոխում իրերի վիճակը, այլև էլ ավելի են վատթարացնում: Դրա բնորոշ օրինակներից մեկը հետևյալն էր. թեև 1850 թ. ծանր հարկատեսակներից մեկը՝ խարաջը, վերացվեց, սակայն ամմի-ջապես դրա փոխարեն մտցվեց մի նոր հարկատեսակ՝ որը կոչվում էր բեդել-ի ասկերի: Այն գանձվում էր ոչ մահմեդականներին զինվորական ծառայությունից ազատ թողնելու դիմաց: Թեև կառավարությունը այս «բարեփոխումը» փորձում էր ներկայացնել որպես բարիք իր քրիստոնյա հպատակների համար, որպես ազատում նրանց հոգին տոչորոզ վիրավորական հարկատեսակից, սակայն իրականում նոր հարկատեսակը իր ծանրությամբ գերազանցում էր նախորդին և ոչ պակաս վիրավորական էր «զյավուր» հորջորջված քրիստոնյաների համար:

Այնուհետև, թեև ծորապետ-դերբեյները հրապարակից վերացան, սակայն նրանց փոխարինելու եկան բազմաթիվ մանր ցեղապետեր, որոնք իրենց փոքր շրջաններում դառնում էին ավելի ահարկու և ավելի կողոպտիչ: Այդ ցեղապետերը անկախ էին մեկը մյուսից, որը հնարավորություն էր տալիս կառավարությանը ցանկացած պահին նրանց միջև հրահրել երկպառակություններ և հեշտությամբ հաշվեհարդար տեսնել նրանց հետ: «Եթե այդ ցեղապետերից մեկն ու մեկը իր ժողովրդի շրջանում ձեռք բերեր համբավ և իշխանություն, ապա աշխատում են նրան հեռացնել, զցել և ոչնչացնել, երբեմն նրան դարձնում են փաշա, առատորեն շնորհներ են անում նրան, կանչում են Կոստանդնուպոլիս, նրան տալիս են հարեմ և նա կորչում է պերճանքի ու մոռացության մեջ: Եթե չբավարարվի դրանով, կիրառում են ավելի կտրուկ միջոցներ»:²⁰⁸

Քանի որ քրդական խոշոր ցեղապետերի հզորությունը խորտակված էր, 1848 թ. դեպքերից հետո «քրտությունը ճկունությունը ունեցավ իր կորսնցուցած քաղաքական և զինվորական իշխանության տեղ առաջ քաշել կրոնական տարրը, որը չէր սահմանափակվեր մեկ ցեղապետության սահմաններում մեջ»:²⁰⁹ Այլ կերպ ասած, դերբեյներին փոխարինելու եկան մանր ցեղապետերն ու հոգևորականները՝ շեյխերը, փիրերը, սեյիդները և այլն, որոնք լցրեցին այն վակուումը, որն առաջացել էր իշխելու մոլուցքով տարված քրդական ցեղային վերնախավի շրջաններում:

Անշուշտ քուրդ մահմեդական հոգևորականությունը մինչև դերբեյությունների ջախջախումը ևս խոշոր ազդեցություն ուներ քրդական մահմեդական զանգվածների վրա: Սակայն այն ժամանակ նա իր ողջ կարողություններն ու ազդեցությունը ամբողջապես ի սպաս էր դնում ուժեղ և ազդեցիկ ցեղապետ-դերբեյներին: Այժմ նա հանդես էր գալիս որպես տիրապետող միանգամայն ինքնուրույն ուժ: Քրդական շեյխերը իրենց

անծի մեջ մարմնավորում էին իրենց ցեղի գերագույնի հոգևոր և աշխարհիկ պարտավորությունները: Նրանք ունեին հսկայական հեղինակություն, որը դուրս էր գալիս տեղական սահմաններից և տարածվում էր Մերձավոր ու Միջին արևելքի բոլոր քրդաբնակ շրջանների վրա: Որպես կրոնական առաջնորդներ, շեյխերից շատերը ղեկավարում էին նաև տարբեր դերվիշական միաբանություններ (Մեվլևի, Նաջբանդի, Կադիրի, Ռեֆայի և այլն): Շեյխերի իրավասության մեջ էր մտնում սովորություններին ու ավանդույթներին հսկելը, իրենց ցեղի անդամների միջև վեճերի լուծումը, հարևան ցեղերին պատերազմ հայտարարելը, հանդես էին գալիս որպես միջնորդներ իրենց ցեղի և կառավարության միջև, իրենք էին հավաքում և իշխանություններին հանձնում հարկերը, իրավունք ունեին պատժել ցեղի անհնազանդ անդամներին ընդհուպ մինչև նրանց գույքի բռնագրավումը և այլն: Մի խոսքով օժտված էին վիթխարի իշխանությամբ:

Շեյխերի պաշտոնը ժառանգական էր և այն պահելու և առհասարակ իրենց իշխանությունը անսասան դարձնելու համար բազմաթիվ շեյխեր հայտարարում էին, որ Օմայան և Աբասյան դինաստիաների առաջին խալիֆները իրենց նախնիներն են եղել:²¹⁰ Այսպիսով, շեյխերի իշխանության հարատևության երաշխիք էր տիտղոսի ժառանգաբար անցնելը:

Քանի որ շեյխն իր անծի մեջ մարմնավորում էր աշխարհիկ և հոգևոր ավատատիրոջը և մեծ ազդեցություն ուներ նաև տնտեսական կյանքում, շեյխերը հաճախ երկրորդ պլան էին մղում աշխարհիկ ավատատերերին: Նրանց հզորության աղբյուրը անշուշտ իրենց հարստությունն էր: Շեյխերին էին պատկանում հազարավոր անասուններ, լավագույն արոտավայրերը և այլն: Նրանք իրենց ունեցվածքը բազմապատկելու համար որպես կանոն միջոցների մեջ խտրություն չէին դնում, քաջ գիտակցելով, որ ուժի և իշխանության համար նյութական գործոնը գորավոր է բարոյականից: Քուրդ ժողովրդի պատմության լավատեղյակ Վ. Նիկիտինը գրում է. «Նախկին ժամանակներում շեյխերը, որոնք իսկն ասած, հանդիսանում էին դերվիշական միաբանությունների պետեր, բավարարվում էին լոկ հոգևոր իշխանությամբ և ապրում էին ի հաշիվ իրենց հետևորդների ու երկրպագուների նվիրատվությունների: Աստիճանաբար հարստանալով, ձեռք բերելով հողեր, մեծացնելով իրենց հետևորդների շրջանակը, նրանք ներքաշվեցին աշխարհիկ գործերի շրջապտույտի մեջ և սկսեցին իրենց ձեռքը վերցնել նաև աշխարհիկ իշխանությունը, իրենց տրամադրության տակ ունենալով խոշոր միջոցներ և բազմաթիվ զինված ծառաներ»:²¹¹ Իսկպպես, շեյխերը հաճախ խոշոր ցեղապետության իրավունք էին ձեռք բերում նաև ուժի օգնությամբ, քանի որ որպես մուրշիդներ, նրանք իրենց տրամադրության տակ ունեին հազարավոր զինված մյուրիդներ:

խոշոր ցեղապետերը գործարքի մեջ էին մտնում շեյխերի հետ, որպեսզի հենվելով նրանց հսկայական ազդեցության ու հեղինակության վրա, կարողանան ամրապնդել իրենց դիրքերը քրդական շրջանում: Կարևոր է նշել, որ թուրքական իշխանությունները ևս աշխատում էին շահել նորաբուս շեյխերի համակրանքը, որովհետև նրանց հետ մեծ հույսեր էին կապում որպես Արևմտյան Հայաստանում ու Քրդստանում իրենց նոր սոցիալական հենարանի: Օգտագործելով այն հանգամանքը, որ սուլթանը միաժամանակ հանդիսանում էր համայն աշխարհի մահմեդականների հոգևոր առաջնորդ՝ խալիֆը, օսմանյան կառավարող շրջանները աշխատում էին քրդական դերվիշական միաբանությունների, շեյխերի ու սեյիդների օգնությամբ քուրդ զանգվածներին պահել թուրքական պետության գաղափարական-քաղաքական ազդեցության ներքո: Հենց այդ պատճառով սուլթանները բարձր պատիվների էին արժանացնում նրանց: Մեվլևի դերվիշական միաբանության ղեկավարին նույնիսկ շնորհված էր սուլթանի գոտուն խալիֆ Օմարի սուրը կապելու արարողության պատիվը:²¹²

Ի՞նչ գնահատական կարելի է տալ XIX դարի առաջին կեսին տեղի ունեցած քրդական շարժումներին և ի՞նչ ազդեցություն ունեցան դրանք հայ-քրդական հարաբերությունների վրա: Նախ պետք է նշել, որ նշված շրջանում ատելով ու մերժելով օսմանյան լուծը, քուրդ ժողովուրդը միաժամանակ կուրորեն ենթարկվել է ցեղապետական իշխանությանը: Այդ պատճառով քրդերի անկախության զգացումը կենտրոնացած է մնացել տվյալ ցեղի անկախության գաղափարի մեջ և ամբողջ ժողովրդի հավաքական անկախությունը ոչ միայն մտահոգության առարկա չի եղել, այլև նույնիսկ չի գիտակցվել: Սրանում է թաքնված քուրդ ժողովրդի քաղաքական զարգացման առեղծվածը: «...Ծայրահեղ անկախության զգացումը դարերի ընթացքում քաղաքական ձև չի ստացել և քյուրտերը չեն մղված ազգային պետություն մը կերտելու և հավաքական հայրենիքի մեջ փնտրելու իրենց ապահովությունն ու անկախությունը»:²¹³

«Չնայած քրդերին բնորոշ սիրուն դեպի ազատությունը և իրենց ազգության որոշ գիտակցմանը, որը նրանց հնարավորություն է տվել պահպանելու իրենց լեզուն և սովորույթները, նրանք երբեք չէին կարող ստեղծել կայուն պետություն և նույնիսկ երբեք չեն ձգտել դրան: Քրդի հայրենասիրությունը դուրս չէր գալիս իր ցեղի (աշիրեթի) սահմաններից և եթե պատահում էր, որ մի քանի ցեղեր միավորվում էին ընդհանուր գործողության համար, առաջին իսկ անհաջողությունները ոչնչացնում էին նման դաշինքը»,²¹⁴ – նշում էր ռուս զինվորական, քրդական հարցին լավատեղյակ Ա. Կարցեվը: «Եթե Քրդստանը վերջ չտա իր պատմության ցեղային էտապին, նա երբեք ի վիճակի չի լինի դառնալու ազգային պետություն»,²¹⁵ – ընդհանրացնում է Վ. Նիկիտինը:

Կասկածից վեր է, որ XIX դարի առաջին կեսի քրդական շարժումները գլխավորող ուժերը հետապնդում էին ըստ էության հետադիմական նպատակներ. վաղուց իրեն սպառնած տոհմացեղային կարգերի հավերժացում, իրենց բացարձակ իշխանության պահպանում Արևմտյան Հայաստանի և Քրդստանի նստակյաց և քոչվոր բնակչության նկատմամբ: Քրդական ավատատերերին միշտ էլ խորթ է եղել համաժողովրդական շահեր հասկացությունը, նրանք մշտապես հակված են եղել համաձայնության մեջ մտնելու թուրքական իշխանությունների հետ, ընդհուպ մինչև ընդհանուր գործին դավաճանելու գնով, հեշտությամբ տեղի են տվել կաշառքներին և այլն:²¹⁶ Թուրքական կառավարության դեմ քրդական բոլոր ապստամբությունները «ըստ էության հանդիսանում էին լոկ առաջնորդների ապստամբություններ, որոնք հետապնդում էին ոչ թե միասնական ազգային Քրդստանի ստեղծման գաղափարը, այլ իրենց անձնական շահերի պաշտպանությունը, որոնք սպառնալիքի տակ էին դրվում թուրքական կառավարության կողմից: Այդ ապստամբությունները միանգամայն հատկանշական էին այն առումով, որ ցույց էին տալիս քրդական զանգվածների պատրաստակամությունը՝ գնալու իրենց առաջնորդների հետևից ամենավտանգավոր պայքարի, որն անձամբ նրանց ոչինչ չէր կարող տալ և նույնիսկ հակասում էր նրանց շահերին»:²¹⁷

Գլխավորապես վերոհիշյալ պատճառների հետևանքով ամբողջ XIX դարի ընթացքում միևնույն աշխարհագրական տարածքում ապրող ժողովուրդների (հայ, քուրդ, ասորի և այլն) ազատագրական ոգորումները թուրքական լծի դեմ ընթանում էին իրարից անջատ, տարբեր ուղիներով, երբեք չխաչաձևելով պատմական զարգացման որևէ փուլում:

Շնորհիվ իրենց տրամադրության տակ եղած ռազմական կազմակերպության՝ աշիրեթային զինված ջոկատների, քրդական ցեղային վերնախավը կարողանում էր իր կամքը թելադրել Արևմտյան Հայաստանի քրիստոնյա բնակչությանը, որի իրավունքները առանց այն էլ սահմանափակված էին օսմանյան պետության կողմից, ինչպես նաև իսլամական կրոնի սկզբունքներով:

Դերեբեյական իշխանության պայմաններում հայ բնակչության վրա ծանրացած էր միայն քրդական ցեղապետ-ավատատերերի անտանելի ծանր, ոչնչով չսահմանափակված լուծը: Նրանց միջև գոյություն ունեցող հակամարտությունը միայն գտնվում էր տնտեսական հողի վրա: Կողմերի միջև քաղաքական հակասություններ, ըստ էության, գոյություն չուներին, որովհետև և՛ ճորտատեր-դերեբեյները և նրանցից ճորտական կախման մեջ գտնվող հայ ռայաթ բնակչությունը վերջին հաշվով գտնվում էին միևնույն քաղաքական տիրապետության՝ օսմանյան լծի ներքո:

Սակայն դերեբեյական իշխանության ջախջախումը հայ-քրդական հարաբերությունների մեջ մտցնում էր որոշակի փոփոխություններ: Նախ Բաղրխանի շարժման ճնշումից հետո քրդական ցեղերը թշնամությամբ լցվեցին հայերի դեմ, նրանց (բացառությամբ լեռնական զինված համայնքների) դիտելով որպես թուրքասերների: Այնուհետև քուրդ աղալարները հայության վրա սկսեցին նայել որպես ուրիշին պատկանող կողպուտի ենթակա զանգվածի:

1853 թ. Արևելյան կամ Ղրիմի պատերազմը բռնկելուց հետո թուրքական կառավարող շրջանները մեծ հույսեր էին կապում արևելյան ճակատում Ռուսաստանի դեմ քրդերի ռազմական ուժը շարժման մեջ դնելու հետ: Սուլթանը քրդերին կոչ արեց զենքի դիմել հանուն իսլամի պաշտպանության: Սակայն սրբազան պատերազմի այդ կոչը լայն արծագանք չգտավ ցեղային վերնախավի և քուրդ զանգվածների շրջանում: Բացառությամբ Ռուսաստանի սահմանակից շրջաններում բնակվող մի շարք ցեղերի (հայդերանլը, զիլան, սիփքի, ջեմալդիմլի, ջուլուքի, միլյանլի, բեզիքի և այլն), ինչպես նաև առանձին քուրդ ավատատերերի, որոնք իրենց բախտը կապել էին օսմանյան կառավարության հետ, մնացած ցեղերը կամ բացահայտ խուսափում էին պատերազմական գործողություններին մասնակցելուց և կամ սպառնալիքների ճնշման ներքո մեկնելով ռազմաճակատ, առաջին իսկ հնարավորության դեպքում դիմում էին փախուստի, դասալքության, իսկ երբեմն նույնիսկ զենքն ուղղում էին հենց թուրքական զորքերի դեմ: Մի շարք քրդաբնակ շրջաններում ծայր առան հակակառավարական շարժումներ: Հատկապես ուժգին խլրտումներ սկսվեցին անհնազանդ Ղերսիմում:¹ Ինչ վերաբերում է անդրկովկասյան քրդերին, ապա նրանք տոգորված էին հակաթուրքական տրամադրություններով: Նրանցից ռուսական հրամանատարությունը ձևավորեց երկու զնդեր զնդապետ Մ. Տ. Լորիս-Մելիքովի ընդհանուր հրամանատարությամբ, որոնք պատերազմի ժամանակ ցուցադրեցին մարտական լավ որակներ:²

Քրդական վերնախավը դժգոհում էր, որ թուրքական բանակի ներկայությունը քրդաբնակ շրջաններում սահմանափակում է իր «ազատությունը», իսկ զանգվածները տրտմջում էին, որ իրենց ստիպում են բանակի համար տալ զինակոչիկներ, կանոնավոր կերպով մուծել հարկերը և այլն: Այդ տրտմունքները կրկնապատկվում էին այն պատճառով, որ թուրքական հարկահավաքներին մշտապես ուղեկցող կառավարական զորքն ամենուրեք թույլ էր տալիս կամայականություններ ու բռնություններ:³

Քրդական վերնախավի և քուրդ զանգվածների դժգոհությունը փորձեց օգտագործել Բաղրխանի եղբորորդի Եղանշիրը, որը 1840-ական թվականներին ապստամբության ժամանակ Բ. Դռանը մատուցած ծառայությունների դիմաց նշանակվել էր «Քրդստանի կառավարիչ» պաշտոնում: Սակայն օսմանյան կառավարությունից դիմադարձ այդ ազդեցիկ առաջնորդը սկսեց զաղտնապես իր շուրջը համախմբել կառավարություն-

նից դժգոհ քրդական տարրերին՝ հարմար պահին ապստամբելու նպատակով:

1854 թ. հուլիսի 17-ին Քյուլյուք Դերեյի մոտ, Չինգիլի բարձունքների շրջանում թուրքական բանակի պարտությունը և Բայազետի անկումը աննախընթաց չափերով ուժեղացրին քուրդ զինվորների դասալքությունը և դժգոհությունը կառավարության նկատմամբ:⁴

Որոշակի նախապատրաստական աշխատանքներից հետո Եղանշիրը հանդես եկավ թուրքական լուծը թոթափելու վերաբերյալ հատուկ կոչով, որը հատկապես մեծ արծագանք գտավ Բոհթանում, Ջեզիրեյում, Հաքյարիում և քրդաբնակ այլ վայրերում: Ուշագրավ է, որ այդ կոչին արծագանքեցին նաև Արևմտյան Հայաստանի և Քրդստանի հայերն ու ասորիները: Եղանշիրը ավելորդ էր համարում թուրքական իշխանությունների ներկայությունը և Արևմտյան Հայաստանում և՛ Քրդստանում, քանի որ նրա ասելով այդ երկրամասերում թուրք բնակչությունը կազմում էր չնչին տոկոս, մինչդեռ ազգաբնակչության հիմնական զանգվածը բաղկացած էր հայերից և քրդերից:⁵

1854 թ. դեկտեմբերին Եղանշիրի գլխավորությամբ բռնկեց քրդերի բացահայտ և զանգվածային ապստամբություն օսմանյան կառավարության դեմ: Ողջ Քրդստանն ու Արևմտյան Հայաստանը այնպես էլ չկործակեց: Ապստամբությունն ընդգրկեց Վանից մինչև Բաղրադ հասնող հսկայական տարածք:⁶ Եղանշիրին հեշտությամբ հաջողվեց գրավել Բիթլիսը, որտեղ ապստամբները հաշվեհարդար տեսան տեղի կայմական Ալի-բեյի հետ:⁷ Վանի և Սուկի քուրդ բնակչությունը Թելի-բեյի գլխավորությամբ, ինչպես նաև Բաղրխանի որդիները իրենց բազմաքանակ զորքով միացան ապստամբներին:⁸

Թուրքական կառավարությունը խուճապի մեջ էր: Ստամբուլում մտավախություն կար, որ ապստամբությունը կարող է ծավալվել ահավոր չափերով և «ներգրավել Հայաստանի և նույնիսկ Անատոլիայի քրիստոնյա բնակչությանը»:⁹ Եղանշիրին միացան նաև Սոսուլի եզիդները, որոնց էմիր Յուսեյին-բեյը ջախջախեց թուրքական հինգհազարանոց զորամասը և գրավեց Սղերդ քաղաքը:¹⁰

Ռուսաստանի դեմ կռվող թուրքական գործող բանակի թիկունքում բռնկած այդ ապստամբությունը լուրջ անհանգստություն պատճառեց Ստամբուլին, մանավանդ որ Եղանշիրը փորձեր էր անում կապեր հաստատել ռուսական զորքերի հրամանատարության, մասնավորապես Երևանյան ջոկատի հետ, առաջարկելով համատեղ հարված հասցնել էրզրումում կանգնած թուրքական բանակին:¹¹ Այդ անհանգստությունը կրկնապատկվեց ապստամբությանը ասորիների ու հայերի միանալու հավանականության վերաբերյալ լայնորեն տարածվող լուրերի պատճառ-

ռով: 1855 թ. Արդեբիլի արքեպիսկոպոս Իսահակ Սաթուրյանցին տեղեկացնում են, որ Հաքյարիի գավառի հայ, քուրդ և ասորի բնակիչները ռուսական զորքերի առաջխաղացման դեպքում պատրաստ են համատեղ հանդես գալու կառավարության դեմ: Նույն թվականի մայիսին ասորիների հոգևոր առաջնորդ մարշիմուն Աբրահամը ռուսական զորքերի կովկասյան գործող կորպուսի իրամատար գեներալ Վ. Բեհբուբովին գրած նամակում հայտնում էր, որ հայերը և քրդերը պատրաստ են միանալու ռուսական զորքերին:¹² Հաստատելով այդ փաստը, ռուս զինվորական Պ. Ի. Ավերյանովը գրում էր, որ քրդերի և քրիստոնյաների միջև գոյություն ունեւ գարմանալի միասնություն ուղղված ընդհանուր թշնամու թուրքերի դեմ:¹³

1855 թ. հունվարին Բաղդադից թուրքական բանակը Կենգամփաշայի գլխավորությամբ շարժվեց Եզդանշիրի ուժերի դեմ: Սակայն Սղերդի մոտ տեղի ունեցած առաջին իսկ ճակատամարտում քրդերը ջախջախեցին թուրքերին: Այդ հաջողության հետևանքով տեղական արաբները և հույները միացան ապստամբներին:¹⁴ Ձինված ապստամբների թիվը հասավ 60 հազարի: Նրանք հաշվեհարդար էին տեսնում կամ վճարում էին թուրք աստիճանավորներին, իրենց հսկողությունը սահմանելով գրավված տարածքների վրա:

Ապստամբության հրդեհը տարածվեց նաև Արևմտյան Հայաստանում, ընդգրկելով Վանի, Էրզրումի, Բայազետի և այլ շրջաններ:

1855 թ. թուրքական կառավարությունը ուժերի մեծ լարումով ջախջախեց Եզդանշիրի ապստամբությունը: Քրդական այդ ընդվզումը, որն իր թափով գերազանցում էր հակաթուրքական նախորդ բոլոր շարժումներին, նույնպես ավարտվեց անհաջողությամբ:

Անդրադառնալով այդ ապստամբության արդյունքներին, ռուսական սպա Մ. Լիխուտինը գրում է. «Օսմանների տիրապետության և նրանց փաշաների կառավարման նկատմամբ համընդհանուր դժգոհությունը սպասում է միայն հնարավորության, մի կայծի, ինչպես ցույց տվեց Եզդանշիրի ապստամբությունը, որպեսզի բռնկի և դառնա անհանգչելի հրդեհ»: «Դժգոհությունը չի վերացած, — շարունակում է նա, — ժողովուրդը և նրա զգացումները թուրքերի նկատմամբ մնացին նույնը, ինչ նախկինում և թեև այլևս Եզդանշիրը չկա, սակայն նրա փոխարեն կարող են հանդես գալ տասնյակ նոր ղեկավարներ»:¹⁵

Նախորդ քրդական շարժումների համեմատ այս ապստամբության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ քրիստոնյաների նկատմամբ անկարգություններ ու բռնություններ տեղի չունեցան:¹⁶ Բացառությամբ առանձին ցեղապետերի (օրինակ, Ալաշկերտի շրջանում գործող Բահլուլ փաշայի որդի Մահմադ բեկի), Եզդանշիրի շարժմանը

մասնակցող քուրդ ավատատերերն ու ցեղային առաջնորդները հայերի նկատմամբ որդեգրել էին չեզոք դիրք:^{16ա}

Անշուշտ, դա տհաճ նորություն էր օսմանյան կառավարության համար, որը չէր կարող խորապես չանհանգստացնել նրան: Ուստի Դրիմի պատերազմի ավարտից հետո Ստամբուլը իր քրդական քաղաքականության մեջ կատարեց բավականին կտրուկ շրջադարձ: Եթե «մինչև 1860-ական թվականները Արևելյան փաշայությունների հետ կապված հիմնական հարցը, որ զբաղեցնում էր թուրքական կառավարությանը, քուրդ ժողովրդի անկախ և կիսանկախ դրությունը վերացնելու հարցն էր»,¹⁷ ապա դրանից հետո, երբ կայսրությունը կանգնում էր նոր մարտահրավերների առջև, անհրաժեշտություն էր զգացվում թուլացնելու մանլիչը քրդերի նկատմամբ և այդ ճանապարհով կայունացնելու վիճակը Արևելյան Անատոլիայում:

Լեոն քրդական հարցում թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառները բացատրում է հետևյալ կերպ. «Օսմանյան կառավարությունը, — գրում է նա, — փոխանակ պատժող ու ճնշող հանդիսանալու, ինչպես եղել էր մինչ այդ, ընդգրկում էր սիրաշահել գրավելու քաղաքականությունը և այդպիսով ոչ միայն անվճար դարձնելու այդ ռազմիկ տարրը, այլև պատերազմի դեպքում իր կողմն ունենալու համար: Իսկ սիրաշահելու ամենալավ միջոցներից մեկն էր թույլ տալ քրդերին, որ շահագործեն հայ երկրագործ ժողովրդին, ինչպես իրենք կկամենան: Կառավարության համար, զուտ ռազմական նպատակներով ցանկալի էր, որ քրդերը պահպանեն իրենց հին ցեղային-զինվորական կազմակերպությունը, և որովհետև թանգիմաթը քանդում էր այդ կազմակերպության հիմքերը՝ մի հանգամանք, որ պիտի չափազանց թուլացներ նրա պատերազմական արժեքը, ուստի քուրդ կալվածատիրությունն ուժեղացվում էր ի հաշիվ հայ կալվածատիրության՝ մինչ այն աստիճանի, որ թանգիմաթի ներգործությունն իրապես չքանում էր, թեև արտաքուստ պահում էր իր տառը»:¹⁸

Սակայն դա բոլորը չէր: Դրիմի պատերազմի ժամանակ վերստին դրսևորվեց Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի քաղաքական անվերապահ դիրքորոշումը: Եզդանշիրի ապստամբության ժամանակ պարզվեց նաև, որ առանձին քուրդ գործիչների շրջանում ևս Ռուսաստանի հետ կապեր հաստատելու որոշակի հակումներ են նկատվում: Ստամբուլն այդ վտանգավոր երևույթները արմատախիլ անելու ամենագործուն միջոցը համարում էր հայ-քրդական հարաբերությունների սրումը՝ մեկ ժողովրդին մյուսի դեմ հանելու միջոցով:

Թուրքական կառավարությանը հայտնի էր նաև, որ հայ ժողովրդի շրջանում ազգային զգացումների և ազգային վերածննդի գաղափարներ

րը վերելք են ապրում: Օսմանյան բռնապետության դեմ ազգային-ազատագրական շարժում ծավալելու գաղափարը, դուրս գալով հայ առաջադեմ գործիչների շրջանակներից, ավելի ու ավելի էր համակում ժողովրդական զանգվածներին:

Այսպիսով, կայսրության արևելյան քաղաքականությունը հայտնվել էր մի երկընտրանքի առջև՝ հայե՞ր թե՞ քրդեր: Ծանր ու թեթև ամելով այս երկընտրանքի հետ կապված բոլոր հանգամանքները, Ստամբուլը ընտրությունը կատարեց հոգուտ վերջինիս: Դրա տրամաբանական շարունակությունը օսմանյան կառավարության կողմից լինելու էր հակահայ քաղաքականության որդեգրումը: «Ճնշելով, թեկուզ և ժամանակավորապես, քրդական խոշոր շարժումները, սուլթանական կառավարությունն իր հարվածներն ուղղում էր արևմտահայության դեմ, որին այժմ նա դիտում էր որպես իր վտանգավոր թշնամիներից մեկի»:¹⁹

Իր այս նոր քաղաքականությունն իրագործելու ճանապարհին թուրքիան եվրոպական պետությունների կողմից դիմադրություն չէր սպասում, որովհետև Դրիմի պատերազմը համոզել էր նրան, որ Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը եսկան նշանակություն ուներ եվրոպայի քաղաքական հավասարակշռության համար, հետևաբար հայ ժողովրդի նկատմամբ կառավարության որդեգրած քաղաքականությունը չի հանդիպի եվրոպական դիվանագիտության եռանդուն հակազդեցությանը:²⁰

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, սուլթանական կառավարությունը հրամայեց նահանգների վալիներին և զինվորական ներկայացուցիչներին այսուհետև քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ ուրիշ միջոցներով, գլխավորապես համոզելու ճանապարհով և ոչ մի դեպքում չգրգռել նրանց:²¹ Տեղական իշխանությունները նաև քուրդ ցեղապետներին հասկացրեցին, որ այսուհետև իրենց արարքները հայերի նկատմամբ չեն դիտվելու որպես հակապետական գործողություններ:

Հայ ժողովրդի նկատմամբ թուրքական կառավարության որդեգրած այս թշնամական քաղաքականության պատճառներից մեկը ֆրանսիացի Լյուդովիկոս դը Բոնապարտընը համարում է այն, որ թուրքերը վախենում էին, թե հայերի միջոցով եվրոպական առաջադեմ գաղափարները կտարածվեն թուրքիայում, սպառնալիքի տակ դնելով կայսրության անվտանգությունը: «Միթե՞» հայերի անվիճելի մտավոր ընդունակությունները, - գրում է նա, - չբորբոքեցին թուրքերի անվստահությունը նրանց նկատմամբ, որոնք վախենում էին, որ ազատության, հավասարության, իրավունքի և օրինականության գաղափարները... հեշտությամբ կարող էին թափանցել իրենց մեջ... Հենց այդ պատճառները թուրքերին բերեցին այն մտքին, որ հայերի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել արևելյան

նվաճողների հին դասական սիստեմը, այսինքն բնակչության կոտորածը, որի սոսկ գոյությունը սպառնալիք է հանդիսանում նրանց համար: Եվ թուրքերը առանց տատանվելու XIX դարում և XX դարի սկզբին հարուստուն տվեցին այդ սիստեմին»:²²

Հակահայ քաղաքականությունը ունեցավ նաև իր գաղափարախոսները: Այսպես, օսմանյան դիվանագիտության խոշոր դեմքերից մեկը՝ Ֆուադ Մեհմեդ փաշան սուլթան Աբդուլ Ազիզի անունով գրած իր քաղաքական կտակի մեջ ազդարարում էր, որ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է»: «Մասնավորապես հայերը հակում ունեն դեպի ոտնձգություն և խելացի կլինի նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, ովքեր պարկեշտորեն կընդունեն մեր կայսրության միասնավոր սկզբունքը»:²³

1856 թ. փետրվարի 18-ին սուլթանական կառավարությունը հրապարակեց իր բարեփոխումների նոր ծրագիրը՝ հաթթը-հումայունը, որը հանդիսավոր խոստումներ էր տալիս օրենքի առջև քրիստոնյաների իրավունքները մահմեդականների իրավունքների հետ հավասարեցնելու, քրիստոնյաներին զինվորական ծառայության մեջ ներգրավելու մասին, արգելում էր խտրականությունն ու ոչ մահմեդականների նվաստացումը:²⁴ Հաթթը-հումայունը խանդավառ հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում: Հայերը սպասում էին, որ թանգիմաթի այս նոր փուլը հիմնավորապես կբարելավի իրենց վիճակը: Կարճ ժամանակ պահանջվեց այդ խանդավառ հույսերի փլուզման համար: Նախ, թեև խոսքով հաթթը-հումայունը վերաբերում էր օսմանյան բոլոր հպատակներին, սակայն ասիական թուրքիայի ներքին գավառները դուրս էին մնում սուլթանական այդ «շնորհներից»: «...Այդ տխրահռչակ հրամանագիրը, - գրում էր ռուս գիտնական - ճանապարհորդ Պ. Ա. Հիխաչևը, որը 1859 թ. այցելել էր Արևմտյան Հայաստան, - ավելի հայտնի է եվրոպայում, քան այն երկրում, որտեղ նա պետք է բաց աներ նոր դարաշրջան»:²⁵

Այս ծրագրի նպատակներից մեկն էր նոր մեթոդներով ծախողել ոչ թուրք ժողովուրդների վերելք ապրող ազգային - ազատագրական շարժումը: Թուրքական սահմանադրության հայր հորջորջված Ահմեդ Միդհատ փաշան գտնում էր, որ «առաջին հերթին ոչ թե բռնի միջոցները, այլ բարեփոխումները առավել լրիվ կերպով պատասխանում են կայսրության մեջ ազգային - ազատագրական շարժումը ճնշելու խնդրին»:²⁶

1856 թ. մարտի 30-ին Փարիզի վեհաժողովում կնքված միջազգային պայմանագիրը արևմտահայության վառվառն հույսերի վրա լցնում էր սառը ջուր: Ռուսաստանը, որի հետ հայությունը կապում էր ազատագրական մեծ հույսեր, հրաժարվում էր Օսմանյան կայսրության քրիստոնյաներին հովանավորելու իր նախկին պահանջներից:²⁷ Միաժամանակ պայ-

մանագրի 9-րդ հոդվածը ազդարարում էր, որ տերությունները դրական դիրքորոշում են որդեգրում բարեփոխումների նկատմամբ օսմանյան նոր «Ակտի» վերաբերյալ:²⁸

Կարճ ժամանակ անց կայսրության մեջ մեծ ազդեցություն ունեցող կրոնական արձատականները աշխարհիկ ազգայնականների հետ ձեռք-ձեռքի տված ձախողեցին 1856 թ. Ակտը բարեփոխումների վերաբերյալ: Առհասարակ թուրք ժողովուրդը չընդունեց ոչ մահմեդականների հետ հավասարության սկզբունքը, դրանով իսկ ցույց տալով, որ Օսմանյան կայսրության մեջ տիրող մտայնության պայմաններում Հաթթը-հումայունի ազդարարած սկզբունքները կառուցված են ավագի վրա: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ այդ բարեփոխումներն իրականացվելու դեպքում հարցականի տակ էր դրվում տիրապետող ազգի («միլլեթը հաքիմե») սկզբունքը, որն անհանդուրժելի էր ոչ միայն թուրքերի, այլ նաև քրդերի համար, որոնք նույնպես իրենց դասում էին կայսրության տիրապետող ազգերի շարքը:

XIX դարի 50-60-ական թվականներից հետո Օսմանյան կայսրության ընդգրկումը համաշխարհային կապիտալիստական շուկայի մեջ իր անդրադարձները ունեցավ նաև արևմտահայության վրա: Արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցան սոցիալ-տնտեսական բնույթի նոր և լուրջ տեղաշարժեր: Մասնավորապես հայ բուրժուազիան Օսմանյան կայսրության առևտրական, տնտեսական և ֆինանսական կյանքում ձեռք բերեց կարևորագույն դիրքեր: Այդ բոլորի հետևանքով հայ հասարակությունն ապրեց զգալի առաջընթաց քրդական հասարակության համեմատաբար ներփակ բնույթի համեմատությամբ:

Թվում էր թե այդ բոլորը նպաստելու էր թուրքական հասարակության մեջ քաղաքական մթնոլորտի բարելավմանն ու առողջացմանը: Սակայն տեղի ունեցավ միանգամայն հակառակը: Հայ-քրդական հարաբերությունները էլ ավելի սրվեցին: «Աստիճանաբար երկրի կյանքի նյարդն անցավ հայերին, իսկ հայերի տերերը՝ քրդերը և թուրքերը, անսպասելիորեն ընկան պարտապանի վիճակի մեջ իրենց ոչ վաղուցվա ճորտերից: Այսպիսով տնտեսական պայմանների հիմքի վրա ստեղծվեց թյուրիմացությունների նոր աղբյուր՝ հայերի և քրդերի միջև չարացածությունը բորբոքվելու համար»:²⁹

Անդրադառնալով հաթթը-հումայունի հետևանքով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական բնույթի տեղաշարժերին, Ֆրանսիացի Ռընե Պիհոնը նշում էր, որ թանգիմաթի այս էտապից «Թուրքիան դուրս էր գալիս ավելի մահմեդական, ավելի ասիական, ճիշտն ասած զինվորապետ ավելի ուժեղ, բայց և քրիստոնյա ազգաբնակչությունները ճնշելու ավելի տրամադիր»:³⁰

Րաֆֆին ևս առարկելով բոլոր նրանց, ովքեր հաթթը-հումայունի հրապարակումից հետո ենթադրում էին, որ Օսմանյան կայսրությունը բռնել է եվրոպականացման ուղին և մտել քաղաքակիրթ ժողովուրդների շարքը, գրում էր. «Ո՛չ, Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող, նրա երևակայական հառաջադիմությունը հռչակող, անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են, թե այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում և այլև... Այս բոլորը դատարկ խոսքեր են: Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ, այն է՝ իր արտաքին կերպարանքը պաճուճել է որպես մի եվրոպական տերություն, իսկ սրտով, հոգով ու գործով մնացել է միշտ մոնղոլ, նույն բնավորությամբ, որպիսին էր նա երբեմն Թուրանի անապատներում»:³¹

Ենիլ Դիլլոնը 1847-ից մինչև 1891 թվականն ընկած շրջանը անվանում է Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի խայտառակ կառավարման շրջան:³² Դա անշուշտ նշանակում է, որ թանգիմաթի բարենորոգչական շարժումը, որն ընթանում էր ի նպաստ քրիստոնյա բնակչության բարօրության պիտակի ներքո, ոչ միայն չնպաստեց արևմտահայության վիճակի բարելավմանը, այլև ունեցավ մի շարք բացասական հետևանքներ, մասնավորապես սրելով հայ-քրդական հարաբերությունները: Հաթթը-հումայունը դիտելով միայն քրիստոնյաների, հատկապես հայերի համար նախատեսված բարեփոխումներ, քրդերը ավելի գրգռվեցին հայ ազգաբնակչության դեմ:³³ Սուլթանական կառավարությունը միտումնավոր բորբոքում էր քրդերի այդ տրամադրությունները: Բացի այդ, կատարում էր քայլեր, որոնք միտված էին էլ ավելի սրելու հայ-քրդական առանց այն էլ լարված հարաբերությունները: Նա աքսորավայրերից հետ վերադարձրեց և իրավունքներ շնորհեց այն բոլոր ցեղապետերին, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ դիտում էր որպես իր ոխերիմ թշնամիների: Այսպես, օրինակ, Մշո դաշտից արտաքսված Միրզա բեյը իր տղաներ Մուսա, Ռասըմ, Նիո և Ջազը բեյերի հետ վերադարձավ և օգտվելով տեղական իշխանությունների հովանավորությունից, իր տիրապետության տակ վերցրեց շրջակայքի հայկական գյուղերը:³⁴ Ամենուրեք սկսվեցին նաև քրդական շեյխերի և ցեղապետերի կողմից հայերին պատկանող հողերի բռնագրավումներ, որոնք պետության կողմից վավերացվում էին սուտ վկաների վկայություններով կամ կեղծ փաստաթղթեր (թափու, գոչան) ներկայացնելու միջոցով:³⁵

Իրենց զինված ջոկատների գլուխ անցած, քրդական բեկերն ու աղաները տեռորի էին ենթարկում հայկական գյուղերը, մինչդեռ հայերը լրիվ անզեն էին, որովհետև օսմանյան օրենքները խստիվ արգելում էին ոչ մահմեդականներին զենք կրել: Տիրահռչակ շեյխ Ջալալեդդինի հայրը

շեյխ Սաբաթուլլահը դեմքը ծածկեց քողով, հայտարարելով, որ քրիստոնյաներին տեսնելը սրբապղծություն է: Կրոնական մոլեռանդությունը դարձնելով վարագույր, նա սկսեց անխնա բռնագրավել հայերին պատկանող հողերը: Նրա բռնագրավումների հետևանքով հիզանի և նրա շրջանների հայ բնակչությունը ստիպված էր այդ վայրերից գաղթել:³⁶ Շեյխ Սաբաթուլլահի տված օրինակը վարակիչ հանդիսացավ: Քուրդ մուլաները, դերվիշները, շեյխերն ու սեյիդները հայ գյուղացուն ունեզրկելու, կողոպտելու ու հարստահարելու համար սկսեցին լայնորեն օգտագործել կրոնական այլամերժության և իսլամական մոլեռանդության թույլը:

1864 թ. Մկրտիչ վարդապետ Տիգրանյանը գրում էր. «Քրտիսթանու քուրտ մահմեդականները Շեհվի օրինոք ըլլալուն համար, քրիստոնյաներից կարդալու և աղոթք ընելու ծայնը իրենց ականջին հասնելը շատ մեծ մեղք համարվելուն համար, մինչև անգամ եկեղեցեաց լուսամուտ շինելը արգելված էր. անոր համար մինչև հիմա եկեղեցիները ո՛չ լուսամուտ ունեն և՛ ո՛չ պատուհան. միայն մեկ փոքր դուռ ունին, թեև կես ավուր արևին ներս մտնասնե, լույս չես կարող տեսնել»:³⁷

Այդ բոլորը կատարվում էր կառավարության և նրա տեղական մարմինների աջքի առջև, որոնք հանդես էին գալիս լոկ դիտորդի դերում և լռեյայն խրախուսում անօրինականությունները: Բանը հասել էր նույնիսկ նրան, որ մի շարք գավառներում, օրինակ Խույթ-Բռնաշենում, քրդական ցեղապետերը սկսեցին հայերի գյուղերն ու արտերը վաճառել միմյանց: «Ամսողը կուզայ գիւղը կը նստի ուզած հայն կը թողու, չուզածն դուրս կը վճնտէ»:³⁸ Կրկին իր իրավունքների մեջ մտավ խաֆիիության համակարգը:

Օսմանյան կառավարությունը հետևողականորեն աշխատում էր հայաթափ անել Արևելյան Անատոլիան: Նա նույնիսկ դրդում էր Իրանի քրդերին տեղափոխվել Արևմտյան Հայաստան և զավթել հայերի հողերը: Երկրամասի բոլոր գավառներում անխտիր կամայականությունները, բռնությունները, հարստահարությունները, սպանությունները, հրկիզումները, առևանգումները և այլն դարձան սովորական երևույթ և ստացան ընդհանուր աղետի բնույթ: Ժամանակակիցների վկայությամբ բանը հասել էր նրան, որ երբ միջոցդային արյունախանձ կռիվների ժամանակ քրդերը սպանում էին միմյանց, հաճախ չկարողանալով իրենց թշնամիներից վերցնել արյան գին, նրանք այն բռնի կերպով վերցնում էին հայերից:³⁹

«Հայաստանում,– գրում է Պ. Ա. Չիխաչևը,– քրդերը կողոպտում և ամեն կերպ լկտիաբար կեղեքում են բնակչությանը, դա օրեցօր գնալով աճում է: Նրանց կողոպուտներին նպաստում է ոչ միայն տեղական իշխա-

նությունների անզորությունը, ... այլ հաճախ դրանց խրախուսումը այդ նույն իշխանությունների կողմից»:⁴⁰

1864 թ. Մշո դաշտի գյուղացիները գրում էին, որ քուրդ բեկերը «կրակեն անելի կը լափեն իրենց բոլորտիքի խեղճ հայոց կենդանութիւնը, վասն զի սերմը արտեն, խոփն ու շղթան երկրագործեն, մանգաղը հնձողեն, կինը յառնեն անխնայ կը յափշտակեն, ասոնց բարբարոսութիւնը՝ դառնաշուռչ հողմն մը անելի ցրուեց մեր դաշտեցի հայերը՝ աշխարհի չորս կողմը»: Նամակագիրը ավելացնում էր, որ այդ բռնություններից ու կողոպուտներից ազատվելու համար գյուղացիները ստիպված էին «գիշերանց կրցածնուն չափ բառնալ ու երթալ, տեղերնին աներակ թողլով»:⁴¹

Արևմտյան Հայաստանում առկա դարձավ մի օրինաչափություն: Թուրք բոլոր այն պաշտոնատար անձինք, որոնք այս կամ այն չափով դիպչում էին քրդական վերնախավի շահերին, կարճ ժամանակ անց ստիպված էին լինում պաշտոնաթող լինել: Այսպես, 1869 թ. քրդական աշիրեթների գործած բռնությունների դեմ հայերի բողոքների պատճառով Բ. Դուռը Կարնո վալի Իսմայիլ փաշային հրամայեց բռնել և աքսորել այդ աշիրեթների էլ-աղասի կամ թռռուն ցեղապետերին: Միայն Մշո գավառից հարյուրի չափ թռռուններ ձերբակալվեցին և աքսորվեցին Եվրոպական Թուրքիա և այլ վայրեր: Սակայն շուտով Իսմայիլ փաշան պաշտոնանկ եղավ և աքսորված թռռունները կրկին հետ վերադարձան, անշուշտ վրեժխնդրության ոգով այրված:⁴²

1875 թ. Մշո քուրդ աղաներին, որոնք հայտնի էին հայ բնակչության նկատմամբ իրենց գործած բռնություններով, Ամենդ Մուխթար փաշան էրգրումում բանտարկում է: Սակայն նրա պաշտոնանկությունից հետո սրանք ևս ազատ են արձակվում:⁴³ 1867 թ. վալի Խայրեդդին փաշան մեծ վեզիրին ուղղված զեկուցագրում կառավարության համաձայնությունն էր հարցնում քրդական աղալարների խժժություններից հայերին պաշտպանելու վերաբերյալ: Մասնավորապես նա առաջարկում էր այդ նպատակով Վան, Մուշ, Բիթլիս և այլ վայրեր ուղարկել լրացուցիչ զորքեր: Թուրք պաշտոնյան իր առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ հայերը սպառնում են թողնել և հեռանալ երկրից, մինչդեռ դրանից կվնասվի պետությունը և արքունի գանձարանը: Մեծ վեզիրը, սակայն, չպատասխանեց այդ զեկուցագրին: Եվ երբ փաշան վերստին կրկնեց իր առաջարկը, մայրաքաղաքից ստացավ հետևյալ պատասխանը. «Դուք պետական քաղաքականության մեջ խառնվելու չեք, և իրերը նկատելու եք այդպիսի տեսակետով: Իսկ հայոց, բա՛րի ճանապարհ, թե որ կուզեն գաղթել. երկիրը կրնամ մարդացունել չերթեզներով և այլովք»:⁴⁴

Հաճախ հայ բնակչությանը այս կամ այն վայրից դուրս մղելու համար կառավարությունը ինքը այդ վայրերն էր տեղափոխում քրդական

վաչկատուն ցեղերի, որոնք բռնությամբ հարկադրում էին հայերին դիմել արտագաղթի: Այդ առթիվ Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» թերթը գրում էր. «1869 թ. Իսմայիլ փաշան Մշո, Պաթեքանի, Բագրանի, Աշեկոտանի և Փինճիօարի (իմա՝ Սինջարի: — Վ. Բ.) լեռներեն 5.6000 վրանաբնակ քուրդ ընտանիքներ քշեց մինչև Տիգրիսի եզերքները այնտեղ բնակեցնելու համար: Այդ քրդերը պատուհաս եղան հայերի համար: Երանք հարձակվեցին 30-ից ավելի գյուղերի վրա և ավարի տալով ու սպանություններով ստիպեցին բնակիչներին, որ փախչեն գնան և իրենք տիրացան այդ գյուղերին»:⁴⁵ Ընդ որում, քանի որ Սինջարի եզիրները դիմադրել էին Իսմայիլ Հաքքը փաշայի այս բռնի տեղահանումների քաղաքականությանը, նա հրամայել էր երեխաներից սկսած մինչև 70 տարեկան ծերերը բռնի թլպատել և իսլամացնել»:⁴⁶

Պ. Ի. Չիխաչևը գրում էր, որ կառավարության կողմից հրապարակած նոր կարգի համաձայն, նախկին դերբեյները պետք է պետությանը վերադարձնեին հայերից բռնագրաված հողերը, իսկ վերջիններս իրենց պետք է ազատ համարեին դերբեյների նկատմամբ ունեցած պարտավորություններից, այսուհետև կախում ունենալով միայն կառավարությունից, որին պետք է վճարեին տասանորդի հարկը և պետության կողմից սահմանված մյուս հարկերը: Իսկապես, ինը տարի շարունակ հայերը օգտվում էին դերբեյներից հետ վերցված հողերից, երբ հանկարծ այդ երբեմնի հզոր ցեղապետերի ժառանգները, որոնք այժմ կրում են համեստ և ոչինչ չնշանակող «աղա» տիտղոսը, հայերից և ասորիներից պահանջեցին նախկինում իրենց հայրերի բռնագրաված հողերի «վարձակալության վճարը», կարծես թե թանգիմաթով հռչակված նոր կարգը բնավ գոյություն չէր ունեցել: Ավելին, մեծ վեզիր Ռեշիդ փաշայի օգնությամբ, որն արդարացի էր համարում աղաների այդ պահանջները, այդ նորաբուս աղալարները կառավարությունից ստացան մի ֆիրման, ըստ որի հայերը ենթակա էին հարկման և հետևաբար պետք է աղաներին վճարեին ինը տարվա համար ապառքները: Պ. Չիխաչևը դա անվանում է ուղղակի անհավատալի ֆիրման» և նկարագրում է, թե ինչպես այդ ապառքները հավաքելիս փայտերով ծեծում էին գյուղացիներին, նրանց նետում բանտերը և ունեցած զույքը բռնագրավում: «Հալածական, ինչպես վայրի գազաններ, այդ թշվառները կառավարության մոտ իզուր փնտրում էին արդարություն», — ասում է նա:⁴⁷

Միանգամայն ակնհայտ էր, որ հայերի նկատմամբ քրդական ավատապետերի գործադրած բռնությունների ու անօրինականությունների թելերը տանում էին Ստամբուլ և նա էր ուղղություն տալիս այդ բոլորին: Արդեն XIX դ. 50-60-ական թվականներին թուրքական կառավարող շրջանների մոտ հասունացել էր «հայերից ազատվելու գաղափարը»:⁴⁸

Իսկ հայությունը շարունակում էր թուրքական վարչությունից սպասել անզուսպ տարրերի դեմ «խիստ միջոցառումներ»: Ընդ որում, ամեն մի քայլ, որին դիմում էր հայ ժողովուրդը իր տարրական իրավունքները պաշտպանելու համար, հատկապես նրա բողոքներն ու դիմումները կառավարությանը, էլ ավելի էին խորացնում քրդերի թշնամանքը:

Եվրոպական պետությունների կողմից նորագույն զենքի ներմուծումը Արևմտյան Հայաստան ունենում էր այն հետևանքը, որ այն զանգվածաբար անցնում էր քրդերի ձեռքը, այսինքն նրանք ստանում էին «...ի-րենց խաղաղ հարևաններին քայքայելու ու ոչնչացնելու նոր միջոցներ»:⁴⁹

Աղետներից ազատվելու համար արևմտահայությունը ոչ միայն զաղթում էր մի զավառից մյուսը կամ բռնում երկրից հեռանալու ուղին, այլև հաճախ դրությունից էլք գտնելու հույսով ընդունում էր իսլամը և ծուլվում թուրք և քուրդ զանգվածի մեջ: Վավերագրերից մեկում կարդում ենք, որ փրկության ուղիներ որոնելու համար Մշո դաշտի մի շարք գյուղերի բնակիչներ հավաքվում են ժողովի: «Մենք ըսինք ժողովին, — ասվում է վավերագրում, — թե մեր ժողովրդի փրկության համար մեկ միջոց կա, թրջությունը ընդունենք 40-50 տարի կամ քիչ մը ավելի, թերևս այս երկիրը ուրիշ պետության մը ձեռքը կանցնի, մենք ալ կազատինք ու կղառնանք հայության»:⁵⁰ Արևմտահայության զգալի զանգվածներ էլ իսլամն ընդունել են բռնի հարկադրանքով: Իսկ քրդական գերակշիռ բնակչություն ունեցող շրջաններում մեծ թվով հայեր քրդացել են և դարձել քրդախոս:⁵¹

Նշելով, որ օսմանյան կառավարության մեղքով Արևմտյան Հայաստանը տևապես դառնալու է տարբեր էթնիկական խմբերի միջև մշտական թշնամանքի ասպարեզ, ռուսական բանակի զեներալ և Մերձավոր Արևելքում քաղաքական դիտորդ Մ. Լիխտոտինը հայտնում էր հետևյալ միտքը. «Ժողովուրդների, լեզուների և կրոնների այդպիսի բազմազանության ու խառնուրդի պայմաններում, որը հանդիպում է այստեղ, և թշնամական հարաբերությունների համընդհանուր լարվածության անկախությամբ, չի կարելի սպասել, որ կարգն ու հանգստությունը այստեղ կարողանան հաստատվել ինքնաբերաբար ... ասիական Թուրքիայում անհրաժեշտ է նոր հզոր իշխանություն, որովհետև դասային հարաբերությունների հեղաշրջումը, այսինքն տարբեր ժողովուրդների հարաբերությունները, նրանց հավասարեցումը արդարության սկզբունքի վրա, դժվարին գործ է, որին թուրքական իշխանությունը ընդունակ չէ իր բնույթով և ներկա թուլության պատճառով»:⁵²

Ցարական գաղութային քաղաքականության ջատագով այս ռազմական գործի կարծիքով, միայն Ռուսաստանն է ընդունակ լուծելու այդ

կնճռոտ խնդիրը: «Պատերազմի ընթացքում, – շարունակում է նա, – մենք տեսանք մնան անկարգությունների հեշտությունն ու հնարավորությունը, ինչպես և հայերի ջարդը քրդերի կողմից դեռևս ոչ մեծ չափերով, իսկ երբ դիտում ես այդ տարածությունները, որոնք բնակեցված են այնպիսի ժողովուրդներով, որոնք պատրաստ են ալեկոծվելու և ոչնչացնելու մեկը մյուսին, ապա զգում ես եվրոպացիների (հմա՝ ռուսների: – Վ. Բ.) արագ, գործնական և իշխող ազդեցության անհրաժեշտությունը, որը կլուսավորեր կամ կճգմեր այդ վտանգավոր ժողովուրդներին, կանխելով մեծագույն դժբախտությունները»:⁵³

1863 թ. Օսմանյան կառավարությունն ընդունեց Հայոց ազգային Սահմանադրությունը, որն անկասկած Օսմանյան կայսրության ներքին բարեկարգության մթնոլորտի արդյունքներից մեկն էր, որը սկիզբ էր առել թանգիմաթի բարենորոգումների շրջանից: Սահմանադրությունը գալիս էր ձևակերպելու և կանոնակարգելու հայոց ազգային ներքին կյանքը: «Ազգային Սահմանադրությունը խանդավառ շրջան մը բացավ հայոց կյանքին մեջ: Այդ ներքին ինքնավարությունը եկավ մասամբ բավարարելու այն ակնկալությունները, որ հայությունը կը սպասեր բարեկարգությանց հայտարարություններեն: Բացի այդ, հայությունը կարծեց պահ մը, թե այդ ճանապարհով գտած է իր ազատությունը»:⁵⁴

Սահմանադրության թելադրանքով նահանգներում ընտրվում էին հայոց առաջնորդներ, կամ նշանակվում էին Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից: Այդ առաջնորդները օժտված էին ոչ միայն տվյալ շրջանի հայոց կրոնապետի, այլ նաև վարչական իշխանության ղեկավարի լիազորություններով: Հենց այդ պատճառով նրանք տեղական հայերի, քրդերի և թուրքերի աչքին ներկայանում էին որպես հայոց նահանգապետ կամ գավառապետ, թուրքական վալիի և մյութեսարիֆի կողքին: Մինչդեռ քրդերը այդ բոլորն ընկալում էին այնպես, որ իրենք դուրս են մնում պետական այս շնորհից,⁵⁵ թեև իրողությունը այն էր, որ առաջնորդական այդ ամբողջ ցանցը հանդիսանում էր ընդամենը կրոնական ու կրթական մի հաստատություն, իսկ իրական իշխանությունը պատկանում էր թուրքական կառավարությանը:

Կասկածից վեր է, որ այդ հանգամանքը անխուսափելիորեն հայերի ու քրդերի միջև բաց էր անելու թշնամության նոր դուռ: Ավելի ուժեղացան հայերին պատկանող հողերի բռնի զավթումները, նրանց արտաքսումը հայրենի օջախներից, կոտորածները և այլն: Մի խոսքով էլ ավելի խորացավ նրանց միջև գոյացած անդունդը: Հայկական նահանգներից մայրաքաղաք էին ուղարկվում տասնյակ հարյուրավոր աղերսագրեր, սակայն ամեն ինչ մնում էր անփոփոխ: Մուշի շրջանից Կոստանդնուպոլսի «Ազգային կենտրոնական վարչությանն» ուղղված աղերսագիր-բողո-

քի մեջ կարդում ենք. «Դուք արդեն գիտեք զմեզ չարչարող բարբարոս քրդերը: Մեր մալ ու մուլքին, նաև մեր կեանքին վնասող նոքա են: Բայց մենք առաել քան զանոնք քանի տարիէ ուրիշ տեղերէն վիշտեր, զրկանքներ, կը կրենք ... Քրդերու վնաս ի քաղաք պետութեան կը բողոքենք: Բայց քաղաքէն ընդունած վնասը որի՞ բողոքենք»:⁵⁶

Աղերսագրի բողոքը անշուշտ հասցեագրված էր թուրքական իշխանություններին: Սակայն վերջիններս փորձում էին հայերին ներշնչել, որ Ազգային Սահմանադրության հրապարակումից հետո նրանց համար սկսվել է նոր լավագույն ժամանակներ: Այդ առթիվ Ջեմալ փաշան, օրինակ, հետագայում, գրում է. «քրդերի ստրկացուցիչ լծի փոխարեն նրանք (հայերը: – Վ. Բ.) հնարավորություն ստացան լավագույն հարաբերությունների մեջ ապրել թուրքերի և թուրքական կառավարության հետ ...»:⁵⁷

Իրականում Ստամբուլը քայլ առ քայլ հետամուտ էր «հայերից ազատվելու» իր ծրագրին: Այսպես, 1867 թ. սուլթանական կառավարությունը հրապարակեց «Վիլայեթների վարչության մասին» օրենքը, ըստ որի Դիարբեքիքը, Մուշը, Վանը, Բիթլիսը, Հաքյարին և Ջեզիրեն միավորվում էին մեկ վարչական միավորի մեջ և ստանում «Քրդստան» անվանումը: Վարչատարածքային այդ վերածանցումն նպատակն էր քրիստոնյա ու մահմեդական ազգաբնակչության տեղաբաշխման հետ այնպես խաղալ, որ վերոհիշյալ նահանգներում հայ ազգաբնակչությունը ոչ մի տեղ մեծամասնություն չկազմեր:

Այդ քայլը հայերի մեջ առաջ բերեց ուժգին բողոքներ:⁵⁸ Թեև կառավարությունը անցանկալի բարդություններից խուսափելու համար վերանայեց իր որոշումը՝ Վանի և Մուշի շրջանները միացնելով Էրզրումի վիլայեթին,⁵⁹ սակայն ինքնին արդեն կառավարության կատարած վարչական այդ բաժանումը խիստ հատկանշական էր և նրա իմաստը միանգամայն ճիշտ էր ընկալվել արևմտահայության կողմից:

Այնուամենայնիվ Բ. Դռան կողմից կազմակերպած «Քրդստան» վարչական միավորը դարձավ իրողություն: Նրա վալի նշանակվեց Իսմայիլ Հաքքը փաշան, որը Արևմտյան Հայաստանը Քրդստանի վերածելու համոզված ջատագով էր:⁶⁰ Նրան հանձնարարված էր Հայաստանի ու Քրդստանի ամենահեռավոր ու անհնազանդ մասերում, թեկուզ դաժան միջոցառումներով, հաստատել օսմանյան կառավարության իշխանությունը: Սակայն Հաքքը փաշային հանձնարարված գործը այնքան էլ հեշտ չէր, մանավանդ որ քրդական աշիրեթները գլխավորն զինված էին, իսկ կառավարությունը մտադիր չէր զինաթափել նրանց:⁶¹ Երբ 1870-ական թվականների սկզբին Բ. Դռան առանձին գործիչներ, այդ թվում նույնիսկ սուլթան Աբդուլ Մեջիդը, հարց բարձրացրին քրդերին զինաթափ անելու մա-

սին, մեծ վեզիր Ալի փաշան հայտարարեց, «Պետք չէ, քրդերը միշտ պատրաստ զորք են մեզ համար»:⁶²

Չաքքը փաշայի կարևորագույն խնդիրներից մեկն էր նաև ստիպելու քուրդ ցեղապետերին, որպեսզի նրանք հայերից «զանձված» տուրքերը հանձնեն կառավարությանը, մի բան, որը որպես կանոն չէր հաջողվում: Այդ հողի վրա քրդերի և կառավարական զորքերի միջև ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում արյունալի բախումներ: Չատկապես իրենց անհնազանդությամբ աչքի էին ընկնում քերթյանլի, իսխանլի, քչուրի, ռժգոթանլի, հասարլի, փիրոզլի, փենեքքենարլի և բազմաթիվ այլ ցեղեր:

Քանի որ կառավարությունը մտադիր չէր հայերին վերցնելու իր պաշտպանության տակ, ուստի վերջիններիս կողմից բողոքի հանրագրությունները իրար հետևից տեղում էին մայրաքաղաք: Թուրքական բյուրոկրատիան Ստամբուլ ուղարկվող այդ «թաքիրների» դեմ օգտագործում էր «իսթիլամի» (քննություն, ստուգում) զենքը: Դա գործը ձգձգելու կամ մոռացության մատնելու մի ձև էր: Իսկ կառավարության զավառական իշխանություններին ուղղված հրամանները կամ «ազդու» միջոցները, որոնք Րաֆֆու արտահայտությամբ «Բ. Դուռը շալլորեն դուրս էր տալիս իր խաբեության գործարանից», տեղերում մնում էին անգործարդելի ու անհետևանք:

1869 թ. ստանձնելով Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը, խրիմյան Չայրիկը իր հետ մայրաքաղաք տարավ հարստահարությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր և դրանց վրա հիմնվելով կազմեց իր նշանավոր «Գավառական հարստահարությունների տեղեկագիրը», որտեղ հինգ հարյուրից ավելի արյունոտ դեպքերի նկարագրություն կար: Չատուկ հանձնաժողովը, որը վերոհիշյալ «Տեղեկագիրը» ներկայացրեց Կոստանդնուպոլսի Չայոց Ազգային ժողովին, միջոցներ առաջարկեց քրդական ցեղերի կողմից հայերի հարստահարությունները սահմանափակելու ուղղությամբ: Մասնավորապես առաջարկվում էր զինաթափ անել քրդերին և կամ զենք կրելու իրավունք տալ նաև քրիստոնյա ժողովուրդներին, առավել աչքի ընկնող հարստահարիչ ցեղապետերին աքսորել Ռուսելի և այլն:⁶³ Միանգամայն ակներև է, որ նման առաջարկներ անողները իսպառ տեղյակ չէին թուրքական կառավարության հետին նպատակներին: Երբ Ազգային ժողովը 1872 թ. փետրվարին տեղեկագիրը ներկայացրեց կառավարությանը, վերջինս ձևացրեց, թե լրջորեն քննելու է այն: Չայերից և մահմեդականներից բաղկացած մի խառը հանձնաժողով մեկնեց Չայաստան, տեղում բողոքները քննելու համար: Տեղեկագրի բովանդակությունը հաստատվեց: Կառավարությունը խոստացավ մի լիազոր հանձնաժողովի հանձնել հանցավորներին պատժելու և առաջարկ-

ված պայմանները իրականացնելու գործը, բայց ամեն ինչ մնաց լույ խոստում:

Կոստանդնուպոլսում մեծ վեզիր Ալի փաշայի մոտ իր առաջին այցելության օրը խրիմյան Չայրիկը նրան ներկայացնելով կայսրության արևելյան նահանգներում տիրող վիճակը, նույն կրթով խոսում էր և՛ հայ, և՛ քուրդ աշխատավոր բնակչության դառն ու ծանր վիճակի մասին:⁶⁴ Քիչ ավելի ուշ, 1876 թ. խրիմյանի գրած «Ծրագիր բարեփոխման»-ում (որը տպագրվեց միայն 1909 թ.), ևս նա կառավարությանն էր ներկայացնում իր խորհրդածություններն ու կարծիքները քրդերի վիճակի և նրանց կյանքի պայմանների բարելավման մասին:

Կոստանդնուպոլսում «Ազգային ժողովի» և «Կենտրոնական վարչության» անդամները համակարծիք չէին այն հարցում, որ բողոքների միջոցով կարելի է արևմտահայության վիճակի մեջ դրական առումով փոփոխությունների հասնել: Կային նույնիսկ «ազգային գործիչներ», որոնք գտնում էին, որ բողոքելու հիմքեր չկան, քանի որ Արևմտյան Չայաստանում հայության վիճակը ավելի լավ է, քան տիրապետող ժողովրդինը՝ թուրքերինը: Նրանց կարծիքով «Չայաստանի մեջ որ շուկայ, որ վաճառատուն որ մտնեք, պիտի տեսնեք, որ բոլոր խանութներում մեջ հայեր են մտած, առետուր ընողը հայն է... Երբ գիւղ մը մտնեք, աքլորի եւ կոչնակի ծայն առնուք, ուր մարգագետին, ծառեր եւ պարտեզներ ձեր աչքին առջեւ տարածուին, ուր աղջըկուք աղբիւրներ ջուր բերեն, մէկ խոսքով ընկերականութիւն նշմարեք այդ գիւղին մէջ, գիտցեք որ հայուն է այդ գիւղը. ընդհակառակն, երբ գիւղ մը մտնեք, ուր ոչ պարտեզ կայ, ոչ ծառ, լուռ, ամայի և չոր, գիտցեք որ տաճիկին է այդ գիւղը»:⁶⁵

Ի վերջո խրիմյանի աննահանջ դիրքը և նրա պատրիարքությունը Ազգային ժողովի ուսերի վրա դարձավ մի ծանր բեռ, և պատահական չէ, որ այն զբաղեցնելուց ընդամենը չորս տարի հետո՝ 1873 թ. նա ազատվեց այդ պաշտոնից, դառնացած հայտարարելով. «Ձիս նաւապետ կոչեցիք ալեկոծեալ նաւուն եւ նաւն ինձ յանձնելէ ետեւ անէնքսիդ ալ փախչելով, զիս միայն թողուցիք. կը նայիմ չորս կողմս, բայց նաւաստի մը չեմ գտներ»:⁶⁶

Անշուշտ հարստահարությունների դեմ բողոքները ընթանում էին ազգային հողի վրա, սակայն միևնույն ժամանակ դրանք իրենց մեջ պարունակում էին նաև սոցիալական ենթահող: Այսպես, օրինակ, XIX դ. 60-ական թվականներին Վանի հայոց առաջնորդ Պողոս վարդապետ Մելիքյանը, գաղտնի համագործակցելով Վասպուրականի շրջանի քուրդ ցեղապետերի ու ավատապետերի հետ, կողոպտեց ու թալանեց ոչ միայն ռայա քրդերին ու քրիստոնյա ասորիներին, այլև հարազատ ժողովրդին: Րաֆֆին «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վրա» հողվածում

գրում է. «Յուզբաշի Ալի աղան, Ձազա Էոմերը, Շենսկի Տրպոն, Պաշկալա-
յի Քոռ Էոմերը, բոլորը հպատակում են նրան: Նորտուզա Տրպազ աղան,
որ Գոզվոց վանքը թալանեց, Շատախու Գյուլ-Մեհմեդը, որ տեղային եկե-
ղեցիները կողոպտեց և յուր անասունների գոմերը դարձուց, Մուկաց երկ-
րի Ավդալ բեկը՝ այն հազարավոր հայերի արյունը թափող խան Մահմուդի
եղբայրը և Մաթուրցվոց Մեհմետ Ալի աղան, որ Սաթմանից եկեղեցին
պղծեց՝ բոլորը Պողոս վարդապետի ամենահավատարիմ բարեկամներն
են դառնում: ...Այդ բոլոր չարագործները գաղտնի կապեր են կցում Պո-
ղոս հայրսուրբի հետ և նորանից կախումն ունեն»:⁶⁷

Պողոս վարդապետը կապ ուներ նաև Վանի փաշայի հետ և այդ
կեղտոտ եռյակը անխնա թալանի ու հարստահարությունների էր ենթար-
կում թե՛ հայ, թե՛ քուրդ գյուղացիությանը: «Մի հայոց եկեղեցի պղծել
տվող Մեհմետ Ալիին ազատելու համար Պողոսը կառավարության ատյա-
նի մեջ վկայում է, թե չարագործն անչափահաս մանուկ լինելով, ազատ է
պատժվելուց, մինչդեռ նա ահագին մորուք ուներ»:⁶⁸

Բողոքների և հանրագրությունների թղթե գեներին դիմելուց բացի,
հայ մտավորականության շրջանից առանձին գործիչներ դեռևս XIX դարի
50-ական թվականներից սկսած հանգում են այն համոզման, որ քանի
քրդերի մոտ տիրում են աշիրեթական-ցեղապետական կարգերը, քանի
այդ ժողովուրդը գտնվում է հետամնացության ու խավարի մեջ, զուրկ գիր
ու գրականությունից, մտավոր ու մշակութային կյանքից, արևմտահա-
յության գլխին միշտ էլ կախված կլինի դամոկլյան սուրը, որը անհրաժեշ-
տության դեպքում, իր հայադավ միտումներն իրականացնելիս, կօգտա-
գործվի թուրքական կառավարության կողմից: Ուստի դրությունից դուրս
գալու ելքը նման մտածելակերպի տեր գործիչները փնտրում էին քրդերի
շրջանում լուսավորություն տարածելու մեջ: Հայ մտավորականներից
Սկրտիչ Տիգրանյանը առաջիններից էր, որ 1850 թ. շրջեց Արևմտյան Հա-
յաստանի քրդաբնակ շրջանները, նպատակ ունենալով քուրդ երեխանե-
րի համար դպրոցներ կազմակերպել: Դեռևս 1841 թ. նա կազմեց «Կա-
նոնք բարեկարգութեան Քյուրտիստանի և Հայաստանի վանօրեից և վի-
նակաց նոցին»⁶⁹ ծրագրային աշխատությունը, որտեղ շարադրում էր իր
տեսակետները քուրդ մատաղ սերնդի շրջանում լուսավորություն տարա-
ծելու համար, իսկ 1860 թ. հայկական տառերի հիման վրա կազմում է
«Այբբենարան քրդերեն և հայերեն»⁷⁰ դասագիրքը: Նրա ջանքերով նույն
թվականին Կոստանդնուպոլսում կազմակերպվեց «Բարեկարգութիւն ա-
րեւելեան» ընկերությունը, որի գործուն անդամներից էին նաև ազատագ-
րական գաղափարներով տոգորված արևմտահայ առաջադեմ մտավորա-
կան, «Մեղուկ» խմբագիր Հարություն Սվաճյանը, Մ. Մոմջյանը և ուրիշ-
ներ: Հիշյալ ընկերության ջանքերով կազմվեց և հրատարակվեց հայա-

տառ քրդերեն մի դասագիրք «Լապտեր լուսանտու» վերնագրով,⁷¹ որը
տարածվեց քրդական շրջաններում:⁷²

Ի միջի այլոց, «Բարեկարգութիւն արեւելեան» ընկերության ա-
ռաջնահերթ նպատակն էր նաև բարեկամական հարաբերությունների
հաստատումը քրդական շրջանների հետ:⁷³

Ուշագրավ է, որ պոլսահայ երևելիները մեծ հետաքրքրությամբ
վերաբերվեցին հայ մտավորականության վերոհիշյալ գործունեությանն
ու ջանքերին: Այսպես, տեղեկանալով, որ կազմված է «Լապտեր լուսա-
տու» քրդերեն դասագիրքը, մի քանի մեծատուններ՝ Սկրտիչ Մութաֆյա-
նը, Վարդան Վարդանյանը, Հովհաննես Հակոբջանյանը, Գրիգոր Բագրա-
տունյանը և ուրիշներ դրամական նվիրատվություն արեցին գրքի տպագ-
րությունը գլուխ բերելու համար:⁷⁴

Սկրտիչ Տիգրանյանի գաղափարներն ու մտահղացումները հե-
տագայում շարունակվեցին մի խումբ հայ մտավորականների կողմից,
թեև նրանց ջանքերը մշտապես հանդիպում էին օսմանյան իշխանություն-
ների դիմադրությանն ու խափանիչ քայլերին:

Արևմտահայ իրականության մեջ գտնվել են նաև մարդիկ, որոնք
ենթադրում էին, որ չարիքների աղբյուրը քրդերի քոչվորական կենցաղն է,
ուստի ենթադրում էին, որ նրանց նստակեցության անցնելու դեպքում
բնական ձևով արմատախիլ կլինեն այն բոլոր խոչընդոտները, որ առկա
են հայ-քրդական հարաբերությունների ասպարեզում: Այսպես, օրինակ,
Գարեգին Սրվանձտյանցը 1869 թ. առաջարկում էր քուրդ ռազմական ա-
վագանուն կտրել ժողովրդից, իսկ ժողովրդին սովորեցնել նստակյաց
կյանքի: «Փշրելու է ասոնց ձեռքի մահացու նիզակը, փոխարենը արդա-
րավաստակ մաճը դնելու է անոնց ափի մեջ, կործանելու է այն սև-սև
վրանները, որոնցմով լեռն լեռ կշրջին գայլերու երամի պես և հաստատե-
լու է զիրենք գեղերու մեջ, վրաններու տակ, իջեցնելու է զանոնք այն ա-
մեհի նժույզներեն և եզ վարել տալու է»:⁷⁵

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ քրդաբնակ տար-
բեր վայրերում նույնիսկ հայ հոգևորականները հատուկ ուշադրություն
էին դարձնում այն քրդերի վրա, որոնք նոր-նոր անցել էին նստակեցու-
թյան, համբերատար կերպով նրանց սովորեցնում էին վարել հողը, օգտվել
գյուղատնտեսական գործիքներից, ցանել դաշտերը, հավաքել բերքը և
այլն:⁷⁶ Խրիմյան Հայրիկը ևս կապեր էր հաստատում քուրդ բեկերի և ա-
ղաների հետ, աշխատում էր նրանց համոզել, որ թողնեն վաչկատուն կեն-
ցաղը, հրաժարվեն սրից ու հրացանից և կապվեն հողի հետ: Նա խոստա-
նում էր քրդական գյուղերում դպրոցներ բաց անել, նրանց հայ ուսուցիչ-
ներ ուղարկել, ստեղծել քրդական այբուբեն, մի խոսքով քուրդ ժողովրդի
զարգացումը նոր հիմքերի վրա դնել: Քուրդ ազդեցիկ ցեղապետերին նա

բացատրում էր, որ հայ և քուրդ ժողովուրդները ունեն միևնույն շահը և միևնույն թշնամին՝ սուլթանական կառավարությունը, որ հայ-քրդական գործակցությունը երկուսի համար էլ կլինի ազատագրության երաշխիք:⁷⁷

Նա առաջարկում էր քրդական հասարակությունից անջատել, մեկուսացնել նրա իշխող վերնախավը, որով կազատագրվի նաև քուրդ աշխատավոր-առյալները, որը նույնպես ենթակա է «թռուռների» հարստահարություններին:⁷⁸ Խրիմյան Չայրիկը հավատացած էր, որ միայն այս ծևով կարելի է լուծել հայ-քրդական հարաբերությունների կնճիռը: Անտարակույս հայրենասեր հոգևորականի այս անկեղծ մղումները իրական հող չունեին և թուրքական իրականության պայմաններում լոկ անիրագործելի երազանքներ էին: Մ. Խրիմյանը հիանալի գիտակցում էր նաև, թե ինչպիսի դեր է խաղում սուլթանական կառավարությունը հայ-քրդական հարաբերությունների բնագավառում:

Իր «Քարենորոգմանց ծրագրում» նա քուրդ ժողովրդի հետամնացության և խավարի մեջ մնալու, ինչպես նաև հայերին հարստահարելու պատճառը փնտրում էր թուրքական իշխանության մեջ և այդ քաղաքականությանը ներկայացնում էր իր մեղադրականը: «...Ճշմարտութեամբ պետք է այս եզրակացութիւն հանենք, - գրում է նա, - թէ քիւրտերուն բազմադիմի հարստահարութիւնը՝ իրենց վայրենութենէն ու զօրութենէն չէ այնչափ, որչափ տեղական կառավարութեանց անփոյթ եւ ապիկար դութենէն, եւ մերթ եւս նոցա նպատակաւոր թոյլտուութենէն, որպէս զի առիթ ունենան մեծամեծ կաշառակերութեամբ, այսինքն, ոչխարով, իւղով, պանրով, նժոյգ ձիերով, գեղեցիկ գորգերով եւ ոսկւով իսկ տուժել զքիւրտն»: «Շատ ճիշտ է, - շարունակում է նա, - թէ որ այնպէս դատենք, թե քիւրտերը կերպով մը շարժական և շահատու կալուածներ եղած են տեղական կառավարութեան ձեռքը»: ⁷⁹ Այնուհետև. «Քիւրտերու ազատ եւ անսանձ կեանքը տեղական կառավարութեանց համար շահաբերութեան մշտնջենաւոր կալուած մըն է եւ նոցա յոռի նպատակն այն է, որ այդ կալուածը յարատեւ է...»:⁸⁰

Արևմտահայ գործիչներ Մ. Մամուրյանը, Գ. Սվաճյանը, Գ. Զիլինկիրյանը և շատ ու շատ ուրիշներ գտնում էին, որ անհրաժեշտ է քուրդ ժողովրդին պարզաբանել նրա նկատմամբ թուրքական կառավարության կեղծ սիրաշահումների իսկական պատճառները⁸¹ և նախապատրաստել նրան հայ ժողովրդի հետ համատեղ թուրքական ատելի լծի դեմ հանդես գալու համար: Միևնույն ժամանակ գաղտնի խորհրդակցություններում հատ ու կենտ մարդիկ խոսում էին զենք ունենալու և անձամբ ինքնապաշտպանություն կազմակերպելու մասին: Այդ գաղափարի կողմնակիցների վրա չափազանց մեծ ազդեցություն էին թողել հայ ժողովրդի ազա-

տագրական շարժումներն ու զինված ելույթները Ձեյթունում, Վանում, Մուշում, Չարսանջակում և այլն:

Օսմանյան կայսրության հսկայական տարածքներում ամենուրեք ցրված հայությանը Մ. Խրիմյանը կոչ էր անում վերադառնալ Արևմտյան Չայաստան և զենք վերցնել իրենց ինչքն ու պատիվը պաշտպանելու համար:⁸² Այդ նույն գաղափարը նա զարգացնում էր նաև Վանի շուկայի իրկիզման առթիվ գրված «Վանգոյժ»-ում: «Չգիտենք քո մեղքն ի՞նչ է, ո՛վ անզեն և հլու հնազանդ ժողովուրդ Վանայ, դու ոչ զենք ունէիր և ոչ երբեք ըմբոստացար տիրող գաւազանին դէմ. քո հաւատարմութեան չափ ինձ հարիւր տարի է և քո զենք միայն խոփն ու արօր, արւեստ և վաճառականութիւն քո զբաղումն էր, և միթե՞ այս եղև հատուցումն քո հաւատարիմ հպատակութեան: Թուրքեստանի վերանորոգ սահմանադրութեան զոհ մի պէտք էր և այն փառաւոր զոհ դու մատուցիր, ժողովուրդ հայոց...»:

Մ. Խրիմյանը «Վանգոյժ»-ում ըմբոստացման հրավեր էր կարդում արևմտահայերին: Արտահայտելով արևմտահայ մտավորականության արմատական տրամադրություններ ունեցող մասի զգացումները, Սկրտիչ Խրիմյանին նվիրված իր բանաստեղծության մեջ դեռևս պատանի Պետրոս Դուրյանը գրում էր.

Մեր պատիվը ու քուրդը կուզենք
և կամ նրա զենքին դեմ զենք:⁸³

Իսկ Ռափայել Պատկանյանը «Ղարիբ մշեցին» բանաստեղծության մեջ ուղղակի բացականչում է.

Վարագա Սուրբ խաչեն բերել եմ ձեզ լուր,
հղճացե՛ք հայ ազգիս, տվե՛ք մեկ մեկ թուր:⁸⁴

Ազգային-ազատագրական գաղափարների քարոզով հանդես եկան արևելահայ ու արևմտահայ մտավորականության համարյա բոլոր լավագույն ներկայացուցիչները՝ Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Ս. Շահագիզը, Պ. Դուրյանը, Գ. Պարոնյանը, Մ. Պեշկիթաշյանը, Ռ. Պատկանյանը, Բաֆֆին և ուրիշներ: Ձենքի պահանջին արձագանքեցին նաև արևմտահայ ազատական հայացքների տեր մի շարք գործիչներ, որոնք սովորաբար չափազանց զգույշ էին իրենց արտահայտություններում: Այսպես, 1863 թ. Գոռնից Խրիմյան Չայրիկին ուղարկած նամակում հայ հասարակական-քաղաքական գործիչ Գաբրիել Նորատունկյանը (1852-1936) գրում էր. «Չայաստանի սոսկալի ողբերգության տեսարանների առաջն առնելու համար պետք է մի մասնաժողով կազմել ազգի արտաքին գործերը վարելու համար և տևական հեղափոխական գործունեությամբ աշխատել Չայաստանի շղթաները խորտակել»:⁸⁵ Գ. Նորատունկյանը նաև գտնում էր, որ պետք չէ քրդերի դեմ անընդհատ բողոքել: Նրա կարծիքով անհրաժեշտ էր նրանց հետ համաձայնության եզրեր գտնել: Գաբր-

զին Սրվանձոտյանին գրած նամակում նա շեշտում է. «...այն համոզումը ունիմ, որ լավ քաղաքականություն չենք ըլլար անդադար քրթաց գանգատելով ու զմեզ շարունակ անոնց հարաբերութենեն հեռու պահելով: Քրթերը մարմին մը կը կազմեն ցեղով և զենքով, հայքս ալ ազգով և լոյսով. պետք է որ իրարու հետ բաղխելե առաջ իմաստասիրենք այն օգուտները, որ կարելի է քաղել նոցա հաղորդակցութենեն ու միաբանութենեն: Եվրոպական իրավագիտությունը կը պատվե նախ զենք ի ձեռին ունեցողը, ապա լուսավորյալը»:⁸⁶

Գաբրիել Նորատունկյանը Գ. Սրվանձոտյանին նույնիսկ առաջարկում էր այդ իմաստով գործիչ դառնալ ամբողջ քրդության մեջ: «Հայոց համար ամենակարևոր խնդիր կնկատեմ քուրդերու հետ ծանոթանալու և հարաբերություն հաստատելու միջոցները գտնելն և մտերմաբար ձեր մասնավոր ուշադրության ենթարկելով այս գաղափարս, կհարցնեմ, թե արդյոք լավագույն և օգտակար չըլլար, թե սուրբ հայրիկ զձեզ յուր կողմն անոնց մեջ դրկե մի անգամ առաքելության և ձեր աշխատությանը մի տեղեկագիր դուրս ելնե քրդաց վիճակագրության», - գրում էր Գ. Նորատունկյանը:⁸⁷

Հետագայում, սակայն, օսմանյան կառավարության մեջ զբաղեցնելով բարձր պետական պաշտոններ (1908 թ. առևտրի նախարար, 1912-1913 թթ. արտաքին գործերի նախարար) Գ. Նորատունկյանը վերանայման ենթարկեց իր մի շարք տեսակետները և Բալկանյան պատերազմների ժամանակ նույնիսկ դեմ արտահայտվեց Հայկական հարցի արժարժանը:

Ընդհանրապես արևմտահայ վերնախավի մեծամասնությունը, հատկապես Պոլսահայ երևելիները, հիմնովին դեմ էին հեղափոխական շարժումներին: «Ապստամբության, ըմբոստության ոգին օտար էր փափուկ կյանք վարող մարդկանց, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ աղերսագրերի, խնդրագրերի տակտիկային և դրա մեջ էին տեսնում փրկության ուղին»:⁸⁸

Սակայն բուն երկրում ապրող հայությունը, որի վրա էր ծանրացած օսմանյան կառավարության և քրդական ավատատերերի ծանր ու ստորացուցիչ լուծը, հենց պայքարի մեջ էր տեսնում իր փրկության ուղին: Դա դժվարին և մահացու վտանգներով լի մի ճանապարհ էր, սակայն գտնվում էին խելահեղ խիզախության տեր մարդիկ, որոնք դիմում էին դրան, մահը գերադասելով անպատիվ ու անհեռանկար կյանքից: 1872 թ. վանում հիմնվեց «Միություն ի փրկություն» առաջին գաղտնի կազմակերպությունը, որը որպես պայքարի միջոց ընտրեց զինված ապստամբությունը: Այս բոլորն անշուշտ չէր կարող վրիպել սուլթանական կառավարության կասկածամիտ հայացքից: Հայերի ըմբոստացման տրամադրու-

յուններին թուրքական իշխանությունները պատասխանեցին կամ ուղղակի հետապնդումներով և կամ բազմիցս փորձված իրենց դավադրական զինանոցի հիմնական զենքով՝ քրդական վերնախավի կրքերը հայության դեմ էլ ավելի բորբոքելով:

Այսպիսով, XIX դարի 60-ական թվականների վերջից և 70-ական թվականների սկզբից «հակահայկականությունն» ավելի ու ավելի որոշակիորեն դառնում էր սուլթանական կառավարության կողմից իրականացվող պետական քաղաքականություն:⁸⁹ Այդ մտայնությունը գնալով դուրս էր գալիս մայրաքաղաքի կառավարական շրջանակներից և համակում էր նահանգային իշխանությունների մեծ թվով ներկայացուցիչների, որոնք հայության դուրս մղումը Արևելյան Անատոլիայից սկսել էին դիտել որպես հայկական հարցի լուծման միակ և այլընտրանք չունեցող միջոց: Արտահայտելով մեծ տրամադրությունները, Սեբաստիայի (Սըվաս) փոխկուսակալը իր անկեղծության հազվագյուտ պահերից մեկում բերանից թոցրել էր. «Բնիկները (հայերը: - Վ. Բ.) ուզեն կենան, չուզեն դժոխքին տակը երթան»:⁹⁰

Նման շիկացած մթնոլորտում 1870 թվականից սկսած Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում տեղի ունեցան հայ-քրդական մի շարք ընդհարումներ, որոնց պատճառները այլևս առաջվա պես սոցիալական բնույթ չէին կրում և միանգամայն ակնհայտ էր դառնում, որ այդ հարաբերությունների մեջ սկսում է տիրապետող դառնալ քաղաքական մոտիվը, որն անկասկած արդյունք էր օսմանյան կառավարության հակահայ գրգռիչ քաղաքականության:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր Ո Ր Գ

ՔՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԲԵՈՒԽԵՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՄԻՆԶԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

XIX դարի 70-ական թվականների սկզբին Օսմանյան կայսրությունում կրկին ծայր առավ սուր տնտեսական ճգնաժամ: Թանգիմաթի մակերեսային բարեփոխումներն ի վիճակի չէղան հաղթահարելու Օսմանյան կայսրության կիսաավատական, իսկ առանձին տեղերում նաև ավատական կարգերը և ճանապարհի հարթելու երկրի արտադրողական ուժերի զարգացման համար: Կառավարությունը շարունակում էր այժ փակել նահանգներում գործող նոր բյուրոկրատիայի հրեշավոր չարաշահումների և կամայականությունների նկատմամբ, հույս ունենալով այդ ճանապարհով միջոցներ հայթայթել դատարկ գանձարանի համար:

Այդ պայմաններում 1865 թ. Ստամբուլում ստեղծվեց «Նոր օսմանների ընկերություն» անունով մի գաղտնի քաղաքական կազմակերպություն, որն իր առջև նպատակ էր դրել տապալել մեծ վեզիր Ալի փաշայի կառավարությունը, ապահովել Օսմանյան կայսրության տնտեսական առաջընթացը, և կայսրությունը վերածել սահմանադրական միապետության: ¹ «Նոր օսմանները» իրենց դրսևորեցին որպես կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների անհաշտ հակառակորդներ, ձգտելով այդ պայքարին հակադրել «օսմանիզմի» մեծապետական գաղափարը:

«Նոր օսմանները» առաջ քաշեցին դրույթ այն մասին, որ թանգիմաթի բարեփոխումների հետևանքով մահմեդականների իրավունքները իբր տուժել են, իսկ քրիստոնյաները ստացել են չափից ավելի մեծ առավելություններ: 1856 թ. Հաթթը-հումայունը նրանք անվանում էին «Ֆիրման քրիստոնյաների առավելությունների համար», այլ կերպ ասած նրանք գտնում էին, որ Թանգիմաթի շրջանում Բ. Դռան քաղաքականությունն ուղղված էր «քրիստոնյաներին բավարարելուն»: Դրա հետևանքով մահմեդականները իբր հայտնվել են «հարստահարված համայնքի» վիճակում: Ուստի «Նոր օսմանները» իրենց հայտարարեցին կայսրության մահմեդականների «ոտնահարված» իրավունքների պաշտպաններ: Նրանց աչքերում բարեփոխիչների առաջնորդներ Ալի փաշան և Ֆուադ փաշան իսլամի «դավաճաններ» էին, քանի որ նրանց կողմից 1856 թ. հրապարակված բարեփոխումների հրամանագիրը իբր մեծ իրավունքներ էր պարզևում քրիստոնյաներին:

Առհասարակ պետք է նշել, որ այդ տարիներին «Նոր օսմանների» վերաբերմունքը կայսրության այլադավան բնակչության նկատմամբ աչքի էր ընկնում ծայրահեղ անհանդուրժողականությամբ: Նրանք, օրինակ, վնասակար նորամուծություն էին համարում հայ-առաքելական և հույն-ուղղափառ միլլեթների համար ընդունված սահմանադրությունները: «Նոր օսմանների» գաղափարախոսներ Նամըք Քեմալը և Իբրահիմ Շինասին ամեն կերպ փառաբանում էին «իսկական օսմանցիների» ռազմաշունչ ոգին և նրանց տարած հաղթանակները «գյավուրների» նկատմամբ: Մուստաֆա Ֆազլը-փաշան իր գրություններում զարգացնում էր այն տեսակետը, որ այն «փառավոր ժամանակները», երբ «կայսրությունն ստեղծողները» օսմանները և նրանց ենթակա ժողովուրդները միմյանց հետ ապրում էին իբր «ներդաշնակության» պայմաններում, մնացել են հետևում: Ներկայումս քրիստոնյա ժողովուրդները դրսևորում են անհնազանդություն, ապստամբում են սուլթանի դեմ և այլն: Դրա պատճառը եվրոպական տերությունների կողմից սադրանքների հրահրումն է, ինչպես նաև կառավարության կողմից իր հպատակների վատ կառավարումը: Նման կարգի երկարաշունչ դատողությունները հիմք ծառայեցնելով, Ֆազլը-փաշան ըստ էության առաջարկում էր ոչնչացնել այն բոլոր արտոնությունները, որոնք մահմեդականների համեմատ իբր ունեին քրիստոնյաները: «Նոր օսմանների» կողմից մշակվեց և գաղափարական-քաղաքական եզրի տեսք ստացավ «օսմանյան ազգի» (millet-i osmani) և «օսմանյան հայրենասիրության» տեսությունը: Օսմանիզմը վերածվեց Օսմանյան կայսրությունում ազգային հարցը «լուծելու» գաղափարական-քաղաքական մի կոնցեպցիայի: Այդ ուսմունքը կայսրության բոլոր ժողովուրդներին, անկախ նրանց ազգությունից ու կրոնական պատկանելությունից, դիտում էր որպես մի միասնական ամբողջություն, միասնական ազգ: Դա նշանակում էր, որ կայսրությունում գոյություն ունի միայն մեկ ազգ՝ օսմանցիները, իսկ այդ ազգին համախմբող և ուղղություն տվող ուժը դա սուլթանական իշխանությունն է, տիրապետող տարրը՝ թուրքերը, պետության միասնական լեզուն թուրքերենը, իսկ օրենսդրությունը՝ շարիաթը:

Այսպիսով ժխտվում ու մերժվում էր ոչ թուրք ժողովուրդների ինքնիշխան (սուվերեն) գոյության իրավունքը: Օսմանիզմը նպատակ ուներ վերջին հաշվով թուրքականացնել Օսմանյան կայսրությունը և «խաղաղ» միջոցներով հարված հասցնել կայսրության ճնշված (քրիստոնյա) ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին և ի վերջո պահպանել ու հավերժացնել թուրքերի տիրապետությունը կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ:

Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած տնտեսական փլուզումը իր հետ բերեց նաև քաղաքական ճգնաժամ: Բալկաններում Բուսնիայում, Հերցեգովինայում, Բուլղարիայում և այլն բռնկեցին հուժկու ազգային-ազատագրական շարժումներ, որոնք միջազգային արծազանքներ ստացան, քանի որ շոշափում էին մեծ պետությունների շահերը:

Կայսրության համար առանձնապես սպառնալից էր Ռուսաստանի դիրքը, որն օգտագործելով 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի հետևանքով իր համար ստեղծված բարենպաստ միջազգային իրադրությունը, հայտարարեց, որ այսուհետև հրաժարվում է իրեն կաշկանդող 1856 թ. Փարիզի դաշնագրից և Սև ծովում վերականգնելու է իր ռազմական նավատորմը:

Կայսրությունում գոյություն ունեցող քաղաքական ճգնաժամն ի վերջո հանգեցրեց ներքին պայթյունի, որի հետևանքով 1876 թ. մայիսի 30-ին շեյխուլ-իսլամի ֆիրմանով սուլթան Աբդուլ Ազիզը գահընկեց արվեց, արժանանալով օսմանյան դինաստիայի բազմաթիվ միապետների ճակատագրին՝ սպանվեց:

Թեև «Նոր օսմանները» գահ բարձրացրին Մուրադ V-ին և տենդորեն փորձում էին բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով կայսրությունը դուրս բերել ճգնաժամից, սակայն իրադարձությունները զարգացան բացառիկ աննպաստ հունով, ընդունելով սպառնալից կերպարանք: Թուրքիայի և սլավոնական ժողովուրդների միջև թշնամական առճակատումը հասավ իր գագաթնակետին, իսկ Ռուսաստանը բարձրաձայն հայտարարում էր, որ ինքը չի կարող անտարբեր մնալ դավանակից և արյունակից սլավոն եղբայրների ճակատագրի նկատմամբ:

Ահա այս պայմաններում խելագար հայտարարված սուլթան Մուրադ V-ի փոխարեն գահ բարձրացավ նրա եղբայրը՝ Աբդուլ Համիդ II-ը: Չգտելով կանխել եվրոպական հսկողությունը բարեփոխումներն իրականացնելու հարցում, 1876 թ. դեկտեմբերի 11-ին (23-ին) հայտարարվեց սահմանադրության ընդունման մասին: Ազգերի իրավահավասարության մասին խոստումներն այդ սահմանադրության «հայր» հորջորջված Միդհատ փաշայի ենթադրությամբ ծառայելու էին որպես զրահ ռուսական սպառնալիքների դեմ:

Այդ սահմանադրությունը կայսրության բոլոր ժողովուրդներին հայտարարում էր օսմանցիներ և հատուկ կետ էր պարունակում այն մասին, որ երկրի տարածքում որևէ տեղ ապստամբության նշաններ դրսևորվելու դեպքում կառավարությունն իրավունք ունի ռազմական դրություն հայտարարելու:

Թեև սահմանադրության 17-րդ հոդվածը ազդարարում էր օսմանյան բոլոր հպատակների հավասարությունը օրենքի առջև, ինչպես նաև

ճանաչում էր նրանց իրավունքներն ու պարտականությունները, առանց նրանց կրոնական սկզբունքները ոտնահարելու,² սակայն իրականում սահմանադրության բուն ոգին այնպիսին էր, որ այն այնուամենայնիվ առաջնությունն ու գերակայությունը տալիս էր իսլամին: Իսկ 4-րդ հոդվածում ուղղակի նշվում էր, որ «սուլթանը որպես խալիֆ հանդիսանում է իսլամի պաշտպան», 11-րդ հոդվածն էլ ավելի էր որոշակիացնում այդ հարցը շեշտելով, որ «իսլամը դա պետության կրոնն է»:³ Հետևաբար սահմանադրության կողմից ոչ մահմեդականների իրավունքների և «կրոնական ազատության» սկզբունքների թղթային ճանաչումը իրականում ֆիկցիա էր: Նման հայտարարությունները, նույնիսկ անկեղծ ցանկության դեպքում, ի վիճակի չէին որևէ բան փոխելու այդ երկրում գոյություն ունեցող և դարերով արձատավորված իրավական ու քաղաքական համակարգի մեջ:

Հայ գործիչներից շատերի կարծիքով մեծապետական շովինիզմի և շարիաթի հիմքի վրա կառուցված այդ սահմանադրությունը XIX դարի Օսմանյան կայսրության պայմաններում անբնական ու կեղծ մի օրենք էր, որն ի վիճակի չէր գործնականորեն իրագործվելու, առավել ևս փոխելու իրերի վիճակը կայսրությունում: Այն եվրոպական դիվանագիտության դեմ սարքված մի խաղ էր, միևնույն ժամանակ մի ծուղակ երկրի այն տարրերի դեմ, որոնց միշտ խեթ հայացքով է նայել օսմանյան քաղաքականությունը: Նրանք գտնում էին, որ մասնավորապես հայ ժողովուրդը պետք է զգուշանա նրա պարտադրող փայփայանքներից:⁴

Կարծես ի հաստատումն այս նախազգուշացումների, սահմանադրության պաշտոնական հրապարակման հետ զրեթե միաժամանակ, 1876 թ. դեկտեմբերի սկզբներին, մի ահռելի հրդեհ հրո ճարակ դարձրեց Վանի ամբողջ շուկան, ոչնչացնելով տեղի հայության տնտեսական դիրքն ու հարստությունը: Ազգայնականության թույնով վարակված թուրքական նորահայտ բուրժուազիան գալիս էր հիշեցնելու իր գոյության մասին: Նա իր այդ արարքով, և առհասարակ արևմտահայերի իր իսկ հրահրած հարստահարությունների ալիքով, նպատակ ուներ տնտեսական քայքայման ենթարկել հայ ժողովրդին և հաղթահարել նրա թեև տակավին երիտասարդ, բայց և առողջ, կայուն նյութական հիմքերի վրա կանգնած և գործունեության մեծագույն ավյունով լի բուրժուազիայի մրցակցությունը:

Վանի հրդեհի հանցավորների անպատիժ մնալը անշուշտ քաջալերիչ էր Բիթլիսի, Մուշի, Մոտկանի և այլ վայրերի քրդական ցեղապետերի համար, որոնք ուժեղացրին իրենց թալանի գործը: Թուրքական կառավարությունը դա համարում էր Վանի «գործողության» եզրափակիչ ետապը:

Շուտով սահմանադրական թուրքիայի գազանային հաշվեհարդարի հերթական գոհերը լինելու էին բալկանյան ժողովուրդները, մասնավորապես Բոսնիայի, Գերցեգովինայի և Բուլղարիայի «ապստամբ» հայտարարված բնակչությունը:⁵

Ռուսաստանը որոշեց անհապաղ հանդես գալ իր «եղբայր-սլավոններին» պաշտպանելու համար և 1877 թ. ապրիլի 4-ին պատերազմ հայտարարեց թուրքիային:

Արևմտահայությունը լցվեց փրկության նոր հույսերով: Ռուսական դիվանագիտությունը, որին քաջ հայտնի էին հայ ժողովրդի տրամադրությունները, աշխատում էր բորբոքել այդ հույսերը, հայությանը ներշնչելով, որ հասել է փրկության ժամը և հզոր Ռուսաստանը կգա իրենց ազատելու ատելի օսմանյան լծից: Արևմտյան Հայաստանում ռուսական այս քարոզչությունը ուժ էր ստանում նաև սահմանի այն կողմից, ռուսահայ հրատարակություններից:

Մինչդեռ օսմանյան պետությունը, ինչպես Ռուսաստանի դեմ մղած իր նախորդ պատերազմների ժամանակ, առիթն օգտագործում էր կայսրության քրիստոնյա տարրի դեմ անվստահություն ու կասկածատություն սերմանելու, նրանց դավաճանության մեջ մեղադրելու համար: Մասնավորապես արևմտահայությունը դիտվում էր որպես Ռուսաստանի հետ դաշնակից տարր և նրա հետ վարվում էին ինչպես թշնամիների: Թուրքական բանակները ռազմական գործողություններ վարելուն զուգընթաց ավերիչ ասպատակություններ էին սփռում Արևմտյան Հայաստանում, միաժամանակ կայսրության մահմեդական բնակչության շրջանում հայերի նկատմամբ հրահրելով կրոնական ու ցեղային ատելություն:

Սուլթանական կառավարությունը մեծ հույսեր էր կապում պատերազմում քրդերի մասնակցության հետ: Պատերազմի նախօրյակին Բ. Դուռը արդեն բավական խոշոր հաջողություններ էր ձեռք բերել իր քրդական քաղաքականության բնագավառում: Նստակյաց քուրդ բնակչության զգալի մասը կառավարությանը վճարում էր հարկեր, հատկացնում զինակոչիկներ և այլն: Թեև կային դեռ ամբողջ շրջաններ, օրինակ, Հաքարիի, Դերսիմի, Գենջի, Սղեդդի, Մոսուլի և այլն, որտեղ բնակչությունը համարյա չէր ճանաչում քուրդերի իշխանությունը:⁶

Պատերազմը սկսվելուն պես սուլթանական կառավարությունը հատուկ կոչով դիմեց մահմեդական քրդերին, հորդորելով նրանց դիմել ջիհադի՝ (սրբազան պատերազմ) իսլամը անհավատներից պաշտպանելու համար: Արծազանքելով այդ կոչին, բազմաթիվ քրդական առաջնորդներ ջոկատներ կազմելով շարժվեցին դեպի Ալաշկերտ-Բայազետի ճակատը՝ օսմանյան բանակին միանալու համար: Նրանց թվում էին նաև ազդեցիկ աշիրեթապետեր ու կրոնական առաջնորդներ շեյխեր Օբեյրուլլան,

Սերեդլի Հանզան, Մոսուլ Սեհմեդը, Խիզանի շեյխ Ջալալեդդինը, Եփրատի շրջանի Շեյխ Նախշաբանդին, Սասունի շեյխ Դուդարին, Խալիֆե Ֆելմի Էֆենդին, Խիրուբալի Սեհմեդ աղան և ուրիշներ:⁷ Սրանց զինված խմբերը արևմտահայության համար դարձան ուղղակի պատուհաս: Իր հերթին կառավարությունը ամեն կերպ աշխատում էր բորբոքել քրդական զանգվածների կրոնական մոլեռանդությունը և աշիրեթների կողպուտի բնագիրը: Լայնորեն կիրառվում էր նաև ցեղային առաջնորդներին կաշառելու միջոցը:

Սակայն քուրդ վերնախավը՝ աշիրեթապետերը, շեյխերը, բեկերը և աղաները, արծազանքեց կառավարության «սրբազան պատերազմի» կոչին առաջնորդվելով ոչ միայն և ոչ այնքան մահմեդական համերաշխության կամ կրոնական մոլեռանդության զգացումներով, որքան նյութական շահեր հետապնդելով: Մահմեդական քուրդն իր պարտքն էր համարում կատարելու օսմանյան պետության կարգադրությունները, քանի որ «դրանց իրագործումն իրեն ևս լայն հնարավորություններ էր ընձեռում վերցնելու, հափշտակելու, թալանելու, ստանալու իր բաժինը»:⁸

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ օսմանյան իշխանությունները բռնի կերպով տեղահանում էին սահմանամերձ շրջանների հայ բնակչությանը դեպի Անատոլիայի խորքերը, որն ուղեկցվում էր տարագրվողների զանգվածային ոչնչացմամբ: Սակայն մեծ պետությունների առջև մաքուր ձեռքերով երևալու համար կառավարությունը ջանում էր հայերի նկատմամբ հալածանքները քողարկել նրանց տեղական մահմեդական բնակչության, հատկապես քրդերի, հալածանքներից պաշտպանելու պատրվակի ներքո: Օրինակ, թուրքական բանակի զորահրամանատար, մուշիր (մարշալ) Մուխտար փաշան, որը հայ բնակչության նկատմամբ գործադրվող վայրագությունների գլխավոր կազմակերպիչն էր, դրանց պատասխանատվությունը բացառապես բարդում էր քրդերի վրա, դրանով նպատակ ունենալով նաև սրել հայ-քրդական հարաբերությունները և նպաստել երկու հարևան ժողովուրդների փոխադարձ ոչնչացմանը:⁹

Թուրքական հրամանատարությունը հատկապես աշխատում էր քրդական ջոկատներն ուղղել հայկական այն գյուղերի դեմ, որոնք խանդավառությամբ էին դիմավորել ռուսական դրոշմը: Քրդական անկանոն հրոսակախմբերը միայն Բայազետի ու Ալաշկերտի գավառներում 30 հազար հայ բնակչություն կոտորեցին, միաժամանակ կողոպուտի մատնելով նրանց գյուղերը:¹⁰ «Քրդական այդ հրոսակների գործողությունները անարդյունք լինելով մեր բանակի նկատմամբ, - գրում էր պատերազմին մասնակից ռուս զինվորականներից մեկը, - միևնույն ժամանակ բուն թուրքիայի սահմաններում նրանք միանգամայն արդյունավետ էին հայ

բնակչության դեմ պայքարելու համար: Այդ հրոսակները ... իրենցից ներկայացնում էին ավազակների հսկայական խմբեր, որոնց համար առավել ձեռնտու գործողությունների օբյեկտ էր հանդիսանում հայ խաղաղ բնակչությունը»:¹¹

Հայդերանցի քրդերի առաջնորդ շեյխ Ջալալեդդինը բովանդակ Վասպուրական նահանգի, Բասենի և Բագրևանդի գավառների և Մշո դաշտի մեջ հազարավոր անգնե հայեր կոտորեց և թալանեց նրանց գյուղերը: Իր գազանային խժոժություններով աչքի ընկավ նաև արյունախում քյոռ Չյուսեին փաշան: Ընդ որում, նա կեղեքում և թալանում էր ոչ միայն հայ բնակչությանը, այլև ախոյան քրդական աշիրեթներին (ջալալցիներ, գիբթանցիներ, թորթուփցիներ և այլն):¹²

Ոչ բոլոր քրդերն էին, սակայն, որ արծազանքեցին սուլթանի «սրբազան պատերազմի» կոչին: Մի շարք անհնազանդ ցեղեր ոչ միայն հրաժարվեցին մասնակցել պատերազմին, այլև հարկեր մուծել: Ավելին, նրանք հարձակումներ էին կազմակերպում թուրքական ռազմական և վարչական մարմինների ու նրանց աստիճանավորների վրա: Օրինակ, թուրքական գործող բանակի թիկունքում ապստամբեց Դերսիմի ղզլբաշ բնակչությունը:¹³ Իշխանությունների համար այս ապստամբությունը ստացավ խիստ վտանգավոր բնույթ, մանավանդ որ շրջակա վայրերի հայ լեռնականները միացան ապստամբներին և դերսիմցիների հետ համատեղ կատաղի մարտեր սկսեցին թուրքական զորքերի դեմ:¹⁴

Դերսիմի անմատչելի լեռների վրա ստեղծված հայ և քուրդ այս զինակցությունը օսմանյան կառավարության համար դարձավ իսկական պատուհաս: Այն ճնշելու համար չորրորդ բանակի հրամանատար Դերվիշ փաշան հարկադրեց Բաբերդի, Երզնկայի, Կամախի, Ակնի և Արաբկիրի հայ բնակչությանը ստորագրել մի հանրագիր, թե իբր դերսիմցիները հարստահարում են տեղական քրիստոնյա բնակչությանը և որ նրանց զսպելու համար հայերը իրենց մասնակցությամբ պետք է աջակցեն կառավարական բանակին:

Օսմանյան իշխանությունների դեմ ըմբոստացած քրդերի հետ հայերի համագործակցության դեպքեր տեղի ունեցան նաև Վանի շրջանում: Իրենց այդ ըմբոստ վարքագծի համար նրանք ենթարկվեցին դաժան պատիժների, իսկ նրանց ղեկավար Ավոն թուրքական զինվորական իշխանությունների կողմից կախաղան բարձրացվեց:¹⁵

Երբ Մոսուլի վիլայեթի քրդերը ռազմաճակատ մեկնելու ճանապարհին անցնելով Վանի նահանգով, փորձեցին կողոպտել ու ավերել հայկական բնակավայրերը, տեղի քրդական ցեղերը եռանդուն կերպով պաշտպանեցին իրենց հարևան հայերին:¹⁶ Նման դեպքեր տեղի ունեցան նաև Կարսի և Բայազետի փաշալիքներում և մի շարք այլ վայրերում:

Սակայն նման օրինակները, ինչպես նաև հայ և քուրդ գյուղացիության հակակառավարական տարերային ելույթները լայն տարածում չգտան: Ուստի կառավարությանը հաջողվում էր հեշտությամբ ճնշել դրանք:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ միանգամայն ակնառու դարձավ, որ արևմտահայության շրջանում արդեն հասունացել են ազգային զգացումները: Ազատ ապրելու, մարդկային տարրական իրավունքներից օգտվելու, իր ազգային արժանապատվությունը պահպանելու և օսմանյան անագորույն լուծոթ թոթափելու ձգտումը համակել էր թե՛ քաղաքային և թե՛ գյուղական հայ բնակչության մեծամասնությանը: Անվիճելի իրողություն էր, որ Արևելյան ճգնաժամը ևս մեծապես խթանել էր հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը: Սոցիալական, կրոնական վայրենի հետապնդումներից ազատվելու, ազգային միավորման նպատակով կատարվող ճիգերը, և վերջապես պետականություն ստեղծելու ձգտումները թևակոխել էին մի նոր փուլ: Հայրենիքի գաղափարն սկսում էր դառնալ համազգային, ընդգրկելով ժողովրդի տարբեր դասակարգերին ու խավերին:¹⁷

Արևելահայերը ևս սկսել էին դրսևորել աճող հետաքրքրություն Արևմտյան Հայաստանի իրենց եղբայրների նկատմամբ: Ծայր էր առել «դեպի երկիր» շարժումը: Հայ մտավորականներից շատերը մեկնում էին Թուրքիա, որպեսզի մոտիկից շփվեն արևմտահայերի հետ և «օգտակար լինեն ազգին»: Բուն Արևմտյան Հայաստանում հասունանում էր թուրքական բռնապետությանը զինված դիմադրություն ցույց տալու գաղափարը: Լայն թափ էր ստանում ժողովրդական վրիժառուների հայդուկ-ֆիդայիների շարժումը: Ստեղծվում էին պայքարի ծրագրերով օժտված գաղտնի կազմակերպություններ:¹⁸

Անվիճելի իրողություն է, որ հայությանը համակած անկախության գաղափարը մղում էր ստանում նաև դրսից, եվրոպական պետությունների կողմից: «Անկախության գաղափարը,– նշում է Վ. Նավասարդյանը,– հայ ժողովրդի սեփականությունն էր դարձել, սակայն ոչ միայն իբրև ներքին պահանջ, այլ իբրև արտաքին թելադրանք: Ոչ միայն ինքը հայ ժողովուրդն է ձգտում անկախության իր ներքին ենթակայական մղումներով, այլև դրսի, արտաքին ուժերն առարկայորեն նրան մղում են դեպի այդ նպատակակայանը, որովհետև իրենք ձգտում են նրան»:¹⁹

Բնական է, որ այս պայմաններում քրդական ցեղապետերի խժոժությունների բոթը արևմտահայության կողմից ընկալվելու էր ոչ այն-

պես, ինչպես առաջներում: Այժմ դրանք ցնցելու էին ողջ հայությանը, դիպչելով նրա ազգային զգացումներին: 4. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը բողոքներ ներկայացրեց Բ. Դռանը, շեյխ-ուլ-խլամին և անձամբ սուլթան Աբդուլ Չամիդ II-ին, պահանջելով զսպել հայերի նկատմամբ բռնություններ գործադրող քուրդ ցեղապետերին, աշիրեթապետերին և այլն:

Խոստումները սպասվածից ավելի շոյալ էին: Նույնիսկ մեծ վեզիր Միդհատ փաշան խոստացավ մի քանի նահանգներում հայ կուսակալներ (վալիներ) նշանակել, որպեսզի վերացվեն հայերի «երջանկության խոչընդոտները»:²⁰ Իսկ սուլթանը Ելտզ Քյոչքում ընդունելով հայոց պատրիարքին, ասաց. «Ես, որ մրջյունի մը վրա կոխել կը խղճամ, այսչափ արյունահեղություններ տեսնելուս հույժ կը ցավիմ. բայց աստված գիտե, որ այս պատերազմին համար ես չեմ պատասխանատու»: Այնուհետև նա պատրիարքին պարզատրեց «Օսմանիե» առաջին աստիճանի շքանշանով և «դրանով ծածկեց շեյխ Ջալալեդդինի ու մյուս ջարդարարների գոհերի գերեզմանը»:²¹

Մինչ Կոստանդնուպոլսի հայ երեսփոխանները և ազգային մյուս գործիչները պատրաստվում էին շնորհակալության ուղերձ ներկայացնելու սուլթանին իր «հայասիրական» զգացումների համար, Մկրտիչ Խրիմյանը հայտարարեց. «Ոչխարներու ոսկորներեն մանյակ շինեցին և հովվի վին վիզեն կախեցին», միաժամանակ ավելացնելով, որ «թեպետ և քյուրտ շեյխերն էին, որ իրենց ցեղը մղեցին արյան ու ավարի, բայց պետության նենգամիտ քաղաքականությունն էր, որ սարքեց ոճիրը: Քյուրտը... համակերպեցավ պետական կարգախոսին, վասն զի իր ցեղային բնազդները պիտի գոհացուն գտնեին այդ կերպով»:²²

Սուլթանը և օսմանյան կառավարող վերնախավը անշուշտ գիտակցում էին, որ Բալկաններում ազգային-ազատագրական շարժումների հետևանքով կայսրության կազմում եվրոպական թուրքիայի մնալու հարցը դրվում է մեծ հարցականի տակ: Դա ստիպում էր կառավարությանը կայսրության ապագան փնտրել Ասիայում: Հիրավի, սուլթան Աբդուլ Չամիդ II-ի քաղաքականության անկյունաքարը կարելի է համարել Օսմանյան կայսրության ասիական տիրապետությունների պահպանումը: Հանդգնվելով, որ վաղ թե ուշ արևմուտքում իրենք կորցնելու են Բալկանները, թուրքական կառավարող շրջանները գիտակցեցին, որ իրենց վերջին ապաստանը լինելու է Անատոլիան: Ստամբուլում միաժամանակ հասկանում էին, որ ասիական թուրքիայում քաղաքականապես առավել հասունացած ժողովուրդը հայերն են, որոնք սկսել էին բացահայտ ձևով դրսևորել ինքնուրույնության ձգտումներ: Միաժամանակ այդ ժողովուրդը երկրի արևելքում առավել կեղծված, իրավազուրկ և սոցիալական ու

ազգային ճնշման ենթակա տարրն էր, որի ծոցից ծնվել էին ազգային-ազատագրական շարժումը ղեկավարելու ընդունակ մեծաթիվ գործիչներ:

Վերջին հաշվով Ստամբուլի համար անցանկալի ու վտանգավոր էր նաև Օսմանյան կայսրությունում հայ բուրժուազիայի՝ դրամատեր չելեպիների, միջազգային ու ներքին առևտրի մեջ առաջատար դիրքեր ունեցող առևտրական խավի, արդյունաբերողների և առհասարակ ամեն տեսակի գործարար մարդկանց աճը և նրա տնտեսական դիրքերի անշեղ ամրապնդումը: «Եվրոպայի և Պարսկաստանի հետ ողջ ընդարձակ ամրապնդումը և Քրդստանի (իմա՝ Արևմտյան Հայաստանի: - Վ. Բ.) համարյա առևտուրը և արդյունաբերությունը վաղուց ի վեր գտնվում են քաղաքաբնակ հայերի ձեռքում, - նշում էր ռուս դիտորդ Ա. Մ. Կոլյուբակինը: - Այդ բնագավառում նրանք մրցակիցներ չունեն ... Սակայն հարուստ հայերը չէին բավարարվում առևտրով և արդյունաբերությամբ, այլ մշտապես ձգտում էին ձեռք բերել խոշոր հողային սեփականություն, իրենց ձեռքը վերցնել երկրի տնտեսության մնացած, էլ ավելի կարևոր բնագավառները՝ հողագործությունն ու անասնապահությունը: Այդ ճանապարհին նրանք անմիջականորեն բախվում էին մահմեդական բնակչության ամենակենսական շահերի հետ, այդ իսկ պատճառով բնական է, որ հանդիպում էին որոշ հակահարվածի վերջինիս, իսկ երբեմն նաև վարչության կողմից»:²³

Թուրքերի համար չէր կարող գաղտնիք լինել նաև այն հանգամանքը, որ հայ բուրժուազիան հույսեր է փայփայում, որ ժամանակի ընթացքում, զարգացման բնականոն ճանապարհով, կամ մեծ պետությունների օգնությամբ, իրեն կհաջողվի տիրանալ իր հայրենի բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի առևտրի շուկային:²⁴

Ոչ մեկի համար նաև գաղտնիք չէր, որ հայ ժողովուրդը կենսունակությամբ օժտված, դինամիկ, միշտ դեպի նորը և առաջավորը ձգտող, մտավոր-կրթական մեծ ներուժ ունեցող ժողովուրդ էր: Արևմտյան Հայաստան այցելած Ֆր. Գրինը նշում էր, որ հայերը «սիրում են իրենց հայրենիքը և կոչված են աչքի ընկնող դեր խաղալու Արևմտյան Ասիայի բարոյական և նյութական վերածնության գործում»:²⁵

Թուրքական տիրող շրջանների մղձավանջն էր նաև արևմտահայության ռուսասիրական զգացումների վերելքը: Ռուսաստանի հետ բոլոր մախրող պատերազմների ժամանակ արևմտահայերը տեղին և անտեղի միշտ էլ խաչով էին դիմավորել ռուսական զորքերին, կանխավ գիտակցելով դրա հետևանքների մասին:

Սուլթանական կառավարության համար չէր կարող մտահոգիչ գործոն չլինել նաև այն իրողությունը, որ չնայած իր գործադրած հետևողական ու եռանդուն ջանքերին (հայ բնակչության տեղահանությունները

մեկ նահանգից մյուսը, նրան ծուլելու, դավանափոխ անելու, օսմանցի հայտարարելու և թուրքացնելու բազում փորձերը, հայերի ազգային ոգու ոչնչացման ուղղությամբ մտահղացած դիվային ծրագրերը, Արևմտյան Հայաստանի էթնիկական պատկերը փոխելու ուղղությամբ կյանքի կոչված քայլերը և այլն), հայկական նահանգները շարունակում էին պահել իրենց ազգային դեմքը և ունենալ հայ բնակչության մեծամասնությունը:²⁶

Այս բոլորից հետևող եզրակացությունը. Ստամբուլի համար, կարող էր լինել մեկը, կայսրության ասիական տիրապետություններին հենց այս ժողովրդից էլ պետք էր վտանգ սպասել: Այսպիսով, Հայկական հարցը դեռևս մինչև նրա միջազգային դիվանագիտության խնդիր դառնալը, իր ամբողջ հասակով հառնում էր թուրքական պետականության առջև, որը կանխորոշելու էր նաև այն խնդիրը, թե վերջին հաշվով Փոքր Ասիայում թուրքերը ունենա պագաթ թե ոչ: Իրավացի է Ս. Քիչմիչևը, երբ գրում է, որ թուրքերը «իրենց ասիական տիրույթների պաշտպանության համար չէին խնայում ոչ դրամ և ոչ այլ միջոցներ»:²⁷ Սա անշուշտ նշանակում է, որ Ստամբուլում եկել էին այն համոզման, որ Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության կազմում պահելու հարցը ներքին քաղաքականության ամենահարատապ ու կարևոր խնդիրներից մեկն է:

Ինչպիսի՞ լուծում կարելի էր տալ այդ կնճռին: Թուրքական կառավարող վերնախավի կարծիքով քրդերը այն ուժն էին, որոնք կարող էին օգնել կառավարությանը Արևմտյան Հայաստանը կայսրության կազմում պահելու համար: Նույնիսկ Բ. Դռան քաղաքական խաղերի նրբությունները պարզորոշ կերպով չգիտակցող քուրդ ցեղապետ-աշիրեթապետերը հիանալի գիտակցում էին, որ «տաճիկ կառավարությունը եթե քուրդերուն երես է տված, պարզ այն պատճառով, որ դեռևս չի փակված հաշիվները հայերու հետ»:²⁸

Հետևաբար հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանքի բորբոքումը այսուհետև դառնալու էր օսմանյան պետության ասիական քաղաքականության հիմնաքարը: Դա նաև մի միջոց էր, որի օգնությամբ կարելի էր ուժասպառ անել նաև քրդերին և կանխել նրանց կողմից գալիք վտանգները, առավել ևս, որ թուրք քաղաքական գործիչներից շատերի մոտ համոզված էր դարձել այն մտայնությունը, որ «հայ-քրդական դաշնակցությունը կարող է իրենցից խլել Ասիան»:²⁹

Իր մասշտաբներով ու ընդգրկման ծավալով այդ վիթխարի ծրագիրը իրագործելու համար թուրքական իշխանությունները և քարոզչական մեքենան լծվեցին բուռն գործունեության: Նրանք աշխատում էին համոզել քրդերին, որ հայերը նրանց թշնամիներն են, որովհետև ցանկանում են եվրոպական տերությունների օգնությամբ ինքնուրույն պետություն ստեղծել, Բրդստանը դարձնել Հայաստան և քրդերին իրենց ենթար-

կել, որ «երեկվա ռայան ցանկանում է երկրի տերը դառնալ և ազատ քրդերին ռայա դարձնել» և այլն:³⁰ Աշխատում էին քրդերին ներշնչել նաև, որ եթե Ռուսաստանը տիրի հայկական գավառներին, քրիստոնյա հայությունը կստանա առաջնություն և իր կամքը կթելադրի քրդերին:³¹ Երկու հարևան ժողովուրդների միջև անհաշտատեություն և հակամարտություններ բորբոքելու գործուն ձևերից էր նաև հողային հարցի սրումը, որը գնալով ընդունում էր քաղաքական բնույթ, ինչպես նաև կրոնական հակասությունների բորբոքումը: «Կրոնական երկպառակություններին ուժ տալը, - գրում է Բաֆֆին, - և նրանց միջոցով... զանազան ցեղերի մեջ անմիաբանություն և անհաշտություն պահպանելը՝ դա մի ժառանգական քաղաքագիտություն է, որ սեփականել է իրան մոնգոլական Թուրքիան Բյուզանդիայի գահի հետ»:³²

Պանիսլամիզմի գաղափարախոսությունն իրենց գեները դարձրած սուլթանական կառավարող շրջանները սուլթան-խալիֆի և շեյխ-ուլ-խլամի գլխավորությամբ քրդերի շրջանում ծավալեցին ուժգին կրոնական քարոզչություն, նրանց ներշնչելով կրոնական մոլեռանդության ու այլամերժության գաղափարներ:

Ստամբուլում մշակված այս քաղաքականության հետևանքը հանդիսացավ այն, որ Ալաշկերտի, Բայազետի, Վասպուրականի, Մուշի, Էրզրումի և մի շարք այլ շրջաններում սկսվեցին քրդական ցեղապետերի զինված ջոկատների կողմից կազմակերպված հայ բնակչության մասնակի ջարդեր: Այդ վայրերի հայությունը բռնի ուժով տեղահանվում էր, իսկ դատարկված շրջանները բնակեցվում էին քրդական ցեղերով: Բայազետի և Ալաշկերտի հայության մի մասը ստիպված եղավ գաղթել Իրան և բնակություն հաստատել Մակուի խանությունում և Ատրպատականի տարբեր վայրերում: Արևմտյան Հայաստանում ջարդերի ալիքը աստիճանաբար ընդունեց լայն թափ: 4. Պոլսի հայկական մամուլում տպագրվեցին նյութեր, որտեղ խոսվում էր այդ ջարդերին թուրքական նահանգական պաշտոնյաների մասնակցության ու մեղսակցության մասին:³³

Ելույթ ունենալով Օսմանյան պառլամենտի նիստերից մեկում, Կարնո երեսփոխան Համազասպ Պալլարյանը անդրադառնում է քրդական հարցին: Նա բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, թե ինչպես աշիրեթապետերը անպատիժ բռնություններ ու կամայականություններ են թույլ տալիս հայերի նկատմամբ, իսկ վալիներից ու մյուս պետական պաշտոնյաներից շատերը գործակցում են քրդերի հետ: «Երբ կը հարցնեի կուսակալներուն, - նշում է Պալլարյանը, - թե ինչու քուրտերը չեն պատժվիր, որոնց համար երկու վաշտ զորք բավական է, և այսպես անպատիժ թույլ կը տրվի որ շարունակեն իրենց չարագործությունները, ինձի կը պատասխանեին, թե այս գործին մեջ «հիքմեթի հյուքումեթ» կա (պետական

գաղտնիք): Վերջին խելամուտ եղա, թե ի՞նչ է եղեր այդ պետական գաղտնիք ըսածնին. այդ հիքմեթը սա է եղեր, թե կառավարությունն անոր համար այդ վիճակին մեջ կպահե եղեր քյուրտերը, որ եթե հայերը Հայաստանի մեջ ապստամբական շարժում մ'ընեն, քյուրտերը զանոնք զսպեն, և մեկ մ'ալ, որ քյուրտերը, երբ պատերազմ բացվի Ռուսիո դեմ, օսմանյան բանակին իբրև կամավոր զորք օգնություն պիտի ընեն եղեր...»: ³⁴

Պատերազմի ընթացքում թուրքահայությունը հավատարմորեն կատարում էր իր պարտքը օսմանյան պետության հանդեպ: 20-30 հազար մարդիկ կառավարության կողմից օգտագործվում էին բնդանոթներն ու ռազմամթերքը հեռու վայրեր փոխադրելու և առհասարակ ամենածանր աշխատանքներ կատարելու համար: Կառավարությունը և տեղական իշխանությունները կողոպտում էին հայերին, նրանցից վերցնում ամեն ինչ պատերազմական ծախսերը հոգալու համար: «Ոչ մի ըմբոստացում, ոչ մի թրքահայ կամավոր ռուսական բանակի մեջ, ոչ մի կամավորական շարժում կովկասահայոց մեջ և այնուամենայնիվ թուրքաց Հայաստանը ենթարկվեցավ վիթխարի ավերածության, ջարդ, թալան, բռնություններ թուրք անկամոն զորքերու և քյուրտերու ձեռքով, հրդեհված հարյուրավոր գյուղեր, սրբապղծված վանքեր ու եկեղեցիներ, անիշխանություն, ահ ու սարսափ, խուճապ ու գաղթ ... Ամբողջ գավառներ դատարկված և զանգվածային գրոհի դեպի ռուսական սահմանը, ուր տասնյակ հազարավոր գաղթականներուն կը սպասեր անխուսափելի սովի և համաճարակի հիվանդություններու պատուհասը»։ ³⁵

1878 թ. «սահմանամերձ վայրերի հայ ազգաբնակչությունը քվեց երկրի խորքերը և դատապարտվեց կործանման սովից ու ճակատագրի քնահաճույքից: 1878 թ. մի քանի ամսվա ընթացքում բանակը հինգ անգամ անցավ Ալաշկերտի, Բայազետի և Բասենի մերձավոր շրջաններով: «Կողոպտում և ամայացնում էին ոչ միայն թուրքական, այլ նաև ռուսական զորքերը: Ջորջերի նահանգներին ու հարձակումներին հետևում էին քրդական հրոսակախմբերը, ինչպես քաղցած ու կատաղած շնագայլեր՝ կողոպտուտներով ու գովուներով կերակուր հայթայթելով իրենց»։ ³⁶ գրում է Նիկողայոս Ադոնցը: «Հայահալած այդ քաղաքականությունը, — շարունակում է անվանի պատմաբանը, — որը մոլեգնում էր վերջին կես դարի ընթացքում, Հայաստանն ավելի շատ ավերեց, քան նույնիսկ ավազակային ցեղերի դարավոր տիրապետությունը»։ ³⁷

Բռնատիրական վարչակարգը ամրապնդելու և ազատության ձգտող ժողովուրդների շարժումները խեղդելու նպատակով սուլթան Աբդուլ Համիդը 1878 թ. փետրվարի 26-ին ցրեց օսմանյան խորհրդարանը և արգելեց սահմանադրությունը, հայտարարելով. «Ես սխալած եմ իմ հորս՝ Ապտիլ Մեծիտի նմանիլ ուզելով, որ կը ցանկար բարեկարգել՝ համոզե-

լով և ազատական հաստատություններ մտցնելով: Ուստի ես պիտի հետեւիմ իմ պապի՝ սուլթան Մահմուտի օրինակին: Ես ալ անոր նման կը տեսնեմ, որ աստուծոյ ինձ յանձնած ժողովուրդները միայն բիրտ ոյժի միջոցով կարելի է քալեցնել»։ ³⁸

Միդհատյան սահմանադրության արգելումից հետո անմիջապես վերացվեցին նաև հայերին տրված աննշան «իրավունքները»: Արդարև, հայ ժողովուրդը հայտնվեց անդունդ գահավիժող մարդու վիճակում:

Պատերազմում Ռուսաստանի հաղթանակը և 1878 թ. մարտի 3-ին ստորագրված Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը նոր հույսեր արթնացրեց արևմտահայության մեջ: Այդ հոդվածում շոշափվում էր նաև քրդերի հարստահարություններից արևմտահայերի անվտանգությունը ապահովելու խնդիրը: Հոդվածը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրաված Հայաստանի՝ թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից»։ ³⁹

Չնայած իր վրա վերցրած պայմանագրային այս պարտավորություններին, սուլթանական կառավարությունը ոչ միայն ոչինչ չարեց կանխելու հայերի նկատմամբ գործադրվող հարստահարություններն ու բռնությունները, այլև ավելի ուժգին սկսեց հրահրել դրանք: Ավելին, Հայկական հարցի վերաբերյալ 16-րդ հոդվածը էլ ավելի ուժեղացրեց օսմանյան կառավարող շրջանների համոզմունքն այն մասին, որ այդ հարցը թաղելու և հայ ժողովրդի ազատագրական հույսերը վերջնականապես խորտակելու համար անհրաժեշտ է վճռականորեն շեշտը դնել կայսրության քուրդ տարի կողմից հայերին հակակշիռ ուժ ստեղծելու քաղաքականության վրա: Պատահական չէ, որ սուլթանը և Բ.Դուռը համոզում էին Ներսես պատրիարքին դիմել Եվրոպա և բողոքել ոչ թե օսմանյան կառավարության, այլ քրդերի դեմ: ⁴⁰ «Թուրքական կառավարությունը, — գրում է Կարո Սասունին, — ուղղակի և անուղղակի թելադրանքներ ըրավ հայոց պատրիարքարանին, թե ծուռ աչքով պիտի չնայի հայերուն, եթե պատգամավորություն մը ղրկեն Պերլինի վեհաժողովին՝ բարենորոգումներու և ապահովության հարցը արծարծելու ընդդեմ քյուրտերուն»։ ⁴¹ Այդ ճարպիկ քայլով սուլթանը աշխատում էր էլ ավելի սրել հայ-քրդական թշնամանքը, միաժամանակ նպատակ ունենալով եվրոպական պետություններին համոզել, որ Հայաստանի անապահովության և այնտեղ տեղի ունեցող «ան-

կարգությունների ու խռովությունների» միակ դրոպապատճառը քրդերն են և ոչ թե թուրքական իշխանությունները:

Անգլիան և Ավստրո-Յունգարիան դժգոհությամբ ընդունեցին Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, համարելով, որ «եվրոպական կոնցերտի» այդ երկու առաջատար պետությունները դուրս են մնում պայմանագրի շրջանակներից: Նրանք այն դիտեցին որպես Ռուսաստանի նոր սադրանքը Թուրքիայի դեմ: Այդ պայմանագրի տեքստին ժանոթանալուց հետո Անգլիայի վարչապետ Ղիզրայելին (լորդ Բիքոնսֆիլդ) բացականչել էր, որ այն Թուրքիան ամբողջապես վերածում է Ռուսաստանից կախված երկրի: Լոնդոնը և Վիեննան ստանալով եվրոպական մյուս պետությունների համաձայնությունը, պահանջեցին Սան-Ստեֆանոյի պրելիմինար (նախնական) պայմանագիրը քննարկել միջազգային վեհաժողովում, պատճառաբանելով, որ այն շոշափում է համաեվրոպական շահեր, և բացի այդ անհրաժեշտ է փոխել պայմանագրի կետերը՝ դրանք 1856 թ. Փարիզի խաղաղության պայմանագրի 9-րդ և 12-րդ հոդվածների դրույթներին համապատասխանեցնելու առումով: Բրիտանական ճնշման ներքո 1878 թ. մայիսի 18-ին (30-ին) Լոնդոնում ստորագրվեց գաղտնի համաձայնագիր, որով բրիտանական կառավարությունը Ռուսաստանից կորզեց հավաստիացումներ այն մասին, որ վերջինս այլևս չի ծավալվի Արևմտյան Հայաստանի ուղղությամբ:

Ի լրացումն վերոհիշյալ համաձայնագրի, 1878 թ. հունիսի 4-ին ստորագրվեց անգլո-թուրքական պաշտպանական դաշինք, որով Անգլիան իր վրա պարտավորություն էր վերցնում ռազմական ուժով թույլ չտալ, որ Ռուսաստանը Ասիական Թուրքիայում գրավի որևէ տարածք: Այսպիսով բրիտանական դիվանագիտությանը հաջողվեց ստեղծել կրկնակի զսպման մեխանիզմ իր մրցակից ու փոխյան Ռուսաստանի դեմ: Արևելյան Անատոլիայում Օսմանյան կայսրության տիրույթները պաշտպանելու խոստման դիմաց Անգլիան սուլթանից ստացավ Կիպրոս կղզին: Արևմուտքում բրիտանական դիվանագիտության այդ մեծ հաջողությունը գնահատվեց որպես «բոլոր ժամանակների գլուխգործոց» իսկ լորդ Բիքոնսֆիլդին դասեցին «պատմության առասպելների» շարքը:

Այսպիսով Անգլիան, սուլթանի ենթադրությամբ, քրդերի հետ միասին պետք է դառնար պատմեշ արևմտահայության ազատագրական ձգտումների դեմ: Նշելով, որ Կիպրոսը հայերի արյան գինն է, Գր. Արծրունին գրում էր. «Երևում է, որ թե՛ Թուրքիայի և թե՛ Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել: Նրանց գաղտնի դաշնադրությունը նրա մեջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեին Հայաստանի մեջ, աքսորեին հայերին Հայաստանից»:⁴²

Մինչդեռ տեղյակ չլինելով դիվանագիտական այս խաղերին, հայերը մեծ հույսեր էին կապում Բեռլինի վեհաժողովի հետ: Ընդ որում, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի բովանդակությունն ու երաշխիքները արդեն անբավարար էին համարվում և որոշվել էր առաջ քաշել Օսմանյան կայսրության կազմում հայկական ինքնավարության գաղափարը: Սակայն Սկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանի պատվիրակությունը դեռևս մինչև Բեռլինի վեհաժողովի բացվելը, եվրոպական մայրաքաղաքներում շրջագայության ժամանակ պետք է դառն հիասթափություն ապրեր, քանի որ նրան հասկացրել էին, որ «Հայաստանը արևմտյան տեղությունների ըմբռնման շրջանակներից դուրս է»:

Վեհաժողովին ներկայացնելու համար հայկական պատվիրակությունը իր հետ Բեռլին էր տանում «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի» ծրագիրը, որը հանդիսանում էր ինքնավարության նախագիծ: Նրանում ի թիվս այլ հարցերի, շոշափվում էր նաև քրդական հարցը: Մասնավորապես առաջարկվում էր Արևմտյան Հայաստանի նահանգների անդորրը ապահովելու համար զինաթափել վաչկատուն ցեղերին՝ քրդերին և այլն, որոնք ճնշում և հարստահարությունների էին ենթարկվում հայ բնակչությանը:

Բեռլինի վեհաժողովը բացվեց 1878 թ. հունիսի 1-ին (13-ին) և իր նիստերն ավարտեց հուլիսի 1-ին (13-ին): Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և Ազգային ժողովի պատվիրակությունը որպես պետություն չներկայացնող պատվիրակություն, իրավունք չուներ մասնակցելու վեհաժողովի աշխատանքներին: Որպես վեհաժողովի աշխատանքների եզրափակիչ փաստաթուղթ 1878 թ. հուլիսի 1-ին ընդունվեց 64 հոդվածից բաղկացած «Բեռլինի պայմանագիրը», որի 61-րդ հոդվածը վերաբերում էր հայերին և Հայկական հարցին: Նրանում ասվում էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարեփոխումները և ապահովել հայերի անվտանգությունը չերեքզներից և քրդերից: Բ. Դուռը տեղություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տեղությունները կհսկեն դրանց կիրառմանը»:

Ինչպես տեսնում ենք, նախ 61-րդ հոդվածում չէր հիշատակվում Հայաստան անունը, այն փոխարինված էր «հայաբնակ մարզեր» արտահայտությամբ: Այնուհետև ի՞նչ միջոցներով էր թուրքական կառավարությունը ապահովելու հայերի անվտանգությունը չերեքզներից ու քրդերից, հիշյալ հոդվածում ոչինչ չէր նշվում:

Բեռլինի վեհաժողովում Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը նույնիսկ քննարկման չենթարկվեց, որը վկայում էր այն

մասին, որ վեհաժողովին մասնակից որևէ պետության շահերին այդ խնդիրը չէր համապատասխանում: 61-րդ հոդվածը նաև իրական ոչ մի երաշխիք չէր պարունակում հայկական վիլայեթներում կարգ ու կանոն հաստատելու և հայ ազգաբնակչությանը հնարավոր ջարդերից ու բռնություններից զերծ պահելու գործում:

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով սկիզբ էր առնում Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը և այդ հարցը ենթարկվում էր միջազգայնացման: Այլ կերպ ասած, Հայկական հարցը Օսմանյան կայսրության ներքին խնդրից վերածվեց միջազգային հարցի: Կասկածից վեր է, սակայն, որ Բեռլինի վեհաժողովը էլ ավելի բարդացրեց «Հայկական հարցը», ավելի խորացնելով նաև հայերի ու քրդերի միջև եղած խրամատը: Անդրադառնալով Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի վերաբերյալ ընդունված որոշումներին, սփյուռքահայ պատմաբան-ցեղասպանագետ Վահագն Դադրյանը գրում է. «Բարձրացնելով Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող ազգությունների ինքնագիտակցությունը և միաժամանակ ամրապնդելով նրանց հույսերը, սակայն դրանք չամրապնդելով ուժային լծակներով, միջազգային խաղաղոցները դրանով իսկ այդ կայսրության կառավարիչներին տրամադրեցին ինչպես խթաններ, այնպես էլ արդարացումներ այն բանի համար, որպեսզի մեծ վնաս հասցվի այդ ազգություններին, ուժեղացնելով նրանց հարստահարումը: Հենց այդ ձևով 19-րդ դարի վերջին տասնամյակներին ծնունդ առավ և բյուրեղացավ Հայկական հարցը, յուր լցնելով թուրք-հայկական կոնֆլիկտի վրա, որի մեջ այդ հարցը գտավ իր ամենակոնկրետ արտացոլումը: Ոգևորվելով Բեռլինի պայմանագրի խոստումներով, հայերը համակվեցին ազգային ինքնագիտակցության նոր զգացումներով, որն իր հերթին մղում հաղորդեց նրանց նոր սպասելիքներին»:⁴³

Թեև 61-րդ հոդվածով ստացվում էր, որ եվրոպական պետությունները պատրաստվում էին հայերին պաշտպանել քրդերից ու չերքեզներից, սակայն իրականում նրանք քրդերին ու չերքեզներին հանում էին հայերի դեմ: Այնուհետև, Թուրքիան ոչ թե իր վրա էր վերցնում «Հայկական հարցի» պատասխանատվությունը, այլ ըստ էության դառնում էր երրորդ կողմ, որը եվրոպական տերությունների առջև «երաշխավորում» էր հայերի ապահովությունը ոչ թե իր իսկ գործադրած բռնություններից ու հալածանքներից, այլ քրդերից: Բ. Դուռը այսպիսով զերծ էր մնում ամեն տեսակի մեղադրանքներից:

Հակոբ Շահպազյանի գնահատականը 61-րդ հոդածի վերաբերյալ վերին աստիճանի դիպուկ է: Այդ հոդվածը, – գրում է նա, – «...նկատվեցավ ի նպաստ հայերու՝ բայց եվրոպայի դիվանագիտական մեկ խաղն էր դա, ռուսո-թուրք պատերազմեն հետո Թուրքիայի բախտը իրենց ձեռքի

մեջ առնելու համար՝ ազգ ազգի դեմ հանելով: Այս հոդվածեն հետո՝ արժարծվեցան մոխրի տակ թաղված կրոնական, ազգային, տնտեսական և քաղաքական կայծերը, հրդեհելու համար ամբողջ Թուրքիան, որու մեկ ավերակն ալ եղան հայկական կոտորածները: Եվրոպան ասով՝ քուրդն ու չերքեսը հանեց քաղաքական ասպարեզը»:⁴⁴ Այդ նույն հարցի մասին Կարո Սասունին գրում է. «Թուրքիան կրցավ քրտական հուզված աշխարհ մը ցցել Հայաստանի և Քիւրտիստանի մեջ, ցույց տալու համար, որ քրդերը գրգռված են և կընդդիմանան այն բարենորոգումներուն, որ մեծ պետութիւնները պատրաստած են Թուրքիո համար»:⁴⁵

Բեռլինի կոնգրեսից հետո հայկական շրջանակներում տիրող հիասթափությանը զուգահեռ, Մկրտիչ Խրիմյանի և Ներսես Վարժապետյանի գլխավորությամբ ընթանում էր շարժում ի նպաստ Հայաստանի ինքնավարության: Միաժամանակ հայ մտավորականները թե՛ եվրոպական մայրաքաղաքներում և թե՛ Հայաստանի զույգ հատվածներում սկսեցին կազմակերպել զանազան միություններ ու կոմիտեներ, որպեսզի իրենց բողոքն արտահայտեն սուլթանական բռնությունների ու հարստահարությունների դեմ, և միաժամանակ ճնշում գործադրեն խոստացված բարեփոխումները կյանքի կոչելու համար:

Ստեղծված իրադրության խորը և համակողմանի վերլուծությունը մենք գտնում ենք Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի «Պատմական ակնարկ հայկական հարցի վերաբերյալ» վերտառությամբ զեկուցագրում, որը դեսպանը հասցեագրել էր իր վերադասին՝ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարությանը: Չեկուցագրում նա գրում է, որ ընդհուպ մինչև 1881 թ. հայկական անկախության մասին գաղափարներ գոյություն չուներին: Չանգվածները ընդամենը ձգտում էին բարեփոխումների, երազելով միայն օսմանյան վարչության ներքո նորմալ կյանքի մասին: Սակայն բարեփոխումներ չիրականացվեցին: Շարունակվում էին օսմանյան չինովնիկների սկանդալային շորթումները, արդարադատությունը չէր բարելավվում: Կայսրության մեջ ծայրից ծայր ծաղկում էր չինովնիկների կռուումպացվածությունը, արհամարանքը արդարադատության և կյանքի անվտանգության նկատմամբ: Որպես այդ բոլորի հետևանք, հայկական սփյուռքը սկսեց առաջ քաշել իրավախախտումների վերաբերյալ մեղադրանքներ և նրան հաջողվեց սովորական վարչական անփութությունները վերափոխել ռասայական հողի վրա հետապնդումների ձևերից մեկի: Նա եվրոպայի ուշադրությունը սկսում է իրավիճակը թուրքերի կողմից Բեռլինի պայմանագրի խախտումների վրա, դրանով իսկ հայ բնակչության մեջ արթնացնելով հայկական ինքնավարության գաղափարը:

Ֆրանսիան ոչ մի ձևով չարձագանքեց հայերի այդ նախաձեռնությանը, սակայն դա արեց Գլադստոնի Անգլիան: Կարծես թե քիչ էր հայերի դժգոհությունը հրահրելը, թուրքերը ուրախ էին նաև իրադրությունը սրելու, այդ դժգոհությունը օգտագործելով որպես պատրվակ: Դեսպանը հայտնում է, որ մի բարձրաստիճան թուրք աստիճանավոր իրեն ասել է. «Հայկական հարց գոյություն չունի, բայց մենք այն կստեղծենք»: Թուրքերի այն պնդումները, թե հայերը կազմակերպում են դավադրություն, վերջ է վերջո ավարտվեցին նրանով, որ հայերը իսկապես եկան գաղտնի համաձայնության. պնդումներն այն մասին, որ Հայաստան գոյություն չունի, պատճառ հանդիսացան այն բանի համար, որ արդյունքում հայերը հավատացին նրա ռեալականությանը... «Իրականում Հայկական հարցը ոչ այլ ինչ է, եթե ոչ Անգլիայի և Ռուսաստանի միջև անտոգոնիզմի դրսևորում ...Որտե՞ղ է սկսվում Հայաստանը և որտե՞ղ վերջանում», – եզրակացնում է Պոլ Կամբոնը:⁴⁶

Ֆրանսիական դեսպանի զեկուցագրում ամբողջ մերկությամբ բացահայտվում է Հայկական հարցի կապակցությամբ թուրքական քաղաքականության ներքին մղումը՝ հայերին դրդել հուսահատ գործողությունների, դրանք պատրվակ դարձնելով հաշվեհարդարի համար:

Այդ ծրագիրը կյանքի կոչելու ճանապարհին թուրքական դավադրական զինանոցը զենքերի պակաս չէր զգում: Դրանցից մեկը, ընդ որում իր բարձր արդյունավետությամբ աչքի ընկնողը, քրդական գործոնն էր: Նրա շրջանառության մեջ մտցնելը համապատասխանում էր նաև բրիտանական շահերին: Վարչապետ Գլադստոնին ուղղված 1880 թ. ապրիլի 27-ի թվակիր նամակում Կոստանդնուպոլսում բրիտանական դեսպան Լայարդը գրում էր. «Պետք չէ մոռացվի, որ անոնք (հայերը – Վ. Բ.) կը կազմեն երկրի բնակչության փոքրամասնությունը: Հիմարական է և վտանգավոր ճգնել հերքելու այս փաստն՝ անգիտանալով քյուրտերը: Փոքր Ասիո մահմեդականներն տեղյակ են Եվրոպական Թուրքիո ինքնուրեն քրիստոնյա նահանգների մեջի իրենց եղբայրների ճակատագրին: Անոնք տրամադիր չպիտի լինեն ենթարկվելու նման ճակատագրի առանց ընդդիմության: Մի պահանջ ինքնորենության համար Հայաստանի մեջ կարող է առաջնորդել կոտորածների և այսու ի գլուխ բերել Ռուսիո անմիջական միջամտությունն և անոր անխուսափելի հետևանքները»:⁴⁷

Հայկական հարցում թուրք-անգլիական շահերի ներդաշնակությանը անդրադառնալով, մեծ վեգիր Քյամիլ փաշան գրում էր. «Հիմա, այսօր գոնե, Անգլիո շահերն կպահանջեն, որ Փոքր Ասիոյ մեջ մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք, որ մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենն և միջամտության ամեն առիթներեն, ուս-

տի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կպահանջե, որ որևիցե կասկածելի տարր անհետ ընենք, որպեսզի ապագայն ապահովենք. ուրեմն այդ գլուխ հանելու համար բան չի պակասիլ մեզ, ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կը հայտարարենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ զենք ունի, ոչ զինավորություն և ո՛չ պաշտպան. երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինավորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերությանց մեկը և ամենեն հարուստը մեզ զինակից է և Ասիական աշխարհքին երաշխավոր: Եվ եթե այդ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե Տաճկական Ասիոյ մեջ, կը թողու զմեզ համգիստ և այն ատեն կզբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբ»:⁴⁸

Սա հայությանը բնաջինջ անելու միջոցով Հայկական հարցը լուծելու վերաբերյալ մանրամասն մշակված մի հրեշավոր ծրագիր էր: Նրա գործադրման համար, ինչպես որ պահանջում էր ծրագիրը, կառավարությունը լայնորեն օգտագործեց քրդական վերնախավին ու ցեղերին, նրանց զինելով և ուղղելով հայ բնակչության դեմ: Ի դեպ, պատերազմի ժամանակ կառավարությունը քրդերին բաժանել էր 20 հազար կատարելագործված «մարտինի» տիպի հրացաններ, որոնք պատերազմից հետո հետ չվերցվեցին նրանցից,⁴⁹ որպեսզի այդ զենքը օգտագործվի հայ բնակչության դեմ:

Մինչդեռ, երբ մի խումբ հայեր ներկայացան Վանի կուսակալին և խնդրեցին, որ իրենց 50 հրացան տա, որպեսզի պաշտպանվեն Արճեշի և Արծկեի շրջակայքում գործող քուրդ ավազակապետներից, վալին հեզմանքով պատասխանեց. «Ձարմանք, որ քանի մ'ալ թնդանոթ չեք ուզեր»:⁵⁰

Օրեցօր ավելացող քրդական ավազակախմբերի ահից Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքը, հատկապես առևտուրն ու երկրագործությունը, լրիվ անդամալուծվել էր: Անգլիացի հյուպատոս կապիտան Տրոտտերը Էրզրումից ահազանգում էր, որ ամբողջ շրջանում այժմ քրիստոնյաների վիճակը «ավելի վատ է, քան վերջին տարիների ընթացքում երբևիցե եղել է»:

Անգլիական պաշտոնական հրատարակություն «Կապույտ գրքերը» լի էին հայերի նկատմամբ քրդերի կողմից գործադրվող բռնությունների փաստերով: Նշվում էր, օրինակ, որ թուրք աստիճանավորները, դատավորները, ոստիկանությունը և այլն մեղսակից են այդ բռնությունների:⁵¹

Վերլուծության ենթարկելով այդ շրջանի իրողությունների պատկերը, ռուս թուրքագետ Վ. Ա. Գորդևսկին գրում էր. «1877-1878 թթ. պատերազմից հետո Թուրքիայում հայերի վիճակի մեջ նկատվեց կտրուկ

շրջադարձ. նրանց մոտ ուժեղացավ ազգային ինքնագիտակցությունը: Ձգտելով ճնշել ազգային շարժումը հայերի շրջանում, թուրքական իշխանությունները սկսեցին ավելի ուժգին կերպով քրդերին գրգռել հայերի դեմ, և ահա ժամանակ առ ժամանակ տեղի էր ունենում վայրենի ջարդ. Բ. Դուռը խրախուսում էր կոտորածներն ու ջարդերը, դրանք համարելով անվրեպ միջոց իրեն ատելի քրիստոնյա տարրի թուլացման համար»:⁵² Իսկ ռուս զինվորական Ա. Մ. Կոլյուբակինը, որը դեպքերին ակնատես ու վկա էր, նկատում է. «Շատերը Կ. Պոլսում անհրաժեշտ էին համարում հայերի շարժումը ճնշել ամենավճռական ձևերով: Մյուս կողմից մահմեդական բնակչությունը ևս, ինչպես թուրքերը, այնպես էլ քրդերը, որոնք հրահրվում էին մոլեռանդ հոգևորականության և զանազան մութ տարրերի կողմից... ծայրահեղորեն գրգռվում էր հայերի դեմ: Վերջիններիս վերագրվում էին տարբեր, միանգամայն անհավատալի մտադրություններ՝ մահմեդականների գլխովին ջարդ կամ նրանց քրիստոնեացում, կանանց առևանգում և այլն»:⁵³

Հայ ժողովրդի արթնացող ինքնագիտակցության և ազգային վերածննդի գաղափարները խեղդելու համար ջարդերի քաղաքականությանը դիմելուց բացի սուլթանական կառավարությունը արգելեց կամ ցրեց հայկական նորաստեղծ զանազան ընկերությունները, ձերբակալեց և աքսորեց նրանց ղեկավարներին, իր հսկողությունը սահմանեց հայկական դպրոցների, հրատարակությունների և առհասարակ արևմտահայության ներքին կյանքի վրա:

Արևմտյան Հայաստանում օրենք հասկացությունը, որ առաջ ևս բացակայում էր, ամբողջապես փոխարինվեց քմահաճ կամքով: Հայերը դուրս մնացին օրենքի հովանավորությունից: Նրանք հայտարարվեցին պետության թշնամիներ և դավաճաններ («մելլաթը խային»)՝ դավաճան ազգ – Վ. Բ.): Թուրքական բանտերը լեփ-լեցուն էին հայերով: Հազարավոր մարդիկ աքսորվեցին Արաբիայի և Լիբիայի անապատները, որտեղից ոչ ոք ընդհանրապես հետ չէր վերադառնում: Իր սև գործն էր կատարում նաև մահմեդական խուժանը, կողոպտելով ու հրկիզելով հայերի տները, խանութները, շուկաները: Անսամ թարրերի այդ խժոժությունները սովորաբար ուղեկցվում էին ահավոր ջարդերով: Ընդ որում, ինչպես միշտ, խուժանը և կառավարությունը գործում էին համատեղ: Իշխանությունները իրենք էին հրահրում և ուղղություն տալիս քաղաքային ամբոխի ու տակաճեցների գազանային կրքերին ու արյունարբու բնազդներին: Մի խոսքով, թուրքական կառավարությունը ջարդը դարձրել էր իր քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասը: Մինչդեռ սուլթանը մատների արանքով էր նայում առանձին վայրերում պարբերաբար բռնկող քրդական հակակառավարական ելույթներին, դրանք համարելով լեռներում ազատ

ապրող այդ ժողովրդի չարածիություններ: Երբ թուրք զինվորները զինված բախումներ էին ունենում ապստամբ քրդերի հետ և սպանում էին նրանց, վալիները հանդիմանում էին հրամանատարներին, թե «ինչպես հանդգնեցար այդչափ քուրդ դուլցազուններ սպանել»:⁵⁴

Բեռլինի վեհաժողովում ընդունված որոշումը Արևմտյան Հայաստանում վարչական բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ խափանելու նպատակով, սուլթանական կառավարությունը քայլ առ քայլ իրագործում էր մի համալիր ծրագիր: Տույց տալու համար, որ Արևմտյան Հայաստանի տարածքում իբր հայերը ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում, սուլթանը 1877–78 թթ. պատերազմից հետո երկրի վարչական կառուցվածքը ենթարկեց էական փոփոխության, որի նպատակն էր նահանգների հայ և մահմեդական բնակչությանը տեղաբաշխել մի այնպիսի ձևով, որպեսզի առաջինները ոչ մի տեղ չկազմեն մեծամասնություն:⁵⁵ Չունենալով այդ քաղաքականությունը կասեցնելու կամ ձախողելու միջոցներ, արևմտահայությունը շարունակում էր բողոքների և հանրագրերի մարտավարությունը, միաժամանակ աշխատելով այդ ամենի վրա հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը: Շատերն էլ հույս էին կապում «Նոր օսմանների» և նրանց սահմանադրական ծրագրերի հետ, ենթադրելով, որ դրանք վերջ կտան աբդուլհամիդյան հայախալած քաղաքականությանը: Թեև կային նաև ողջախոհ մարդիկ, որոնք, միդիատյան սահմանադրությունը խաբեություն անվանելով, կանխատեսում էին, որ «այն օրը, երբ երիտասարդ թուրքերը տեր դառնան կայսրության և իրենց օրով ծագի ընդհանուր պատերազմ, անոնց առաջին գործը պիտի լինի տաճկահայությունը բնաջնջել՝ միատարր թրքություն հաստատելու համար, որպեսզի Ռուսիա բալկաններու օրթոդոքս կամ սլավ ժողովուրդներու ազատագրության գործը ի գլուխ հանել է վերջ՝ Կովկասի հայության սահմանակից և կրոնակից թրքահայությունը նաև ազատագրելու պատրվակներ չստեղծե՝ ասիական Տաճկաստանն ևս անդամահատելու միտումով»:⁵⁶

1879 թ. սուլթանը Արևմտյան Հայաստան գործուղեց իր հավատարիմ դրածոներից մեկին՝ անատոլիական չորրորդ բանակի հրամանատար, մուշիր (մարշալ) Բեքիր Սամիի փաշային, նրան օժտելով ամենալայն լիազորություններով: Պաշտոնապես նրա առաքելությանը վերագրում էին Փոքր Ասիայի արևելյան նահանգներում հարստահարությունները կանխելու նպատակ: Իրականում նրա խնդիրն էր հետազոտել և պարզել Հայաստանում հեղափոխական տարրերի գործունեությունը և բարենորոգումների գծով եվրոպական կոմիսարների երկրամաս գալու կապակցությամբ միջոցներ ձեռնարկել, որպեսզի բողոքներ չլինեն:

Վանի շրջանում այս փաշան քրդերի ժողովներ գումարեց, նրանց ներշնչելով, որ «հայերն են իրենց թշնամիները, որոնք եվրոպացիների միջոցով ձգտում են իշխանություն ձեռք բերել նրանց, այսինքն քրդերի վրա»:⁵⁷ Միաժամանակ նա ներշնչում էր քրդերին վտարել հայերին և գրավել նրանց բնակավայրերը: Անձամբ իր մասնակցությունը բերելով այդ գործին, Բեքիր Սամիի փաշան Կարինի և Վանի ճանապարհներին խրախուսում էր քուրդ ավազակապետերի խժոժությունները:⁵⁸

Իսկ կառավարությանը հղած 1879 թ. նոյեմբերի 19-ի հեռագրում Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Լայարդը հաղորդում էր, որ Բեքիր Սամիի փաշան առատորեն շքանշաններ, պատվո սրեր և դրամ է բաժանում այնպիսի քրդական առաջնորդների, որոնք «առավել արժանի են պարանի»:⁵⁹

XIX դարի 70-ական թվականների վերջին Հաքյարիի և Նոուչեի շրջաններում բռնկեց քրդական մի հուժկու շարժում, որի ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց 50-ամյա շեյխ Օբեյդուլլան, որի ազդեցությունը, որպես քրդերի հոգևոր առաջնորդի, տարածվում էր Արևմտյան Հայաստանից ու Իրաքյան Քրդստանից մինչև Իրանական Քրդստան ու Ատրպատական: Նրա այդ հսկայական ազդեցության պատճառներից մեկն այն էր, որ քրդերը նրան համարում էին «խալիֆների օրինական ժառանգորդ»:⁶⁰

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իր շուրջը համախմբելով մեծաթիվ քրդական ուժեր, շեյխը եռանդուն մասնակցություն ցուցաբերեց պատերազմին, հանդես գալով հօգուտ Օսմանյան կայսրության:

1880 թ. Մեքքա կատարած ուխտագնացությունից վերադառնալով իր ժառանգական կալվածքը՝ Շամդինան, որը Վասպուրականի նահանգի Աղբակի շրջանի մեջ մտնող մի գյուղաքաղաք էր, շեյխը նկատում է, որ երկրամասի քուրդ բնակչության շրջանում սկսվել են հակակառավարական բռնկումներ: Նա անմիջապես իր ձեռքն է վերցնում շարժման ղեկավարությունը, նպատակ ունենալով օգտվել առիթից իր փառասիրական ձգտումներին հագուրդ տալու համար: Մասնավորապես նա ձգտում էր իր տիրապետության ներքո միավորել բոլոր քրդական ցեղերին և դառնալ Քրդստանի և Արևմտյան Հայաստանի նահանգների լիիրավ տերը: Ըստ այնմ, նա իրեն ներկայացնում էր որպես քրդական զանգվածների «ազգային ձգտումների» արտահայտիչ:

Անմիջապես Օբեյդուլլայի շուրջը համախմբվեցին քրդական ազդեցիկ ցեղերի առաջնորդները, որոնք ինչ-ինչ հիմքեր ունեին դժգոհ լինելու սուլթանական կառավարությունից, մանավանդ որ վերջինս քայլ առ քայլ սահմանափակում էր հարկերի զանձման բնագավառում նրանց ար-

տոնություններն ու «իրավունքները» և զրկում նրանց իրենց «անկախ» վիճակից:

1879 թ. հոկտեմբերին Օբեյդուլլան Վանի ռուսական փոխյուզպատոս, Կ. Կամսարականի մոտ ուղարկեց իր ներկայացուցիչ Յուսուֆ աղային, այնուհետև՝ շեյխ Սայիդ Մոհամմեդ Սայիդին, որոնք նախ ռուսական դիվանագետին շարադրեցին շեյխի նպատակները և խնդրեցին Պետերբուրգի կառավարության աջակցությունը իրենց շարժմանը,⁶¹ իսկ ամենակարևորը շեյխը իր ներկայացուցչի միջոցով առաջարկում էր ռուսներին վերանայել իրենց քրդական քաղաքականությունը և այսուհետև ոչ թե հայերին, այլ քրդերին դիտել որպես Փոքր Ասիայում Ռուսաստանի հիմնական հենարանի: Ակնարկվում էր նաև, որ քրդերի խնդրանքն է, որ Պետերբուրգի կաբինետը քրդական հարցը Հայկական հարցի օրինակով հանի միջազգային դիվանագիտության ասպարեզ:

Սակայն քննարկումներից հետո ցարական կառավարությունը մերժեց շեյխի վերոհիշյալ պահանջները: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն գրած իր զեկուցագրում Կ. Կամսարականը նշում էր, որ Ռուսաստանի շահերի տեսակետից խիստ վտանգավոր է շեյխի մտահղացումներին ընդառաջ գնալը: Նա առաջարկում էր, որ հետևելով իր ավանդական քաղաքականությանը, Ռուսաստանը Փոքր Ասիայում պետք է շարունակի հենվել ոչ թե քրդական տարրի, այլ քրիստոնյա բնակչության վրա:⁶²

Հայազգի դիվանագետի այս տեսակետը իր ազգի նկատմամբ բնավ էլ զգացմունքային դրսևորում չէր: Բանը նրանումն էր, որ թեև ցարական դիվանագիտությունը դեմ չէր օգտագործելու «քրդական խաղաքարտը»՝ Մերձավոր Արևելքի իր քաղաքական ծրագրերում, սակայն տվյալ միջազգային իրադրության պայմաններում դրա նպատակահարմարությունը Պետերբուրգին թվում էր անցանկալի: Առավել ևս, որ ցարական դիվանագիտությունը անհերքելի փաստեր ուներ այն մասին, որ Լոնդոնը իր քաղաքական գործակալության միջոցով արդեն հասցրել է համապատասխան «մշակման ենթարկել» շեյխ Օբեյդուլլային և հասել է որոշակի հաջողության քրդական այդ շարժման լծակները ամբողջությամբ իր ձեռքում կենտրոնացնելու ուղղությամբ:⁶³ Մեծ Բրիտանիան հանձինս քրդերի տեսնում էր այն ուժը, որը կոչված էր պատմեշ կանգնեցնել Փոքր Ասիայում ռուսական առաջխաղացման դեմ:

Ռուսական դիվանագիտությանը հայտնի էր, որ Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան լորդ Դաֆերիի հանձնարարությամբ Վանում բրիտանական փոխյուզպատոս կապիտան Կլեյտոնը Հաքյարիում այցելել է շեյխ Օբեյդուլլային և բանակցություններ վարել նրա հետ: Այդ հանդիպման ժամանակ շեյխը անգլիական փոխ-յուզպատոսին էր հանձնել իր

հատուկ ուղերձը, որտեղ նշվում էր, որ անգլիացիներին ինքը վստահում է զբաղվելու քրդական գործերով:⁶⁴ Այդ այցելությանը անմիջապես հաջորդել էր անգլիական զենքի և դրամի մատակարարումը շեյխին:

Ինչ վերաբերում է սուլթանական կառավարությանը, ապա նա անմիջապես կռահեց, որ հանձինս Օբեյդուլլայի շարժման, երկրի արևելքում իրեն լուրջ բարդություններ են սպասվում: Ուստի Վանի մուֆթիին կարգադրվեց անհապաղ հանդիպել շեյխի հետ և փորձել համոզել նրան հետ կանգնելու իր մտադրություններից, խոստանալով լրիվ բավարարել նրա «օրինական պահանջները»:⁶⁵

Կոստանդնուպոլսից ռուսական դեսպան Նովիկովը հայտնում էր, որ բավարար չափով ուժեր չունենալով նախապատրաստվող քրդական ապստամբության դեմ պայքարելու համար, սուլթանական կառավարությունը նախընտրում է շեյխին սիրաշահելու քաղաքականությունը: Այդ նպատակով 1880 թ. գարնանը Չաքարի՝ Օբեյդուլլայի մոտ է գործուղվում սուլթան Աբդուլ Չամիդի համհարզ, գնդապետ Բահրի բեյը, որը ռուսական դիտորդների տեղեկությունների համաձայն, շեյխին է հանձնել սուլթանի նվերը՝ սուր և շքանշան, ինչպես նաև հայտնել, որ կառավարությունը նրան թոշակ է նշանակել:⁶⁶ Միաժամանակ քրդական այդ շարժումը իր նախանշած ուղուց շեղելու համար թուրքական կառավարությունը սկսեց ներշնչել քրդերին, որ բարենորոգումների ծրագիրը նախատեսված է միայն քրիստոնյաների՝ հայերի համար և բոլորովին անտեսված են քրդերը որպես «վայրենի թափառաշրջիկներ»: Սուլթան Աբդուլ Չամիդ II-ի նպատակն էր շեյխ Օբեյդուլլայի շարժման միջոցով քրդերին ոտքի հանել հայկական նահանգները ավերելու և բարենորոգումները ձախողման մատնելու նպատակով:

«Սուլթանը շեյխին կը հրահանգեր կազմել քրդական ընդհանուր միություն մը, Չայաստանը կոչել Քյուրտիստան և իրավունք կուտար ու կիրամայեր Իբադուլլահին քրտական ուժերով արշավել հայկական գավառները ու սուրբ անցնել հայ և ասորի ազգաբնակչությունը: Սուլթանը նկատի առած էր քրտական բարքերը և գիտեր, թե թալանի ու կողոպուտի արտոնություն մը բազմահազար պաշիպոզուքներ հրապարակ պիտի բերեր, որոնք անկարելի պիտի դարձնեին բարենորոգումները: Նման խառնակության մը պարագային՝ օսմանյան կառավարությունը եվրոպական մեծ պետություններուն առջև պիտի արդարանար, ամբողջ մեղքը ձգելով քյուրտերուն վրա, ինչպես ըրած էր ատկե առաջ»:⁶⁷

Շեյխ Օբեյդուլլայի և նման կարգի շարժումները սուլթանը ծրագրել էր օգտագործել նաև այլ նպատակներով, մասնավորապես ուժեղացնելու քրդական շեյխությունները ի հեճուկս քուրդ բեկերի և ստեղծել մի կրոնապետություն, և իսլամական կրոնի կապով ամբողջ քրդությունը կա-

պել սուլթան-խալիֆի հետ: Այսպիսով շեյխությունը կդառնար մի գործիք ազատության ձգտող քրիստոնյա ժողովուրդներին, մասնավորապես հայերին խեղդելու համար, միաժամանակ դառնալով խալիֆի համար կրոնական մի ուժեղ հենարան: Սուլթանը հետապնդում էր նաև հեռահար մեկ այլ նպատակ. հրահրելով ներքին ազգամիջյան կռիվներ, մասնավոր շեյխական կազմակերպության ղեկավարությամբ, որ անխուսափելիորեն շարժումը տանելու էր կրոնական մոլեռանդության հունով, քրդերին զրկել ազգային գիտակցությունից, նրանց միտքը հեռացնել ազգային-ազատագրական պայքարից, այն դարձնել զուտ իսլամական մի համայնք և աստիճանաբար թրջացնել նրանց: Այնուհետև, սուլթան Աբդուլ Չամիդ II-ը գտնում էր, որ քրդական անկանոն ուժերը անհրաժեշտ մի տարր են, որոնք կարող են բռնել ենիջերիների տեղը, որից ինքը զրկված էր:⁶⁸

Սուլթանական կառավարությունը, - գրում էր Լեոն, - «երկու ծեռով բռնում էր 1880 թ. ծայր տված քրդական շարժումը: Կ. Պոլսի թուրք մամուլը հրճվանքի մեջ էր, եվրոպային սպառնում էր քրդական շարժումով և բոլորովին հարկավոր չհամարելով որևէ զաղտնապահություն, հայտարարում էր բացարձակ կերպով, թե Թուրքիան կոչնչացնե 61-րդ հոդվածը քրդերի միզակներով, թե հայերը պիտի լռեն, իրենց համար առանձին պահանջներ չպիտի անեն, ապա թե ոչ՝ նրանց դեմ կկանգնեցվի ամբողջ միացած քրդությունը»:⁶⁹

Բաֆֆին «Քրդական միություն» վերնագրով հոդվածում գրում էր. «Բեռլինի կոնգրեսի վճիռները Չունաստանի և Չեռնոգորիայի վերաբերությամբ կողմնակի կերպով մերժելու և եվրոպական պետությունների պահանջմունքների առջև դժվարություններ հարուցելու համար Բ. Դուռը ստեղծեց ավթանական միությունը: Իսկ հայկական խնդիրը իր խանձարուրի մեջ խեղդելու համար նա աշխատում է այժմ կազմել քրդական միություն»: Բաֆֆին «Քրդական միության» նախաձեռնողներից մեկին համարում էր Կ. Պոլսում անգլիական դեսպան Լայարդին, իսկ ընդհանուր առմամբ այդ զաղափարը համարում էր Բիքոնսֆիլդի մինիստրության ծնունդը»:⁷⁰

Ռուսական մամուլը ևս բաժանում էր այն տեսակետը, որ Չայկական հարցը փակելու համար Բ. Դուռը աշխատում էր քրդական միություն ստեղծել: «Մշակը», օրինակ, արտատպել էր «Գոլոս» լրագրից վերցված մի թղթակցություն, որտեղ նշվում էր, որ «քրդական լիզան» հնարված է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը անգոր անելու նպատակով»:⁷¹ Այդ հանգամանքը չէր թաքցնում նույնիսկ թուրքական մամուլը: Այսպես, Կոստանդնուպոլսի ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Լ'Օսմանլի» պաշտոնաթերթը գրում էր, որ «Քրդստանի բնակիչները չափազանց շփոթված են «Չայկական հարցից», որ զարթեցվում է եվրոպան բարենորոգություն-

Մերի անունով: Եվ հենց որ քրդերը կտեսնեն, որ նրանց կամենում են Արևելյան Ռուսելիայի բնակիչների վիճակին ենթարկել, նրանք իսկույն կկազմեն իրենց լիզան, ոտքի կանգնելով ինչպես մի մարդ: Քրդերի մի մասը թափառական կյանք է վարում, նրանց բնակարանները և կայքը իրենց ձիերի մեջքին են: Ուրեմն, նրանց ոտքի կանգնեցնելու համար բավական է հրամայել նրանց ձի նստել», – ցինիկորեն եզրակացնում էր հողավածագիրը:⁷²

Սուլթանական նահանգական պաշտոնյաները իրենց հերթին բորբոքում էին առանց այն էլ բոցավառվող կրքերը: Այսպես, Բաշկալեի ադլի-յեի (դատարան) նախագահ Չաջի Մուստաֆա էֆենդին հայտարարում էր, որ Արևելյան Անատոլիայի վեց վիլայեթներում բնակվում են գլխավորապես երեք ազգեր՝ հայեր, քրդեր և ասորիներ: Քրդերին բոլորովին դուրս են թողել բարենորոգումների ծրագրից, «բոլոր իրավունքները տալով միայն այդ մնացած երկու քրիստոնյա ազգերին և այս չափազանց վիրավորական և անհանդուրժելի լինելով քրդերի համար, նրանք էլ բնակա-նաբար որոշել են հենց սկզբից զենքը ձեռքին արգելել այդ բարենորոգումների ներմուծումը պետության նշված մասերը»:⁷³

Ուշագրավ է, որ սուլթանական կառավարության մտահղացած այդ ծրագրերի մասին որոշ քուրդ ցեղապետեր տեղյակ պահեցին հայերին: Այսպես, հայտնի առաջնորդ Չուսեին աղան Արսեն Թոխմախյանին հայտնում է, որ Օբեյդուլլայի շարժումը «պատրաստվեց հայոց դեմ, հայոց խնդիրը ջնջելու համար և ցույց տալու Եվրոպային, որ քրդերը մի զինվորական ուժ են կազմում»: Որ այդ ուղղությամբ «չատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են»:⁷⁴

Միանգամայն ակնհայտ էր, որ սուլթանին անհրաժեշտ էր Եվրոպային ցույց տալ մի խրտվիլակ, և այդ դերում նա ցանկանում էր ծառայեցնել «քրդական լիզան»: Օսմանյան կառավարությունը, որի ավանդական քաղաքականությունը քրդերի տարանջատումն ու բաժանումն էր, այժմ աշխատում էր միավորել նրանց և ուղղել հայ ժողովրդի դեմ:

Աբդուլ Չամիդը Արևմտյան Չայաստան էր ուղարկում մեծ թվով մոլլաների, սեյիդների և այլն, որոնք մզկիթներում բորբոքում էին քրդական զանգվածների կրոնական ատելությունը «քյաֆիր» հայերի դեմ: Նա շռայլորեն բարձր կարգի շքանշաններ ու զինվորական կոչումներ էր շնորհում այն բոլոր քուրդ ցեղապետերին, որոնք աչքի էին ընկնում իրենց հակահայ գործողություններով: Օրինակ, նախկինում ապստամբ Բադրխանի որդուն Բահրի բեյին սուլթանը շնորհեց սուլթանական գվարդիայի հրամանատարի աստիճան, ֆերիկի (զեներալի) կոչում, ինչպես նաև «Մեջիդիե» շքանշան, նրան «հատուկ հանձնարարությամբ» ուղարկելով Արևմտյան Չայաստան:⁷⁵ Նրանց բոլորին հանձնարարված էր քրդե-

րի շրջանում Չայակական հարցը մեկնաբանել այնպես, թե իբր «հայերն ուզում են իրենց համար թագավորություն ստեղծել և ստրկացնել քրդերին: Այդ վտանգից ազատվելու մի ճանապարհ ունեն քրդերը՝ կոտորել հայերին»:⁷⁶ Կամ հայերը «ֆրանկներու կոչման և անոնցմե զորք ու ստակ կուզեն, որ քրդերը ջնջեն, ուստի իրենց պահպանության համար իրենք պետք է զենք առնեն և հայոց դիմադրեն»:⁷⁷ «Լ'Օսմանլին» նույնիսկ գրում էր, որ հայերը դիտավորություն ունեն քրդերի մեջ տարածել քրիստոնեությունը և քուրդ երեխաներին ներգրավել իրենց դպրոցները: «Բուլղարները, – ասվում էր այդ հողավածում, – թեև ապստամբվում էին թուրքերի դեմ և սպանում էին թուրքերին, բայց հայերը նրանցից վտանգավոր են, որովհետև կուլտուրական ճանապարհով կամենում են կլանել քրդերին»:⁷⁸

Թուրքական մամուլը հատկապես աշխատում էր Արևմտյան Չայաստանի իրականությանը անժանոթ եվրոպացիներին համոզել, թե իբր հայերը հարստահարում և շահագործում են «խեղճ» քրդերին:

Չայակական հարցի դեմ սուլթանական կառավարության սարքած ամենախոշոր սադրանքներից մեկը թերևս հետևյալն էր. ինչպես հայտնի է, 1880 թ. ամռանը Եվրոպական վեց պետությունների կողմից Բ. Դռանը հանձնվել էր հավաքական մի հուշագիր, որով պահանջվում էր անհապաղ կենսագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և Արևմտյան Չայաստանում իրագործել խոստացված բարենորոգումները: Բ. Դռանը դեռ չէր տվել այդ հավաքական հուշագրի պատասխանը, երբ Կոստանդնուպոլսում հայտնվեցին ինչ-որ «քուրդ պատվիրակներ» «իբր շեյխ Իբրադուլլահի կողմնից ուղարկված, բայց իսկապես թուրքաց մայրաքաղաքի մեջ սարքված, որոնք ներկայանալով Աբեդին փաշային պահանջում էին քրդերի և Քրդաստանի համար ինքնավարություն»:⁷⁹ Բաֆֆին հայտնում է, որ «Օբեյդուլլան այդ ժամանակ գտնվում էր Իրանում և ամենևին տեղեկություն չունեի, որ մայրաքաղաքում իր անունից բանակցություններ են վարում»:⁸⁰ Քիչ ավելի ուշ պարզվեց, որ քրդական այդ ցույցի կազմակերպիչը հենց ինքը Աբեդին փաշան է, որն ի դեպ «ալթանական միության» ծրագրողն էր, իսկ այժմ հեղինակ էր «քրդական ինքնավարության» ու «քրդական լիզայի» սարդիչ գաղափարների:

Կարծես հնուտ դիրիժորի ցուցումով վերոհիշյալ «քրդական ցույցից» հետո թուրքական մամուլը կտրուկ փոխեց քրդերի հասցեին իր որդեգրած ոճը: Այժմ արդեն ձեռնասու չէր նրանց «խեղճ», «կուլտուրական» և «խաղաղասեր» ժողովուրդ ներկայացնելը: Պետք էր նրանց ներկայացնել որպես անգութ գազաններ, որպես բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի րոպեում ոչնչացնել հայերին, եթե հարց բարձրացվի նրանց ինքնավարության կամ անկախության մասին: Այս վար-

պետ սադրանքից հանվող եզրակացությունը կարող էր լինել հետևյալը. եթե սուլթանական կառավարությունը բարենորոգումների հարցում գնա Արևելյան Անատոլիայի մահմեդական բնակչության կամքին հակառակ, ապա կարող է տեղիք տալ քրիստոնյա բնակչության խոշոր կոտորածի, որի համար Բ. Դուռը դժվարանում է իրեն պատասխանատու համարել:

Բաֆֆին «Մշակի» էջերում գրում էր, որ այդ բոլորը խաբեություն է, որովհետև մահմեդականները ասիական Թուրքիայում «նույնքան ճնշված, նույնքան հարստահարված են անկարգ կառավարությունից, որքան քրիստոնյաները» և որ քրդական զանգվածները բնավ տեղեկություն չունեն թուրքական դիվանագիտության այդ մեքենայությունների մասին: «Որքան հայկական լեռների գայլերը տեղեկություն ունեն այդ բոլոր բանակցությունների մասին, — գրում էր նա, — նույնքան տեղեկություն ունի քուրդ ժողովուրդը: Այդ բոլորը խոսվում, շինվում, սարքվում են Կ. Պոլսում»:⁸¹

Այսպիսով, շեյխ Օբեյդուլլայի շարժումը սուլթանական կառավարության համար կարծես թե չարիքից վերածվում էր բարիքի: Նա այլևս — չէր վախենում այդ շարժումից, ընդհակառակը խրախուսում էր, որովհետև «կարծում էր այդպիսով ստեղծել մի քրդական միություն, որ քաղաքական ուժով գործիք կդառնար իր ձեռքում, իսկ անկախության գաղափարը հեշտ կարելի էր մոռացության տալ»:⁸²

Հայ ժողովրդի դեմ նյութվող այդ ահավոր դավի օրերին Աբդուլ Համիդ II-ը օրորում էր Ներսես Վարժապետյան պատրիարքին, աշխատելով նրան հավատացնել, որ «բարեխնամ» կառավարությունը շահագրգռված է հայկական բարենորոգումների շուտափույթ իրականացման հարցում: Որպեսզի պատրիարքը հավատ ընծայի իր խոսքերի «անկեղծությանը», սուլթանը հայտարարեց, թե ինքը իրավունք է շնորհում, որ հայերը փայտի իրական հիմունքներով ընկերություն կազմեն Հայաստանում ճանապարհներ, երկաթուղի, գործարաններ և այլն կառուցելու համար: Որ Տրապիզոնի մոտ գտնվող Ռիզե նավահանգիստը ինքը նվիրում է այդ ընկերությանը՝ իբրև ապագա «ինքնօրեն Հայաստանի համար Պոլսո հետ ուղղակի հաղորդակցության մի որոշ հենակետ», որ արտոնում է պատրիարքին գործածել հայկական զինադրոշմ իր պաշտոնական նամակների ճակատին և թե «ի մի բան՝ մեծ, երջանիկ ապագա է խոստացված հայ ազգին, յորում նա պիտի մոռանա իր անցյալ բոլոր ցավերն ու վիշտերը»:⁸³

Իսկապես, սուլթանի «խաղը» վարպետ դիվանագետի խաղ էր: Եթե հայերը հավատ ընծայեին այդ խաղին և Արևմտյան Հայաստանում «խաղաղվեին» ու հետևաբար իր համար «խնդիրներ» չստեղծեին, օսմանյան կառավարության համար ամեն ինչ «կնկներ իր տեղը»: Հակա-

ռակ դեպքում ստացվում էր, որ ինքը հայերի համար արել է ամեն ինչ, տակայն նրանք չեն անսացել իր «հայրական» խորհուրդներին, գնացել են «դավաճանության» և «ըմբոստացման» ճանապարհով, հետևաբար ապագա հավանական իրադարձությունների ողջ պատասխանատվությունն ընկնելու է նրանց վրա:

Կասկածից վեր է, որ շեյխ Օբեյդուլլան հիանալի գիտակցում էր օսմանյան կառավարության շահագրգռվածությունը քրդերին որպես հայերին և Հայկական հարցին հակազդող ուժի օգտագործելու հետին նպատակը: Ուստի աշխատում էր այդ շահագրգռվածությունն օգտագործել հօգուտ իր քաղաքական շահերի: Ուշագրավ է 1880 թ. վերջին Շամհինանում տեղի ունեցած քրդական առաջնորդների հավաքում նրա արած հայտարարությունը. «Եթե մինչև այժմ Բ. Դուռը ամեն կերպ աջակցում է քրդերին, ապա դա արվում է Անատոլիայում նրանց քրիստոնեական տարրերին հակազդելու նպատակով, և եթե այստեղ հայերը ոչնչացվեն, ապա այդ դեպքում քրդերը կկորցնեն իրենց նշանակությունը թուրքական կառավարության աչքում»:⁸⁴ Արդ, եթե նա չէր ցանկանում գործիք դառնալ թուրքական կառավարության ձեռքում հայերին ոչնչացնելու կամ նրանց բաղձանքները զսպելու հարցում, ապա ո՞րն էր նրա նպատակը: Ամենայն հավանականությամբ շեյխը ձգտում էր Հայկական հարցի օրինակով քրդական խնդիրը ևս դնել միջազգային դիվանագիտության ատյաններին՝ հանուն իր գլխավոր նպատակի՝ Անկախ Քրդստանի իրականացման: Անշուշտ չի բացառվում, որ նա ուներ ներքին մտահոգություն, որ Հայկական հարցի լուծումից քրդերը կտուժեն: Ուստի նա փաստորեն Հայկական հարցին հակադրում էր քրդականը, չգիտակցելով, որ նախ դրանք անխզելիորեն կապված են իրար հետ, և ապա իր այդ քայլով կամա թե ակամա ինքը ծախողման է մատնում և մեկի և մյուսի լուծումը:

Օբեյդուլլան ոչ միայն չէր ցանկանում սուլթանի ձեռքին դառնալ պարզ գործիք, այլև ատելությամբ էր լցված դեպի նրա իշխանությունը: Դա հստակ երևում է 1880 թ. օգոստոսի սկզբին Ների գյուղում տեղի ունեցած Օսմանյան կայսրության և Իրանի քրդական ցեղերի ամենաազդեցիկ հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների ժողովում նրա ելույթից, որն աչքի էր ընկնում իր շեշտված հակաթուրքական ուղղվածությամբ: Այդ ելույթում նա նշեց, որ օսմանները իրենց իշխանությունը ձեռք են բերել անօրինական ճանապարհով, քանի որ ըստ շարիաթի սուլթանը որպես խալիֆ պետք է սերված լինի Մուհամմադ մարգարեի սերնդից, իսկ քանի որ դա այդպես չէ, հետևաբար օսմանների գերակա իշխանությունը մահմեդական աշխարհի նկատմամբ անօրինական է: Թուրքերին մեղադրելով նաև հավատուրացության մեջ, Օբեյդուլլան ձեռնոց մետեց նրանց դեմ, հայտարարելով, որ իրենց 400-500-ամյա գոյության ընթացքում օսման-

ները հրաժարվեցին շարիաթից և օրենքներն ընդունեցին գյավուրներին:՝⁸⁵

Օբեյդուլլան «անկախ Քրդստան» ստեղծելու գաղափարը մտադիր էր իրականացնել երկու փուլով: Այդ առթիվ Ներիի համաքրդական ժողովում նա հայտարարեց. «Քանի որ Քրդստանի մի մասը պատկանում է Պարսկաստանին, ապա պատերազմ սկսելով թույլ կողմի դեմ, մենք կազատագրենք մեր եղբայրներին և տեղ դառնալով այնպիսի հարուստ և բարեբեր երկրի, ինչպիսին Ատրպատականն է, մենք անսպառ հնարավորություններ կունենանք պատերազմելու մեր մյուս թշնամու՝ Օսմանների հետ»:⁸⁶

Օբեյդուլլան գտնում էր, որ իր այդ ծրագիրը բարեհաջող իրականացման իրական հիմքեր ունի մանավանդ այն պատճառով, որ թուրք-իրանական հարաբերությունները այժքի են ընկնում իրենց լարվածությամբ հատկապես սահմանային հարցերի կապակցությամբ: Բացի այդ, Իրանի պահանջով Բեռլինի կոնգրեսը Թեհրանին էր վերադարձրել ռազմավարական առաջնակարգ կարևորություններ կայացնող Ղոթուրի շրջանը, առաջ բերելով սուլթանի դժգոհությունն ու գայրույթը: Իսկ դա նշանակում էր, որ Ստամբուլը դեմ չի լինի, որ ապստամբ քրդերը ներխուժեն Իրանի տարածքը և ավերիչ ասպատակ սփռեն այնտեղ: Օբեյդուլլայի հաշվարկը կառուցված էր նաև այն բանի վրա, որ Իրանական Քրդստանի քուրդ բնակչության մեծամասնությունը սուննիթներ են, որոնց շրջանում շեյխը վայելում էր մեծ հեղինակություն: Բացի այդ, Իրանի քրդերը թշնամանքով են լցված դաջարական պետության նկատմամբ, որի ծանր հարկային քաղաքականությունը, պարսկական վարչական մարմինների կամայականությունները և այլն առաջ են բերել քրդերի ատելությունը: Թավրիզում ռուսական գլխավոր հյուպատոսը կանխատեսում էր, որ Իրանի քրդերը զրկաբաց կընդունեն շեյխին՝ որպես իրենց «ազատարարի և զլխովին կանցնեն նրա կողմը»:⁸⁷

1880 թ. սեպտեմբերին Օբեյդուլլայի ջոկատները ներխուժեցին Իրան: Արշավանքի նախօրյակին շեյխը հրապարակեց հրամանագիր (ֆեթվա), որով խստով կարգադրում էր բոլոր քրդերին չկողոպտել ու չկոտորել հայերին ու ասորիներին: Նա հորդորում էր, որ բոլոր քրիստոնյաները իրենց տների վրա կախեն կապույտ դրոշներ, որպեսզի արշավող բանակը նրանց չվնասի: Սակայն, չնայած այս նախազգուշական միջոցներին, տարված լինելով կողոպուտի մոլուցքով, քրդական ջոկատները սկզբում կազմակերպեցին հայերի մասնակի ջարդեր, իսկ ապա արշավանքն Իրանում ուղեկցվեց տեղական քրիստոնյա (հայ, ասորի) և մահմեդական (պարսիկ, ալի-իլլահի քրդեր և այլն) բնակչության ահավոր կոտորածներով ու կողոպուտով: Դրանով փաստորեն գերեզմանվեց շեյխի ծրագրած

քաղաքական գործի բարոյական մասը, որի հետևանքը հանդիսացավ այն, որ Իրանում բնակչությունը չցանկացավ համագործակցել նրա հետ:⁸⁸

Թեև Սիմեոն Չիլինկիրյանը, որը Օբեյդուլլայի «բանակում» ստացել էր սարդարի (բարձրաստիճան հրամանատար) կոչում և օժտված էր կարևոր լիազորություններով, աշխատում էր կանխել քրիստոնյաների կոտորածն ու կողոպուտը,⁸⁹ սակայն դա նրան չհաջողվեց, որովհետև «բանակը» վեր էր ածվել անկառավարելի մի ամբոխի:

Ի վերջո Օբեյդուլլայի արշավանքն Իրան ավարտվեց կատարյալ ծախողմամբ: Առհասարակ նրա շարժումը մարեց առանց որևէ արդյունքի: Կողոպուտով հարստացած աշիրեթապետերը ինքնագլուխ կերպով լքեցին շեյխին:⁹⁰ Այդ շարժման անհաջողությունը ևս մեկ անգամ գալիս էր ապացուցելու, որ քրդերի կողմից ինքնուրույն պետականություն ստեղծելու, անկախություն ձեռք բերելու և միասնության հասնելու ձգտումները դեռևս անիրականանալի երազանքներ են: «Քրդերի մոտ, — մեկնաբանելով այդ իրողությունը, գրում էր քրդական հարցի գիտակ, ռուս զինվորական Պ. Ի. Ավերյանովը, — ազգային ինքնագիտակցություն գոյություն չունի. նրանց մոտ բացակայում է հայրենասիրությունը քրդական-ազգային իմաստով. առկա է միայն սերը ազատության նկատմամբ և կապվածությունը իրենց ցեղապետին և երկրի այն կտորին, որի վրա բնակվում է ցեղը: Առանձին անձանց փորձերն անկախ քրդական պետություն ստեղծելու ուղղությամբ հաջողություն չեն ունեցել, մնալով որպես զուտ տեղական երևույթ և չեն ընդգրկել ամբողջ Քրդստանը: Ազգային այն գաղափարները, հանուն որոնց գործել են Բադրխանը, Եզդանի-չիրը, Օբեյդուլլան և մյուս նշանավոր քրդերը, անզոր գտնվեցին ողջ քուրդ ժողովրդին ներգրավելու և բարձրացնելու համար»:⁹¹

1880 թ. նոյեմբերին Օբեյդուլլայի ջոկատներն իրանում հիմնականում ջախջախված էին: Շահական կառավարությունը Բ. Դեմից համառորեն պահանջում էր ձերբակալել և պատժել շեյխին և քրդական մյուս առաջնորդներին: Այդ պահանջը աջակցություն գտավ նաև Անգլիայի և Ավստրիայի կողմից: Ստամբուլում անգլիական դեսպան Գոշենը թուրքիայի առջև պայման դրեց՝ «կամ պատժել Օբեյդուլլային, կամ նրան հանձնել Պարսկաստանին»:⁹² Թուրքական իշխանությունները ձերբակալեցին շեյխին և տարան մայրաքաղաք՝ սուլթանի դատին: Ստամբուլում շեյխը ապրում էր «պատվավոր գերու» կարգավիճակով: Սակայն 1882 թ. օգոստոսին լուրեր տարածվեցին Կոստանդնուպոլսից Օբեյդուլլայի փախուստի մասին: Նա վաճառականի հագուստով և կեղծ փաստաթղթերով նստեց ռուսական մի նավ և մեկնեց Փոթի, այնուհետև դեգերելով Թիֆլի-

սում, Երևանում, Իգդիրում, Բայազետում ու Ալաշկերտում հասավ Յաջարի:

Շատ երևույթին, իր անհաջող շարժումից նա քաղել էր որոշակի դասեր: Շեյխը պատվիրում էր «իր մարդոց, որ հայոց հետ լավ վարվեն» և ապա հավաստում էր, որ «հայոց հետ թշնամաբար վարվիլը մինչև այժմ սխալ քաղաքականությամբ եղած է»:⁹² Չայտմովել է կարծիք, որ «Օրեյ-դուլլան գուցե վերստին որոճում էր ազատ Բուրդիստանի համար պայքարի նոր, թերևս հայ-քրդական դաշնակցության և նման այլ մտահղացումներով շաղախված ծրագրեր»,⁹³ որը Օսմանյան իրականության պայմաններում, անշուշտ, անիրականանալի մի բան էր:

Ապստամբության անհաջողությունից հետո Ալաշկերտի շեյխ Խալիֆին գրած իր նամակում Օրեյդուլլան խոստովանում էր, որ քրդական առաջնորդների կողմից թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ մեծ վնաս հասցրեց շարժմանը: «...Այնուամենայնիվ, - գրում էր նա, - ես ավելի շատ հավատում եմ հայերին, քան պարսիկներին և թուրքերին: Մեզ համար ավելի լավ է միավորվել հայերի հետ, քան պարսիկների և թուրքերի, քանի որ պարսիկները մեզ ատում են, իսկ թուրքը ցանկանում է մեզ վերածել իր քաղաքականության գործիքի»: «Նղբայր իմ, - շարունակում էր շեյխը, - ես խնդրում եմ քեզ, որպեսզի դու դադարեցնես հայերի նկատմամբ հալածանքները և անբարյացակամ վերաբերմունքը: Մենք քրդերս ապրում ենք հայերի մեջ, թող նրանք թուրքական կառավարության նկատմամբ վերաբերվեն ինչպես ցանկանում են, բայց դու մի լսիր և մի հավատա ոչ ոքի, որովհետև վերջին փորձը համոզեց ինձ, որ մենք թուրքերի ձեռքին խաղալիք ենք և ոչինչ ավելի»:⁹⁴

Շարժման պարտությունից հետո սուլթանական կառավարությունը կորցրեց հետաքրքրությունը Օրեյդուլլայի նկատմամբ, նաև համոզվեց, որ նա այն մարդը չէ, որի վրա կարելի է հույս դնել երկրի արևելքում քաղաքական կոմբինացիաներ իրականացնելու, հատկապես Չայկական հարցին հակազդելու համար: Ուստի մայրաքաղաքից եկավ բարձրագույն հրաման՝ ձերբակալել շեյխին և աքսորել:⁹⁵ Սուլթան Աբդուլ Չամիդ II-ը իրեն հատուկ դաժանությամբ և տմարդի վարվեց շեյխի հետ: Նրա կանանոցը հանձնեց թուրք ասկյարների քմահաճույքին, իսկ շեյխին արգելեց հագնել շեյխական հագուստ: 1883 թ. Օրեյդուլլան քսորի ճանապարհին անսպասելի վախճանվեց, հավանաբար ոչ առանց սուլթանի գաղտնի գործակալների մասնակցության:⁹⁶

Այսպիսով շեյխ Օրեյդուլլայի շարժումը ևս, նախորդ քրդական շարժումների նման ավարտվեց պարտությամբ: Նրանից որոշակի դասեր քաղեց նաև սուլթանական կառավարությունը: Աբդուլ Չամիդը հետևողականորեն սկսեց համախմբել քրդական շեյխերին պանիսլամիզմի, խալի-

ֆայության շուրջը: Դրա նպատակն էր օտարացնել նրանց ազգային ինքնուրույնության գաղափարներից՝ համախմբելով իսլամի շուրջը: Բացի այդ, ավելի լայնորեն ու հետևողականությամբ Բ. Դուռը սկսեց իրականացնել քրդական ցեղերի միջև երկպառակություններ ու թշնամանք բորբոքելու քաղաքականությունը: Այսպես, 1884 թ. Մուշի մութեսարիֆը գժտեցրեց հիշյալ սանջակի երկու խոշոր՝ հասանանլի և ջիբրան ցեղերին: Այդ քաղաքականության հետևանքով պարբերաբար ցեղերի միջև տեղի էին ունենում զինված ընդհարումներ: Շատ հաճախ անհնազանդ քրդական ցեղերին խաղաղեցնելու նպատակով կառավարությունը նրանց դեմ էր հանում էթնիկական այլ տարրերի՝ չեչենների, լեզգիների, չերքեզների, լազերի, օսերի և լեռնական այլևայլ ժողովուրդների ու ցեղերի:⁹⁷ Օսմանյան դավադիր «բաժանիր որ տիրես» քաղաքականությունը հեշտանում էր նրանով, որ ողջ կայսրության տարածքում և հարևան Իրանում հսկայական տարածքների վրա սփռված քրդական ցեղերը տարաբաժանված էին միմյանցից ցեղային, կրոնական (սուննիներ, շիաներ, ալի-իլլահիներ կամ ղզլբաշներ) և այլ հատկանիշներով և հաճախ տարբեր պատճառներով մեկը մյուսի նկատմամբ գտնվում էին թշնամական հարաբերությունների մեջ: Վաչկատուն կամ աշիրեթային քրդերը բաժանվում էին ցեղային խոշոր միավորումների, ցեղերի ու տոհմերի: Առավել խոշոր ցեղային միավորումներն էին հայդերանը (զիլյան, սիվիքի, ջիբրան, միլյան, զիբքան, ադաման և այլ ցեղերից բաղկացած), որոնք բնակվում էին գլխավորապես Արևմտյան Չայաստանի տարածքում, շեքքաք՝ որոնց բնակության վայրը թուրք-իրանական սահմանամերձ շրջաններն էին, Վանի վիլայեթի մեջ մտնող Չաքյարիի շրջանի քրդերը, որոնք բաղկացած էին օրամար, շենդիման, ջելու, խարքի, բարզան, բահդիման, բոհթան, ջելալի և այլ ցեղերից, Սոուջբուլաղի շրջանում գերակշռում էին մուլքի ցեղի քրդերը, Քերմանշահի (ներկայումս՝ Բախթարան) քելիոր և սենջաքի քրդերը, հյուսիսային Իրաքում բաբան, համավենդ և այլ բազմաթիվ ցեղեր:

Այս բոլոր ցեղերի գլխավոր զբաղմունքը քոչվորական անասնապահությունն էր, առավելապես ոչխարաբուծությունը:

Նախկինի պես երկրի արևելքում կառավարության քաղաքականության անկյունաքարը շարունակում էր մնալ հայ-քրդական հարաբերությունների սրումը: Դեմ առ դեմ կանգնած լինելով այդ ահեղ ու վտանգավոր մարտահրավերի հանդիման, արևմտահայ գործիչները անվիատ շարունակում էին ուղիներ որոնել այդ կնճռոտ խնդրին ինչ-որ լուծում տալու համար: Կրկին վերելք ապրեց քրդերի շրջանում լուսավորություն տարածելու շարժումը: Այդ շարժման հետևորդ գործիչները գտնում էին, որ հայերը ոչ թե պետք է զենքով կռիվ մղեն քրդերի դեմ, այլ նրանց վրա

ներգործեն կուլտուրական միջոցներով: Նրանց կարծիքով միայն այդ ճանապարհով էր հնարավոր կանխել քրդերի՝ թուրքական կառավարության ձեռքում հակահայ գործիք դառնալու վտանգը: Այս տեսակետի կողմնակից հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ այն համոզումն ունեին, թե քանի որ Արևմտյան Հայաստանում հայերը դատապարտված են քրդերի հետ ապրելու միևնույն տարածքում և նրանց անջատումն անկարելի է, ուստի պետք է ջանալ նրանց մերձեցնել կենցաղով, մշակույթով և այլն, հնարավորին չափ աշխատելով համահարթել նրանց միջև եղած ազգային, կրոնական, սոցիալական, քաղաքական ու մշակութային տարբերություններն ու հակասությունները: Նրանք ի հարկե գիտակցում էին, որ թուրքական արհավիրքին դիմագրավելու միակ ճանապարհը հայերի ու քրդերի միավորումն է, հակառակ դեպքում վաղ թե ուշ երկու ժողովուրդներն էլ թուրքական պետության զոհը կդառնան: Ի դեպ, այս տեսակետի համոզված կողմնակիցն էր նաև Մկրտիչ Խրիմյանը:⁹⁸

«Մշակը» ևս գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն անմիջականորեն կապված է հայ և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարի հետ: «Հայաստանի՝ թե՛ հայ, թե՛ ասորի և թե՛ քուրդ ազգաբնակչությունները, — գրում էր Գրիգոր Արծրունին, — վերջապես սկսում են հասկանալ, թե բոլորն էլ հայաստանցի են, թե բոլորի շահերը նույնն են, թե Շնչումը, որ նրանց վրա գործում է Թուրքիան, հավասարապես ամենքի վրա է ծանրանում, թե լինելու ինքնավարությունը հավասարապես Հայաստանի բոլոր բնակիչներին նոր կյանք պետք է շնորհի»:⁹⁹

Անշուշտ այս հարցադրումը միանգամայն ճիշտ էր, սակայն իրողությունները շատ հեռու էին դրանից: Բոլոր դեպքերում առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով, հայ գործիչները լծվեցին եռանդուն գործունեության: 1880-ական թվականներին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում նրանք կազմակերպեցին մի շարք ընկերություններ, որոնք իրենց առջև խնդիր էին դրել դպրոցներ բացել քուրդ երեխաների համար: Դրանցից հիշատակության արժանի են, օրինակ, Դիարբեքի մահանգում «Դպրոցական արևելյան» և «Խիզանի» ընկերությունները, որոնց ջանքերով քրդական դպրոցներ բացվեցին Մուշի, Բիթլիսի և Ալաշկերտի շրջաններում:¹⁰⁰ «Ազգամվեր հայուհեաց» ընկերությունը Քղի քաղաքում մի դպրոց բաց արեց, որտեղ ուսանելու համար դիմել էին ավելի քան 100 քրդուհիներ:¹⁰¹ Այնուհետև Կոստանդնուպոլսում ստեղծվեցին կրթական ընկերություններ, որոնց նպատակն էր քրդաբնակ վայրերում հայերեն լեզվով դպրոցներ բացելը: Դրանցից հատկապես աչքի էր ընկնում «Դպրոցասիրաց ընկերությունը», որի նպատակն էր մասնավորապես Խի-

զանի և Սղեռդի քուրդ բնակչության շրջանում լուսավորության տարածումը:¹⁰²

Այն ջանքերը, որոնք հայ իրականության մեջ գործադրվել են նշված ուղղությամբ, դժբախտաբար մեզ հասած փաստերի սակավության պատճառով մնում են աղոտ: Սակայն մի բան ակնհայտ է, որ «... ոչ մի ազգ քուրդ ժողովրդի լուսավորության ասպարեզում այնքան գործ չի կատարել, այդ ուղղությամբ այնքան չի մտահոգվել, որքան հայ ժողովուրդը»:¹⁰³

Քրդերի շրջանում հայ գործիչների կատարած լուսավորչական աշխատանքը գնահատելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը Մերձավոր արևելքի քրդաբնակ ողջ տարածքում գոյություն չուներ և ոչ մի քրդական դպրոց, լույս չէին տեսնում քրդերեն գրքեր, պարբերականներ և այլն:

Անշուշտ XIX դ. 80-ական թվականներին հայ իրականության մեջ կային նաև մարդիկ, որոնք գտնում էին, որ քրդերի շրջանում լուսավորություն տարածելու միջոցով հայ-քրդական հարաբերությունների լարվածության թուլացման հասնելը անհուսալի ու անհեռանկար գործ է: Նրանց կարծիքով «քրդին պետք է պատժել, որ քրդի հետ չի կարելի այլ լեզու բանեցնել»: Տարածում էր գտել նաև մեկ այլ տեսակետ, ըստ որի չարիքից փրկվելու համար անհրաժեշտ է քրդերի շրջանում քրիստոնեություն տարածել: Այս տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ օսմանյան աստվածապետական բնույթ ունեցող պետության մեջ, որը միաժամանակ իրենից ներկայացնում էր տարբեր դավանանքների հետևող ազգերի ու ժողովուրդների մի խառնարան, կրոնը հանդես է գալիս որպես այդ ժողովուրդներին տարանջատող և միմյանցից հեռացնող գործոն: Այդ տեսակետի կողմնակիցների կարծիքով պատկանելությունը իսլամին քրդերին ներշնչելու է նաև բացառիկության և տիրապետող ուժ հանդիսանալու զգացողություն: Որ առհասարակ օսմանյան աստվածապետության իսլամական էությունը հիմնարար դեր է խաղում այդ պետության իրավական կազմակերպության մեջ, մի հանգամանք, որի հետ չի կարելի հաշվի չնստել: Հետևաբար պատկանելությունը երկու տարբեր կրոնների, որոնցից մեկի հետևորդները հանդես էին գալիս որպես տիրապետող ազգ (milliet hakime), իսկ մյուսը իրավազուրկ ռայա կամ «հանդուրժվող անհավատներ», ինքնըստինքյան նրանց միջև առաջ էր բերելու կոնֆլիկտային իրավիճակ: «Մշակը» այդ առթիվ գրում էր. «Վաղուց է արդեն, որ հայերը կարող էին իրենց դպրոցների մեջ ասորի, քուրդ, եգիպտացի և այլ ցեղերի զավակներին ընդունել, ազդել նրանց վրա, բարոյապես տարածել քրիստոնեությունը մահմեդական փոքրիկ ցեղերի մեջ...»:¹⁰⁴ «Հայերը և քրդերը» հոդվածում Գր. Արծրունին այդ հարցը դնում էր ավելի շեշտված ձ-

եով. «...Չայերը դարձյալ ոչինչ ջանք չեն անում քրիստոնեությունը և քաղաքակրթությունը տարածելու իրենց ճնշողների մեջ, որպեսզի քաղաքակրթեն նրանց, մեղմացնեն նրանց բարքն ու վարքը և, այսպիսով, ապագայում ապահովացնեն իրանց սեփական խաղաղ գոյությունը...»: «Չայոց ազգությունը, — շարունակում է նա, — անընդունակ հանդիսացավ հայացնել ջուրդ բարբարոս ավազակներից»:¹⁰⁵

Սակայն քրդերի շրջանում քրիստոնեությունը տարածելու այս առաջարկները, ինչպես և պետք էր սպասել, թերթային հոդվածներից ու առանձին ելույթներից այն կողմ չանցան: Իրավացի չէ Լեոն, երբ առանց խորամուխ լինելու հարցի բուն էության մեջ գրում է. «Բայց ցավն այն էր, որ հայ ազգայնականները հայ-քրդական բարեկամությունն այն մտքով չէին հասկանում, թե երկու դարավոր դրացի ազգերը համահավասար անդամներ պիտի լինեն այն մերձեցման մեջ, թե պիտի հարգվեն ազգային առանձնահատուկ արժեքները: Ո՛չ, քրդերին ենթարկում էին հայկական կուլտուրային՝ նրանց այս միջոցով ապագայնացնելու, հայերի հետ ծուլելու համար»:¹⁰⁶

Եղան նաև հայ գործիչներ, որոնք անմիջական շփման մեջ մտնելով քրդերի հետ, աշխատում էին ինչ-որ չափով մեղմացնել հայ-քրդական լարված հարաբերությունները: Դրանցից էր, օրինակ, Մշո դաշտի Չակոբ Սարկավազը, որը շեյխի տարազ հագնելով այցելում էր քրդական շրջանները և քարոզում հայ-քրդական եղբայրություն:¹⁰⁷

Սակայն քրդերի հետ համակեցության ձևեր գտնելու, նրանց լուսավորելու ճանապարհով քաղաքականապես ավելի հասուն դարձնելու և սուլթանական բռնակալության դեմ պայքարի հանելու հայ գործիչների բոլոր փորձերը շոշափելի արդյունքների չհանգեցրին: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Ալպոյաճյանը՝ «հայ և քուրդ ժողովուրդներու միջև եթե հասկացողություն մը ստեղծված ըլլար, թե մեր և թե անոնց ճակատագիրը տարբեր հանգամանք կը ստանար»:¹⁰⁸

Անշուշտ քուրդ ժողովրդի մեջ ևս կային մարդիկ, որոնք գիտակցում էին, որ սուլթանական կառավարությունն է երկու հարևան ժողովուրդների միջև թշնամանք բորբոքողը: Քրդական հարուստ ժողովրդական բանահյուսության մեջ բազմիցս արժարժվում է այդ միտքը: «Քրդերը, — հայ գործիչներից մեկի՝ Արսեն Թոխմախյանի հետ զրույցի ժամանակ ասում է հայտնի ցեղապետ Չուսեյին աղան, — չարագործ ձեռքերում միմիայն գործիքներ են. կտրեցեք այդ ձեռքերը և քրդերը կը մնան հայերի մշտենցեմավոր բարեկամները»:¹⁰⁹

Շարունակելով զարգացնել իր միտքը, Չուսեյին աղան հայտնում է այն կարծիքը, որ հայկական հարցը լուծելու համար հայերը չպետք է եվրոպական տերություններից «ողորմություն հայցեն», որովհետև «եւրո-

պական տերութեանց վրա յույս դնելու համար ևս դարձեալ ոյժ է հարկաւոր: Ին կարծեօքս, նա միայն իրաւունք ունի յոյս դնել օտար ույժի վերայ, երբ ինքն էլ ույժ ունի: Փոխաւորութեան դրամազուլիւր հաւատում են ոչ թե անձնաւորութեան, այլ նորա ստացուածքին կարողութեան»: «Խելքս քուրդովին չէ հասնում, — շարունակում է նա, — թէ առանց արիւնի և գէնքի գործ առաջ գնայ, յաղթութիւն լինի»: Նա գտնում է, որ «հայերը իւրեանց յոյսը պիտի դնէին գլխաւորապէս իւրեանց վերայ և հետեւաբար քրդերի և ասորիների վերայ. դա մի բնական դաշնակցութիւն է, որովհետև հայոց խնդիրը միաժամանակ քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի և ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ իւրեանց գործին կօգնեն»:¹¹⁰ Քրդերի և ասորիների շրջանում ուսումնարաններ բաց անելը Չուսեյին աղան համարում էր ուղղակի հայերի պարտականությունը:

Սակայն դժբախտաբար այս կերպ մտածող քուրդ ցեղապետ-ավատատերերի թիվը մեծ չէր: Դժբախտությունը նաև այն էր, որ քրդերը դեռ չունեին մամուլ, հրատարակություններ և այլն, և այս կամ այն անհատի տեսակետները չէին կարող դառնալ հանրության սեփականությունը: Մյուս կողմից՝ քրդական զանգվածների ծայրահեղ հետամնացությունը, նրա կրոնական մոլեռանդությունը, ցեղային աշիրեթական կարգերի առկայությունը և այլ գործոններ թույլ չէին տալիս, որ քուրդ ժողովուրդը հասկանա, թե ինչ նպատակներ է հետապնդում օսմանյան կառավարությունը թշնամանք սերմանելով հայ և քուրդ ժողովուրդների միջև և ինչ հետևանքներ կունենա այդ քաղաքականությունը երկու դրացի ժողովուրդների պատմական ճակատագրի համար:

XIX դ. 80-ական թվականներին օսմանյան կառավարության կողմից արևմտահայության սոցիալական և ազգային ճնշումը զնալով ուժեղանում էր: Այդ քաղաքականության իրագործման ձևերը բազմաթիվ էին, որոնցից մեկն էր նաև հայերի ունեզրկումը հողային հափշտակումների ճանապարհով: Կառավարությունը երաշխավորում էր քրդական բեկերին, աղաներին և այլն, որ հայերի հողերն ու ունեցվածքը բռնագրավելու և նրանց հալածանքների ենթարկելու համար նրանք ոչ մի պատիժ չեն կրի: Իշխանությունների հորդորներով քրդական բազմաթիվ աշիրեթներ զանգվածորեն լեռներից սկսեցին իջնել դաշտավայրերը և հաստատվել հայկական գյուղերում: «Թափու դայիրեսի» հողային վարչությունը կառավարությունից հրահանգ ուներ՝ ամեն կերպ աջակցել քրդական ավատատերերին հայ գյուղացիության հողերը սեփականացնելու գործում:

Մայրաքաղաքից Արևմտյան Հայաստան եկած թուրք պաշտոնյաներից մեկը խոստովանում էր, որ այդ գործը կատարված է «Կոստանդնուպոլսե եկած հրամաններու համեմատ»:¹¹¹

Վրթաճեն Փափազյանը, որը 1887 թ. այցելել էր Արևմտյան Հայաստան, այնտեղից գրում էր. «Ամբողջ Վասպուրականի հողերի 3/4 մասը պատկանում է... տաճիկների և քուրդ աղաների, որոնց մշակող մարաբաներն են գյուղի բնակիչները այն պայմանով, որ բերքի տասանորդը կառավարության տալուց հետո՝ մնացյալը կիսվի տիրոջ և մարաբայի մեջ: Սակայն պիտի տեսնել, թե ինչպես հողատերը անդադար խմբերով գալիս է իր մարաբայի տունը իջնում, ուտում, խմում, տանում, ընծաների խոստում առնում... Վա՛յ այն մարաբային, որ չտա իր քուրդ հողատիրոջ ու՝ զածը»:¹¹² Լեռնի արտահայտությամբ «Գավառներում կառավարությունը սանձից արծակել էր քրդերին, իսկ հայերին դրել էր օրենքից դուրս, անտանելի վիճակի մեվջ»:¹¹³

Նկարագրելով արևմտահայության վիճակը, Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» հանդեսը գրում էր. «Այն պահուն, ուր Ափրիկեի գերեվաճառության ջնջման խնդիրն ընդհանուր ուշադրության առարկա եղած է, անկարելի է ուշադրություն չհրավիրել Հայաստանի տառապանքներուն վրա, ուր գերություն ամեն օր ի գործ կը դրվի ի վնաս քրիստոնյա ժողովրդի մը՝ մահմեդական պեյերու և աղաներու ձեռքով»:¹¹⁴

80-ական թվականների երկրորդ կեսին հայ գյուղացիների նկատմամբ իր չարագործություններով հատկապես հայտնի էր ջիբրան ցեղի քուրդ ցեղապետ Մուսա բեյը՝ Մշո դաշտի «ժանտախտը»: Նրա մասին ռուս թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին գրում է. «Նրա համար աշխատում էին մինչև 80 հազար քրդեր, որոնք անվերապահորեն ենթարկվում էին նրան, նրա առջև դողում էր ողջ գավառը»:¹¹⁵ Մուսա-բեյի քստմնելի «գործերը» աղմկալի հռչակ էին ստացել, նույնիսկ գրավելով եվրոպական տերությունների ուշադրությունը:

Բ. Դուռը ստիպված էր Մուսա բեյին ձերբակալել և դատի տալ: Հենց մայրաքաղաքում տեղի ունեցած այդ դատը իրականում դատաստանական խեղկատակություն էր, որովհետև դատից առաջ սուլթանը անգլիական դեսպանին հայտարարել էր, թե Մուսա բեյն անմեղ է: Իսկ Աբդուլ Համիդի լիազորը աշխատում էր հանգել Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանին, թե հայերի իրավագրկության և քրդերի չարագործությունների մասին լուրերը խիստ չափազանցված են և մայրաքաղաք կանչված Մուսա բեյին որևէ խնդրով հնարավոր չէ մեղադրել: Մարդասպան-ավազակի նկատմամբ Բ. Դռան վերաբերմունքի ներքին ծալքերը բացահայտվում են հետևյալ փաստով. երբ ձերբակալված Մուսա բեյին ոստիկանները տանում էին մայրաքաղաք, Էրզրումում նա տեղի հայերից մե-

կին ցույց է տալիս Ստամբուլից դուրս եկած մի շարք նամակներ, որոնցում Էրզրումի, Բիթլիսի և Վանի կուսակալներին կարգադրվում էր «բոլոր միջոցներով հարստահարել և հալածել հայերը»:¹¹⁶ Դատավարության ժամանակ Մուսա բեյը սպառնում էր թուրքական իշխանություններին, որ եթե դատարանը իրեն մեղավոր ճանաչի և դատապարտի, ապա նա «կիրատարակե այն բոլոր նամակները, որոնց մեջ գավառական նահանգապետները նրան դրդում են մղել այն արշավանքները հայերի դեմ...»:¹¹⁷

Ի վերջո համիդյան արդարադատությունը անմեղ հռչակեց Մուսա բեյին և ազատ արձակեց: Այդ դատից հետո «Եվրոպայի ընդհանուր կարծիքն էր, թե ... հայերն այլևս ոչինչ սպասելիք չեն կարող ունենալ թուրք կառավարությունից, որ նրանք օրենքից դուրս են դրված»:¹¹⁸

Նույնիսկ գերմանական մամուլը, որն աչքի էր ընկնում իր թուրքապաշտպան դիրքով, հավանություն չտվեց սուլթանի այդ քայլին, գտնելով, որ Մուսա բեյի անպարտ արձակումը քաղաքական մեծ հետևանքներ կունենա, նախ, որ Գլադստոնի կառավարությունը առիթը բաց չի թողնի այդ միջադեպը իր շահերի օգտին ծառայեցնելու համար և ապա՝ դա ջուր կլցնի Ռուսաստանի ջրաղացին:

Եվրոպայի միջամտությունը Մուսա բեյի դատին էլ ավելի գրգռեց սուլթանին հայերի դեմ: Կառավարությունը նրանց ներկայացնում էր որպես «դավաճան», «օտարներին ծախված ազգ» և այլն: Թուրքիայում Ռուսաստանի ռազմական գործակալներից մեկը տեղեկացնում էր իր ղեկավարությանը, որ թուրքական կառավարության կողմից մշակվել է մի մանրագին ծրագիր, ըստ որի նախատեսվում է հայ ժողովրդին զրկել օրենքի հովանավորությունից, նրան հասցնել այնպիսի տնտեսական հյուծվածության, որը ստիպեր նրանց փախչել հայրենիքից, պարբերաբար կազմակերպել հայերի զանգվածային ջարդեր, գյուղացիներին դարձնել հողազուրկ՝ նրանց հողերի բռնի զավթման ճանապարհով և այլն:¹¹⁹ Բիթլիսի վիլայեթում իր հակահայկական խժոժություններով աչքի էին ընկնում Խիզանի շեյխ Սեյիդ Ալին, Հաջի Ֆերոն և Բշարե Չատոն:¹²⁰ Խարբերդի վիլայեթի Կոզիչանի կազայում հայության խարազանն էր նույն կազայի կայմական Շահ Հուսեյինը:¹²¹

Օսմանյան կառավարության և քրդական ավատատերերի բռնություններից պաշտպանվելու և նրանց կամայականություններին դիմագրավելու համար մի շարք շրջաններում (Վան, Մուշ, Սասուն, Խնուս, Բուլանըլի-Մանազկերտ և այլն) սկսվեցին հայ գյուղացիության ինքնաբուխ տարերային ինքնապաշտպանական կռիվներ:

1881 թ. Էրզրումում կազմակերպվեց «Պաշտպան հայրենյաց» զաղտնի ընկերությունը, որն իր առջև խնդիր էր դրել՝ պայքարել թուրք

հարստահարիչների, ինչպես նաև քրդական բեկերի ու չերքեզ ավատատերերի բռնությունների դեմ, օգտագործելով պայքարի հայդուկային-հեղափոխական եղանակները:¹²² Շատերին էր համակում այն համոզմունքը, որ անպատիժ բռնությունների և սանձարձակ անիշխանության դեմ թղթե բողոքն անգոր է, պետք է դիմել զենքի:

Կառավարությունը ենթադրում էր, թե ըմբոստության այդ ոգին հրահրվում ու գալիս է դրսից, հատկապես Ռուսաստանից՝ կովկասահայության միջոցով: Մինչդեռ արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը միանգամայն ինքնաբերի էր և դրսից ներմուծված գաղափարների արդյունք չէր: «Յայ բնակչության վիճակը, — գրում էր ռուս զինվորական Ռ. Ի. Տերմենը, — մշտական ճնշումը, որի տակ նա գտնվում է, իրավազրկությունը, հայերի նկատմամբ թուրքական կառավարության գործադրած անարդարությունները հայկական հասարակությանը նախապատրաստեցին հեղափոխական գաղափարների ընկալմանը: Ամենուրեք ձևավորվում էին դժգոհ տարրեր, որոնց շրջանում արտասահմանից եկած հեղափոխականները գտնում էին կենդանի արծազանք»:¹²³ Բաֆֆին նշում էր, որ բռնակալը ինքն է պատրաստում իր համար թշնամիներ... Եթե թուրքը այսպես չվարվեր մեզ հետ, մենք մինչև անգամ կսիրեինք նրան, թող նա մեր մտից ու արյունից չլիներ»:¹²⁴

Գրիգոր Ջոհրապը գրում էր, որ «տաճիկ կառավարությունն առաջին անգամ հայերու վրա չէ, որ ի գործ դրավ ջարդի քաղաքականությունը, այլ հելլեններուն, սերբերուն, բոսնիականներուն, բուլղարներուն համար ալ ըրավ նույնը... Այս պատմական փաստը չգիտնալ, կնշանակե կոտորածները հայ հեղափոխական շարժումներուն վերագրել»:¹²⁵

Արևմտյան Չայաստանում հայ ազգային-ազատագրական շարժումները առաջ եկան ոչ թե ազգային կուսակցությունների հրապարակ գալու հետևանքով, ինչպես պնդում են պատմության թուրք կեղծարարները, այլ ընդհակառակը, այդ կուսակցությունները կազմվեցին հիշյալ շարժումների հետևանքով:

Չայ ազգային կուսակցությունների երևան գալուց հետո սուլթան Աբդուլ Չամիդ II-ի և նրա կառավարության համար ուղղակի մղծավանջ դարձավ երկրի արևելքում հայերի, քրդերի և ասորիների միավորման և գահի դեմ համատեղ ապստամբություն բարձրացնելու գաղափարը: Այդ երկյուղների համար իրական հիմքեր կային, քանի որ նորաստեղծ հայկական քաղաքական կուսակցությունների ծրագրերում այդ հարցը շոշափվում էր: Այսպես, հնչակյան կուսակցության ծրագրում ասվում էր, որ անհրաժեշտ է «վաստակել հայ ժողովրդին վիճակակից, Չայաստանի այն բնակիչների, որպիսիք են ասորիները, քրդերը, համակրությունը դեպի հեղափոխական գործը և նրանց աջակցությունն այդ գործում, որը միա-

ժամանակ հայտնվում է նաև նրանց, իբրև նույն բռնակալության տակ ճնշված ժողովրդի, ազատության գործը»: Չնչակյան կուսակցության «ամենաջերմ իղծն» էր հայտարարվում արևելքում բոլոր փոքր ազգերի «ընդհանուր անկախ դաշնակցությունը»:¹²⁶

1890 թ. կազմակերպված Չայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ծրագրում ևս նշվում էր, որ կուսակցությունը անընդհատ զինված պայքար պետք է մղի թուրքական կառավարության դեմ, նաև այն ընդհանուր պայմանների դեմ, «որոնցմե նեղված են միևնույն ժամանակ թե՛ հայ և թե՛ օտար տարրերը՝ ասորիներ, եզիտիներ, քրդերի մեկ մասը, խաղաղ թուրքեր և այլն: Այս ուղղությունը, իր ընդհանուր նշանակությունից զատ, կարող է եթե ոչ միացնել, գոնե չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական ուժը»:¹²⁷

Անշուշտ թուրքական կառավարությունը միջոցներ ձեռնարկում էր այս դրացի ժողովուրդների համախմբման հնարավորությունը վիժեցնելու համար: Սակայն կիրառվող սովորական միջոցները այլևս բավարար չէին: Անհրաժեշտ էր գտնել նպատակին հասնելու ավելի արդյունավետ և գործունե միջոցներ: Այսպիսով ծնվեց տխրահռչակ համիդիե գնդերի կազմակերպման գաղափարը, որը հղացել էր հայակուլ Շաքիր փաշան:

1890 թ. նոյեմբերին թուրքական թերթերում պաշտոնական կառավարական հաղորդում հրապարակվեց հատուկ ռազմական կազմակերպություն ստեղծելու մասին, որն ի պատիվ սուլթան Աբդուլ Չամիդի կոչվելու էր «համիդիե»: Նրա կազմակերպման գործը հանձնարարվեց Արևմտյան Չայաստանում տեղակայված չորրորդ բանակի մուշիր (մարշալ) Ջեքի փաշային:¹²⁸

Ի՞նչ նպատակներ էր հետապնդում սուլթանական կառավարությունը, ստեղծելով այդ նոր ռազմական կազմակերպությունը: Չետաքրքիր է այդ առթիվ ծանոթանալ ռուսական դիտորդների կարծիքի հետ, որոնք բնականաբար ուշի-ուշով հետևում էին այդ գործին: Գեներալ Պ. Ի. Ավերյանովը, օրինակ, գտնում էր, որ «վերջին ժամանակներս գործ ունենալով Չայակական հարցի հետ, նրան հակազդելու նպատակով թուրքական կառավարությունը որոշել է օգտագործել իրենց հետ դավանակից սուլունի քրդերին, որոնք քաղաքական առումով հանդիսանում են իրենց համար առավել բարեհույս բնակչությունը: Միայն քրդերի շրջանում է, որ Փոքր Ասիայի արևելքում թուրքերը կարող են իրենց համար փնտրել հենարան»:¹²⁹ — եզրակացնում էր գեներալը: Չամիդիե գնդերը առհասարակ կոչված էին ծառայել թուրքական կառավարության ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին քաղաքական նպատակներին: Այդ ռազմական ուժի օգնությամբ Ստամբուլը ձգտում էր Ռուսաստանի դեմ ստեղ-

ծել լրացուցիչ զինվորական պատմեշ, այն դարձնել Իրանի դեմ իրագործվող նվաճողական քաղաքականության գործիք և այլն:

Քրդերին նոր ռազմական կազմակերպության մեջ ներգրավելը հեշտանում էր մի քանի գործոնների հետևանքով: Օրինակ, քրդական ավատական վերնախավը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ընկալում էր որպես իր շահերի դեմ ուղղված շարժում: Ընդ որում, այդ տրամադրությունները մշտապես բորբոքվում էին սուլթանական կառավարության կողմից: «Աբդուլ Չամիդ քյուրտերուն մեջ տարածել տվավ,— գրում էր Փարիզում հրատարակվող «Ամահիտ» հանդեսը,— թե հայերը Ռուսիո հետ համաձայնելով, մտադիր են քյուրտերը ջարդել»:¹³⁰ Այն, որ այդ քարոզչությունը պարարտ հող էր գտնում քրդերի շրջանում, հաստատում էր ռուս զինվորական Ա. Կարցևը. «Չայկական հուզումները մեզնից վանում են քրդերին»,— գրում էր նա:¹³¹

Այնուհետև, առհասարակ քրդերի համար ատելի էր երկարատև ծառայությունը կանոնավոր հետևակում նիզամում: Իսկ այժմ նրանք ծառայելու էին աշիրեթային քրդերի յուրահատուկ զնդերում, ընդ որում իրենց ծառայությունն անց էին կացնելու ոչ թե որտեղ պատահեր, այլ իրենց հարազատ վայրերում: Բացի այդ, ծառայությունը այդ նոր զորամասերում հիանալի վարձատրվում էր. իսկ՝ ամենակարևորը զինվորները ստանում էին բացառիկ մեծ արտոնություններ և իրավունքներ: Չամիդեական սպան կարող էր դատվել միայն զինվորական, բայց ոչ երբեք քաղաքացիական դատարանով: Տեղական իշխանությունները իրավունք չունեին անգամ ձերբակալել նրանց առանց զինվորական պետի թույլտվության: Այլ կերպ ասած՝ համիդեական քրդերը դուրս էին գալիս քաղաքացիական իշխանությունների հսկողությունից և անցնում թուրքական զինվորական իշխանությունների տրամադրության տակ:¹³² Իրենց տրամադրության տակ մի քանի գունդ ունեցող ցեղապետերը ստանում էին ֆերիքի (զեներալ) աստիճան, փաշայի տիտղոս և այլն: Առավելություն էր նաև այն, որ համիդիե զնդերը ձևավորվում էին աշիրեթական սկզբունքով: Այսպես, օրինակ, ջելալի ցեղին պատկանող բոլոր քրդերից ձևավորեցին երկու զնդեր¹³³ և այլն:

Անշուշտ ստեղծելով համիդիե ռազմական կազմակերպությունը, սուլթանական կառավարությունը մտադիր էր իր մշտական հսկողության տակ պահել առավել ուժեղ ու համախմբված և գլխովին զինված աշիրեթային ցեղերին և առհասարակ վերացնել քրդական ցեղերի ինքնագույն ու անկախ վիճակը և նրանց ամբողջապես ենթարկել թուրքական կառավարությանը:¹³⁴

Չամիդիե զնդերի կազմակերպման հրամանագիրը հրապարակվելուց հետո, սուլթանի հրամանով Արևմտյան Չայաստանի և Քրդստանի

բոլոր ազդեցիկ քուրդ ցեղապետերը հրավիրվեցին մայրաքաղաք, որտեղ Աբդուլ Չամիդը բարձր պատիվներ և պատվանշաններ շնորհեց նրանց, խոստանալով ռոճիկ, համազգեստ, զենք, ռազմամթերք և այլն:¹³⁵ Բացի այդ, կառավարությունը որոշում էր ընդունել համիդիե զնդերի մեջ ընդգրկված զինվորականներին հատկացնելու հողակտորներ, զինվոր տրամադրած ընտանիքները ազատվելու էին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից և այլն:¹³⁶ Ըստ էության, համիդիե զնդերում ծառայողները ստանում էին օրենքի առջև անձեռնմխելիության իրավունք:

1892 թ. Կոստանդնուպոլսում և 6-րդ բանակային կորպուսի կենտրոն Բաղդադում բացվեցին այսպես կոչված «ցեղերի համար դպրոցներ» («աշիրեթ մաքթաբլերի»), որոնք թեև կառավարության կողմից հրամայվում էին իբրև քրդերի շրջանում լուսավորություն տարածելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառում, սակայն իրականում այդ դպրոցների նպատակն էր համիդիե զնդերն ապահովել գրագետ սպաներով:¹³⁷ Այդ դպրոցները կոչված էին նաև քրդերին և արաբներին Օսմանյան պետության նկատմամբ հավատարիմ հպատակության զգացումներ ներարկել:¹³⁸ Քրդաբնակ շրջաններում զինվորական դպրոցներ բաց անելու նպատակով սուլթանը միայն իր անձնական միջոցներից հատկացրեց ութ միլիոն թուրքական լիրա:¹³⁹

Թեև պաշտոնական մանուլը հայտարարում էր, թե իբր կառավարության նպատակն է «քոչվոր քրդերին մտցնել քաղաքակրթության ընդդեմ մեջ և կարգապահ դարձնել նրանց հորդաները»,¹⁴⁰ սակայն իրականում ռազմական այդ կազմակերպության օգնությամբ սուլթանը մտադիր էր ջախջախել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը և վերջ տալ Չայկական հարցին՝ Օսմանյան կայսրության գորղյան այդ հանգույցին: «Որքան և այս ձեռնարկությունը քողարկվում էր պատերազմական ընդհանուր նկատառումներով,— նշում է Լեոն,— ոչ ոքի համար գաղտնիք չէր մնում, որ համիդիե զնդերի կազմակերպման ամենագլխավոր, եթե ոչ միակ, շարժառիթն է նրանց միջոցով հայերին զսպելը»:¹⁴¹

Կոստանդնուպոլսի հտորեն Ալբոյան պատրիարքը Մակար կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր, որ դեռևս 1889 թ. սուլթանը իր այդ մտադրության մասին ասել է. «...անհմարին է ինձ զիջանել տալ զինքնօրենութիւն զոր հայք երազեն, և ոչ միայն ինձ՝ այլ և ամենցուն, որ զկնի իմ գալոց են սուլթանք նզովք դնեն ի վերայ չտալ հայոց այնպիսի ինչ, այլ մանաւանդ զջնջումն բովանդակ իսլամութեան յերեսաց երկրի ուխտ դնեն պատերազմել ընդդէմ անկախութեան հայոց»:¹⁴²

Երգրումում ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Դեմենտը միանշանակ նշում էր, որ համիդիե-զնդերի կազմակերպման նպատակն է քրդերին օգտագործել կայսրության արևելյան նահանգներում քրիստոնյա

բնակչության ազատագրական ծգտումները ճնշելու համար:¹⁴³ Նրա հետ համակարծիք էր արևելագետ-դիվանագետ Վ. Ֆ. Մինորսկին. «...քրդերը, - գրում էր նա, - թուրքերի կողմից ընտրվեցին որպես կոպիտ գործիք՝ հայ ազգային շարժմանը հակազդելու համար»:¹⁴⁴

Այս տեսակետի հետ համաձայն էին նաև անգլիական ու ֆրանսիական քաղաքական գործիչներն ու դիտորդները: Օրինակ, Վ. Գլադստոնը 1895 թ. հուլիսի 26-ին Չեստերում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ արտասանած ճառում հայտարարել էր. «Սուլթանը և Կ. Պոլսի կառավարությունը ֆորմալ ձևով հավաքագրեցին ոչ մի ռազմական կարգապահություն չունեցող մարդկանց, նրանցից կազմեցին կեղծ հեծելազորային զնդեր և այնուհետև արձակեցին նրանց, լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը»:¹⁴⁵ Իսկ ֆրանսիացի Լյուդովիկոս Քոնթանսոնը առարկելով սուլթանական կառավարության կողմից շրջանառության մեջ մտցված այն տեսակետին, թե իբր համիդիե գնդերի ստեղծման հիմնական նպատակն է երկրի պաշտպանունակության ուժեղացումը, գրում էր, որ այդ գնդերը իրականում ստեղծվում էին բացառապես հայերին հալածանքների ու կողոպուտի ենթարկելու համար:¹⁴⁶ Այդ նույն տեսակետին էր նաև Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը:¹⁴⁷

Ժամանակակից անգլիացի պատմաբան Էդմոնդ Թեյլորը այն կարծիքին է, որ սուլթանը մտադիր էր նախ քրդական ցեղերին օգտագործել որպես օժանդակ ոստիկանական ուժ «հայկական հուզումները ճնշելու և հեղափոխական ազգայնականներին հետապնդելու համար» և ապա Փոքր Ասիայի արևելքում «կրոնական ու ռասայական պատերազմ սանձագերծելու համար»:¹⁴⁸

Այդ տեսակետը չեն ժխտում նաև ժամանակակից թուրք պատմաբաններից մի քանիսը: Օրինակ, Ալթան Դելիորմանը գրում է, թե սուլթանը համիդիե գնդերը ստեղծել էր Սասունի 15 հազար մահմեդական բնակչությանը հայ «կոմիտեականներից պաշտպանելու համար»:¹⁴⁹ Այդ նույն տեսակետին է նաև Այհան Յալչինը:¹⁵⁰

Համիդիե գնդերի կազմակերպումը հակասում էր ոչ միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ կետի ոգուն, այլ նույնիսկ այն սկզբունքներին, որ դրված էին Գյուլհանեի հաթթը-շերիֆի (1839 թ) և հաթթը-հումայունի (1856 թ.) հիմքում, որովհետև այդ երկու ակտերն էլ ազդարարում էին կայսրության ոչ մահմեդականների իրավունքները մահմեդականների իրավունքների հետ հավասարեցնելու սկզբունքները: Մինչդեռ ռազմական առումով կազմակերպելով քրդերին, սուլթանը միաժամանակ արգելում էր հայ ազգաբնակչությանը զենք կրել զեթ պաշտպանվելու համար: Սա պետության կողմից բացահայտ թշնամություն էր հայ տարրի դեմ:

Ֆրանսիացի գիտնական Ֆրեդերիկ Մակլերը համիդիե գնդերի ստեղծման նպատակներից մեկն է համարում նաև Առաջավոր Ասիայի կողք կողքի ապրող երկու ժողովուրդների՝ հայերի և քրդերի մերձեցման բնականոն գործընթացի խափանումը:¹⁵¹ Դա Աբդուլ Համիդի կառավարության կողմից լայնորեն կիրառվող մեկ ազգին մյուսի դեմ հանելու քաղաքականության շարունակությունն էր կամ նրա բաղկացուցիչ մասը: «Այդ ճանապարհով սուլթանը ձգտում էր, մի կողմից, փոխադարձ պայքարի մեջ հյուծել իր հպատակների հեղափոխական եռանդը, իսկ մյուս կողմից, կամխել ազգությունների միավորման հնարավորությունը համատեղ ելույթի համար ընդդեմ բոլորին ճնշող բռնատիրական վարչակարգի: Այլ կերպ ասած, քրդերը կարող էին ոչ միայն հայկական վտանգը խեղդել, այլև խեղդվել՝ բոլորովին անվստահառնալու աստիճան»:¹⁵²

Աբդուլ Համիդ II-ը համիդիե գնդերի հետ մեծ հույսեր էր կապում նաև հայերին տնտեսապես հյուծելու և հայ ազգային-ազատագրական շարժումը իր տնտեսական հենքից զրկելու առումով: Պատահական չէ, որ իշխանությունները հայկական գյուղերում հետևողականորեն տեղակայում էին համիդիե գնդեր, որոնց պետերը աստիճանաբար դառնում էին այդ գյուղերի տերերը:¹⁵³

Քրդական այդ ռազմական կազմակերպության խնդիրներից մեկն էլ նաև այն էր, որ Ռուսաստանի հետ սահմանակից երկրամասերի «անբարեկույս» հայ բնակչությունը դուրս մղվի ու հեռանա, և այդ շրջանները բնակեցվեն մահմեդականներով, որպեսզի այդ խոցելի սահմաններում ստեղծվի մի կուռ «պաշտպանական անվտանգության գոտի»:^{153ա}

Համիդիե գնդերի ստեղծումով քրդական ավատական վերնախավը և աշիրեթային ցեղերի զգալի մասը վերջնականապես իրեն կապելով համիդյան վարչաձևի հետ և ընկղմվելով թուրքական հետադիմության մեջ, պատրաստի գործիք դարձան սուլթանական կառավարության ձեռքում կոտորածներով լուծելու Հայկական հարցը:

Կառավարությունը համիդիե գնդերը դիտում էր նաև որպես հուսալի միջոց քրդերին վերջնականապես թուրքական պետությանը ենթարկելու և կամաց-կամաց նրանց թուրքերի հետ ձուլելու համար: Թեև XIX դ. վերջերին արտաքուստ թվում էր, թե քրդական ցեղերը հնազանդեցված էին կառավարությանը, սակայն ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում մեծ ու փոքր հուզումներ, որոնք ճնշելու համար կառավարությունը ստիպված էր պարբերաբար ռազմական պատժիչ արշավանքներ կազմակերպել: Դա Օսմանյան կայսրության զինված ուժերի նշանակալից մասը պահում էր մշտական լարվածության վիճակում: Թուրքերի իշխանությունը աշիրեթային քրդերի նկատմամբ մնում էր խաբուսիկ, որովհետև խաղաղ ժամանակ նրանք իրաժարվում էին հարկեր մուծել, բանակին զորա-

կոչիկներ հատկացնել, իսկ պատերազմների ժամանակ թուրքական բանակի պարտություններին վերաբերվում էին համարյա անտարբերությամբ, հաճախ դիմում էին դասալքության, չէին ենթարկվում հրամանատարներին և այլն:¹⁵⁴ Ուստի սուլթանը ենթադրում էր, որ համիդիե գնդերի մեջ քրդերի ծառայությունը կնպաստի նրանց մերձեցմանը տիրապետող ժողովրդին, կսովորեցնի ենթարկվել տեղական վարչությանը, կնպաստի նրանց կողմից թուրքերեն լեզվի յուրացմանը և այլն: Ա. Մ. Կոլյուբակինը դիտարկել էր, որ Արևմտյան Հայաստանի որոշ մասերում արդեն նկատվում էր քրդերի աստիճանական թուրքացում: «Թուրքերի կողմից քուրդ ժողովրդի այդ կլանումը առայժմ տեղի է ունենում բավականին դանդաղ կերպով, - գրում էր նա, - սակայն այնուհանդերձ այն անկասկած գոյություն ունի և վերջին ժամանակներս ձեռք է բերում խոշոր հաջողություններ»:¹⁵⁵

Համիդիե գնդերի կազմակերպումով ենթադրվում էր նաև թուլացնել խոշոր և անհնազանդ աշիրեթներին, տրոհել ու մանրացնել դրանք: Այդ նպատակին հասնելու համար որպես հրամանատարներ առաջ էին քաշվում ազդեցություն չունեցող, աննշան մարդկանց: Դրա հետևանքը լինում էր այն, որ քրդական առաջնորդները շատանում էին և ուժեղանում էր նրանց ներքին հակամարտությունը: Այնուհետև քրդերի անկախության ձգտումները փոխարինվում էին իրենց փոքր աշիրեթի «անկախությամբ» և քրդական տարրերը այս մանր արտոնությունների մեջ, սուլթանի մտայնությամբ, գտնելու էին իրենց քաղաքական բաղձանքների գոհացումը:¹⁵⁶

Պետք է նշել, սակայն, որ կառավարության վերոհիշյալ քաղաքականությունը դարձավ երկսայրի սուր, որովհետև բազմաթիվ անհնազանդ ցեղեր, ստանալով սեփական ռազմական կազմակերպություն, դարձան էլ ավելի անկախ ու ինքնագլուխ, հաճախ հրաժարվելով ենթարկվել կառավարությանը, նրան մուծել հարկեր և այլն:¹⁵⁷

Հարկ է նշել նաև, որ համիդիե գնդերի ստեղծման գործը հեշտ ու խաղաղ չէր ընթանում: Այն սկզբից ևեթ տվեց ճեղքվածքներ: Նախ ոչ բոլոր ցեղերն էին, որ կանովին ընդգրկվեցին այդ գնդերի մեջ: Մի շարք շրջաններում հավաքագրման ժամանակ կառավարությունը նույնիսկ ստիպված էր դիմել բռնի ուժի ու ահաբեկման, որի հետևանքով հաճախ կողմերի միջև տեղի էին ունենում զինված ընդհարումներ:¹⁵⁸ Օրինակ, դերսիմցիներին ընկճելու համար սուլթանը հրամայեց հսկայական քանակությամբ նավթ տեղափոխել Դերսիմ, անտառները հրդեհելու և բնակչությանը դիմադրելու հնարավորությունից զրկելու նպատակով: Միայն դրանից հետո մի շարք ցեղապետեր մտան համիդիե ալայիների (գնդերի) մեջ, սակայն ամբողջությամբ վերցրած Դերսիմը կրկին անընկճելի մնաց:¹⁵⁹ Թուրք-իրանական սահմանամերձ շրջանների մի շարք ցեղեր

համիդիե գնդերի մեջ չմտնելու համար տեղափոխվեցին Իրան,¹⁶⁰ իսկ այդ շրջաններում և Սուլեյմանիեում ու Ռևանդուզում բնակվող դաուդիե, դիզալի, շեքքաթ, գուլֆերիխի և մի շարք այլ ցեղեր ոչ միայն բացահայտ թշնամական դիրքորոշում որդեգրեցին համիդիե գնդերին անդամագրվելու հարցում, այլև իրենց անհնազանդությանը տալով քաղաքական բնույթ հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են թուրքական սուլթանին ճանաչել որպես խալիֆների օրինական ու ճշմարիտ ժառանգորդ:

Առանձին վայրերում համիդիե ալայների (գնդերի) մեջ բռնի հավաքագրումը առաջ էր բերում քրդական ընդվզումներ ու ապստամբություններ:¹⁶¹ Այդ գնդերում կարգապահությունը չափից ավելի վատ վիճակում էր գտնվում: Լեռներում ազատ կյանքով ապրող քրդերը դժվարությամբ էին ենթարկվում զինվորական կարգապահությանը: «Անհիտ» հանդեսը գրում էր. «Համիտական շքեղ և լայնատարած դրոշակն անգամ չէ հաջողած քյուրտն ամբողջապես իր տակ առնուլ: Շատ մը աշիրեթներ բնավ չեն ճանչցած զայն, մեկ քանիսը անվանական հպատակություն մը միայն ցույց տված են, իսկ անոնք՝ որոնց մասին կը կարծուի թե երդվյալ հպատակներ են դարձած, ասոնք ալ շարունակ կը հալածվին իրենց հարևան աշիրեթներեն... Իսկ Արածանիի հովտի բնակիչները դեռ այսօր հրացանովը կը խոսին իրենց գերդաստանի այն անդամներուն հետ, որոնք Պոլիս երթալով և համիդիե դառնալով դավաճան հանդիսացան իրենց ազատության»:¹⁶²

Վերին աստիճանի ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Բասրայում ռուսական հյուպատոս Կ. Իվանովը թուրքական կառավարության քաղաքականության վերաբերյալ այն ցեղերի նկատմամբ, որոնք դրսևորում էին ինքնագլխություն, խուսափում էին մտնել համիդիե գնդերի մեջ և այլն: «Եթե քրդերը հրաժարվում են հնազանդվել, թուրքերը նախ հանձնարարում են որևէ այլ գնդի կամ ցեղի քրդերին հնազանդեցնել կամակորներին. եթե նրանք խուսափեն նման հանձնարարություն կատարելուց, թուրքերը ցեղերի միջև բորբոքում են արյունոտ հաշիվներ, որոնք, երբեք վերջնական լուծում չեն ստանում, կամ զժտեցնում են նրանց բեկերին, պարզևներ շնորհելով նրանց մի մասին և նվաստացնելով մյուսներին: Իսկ եթե դա էլ չի հաջողվում, նրանք համբերատար կերպով սպասում են ծնունդ, երբ ցրտերը ստիպում են քրդերին յայլաղներից իջնել գյուղերը և երբ վերանում է լեռներում թաքնվելու հնարավորությունը, այնժամ թուրքերը առանց իրենց համար որևէ դժվարության պատժում են անհնազանդներին: Օգտվելով նման միջոցներից, թուրքերը ողջ Քրդստանը պահում են հնազանդության մեջ, այնտեղ ըստ էության պահելով սահմանափակ թվով զորքեր, որոնք ամբողջ երկրով մեկ ցրված են մանր ջոկատների: Բայազետի անջակում, օրինակ, տեղակայված է հե-

տիոտնի հինգ տարրը և հեծելագորային մեկ գունդ, այն դեպքում երբ այդ սանջակը հանում է համիդիե քսան գնդեր, չհաշված մնացած ողջ բնակչությանը, որը նույնպես գլխովին զինված է»:¹⁶³

Համիդիե գնդերը Արևմտյան Հայաստանի տարածքում սկսեցին կատարել ռազմառտիկանական ֆունկցիա: Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, կողոպուտը, թալանը, ապօրինի տուրքերը, հափշտակումները, ամեն տեսակի կանայականությունները ընդունեցին աներևակայելի մեծ թափ ու ծավալ: Հայերի վիճակը ուղղակի դարձավ դժոխային: «Երեկ ծառա ու հովիվ եղող մը, երբ հարյուրապետության կբարձրանա, ոչ միայն հայը, այլ իր հայրն ալ կսպաննե», – գրում էր «Անահիտ» ամսագիրը:¹⁶⁴

Համիդիե գնդերի հրամանատարներից արևմտահայության համար հատկապես անտանելի պատուհաս դարձավ Քյոռ Հուսեին փաշան: «Ինչ որ Համիդն էր ամբողջ Թուրքիայի համար, նույն էլ Հուսեինն էր Երզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների համար»:¹⁶⁵

Երզրումում անգլիական հյուպատոս Չարլզ Հեմփտոնը կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանին հաղորդում էր, որ քրդերից շատերը բացահայտ ասում են, որ «իրենք նշանակված են հայերին զսպելու համար» և երաշխիքներ են ստացել, որ իրենց չեն ենթարկելու դատական պատասխանատվության բրիտանացիներին հարստահարելու համար»:¹⁶⁶ Համիդիեականներին դիմադրելը «հավասարազոր էր սուլթանի դեմ խռովությանը»:¹⁶⁷ Տեղական դատարաններին հրամայված էր քննության չենթարկել հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններ գործադրած համիդիե գնդերի սպաների և զինվորների գործերը:¹⁶⁸

Երզրումի կուսակալ Հասան Խայրի փաշան իր մոտ հրավիրելով նահանգի քուրդ ցեղապետերին և սուլթանի անունից նրանց բաժանելով պատվո նշաններ ու դրամական պարգևներ, ինչպես նաև հաղորդելով սուլթանի գոհունակությունը կուսակալությանը մատուցած նրանց ծառայությունների համար «վնասակար տարրը ջնջելու» գործում, ծանոթացնում է ներքին գործերի մինիստրի շրջաբերականին՝ հայերի նկատմամբ բռնություններ գործադրելու ձևերի ու եղանակների մասին: Մասնավորապես հրահանգ էր տրվում կողոպտել ու սպանել բոլոր հարուստ հայերին, կրթված դասին և ընդհանրապես ազդեցիկ մարդկանց, որպեսզի ժողովուրդը մատնվի անկարողության:

Տեղական իշխանությունները քրդերին հանձնարարում էին հայերի նկատմամբ կիրառվող հալածանքների ու բռնությունների սովորական մեթոդներից բացի (կողոպուտ, սպանություն, առևանգումներ և այլն) օգտագործել նաև այլ մեթոդներ, միշտ նեղել նրանց, չնչին, մինչև իսկ երևակայական պատճառներով դատ բանալ նրանց դեմ, դատապարտել

բանտարկության և աքսորի: Դատարաններին հրահանգված էր բոլոր պարագաներում պաշտպանել քրդերին, իսկ հայերին դատապարտելու համար կովան ծառայեցնել նրանց «հեղափոխական տրամադրությունները սուլթանի իշխանությունը տապալելու համար»:¹⁶⁹ Այսպիսով թուրքական դատարանը և առհասարակ արդարադատության համակարգը ինքն էր խրախուսում քրդերի գիշատիչ բնագղները: Իսկ տարօրինակն ու արտառոցը այն էր, որ բռնություններից պաշտպանվելու համար արևմտահայությունը իր հույսը պետք է դներ թուրքական օրենքի և դատարանների վրա, որոնց օժանդակությամբ էին կազմակերպվում այդ բռնությունները:

Անգլիացի հրապարակախոս Էմ. Դիլլոնը Արևմտյան Հայաստան կատարած իր ճանապարհորդությունից հետո եկել էր այն եզրակացության, որ «հայկական նահանգներում սահմանվել է կառավարման գազանային մի համակարգ, որի համեմատ Ամերիկայի հարավային նահանգների ստրկատիրական սխտեմի դաժանությունները թվում են անմշան չարաշահումներ»:¹⁷⁰

Այս բոլորի հետևանքը հանդիսացավ հարազատ վայրերից հայ բնակչության արտագաղթի նոր, նախկին ժամանակներին անհամեմատ զերազանցող ալիքը: Հազարավոր մարդիկ չնչին զներով իրենց հողն ու ինչքը վաճառելով քրդերին, ստիպված էին փախչել Ռուսաստան, Իրան և մոտ ու հեռու այլ երկրներ:¹⁷¹ Արևմտյան Հայաստանը հուժկու թափով հայաթափ էր լինում:

Թուրքական իշխանությունները իրենց այդ քաղաքականությամբ հրահրում էին հուսահատության հասած հայերին դիմել ըմբոստության և բացահայտ ելույթ ունենալ, որպեսզի այնուհետև նրանց մեղադրելով հեղափոխականության մեջ, զանգվածորեն հալածանքների ենթարկեն: Հայ բնակչության օրինական ինքնապաշտպանության ցանկացած փորձ թուրքական իշխանությունները դիտում էին որպես հանցանք և կազմակերպում նոր հալածանքներ:

Հայտնի է, որ սոցիալական շարժումները սովորական երևութ էին Օսմանյան կայսրությունում: Սակայն եթե դրանց մասնակիցները հայեր էին, անպայման դրանց տրվում էր քաղաքական երանգ և դիտվում որպես քաղաքական ընդվզում: Այդպես տեղի ունեցավ Սասունում, որը վաղուց ի վեր դիտվում էր որպես կայսրության համար քաղաքական վտանգի միջնաբերդ: Օսմանյան կառավարությունը հորինեց «հայկական ապստամբության» վարկածը: Այսպիսով, համընդհանուր հայկական ջարդ կազմակերպելու պատրվակը գտնվել էր, մնում էր անցնել գործի:

Կառավարության հրահանգով Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան հորդորում էր քրդական ցեղապետերին ու շեյխերին, որպեսզի

նրանք աշիրեթներին ոտքի հանեն «ապստամբ» Սասունի դեմ: Կողոպուտի մոլուցքով և «սրբազան պատերազմի» պատգամներով լցված քրդական ցեղապետերը, որոնք արդեն վաղուց չէին կարողանում հանդուրժել, որ իրենց «իրավունքները» չեն տարածվում Սասունի վրա և նրա բնակչությունը հարկատու չէ իրենց, զինավառ խմբերով սկսեցին շարժվել դեպի Տավրիսի, Անտոք և Ծովասար: 1891-1894 թթ. ընթացքում սասունցիները համառորեն դիմադրում էին: Սակայն 1894 թ. ամռանը հուսահատության հասած բնակչությունը բարձրացրեց ապստամբության դրոշմ: Անմիջապես հաջորդեց սուլթանի բարձրագույն հրամանը՝ Սասունում ոչինչ և ոչ ոքի չխնայել:

Աբդուլ Չամիդի հրամանով սասունցիներին ընկճելու գործը հանձնարարվեց օսմանյան 4-րդ բանակի մուշիր Ջեքի փաշային: Վերջինս Բիթլիսում հրավիրեց հատուկ խորհրդակցություն օսմանյան բարձրաստիճան կառավարական և զինվորական ներկայացուցիչների ու 17 քրդական ազդեցիկ ցեղապետերի մասնակցությամբ:¹⁷²

Ջեքի փաշայի բանակի 12 հազարանոց զորամասին միանալու համար կառավարությունը Դիարբեքիից Սասուն ուղարկեց Օսման փաշայի երեք հազարանոց կորպուսը, Բիթլիսի կուսակալ Չասան Թահսին փաշայի տրամադրության տակ եղած բոլոր զորքերը, Գենջի նահանգապետ Մուստաֆա փաշայի, Ֆերիկ Աբդուլլա փաշայի զորքերը և այլն: Սասուն ուղարկվեցին կառավարական զորքեր նաև Մուշից, Էրզրումից, Խարբերդից, անգամ Չալեպից ու Բաղդադից: Սրանց էին միանալու նաև քրդական աշիրեթային ջոկատներն ու Չամիդի գնդերը Բեհեզդին փաշայի, Մահմադ էլ Աղասիի և այլ հրամանատարների գլխավորությամբ:¹⁷³ Սասունը լինելու էր այն փորձադաշտը, որտեղ առաջին անգամ փորձարկվան էր ենթարկվելու համիդիե գնդերի մարտունակությունը:

Այսպիսով սուլթանական կառավարությունը պատրաստվում էր կատարել մկանների ցուցադրում, ցանկանալով հասկացնել եվրոպական պետություններին և երկրի ներքին բոլոր ըմբոստ ուժերին, որ ինքը ոչնչով կաշկանդված չէ իր «ներքին հարցերը իր իմացած ձևով լուծելու խնդրում»: Սուլթանը նաև ցանկանում էր դաժան դաս տալ Սասունին, որի ոգին վարակիչ էր դառնում ողջ արևմտահայության համար:

Սասունի վրա լեռնացող այս ահարկու վտանգի պայմաններում հայ գործիչները քրդերի հետ փոխադարձ ըմբռնման եզրեր գտնելու եռանդուն փորձեր էին անում: Յնչակյան կուսակցության գործիչներ Դամարյանը, Ռուբեն Շիշմանյանը (Տերզնկացի քեռին) և ուրիշներ քրդերի շրջանում քարոզում էին հայ և քուրդ ժողովուրդների մերձեցման և թուրքերին համատեղ դիմադրություն ցույց տալու անհրաժեշտության մասին, աշխատելով նրանց համոզել, որ հայկական ազատագրական շարժումն

ուղղված չէ դարավոր հարևան քուրդ ժողովրդի դեմ: Նրանք կապեր էին հաստատում նաև եվրոպայում գործող այն քուրդ քաղաքական վտանգիների հետ, որոնք նույնպես հակված էին հայերի հետ համագործակցության զաղափարին: Սակայն, դժբախտաբար, այդ փորձերը ոչ մի արդյունք չտվեցին: Սասունում սկսվեց հայաջինջ փոթորիկ:

Թուրքական բանակը գործում էր առաջնորդվելով ենիչերիների ավանդույթներով: Բանակի զազանությունները եզրափակում էին աշիրեթները և խուժանը: Քրդական առաջնորդներից իրենց վայրագ զազանություններով հատկապես աչքի ընկան Խալիլ աղան, Քյոռ Սլեման աղան և ուրիշներ:¹⁷⁴ Սասունի բնակչությունը սրի քաշվեց և կողոպտվեց, բազմաթիվ գյուղեր ավերվեցին և հրո ճարակ դարձան:¹⁷⁵ Սասունում «...հայերը ջարդվեցին առանց հասակի ու սեռի խտրության»:¹⁷⁶ Կոստանդնուպոլսում բրիտանական դեսպանության գլխավոր դրագոման Ադամ Բլուկը իր 1894 թ. դեկտեմբերի 25-ի հեռագրում նշում էր, որ Սասունի ջարդի հիմնական կազմակերպիչներն ու պատասխանատուներն են սուլթան Աբդուլ Չամիդը, չորրորդ զորաբանակի հրամանատար մարշալ Ջեքի փաշան, սուլթանի առաջին քարտուղար Սուրիա փաշան և իր վայրենաբարո վարքով մեծ հռչակ ձեռք բերած Աբդուլլա փաշան:¹⁷⁷ Սասունի ջարդը կազմակերպելիս իր «խոշոր ծառայությունների» համար սուլթանը մուշիր Ջեքի փաշային պարգևատրեց «Նիշանի իմթյագ» շքանշանով:¹⁷⁸

Թեև սասունցիների դեմ ուղարկված էր կանոնավոր բանակ, որն իր տրամադրության տակ ուներ նաև հրետանի, սակայն սուլթանական կառավարությունը տեղի ունեցած ջարդի ամբողջ պատասխանատվությունը բարդեց քրդերի վրա: Չետաքնություն անցկացնելու նպատակով Սասուն ժամանած եվրոպական ներկայացուցիչներին հայտարարեցին, որ կանոնավոր զորքեր չեն ուղարկվել Սասուն, որ իբր այնտեղ հայերի ջարդը տեղի է ունեցել բացառապես քրդերի կողմից: Մինչդեռ հայերը եվրոպական ներկայացուցիչներին հայտարարում էին, որ «ջարդ ընողները ավելի զորքերն էին, քան թե ջուրտերը»:¹⁷⁹

Սասունցիների հերոսական դիմադրությունը սասանել էր համիդիե ջոկատներին: Եմիլ Դիլլոնը նշում էր, որ «այդ սարսափները առաջ բերեցին նույնիսկ քուրդ ավազակապետերի սարսուռը»:¹⁸⁰ Մեծ կորուստներ տալով, նրանք նույնիսկ կասկածեցին, որ կառավարությունը իրենց դիտավորյալ է կոտորել տալիս:¹⁸¹

Ինչպես հայտնի է, Կոստանդնուպոլսում հավատարմագրված եվրոպական դեսպանները իրենց կառավարությունից հրահանգ էին ստացել համատեղ մշակել բարենորոգումների ծրագիր հայկական վեց վիլայեթներում իրականացնելու համար: Այդ ծրագիրը Բ. Դառնը հանձնվեց 1895 թ. մայիսին, որի պատճառով և ստացավ «մայիսյան ռեֆորմներ» ա-

նունը: Նրանում եվրոպական դեսպանները հաշվի էին առել, որ առանց քրդական ավատական վերնախավին, աշիրեթներին, համիդիե գնդերին և առհասարակ «անսանձ վարքով» ապրող քրդերին կարգի հրավիրելու և զսպելու, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացումը անհնարին կլինի: Ուստի դեսպանների կազմած հուշագրի 9-րդ բաժինը վերնագրված էր «վերահսկողություն քրդերի վրա»: Այնտեղ նշվում էր. «Թափառական քրդերին կառավարելու համար յուրաքանչյուր վիլայեթում վալին պետք է ունենա իր ձեռքի տակ մեկ աշիրեթ-մեմսուրի (ցեղերով զբաղվող պաշտոնյա Վ. Բ.), որի գործը պետք է լինի հսկել քուրդ ցեղերին: Այդ պաշտոնյան պետք է իրավունք ունենա ձերբակալելու ավագաններին և այլ չարագործների ու պահանջել, որ նրանց ենթարկեն սովորական դատարաններին: Նա պետք է իր տրամադրության տակ ունենա մի բավարար պահակախումբ և իրավասու է, անհրաժեշտության դեպքում, պահանջել տեղական ոստիկանության աջակցությունը: Նրա իշխանության տակ դրված պաշտոնյաների մի որոշ թիվ պետք է ուղեկցի ամեն մի ցեղին՝ նրանց տարեկան քոչի ժամանակ:

Նրանք պետք է գործադրեն ոստիկանական իրավասություն, բանտարկեն բոլոր չարագործներին և հանձնեն նրանց սովորական դատարաններին: Թափառական ցեղերի արոտատեղերի և բանակատեղերի սահմանները պետք է ճշտությամբ որոշված լինեն: Այդ քոչերը չպետք է պատճառ դառնան գրկանքի ենթարկելու այն զավառների բնակիչներին, որտեղով անցնում են թափառական ցեղերը և կամ ժամանակավորապես գրավում: Եթե նրանք որևէ չարագործություն անեն գյուղացիների սեփականության դեմ, կամ որևէ գրկանք հասցնեն գյուղացիներին, այդ օրից սկսած կարգելի նրանց որևէ տեղափոխություն կամ քոչ:

Այն կանոնները, որոնք գոյություն ունեն գենք կրելու վերաբերմամբ, խստիվ պետք է գործադրվեն բոլոր քուրդ ցեղերի մեջ, լինեն նրանք հաստատաբնակ, թե թափառական: Չանքեր պետք է արվեն պատվաստելու նստակյաց կյանքի սկզբունքները քոչվոր ազգաբնակչությանը, ընտելացնել նրանց երկրագործության, և այդ նպատակով որոշ հողեր պետք է հատկացնել նրանց այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատվելը չի կարող որևէ վնաս հասցնել նստակյաց ազգաբնակչության բարեկեցությանն ու խաղաղությանը: Ընտրողական և քաղաքացիական իրավունքները չպետք է պատկանեն այն անձանց, որոնք ոչ նստակյաց ազգաբնակչության մասն են կազմում, կամ որոնք հաստատված չեն մշտական և մնայուն կերպով մի որևէ նահիայի հողի վրա»:¹⁸²

Աբդուլ Համիդը սակայն գործն այնպես էր ներկայացնում, որ իբր ինքը չի ցանկանում սահմանափակվել իր կայսրության միայն մի մասում, այսինքն հայկական վեց վիլայեթներում վարչական բարենորոգումներ ի-

րականացնելով, այլ դրանք ցանկանում է տարածել նաև կայսրության բոլոր մյուս վիլայեթների վրա:¹⁸³ Միաժամանակ սուլթանը ճարպկորեն Հայկական հարցի դեմ բարձրացնում էր «քրդական հարցը»՝ ի չիք դարձնելու համար և՛ մեկի և՛ մյուսի լուծումը: «Անկասկած, - գրում էր Վանում ռուսական փոխտեսուտոս Վ. Տ. Մանսկին, - Թուրքիայի համար միանգամայն ձեռնտու էր քրդերի շարժումը հակադրել հայկական շարժմանը: Կարելի է բերել մի քանի փաստեր, որոնք ապացուցում են, որ թուրքական իշխանությունները ... օգտվում էին քրդերի այդ հանդիպակած շարժումից»:¹⁸⁴

Հունգարացի արևելագետ, թուրքոֆիլ Ա. Վամբերին վկայում է, որ դեռևս 1889 թ. դեկտեմբերի 22-ին իր հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթան Աբդուլ Համիդը հայտարարել է, որ եվրոպական տերությունները «կարող են իմ գլուխն անջատել մարմնից, բայց երբեք Հայաստանը իմ կայսրությունից... Ի՞նչ է հայկական հարցը. բավական է մեկ հարված, որ պեսզի ջախջախվի ողջ շարժումը»:¹⁸⁵

Այդ հայտարարությունից ընդամենը մի քանի տարի անց, սուլթանը որոշեց իր խոսքը վերածել գործի: 1894-1896 թթ. Արևմտյան Հայաստանում Բիթլիսում, Խարբերդում, Դիարբեքիրում, Էրզրումում, Տրապիզոնում և այլուր նա կազմակերպեց հայերի զանգվածային ջարդեր: 1896 թ. օգտագործելով մի խումբ դաշնակցական հեղափոխականների կողմից «Բանկ Օտտոմանի» գրավումը, հայկական արյունոտ ջարդ կազմակերպեց նաև հենց մայրաքաղաքում: 1894-1896 թթ. ընթացքում թուրքական յաթաղանին զոհ գնացին ավելի քան 300 հազար հայեր:

Անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոքլըրը նշում է, որ այդ ջարդերը կազմակերպվեցին և իրականացվեցին դասական եղանակով: Նրա հիմքում ընկած էր հետևյալ սխեման. Արևմտյան Հայաստանի տարածքում տիրում էր անիշխանությունը, սանձարձակությունը և տեռորը: Ժողովուրդը բարելավումներ էր պահանջում: Իշխանությունները ոչինչ չէին ձեռնարկում: Հանդես եկան քաղաքական կազմակերպություններ, որոնք ի պատասխան իշխանությունների անգործության դիմեցին տեռորի: Դրան հետևեց իշխանությունների ռեակցիան, «որոնք մարդկանց պահանջներից ազատվելու համար, որոշում են ազատվել հենց մարդկանցից»:¹⁸⁶

Նկատի ունենալով հայկական ջարդերն իրականացնելու մեթոդները, եվրոպացիներն այն անվանել են «խկական մարդաորս»: Չարդերի կազմակերպիչը թուրքական կառավարությունն էր, իսկ իրագործողները կառավարական զորքերը, համիդիե գնդերը, քրդական ցեղերը, չերքեզները և խուժանը: Չարդերի ժամանակ քրդական ավատական վերնախավը սերտորեն համագործակցեց թուրքական զինվորական իշխանություն-

ների հետ: Այդ դեպքերը հետաքննելու համար նշանակված օտարերկրյա հյուպատոսական ներկայացուցիչների հավաքական հուշագրում բազմաթիվ փաստեր կան այդ մասին: Նույնիսկ նշվում էր, որ մոլեռանդ շէյխերը քարոզել են, որ գյավուրներ կոտորելը աստվածահաճո գործ է, որ դրան հավանություն է տալիս մահ սուլթան-խալիֆը:¹⁸⁷ Ձեքի փաշան համիդիե զորքերի հրամանատարների համար ձեռք բերեց «բարձրագույն հրամանագիր», որը նրանց ազատում էր իրենց հանցագործությունների համար դատարան ներկայանալու պարտականությունից:¹⁸⁸

Ջարդերի ժամանակ պատասխանատվությունն ամբողջապես քրդերի վրա բարդելու նպատակով, հաճախ թուրքական զորքերը գործում էին քրդական տարազով:¹⁸⁹ Ջարդի օրերին սուլթանական քարոզչությունը քրդերին ներշնչում էր, որ բնաջնջելով հայությանը, նրանք կարող են դառնալ և՛ Բրդաստանի և՛ Արևմտյան Չայաստանի լիիրավ տերը:¹⁹⁰

1895 թ. հոկտեմբերի 20-ին, Կոստանդնուպոլսում հայերի արյունոտ ջարդի օրերին, Աբդուլ Չամիդը վավերացրեց մայիսյան բարենորոգումները, դրանց իրագործումը հանձնարարելով Շաքիր փաշային, որն այդ բարենորոգումները հասկանում էր որպես հայերի զանգվածային ջարդերի կազմակերպում: «...Թուրքիան ցանկանում է ոչ թե բարելավել քրիստոնյաների կենցաղը, այլ ոչնչացնել նրանց», - նշում էր ռուս դիվանագետ Ռ. Ի. Տերմենը:¹⁹¹ Չայտարարելով հայկական նահանգներում բարենորոգումներ իրականացնելու իր մտադրության մասին, սուլթան Աբդուլ Չամիդը պարզապես ձգտում էր ազդել եվրոպական հասարակական կարծիքի վրա, քանի որ իր երկրի բնակչության կարծիքը սուլթանի համար ոչ մի արժեք չուներ: Եվ թեև ժամանակ առ ժամանակ նրան նախագուշացնում էին, որ երկրի արևելքում իրագործվող քաղաքականության հետևանքով սուլթանը ռիսկի է դիմում «կորցնելու հայկական վիլայեթները, ինչպես կորցրեց Բուլղարիան»,¹⁹² սակայն խորամանկ ու ճարպիկ սուլթան Աբդուլ Չամիդ II-ը իր կյանքի փորձով արդեն համոզվել էր, որ ոչ Անգլիան և Ֆրանսիան և ոչ էլ Ռուսաստանը մտադրություն չունեն վճռական գործողությունների դիմելու հայ բնակչության նկատմամբ բռնությունների քաղաքականությունը դադարեցնելու համար: Դա վստահություն էր ներշնչում բռնակալին, որ ինքը կարող է անպատիժ կերպով շարունակել իր հայահալած քաղաքականությունը: Արևմտահայության զանգվածային ջարդերի հետևանքով արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը ծանր հարված հասցվեց: Այն բախվելով քուրդ ժողովրդի զանգվածային դիմադրությանը, ի վիճակի չեղավ շոշափելի արդյունքներ ձեռք բերել: 90-ական թվականների ջարդերից հետո հայ իրականության մեջ ավելի արմատավորվեց այն տեսակետը, որ արևմտահայության ազգային-ազատագրական շարժման դեմ այսուհետև ամենավճ-

ռական ձևով հանդես է գալու ոչ միայն օսմանյան բռնակալ կառավարությունը, այլև քրդական ավատական դասակարգը, ցեղային ավագանին, համիդիե զնդերը, աշիրեթները և խաբված քուրդ գյուղացիության մի ստվար հատվածը, որոնց ներշնչել էին, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումը հակասում է իրենց ազգային շահերին:

90-ական թվականների հայկական ջարդերը մահացու հարված հասցրին արևմտահայոց տնտեսական կյանքին: «Այդ ջարդերի հետևանքով կենտրոնական նահանգների համարյա ողջ առևտուրը և վերամշակվող արդյունաբերությունը, որոնք մինչ այդ գտնվում էին հայերի ձեռքում, անցան բուն թուրքական բուրժուազիային»:¹⁹³ Այդ ջարդերից հետո սկսվեց հայկական բուրժուազիայի դուրս մղումը իր հայրենի երկրամասի շուկաներից: Իսկ թուրքական նորելուկ բուրժուազիան, որն ի վիճակի չէր խաղաղ մրցակցությամբ հաղթող դուրս գալ տնտեսապես ուժեղ հայկական բուրժուազիայի նկատմամբ, ջարդերի հետևանքով հնարավորություն ստացավ թափանցելու Արևմտյան Չայաստանի տնտեսական կյանքի ոլորտը: Կառավարությունը իր հակահայ քաղաքականությամբ ուղի էր հարթում թուրք ազգային բուրժուազիայի համար: Անդրադառնալով այդ խնդրին, ռուս դիտորդներից մեկը՝ Ռ. Տերմենը նշում էր, որ 90-ական թվականների հայկական ջարդերից հետո «սկսվեց հայերի ոչնչացումը տնտեսական ճանապարհով, դանդաղ, աննկատ, բայց և համառ կերպով: ...Բազմաթիվ մանր, հազիվ նշմարելի միջոցառումներ սխտեմատիկորեն քայքայում են հայերի կենսական ուժերը և նրանք կործանվում են տնտեսական դանդաղ մահով, իսկ նրանց փոխարեն և ի հաշիվ նրանց հարստանում ու ծաղկում են մահմեդականները»:¹⁹⁴

Չայ քաղաքական կուսակցությունները և անհատ գործիչները անշուշտ գիտակցում էին, որ զնալով քրդական գործոնը որոշիչ դեր է խաղում Չայկական հարցում: Ուստի հայ-քրդական հարաբերությունների կարգավորման հնարավորության վերաբերյալ ամենահռոճետես գործիչներն անգամ սկսեցին ստեղծված իրադրությունից ելք որոնել: Որպես չարյաց փոքրագույն, վերստին օրակարգի առաջնահերթ խնդիր էր դառնում քրդերի հետ համագործակցության եզրեր գտնելու հարցը: Առանձին անհատներ մույնիսկ որոշեցին մեկնել Կոստանդնուպոլիս ու Եվրոպա, այնտեղ հանդիպել քուրդ ազգայնականների հետ և «փրփականտ մղել ի նպաստ քյուրտերուն մոտենալու, և անհրաժեշտ զենք հայթայթելով՝ անոնց հետ համագործակցություն առաջ բերելով միացյալ ճակատ ապահովելու»:¹⁹⁵

Չատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ազդեցիկ ցեղապետ-աշիրեթապետների հետ ընդհանուր լեզու գտնելու գործին, քանի որ նրանք հսկայական ազդեցություն ունեին իրենց ենթակա ցեղերի նկատ-

մամբ: Քրդական կյանքի իրողություններին քաջատեղյակ դիտորդները նկատում էին, որ «իսկապես, քուրդ բնակչության շրջանում անհանգիստ տարրերին սանձելու համար տեղական բեկի կամ շեյխի հեղինակությունը միշտ ուներ և այժմս էլ դեռևս ունի ավելի մեծ նշանակություն, քան որևէ կայմականի կամ մյուզիի երբեմն միանգամայն ձևական իշխանությունը»:¹⁹⁶

Լեռնի այն տեսակետը, որ հայ իրականության մեջ անտեսվում էր քրդական հարցը, չի համապատասխանում իրականությանը: Անվանի պատմաբանը գրում է. «Միանգամայն անտես էր արվում քրդական հարցը, որ կյանքի ու մահվան հարց էր հայերի համար դարերից ի վեր: Հայ հեղափոխական ճակատակալները էր, որ իր արհամարանքը դեպի այս հարցը տարածում էր մինչև այնտեղ, որ պատերազմ էր հայտարարում քուրդ ժողովրդին»:¹⁹⁷ Այդ թեզը չի բռնում պատմական քննություն, քանի որ, և՛ հայ անհատ գործիչները և՛ քաղաքական կուսակցությունները բազմիցս զբաղվել են քրդական հարցով, թեև պետք է խոստովանել, որ արդյունքը բացակայել է կամ եղել է չնչին: 1898 թ. օգոստոսին, օրինակ, Վանում դատավարության ժամանակ հնչակյան Փարամազը (Մաթևոս Սարգսյան) թուրքական դատարանին հայտարարեց. «Մեր պահանջն է՝ Հայաստանի ազգաբնակչությունը, այսինքն հայ, քուրդ, արաբ, լազ, չերքեզ, ասորի, եզդի, մինչև անգամ մուսուլմանները իր քվեով ընտրի իր կառավարիչը և կառավարվի իրենց կարգված մարդկանցով և օրենքներով, որը բարոության հասնելու կարճ ճանապարհն է: Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ամբողջ ազգաբնակչության համար»:¹⁹⁸

Հայ-քրդական հարաբերությունների անցյալի իրադարձություններին անդրադառնալիս կարևոր է նկատի ունենալ նաև հետևյալ իրողությունը. թեև քրդական ավատական վերնախավը և ցեղերի շարքային անդամների մի զգալի մասը XIX դարի 80-90-ական թվականներին սուլթանական կառավարության ձեռքում գործիք դարձավ Հայկական հարցը ջարդերով լուծելու համար, սակայն եղել են ցեղապետ-աշիրեթապետեր և նույնիսկ ամբողջ ցեղեր, որոնք ոչ միայն մասնակից չեն դարձել հայկական կոտորածներին, այլև շատ հաճախ հայերին վերցրել են իրենց պաշտպանության տակ: Անտեսել ու հաշվի չառնել այս փաստը, նշանակում է հայ-քրդական հարաբերությունների պատմությունը լուսաբանել միակողմանիորեն կամ միտումնավորության, ազգային նեղմտության ու քաղաքական կարճատեսության դիրքերից: Օրինակները բազմաթիվ են, բերենք դրանցից մի քանիսը. քրդական առաջնորդներից Մուստաֆա ադան, որին ենթարկվում էին Ձեզիրեյից հյուսիս և մինչև Առնոս լեռան լանջերը ընկած քրդական ցեղերը, թեև սուլթանից ստացավ համիդիե գործադանների փաշայի տիտղոս և հայերի ջարդերին մասնակցելու հրավեր,

սակայն 1896 թ. աշնանը, կոտորածների ժամանակ, այդ շրջանի հայերին իր հետ տարավ Ձեզիրեյի կողմերը՝ իր ծնեռանոցը, նրանց փրկելով հաստատ մահվանից:¹⁹⁹ Նույն կերպ վարվեց նաև Մուկսի քրդերի ցեղապետ Մուրթուլա (Մեհտուլա) բեյը: Նրա շնորհիվ ջարդերի ժամանակ փրկվեց մոտ 10 հազար հայ բնակչություն: Մուրթուլա բեյը հայտարարում էր, որ «Մուկսը թուրքի կոտորածի տեղը չէ»: Շեյխերը նրան «զյավուր» էին անվանում, ասելով, որ եթե հարմար պահ գտնի, քրիստոնյա պիտի դառնա:²⁰⁰ Վանի նահանգում ևս հայերի մի ստվար զանգված ապաստան գտավ քրդերի մոտ:²⁰¹ Տարոնի դաշտի գյուղերում քրդական մի շարք ցեղեր հրաժարվեցին կոտորածներին մասնակցելուց:²⁰² Իրենց տիրապետություններում հայերի ջարդ թույլ չտվեցին նաև Հուսեյին փաշան Ադիլջևազում, Հաջի խանը Նորդուզում, Իբրահիմ փաշան Շեհրիվերանում և շատ այլ ցեղապետեր: Հայերի ջարդին չմասնակցեցին նաև Սինջարի եզդիները, ինչպես նաև Բոհթանի, Խիզանի, Ձեզիրեյի և մի շարք այլ վայրերի քրդական ցեղերը:²⁰³

Ինչ վերաբերում է Դերսիմի ղզլբաշներին, ապա նրանք ոչ միայն հրաժարվեցին օգնել Ձեթունի դեմ ուղարկված թուրքական բանակին, այլև դիմադրություն ցույց տվեցին նրան: Նույն դերսիմցիների աջակցության շնորհիվ Մալաթիայի հայությունը հաջողությամբ պաշտպանվեց հարձակումներից:²⁰⁴ Ի դեպ, դերսիմաբնակ հայերը ևս իրենց ղզլբաշ հարևանների նման ապավինում էին զենքին, որովհետև ինչպես իրենք էին ասում. «...մենք ատ հիքմաթը (կառավարությունը: - Վ. Բ.) ցինք ծանցնար, ցունքի (քանի որ: - Վ. Բ.) անի անօրեն ա, դատաստան էնել ցի գիտա. մենք մինակ սիլահը (զենքը: - Վ. Բ.) կծանցնանք»:²⁰⁵

Առանձին վայրերում քրդական ցեղերը ոչ միայն չեզոք դիրք գրավեցին հայերի նկատմամբ կամ աջակցություն ցույց տվեցին նրանց, այլև զենքը ձեռքին նրանց հետ համատեղ հանդես եկան կառավարական գործերի և համիդիե գնդերի դեմ:

Որոշ տվյալներ վկայում են այն մասին, որ 90-ական թվականներին հայկական ջարդերից հետո առանձին քուրդ գործիչներ հասկացել էին, որ թուրքական կառավարությունն ի վերջո սպառնում է քրդերին ևս, որ իրենք շեղվում են իրենց գլխավոր ազգային խնդրից՝ թուրքական լծի դեմ պայքարից: Վանում ռուսական հյուպատոս Թումանսկին գրում էր, որ «Հայերի և քրդերի միջև բարեկամություն գոյություն չունի, սակայն երկուստեք ունենցած ատելությունը թուրքերի նկատմամբ ժամանակի ընթացքում կարող է նրանց միավորել. այդպիսի հաշտեցման և դաշինքի մասին ոչ մեկ անգամ է, որ հարց է բարձրացվում ինչպես քրդերի, այնպես էլ հայերի կողմից»:²⁰⁶ Իսկ ֆրանսիացի Լյուդովիկոս Քոնթանտոնը գտնում էր, որ «քրդական և հայկական հարցերը կապված են միմյանց

հետ» և ենթադրում էր, որ դա վաղ թե ուշ թուրքիայում առաջ է բերելու ճգնաժամ և պետությունների միջամտություն:²⁰⁷ Նրա կարծիքով քրդերը սպառնում են «Ասիական թուրքիայում օտտոմանյան կառավարությանը պատճառել ամենալուրջ դժվարություններ»:²⁰⁸

Անտարակույս հայ-քրդական միասնության գաղափարը հանդիսանում էր սուլթանական կառավարության մղծավանջը: Ուստի նա անում էր ամեն ինչ, թեկուզ այդ քիչ հավանական միասնությունը խափանելու համար:

Ուշագրավ է նշել, որ եթե 90-ական թվականների սկզբին սուլթանը եվրոպական դեսպաններին հավաստիացնում էր, որ միջոցներ կծեռնարկի քրդերին զսպելու համար, նրանցից պատանդներ կվերցնի, մասնակիորեն կզինաթափի համիդիե գնդերի մեջ ընդգրկված աշիրեթներին, նրանց կենթարկի ընդհանուր քաղաքացիական դատարաններին և այլն, ապա 90-ական թվականների երկրորդ կեսին, երբ Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային ջարդը արդեն դարձել էր փաստ, և քրդերը մասնակից էին դարձել դրանց, դոստորելով նվիրվածություն սուլթան-խալիֆին, վերջինս չխորշեց եվրոպական դեսպաններին հայտարարելու, որ «քուրդը միշտ եղել է տեր, իսկ հայը ծառա, հետևաբար տերությունների կողմից պահանջվող բարեփոխումները անիրականանալի են»:²⁰⁹ Ավելին, նա համարձակություն ունեցավ մերժել դեսպանների պահանջը՝ էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայ բնակչության դահիճ, հայդերանըլը ցեղի առաջնորդ, համիդիե 25-րդ գնդի կայմական Հուսեին փաշային դատի տալ: Հակառակը, ի հեճուկս դեսպանների, նա պարզապես նրան «Լիաքաթ» ոսկե մեդալով: Սուլթանական պարզների և շքանշանների արժանացան նաև ջարդերի ժամանակ «աչքի ընկած» այնպիսի արյունախում ջարդարարներ, ինչպիսիք էին էմին փաշան, Հաջի Թեյմուր փաշան, Դարվազ խանը և ուրիշներ,²¹⁰ որոնց անմարդկային արարքները սարսափի ճիչ էին առաջ բերում եվրոպական թերթերի ընթերցողների մոտ:

Ի պատասխան եվրոպական դեսպանների հավաքական և անհատական դեմարշների, «հանուն արդարության ու քաղաքակրթության» անհապաղ պատժելու հայկական ջարդերի մեղավորներին, թուրքական դիվանագիտությունը վարպետորեն օգտագործում էր իր ավանդական «փափուկ բարձը», բնավ չառարկելով նրանց պահանջներին, համաձայնվելով դեսպանների ասածների և նրանց կողմից բերված փաստերի հետ, բայց և ոչինչ չանելով և նախկինի պես շարունակելով իր արյունոտ գործը:

Հատկանշական է, որ իրենց հեղափոխականներ հորջորջող իթթիհադականները ևս հանդես եկան հայկական ջարդերն արդարացնող փաստաբանների դեմ: Օրինակ, երիտթուրքերի օրգան «Մեշվերեթ»

թերթը զայրանում էր Սպաղանքի հայության կոտորածի առթիվ եվրոպական մամուլի հայտարարած բողոքի համար և հարց էր տալիս, թե ինչո՞ւ Անգլիան և Ֆրանսիան կարող են Աֆրիկայում տեղաբնիկներին սպանել, իսկ քրդերը և թուրքերը չեն կարող իրենց իմացած ձևով դատաստան տեսնել հայ «ավազակների» հետ:²¹¹

90-ական թվականների ջարդերից հետո Ստամբուլի հրահանգով Արևմտյան Հայաստանի տեղական իշխանությունները բռնագրավում էին երկիրը լքած տասնյակ հազարավոր հայերի հողերը, շարժական և անշարժ գույքը և դրանք հանձնում քրդական ավատատերերին, ջարդերի մասնակից աշիրեթապետներին, համիդիե գնդերի հրամանատարներին՝ սեփականության իրավունքով և կադաստրային ձևակերպումներով: Հայ գյուղացիների և հողի այլ սեփականատերերի համատարած հողագրկումը հանգեցրեց քրդական աղաների, բեկերի, շեյխերի, աշիրեթապետերի և այլն նոր տիրույթներ առաջանալուն: Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում թուրքական կառավարությունը հետևողականորեն աշխատում էր հայերից վերցնել հողերն ու դրանք հանձնել քրդերին:²¹² Դա անխուսափելիորեն հանգեցնում էր հայ բնակչության կախման էլ ավելի ուժեղացմանը քրդական ավատական դասից: Կառավարության հովանավորությունից օգտվող այդ «նոր հողատերերի» վարքագիծը հիշեցնում էր դերբեթյությունների ժամանակաշրջանը: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Ի. Ա. Չինովկը նշում էր, որ քրդական աղաներն ու բեկերը հայ գյուղացիությանը վերաբերվում էին ինչպես իրենց ստրուկների:²¹³ Այդ նույնը վկայում էր նաև անգլիացի գիտնական-ճանապարհորդ Լինչը. «Այդ քրդերի, մանր չինովնիկների ու քաղցած զափթիեների շրջանում հայ հողագործները կյանքի ու մահու միջև մշտապես մազից են կախված: Ժամանակ առ ժամանակ որևէ փառամոլ չինովնիկ հնարում է «հեղափոխություն» և գյուղը վեր է ածվում այնպիսի սարսափների ասպարեզի, որից սառչում է արյունը», – գրում է նա:²¹⁴

Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային արտագաղթի հետևանքով գնալով նվազում էր հայ բնակչության տեսակարար կշիռը: «Ազատված» կամ դատարկված վայրերը կառավարության թողտվությամբ զավթվում էին վաչկատուն քրդական ցեղերի կամ տարբեր էթնիկական խմբերի (չերքեզներ, լազեր, թուրքեր և այլն) պատկանող մահմեդական բնակչության կողմից:²¹⁵ Այսպիսով Արևմտյան Հայաստանը օրըստօրե կորցնում էր իր նախկին էթնիկական պատկերը: Կառավարության կողմից իրագործվող այդ քաղաքականության նպատակներից մեկը Ռ. Ի. Տերմենը համարում էր հետևյալը. «Կառավարությունը ձգտում է քրդերին բնակեցնել հայերի մեջ հեղափոխական պրոպագանդային հակազդելու

համար»,²¹⁶ ասել է թե հայ ժողովրդի ազատագրական շարժումը քրդական տարրի միջոցով անդամալուծելու համար:

Գնալով համիդիե գնդերը դառնում էին ավելի ու ավելի սանձարձակ: Նրանք այլևս չէին բավարարվում լոկ հայ գյուղացիության կողոպուտով, այլ սկսել էին կողոպտել ու բռնություններ գործադրել նաև իրենց ցեղակիցների՝ թուրքերի, արաբների և կայսրության այլ ժողովուրդների նկատմամբ: Ռ. Բեկգուլյանցը գրում էր, օրինակ, որ Մուշի հովտի գլխավոր ավագաններ Մուսա բեկը, Կասըմ բեկը և ուրիշներ «հավասարապես կողոպտում են ինչպես իրենց ցեղակիցներին, այնպես էլ հայերին»:²¹⁷ 1900 թ. գարնանը Վասպուրականի շրջանում հարյուրավոր թուրք գյուղացիների ստորագրություններով մի հանրագիր ուղարկվեց տեղի վալիին որպես բողոք համիդիեների վայրագությունների դեմ:²¹⁸ Սակայն կառավարությունը պատասխանեց, որ ինքը չի ուզում լսել նրանց դեմ որևէ բողոք: Վանի թուրքերը պատրաստեցին նաև Բ. Դանան ուղղված մի հանրագրություն, որով պահանջում էին կամ անմիջապես զոհացում տալ իրենց բողոքին և ապագա ապահովության երաշխիքներ և կամ տալ իրենց բնակության վայրերից գաղթելու հնարավորություն: Հայդերանլը ցեղի աշիրեթապետեր, համիդիե միրալայ (գնդապետ) Քյոռ Հուսեին փաշան, Հաջի Թեյմուր փաշան և Էմին փաշան տեսնելով, որ խնդիրը բարդանում է, որոշեցին հանգստացնել թուրք բնակչությանը, խոստանալով, որ նրանց ձեռք չեն տա:

Համիդիեների ավերիչ արարքներին նույնիսկ չէին կարողանում դիմագրավել կայսրության արաբական նահանգների ռազմաշունչ բեղվին ցեղերը: Նրանք պահանջում էին Մոսուլի և Հալեպի նահանգներից քրդերին հեռացնել և տեղափոխել այլ վայրեր, հակառակ դեպքում սպառնալով դիմել կտրուկ միջոցների:²¹⁹ 1900 թ. արաբական շամմար ցեղը զինված հակահարված տվեց Իբրահիմ փաշայի համիդիե զնդերին: Բանը հասավ նույնիսկ նրան, որ 1900 թ. ամռանը Վանի նահանգի թուրքերն ու ոչ աշիրեթային ռայաթ քրդերը մի խնդրագիր ներկայացրին տեղի ռուսական հյուպատոսին, որտեղ ասվում էր, որ համիդիե զնդերի գործադրած բռնություններից ու կողոպուտներից իրենք արդարություն են փնտրում «ռուսաց շահնշահի մոտ», որովհետև «մեր կառավարությունը ոչ կը հարցնե, ոչ կը փնտրե և ոչ իսկ մեզ տերություն կընե»: Այնուհետև նշվում էր, որ եթե ռուսական կառավարությունը «մեր ներկա թշվառ վիճակի մեջ մեզ օգնելու, մեր վրա հսկելու և մեզ այս թշվառությունից և անձուկ վիճակից ազատելու կամք հայտնի, մենք բոլորս էլ նրա դրոշի տակ կմտնենք և հպատակ կդառնանք»:²²⁰

Համիդիեների այս խժժությունները անշուշտ կատարվում էին թուրքական իշխանությունների աչքի առջև: Նրանց ամենախտոշոր հովա-

նավորը մուշիր Ձեքի փաշան էր, որին ժողովուրդը մակամվանել էր «Հայաստանի դահիճ»: Հարցը միայն այն չէր, որ Ձեքի փաշան իրականացնում էր պետության կողմից նախանշված ու ծրագրված քաղաքականություն, ուստի ջարդարար ու կողոպտիչ համիդիե հրամանատարների նկատմամբ ոչ մի պատժիչ միջոցառում չէր ձեռնարկում: Հարցը կայանում էր նրանում, որ համիդիեների կողմից իրականացված կողոպուտների պատկառելի մասը մտնում էր իր գրպանը: Սակայն գործը դրանով չէր սահմանափակվում: Ռուսական դիտորդները գրում էին, որ «քրդերի կողմից էրզինգան (որտեղ գտնվում էր Ձեքի փաշայի ռազմակայանը) ուղարկվող դրամական նվերները այնտեղից ճանապարհվում են նաև Բոսֆոր, փաշաների և ավելի վերև գտնվող մարդկանց տները»:²²¹

Այսպիսով Արևմտյան Հայաստանում ամենուրեք իշխում էր բիրտ ու վայրենի ուժը, անիշխանությունն ու քաոսը: Խոսք անգամ չէր կարող լինել անձի, գույքի անվտանգության, առավել ևս պատվի ապահովության մասին: Այն բոլոր նահանգները, ուր ոտք էին դնում համիդիե զնդերը, կարճ ժամանակում վեր էին ածվում ավերակների:

Այդ բոլորի նկատմամբ անտարբերությամբ վերաբերվող սուլթանական կառավարության համար կար մի բան, որը լրջորեն մտահոգություն էր պատճառում նրան: Բանը նրանումն էր, որ 90-ական թվականների հայկական ջարդերից հետո Արևմտյան Հայաստանից ստացվող եկամուտները խիստ նվազել էին: Քայքայված երկրամասի բնակչությունը դժվարանում էր մուծել պետական հարկերը: Մյուս կողմից հայերից խլված հողերի հաշվին գոյացած քուրդ նորելուկ հողատերերի խավը հրաժարվում էր հարկեր մուծել: Հատկապես գանձարանը մեծ վնասներ էր կրում աղնամի (անասունների համար գանձվող հարկի) բերած եկամուտների կտրուկ կրճատման պատճառով: Ջարդերից հետո հայկական գյուղերում փաստորեն այլևս անասուններ համարյա չէին մնացել, որովհետև նրանց մեծ մասը քշել-տարել էին քուրդ, թուրք և չերքեզ ավատատերերն ու ցեղապետերը, տեղական իշխանավորները և այլն: Ճիշտ է, այդ բոլորի հետևանքով քրդական ավատատերերին պատկանող հողերը խիստ մեծացել էին, սակայն ինչպես նշվեց, նրանք կամ հրաժարվում էին մուծել աղնամի հարկը, կամ իրենց հողերի գլխաքանակը ցույց էին տալիս խիստ նվազեցված թվերով: Եվ թեև սովորաբար կառավարության սահմանած տուրքերը միշտ նպատակ ունեին ճնշել քրիստոնյա տարրը, սակայն գանձարանի դրամական մուտքերի կտրուկ անկումը ստիպեց կառավարությանը դիպչել նաև քրդերի շահերին և նրանց ստիպել մուծել պետական հարկերն ու տուրքերը:

1900 թ. գարնանը կառավարությունը պաշտոնյաներ ուղարկեց գավառները, որոնք սակայն ձեռնունայն վերադարձան, հանդիպելով

քրդերի կատաղի դիմադրությանը: Քանի որ նախկինում փաստորեն քրդերը աղնամի հարկ երբեք չէին մուծել, ուստի նրանց վերաբերյալ համապատասխան օրենք չկար: 1904 թ. այդ առթիվ կառավարությունն ընդունեց հատուկ օրենք: Դա առաջ բերեց քրդերի ըմբոստությունը: Ըմբոստացան նույնիսկ «ամենահավատարիմ» համարվող համիդիե գնդերի հրամանատարները: Սկսվեց ապստամբական շարժում: Առանձին վայրերում ապստամբած քրդերը ընդհարումներ ունեցան կառավարական զորքերի և ժանդարների հետ: Երկուստեք եղան մեծ թվով զոհեր: Բոթթանի, Խիզանի, Ջեզիրեի, Սինջարի քրդերը պահանջում էին, որ իրենց գավառների պաշտոնյաները և հատկապես դատավորները քրդեր լինեն:

Սուլթանը մի պահ ցանկացավ խոշոր զորամիավորումներ ուղարկել ապստամբների դեմ, սակայն կշռադատելով ստեղծված վիճակը և հասկանալով, որ հարցը կարող է ծանր կերպարանք ընդունել, ընկրկեց և «գործը անուշի կապեց»:

Քրդերի այս հերթական հակակառավարական ըմբոստությունը ծանր մտորումների մեջ գցեց Աբդուլ Չամիդին: Նա համոզվեց, որ եթե ինքը փորձի բռնության և ուժի դիմել թեկուզ և իր վեհապետական իրավունքները գործադրելու համար, իր դեմ ապստամբության դրոշ են պարզելու նույնիսկ այն քուրդ բեյերը, որոնք, թվում էր թե սուլթանի ամենահավատարիմ հպատակներն են: Աբդուլ Չամիդին թվացել էր, թե պաշտոններ և շքանշաններ շռայլելով ինքը ամբողջապես «զնել է» այդ ավատապետերին: Իսկ ամենակարևորը նա կարծում էր, թե կազմակերպելով 90-ական թվականների հայկական ջարդերը իրեն հաջողվել է քրդերին, որոնց ձեռքերը թաթախվել էին հայերի արյան մեջ, վերջնականապես դարձնել իր հլու կամակատարը, որ ինքը արդեն կայունացրել է իր դիրքերը Արևմտյան Չայաստանում, որ հայ ժողովուրդը սարսափից կորցրել է դիմադրելու ընդունակությունը և հնազանդվել իր կամքին, որ պետությունները լվացել են իրենց ձեռքերը և այլևս չեն պատրաստվում լրջորեն պաշտպանել իրենց «հավատակիցներին»: Սինջոն իրականում ամեն ինչ ստացվում էր հակառակը: Ջարդերից հետո հարյուր հազարավոր հայեր դարձան թուրքական պետության անհաշտ և ոխերիմ թշնամիներ:²²²

Քրդական զանգվածների շրջանում նույնիսկ անզեն աչքով կարելի էր նկատել խուլ դժգոհություն: 90-ական թվականների վերջերին առաջին անգամ կայսրության մեջ երևան եկան քուրդ «քաղաքական հանցագործներ»: Քրդերի մեջ խմորվում էր որոշակի շարժում: Անատոլիայում և հենց մայրաքաղաքում տեղի էին ունենում քրդերի ձերբակալություններ: 1897 թ. տեղի ունեցավ քրդերի հանդեպ քաղաքական դատ, որտեղ մի քանի քուրդ անվանի գործիչներ ամբաստանվում էին իբրև իրենց ցեղակիցների գրգռողներ թուրքական կառավարության դեմ:²²³

Քուրդ ազգայնականների կողմից 1898 թվականից արտասահմանում (սկզբում Կահիրեյում, իսկ ապա Ժնևում և այլն) հրատարակվող «Քրդստան» թերթը, որն արտահայտում էր սթափ մտածող քրդական մտավորականության խոհերը, հանդես էր գալիս քուրդ ժողովրդի՝ հայերի նկատմամբ բռնած խելահեղ դիրքի դեմ և պահանջում էր հայ ժողովրդի հետ հաստատել համերաշխություն:

«Քրդստանը» առաջ էր քաշում նաև քաղաքական խնդիրներ: Նա կոչ էր անում դիմադրել թուրքական կառավարության քուրդ տարրը բաժան-բաժան անելու քաղաքականությանը: Թերթի հրատարակիչ Աբդուրահման Բադրխանը իր հոդվածներում աշխատում էր փաստերով ապացուցել, որ քուրդ ժողովրդի հետամնացության ու խավարի միակ պատճառը թուրքական կառավարությունն է և որ նրան ձեռնադրել է քրդերի նման վիճակը: Երբ Փարիզում հրատարակվող «Անահիտ» ամսագիրը իր թղթակցի միջոցով դիմեց Աբդուրահման Բադրխանին, խնդրելով պարզաբանել իր թերթի ուղղությունը, վերջինս պատասխանեց. «...գիտե՞մ, թե քյուրտերուն և հայերուն շահը միևնույնն է, և ասոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներու միջև ... «Քյուրտիստանի» մեջ քրդերեն լեզվով հրատարակված հոդվածները ասոր վկա են: ... Ամեն տեսակ զոհողություն պիտի ընեն ջնջելու համար այն ատելությունը զոր Աբդուլ Չամիդ այս երկու ժողովուրդներու միջև դրած է...»:²²⁴

«Քրդստանը» գտնում էր, որ Փոքր ասիայում քրդերը թուրքերից կատարելապես տարբեր մի ազգություն են:²²⁵ Սա թուրքական կառավարության համար ծայրահեղ վտանգավոր մի հարցադրում էր, որովհետև դարեր շարունակ թուրքերը փորձում էին ներշնչել քրդերին, որ նրանք ինքնուրույն ազգություն չեն և որպես մահմեդականներ թուրքերի հետ միասին հանդիսանում են իսլամական ումմայի անդամ: Անդրադառնալով այդ հարցին, գերմանական հետախույզ Վալդեմար Բելկը, որը «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի թղթակցի անվան տակ շրջում էր Արևմտյան Չայաստանում, գրում էր. «Ի՞նչ պիտի պատահեր, եթե մի օր քրդերը մտածեին, թե իրենք իսկապես իրանական ցեղից են և որ թուրանական թուրքերի հետ ոչ մի ազգակցություն չունեն»: Նրա կարծիքով քրդերի մոտ ազգայնական զգացման արթնացումը և թուրքական իշխանության լուծը թոթափելու ցանկությունը գրգռելու համար դեռևս պակասում էր մի դրդիչ գործոն, գուցե մի անձ, որը կարող էր ամեն ռուպե հայտնվել և միացնել իրար դեմ թշնամացած ժողովուրդներին»:²²⁶

Հետաքրքիրն այն է, որ «Քրդստանը» դրսևորելով իր քաղաքական համակրանքը դեպի Սեօ Բրիտանիան, այնուհանդերձ, քրդերի ապագա բարօրության հույսը չէր դնում եվրոպական և ոչ մի տերության

վրա, այլ միայն քրդերի և նրանց «դրացի հայերի նիզակակցության» վրա: Ուստի նա «ամեն ճիգ ի գործ կդնե քյուրտի և հայու մեջ թուրքի մինչև հիմակ սերմանած ատելությունը արմատախիլ ընելու և զանոնք բնակակցի բարեկամական և բաղդակցի շահակցական կապերով միմյանց շաղկապելու»:²²⁷

Թերթի համարներից մեկում տպագրվել էր ջեզիրեցի մոլլա Սալեհի ստորագրությամբ մի թղթակցություն, որի մեջ ասվում էր, որ սուլթանը «ամբողջ քյուրտերը հայերու դեմ կհանե, անոնց վրա հարձակել կուտա: Մենք հիմակ այլևս կհասկնանք, որ հայը կնեղվի և իր տանջանքներեն կհեծկլտա, և այժմ թագավորի նպատակն ալ կհասկնանք: Ան կուզե, որ մենք միշտ հայերու հետ կոված մնանք: Բայց թող այլևս ուշքի գա և հավատացած լինի, որ մենք այսուհետև մեր պատվով վրա երդված ...բարեկամություն պիտի ընենք անոնց հետ: Մենք կըմբռնենք, որ մեր ամբողջ չարյաց պատճառը «պալատի» պառակտիչ և նեռ հոգիներն են»:²²⁸

«Քրդստան» թերթի բարձրացրած գաղափարները մեծ ոգևորությամբ ընդունվեցին հայկական շրջաններում: «Անահիտը», օրինակ, գրում էր. «Եթե անոնք (հայերը և քրդերը: - Վ. Բ.), որ նույն բռնության տակն են, իրարու հետ, չհամաձայնին, որո՞ւ հետ պիտի համաձայնին: ...Անհրաժեշտ է, որ քյուրտ և հայ թերթերը ուսումնասիրություններով և հողվածներով սկսին երկու դրացի ցեղերը իրարու ճանչցնել՝ իրենց «իրական» գույնով և «իրական» շահերով ջանան բառնալ այն արյունոտ գժտությունները, որոնք թուրք բռնապետության շահերուն միայն օգտակար եղած են մինչև ցարդ: Այս ուղղությամբ ջանքերը շատ ավելի գործնական ու ապահով են քրդա-հայկական կռիվը բառնալու, քան հայ հեղափոխական խումբերու հակաքուրդ հարձակումները: Հայը պետք է իր բոլոր միջոցներ՝ զենք, ուժ, դրամ, խելք դարձնե միակ թշնամիին, թուրք ռեժիմին դեմ, միակ նպատակին՝ ազգային-ազատագրության համար»:²²⁹

«Անահիտը» այն համոզմունքն էր հայտնում, որ «...քյուրտը չէ հայուն բուն թշնամին: Հայու թշնամին թուրք բռնապետական ռեժիմն է, որուն հավասարապես գերի են քյուրտը և հայը»:²³⁰

Այս մտայնությունը բնորոշ էր հայկական մամուլի մեծ մասին, անկախ կուսակցական պատկանելությունից ու քաղաքական ուղղվածությունից: 1898 թ. Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության օրգան «Դրօշակը» հրատարակեց (հայատառ քրդերեն և հայերեն) «Կոչ քրդերին» վերտառությամբ մի անստորագիր հողված,²³¹ որի հեղինակ քուրդ գործիչը ըմբոստացման հրավեր էր ուղղում իր ազգակիցներին, հորդորում էր համերաշխ լինել հայերի հետ, ճանաչել բուն թշնամին, չեմթարկվել թուրքական կառավարության դավերին, չմասնակցել հայերի կոտորածներին և այլն:

«Դրօշակը» 1901 թ. հրապարակեց նաև Բաղդադի բեյի որդի Աբդուռահմանի կոչը՝ ուղղված քուրդ ժողովրդին: Նրանում նշվում էր, որ «մինչև այժմ քրդական աղաները ծառայել են ոչ թե հայրենիքին, այլ փատիշահին: Այժմ պետք է ետ կենալ այդ ճանապարհից, դադարել սուլթանի ձեռքին գործիք լինելուց, վերջ տալ երկպառակություններին, միջցեղային կռիվներին և հակահայկական գործողություններին, գիտակցելով, որ այդ ամենով դուք կը քանդեք ձեր հայրենիքը և ձեր տունն ու տեղը»:²³² «Ձեր տեսած բռնավոր հարստահարություններուն վերջ մը դնելու համար, - շարունակվում էր կոչում,- հայերը ձեզի ամեն կերպով աջակցելու կազմ և պատրաստ են: Համերաշխության ու համաձայնության մեջ մի թերացեք: Այսպիսի վիճակի մեջ աստօտ հաջողությունը հետերնիդ է»:²³³

Սակայն գրավոր քարոզչության այդ քայլերը, ինչպես նաև դաշնակցության գործնական միջոցառումները քրդերի հետ համագործակցության եզրեր գտնելու ուղղությամբ. ոչ մի շոշափելի արդյունք չտվեցին, իսկ ավելի հաճախ պարզապես մնում էին անպատասխան: Անհաջողությամբ ավարտվեցին նաև դաշնակցության փորձերը ընդհանուր լեզու գտնելու քուրդ ցեղապետ-աշիրեթապետերի, հոգևոր առաջնորդների (շեյխերի, փիրերի) և այլն հետ, որոնք հանդիսանում էին քրդական հասարակության թելադրող ուժը: «Դրօշակը» գրում էր, որ «համոզել մի ցեղապետի (էլ-աղասի), կամ մի կրոնապետի (շեյխ) - դա միևնույնն է, թե համոզել նրա ամբողջ ցեղը, որն իր «կրոնավորական համաձայնության» մեջ գիտե միայն հնազանդվել իր իշխանավորներին և կատարել նրանց կամքը»:²³⁴

Միքայել Վարանդյանը հետևյալ կերպ է գնահատում այդ ուղղությամբ դաշնակցության գործադրած ջանքերի արդյունքները. «մեր անխոնջ գործիչներու քարոզչությունը քյուրդերու մեջ մնաց ձայն բարբառ հանապատի: Հ.Հ. Դաշնակցությունը անբավ եռանդ ու զոհեր տվավ երկու դարավոր հարևաններու համերաշխության գործին, բայց չկարողացավ իրագործել քիչ շատ լուրջ և տևական գործունեություն - նա չկարողացավ անգամ չեզոքացնել այդ գորավոր դրացիի հարձակողական բնազդները, չհաջողեցավ զայն համոզել, որ չդառնար կույր գործիք բռնակալության ձեռքին՝ հայ դատը խոշտանգելու, հայությունը բնաջնջելու նպատակով»:²³⁵

Հնչակյան կուսակցությունը ևս բազմիցս փորձեր է կատարել հայ-քրդական համագործակցության ուղղությամբ: Այդ գաղափարը նույնիսկ տեղ է գտել 1887 թ. նրա ընդունած ծրագրում: «Պետք է ջանալ,- ասվում է այնտեղ,- եթե հանգամանքները ներեն, միատեղ ապստամբել ընդհանուր թշնամու, թուրք կառավարության դեմ»:²³⁶ Սակայն մի շարք ձայն-

ղումներից հետո հնչակյանները ևս հանգել են այն եզրակացության, որ դա «գործնականապես անկարելիության սահմանի մեջ է».²³⁷

Այսպիսով, եթե նախկինում հայ-քրդական համերաշխություն հաստատելու միտքը հղացվել ու քննարկման առարկա էր եղել միայն հայերի մոտ, ապա XIX դարի վերջին այդ գաղափարը հող գտավ նաև սուլթանական կառավարության նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող առանձին քուրդ գործիչների մոտ:

Քրդական որոշ առաջնորդների քաղաքական տրամադրությունների մեջ կատարված փոփոխության մասին է վկայում հետևյալ փաստը: Շեյխ Օբեյդուլլայի որդու՝ շեյխ Մահմադ Սըղդի հետ դաշնակցական Մալխասի վարած բանակցությունների ժամանակ, որի նպատակն էր ձեռք բերել շեյխի աջակցությունը, որպեսզի նա իր հեղինակությամբ որոշ պայմաններ ստեղծի հայ ֆիդայիների և սահմանամերձ աշիրեթների միջև զենքի և հեղափոխական գրականության տեղափոխումը հեշտացնելու համար, շեյխը տալով իր համաձայնությունը, հայտարարում է. «...թուրքը կսպանե, քուրդն է մեղավոր: Կառավարությունը կհալածե, դարձյալ քուրդն է մեղավոր: Չկա գեշություն մը, որուն հեղինակը քուրդը չլինի, և չկա զուլում մը, որուն ենթակա հայը չլինի ... Գիտենք, որ այս հողին վրա դուք այնչափ հին եք, որչափ մենք և նորեկը թուրքն է, որու հանդեպ երկուքս սիրալիր տրամադրություն մը ունենալու պատճառ չունինք: Մեր հողամասը ընդարձակ է, լայն ու լայն կբավե մեր երկուքին ալ: Սկսելով Բաշգալայեն ու Նորտուզեն մինչև Մոսուլ մերն է, վերն ալ՝ ձերը: Ահա այս բանի մասին է, որ պետք է մտածենք մենք».²³⁸

Անկասկած քրդերի շրջանում նկատվող այս տրամադրությունները հայտնի էին սուլթանական կառավարությանը, որը լրջորեն անհանգստացած էր: Այդ վտանգավոր երևույթը արմատախիլ անելու համար նա իր դավադրական զինանոցից կրկին հանեց բազմիցս փորձված զենքը՝ երկու ժողովուրդներին մեկը մյուսի դեմ հանելու միջոցը, սակայն այս անգամ նոր տարբերակով՝ ոչ թե քրդերին հայերի դեմ հանելու, այլ վերջիններիս քրդերի դեմ տրամադրելու հնարքը: Որքան էլ որ անհավանական էր, այս անգամ քրդերը հայտարարվեցին օսմանյան կառավարության և հայերի «ընդհանուր թշնամի»:²³⁹ Այդ կապակցությամբ Արշակ Չոպանյանը հանդես եկավ մի հողվածով, որտեղ գրում էր. «Այդ անիշխանական կացությունը, զօր Հայաստանի մեջ կտեսնենք, կրկնություն է երևույթի մը, որ արդեն տեղի ունեցած է Հունաստան, Սուրիա, Պուլկարիա և այժմ նմանապես կհայտնվի Մակեդոնիո մեջ ... Միշտ թուրք կառավարությունն է եղած, որ մահմեդական հասարակությունները քրիստոնյա հասարակությանց վրա արձակած է: Ան է, որ ջարդերուն հրամանը տված է: ... Բ-

յուրտերը ուրիշ բան չեն եղած և չեն միշտ, բայց եթե գործիքներ թուրք կառավարության ձեռքը, որ միակ հանցավորն է»:²⁴⁰

1903 թ. աշնանը Ստամբուլի կառավարությունը որոշեց անհնազանդ Սասունը դատարկել հայերից և այն բնակեցնել Ռուսաստանից թուրքիա տեղափոխված մահմեդական վերաբնակիչներով՝ մուհաջիրներով: Սակայն կառավարության համար միանգամայն անսպասելի կերպով պարզվեց, որ այդ նույն քրդական ցեղերը, որոնց հաջողվել էր 90-ական քվականներին հրահրել հայերի դեմ և դարձնել ջարդերի ակտիվ մասնակիցներ, ոչ միայն չեն ցանկանում մասնակից լինել այդ գործին, այլև չի բացառվում, որ նույնիսկ օգնեն սասունցիներին, որոնք պատրաստվում էին դիմադրություն ցույց տալ կառավարության վերոհիշյալ որոշմանը:²⁴¹ Ի պատասխան կառավարության հրավերի, հարձակում գործելու Սասունի վրա, մի շարք աշիրեթներ հայտարարեցին. «Ասկե առաջ ալ մեզի դրդեցիք այդպիսի բան մը ընելու, սակայն երբ եվրոպացի քննիչներ եկան, ամբողջ պատասխանատվությունը մեր վրա ձգեցիք, իբր թե ինքնագլուխ ըրած ըլլայինք այդ գործը: Ու եթե հայերու ցուցմունքը չըլլար՝ թե քրդերը չէին, այլ զորքը, եվրոպացին այժմ մեզ ջնջած կըլլար»:²⁴²

Անդրադառնալով 1903 թ. Սասունում թուրքական դավերի ծախողմանը, էրզրումում անգլիական հյուպատոսը գրում էր. «Մի նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրության մեջ վերջին ամիսների ընթացքում. դա քրդերի աշխատակցությունն է հայերի հետ: Հայտնի է, որ եթե թուրք կառավարությունը այս անառ հրաժարվեց Սասունի վրա հարձակվելու մտքից, դրա պատճառներից մեկն էր քրդերի անսպասելի դիրքը, որոնք մերժեցին իրենց աջակցությունը առաջարկված հարձակման համար»:²⁴³ Այս անհաջողությունը սակայն չփաստեցրեց սուլթանական կառավարությանը: Բոլոր այն ցեղապետերը, որոնց նկատմամբ կասկածներ կային, որ զաղտնի կապեր են պահում Սասունի հայ ֆիդայիների հետ, ձերբակալվեցին և բանտերը նետվեցին: Միաժամանակ կրոնամուլ, ինչպես նաև արյունարբու ու անսասն թրդական տարրերից կազմակերպվեց «Ձանբեզար» անունով մի կազմակերպություն, որի խնդիրն էր անհնազանդ համիդիների և առհասարակ կառավարության կամքին չենթարկվող քրդերի զինաթափումն ու ահաբեկումը:

Նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո 1904 թ. հունվարին թուրքական զորքերը կրկին շարժվեցին դեպի Սասուն: Սուլթանը որոշել էր վերջնականապես իրականացնել «Սասունը առանց հայերի» իր վաղեմի մտախղացումը: Սասունը պաշարվեց և խաղաղ ու անզեն բնակչությունը կոտորվեց:

Թեև, ի վերջո, կառավարությանը հաջողվեց այս անգամ էլ սպառնալիքների և կաշառքի միջոցով մի շարք աշիրեթների ուղքի հանել սա-

սունցիների դեմ,²⁴⁴ սակայն այնուամենայնիվ այնտեղ տեղի ունեցած ջարդերի, ավարառությունների և այլ հանցագործությունների վճռական դերը պատկանում էր կառավարական գործերին: «Քրդերը չէին Սասունի ոճրագործությունների գլխավոր հեղինակները, – գրում էր «Մուրճը», – այլ կարգ ու կանոնի ենթակա և օրենքի պահանջմանց հպատակ կանոնավոր բանակը: Ջարդը կատարվում էր ոչ թե քրդերի նահապետական շեշխանեով (հին տիպի հրացան: – Վ. Բ.), այլ նորահմար ու կատարելագործված պետական հրացաններով ու թնդանոթներով»:²⁴⁵

Սասունցիներն աշխատում էին հնարավորին չափ խուսափել քրդերի հետ բախումներից: Անդրանիկ Օզանյանը, որը գտնվում էր մարտնչող սասունցիների շարքերում, կարգադրում էր «քրդերի հետ գործ չունենալ և անոնց բարեկամությունը շահիլ», – արձարձել միության գաղափարը, արթնացնել նրանց միտքը իրենց կեղեքող կառավարության ու բեկերի դեմ, բացատրել հայերի հետ նաև քուրդ աշխատավորության շահերի պաշտպանության համար մղած պայքարի էությունը: Մասամբ այս քարոզչության, մասամբ էլ կառավարության հանդեպ ունեցած իրենց դժգոհության պատճառով մի շարք ցեղեր և նույնիսկ համիդիե զինվորներ հրաժարվեցին կռվի մեջ մտնել սասունցիների դեմ:²⁴⁶

Ավերելով այդ անհնազանդ երկրամասը, կառավարությունը մի շարք վայրերում՝ Տափիկում, Սեմալում, Տալվորիկում, Գելիգուզանում և այլն կառուցեց զորանոցներ՝ գործեր տեղակայելու համար, որպեսզի բացառվեն սասունցիների նոր ընդվզումները:

Սասունի իրադարձությունները կրկին եվրոպական քաղաքական շրջանների և դիվանագիտության ուշադրությունը բևեռեցին Հայկական հարցի վրա: Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն հայտարարեց, որ Թուրքիայում շարունակվում է պահպանվել մի այնպիսի վարչություն, «որի հանդեպ ապստամբությունը հանդիսանում է միակ ապաստանը հուսահատված ազգաբնակչության համար»:²⁴⁷ Իսկ Ֆրանսիս դը Պրեսանսեն ֆրանսիական պառլամենտում հայտարարեց. «Նրանք (սասունցիները: – Վ. Բ.) չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին, առանց զեթ փորձելու իրենց պաշտպանելու և բողոքելու: Նրանք պաշտպանվեցին ապրիլ ամսից ի վեր առանց տանելու հաղթանակը, որ անհնարին էր ...»:²⁴⁸

XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում սկսվեցին ազգային-ազատագրական և սոցիալական բնույթի շարժումներ արդուլիսմիդյան բռնակալական վարչակարգի դեմ: Ազգային և սոցիալական ճնշման դեմ պայքարը հատկապես լայն թափ ընդունեց Արևմտյան Հայաստանում, Բալկաններում և կայսրության արաբական վիլայեթներում: Մշտական տնտեսական տագնապը, սովը, հարածուն տուրքերը, հարկափա-

նության դժնդակ համակարգը, պաշտոնյաների բռնություններն ու հարստահարությունները և այլ գործոններ ի վերջո իրենց կրավորական վիճակից դուրս հանեցին նաև մահմեդականներին՝ թուրքերին, արաբներին, քրդերին և այլն և դրդեցին հանդես գալ կառավարության դեմ:

1905 թ. աշնանը ապստամբության դրոշմ կրկին բարձրացրեց Դերսիմը:²⁴⁹ Շրջակա հայ բնակչությունը միացավ ապստամբներին, նրանց հետ համատեղ զինված դիմադրություն ցույց տալով կառավարական պատժիչ զորամասերին: 1905 թ. վերջին և 1906 թ. սկզբին քրդական ապստամբություններ բռնկեցին Դիարբեքիում, Բայազետում, Բիթլիսում և էրզրումում: Այս ապստամբությունները ևս աջակցություն գտան հայ բնակչության կողմից:²⁵⁰ Թուրք-իրանական սահմանամերձ շրջաններում տեղի ունեցան քրդական բնակչության հարձակումներ թուրք զինվորների վրա:²⁵¹ Կառավարության հալածանքներից ազատվելու համար քրդերի խոշոր զանգվածներ տեղափոխվեցին Իրան: Մայրաքաղաքում 1906 թ. ապրիլին Բադրխանների ընտանիքի անդամները սպանեցին Ստամբուլի ոստիկանապետ Ռեդվան փաշային: Հետաքննությունից պարզվեց, որ ահաբեկիչները և մի խումբ քրդական ազդեցիկ առաջնորդներ Աբդուրբեգակ - բեյը և Ալի Շամիլ - փաշան (երկուսն էլ Բադրխանների ըմբոստ ընտանիքից – Վ. Բ.) մահափորձ էին նախապատրաստում նաև անձամբ սուլթանի դեմ: Սարսափահար բռնակալը ամագորույն դաժանությամբ պատժեց դավադրության մասնակիցներին, նրանց աքսորելով Տրիպոլիտանիայի անապատները՝ այնտեղ ճաշակելու թուրքական բանտերի այլանդակություններն ու սարսափները:²⁵² Հետաքննությունից պարզվեց նաև, որ քրդական առաջնորդները գաղտնի մշակում են քաղաքական պահանջներ, մասնավորապես նպատակ ունենալով հասնել նրան, որ լրիվ վերացվի կառավարության և տեղական իշխանությունների միջամտությունը ցեղերի ներքին գործերին և Քրդստանը ձեռք բերի ներքին ինքնավարություն:

Երկրի արևելքից մայրաքաղաք էին հասնում տագնապալից լուրեր քրդերի նորանոր ելույթների մասին: Գնալով հուժկու թափ էր ընդունում միլի բրդական ցեղի առաջնորդ Իբրահիմ փաշայի ապստամբությունը, որը սկսվել էր դեռևս 1901 թ. և իր գագաթնակետին էր հասել 1907-1908 թթ.: Այդ հզոր ցեղապետի իշխանությունը տարածվում էր մի ընդարձակ շրջանի վրա, որը եռանկյունի էր կազմում Դիարբեքիից մինչև Ջեզիրե, Մարդին և Վերանշեհի: Իբրահիմ փաշան ստացել էր «Քրդստանի չթագադրված թագավոր» մակդիրը:²⁵³ Նրա շարժումը խարխուլում էր սուլթանի իշխանությունը Դիարբեքիի, Հալեպի, Ուրֆայի, Մարդինի և Դերիքի նահանգներում:

Ավելի հաճախակի էր դառնում նաև ապստամբ քրդական ցեղերի համագործակցությունը հայ բնակչության հետ: Հատկապես սերտ համագործակցություն էր ստեղծվել բակուրի, հասանանլի, եզնանի, միրանի, դուդերի, ալանի և մի շարք այլ աշիրեթների հետ: Վասպուրականում եզիդները Ջահանգիր աղայի գլխավորությամբ հայերի հետ համատեղ զինված ընդհարումներ ունեցան կառավարական զորքերի հետ: Նույնպիսի մի դաշինք ստեղծվեց հայերի և Դերսիմի ղզլբաշների միջև, երբ 1907 թ. աշնանը նրանք կրկին ապստամբեցին կառավարության դեմ: Այդ ապստամբության լուրը այն աստիճանի զայրացրել էր սուլթանին, որ նա հրամայեց մինչև վերջին մարդը բնաջնջել Դերսիմի բնակչությանը:²⁵⁴ Ապստամբների ղեկավարները օգնության խնդրանքով դիմեցին հայերին: Հնչակյան գործիչ Դուռնիկյանի և ապստամբների առաջնորդ շեյխ սեյիդ Իբրահիմի միջև համաձայնություն կայացավ, ըստ որի հայերը պետք է դերսիմցիների համար հայթայթեին պարեն, զենք, ռազմամթերք և այլն, բացի այդ Դերսիմ մտցնեին որոշ թվով հայկական մարտական ուժեր: Իսկ սեյիդ Իբրահիմը պարտավորվում էր իր ազդեցության տակ գտնվող, ինչպես նաև բարեկամ այլ ցեղերի ոտքի հանել թուրքական կառավարության դեմ: Թեև պայմանավորվածության համաձայն հնչակյան կուսակցությունը որոշ քանակությամբ զենք հատկացրեց դերսիմցիներին, սակայն ամբողջությամբ վերցրած ծրագիրը չիրագործվեց գլխավորապես դրամական միջոցների բացակայության պատճառով:

Օսմանյան կայսրությունում մինչև 1907 թ. եզիդ բնակչությունը որպես այլադավաններ ազատված էր զինվորական ծառայությունից: Սակայն, 1907 թ. ընդունվեց օրենք եզիդներին ևս զինակոչելու մասին: Քանի որ նրանք չէին ցանկանում ծառայել թուրքական բանակում, ոստիկանության ու բանակի հետապնդումներից խուսափելու համար զանգվածորեն թաքնվում էին հարևան հայկական գյուղերում:²⁵⁵

Արևմտյան Հայաստանում ավելի հաճախակի էին դառնում նաև այն դեպքերը, երբ հայ և քուրդ գյուղացիությունը համատեղ պայքար էր մղում իրենց հարստահարող ու կողոպտող բեկերի ու աղաների դեմ: Ռուս դիտորդներից մեկը հայտնում էր, որ 1907 թ. հայ գյուղացիները 48 ժամ շարունակ Վանի վիլայեթի Շատախի շրջանում կռվում էին քուրդ ավազակների դեմ, որոնք քշել տարել էին ռայաթ քրդերին պատկանող մեծ քանակությամբ անասուններ: Հետ խլելով այդ անասունները, հայերը դրանք հանձնում են տերերին՝ քուրդ գյուղացիներին:²⁵⁶ Անկասկած նման դեպքերը մեծապես նպաստում էին հայ և քուրդ բնակչության մերձեցմանը և փոխադարձ վստահություն ձեռք բերելուն: Ուշագրավ փաստ է, որ 1908 թ. սկզբներին Դերջանի շրջանի գյուղերի քուրդ բնակչության մի մասը անդամագրվել էր հնչակյան կուսակցությանը: Այդ վտանգավոր

երևույթի առաջն առնելու համար կառավարությունը ձեռնամուխ եղավ այդ քրդերի, ինչպես նաև հիշյալ շրջանի հնչակյան գործիչների զանգվածային ձերբակալությունների:²⁵⁷

1907 թ. Բայբուրդի սանջակում մոտ չորս հազար քրդեր հարձակվեցին թուրքական գյուղերի վրա և ավերեցին դրանք:²⁵⁸ 1906-1907 թթ. և 1908 թ. սկզբին խոշոր հակակառավարական ելույթներ տեղի ունեցան Էրզրումում, Բիթլիսում, Կաստամունիում և այլ քաղաքներում, որոնց մասնակցում էին թուրքեր, քրդեր, հայեր, հույներ և այլն:²⁵⁹ Էրզրումում կազմակերպվեց «Միլլեթ մեջլիսի», որը ղեկավարելու էր մահմեդականների շարժումը:²⁶⁰ Կառավարական զորքերը հրաժարվեցին ապստամբների վրա կրակ բաց անել, հայտարարելով, որ իրենք «պատրաստ են կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը, բայց իրենց եղբայրների վրա չեն կարող զենք բարձրացնել»:²⁶¹

Կառավարությունը փորձեց հայերին ներկայացնել որպես այդ ապստամբությունների և հուզումների դրդիչներ ու հրահրիչներ, թշնամանք սերմանելու համար նրանց ու մահմեդականների միջև: Բայց ապարդյուն: Այդ առթիվ «Դրոշակը» գրեց. «Սև օրեր են գալիս Աբդուլ Համիդի համար ... Ամբողջ Փոքր Ասիան ասես բռնվել է հեղափոխական խմորման տենդով: Բաժակը լցվում է, բոլոր ժողովուրդներն են այժմ ըմբոստանում սովի ու բռնության ռեժիմի դեմ: Եվ բոլոր ժողովուրդների դեմ է ուղղված սուլթանական ներկա հակադարձ շարժումը, ներկա ռեակցիան: Անցա՛վ ժամանակը, երբ նա մեն-մենակ հայ փոքրաթիվ ժողովուրդն էր տեսնում իր դեմ ծառայած և երբ նա ... խեղդում էր ընդ երկար հայ ըմբոստումները արյան հեղեղի մեջ ... Այսօր արդեն նա ստիպված է արշավել նույն դահիճի դերով իր հավատակից մուսուլմանների դեմ: Եվ մասսայի դեմ ... Մինչև օրս տաջիկ ու քուրդ անհատներ էին այդ արշավանքի առարկան, նրանց ուժը խորտակվում էր հեշտությամբ, առանց աղմուկի, մութ, խորհրդավոր անկյուններում, նրանք գնում էին հանգստանալու կամ հեռավայրերում կամ թե Բոսֆորի անդունդներում»:²⁶²

«Դրոշակի» հեղափոխական պաթոսով գրված այս տողերը շնչում էին լավատեսությամբ հայ ժողովրդի մտալուստ ապագայի վերաբերյալ, քանի որ դաշնակցությունը հույսեր էր փայփայում, որ սուլթանի գահի կործանումը պետք է իրականանա օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ:

Սուլթանական կառավարությունը վճռական միջոցներ ձեռնարկեց ապստամբական օջախները մարելու համար: Ստամբուլում քրդերի մասնակցությունը հակակառավարական շարժումներին դիտվեց որպես մահացու սպառնալիք, քանի որ Արևելյան Անատոլիան կայսրության կազմում պահելու ողջ համակարգը ճեղքվածք էր տալիս: Ռուստի Ստամ-

բուլը գործողության մեջ դրեց քրդական հուզումները ճնշելու մի համա-
լիր ծրագիր. Արևելյան Անատոլիա ուղարկվեցին լրացուցիչ զորքեր,
քուրդ ազգայնականները, որոնք մեղադրվում էին հակակառավարական
գործունեության մեջ, վտարվեցին մայրաքաղաքից,^{263ա} սուլթանի հրամա-
նով 1907 թ. ապրիլին Ստամբուլում փակվեց «ցեղերի դպրոցը» («Աշիրեթ
մեքթեբի հումայուն»),²⁶³ որի նպատակը թեև համիդիե գնդերի համար
սպաներ պատրաստելն էր, սակայն փաստորեն, այն վեր էր ածվել քուրդ
ազգայնականների գործունեության կարևորագույն կենտրոնի:

Քրդական ավատական դասակարգը սևհարյուրակայինի դեր էր
խաղում Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազա-
տագրական շարժումները ճնշելու գործում: Եթե քրդական առանձին գոր-
ծիչներ թեքվում էին դեպի հայերի հետ համագործակցելու նոր գաղա-
փարները, եթե քուրդ աշխատավոր ռայաթ գյուղացիությունը հարևան ժո-
ղովուրդների հետ ընդվզում էր իրեն հարստահարողների դեմ, ապա
քուրդ ավատատերերը, աշիրեթապետերը, աղաներն ու բեկերը, սուլթա-
նիզմի այդ հենարանները, միշտ թուրքական իշխանությունների և հարս-
տահարիչ բյուրոկրատիայի հետ էին: Նրանք կատաղորեն պաշտպանում
էին «խալիֆի սրբազան իրավունքները», արշավում իշխանությունների
կողմից «խառնակիչ ու հեղափոխական» հորջորջված հայ զանգվածների
դեմ, ամեն կերպ ձգտում էին հրահրել ազգային ատելություն և այլն: Ե-
րիտթուրքական կոմիտեի էրզրումի բջիջին պատկանող մի սպա քրդա-
կան աղաների ու բեկերի անսամձ վարքագծի ու խժոժությունների մասին
գրում էր. «Սուլթան Չամիդի մանրանկարն եղող ցեղապետերեն ու անոնց
անընդհատ ընդհարումներեն զգված ու հոգնած է մանավանդ հասարակ
ու աղքատ ժողովուրդը: Չի զգվիր և չի հոգնիր միայն ինքը՝ Աբդուլ Չամի-
դը: ... Վալիներն ու խղճի տեր անձերը քանի՜-քանի անգամ գրեցին
պետք եղած տեղը, որ քյուրտերի դրությունը կարոտ է բարելավման:
Բայց Պոլիսը լռեցուց այդ խղճամիտ մարդիկը, նկատելով՝ որ անոնք կը
հայոյեն Չամիդի բարենպատակ կազմակերպության դեմ: Կարճ երկրին
մեջ ապահովություն չկա: Չողը անմշակ, ժողովուրդը աղքատ, ամեն կողմ
ավերակ: Յուրաքանչյուր ցեղապետ, ամենևին բանի տեղ չդնելով կառա-
վարության գոյությունը, երկիրը կայրե ու կը մրկե այնպիսի բռնակալու-
յամբ մը, որ ախ քաշել կուտա նույնիսկ հին դերեբեյություններու
ետևեն...»:²⁶⁴

Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Չայրիկը 1907 թ. Նիկոլայ II-
ին հղած նամակում նկարագրելով արևմտահայության անելանելի ու ող-
բերգական վիճակը գրում էր, որ վերջին տասը տարիների ընթացքում
սպանված, ձերբակալված, աքսորված, սովից մահացած, բռնի իսլամա-

ցած հայերի թիվը չի գիջում, այլ գերազանցում է 1895-1896 թթ. ջարդերի
ժամանակ նրանց ունեցած կորուստների թվին:²⁶⁵

Շարունակվում էին հայերին պատկանող հողերի բռնագրավում-
ները: Հայկական գյուղերի վարելահողերի մեծ մասը անցել էր քուրդ և
թուրք բեկերի ձեռքը: Կառավարությունը վաճառքի էր հանել երկրից ար-
տագաղթած կամ փախստական հայերի հողերը և կալվածքները: Թուր-
քական երկրագործական բանկը իր հերթին զանազան մեքենայությու-
ններով հայ գյուղացիության ձեռքից խլում էր հողերը և դրանք վաճառում
թուրք և քուրդ պաշտոնյաներին: 1907 թ. սուլթանական իշխանություննե-
րը ձեռնամուխ եղան նաև հայկական եկեղեցապատկան հողերի բռնագ-
րավմանը: քրդական ավատատերերի կողմից դա ընկալվեց որպես հայե-
րի նկատմամբ նոր ավարառությունների ու բռնությունների թույլտվու-
թյուն: Չամիդիների և չերքեզ մուհաջիրների սանձարձակություններն ու
վայրագությունները Բիթլիսի վիլայեթում հասան այնպիսի չափերի, որ
1907 թ. հունիսին, Ռուսաստանի Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները
դիմեցին դիվանագիտական միջամտության Բ. Դռան առջև: Վերջինս թեև
ստիպված եղավ Բիթլիս ուղարկել մի հանձնաժողով համիդիե գնդերի
հրամանատար, գեներալ-լեյտենենտ (ֆերիկ) Ահմեդ փաշայի գլխավո-
րությամբ, սակայն նա ստիպեց համիդիե զորամասերի հրամանատարնե-
րին իրեն հատկացնել մի կլորիկ կաշառք գործը հարթելու համար: Այն
ստանալուց հետո նրա հանձնաժողովը իր զեկուցագրում գրեց, որ հայե-
րի բողոքները կեղծ են, իսկ նրանք, որոնք ավելի համառ գտնվեցին, Ահ-
մեդ փաշայի կողմից նետվեցին բանտերը, այնտեղ փոսելու համար:²⁶⁶

Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում հայերը զանգվա-
ծորեն քայքայվում և աղքատանում էին: Վանի վիլայեթում, օրինակ, գյու-
ղերի մեծ մասը քանդվեց ու ավերվեց, իսկ նրանց բնակիչները՝ և՛ հայեր և՛
ռայաթ քրդեր զրկվեցին գոյության ամեն մի միջոցից:²⁶⁷

Տարբեր շրջաններում կառավարությունը տեղավորում էր մեծ
թվով չերքեզների: Քրդական աշիրեթապետերը անմիջապես հասկացան,
որ բնավ ձեռնառու չէ իրենց տիրապետության ներքո գտնվող շրջաննե-
րում մահմեդական չերքեզ բնակչության առկայությունը, որին կողոպտե-
լը խիստ դժվար խնդիր էր, քանի որ նրանք ևս զինված էին և վարժ կողո-
պուտների գործում: Այդ պատճառով, եկամուտներից զրկված քուրդ աշի-
րեթապետերը իրար հետևից սկսեցին դիմումներ հղել կառավարությանը,
պահանջելով, որ նա այդ շրջաններից հեռացնի չերքեզներին և հետ վե-
րադարձնի հայ բնակչությանը:²⁶⁸

Խոսելով Արևմտյան Հայաստանում տիրող անտերուսչ վիճակի
մասին, Վանում ամերիկյան միսիոներ դոկտոր Ռեյնոլդը նշում էր. «Հայե-
րի բնաջինջ լինելը աղքատությունից և ճնշումից տեղի է ունենում այնպի-

սի նկատելի չափերով, որ 10-15 տարուց հետո հայկական հարցը թուրքիայում կկորցնի ամեն մի իմաստ»:²⁶⁹ Նույնը նշում էր նաև «Մշակը»։ «Այնտեղ, ուր հայը տասնյակ տարի առաջ հոծ բազմություն էր կազմում, այժմ այլևս իբրև մեծամասնություն կազմել չի կարողանում։ Այս նպատակն իրագործելու համար թուրք կառավարությունը, ի մեջ այլ միջոցների, մեծ խմբերով տարեցտարի մահմեդական գաղթականներ է տեղավորում հայկական նահանգներում։ Թե որքան եռանդով է առաջ տարվում այս քաղաքականությունը, շատ լավ երևում է հետևյալ փաստերից. էրզրումի վիլայեթ մինչև հիմա հասել են 9000 մահմեդական գաղթականներ, որոնց 8000-ը գաղթականաց հանձնաժողովի ջանքերով բնակեցված է Մուշի, Բուլանքքի, Տերջանի, Նամերվանի և Ալաշկերտի կողմերում։ ... - Նույնը սիստեմատիկաբար գործադրվում է մյուս վիլայեթներում։ Բացի այդ, հայի ոչ կյանքը և ոչ գույքն է ապահովված կամ պաշտոնական և կամ արհեստով ավագակներից»:²⁷⁰

Այսպիսով, XIX դարի վերջի և XX դարի սկզբի քրդական շարժումները չհանգեցրին հայ ազգային-ազատագրական շարժման հետ ձուլվելուն։ Քրդական ավատական դասակարգը, քրդերի շրջանում նահապետական ցեղային և ավատական հարաբերությունների տիրապետության պայմաններում, կարողացավ քուրդ ժողովրդի մեծ մասին տանել իր հետևից և տարանջատել նրան նույն բռնատիրության կողմից հարստահարվող հայ ժողովրդից։

Քրդական աղաներն ու բեկերը շահագրգռված չէին դաշինքի մեջ մտնել հայ ժողովրդի և հայ ազգային-ազատագրական շարժումների հետ, որովհետև նրանց շահերը անհարիր էին օսմանյան բռնատիրության տապալման և թուրքիայում ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետ, քանի որ բռնակալության տապալումը «կնշանակեր նրանց արքայական զանազան շնորհների փոշիացումը»։ «Մի ցնորք է, խելահեղ ցնորք, - գրում էր «Երկրի ծայրը», - տքնել քուրդ ֆեոդալներին լծելու մի այնպիսի գործի, խանդավառելու նրանց մի այնպիսի գաղափարով, որը տրամազօրեն հակասում է նրանց կենսական շահերին»:²⁷¹ «Այս վիճակին մեջ «անապատի քարոզ» կդառնար՝ ազատություն ճառել մարդուց՝ որոնք գոհ էին իրենց հատուկ ազատութենեն»:²⁷²

Չայ-քրդական հարաբերությունների հարցը քննելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ քրդական ավատական դասի համար հայ բնակչությունը հանդիսանում էր նրանց շահագործման օբյեկտ, բեկերի և աղաների հարստության ամենաառատափոս աղբյուրը։ Չետևաբար քրդական ավատական դասը կենսականորեն շահագրգռված էր, որ իրերի այս վիճակը մշտապես պահպանվի։

Սուլթանական բռնապետության դեմ ազատագրական պայքարի ճանապարհին հայ-քրդական համագործակցություն ստեղծելու դժվարություններից մեկն էլ այն էր, որ քուրդ ժողովուրդը մի նույնատարր ու միաձույլ ամբողջություն չէր կազմում։ «Արդ, ո՞ր աշիրեթի հետ պիտի դաշնակցեք և որի՞՞ անկախության շենքի հիմնաքարերը պիտի դնեք, - - հարց էր տալիս «Երկրի ծայրը» և ինքն էլ պատասխանում, - մեկի հետ բարեկամությունն ու դաշնակցությունը մյուսների ոխերիմ թշնամությունը պիտի զինն ձեզ դեն»:²⁷³

Մյուս դժվարությունն այն էր, որ թեև ցեղապետերի ու ցեղի շարքային անդամների շահերը նույնը չէին, այլ միանգամայն հակոտնյա, սակայն քաղաքականապես, տնտեսապես և կուլտուրապես հետամնաց, սնոտիապաշտ ու ավանդապահ, անգրագետ ու աղաթներով ղեկավարվող քուրդ զանգվածը որպես միակ հեղինակություն ընդունում էր լոկ իր ցեղապետին, որին նա ենթարկվում էր անվերապահորեն և առանց վարանելու։ Ռայան կամ ցեղի շարքային անդամը գրկված էր սեփական կամքով իր բախտը և ապագան որոշելու հնարավորությունից։ Իսկ քանի որ, ինչպես նշվեց վերևում, ցեղապետերի՝ ասել է թե քրդական ավատական վերնախավի, շահերին չէր համապատասխանում դաշինքը հայ ազգային-ազատագրական շարժման հետ, հետևաբար համագործակցության փորձերն էլ ավարտվելու էին կատարյալ ձախողմամբ։

«Բայց միթե քրդությունը, - գրում էր «Երկրի ծայրը», - իր ամբողջության մեջ դատապարտված է հեղափոխության համար մի բացասական երևույթ, հասարակական անարժեք դասակարգ մնալու. չէ որ քուրդ ռայան շահ ունի իր ցեղապետի անսահմանափակ իրավունքները ջախջախելով՝ իր մարդկային տարրական իրավունքները հաստատելու և գործադրելու։ Քուրդ ռայան կհեղափոխականանա միայն այն ժամանակ, երբ ... ցեղապետի մեջ կտեսնեն ոչ թե կուրքը, պահապան հրեշտակը, այլ թշնամին, իր բախտավորության դահիճը»:²⁷⁴

Այսպիսով, քուրդ ժողովրդին արևմտահայության ազատագրական պայքարին զինակից դարձնելու հանգամանքը դժվարանում էր նրանով, որ հակամարտ ցեղախմբերի բաժանված քրդերը չունեին հավաքական գոյության հեռանկար, որը իրենց հակադրեր թուրքերին, և շահերի նույնության հիմքի վրա բարեկամ ու զինակից դարձնելու հայ ազատագրական շարժմանը։

Այսպես թե այնպես, չնայած արևմտահայ գործիչների և հայ քաղաքական կուսակցությունների, մասամբ նաև քուրդ առանձին գործիչների ջանքերին, XIX դ. 90-ական թվականներին և XX դարի սկզբին հնարավոր չէր չէր իրագործել հայ և քուրդ ժողովուրդների դաշինքն ընդդեմ օսմանյան բռնապետության և Աբդուլ Չամիդ II-ի «զուլումի» վարչակարգի։

Քրդական առանձին ցեղերի հակաթուրքական, հակակառավարական շարժումները (առանձին բացառություններով) աջակցություն չգտան քրդական մյուս ցեղերի կողմից: Իր հերթին արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը ևս մեկուսացած մնաց դրացի քուրդ ժողովրդի ազատագրական պայքարից: Դա ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար: Դրանից մեծապես տուժեց նաև քուրդ ժողովուրդը:

Դեռևս 1907 թ. դեկտեմբերին Օսմանյան կայսրության բոլոր հեղափոխական կազմակերպությունների Փարիզում գումարված ընդհանուր կոնգրեսում, որը հայտնի է որպես երիտթուրքական երկրորդ համագումար, «Իթթիհադ վե թերաքքը» («Միասնություն և առաջադիմություն») կուսակցության ղեկավարները հայտարարում էին. «Կայսրության բոլոր ազգերը հաջորդաբար զոհ եղան Աբդուլ Համիդի եղեռնագործ կատաղության, անիկա հաջորդաբար մղեց զանոնք մեկը մյուսի դեմ, գրգռելով և արծարծելով արհեստական ատելություն ցեղերուն ու կրոններուն միջև. թուրք, հայ, հույն, պուլկար, վալազ, ալպանացի, արաբ, հրեա, տրուզ, քուրդ տեսան հալածանք, աքսոր, տարագրություն և ջարդ, իսկ հայկական կոտորածները, իբրև պսակ բոլոր անցյալ եղեռնագործություններուն, արժանացուցին իրենց հեղինակը, որ տակավին իր ոճրագործությունը կշարունակե Արաբիո մեջ մեծ մարդասպան և կարմիր սուլթան անուններուն»:²⁷⁵ Կոնգրեսի կարգախոս հռչակվեց «Կեցցե համերաշխությունը ցարդ ամմիաբան ազգերուն»:²⁷⁶

Իթթիհադականների կողմից բարձրածայն հայտարարված այս խոսքերը չէին կարող ոգևորություն առաջ չբերել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների մոտ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և 1876 թ. սահմանադրության վերականգնումը ի թիվս թուրքական բռնատիրության լուծը ճաշակած մյուս ժողովուրդների, վարդազույն հույսեր արթնացրեց նաև այդ բռնատիրության տևական հարվածները կրած հայ ժողովրդի մոտ, որը ենթադրում էր, թե երիտթուրքական «հեղափոխությունը» գալիս է փրկության և ազատության ճանապարհ բացելու իր առջև: Հայ ազգային կուսակցությունները, գործիչները և այլն արբեցուցիչ նիրհի մեջ ընկածի պես երևակայում էին, թե սուլթանական բռնապետության մղծավանջը այլևս ցնդել ու անեացել է:

Դաշնակցության գործիչներից Միքայել Վարանդյանը խոստովանում է. «Բերկրանքով ընդունեցինք օսմանյան սահմանադրությունը, ոչ մի

անջատական ձգտում, ոչ մի խոսք եվրոպական միջամտության, 61-րդ - հողվածի մասին: Դադարեցուցինք Բրո-Արմենիան ու եվրոպական պրոպագանդը, լծվելով մեր իսլամ դրացիներու հետ, ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրության հառաջադիմության և բարօրության»:²⁷⁷

Յնծությունը հատկապես մեծ էր Արևմտյան Հայաստանում: Ամենուրեք տեղի էին ունենում «տիեզերական եղբայրակցության» ցույցեր: Քրդերն ու թուրքերը իրենց հարգանքն էին մատուցում բռնապետության դեմ պայքարում ընկած հայ մարտիկների հիշատակին: «...Բաղեշի մեջ թուրքերն ու քուրդերն ուխտի գացին Սասնո հայ հերոս Սերոբ Աղբյուրի գերեզմանին, զոր ծաղիկներով զարդարեցին: Վանա մեջ հայեր ու թուրքեր խառն միթիկներ կազմեցին ու պանծացուցին հայ ֆետայիները ... Կարնո մեջ հայք փառավորեցին թուրք հեղափոխականները, զանոնք, որ քաջաբար մերժեցին անձնական տուրքը (վերկիի շահսի) ... պաշտոնանկ ընել տվել էին Ելտզի հլու գործիք վալին, զարկեր էին ոստիկանապետը ու գլխավոր դատավորը»:²⁷⁸ Իսկ Ստամբուլի նորաբաց խորհրդարանում հայ և քուրդ պատգամավորները մի շարք հարցերի կապակցությամբ միասնական տեսակետ էին պաշտպանում:²⁷⁹

Այդ բոլորը արևմտահայությանը տեղիք էին տալիս մտածելու, որ հայ-քրդական, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունները թևակոխում են անցյալում իր նմանը չունեցող միանգամայն նոր ու հուսադրող փուլ: «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչեյանը իր թերթում հրատարակեց «Հայերն ու քուրդերը» վերնագրով մի հոդված, որտեղ գրում էր. «Հիմա, սահմանադրական դրության մեջ, հայոց քաղաքականությունը պիտի ըլլա եղբոր պես ապրիլ քուրդերուն հետ, փորձով ցույց տալու համար, թե խաղաղության և օրինականության մեջ ապրելով շատ ավելի ոյուրին է կանոնավոր ապրուստ մը ապահովել: Քուրդերը ... սրամիտ ցեղ մ'են, իսկույն կըմբռնեն փոփոխված պարագաներուն նշանակությունը, կամ հովին ուստի փչելը, և երբ տեսնեն, որ սահմանադրական լուսամիտ ու լրջամիտ կառավարություն մը անմեղ ժողովուրդ մը ջարդելու, չարչարելու միտումը չունի այլևս, ու միտքը դրած է պահպանել երկրին հանդարտությունը, քուրդերը չեն ուշանար այս նոր հանգամանքներուն հարմարելու, և հայերն ալ ամեն շահ ունին քուրդերուն հետ հարմարելու ամեն կերպով և ամեն առթիվ»:²⁸⁰

Հայ գործիչներն աշխատում էին քրդերի հետ հարաբերությունների հարցում լինել վերին աստիճանի զգույշ, թույլ չտալ այնպիսի միջադեպեր, որոնք օգտագործվեին հետադիմության կողմից հայ-քրդական հարաբերությունները սրելու համար: Այսպես, երբ Եգիպտոսում հրատարակվող «Արև» թերթում տպագրվեց մի հոդված, որտեղ առաջարկվում էր, որ Թուրքիայում վերստին գործունեություն ծավալած «Միացյալ ընկե-

րութունը» իր ձեռքը վերցնի քրդերի ուսման ու կրթության գործը և «քաղաքակրթի» նրանց, «Աշակն» անմիջապես հանդես եկավ մի հողվածով, որի հեղինակն էր Համբարձում Առաքելյանը: Նրանում ասվում էր. «Այդպիսի մի հորդոր և առաջարկ մենք գտնում ենք ներկա պայմանների մեջ ոչ խելացի և ռացիոնալ, անգործնական: Նախ, նա պարունակում է իր մեջ թաքնված շովինիստական ցանկություն՝ հայացնել քյուրդերին. դա մի անմիտ, վնասակար ցանկություն է, թողեք քյուրդերը զարգանան իրանք՝ իրանց սեփական դպրոցներում, իրանց սեփական լեզվով, թողեք նրանք ստեղծեն իրանց համար գիր, իրանք տնօրինեն իրենց կուլտուրական վիճակը: Հայերը կարող են միայն, իբրև բարի դրացիներ, իբրև միևնույն երկրի քաղաքացիներ, նյութական աջակցություն ցույց տալ իրանց նվերներով քյուրտերին, երբ սրանք կձեռնարկեն դպրոցներ բանալ, կամ օգնել նրանց իրանց խորհուրդներով՝ կազմակերպել դպրոցական գործը»:²⁸¹

XIX դ. վերջերից քրդական իրականության մեջ գործունեություն ծավալած ազգայնական հոսանքը, որի խոսնափողն էր «Քրդստան» թերթը, երիտթուրքական հեղաշրջման մախօրյակին, ճիշտ է դեռևս ոչ ակտիվորեն, սակայն արդեն որոշակի մասնակցություն ուներ սուլթանական ինքնակալության դեմ ուղղված բուրժուազիստական շարժմանը: Քուրդ ժողովրդի ապագայի համար հույսեր կապելով այդ շարժման հետ, քրդական ազգայնական գործիչները մասնակցեցին նաև 1902 և 1907 թթ. Փարիզում գումարված իթիհադականների կոնգրեսներին:²⁸²

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական ազգայնական հոսանքի պարագլուխները՝ էմին Ալի Բադրխանը, Շերիֆ փաշան, Ահմեդ Դուլ Կաֆիլ փաշան և ուրիշներ, որոնց հալածել ու աքսորել էր Աբդուլ Համիդը, անմիջապես ազատ արձակվեցին: Թուրքիայի նոր կառավարիչները գրկաբաց ընդունեցին նաև աքսորից վերադարձած շեյխ Օբեյդուլլայի որդուն՝ Աբդուլ Ղադերին, նրան դարձնելով նույնիսկ օսմանյան խորհրդարանի անդամ:

Քրդական ազգայնական հոսանքի ներկայացուցիչները ընդունեցին երիտթուրքերին ու նրանց վարչակարգը, աջակցեցին նրան, հույս ունենալով, որ նա ընդառաջ կգնա իրենց ձգտումներին և կպաշտպանի քուրդ ազգայնականների պահանջները, որոնք հանգում էին հետևյալին. Օսմանյան կայսրության շրջանակներում քրդերի համար ստանալ ինքնավարություն և ձեռք բերել մի այնպիսի ստատուս, որը ճանաչեր քրդերի ազգային առանձնահատկությունները:²⁸³

1908 թ. աշմանը Ստամբուլում էմին Ալի Բադրխանը, Շերիֆ փաշան և Աբդուլ Ղադերը հիմնադրեցին «Թաալի վե թերաքքը Քուրդիստան» («Քրդստանի ծաղկում և առաջադիմություն») ակումբը, Աբդուլ Ղադերի

նախածեռնությամբ ստեղծվեց «Քուրդ թավուն վե թերաքքը ջամիաթի» («Քրդական փոխօգնության և առաջադիմության ընկերություն») կազմակերպությունը, որոնք ունեին ինչպես կուլտուր-լուսավորչական, այնպես էլ քրդերի շրջանում արդյունաբերական-առևտրական գործունեությանը զարկ տալու նպատակներ: Հիշյալ կառույցները իրենցից ներկայացնում էին ոչ մեծ խմբակներ, ունենալով չափազանց հեղհեղուկ և անորոշ քաղաքական ծրագրեր:

Քուրդ ազգայնականները լույս ընծայեցին «Քյուրտ թեավուն վե թերաքքը դագեթեսի» («Քրդական փոխօգնություն և առաջադիմություն թերթ») լրագիրը: Քրդական ակումբներ հիմնվեցին նաև Մուշում, Բիթլիսում, Էրզրումում, Բաղդադում, Մոսուլում, Դիարբեքիրում և այլուր, որոնք նրանց կազմակերպիչ քուրդ ազգայնականները անվանում էին «Իթիհադ վե թերաքքիի» տեղական ակումբներ: Սա նշանակում էր, որ քուրդ ազգայնականները սերտ համագործակցության մեջ են մտել իթիհադականների հետ: Ավելի ուշ, 1913 թ. նրանց կողմից հիմնադրվեց «Խիվիա քուրդ» («Քրդական միավորում») ընկերությունը, որը հրատարակեց «Ռոմե քուրդ» («Քրդի օրը») շաբաթաթերթը: Այն 1914 թվականից կոչվեց «Խաթափի քուրդ» («Քրդի արև»):

Վերոհիշյալ թերթերում Բաբանգադե Իսմայիլ Հաքքին, Սայիդ Քուրդին, Աբդուլ Ղադերը և ուրիշներ հրատարակում էին հողվածներ քրդերի ազգային միասնության անհրաժեշտության, քրդական մշակույթը, լեզուն և կրթությունը զարգացնելու, հարազատ ազգությունը ճանաչելու և այլ հարցերի մասին:²⁸⁴ Այդ հողվածներում նրանք աշխատում էին նաև մեղմացնել քրդերի շուրջ ստեղծված մթնոլորտը, որպեսզի նրանց չգիտեն որպես սուլթանի ձեռքին գործիք դարձած և հակասահմանադրական տարր, պահանջում էին, որ քրդերը ևս կառավարության կողմից հարգվեն ինչպես մյուս ազգերը և այլն:

Ամբողջությամբ վերցված հիշյալ թերթերի բովանդակությունը ընդհանուր սահմանադրական խոսքերից, մշակութային վերածննդի բաղձանքներից, քրդերին քաղաքականության ճանապարհի վրա դնելու ցանկություններից այն կողմ չէր անցնում:

Քրդական ազգայնական գործիչները, որոնք մինչ հեղափոխությունը իրենց պայքարի հիմնական կարգախոսն էին դարձրել անկախության համար պայքարը, սահմանադրության հռչակումից հետո փոխեցին իրենց գործունեության ուղղությունը և դադարեցրին անկախության քարոզչությունը: Նրանք Քրդստանի խնդիրը կապեցին սահմանադրական Թուրքիայի զարգացման հետ և վերջ տվեցին իրենց հակաթուրքական ելույթներին: Այդ գործիչների մի զգալի մասը իրեն նվիրեց պետական և անձնական կյանքին, դարձավ ծերակուտական, երեսփոխան, պաշտոն-

յա, սպա և այլն: «Պոլսի մեջ լսված այս մի քանի ծայները հազիվ մի տկար արծազանք տվին մի քանի նահանգներում: Շարժումը մեռավ»: ²⁸⁵

Առհասարակ պետք է նշել, որ քրդական առաջին ազգայնականների ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա մեծ էր և այդ պատճառով նրանց դերը քրդական շարժման մեջ մնաց համարյա աննկատ: Մյուս կողմից քուրդ զանգվածը ևս իր քաղաքական հետամնացության պատճառով դեռևս պատրաստ էր ընկալելու «համազգային» գաղափարները: ²⁸⁶

Քուրդ ազգայնական ուղղությունից բացի, քրդական իրականության մեջ գոյություն ուներ նաև մեկ այլ խմբավորում, բաղկացած առավելապես պաշտոնյաներից ու սպաներից, որոնք գրեթե թրջացել էին և նախկին ռեժիմի ժամանակ մեծ մասամբ հանդես էին գալիս որպես սուլթանի հավատարիմ ծառաներ: Սահմանադրության հռչակումից հետո, ազգային զարթոնքի ալիքի վրա, այդ գործիչների մոտ որոշ չափով նկատվեց ազգային զգացումների արթնացում, սակայն անդամագրվելով երիտթուրքական կուսակցությանը, իրենց դիրքերն ու պաշտոնները պահպանելու համար նրանք հետևեցին համապետական ուղեգծին, այսինքն դարձան իթթիհադականներ:

Այդ գործիչների մեջ առավել կարկառուն դեմք էր Բաբանզադե իսմայիլ Չաքքին, որը Չուսեյին Ջահիդի հետ հրատարակում էր իթթիհադի պաշտոնական օրգան «Թամին» թերթը, և առհասարակ իր ամբողջ կյանքով ու գործունեությամբ կապված էր թրքության հետ և «երբեմն փշրանքներ էր բաժին հանում իր պատկանած քուրդ ժողովրդին»: ²⁸⁷

Ընդ որում, քրդական գործիչների տարբեր խմբավորումների միջև իրենց ժողովրդին վերաբերող գլխավոր հարցերի կապակցությամբ ոչ միայն գոյություն չուներ համաձայնեցվածություն, այլ հակառակը, նրանք հաճախ գծովում էին և նույնիսկ պայքարում միմյանց դեմ: Այսպես, երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական կյանքում առաջնություն ձեռք բերելու համար բաղրիսանների և Ներիի ազդեցիկ առաջնորդ Սայեդի կլանների միջև սկսվեց սուր պայքար, որն ուղեկցվեց մեկը մյուսի դեմ դավեր նյութելով, ահաբեկչական գործողություններով և այլն: ²⁸⁸

Սակայն քրդական այս գործիչները, ինչպես նաև փոքրաթիվ քուրդ ազգայնականները, որոնք բնակվում էին առավելապես մայրաքաղաքում, ըստ էության ոչ մի ազդեցություն չուներին բուն Արևմտյան Հայաստանում և Քրդստանում բնակվող ցեղապետ-աշիրեթապետների, շեյխերի ու բեկերի, առավել ևս քրդական զանգվածների վրա: հետևաբար, նախկինի պես քրդության ճակատագիրը որոշում էին ոչ թե սակավաթիվ

քուրդ մտավորականությունն ու պաշտոնյաները, այլ ցեղապետ-աշիրեթապետները, որոնք դրության իրական տերերն էին:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի և Քրդստանի քուրդ ավատական վերնախավին, ապա նա իթթիհադական հեղաշրջման և սահմանադրության նկատմամբ ընդունեց շեշտված թշնամական դիրքորոշում: Քրդական ֆեոդալները, որոնք հանդիսանում էին Աբդուլ Համիդի բռնապետական միապետության հենարանը, կանխագաղվ մոտալուտ ժամանակներում իրենց ինքնակամության վախճանը, մայրաքաղաքում տեղի ունեցած հեղաշրջման լուրը դիմավորեցին անսքող թշնամանքով: ²⁸⁹

Ռուսական դիտորդները հայտնում էին, որ քրդական ցեղապետները «հրաժարվում են ենթարկվել նոր վարչակարգին, իսկ համիդիե գնդերը, շարունակելով կողոպտել ժողովրդին, զինված դիմադրություն են ցույց տալիս հարկահավաքներին, հայտարարելով, որ չեն ճանաչում ներկա կառավարությանը»: ²⁹⁰

Ստամբուլում բրիտանական դեսպան Ջերալդ Լոուդերը տեղեկացնում էր Ֆորին օֆիսին, որ այն ժամանակ, երբ կայսրության ժողովուրդները տոնում էին սահմանադրության վերականգնումը, քրդական բեյերն ու աղաները նոր կարգերը իրենց համար համարում էին մահաբեր, ուստի և բողոքում էին, սպառնում և այլն: Բացատրելով դրա պատճառները նա գրում էր, որ նրանք ենթադրում էին, որ նոր վարչակարգը կարող է վերջ տալ անօրինականությանն ու անիշխանությանը, և դրանով իսկ «դժվարացնել իրենց ցեղակիցներին հնազանդության մեջ պահելու և անպաշտպան հայերին հարստահարելու գործը»: ²⁹¹ «Դրօշակը» գրում էր. «Ահա վանդեական ոռնոց է լսվում և հայկական բարձրամղակից ...Քրդերն են ...ոչ, իհարկե, քուրդ ժողովուրդը, այլ այն հացկատակ ու հանցագործ դասակարգը, որը սովորել է դարերից ի վեր անպատիժ գավթել հպատակ «ռայայի» արյուն-քրտինք աշխատանքը ...ինչպե՞ս նա հաշտվի այն սարսափելի իրողության հետ՝ որ այսուհետև գրված օրենքը պիտի արգելե նրան՝ ապրել թալանով, հափշտակությամբ, որ նա պիտի սկսե ընտելանալ հալալ, ստեղծագործ աշխատանքի... Դա մի անլուր բռնություն է նրա «նվիրական», վաղուց հետե սրբագործված իրավունքների վրա, դա մի սոսկալի հեղաշրջումն է նրա կենցաղի, հոգեբանության, նրա բովանդակ աշխարհայեցողության մեջ ... Եվ նա էլ բողոքում է, սպառնում է»: ²⁹²

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի վիճակին, նույնիսկ երիտթուրքական «Շուրայի ումմեթ» թերթը խոստովանում էր, որ այնտեղ «տերեպետությունը ցարդ կշարունակվի», որ «աշիրեթներ գտնված տեղուանք կարգապահութեան և անդորրութեան հետքն իսկ չկայ: ... Շատ մը

գավառներու գայմագամներ, եթե այնտեղի աշիրեթների պետերու քմահաճույքին համեմատ չչարժին, ոչ միայն իրենց պաշտոնը, այլև իրենց կյանքն իսկ չէին կրնար պահել: Այնպիսի տեղերն ո՛չ գորք, ո՛չ ալ տուրք կրնար առնվիլ, և ամեն ինչ կախում ուներ աշիրեթներու պետերու շնորհներեն: Այլ այնպիսի տեղերու մեջ, — հարց էր տալիս թերթը, — կրնա՞ր երբեք խոսք ըլլալ արդարության, հավասարության և եղբայրության վրա»:²⁹³

1908 թ. աշնանից երիտթուրքական կառավարությունը սկսեց իրականացնել մի շարք միջոցառումներ քրդական շելխերի ու աղալարների դիրքերը թուլացնելու և կառավարության ուժն ու ազդեցությունը քուրդ զանգվածների վրա ամրապնդելու ուղղությամբ: Նախ, 1908 թ. սեպտեմբերին Ստամբուլը հրաման արձակեց համիդիե հեծելազորի զինաթափման և ցրման, նրանց կանոնավոր բանակի՝ նիզամի մեջ ընդգրկելու մասին:²⁹⁴ Երիտթուրքական կառավարությունն այդ քայլին դիմեց ոչ թե առաջնորդվելով համիդիե զնդերի խժոժությունները խաղաղ բնակչության նկատմամբ վերջ տալու միտումով, այլ պարզապես այն պատճառով, որ նրանք բոլորովին կորցրել էին իրենց մարտունակությունը: Նրանց հիմնական զբաղմունքը դարձել էր խաղաղ բնակչության և հատկապես հայկական գյուղերի կողոպուտը: Սակայն չսահմանափակվելով միայն հայերով, համիդիե ջոկատները հարձակումներ էին գործում նաև թուրքական գյուղերի վրա, հրաժարվում էին ենթարկվել տեղական իշխանություններին և այլն: Թուրքական բանակի հրամանատարությունը բազմիցս բացասաբար էր արտահայտվել այդ զնդերի մասին, նրանց համարելով նույնիսկ ոչ թե ավագակներ, այլ ուղղակի գողեր:²⁹⁵

Վերոհիշյալ օրենքի հրապարակումը համիդիե զնդերի հրամանատարներն ընդունեցին մեծագույն զայրությով:²⁹⁶ Ամենուրեք նրանք դիմեցին ապստամբությունների, իշխանությունների դեմ բացահայտ ելույթների և այլն: Այդ ապստամբություններից թերևս ամենախոշորը տեղի ունեցավ 1908 թ. սեպտեմբերին միլլի ցեղի առաջնորդ, համիդիե զնդի հրամանատար Իբրահիմ փաշայի գլխավորությամբ: Վերջինս կարողացավ իր հսկողությունը սահմանել էրզինջանից մինչև Դեյր-էզ-Ջոր ընկած լայնածավալ տարածքի վրա: Երիտթուրքական կառավարությունը ապստամբ ցեղապետի դեմ մի խոշոր պատժիչ բանակ ուղարկեց Նեշադ փաշայի գլխավորությամբ, որը ջախջախեց այդ շարժումը:²⁹⁷

Որպես պատրվակ օգտագործելով հայերի բողոքները համիդիե զնդերի այն հրամանատարների նկատմամբ, որոնք 90-ական թվականներին մասնակցել էին հայկական ջարդերին կամ հայերից բռնագրավել էին նրանց հողերը, երիտթուրքական իշխանությունները ձեռքբալեցին ու դատի տվեցին այն ցեղապետերին, որոնք զբաղվում էին կողոպուտով և ասպատակություններով:²⁹⁸ Ձերբակալվեցին գրավիան ցեղի առաջնորդ

Շաքիր աղան, Զուսեին փաշան, Խիզանի, Սպարկերտի և Մամուտանքի տիրակալ Սեյիդ Ալին, Մշո դաշտի Մուսա և Կասըմ եղբայրները, Կարճկանի Մուսա բեյը, Աղբակի Շարաֆ և Կոփ Մեհմեդ բեյերը, Նորդուզի Միր Միեն, Խարզանի Բշարե Չաթոն և նրա եղբայր Ջամիլը և բազմաթիվ այլ անձինք: Երիտթուրքական կառավարությունը սկսեց հետապնդել նաև այն ցեղերին, որոնք հրաժարվում էին հարկեր վճարել կամ չէին ճանաչում նոր իշխանություններին: Հատկապես շեշտված պատժիչ քաղաքականություն իրագործվեց ջաֆ, խերքի, համավենդ, արթոշի, բոհթան, սլ-Լանի և այլ ցեղերի նկատմամբ:

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական բեյերի ու աղալարների այն կանխատեսությունը, թե Թուրքիայում քաղաքական նոր ռեժիմի ստեղծումը կսահմանափակի իրենց իրավունքները, միանգամայն արդարացան:

Երիտթուրքական իշխանությունները սկսեցին քրդական ֆեոդալների՝ հայերից բռնագրավված հողերը վերադարձնել նախկին տերերին: Ստամբուլը նաև ցուցում տվեց իր տեղական մարմիններին հայ բնակչության շրջանում ամեն կերպ ձեռք բերել ժողովրդականություն և դրանով իսկ ոչ միայն հակազդել քրդերին, այլև «խորտակել հայերի հավատը» Ռուսաստանի նկատմամբ:²⁹⁹

Երիտթուրքական կառավարության քաղաքական այս գիծը ոչ միայն դիպչում էր քրդական վերնախավի կենսական շահերին, այլև նրանց կողմից ընկալվեց այն իմաստով, որ նոր իշխանությունները վարում են «հայանպաստ» քաղաքականություն, ոտնահարելով քրդերի դարերով «սրբագործված» իրավունքները: Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջաններում 1909 թ. իրադրությունը գնալով շիկանում էր և ամեն ղուպե սպասվում էր հակակառավարական ապստամբության պոռթկում: Համիդիե հեծելազորի մասնակի զինաթափումից հետո երիտթուրքական խորհրդարանը օրենք ընդունեց ոչ մահմեդականների զինակցման մասին, ըստ որի հայերը իրավունք էին ստանում ծառայելու օսմանյան բանակում: Այս օրենքը և քրդական աշիրեթապետերը մեկնաբանեցին որպես կառավարության կողմից ձեռնարկված հերթական քայլ համիդիե անկանոն հեծելազորի նշանակությունը աննշան դարձնելու համար: Դա վերջնականապես կատաղեցրեց քրդական ավագանուն:

Քաջ գիտակցելով, որ երիտթուրքական կառավարությունը վճռականորեն է տրամադրված իր որդեգրած քաղաքականությունը և ընդունած օրենքները կյանքի կոչելու հարցում, Ստամբուլի «քրդական» քաղաքականությունից դժգոհ Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների բազմաթիվ ցեղապետեր իրենց աշիրեթներով անցան Իրան: Այդպես վարվեցին, օրինակ, հայդերանը ցեղի առաջնորդներ Զուսեին փաշան, Էմին

փաշան, Յաջի թեյնուր փաշան, Մեհմեդ Սըղըզը, խոշոր ավատապետ Զյոռ Յուսեփին փաշան, հայտնի ելուզակ Միր Մեհեն, մագրիք ցեղի առաջնորդ Շարաֆ բեկը և շատ ուրիշներ, որոնք հաստատվեցին Մակուլի խանությունում, Խոյում, Սալմաստում և այլն, նպատակ ունենալով սահմանի այն կողմից պայքարել երիտթուրքական կառավարության դեմ, կամ գեթ հրոսակային կռիվներով դժվարություններ հարուցել նրա համար:³⁰⁰

Բիբլիսում ռուսական փոխհյուպատոս Շիրքովը հայտնում էր, որ ըստ իր ստացած լուրերի, քրդական մի շարք ցեղեր որոշել են զանգվածորեն տեղափոխվել Իրան, որպեսզի այնտեղ համախմբվելով աջակցություն ցույց տան թուրքիայում «հետադիմական շարժմանը»:³⁰¹

Շուտով երիտթուրքական իշխանություններին հայտնի դարձավ, որ Իրան տեղափոխված քրդական ցեղապետերը սկսել են որոնել Ռուսաստանի հովանավորությունը: Կովկասի փոխարքային ուղղված նամակում նրանք առաջարկում էին թուրքիայում բարձրացնել քրդերի համընդհանուր ապստամբություն և Ռուսաստանի ազդեցությանը ենթարկել ողջ Քրդստանը,³⁰² որի տակ նրանք հասկանում էին Արևմտյան Յայաստանը և թուրքական Քրդստանը: «Աբդուլ Յամիդի նախկին հավատարիմ ծառաները՝ թուրքական քրդերը, որոնք պատրաստ էին նրա առաջին իսկ հրամանով նետվել Անդրկովկասի վրա, ի դեմս իրենց առաջնորդներ Յուսեփին փաշայի, Ամիր խանի և Յաջի թեյնուր խանի, դիմեցին Մակուլի սարդար Մուրթեզա դուլի խանին, խնդրելով նրա միջնորդությունը իրենց ռուսական հպատակության տակ ընդունելու համար»,³⁰³ – ոչ առանց հեզմանքի հայտնում էր թավրիզում ռուսական հյուպատոսության քարտուղար Գոլուբինովը:

1910 թ. փետրվարին Մակուլի սարդարը մեկնեց Երևան, այդ հարցի կապակցությամբ ռուսական իշխանությունների հետ բանակցություններ վարելու: Սակայն քրդերի առաջարկը մերժվեց այն պատճառաբանությամբ, որ Ռուսաստանի կողմից նրանց հովանավորելը կարող է միջազգային անցանկալի բարդությունների տեղիք տալ, որովհետև դա ուղղակի միջամտություն կլիներ թուրքիայի ներքին գործերին:³⁰⁴

Վանի զինվորական իշխանություններին շուտով հայտնի դարձավ, որ Իրան տեղափոխված քրդերը կենտրոնացել են իրանա-թուրքական սահմանամերձ շրջաններում և պատրաստվում են թուրքական կառավարությունից վրեժ լուծել: Ավելին, Յուսեփին փաշան իր ցեղակիցների միջոցով թուրքիայում մղում է հակակառավարական քարոզչություն և ամենակարևորը համախմբում է Էրզրումի վիլայեթի քրդական խոշոր ցեղերին հակասահմանադրական ու հակաիթթիհադական մի միության մեջ, որն իր տրամադրության տակ ունի մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք և դրամական միջոցներ:³⁰⁵ Գաղտնի աղբյուրներից թուրքական զին-

վորական իշխանությունները տեղեկություններ ձեռք բերեցին այն մասին, որ հայդերանը աշիրեթի առաջնորդները հորդորում են Մակուլի սարդարին համատեղ ուժերով գրավել Աբադայի (Կազա Բերկրի) հարուստ հովիտը, պատճառաբանելով, որ այն միշտ էլ պատկանել է Իրանին և բռնի ու անօրինական ճանապարհով է միացվել թուրքիային:³⁰⁶ Թուրքական սահմանամերձ զինվորական իշխանությունների աչքից չէր վրիպել նաև այն հանգամանքը, որ թուրքական և իրանական քրդերի միջև նախկին սուր թշնամանքը փոխարինվել է փոխադարձ մերժեցման ու համախմբվածության քայլերով, որ սահմանային բախումները նրանց միջև միանգամայն դադարել են և այլն:³⁰⁷

Բ. Դռան տազնապներն ավելի մեծացան, երբ լուրեր տարածվեցին, որ իբր Շամդինանի շեյխ, օսմանյան խորհրդարանի սենատի անդամ Աբդուլ Ղադերը, որի մասին կասկածներ կային, որ քրդական ցեղապետերի հակակառավարական ընդդիմադիր շարժման պարագլուխն է, ծգտում է միավորել բոլոր քրդական ցեղերին երիտթուրքական կառավարության դեմ հանդես գալու համար: Պտտվում էին նաև շշուկներ, որ իբր նա փորձում է համաձայնության մեջ մտնել հայերի, ինչպես նաև Իրաքի և Ջեբել Դրուզի արաբների հետ համատեղ ելույթ ունենալու նպատակով:³⁰⁸

Այս ամենից կարելի էր եզրակացնել, որ թուրքիայում նախադրյալներ են ստեղծվում քրդական համընդհանուր ապստամբության բռնկման համար: Ստամբուլում դրան վերաբերվում էին ամենայն լրջությամբ: Վանի զենեթալ-նահանգապետ Բեքիր Սամիի բեյին հրաման իջեցվեց գործերի համալրում ուղարկելու թուրք-իրանական սահմանամերձ շրջաններ:³⁰⁹

Սահմանադրության հռչակումից հետո հայ գյուղացիությունը բնական մղումով քայլեր ձեռնարկեց վերականգնելու իր հողային իրավունքները, այսինքն հետ ստանալու այն հողերը, որոնք բռնագրավել էին թուրք ավատատերերը:³¹⁰ Դա տեղիք տվեց կողմերի միջև հարաբերությունների անօրինակ սրման: Վանում ֆրանսիական հյուպատոս Ս. Ջարգեցկին 1909 թ. վկայում էր, որ հողային հարցի շուրջը հայերի և քրդերի միջև մղվում է իսկական պատերազմ:³¹¹

Երիտթուրքական կառավարությունը չէր յալ հայտարարեց նաև քաֆիրության (խաֆիրության) տուրքը և թուրք ավատատերերի օգտին կատարվող ծրի աշխատանքը (օլամ): Առանձին վայրերում հայ գյուղացիությունը իր սեփական ուժերով, զենքի օգնությամբ, փորձում էր թոթափել խաֆիրության լուծը: Սակայն բախվելով քրդական աշիրեթապետերի զինված ջոկատների դիմադրության հետ, պարտություն էր կրում, ընկնելով էլ ավելի ծանր ճորտային լծի տակ: Քրդական աղալարները պինդ կառչել էին խաֆիրության իրավունքին և ոչ մի կերպ չէին ցանկանում

նրանից զրկվել:³¹² «Պեկերն ու աղաները բռնի կը գրավեն հայոց ստացվածքները և դուրս կը ձգեն տերերը իրենց տուներեն, պարտեզներեն և արտերեն. ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը»,³¹³ – Արևմտյան Հայաստանից Կ. Պոլսի պատրիարքարան էին հեռագրում հայերը: Մինչդեռ քրդական զինված ցեղերը հայերին սկսեցին սպառնալ ջարդերով:³¹⁴

Երիտթուրքական կառավարության նորանշանակ Վանի վալի Յավեր փաշան ստեղծեց «խառը հանձնաժողովներ» իբր քրդերի և հայերի միջև հողային վեճերը լուծելու համար,³¹⁵ սակայն դրանք ի վիճակի չեղան որևէ հարց լուծել, որովհետև քրդերը լսել անգամ չէին ուզում իրենց բռնագրաված հողերը վերադարձնելու մասին:

Սակայն երկրի արևելյան նահանգների նկատմամբ իրենց որդեգրած քաղաքականության մեջ իթթիհադականները հետևողական չգտնվեցին: Նույնիսկ հետամուտ չեղան իրենց իսկ ընդունած օրենքները կյանքում իրագործելու համար: Նրանք բավականացան լոկ հանդիսավոր հանձնառություններով ու հայտարարություններով: Վախենալով ներքին բարդություններից, իթթիհադը քայլ առ քայլ զիջումների էր գնում քրդական ավատատերերի պահանջներին: 1909 թ. դադարեցվեց համիդիե գնդերի զինաթափման և վերակազմակերպման գործը, քանի որ երիտթուրքերը եկել էին այն համոզման, որ որոշ կազմակերպչական վերակառուցումից հետո ռազմական այդ կառույցը կարող է օգտակար լինել իրենց որպես Ռուսաստանի և Իրանի սահմանները պաշտպանող ուժ, ինչպես նաև ներքին ոստիկանական խնդիրներ իրականացնելու համար: Միակ փոփոխությունն այն էր, որ այսուհետև այդ գնդերը կոչվելու էին ոչ թե սուլթանի անունով, այլ «Քոչվորներից կազմված հեծելազորային գնդեր» («աշիրեթ խաֆիֆ սուվարի ալայլարի»):³¹⁶

Միաժամանակ երիտթուրքերը սկսեցին սիրաշահել քրդական վերնախավին: Ի վերջո Ստամբուլը որոշեց իր քրդական քաղաքականության մեջ «ճշտումներ» մտցնել: 1910 թ. մարտին ներքին գործերի մինիստրը հրաման արձակեց հայերի և քրդերի միջև հողային հարցի լուծման հետաձգման մասին, մինչև «դրա համար նպաստավոր պահի ստեղծումը»:³¹⁷ Իրականում դա նշանակում էր փակել այդ հարցը՝ քրդերի դժգոհությունը իրենցից վանելու համար: Այդ քայլով կառավարությունը փաստորեն «հարթեց» քրդական հարցը: Թուրքական դատարանը բանտից ազատ արձակեց Քյոռ Հուսեյին փաշային և հակառակը՝ բանտարկեց նրա դեմ բողոք ներկայացրած հայերին, ամբաստանելով նրանց որպես «խռովարարներ»:³¹⁸ Իսկ Վանի կուսակալ Յավեր փաշան առաջարկեց տեղի հայոց առաջնորդարանին՝ Հուսեյին փաշայի և ուրիշ ոճրագործ ցեղապետերի հետ ստորագրել մի նամակ, որ նահանգը խաղաղ է, «հայ, թուրք և քուրդ ապրում են եղբոր պես» և այլն:³¹⁹

1909 թ. մայիսին Ադանայում կազմակերպված հայկական ջարդը հայերի մոտ այլևս ոչ մի կասկած չթողեց, որ Հայկական հարցում երիտթուրքերը շարունակում են Աբդուլ Համիդի գործը:

1910 թ. բոլոր Իրան տեղափոխված քրդերին կառավարությունը խոստացավ վերադարձի դեպքում ներումն շնորհել, հակառակ դեպքում սպառնալով զրկել նրանց աստիճաններից ու տիտղոսներից և բռնագրավել թուրքիայում նրանց ունեցած ողջ շարժական և անշարժ գույքը:³²⁰ Սկսվեց խռովարար քուրդ ավատատերերի վերադարձը, որոնք իշխանությունների թողությունքով անմիջապես վերականգնեցին իրենց նախկին «իրավունքները»: Ներքին գործերի մինիստրի հատուկ կարգադրությամբ այդ բեկերին ու աղաներին վերադարձրին նույնիսկ այն հողերը, որոնք հօգուտ հայերի նրանցից բռնագրավվել էին երիտթուրքերի կառավարման սկզբնական շրջանում հայ-թուրքական «մեղրամիսի» օրերին:³²¹

Վերադարձից հետո քրդական աղալարներն ավելի դաժան հալածանքների էին ենթարկում հայերին:³²² Արևմտյան Հայաստանից Ստամբուլ էին ուղարկվում տազնապալից հեռագրեր, որոնցում պետությունների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչները հաղորդում էին, որ ամենուրեք հայերին սպառնում է մեծագույն վտանգ:³²³

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վահան Փափազյանը զուր էր պահանջում քրդական զինված ջոկատների նկատմամբ կիրառել ավազակախմբերի վերաբերյալ ընդունված նոր օրենքը:³²⁴ Նա ներքին գործերի նախարարությանը ներկայացրեց մանրամասն մի զեկուցագիր, որտեղ առաջարկում էր ամհապաղ մի շարք միջոցառումներ ձեռնարկել, որոնք, ըստ իրեն, հույժ անհրաժեշտ էին քրդերին կառավարական իշխանությանը ենթարկելու համար: Մասնավորապես նա նշում էր, որ անհրաժեշտ է ավելացնել գործերի թիվը Վանի վիլայեթում և թուրք-իրանական սահմանի շրջանում, իրանական կառավարությունից պահանջել անհապաղ վտարել Մակույում թաքնված քրդական ցեղապետերին և նրանց հեծյալ ջոկատներին, որոնք մեղադրվում են զանազան հանցագործությունների մեջ, իսկ թուրքիա վերադառնալուց հետո դատել նրանց, իսկ մնացածներին, որոնց վերաբերյալ բացակայում են մեղադրանքները, ցրել և բնակեցնել կայսրության տարբեր շրջաններում որպես հասարակ զինվորներ:³²⁵

Ոչ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներին և ոչ էլ անահասարակ արևմտահայ գործիչներին դեռևս հայտնի չէր, որ երիտթուրքական իշխանությունները հայ-քրդական հարաբերությունների հարցում վարում են երկակի խաղ, արտաքուստ ցույց տալով, որ ցանկանում են «կարգի հրավիրել» անիշխանական հակումներ ունեցող «հակասահմա-

նադրական» քուրդ տարրերին, սակայն ներքուստ հրահրում են նրանց հայերի դեմ: Արդեն 1909 թ. իթթիհադը Արևմտյան Հայաստան էր ուղարկել մեծ թվով գործակալների՝ քրդերի և հայերի միջև երկպառակություններ և թշնամանք հրահրելու հանձնարարությամբ:³²⁶ Վանից փոխհյուպատոս Ա. Օլֆերը Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանին տեղեկացնում էր, որ թուրքական գործակալությունը հայ-քրդական թշնամանք հրահրելու միտումով աշխատում է հայ բնակչությանը համոզել, որ քրդերի արարքները իրենց նկատմամբ «հետևանք են Ռուսաստանի կողմից սարքված դավերի»: Այս քարոզչությունը, նշում էր ռուս դիվանագետը, նպատակ ունի նաև խաթարել հայ բնակչության համակրանքը Ռուսաստանի նկատմամբ:³²⁷

Հարկ է նշել, որ 1909 թ. հուլիսի 20-ին երիտթուրքական կառավարության կողմից ընդունված օրենքը ոչ մահմեդականներին զինվորագրելու վերաբերյալ թեև հայերի կողմից ընդունվել էր մեծ զոհունակությամբ, սակայն ինչպես նշվեց վերևում, այն ևս զալիս էր էլ ավելի սրելու հայ-քրդական առճակատումը: Ըստ այդ օրենքի, պետության իսլամական տարրը այլևս իրավունք պիտի չունենար իրեն տիրապետող ազգ՝ «միլլեթը հաքիմե» հռչակելու: Ի գարգացումն դրա, 1910 թ. մարտի 1-ին օսմանյան խորհրդարանը հաստատեց քրիստոնյաների համար զինվորական տուրքի («բեդելի ասկերի») վերացման մասին օրենքը:

Այսպիսով, վերոհիշյալ օրենքների համաձայն, Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ կառավարությունը, համընդհանուր զինապարտության օրենքի համաձայն, սկսեց բանակ զինակոչել հայերին: Դա քրդական վերնախավի մոտ առաջ բերեց մեծ անհանգստություն ու դժգոհություն,³²⁸ որովհետև հայերի կողմից զենք կրելու իրավունքը վերացնում էր նրանց նկատմամբ անպատիժ գործողությունների հնարավորությունը: Քուրդ ավատատերերը, ցեղապետ-աշիրեթապետերը և այլն դա գնահատեցին որպես ռոտնոգություն իրենց «դարավոր ադաթների» և «պատմական իրավունքների» նկատմամբ:

Երզրումի, Մուշի և մի շարք այլ վիլայեթների աշիրեթները պահանջեցին չեղյալ հայտարարել քրիստոնյաների զինվորագրության մասին օրենքը, հակառակ դեպքում սպառնալով տհաճություններ պատճառել կառավարությանը, կամ ծայրահեղ դեպքում հեռանալ Իրան և Ռուսաստան:³²⁹ Թեև երիտթուրքական կառավարությունը ընդառաջ չգնաց այդ պահանջներին և օրենքը թողեց ուժի մեջ, սակայն այդ հարցում ևս նա հետևողական չգտնվեց, վախենալով բացահայտ առճակատման մեջ մտնել իսլամական հետադիմականների հետ:

Հայկական հարցի և քրդական խնդիրների հետ կապված իթթիհադական կառավարության քաղաքականության ներքին զսպանակները

ընկալելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ երիտթուրքերը թուրք ազգայնականներ էին: Առաջնորդվելով «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով, նրանք հանդես էին գալիս կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների անկախության ձգտումների կատաղի հակառակորդի դերում: Երիտթուրքերը մնում էին կաշկանդված այն նախապաշարմունքի մեջ, որ ստեղծվել էր նրանց նախահայրերի նեղմտությունից: Այսինքն հավատում էին, թե Թուրքիայի դժբախտությունը նրա մեջ ապրող տարբեր ազգություններն են, ոչ միայն այլակրոն, ուրիշ խոսքով, ոչ մահմեդական, այլև կրոնակից, բայց այլացեղ (օրինակ քրդերը, արաբները և այլն): Այդ պատճառով «իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը որոշել էր ամեն ջանք գործադրել պետությունը միատարր թուրքական դարձնելու համար:³³⁰

Իթթիհադը առանձնակի թշնամությամբ էր լցված դեպի հայ ազգային-ազատագրական շարժումը, այն դիտելով որպես կայսրության առավել վտանգավոր թշնամիներից մեկի: Երիտթուրքական հեղաշրջումից հետո արևմտահայության համար վառվռուն հույսերի ու ակնկալությունների կարճատև շրջանին փոխարինելու եկավ հուսախաբության մի դառն շրջան: Արևմտահայությունը հասկացավ, որ երիտթուրքական վարչությունը նոր դիմակով հին բռնակալությունն է: Գնալով ավելի ու ավելի անսքող էր դառնում իթթիհադի շովինիզմը հայերի նկատմամբ: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1911 թ. սեպտեմբերին Սալոնիկում տեղի ունեցած «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության համաժողովում, որտեղ առաջ քաշվեց «սիրող ազգի» («միլլեթը հաքիմե») կարգախոսը: Դա նշանակում էր այսուհետև Թուրքիայում բնակվող քրիստոնյա տարրը ենթարկել մի այնպիսի վիճակի, որ այն ստիպված իսլամանա և կամ միայն անվամբ պահի իր ազգությունը:³³¹

Դեռևս 1910 թ. «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի մեջ տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Նրա մեջ մտան ծայրահեղ ազգայնական հայացքներ ունեցող մարդիկ: Դրանցից մեկն էր, օրինակ, պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր Ջիա Գյոքալփը, որի քաղաքական փիլիսոփայությունը բացառում էր ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի համախմբումը երիտթուրքերի քաղաքական ծրագրերի շուրջը: Եթե քրդերի նկատմամբ պանթուրքիզմը հնարավոր էր համարում նրանց համաձուլումն ու թրքացումը, ապա ռասիստական այդ ուսմունքը հայերին դատապարտում էր ոչնչացման: Ջիա Գյոքալփի կարծիքով հայերին հնարավոր չէր համաձուլել, որովհետև վերջիններս ունեին լեզվի, կրոնի և մշակույթի դարավոր ավանդույթներ և որոշակի ազգային ինքնատիպություն:³³²

Դա նշանակում էր, որ երիտթուրքական կառավարության «հայկական» և «քրդական» քաղաքականության մեջ կատարվելու էին համապատասխան «սրբագրումներ»: Այդ ոգով կենտրոնը համապատասխան հրահանգներ էր իջեցնում Արևմտյան Հայաստանում իր նահանգական իշխանություններին, որոնք անմիջապես դրանք ղնում էին գործողության մեջ: այսպես, օրինակ, 1911 թ. չորրորդ ռազմական շրջանի մուշիր Օսման փաշան Մուշի սանջակի խասգյուղում հանդես եկավ մի սադրիչ ճառով, որտեղ նա չարամիտ հարծակումներ էր գործում հայերի դեմ, գրգռում քրդերին, թե իբր հայերը կառավարությունից պահանջում են նրանց վտարել Արևմտյան Հայաստանից և այլն: Նա նույնիսկ չխորշեց հայտարարելու, որ ինքը ճանաչում է քրդական ավատատերերի կողմից հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների օրինակաչությունը:³³³ Համարյա այդ նույն օրերին իթթիհադական հայտնի գործիչներից Ջավիդ բեյը Արևմտյան Հայաստան կատարած իր ուղևորության ժամանակ ցուցադրաբար այցելեց արևմտահայության դահիճ Քյոռ Հուսեյին փաշային և նրան մատուցեց իր հարգանաց հավաստիքը: Այդ այցելության ժամանակ նա և նրան ուղեկցող երիտթուրքական Սալունիկի կոմիտեի անդամ Օմար Նաջի բեյը և Բիթլիսի նահանգի վալի Իսմայիլ Հաքքը փաշան մի կողմից քաղաքներում ճառեր էին արտասանում ազգերի համերաշխության անհրաժեշտության մասին, իսկ մյուս կողմից քրդական ավատատերերին հրահրում էին հայ բնակչության դեմ:³³⁴

Հարկ է սակայն նշել, որ որպես թունդ ազգայնականներ, երիտթուրքերը խանդով էին վերաբերվում քուրդ ազգայնականների նկատմամբ: Նրանք ուշի ուշով հետևում էին նրանց տրամադրություններին, որպեսզի վտանգի նշաններ երևալուն պես խեղդեն ու ոչնչացնեն նրանց: Արժե հիշատակել, օրինակ, որ 1911 թ. քրդերին մեղադրելով անկախ իշխանություն (բեյլիք) ստեղծելու մտադրության մեջ, երիտթուրքերը ցրեցին քուրդ ազգայնականների ընկերություններն ու ակումբները, փակեցին «Քյուրտ թեավուն վե թերաքքը դագեթեսի» թերթը, ձերբակալեցին մի շարք ազդեցիկ ղեկավարների և այլն: Շատերը ստիպված եղան արտագաղթել արտասահման: Սրանք առաջին դեպքերն էին, որոնք գալիս էին վկայելու, որ թուրք բուրժուական ազգայնականները ևս ֆեոդալական ավատիկական շրջանների նման կատաղի թշնամի էին ոչ թուրք ժողովուրդների ազգային զգացումների զարթոնքին և կայսրության բոլոր ճնշված և իրավազուրկ ժողովուրդների ազգային վերածննդի հանդուգված ասիայաններ էին:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, պետք է արձանագրել, որ անկասկած երիտթուրքերի իշխանության օրոք հայ-քրդական հակամարտությունը ունեցավ իր շարունակությունը: Արդ, ինչ պատճառների

հետևանքով Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգեր հաստատվելուց հետո ևս հայերը և քրդերը հայտնվեցին տարբեր ճակատներում, սուր թշնամական առճակատման մեջ, երբ թվում էր, թե սահմանադրությունը գալիս է միավորելու կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների ջանքերը ազատության հասնելու ճանապարհին: «Հայ ժողովուրդը, – այդ առթիվ կարծիք է հայտնում Կարո Սասունին, – դաշնակցության ղեկավարությամբ կբավականանար տրված քաղաքական ազատությամբ: Իսկ Հայկական հարցի լուծումը կը հետապնդեր պետական ճանապարհով, համաձայն Դ. Յ. Դաշնակցության ծրագրին, որ կը պահանջեր թուրքահայաստանի լայն ինքնավարությունը՝ դաշնակցային կապով կապված թուրքին»:³³⁵

Կասկածից վեր է, որ արևմտահայության համար կենսական նշանակություն ունեին քաղաքացիական ազատությունները, Հայաստանի և հայ ժողովրդի անձի և գույքի ապահովությունը, հետևաբար սահմանադրության տևականությունը: Մինչդեռ այդ բոլորը իրենց էությամբ ուղղված էին քուրդ ժողովրդի, ավելի ճիշտ քուրդ տիրող և ղեկավար դասակարգի դեմ, որը նախորդ երեսուն տարիների ընթացքում իր դիրքերն ամրապնդել ու հարստացել էր շնորհիվ տիրող անապահովության: Այնուհետև, այդ շրջանի հայ քաղաքական մտածողության մեջ անկախության խնդիր չէր դրվում, խոսքը գնում էր Հայաստանի ինքնավարության մասին՝ Օսմանյան կայսրության կազմում: Բայց ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Հայաստանի վարչական ինքնավարությունը ևս դեմ էր քրդերի շահերին նախ այն պատճառով, որ նրանք Արևմտյան Հայաստանը համարում էին քրդերին պատկանող տարածք և ապա օրենքի և իրավունքի տիրապետության հաստատումը այդ երկրամասում, ինչպես նշվեց, անհարիր էր իրենց շահերին:

Ստեղծված դրության և իշխող մտայնության մի ցայտուն փաստ է 1909 թ. տեղի ունեցած դաշնակցության Ե. Ընդհանուր ժողովի որոշման մեջ ընդունված հատուկ կետը, որտեղ ասվում էր. Ավատական իշխանության մնացորդները, ինչպես նաև նախկին ռեժիմի բարիքները վայելած արտոնյալ խավերը՝ սահմանադրական իրավակարգը սպառնալիք համարելով իրենց գոյության՝ ռեաքսիոն առաջ բերելու առիթներու կսպասեն»:³³⁶ Այդ նույն որոշման մեջ նաև շեշտվում էր, որ հայերի դրացի մահմեդական զանգվածները թյուր ըմբռնում ունեն սահմանադրական կարգերի եական նշանակության մասին, սահմանադրությունը համարելով լոկ առանձնաշնորհում տրված քրիստոնյաներին: Ուստի նրանք անհաշտ աչքով են նայում կատարվող փոփոխություններին:³³⁷

Եվ այսպես, սահմանադրության հռչակման առաջին օրերից սկսած քրդերը, հատկապես ղեկավար խավը, վերապահ ընթացք բռնեց

հռչակված ազատության դեմ, իսկ հողային հարցի կապակցությամբ լսել անգամ չուզեցին այդ մասին:

Կարո Սասունին տալիս է ստեղծված իրողությունների համոզիչ վերլուծությունը. «Ավատապետներուն մտքին մեջ երկար տարիներով, նույնիսկ դարերով արմատացած էին ավատական այդ ըմբռնումները և անոնց խախտումը իրենց կը թվեր անկարելի: Անոնց համար կյանքի և մահու խնդիր մըն էր: Քյուրտերու կողմն հայերուն տեղի տալը կը նշանակեր հրաժարվիլ տիրող դասակարգի քաղաքական և տնտեսական իրավունքներեն, դառնալ աշխատավոր գյուղացի ու ապրիլ սեփական աշխատանքով: Այս արդեն ընկերային-տնտեսական մեծ հեղաշրջում մը կըլլար, ինչ որ կարող էր գլուխ գալ կամ պետության բռնի հարկադրումով և կամ հայերու ուժեղ ըմբոստությամբ»:³³⁸ Այնուհետև «Չակասահմանադրական այս օրիանթացիան հակահայ դիրքի մեջ կը պահեր քուրդ տարրը, նկատի առնելով այն հանգամանքը, որ հայերը ջերմ սահմանադրականներ էին և միևնույն ժամանակ համաձայնության և համագործակցության մեջ էին երիտասարդ և ղեկավար թուրք տարրին հետ»:³³⁹

Այսպիսով ստեղծվել էր մի վիճակ, երբ հայերը գտնվելով անճար վիճակում կառչել էին «սահմանադրական կառավարությանը», հույս ունենալով խաղաղ ճանապարհով հաղթահարել իրենց առջև ծառայած բազում դժվարությունները և վանել քրդական վտանգը: Իհարկե հայերի համար սահմանադրությունը անիմաստ ազատություն կլիներ, եթե նա չկարողանար նրա շնորհիվ տեղ դառնալ իր հողերին, իր ունեցվածքին և իր աշխատանքին: Մինչդեռ քրդերը սահմանադրությունը համարելով ժամանակավոր ու խախտելի մի բան և ապավինելով իրենց զենքին, պայքարում էին, որպեսզի պահպանեն իրենց բացարձակ տիրապետությունը հայերի նկատմամբ և շարունակեն ապրել այնպիսի «երանելի» պայմաններում, որ իրենց շնորհիվ էր սուլթան Աբդուլ Համիդը:

1911 թ. երիտթուրքական վարչակարգը մխրձվեց ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամի մեջ: 1911 թ. սեպտեմբերին սկսված իտալո-թուրքական պատերազմը, որի նպատակն էր թուրքիայից խլել նրա աֆրիկյան վերջին տիրույթները՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան, նոր փորձություն հանդիսավ իթթիհադականների վարչակարգի համար: Այդ պատերազմում երիտթուրքերի ջախջախիչ պարտությունը օրհասական վիճակ ստեղծեց նրանց համար: Դրությունը առավել բարդանում էր նաև այն պատճառով, որ թուրքական զորքերը ծանր մարտեր էին մղում Եմենում և Ասիիում Իմամ Յահյայի, Սեյիդ Իդրիսի և Ջեդիդիյան շեյխերի ինքնավարական-անջատողական շարժումների դեմ: Ալբանիայում բռնկել էր ապստամբություն, հուզումներ էին տեղի ունենում թուրք-իրանական սահմանագլխի քրդական ցեղերի շրջանում և այլն:

Օգտվելով այդ բոլորից, 1912 թ. հուլիսին երիտթուրքերի քաղաքական հակառակորդ «Չյուրրիեթ վե իթթիլաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությանը հաջողվեց իթթիհադականներին հեռացնել իշխանությունից և պետության կառավարման ղեկը վերցնել իր ձեռքը: Նոր կառավարությունը հայտարարեց, որ ինքը միջոցներ է ձեռնարկելու հայերի և քրդերի միջև հողային վեճերը լուծելու և Արևմտյան Հայաստանում անօրինակամություններին վերջ տալու համար: Ի լրացումն այս հայտարարության, 1912 թ. սեպտեմբերին իթթիլաֆական կառավարության մինիստրների խորհուրդը որոշեց գնել այսպես կոչված «վիճելի» հողերը և դրանք անվարձահատույց բաշխել հողագուրկ հայ գյուղացիությանը:³⁴⁰ Սակայն այդ որոշումը հանդիպեց քրդական ավատատերերի կատաղի դիմադրությանը, որոնք սպառնում էին գենքի դիմել իրենց «իրավունքները» պաշտպանելու համար: Իսկապես, առանձին վայրերում քրդական ջոկատների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ: Տեղերի շրջանում քուրդ ավատատերերը լուրեր տարածեցին, որ իբր նոր կառավարությունը «բռնում է» հայերի կողմը՝ ի վնաս քրդերի: Իրականում դա այդպես չէր, պարզապես իթթիլաֆականները նպատակ ունեին քրդերին կարգի հրավիրել և դրանով իսկ կայունացնել վիճակը Արևելյան Անատոլիայում:

Սակայն ի վերջո իթթիլաֆական կառավարությունը ևս քայլ առ քայլ զիջեց իր դիրքերը և վախենալով, որ քրդական աշիրեթապետերի ելույթները կարող են վերածվել հակակառավարական համընդհանուր շարժման, 1912 թ. վերջին հրաժարվեց իր մտահոգացած հողային բարեփոխման իրականացումից: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ Բալկանյան պատերազմի ժամանակ իթթիլաֆական կառավարությունը հարկադրված էր ռազմաճակատ ուղարկել մեծ թվով քրդական ծագում ունեցող զինվորների, որոնք օսմանյան բանակի կազմում պետք է արյուն թափեին հանուն «ընդհանուր հայրենիքի»: Իթթիլաֆական կառավարության թուլությունը, անվճռականությունը և անհետևողականությունը իսկույն խրախուսեց քրդական ցեղապետ-աշիրեթապետերին ուժեղացնելու իրենց հակահայ խժոժությունները: Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին կառավարությանն ու արդարադատության մինիստրին ուղղակի ռեբակոծում էր թաքրիք-բողոքներով, որոնցում նկարագրվում էին քուրդ ավատատերերի գործադրած բռնությունները հայ բնակչության նկատմամբ և խնդրվում էր, որ Բ. Դուռը շտապ միջոցներ ձեռնարկի հայերին պաշտպանելու համար:³⁴¹ Սակայն այդ բողոքները ոչ միայն արդյունք չտվեցին, այլև թուրքական մամուլը ծուռ հայելու մեջ ներկայացրեց դրանք: Ուստի «Օսմանյան լոյտ» լրագրի խմբագրի հետ հարցազրույցի ժամանակ պատրիարքը ստիպված եղավ հետևյալ

հայտարարությունն անելու. «Իմ խոսքերուս հոռի մեկնություն տրվեցան: Ես չդատապարտեցիք քյուրդ ամբողջ ժողովուրդն անխտիր, այլ քյուրտերուն այն մասը, որ ծանոթ է իր եղեռնական շահատակություններով, ի վնաս հայ խաղաղիկ ու աշխատավոր մասին, այսինքն ցեղապետները, ավատապետներն ու քյուրտ ավազակախումբերը: Ո՞վ չի գիտեր, թե քյուրտ ժողովրդին մեջ կա դասակարգ մը, որ իր աշխատության պտուղով ապրելով իբր հողագործ, հայ աշխատավոր ժողովուրդին պես նույն տխուր վիճակին ենթարկված է, ավատապետներուն, պեյերուն ու աղաներուն երկաթյա միևնույն լուծին տակ կգտնվի, սա տարբերությամբ, որ քյուրտ գյուղացին տնտեսապես ու ընկերային տեսակետով միայն կտառապի, իսկ հայ գյուղացին կտառապի թե՛ տնտեսապես, թե՛ ընկերային տեսակետով և թե՛ քաղաքականապես: Ինչպես որ մենք բնավ չծածկեցինք մեր զգվանքն հանդեպ քյուրտ մյութեկալիպետներուն, և զանոնք շարունակ ծաղկած ու դատապարտած ենք, նույնպես բնավ չենք ծածկած մեր համակրությունն հանդեպ քյուրտ հարստահարյալներուն: Ասոր համոզվելու համար բավական է ականարկ մը նետել հայ մամուլին վրա, որ միշտ պաշտպանած է աշխատավոր ու խաղաղ քյուրտերը: Այս պայմաններուն մեջ, ես ինչպե՞ս կրնայի զանազանություն դնել քյուրտերուն ու հայերուն միջև, և անարգության սյունին գամել քյուրտ ազգն ամբողջությամբ»:³⁴²

Համարյա այդ նույն դիրքերից էր հայ-քրդական հարաբերությունները մեկնաբանում Անդրանիկը: «Այս բոլոր ցեղերը,– գրում էր նա,– այն ժամանակ կմիանան մեզի հետ, երբ սուլթանական գազանային ռեժիմը երկրեն վերանա, և շա՛տ շուտով պիտի միանան ու մեզի հետ երկիրը պաշտպանեն ապագա թշնամիներու դեմ: Այսօր մենք մենակ ենք իբրև կռվող և կը տանջվինք անոնց ձեռքը, վաղն ալ, երբ երկիրը մեր աշխատանքով և արյունով բարեփոխվի, պիտի միանան մեզի և հավասար իրավունքի տեր դառնան, ինչպես իրենք ալ կըսեն»:³⁴³

Արևմտահայությունը շատ շուտ համոզվեց, որ իրենց Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների ապակենտրոնացման կողմնակից հորջորջող իթթիլաֆականները ևս հետապնդում են ազգայնամուլ ծրագրեր և մասնավորապես աշխատում են քրդական տարրի միջոցով «մաքրագարդել երկրամասը հայերից»:³⁴⁴

Օգտվելով Բալկանյան պատերազմում իթթիլաֆական կառավարության կրած պարտությունից, երիտթուրքերը 1913 թ. հունվարի 10-ին իրականացրին պետական հեղաշրջում և իշխանության ղեկը կրկին վերցրին իրենց ձեռքը: Թուրքիայում հաստատվեց երիտթուրքական եռապետության՝ Էնվերի, Թալաթի և Ջեմալի ռազմական դիկտատուրան:

Բալկանյան պատերազմում կրած ծանր պարտությունից հետո թուրքական կառավարող շրջաններում տիրապետող մտայնություն դարձավ «Անատոլիան վտանգի մեջ է» կարգախոսը:³⁴⁵ Թուրքիան ավելի վճռականորեն էր իր հայացքը Արևմուտքից դարձնում դեպի Արևելք: Բալկանյան պատերազմը հանդիսացավ այն պատմական դարձակետը, որի հետևանքով պանթուրքական նախնական ակադեմիական շարժումը վերածվեց քաղաքական շարժման և իթթիհադի պաշտոնական գաղափարախոսության: Ազգայնամուլության, շովինիզմի և հարձակողական ռևանշիզմի ոգին թևածում էր ողջ կայսրությունում: «Հսկայական ու սարսափելի թափոցները ցերեկը դողշներով և գիշերը բոցավառ ջահերով և գինովի աղաղակներով կը շրջեին Պուլսի պողոտաները»:³⁴⁶

Երիտթուրքերի աչքին հայկական բարենորոգումները ուրիշ բան չէին, եթե ոչ «ռուսական իմպերիալիզմի պատրաստած մեկ նոր հարվածը բալկանյանից հետո»: Հետևաբար բարենորոգումների հարցը նույնացվում էր կայսրության համար Արևմտյան Հայաստանի կորստի հետ, և այդ պատճառով իթթիհադական կառավարությունն անում էր ամեն ինչ դրանք ծախսողելու համար:

Այսպես, Ջեմալ փաշան իր մոտ է հրավիրում դաշնակցական գործիչներից մեկին՝ Վարդգեսին և նրան ասում հետևյալը. «Եթե դուք պնդեք եվրոպական կոնտրոլի մասին, մենք ստիպված պիտի լինենք ընդունել: Բայց դրա արդյունքը այն կլինի, որ վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչությունը ոտքի կկանգնի և 3-4 հարյուր հազար հայեր կկոտորվեն: Եվ հավանական է,– ավելացնում է նա,– որ ռուսները առիթից օգտվելով կգան ու կգրավեն այդ նահանգները»:³⁴⁷

Իսկ Թալաթ փաշան օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներին առաջարկում էր «օգնել թուրքերին վերջացնելու հայկական հարցը»: Նա հանձնում էր նրանց, որ «ավելի լավ է վճռել այդ խնդիրը թուրքերի և հայերի անմիջական բանակցություններով», որ ռուսներին չպետք է հավատալ, որովհետև նրանք հարաբերությունների մեջ են նաև քրդերի հետ: Նա խորհուրդ էր տալիս նաև չդիմել եվրոպական պետությունների միջամտությանը:³⁴⁸

Առհասարակ տերությունների միջամտությունը Հայկական հարցին էլ ավելի էր խճողում ու բարդացնում այդ խնդիրը: Մասնավորապես Գերմանիայի մերձավոր-արևելյան քաղաքականության ակտիվացումը անմիջապես իր բացասական անդրադարձներն ունեցավ այդ հարցի վրա, մասնավորապես որ Բեռլինը վճռականորեն հանդես էր գալիս Հայկական հարցը Ռուսաստանի օգնությամբ լուծելու դեմ: Գերմանական դիվանագիտությունը այն կարծիքին էր, որ հայ ժողովուրդն ամեն տեղ՝ Ռուսաստանում թե Թուրքիայում, ռուսական քաղաքականության և ռուսական

շահերի կույր գործիք է: Մասնավորապես պանգերմանիստները զարգացնում էին այն տեսակետը, որ «Թուրքիան տնտեսական և քաղաքական առումով կկորցնեի իր կենսունակությունը հենց որ զրկվեր Հայաստանից, հատկապես եթե նա կորցնեի այն հօգուտ Ռուսաստանի»: ³⁴⁹ Հայտնի պանգերմանիստ Պաուլ Ռոհրբախի կարծիքով, անհրաժեշտ էր հայերին տեղահանել Արևմտյան Հայաստանից և վերաբնակեցնել Բաղդադի երկաթուղու գոտում, իսկ ազատված հողերում բնակեցնել մահմեդականներ, որպեսզի Ռուսաստանը զրկվի սահմանակից շրջաններում քրիստոնյա բնակչության իր հենարանից: ³⁵⁰

Գերմանիան օսմանյան կառավարության առջև Ռուսաստանին ներկայացնում էր որպես նրա անողոք թշնամու, որը մոլեգնաբար ձգտում է կործանել թուրքական իշխանությունն Ասիայում, ինչպես այն արեց Եվրոպայում: ³⁵¹

Պաուլ Ռոհրբախը «Գերմանա-ասիական ընկերության» նիստում հայտարարել էր, որ Գերմանիան չպետք է արգելք հանդիսանա քրդերի կողմից հայերի ոչնչացմանը, քանի որ նա շահագրգռված է Հայաստանը խաղաղեցնելու մեջ, որի կորստի դեպքում Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց: ³⁵² Իսկ Գերմանիայի պետական քարտուղարի տեղակալ Ցիմերմանը գտնում էր, որ հայ ժողովուրդը հանդիսանում է Թուրքիայի թուլության աղբյուրը: ³⁵³ Միևնույն ժամանակ գերմանական դիվանագիտությունը սարդիչ տոնով նախագուշացնում էր Բ. Դռանը, որ եթե Ռուսաստանը վճռական ձևով հանդես գա ի պաշտպանություն արևմտահայերի, այն ժամ Գերմանիան իր հերթին միջոցներ կձեռնարկի պաշտպանելու իր շահերը Անատոլիայում և կգրավի այն շրջանները, որոնցով անցնում է Բաղդադի երկաթուղին: ³⁵⁴

Հայկական բարենորոգումների խնդիրը ծախսողելու նպատակով Գերմանիան Հայկական հարցին հակադրեց «քրդական հարցը»: Պետական քարտուղար Յագովը հայտարարեց, որ հայկական բարենորոգումների հարցը իրեն թվում է բավական փափուկ և եթե պետությունները ենթադրում են հանդես գալ հայերի պաշտպանության օգտին, ապա «չի կարելի մոռանալ նաև քրդերի շահերի մասին»: ³⁵⁵

Թեև Անգլիան և Ֆրանսիան կողմնակից էին հայկական բարենորոգումների իրականացմանը, սակայն այդ հարցում նրանք չէին դրսևորում որևէ հետևողականություն: Անգլիայի միակ մտահոգությունն էր թույլ չտալ, որ Ռուսաստանը միանձնյա կերպով հիմնավորվի Արևմտյան Հայաստանում: Ֆրանսիան գտնում էր, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացումը չարյաց փոքրագույնն է, որ միայն այդ ճանապարհով կարելի կլինի կանխել այդ երկրամասի գրավումը Ռուսաստանի կողմից: Ֆրանսիային մտահոգում էր ոչ միայն Հայկական հարցը,

այլև արաբական պրոբլեմը: «Բարձրանում է Հայկական հարցի սպառնալի արյունոտ հրացուլը, - գրում էր Լյուդովիկոս Քոնթանսոնը, - բայց բացի Հայկական հարցից գոյություն ունի նաև սիրիական, կամ ավելի ճիշտ արաբական հարց»: ³⁵⁶ Ֆրանսիական դիվանագիտությունը հայկական բարենորոգումների հարցը անմիջականորեն կապում էր հայ-քրդական խնդրի հետ: Արևմտյան Հայաստանում ֆրանսիական հյուպատոսական ծառայության մեջ գտնվող Ջարգեցկին, որը համոզված ռուսատյաց էր և միաժամանակ ֆրանսիական դիվանագիտության ավանդական թուրքամետ գծի հետևորդ, գտնում էր, որ եթե Արևմտյան Հայաստանում շուտափույթ կերպով բարենորոգումների ծրագիրը չիրականացվի, ապա անխուսափելիորեն տեղի կունենա Փոքր Ասիայի արևելյան նահանգների, այսինքն Արևմտյան Հայաստանի գրավում Ռուսաստանի կողմից: ³⁵⁷

Հայկական հարցի ամենաոխերին թշնամին, անշուշտ, երիտթուրքական կառավարությունն էր: Ստամբուլում ռուսական դեսպան Գիրսը 1913 թ. հոկտեմբերի 16-ին տեղեկացնում էր իր վերադասին Ռուսաստանի արտգործնախարարին. «Ընդհանրապես երիտասարդ թուրքերն աշխատում են թաղել Հայկական հարցը, այն համարելով Թուրքիայի ներկա դրության համար ամենավտանգավոր հարցերից մեկը»: ³⁵⁸ Իթթիհադի գործելակերպը այդ հարցում հետևյալն էր. կամ զանազան քաջբռնկների միջոցով ի չիք դարձնել բարենորոգումները և կամ առաջ քաշել Աբդուլ Համիդից ժառանգած «բարենորոգումներ ընդհանուր պետության համար» տխրահռչակ տեսակետը: «Թաուֆիհի էֆջյար» երիտթուրքական լրագրի խմբագիրը 1913 թ. մայիսի 10-ին հրապարակած մի հոդվածում միամիտ ձևանալով գրում էր, որ ինքը չի կարող հասկանալ, թե հայերը ինչու են Անատոլիայի արևելյան նահանգների համար առանձին բարենորոգումներ, առանձին հսկողություն և առանձին ապահովություն պահանջում, որ եթե կատարվեն բարենորոգումներ, դրանք պետք է վերաբերեն և՛ արևելյան և՛ Արևմտյան Անատոլիային: ³⁵⁹ Այդ նույն ոգով նյութեր էին հրապարակում նաև թուրքական մյուս թերթերը:

Ուշագրավ է նշել, որ երիտթուրքական կառավարությունը չէր բացառում, որ Արևմտյան Հայաստանում հայկական բարենորոգումների իրականացման հետևանքով կարող էր ռեալ հող նախապատրաստվել հայ-քրդական դաշնակցության համար: Անդրադառնալով այդ հարցին, դաշնակցության գործիչներից Ս. Ակունին գրում էր. «Իթթիհադի տեսակետով Ռուսելիի կորուստեն ետք Անատոլի մեջ բարենորոգումներու գործադրությունը օտարներու ձեռքով կը նշանակեր նաև կորուստը «արևելյան նահանգներուն», քանի որ հայերը գտնվելով հանգիստ վիճակ մը և բարգավաճելով օր մը պիտի բարձրացնեին ապստամբության դրոշը և ինքնուրույնություն պիտի հռչակեին, թերևս քյուրտերու գործակցությամբ, ա-

հա մղծավանջը իթթիհադին»:³⁶⁰ Էրզրունում ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Գիրսին գրած 1913 թ. հոկտեմբերի 26-ի տեղեկագրում հայտնում էր, որ «թուրքական կառավարությունը, որը վաղուց ի վեր կասկածանքով էր վերաբերվում հայ-քրդական բարեկամությանը և չէր դադարեցնում միջոցներ ձեռնարկել մեկ ժողովրդին մյուսի դեմ գրգռելու համար, այժմ, քրդերի շրջանում դրսևորվող շարժման կապակցությամբ, հատուկ ջանքեր է գործադրում, որպեսզի այդ շարժման սլաքը ուղղի հայերի դեմ»:³⁶¹

Հայկական բարենորոգումները ձախողելու նպատակով, երիտթուրքական կառավարության դրդամբ, օսմանյան խորհրդարանի քուրդ պատգամավոր Աբդուլ Ղադերը, որը միաժամանակ հանդիսանում էր այսպես կոչված երիտքրդական շարժման պարագլուխներից մեկը, կառավարությանը ներկայացրեց «ինքնավար Քրդստանի» մի նախագիծ, որի իսկական նպատակն էր հակակշիռ ստեղծել հայկական բարենորոգումներին: Նա «Քրդստանի վերածնության ընկերության» («Քուրդիստան թեալի ջեմիեթի») իր կուսակիցներին հորդորում էր մեկնել Արևմտյան Հայաստան և այնտեղ գործողություններ ծավալել «հայկական ազգային պետություն» ստեղծելու փորձերի դեմ, հավաստիացնելով, որ կառավարությունը կկատարի իր խոստումը քրդերին ինքնավարություն տալու վերաբերյալ:³⁶² Անկասկած Աբդուլ Ղադերը մոլորության մեջ էր, ենթադրելով, որ իթթիհադը կարող էր քրդերին շնորհել ինքնավարություն: Այդ առթիվ վերին աստիճանի ուշագրավ փաստ է բերում անվանի պատմաբան Նիկողայոս Ադոնցը: Նա վկայում է, որ 1913 թ. 4. Պոլսում թուրքական պետական գործիչ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր, «Իթթիհադ վեթերաքը» իշխող կուսակցության անդամ, երիտթուրքական կառավարությունում հանրօգուտ շինությանց նախարար Պետրոս Հալաճյանի հետ զրույցի ժամանակ, վերջինս անդրադառնալով երիտթուրքական կառավարության կողմից քրդերին ինքնավարություն տալու հնարավորության հարցին նշում է. «Թուրքերը, հատկապես երիտթուրքերը, իբրև կենտրոնացման և թուրքիզմի հանդգնած կողմնակիցներ, առանձնապես այնքան էլ զիջող չեն և անհաշտ են մահմեդական, բայց ոչ թուրքական ժողովուրդների նկատմամբ, օրինակ, ալբանացիների, արաբների, քրդերի: Չգտելով թվապես ուժեղ և համախումբ-միավորված մահմեդական կորիզի ստեղծմանը պետության մեջ թուրքական ըստ տրամադրության և ինքնագիտակցության, երիտթուրքերը հույս ունեին բոլոր ոչ թուրք մահմեդականներին վերածել թուրքերի առանց հատուկ ջանքերի, շնորհիվ դավանական մերձավորության: Եվ դրա համար էլ նրանց կողմից որևէ ինքնանկախության և ինքնորոշման ճանաչում, որն ուղղակի հակառակ է գնում նրանց հետապնդած թուրքացման խնդրին, երիտթուրքերի կողմից

մերժվում է հետևողական և անշեղ համառությամբ: Դրա համար էլ, երիտթուրքերը ավելի շուտ հայերին կտան ինքնավարություն, քան թե քրդերին: Իսկ Քրդերի մեկուսացմանը երբեք չեն համաձայնվի, թեև իհարկե, ամեն կերպ կգրավեն և երես կտան, դեպի իրենց կքաշեն նրանց»:³⁶³

Պետք է նշել սակայն, որ հայկական բարենորոգումների նկատմամբ դիրքորոշման հարցում քրդական իրականության մեջ միասնական տեսակետ գոյություն չուներ: Տարբեր խմբավորումներ և նույնիսկ անհատ գործիչներ հանդես էին գալիս տարբեր տեսակետներով: Մեծամասնությունը անշուշտ գտնում էր, որ բարենորոգումները արմատապես հակասում են քրդերի շահերին, և որպես դրանց հակակշիռ անհրաժեշտ է Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում – Վ. Բ.) ստեղծել անկախ քրդական պետություն և կամ ծայրահեղ դեպքում ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա, որպեսզի նա հրաժարվի այդ բարենորոգումներն իրականացնելուց: Սակայն կային նաև, ծիշտ է ոչ մեծ թիվ կազմող մարդիկ, որոնք գտնում էին, որ հայկական բարենորոգումները բարիք են նաև քուրդ ժողովրդի համար:³⁶⁴

Քուրդ ազգայնական հոսանքի ներկայացուցիչները ևս այն կարծիքին էին, որ հայկական բարենորոգումների իրագործումը ուղղակի սպառնալիք կարող է հանդիսանալ «քրդական դատի համար»: Այսպես, օրինակ, քուրդ հայտնի ազգայնական գործիչ Աբդուրբեգալի հրապարակած կոչերից մեկում ասվում էր. «Երբ հայերին տրվելիք ինքնավարությունը վավերացվի, դրանից վերջ քրդերը ուրիշ բան չեն կարող անել, եթե ոչ նստել ու լաց լինել»: «Եթե մենք այժմյանից չկարողանանք ապահովել մեր իրավունքներն ու դատի հաջողությունը, – ասվում էր այդ կոչում, – ապա գուշակում են, որ եվրոպայի ծրագրած հայկական առանձնաշնորհների իրականացման մեջ՝ առաջին քայլը պիտի լինի մեր ունեցած զենքերի հավաքումը, սեյիդների, շեյխերի, ուլեմաների, բեկերի և աղաների բնաջնջումը»:³⁶⁵

Աբդուրբեգալը կոչ էր անում հայերին «ռայա-ստրուկ չլինելու համար զինվել և արյան գնով պաշտպանել քրդական ազգությունն ու հայրենիքը»: Նա հորդորում էր համախմբվել իր կազմակերպած «Քրդստան» խմբակի շուրջը և իրականացնել հետևյալ խնդիրները. վճռել վիլայեթների, լիվաների, կազաների և գյուղախմբերի օսմանյան պաշտոնյաներին և նրանց փոխարեն նշանակել քրդերից ընտրված պաշտոնյաներ. ստեղծել Քրդստանի ժամանակավոր կառավարություն և պատվիրակություն ուղարկել Եվրոպա դիվանագիտական շրջանների և դեսպանաժողովների մոտ դիմումներ անելու համար:³⁶⁶

Աբդուրբեգալը Վանում ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևին հորդորում էր, որ «Ռուսաստանի համար որպես հարևան ավելի ձեռնտու

է ունենալ քրդերին, քան թե կասկածելի հայերին»:³⁶⁷ Ռուսաստանի կողմից իր ծրագրին աջակցություն ցույց չտալու դեպքում նա սպառնում էր դիմել մեկ այլ մեծ եվրոպական տերության և խնդրել նրա հովանավորությունը, ինչպես նաև օգնությունը՝ հակակշիռ ստեղծելու համար Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի հովանավորության քաղաքականությունը:³⁶⁸

Թեև ցարական կառավարությունը ոչ մի վստահություն չտածեց Աբդուրբեգակի ծրագրերի նկատմամբ, դրանք համարելով թուրքական սադրանքների ու նենգության արդյունք, իսկ իրեն թուրքական ենիսար, պրովոկատոր և արկածախնդիր, սակայն ցարական դիվանագետների և քաղաքական գործիչների մեջ գտնվեցին նաև մարդիկ, որոնք իրենց կառավարությանը առաջարկեցին Արևմտյան Հայաստանում հենվել ոչ թե հայերի, այլ քրդերի վրա: Նույն Ս. Օլֆերը նույնիսկ գտնում էր, որ Ռուսաստանի շահերի տեսակետից ավելի գերադասելի է ինքնավար Քրդստանը, քան ինքնավար Հայաստանը: Իսկ խոյուն փոխտյուրապետու Չիրկովը փորձում էր համոզել իր վերադասին, որ Աբդուրբեգակի պահանջներին ընդառաջ չգնալու դեպքում ոչ մի երաշխիք չկա, որ քրդերը ոչ հեռու ապագայում չեն ընկնի Ռուսաստանի մրցակիցներ Գերմանիայի կամ Անգլիայի ազդեցության տակ:³⁶⁹

Ռուսական կառավարությունը չգնաց այդ քայլին, քանի որ նշված ժամանակաշրջանում նա անվերապահորեն նախապատվությունը տալիս էր հայերին:³⁷⁰

Ի հարկե քրդական իրականության մեջ Աբդուրբեգակը միակը չէր, որ հետևում էր այդ տեսակետներին: Հայկական բարենորոգումները խաթարելու և Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական բեյլիք ստեղծելու պահանջով հանդես էին գալիս նաև հայտնի աշիրեթապետեր՝ Կարճկանի Մուսա բեյը, զիլյան ցեղի առաջնորդ Սելիմ փաշան և ուրիշներ: Հայդերան ցեղի առաջնորդ Քյոռ Հուսեյին փաշան քրդերին կոչ էր անում ապստամբել «Քրդստանում (իմա՝ Արևմտյան Հայաստանում: - Վ. Բ.) Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավար շրջան ստեղծելու փորձերի դեմ»:³⁷¹ Իսկ Մազրիք ցեղի հայտնի ցեղապետ Շարաֆ բեյը «հայկական ինքնավարությունը» իրականանալու դեպքում սպառնում էր հայերի ջարդերով:

Քուրդ պատմաբան Քեմալ Մազհար Ահմեդը նշված խնդիրը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հայերի արդարացի ազգային-ազատագրական պայքարը տարբեր պայմաններով և տարբեր ժամանակաշրջաններում այս կամ այն կերպ հակասել է քուրդ անջատականների քաղաքական ծրագրերին»: Քրդական տարբեր խավերի դիրքորոշումը հայ ազգային շարժումից սահմանազատվելու ուղղությամբ նա բացատրում է սո-

ցիալական և քաղաքական պատճառներով: Նրա կարծիքով հայերի և քրդերի հակասությունների հիմնական պատճառը տարածքային հարցերն էին, այսինքն վեճը գնում էր այն հարցի շուրջ, թե այս կամ այն երկրամասը կամ քաղաքը պետք է համարել Հայաստանի՝ թե Քրդստանի մեջ մտնող տարածք:³⁷²

Այս իրողությունը գիտակցվում էր նաև բազմաթիվ հայ գործիչների կողմից, որոնք աշխատում էին համոզել քրդերին, որ հայության կողմից չի դրվում տարածքներ բաժանելու խնդիր և որ հայկական բարենորոգումները կարող են բարիք հանդիսանալ նաև քուրդ ժողովրդի համար: Այսպես, օրինակ, Լոնդոնի «Թայմս» թերթում Պոլոս Նուբարը հանդես եկավ հատուկ հոդվածով, որտեղ նշվում էր. «Այդ բարենորոգումները քրիստոնյաներուն և իսլամներուն պիտի շնորհեն հավասար արդարություն, անդորրություն և կյանքի ու ինչքի ապահովություն, ինչ որ թույլ պիտի տա ամենուն ալ բարձրանալ և զարգանալ»: Թուրքական կառավարության կողմից տարածվող չարամիտ ու գրգռիչ լուրերը հերքելու համար Պոլոս Նուբարը նորից և հստակորեն ձևակերպեց հայերի պահանջները. «Հայերը չեն պահանջեր ո՛չ անջատում, ո՛չ անկախություն, ո՛չ քաղաքական ինքնավարություն, ինչ որ հայկական նահանգներուն ազգագրական և աշխարհագրական պայմաններուն մեջ ցնորք մը միայն կհամարենք, այլ կպահանջեն միայն Բեռլինի դաշնագրին 61-րդ հոդվածով խոստացված և մեծ տերությանց դեսպաններուն 11 մայիսի 1895-ի հիշատակագրին մեջ բանաձևած բարենորոգումներուն ծրագրին գործադրումը»:³⁷³

Հայկական և քրդական հարցերը քաղաքական շահարկումների առարկա դարձրած ֆրանսիական մամուլը առանց այն էլ բորբոքված կրակի վրա նավթ էր լցնում: Այսպես, «Bulletin du comité de l'Asie Française» հանդեսը գրում էր, որ հոգ տանելով Հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին, չպետք է նկատի ունենալ միայն հայ տարրը: Այն փաստը, որ շարունակ խոսում են հայկական հարցի մասին, հայկական բարենորոգումների մասին, երբեք չի իշխել քրդերին, խորապես վիրավորում է վերջիններիս ազգային ու կրոնական ինքնասիրությունը: «...Չկա իսկական հայոց հարց, այլ կա միայն քուրդ-հայկական հարց, որը հասունացել է և իր անհետաձգելի լուծումն է պահանջում», - եզրակացնում էր հանդեսը:³⁷⁴

Ուշագրավ է, որ չնայած քրդական վերնախավին երիտուրքերի կողմից սիրաշահելու քաղաքականությանը, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին քրդերի հակակառավարական ապստամբություններն ու ելույթները չէին դադարում: Այսպես, 1913 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վան-Սերայ-Բաշկալայի շրջանում արթուշ (արթոշ) և գրավիան

ցեղերը կատաղի գինված բախումներ ունեցան կառավարական գործերի հետ.³⁷⁵ Առավել հուժկու հակակառավարական ապստամբություն բռնկեց Յուսուֆ Քյամիլ Բադրխանի գլխավորությամբ, որն ընդգրկեց Ռեզվանի, Միդիատի, Ջեզիրեի շրջանները, հասնելով մինչև Տիգրիսի ափերը.³⁷⁶

Թեև թուրքական իշխանությունները փորձեցին քրդերի հակակառավարական շարժումն ուղղել հայերի դեմ և դա մասամբ նրանց հաջողվեց,³⁷⁷ սակայն, ընդհանուր առմամբ, այդ քաղաքականությունը շոշափելի արդյունքներ չտվեց: Ապստամբած քրդերը հայտարարեցին, որ իրենք չեն վնասելու հայերին և քրիստոնյա մյուս ժողովուրդներին, որովհետև իրենց շարժումը բացառապես ուղղված է թուրքական կառավարության դեմ:³⁷⁸ Երիտթուրքական կառավարող շրջանները լրջորեն հաշիվ էին տալիս իրենց, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ նման շարժումները: Ուստի Ստամբուլը Արևմտյան Հայաստան և Քրդստան գործուղեց իթթիհադական հայտնի գործիչներ Նաջի բեյին և Ֆեյզի բեյին,³⁷⁹ որոնք համարվում էին քրդական հարցի գիտակներ, և բազմիցս «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կարգադրությամբ «հատուկ հանձնարարություններով» աշխատել էին քրդերի շրջանում: Նրանց գործունեության արդյունքները շատ շուտով զգացնել տվեցին իրենց: Այն վայրերում, որտեղ քրդական շարժումները կրում էին զուտ հակակառավարական բնույթ, իշխանությունները սկսեցին վճռականորեն ճնշել դրանք: Այսպես, 1913 թ. օգոստոսին թուրքական բանակը պատժիչ արշավանք կազմակերպեց դեպի Ջեզիրե՝ իլալի ցեղի դեմ, որն ապստամբել էր և հայտարարել, որ այլևս հրաժարվում է ենթարկվել թուրքական իշխանությանը: Տեղի ունեցան կատաղի մարտեր: Թվով 15 գյուղեր ավերվեցին ու այրվեցին: Այդ նույն ժամանակ Դիարբեքիի վալի Իսմայիլ Հաքքը փաշան քրդերի դեմ պատժիչ գործողություններ ծավալեց իր նահանգում: Նա ռաման աշիրեթի առաջնորդ Օմեր բեյին հնազանդեցնելու նպատակով պատանդ վերցրեց նրա 11-ամյա եղբորը:³⁸⁰ Ջորբեր ուղարկվեցին նաև Սինջարի եզիդների դեմ, որոնք իրետանիով քանդեցին ու ավերեցին բազմաթիվ գյուղեր: Շամդինանի շեյխ Թաային մեղադրելով Ռուսաստանի և Թուրքիայի միջև երկակի քաղաքական խաղ խաղալու մեջ, իշխանությունները պատժիչ գործողություններ ծավալեցին նաև նրա դեմ:³⁸¹ Քրդերի և կառավարական գործերի միջև արյունոտ ընդհարումներ տեղի ունեցան նաև Բոհրանի շրջանում: Չդիմանալով կանոնավոր բանակի ճնշմանը, քրդերը ստիպված էին բարձրանալ անմատչելի լեռները պայքարը շարունակելու համար պարտիզանական մեթոդներով: Հաշվեհարդարը ըմբոստացած ցեղերի հետ անողոք էր, գործերը թնդանոթներով ավերում ու հողին էին հավասարեցնում նրանց գյուղերը, զանգվածային բռնություններ գործադրում խաղաղ բնակչության նկատմամբ,

բռնագրավում նրանց անասունները և ինչքը, բռնաբարում կանանց և այլն:³⁸²

Միևնույն ժամանակ եվրոպական դիվանագիտությանը մոլորության մեջ գցելու համար, թուրքական իշխանությունները սկսեցին հալածել մի շարք հայտնի քուրդ ավազակապետերի: Օրինակ, Վանի նորընտիր վալի Թահսին բեյը ոչնչացրեց գրավի ցեղի առաջնորդ Շաքիր աղային և նրա գործակից, հայտնի ավազակապետ Միր Մեհմեմ, որը հայ, թուրք և քուրդ գյուղացիության գլխին ուղղակի պատուհաս էր: Նույն 1913 թ. ամռանը բանակային և ժանդարմական զորամասերը ջախջախեցին Էրզրումի և Էրզինջանի շրջաններում գործող քրդական բանդաները, իսկ սեպտեմբերին ոչնչացրին Շաքիր աղայի որդիներ Լեզգիի և Աբուբեքրի բանդաները:³⁸³ Սակայն այդ պատժիչ գործողությունները ցուցադրական բնույթ էին կրում և շուտով դադարեցվեցին:³⁸⁴ Մինչդեռ քրդական այն ցեղապետերի, բեկերի և այլն գործողությունները, որոնք կրում էին հակահայկական բնույթ, երիտթուրքական կառավարության տեղական իշխանությունների կողմից խրախուսվում էին: Բիթլիսում ռուսական հյուպատոս Շիրկովը 1913 թ. մայիսի 13-ին Ստամբուլում ռուսական դեսպանին հեռագրում էր, որ քրդական ավատատերերը տեռորի են ենթարկում հայ և ասորի բնակչությանը, որ քրիստոնյաների վիճակը անտանելի է, որ անհրաժեշտ է կախաղան բարձրացնել խիզանցի Կաբանլի Մամեին, Էրուզնցի Մեհմեդ Էմինին, հայտնի ավազակապետ Չատոե Բշարին և ուրիշների: Որ առանց այդ միջոցի վիլայեթի հանգստությունը չի վերականգնվի:³⁸⁵

Եիշտ է, առանձին վայրերում հայերին հաջողվում էր կազմակերպել ինքնապաշտպանություն կամ վերացնել առավել սանձարձակ աղաներին ու բեկերին, սակայն, հասկանալի է, դրանով հնարավոր չէր կանխել այդ արհավիրքը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նկատվում էր քրդական ազգայնական հոսանքի գործունեության ակտիվացում: Այդ շարժումը դառնում էր ավելի կազմակերպված: Նրա ներկայացուցիչներին շատերն էին գիտակցում, որ հայ-քրդական առճակատումը ձեռնտու է միայն թուրքական կառավարությանը, որ քուրդ ժողովուրդը իր ազգային իղձերի իրականացման ճանապարհին հայերի օժանդակության կարիքն ունի, որ հայերը քաղաքականապես արդեն բավականին հասունացած են, մինչդեռ քուրդ ժողովուրդը տակավին նոր է սկսում ոտք դնել քաղաքական հասունացման շեմին և այլն:

Այդ կերպ մտածող գործիչներից մեկն էր Սեյիդ Ալին, խիզանի նշանավոր շեյխերից մեկը: Վերջինս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայության նկատմամբ իր խժժություններ

րով «հռչակ» ձեռք բերած շեյխ Ջալլալեդդինի թոռն էր: Մինչ երիտթուրքական հեղաշրջումը շեյխ Սեյիդ Ալին ևս թշնամական դիրքորոշում էր ունեցել հայերի նկատմամբ և գործուն աջակցություն էր ցույց տվել կառավարությանը հայ ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումները խեղդելու գործում: Սակայն, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո նրա քաղաքական հայացքների մեջ տեղի է ունենում բեկում. նրա ֆեոդալական մտածողությունն ու աշխարհայացքը իր տեղը զիջում է ազգայնականության գաղափարներին և նրա մոտ ձևավորում ու ի հայտ են գալիս հակակառավարական տրամադրություններ: 1911 թ. շեյխ Սեյիդ Ալին հանդես եկավ որպես «այս հողը մեր հողն է» («էվ խուլլի-խուլլի յամայե») շարժման կազմակերպիչներից մեկը:³⁸⁶ Ի վերջո նա հանգում է այն տեսակետին, որ թուրքերը բնավ ի վիճակի չեն կառավարելու Արևմտյան Հայաստանում և Քրդստանում:

1913 թ. շեյխ Սեյիդ Ալիի հանձնարարությամբ Բիթլիսի շրջանի ազդեցիկ քուրդ առաջնորդներից մեկը՝ մուլա Սելիմը, մեկնեց Մշո սուրբ Կարապետ վանք և այնտեղ տեսակցելով հայ գործիչների հետ, շեյխի ամուսնից առաջարկեց հայերի և քրդերի միություն: Նախնական բանակցություններից հետո Սեյիդ Ալիի հանձնարարական նամակով մուլան երկրորդ անգամ հանդիպում է ունենում Տարոնի դաշնակցական գործիչներ Վարդան վարդապետի, Կորյունի և Ռուբենի հետ և անում հետևյալ առաջարկները. «երկիրը պատկանում է հայերին և քրդերին, նրանք էլ պետք է կառավարեն այն»: Այդ սկզբունքի հիման վրա ընդունվում է քաղաքական որոշում քրդերի և հայերի միացյալ ուժերով արևելյան նահանգները հռչակել անկախ:³⁸⁷

Այս իրադարձությունները համընկնում են երիտթուրքական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում և Քրդստանում հարկային լծի անօրինակ ուժեղացման հետ: Հատկապես բնակչության համար չափազանց ծանր էր անասունների համար գանձվող հարկատեսակը՝ աղնամը: Հարկերի գանձումը, որն ուղեկցվում էր ժանդարմական զորանասերի և զինվորականների բռնություններով ու կամայականություններով, բնակչության շրջանում առաջ բերեցին խոր դժգոհություն, որը ամեն վայկյան կարող էր պոռթկալ և վեր ածվել ապստամբության: Իսկապես, մի շարք վայրերում սկսվեցին տարերային հուզումներ: Բիթլիսի նահանգը զբաղեցնում էր 29,850 քառ. կմ տարածք և ուներ մոտ 400 հազար բնակչություն:³⁸⁸ Վիլայեթում կար ավելի քան երեք միլիոն գլուխ մանր եղջերավոր անասուններ: Միանգամայն պարզ է, որ աղնամի հարկի շեշտակի բարձրացումը ուղղակի հարված էր այդ վիլայեթի գյուղացիությանը:

Կառավարությունը բարձրացրեց նաև ռազմական հարկերն ու տուրքերը: Ընդ որում, Բիթլիսի վալին խստիվ և սպառնալից տոնով պահանջեց անհապաղ վճարել ոչ միայն ընթացիկ, այլև նախորդ տարիների չվճարված հարկերը, ինչպես նաև զինակոչիկներ տրամադրել բանակում ծառայելու համար:

Շեյխ Սեյիդ Ալին և նրա համախոհ ու գործակից մուլա Սելիմը որոշեցին օգտվել ստեղծված բարենպաստ իրադրությունից և 1914 թ. գարնանից Բիթլիսի շրջանում սկսեցին ապստամբության նախապատրաստություններ տեսնել: Որպեսզի կառավարությունը չփորձի շարժանքը թյուր մեկնաբանություն տալ և այն ներկայացնել որպես հակահայկական մի խռովություն, նախապես մուլա Սելիմը նամակով դիմեց Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին, որում հավաստիացնում էր, որ քրդական ապստամբությունն ուղղվելու է բացառապես երիտթուրքերի դեմ:³⁸⁹

Ապստամբության անսպասելի բռնկումից անակնկալի մատնված Բիթլիսի վալին «խռովարարների» դեմ ուղարկեց ժանդարմների մի ջոկատ, որը սակայն դեռ ապստամբներին չհանդիպած փախուստի դիմեց: Կառավարությունը ստիպված էր կանոնավոր զորքեր դուրս բերել: Սակայն վերջիններս մույսպես ի վիճակի չէլան ընկճելու թափ հավաքող շարժումը: Ապստամբներին հաջողվեց գրավել Բիթլիսը: Նրանք պահանջեցին, որ թուրքական վարչությունը հեռանա քաղաքից:³⁹⁰ Բիթլիսի վալին և տեղական վարչության աստիճանավորները խուճապահար փախուստի դիմեցին:³⁹¹

Դեպքերին ակնհայտես ավստրիացի Վոլֆարդը վկայում է, որ թեև ապստամբների դեմ ուղարկված թուրքական զորքերի տրամադրության տակ կային թնդանոթներ ու զնդացիորներ, նրանք Բիթլիսի մոտ պարտություն կրեցին վատ զինված քրդերից և անկանոն ու խուճապահար նահանջելով քաղաք, փակվեցին ամրոցում, դրանով իսկ դրսևորելով իրենց լրիվ անկարողությունն ու վախկոտությունը:³⁹²

Երիտթուրքական կառավարությունը շտապեց Բիթլիսի ապստամբությունը հայտարարելու հետադիմական, հակասահմանադրական մի շարժում, որի նպատակն է իբր շարիաթի վերականգնումը: Իթթիհադը այդ ապստամբությունը գնահատեց նաև որպես կառավարության բարենորոգիչ մտադրությունների, այսինքն հայկական բարենորոգումների դեմ ուղղված մի շարժում: Դրանում բարենորոգումների նախագիծը ստորագրած մեծ պետություններին համոզելու համար, ապստամբների շարքերը սողոսկած թուրքական գործակալները, որոնցից մեկն էլ ապստամբներին դավաճանած շեյխ Ռաշիդն էր, շեյխ Սեյիդ Ալիի եղբայրը, առիթը բաց չէին թողնում հանգերգելու համար. «մենք գյավուրական ռեֆորմներ չենք ուզում»:³⁹³

Թուրքական «Իգդամ» թերթը, շողոքորթելով եվրոպական տերություններին և նրանց մոլորության մեջ գցելու միտումով, վերամբարձ ոճով գրում էր. «Մեր հիմնական նպատակն է եվրոպայի հիմնական պահանջումներուն համաձայն վերանորոգվիլ, գործերնիս կանոնավորել և վարչական անիվն ուրիշ ատեններու պես ոչ թե նորոգել, այլ վերաշինել»:³⁹⁴

Հայտնի պանթուրքիստ Ահմեդ Աղանը շանթ ու կրակ էր թափում Բիթլիսի ապստամբ քրդերի գլխին, որոնք նրա կարծիքով իրենց «անվայել» վարքագծով խոչընդոտ են հանդիսանում կառավարության առջև կանգնած պատմական առաքելության իրագործման ճանապարհին: Մուլա Սելիմին հռչակելով տգետ մի ֆանատիկոս, Աղանը նրան մեղադրում էր նրանում, որ նա ուրիշի ձեռքում դարձել է մի պարզ գործիք: Այնուհետև մոլի շովինիստն ու հայատյաց պանթուրքիստը Թուրքիայի և արտասահմանի հասարակական կարծիքը մոլորության մեջ գցելու նպատակով, ձայնակցելով իթթիհադական կառավարությանը, Բիթլիսի ապստամբությունը ներկայացնում էր որպես հայկական բարենորոգումների և առհասարակ կառավարության «առաջադիմական քայլերի» դեմ ուղղված հետադիմական մի շարժում: Նա զարգացնում էր նաև այն միտքը, որ քրդերին ապստամբության մղողը առաջադիմության նկատմամբ նրանց ունեցած վախն է և «բարենորոգմանց դեմ ատելությունը»:³⁹⁵

Հավաստի տեղեկություններ չունենալով Բիթլիսի ապստամբության բուն նպատակների և ընթացքի մասին, շփոթահար հայկական մամուլը հակասական կարծիքներ էր հայտնում նրա մասին: «Մշակը», օրինակ, գրում էր, որ այն հայկական բարենորոգումների ճանապարհին արհեստականորեն սարքված խոչընդոտներից է: Թերթի կարծիքով քրդական այդ շարժումն ուղղված էր հայերի դեմ:³⁹⁶ Սակայն քիչ ավելի ուշ, հավանաբար շարժման վերաբերյալ ձեռք բերելով հավաստի տվյալներ, նույն «Մշակը» հայտնում էր միանգամայն հակառակ տեսակետ: Այսպես, Բ. Նավասարդյանի հոդվածում նշվում էր, որ Բիթլիսի քրդերի շարժումը դա ապստամբություն է երիտթուրքերի դեմ: Որ այն ուղղված չէ բարենորոգումների դեմ և նպատակ չունի հարուցել հայկական ջարդեր: Հոդվածագիրը վերջում եզրակացնում էր, որ այսուհետև պետք է արձարձել հայքրդական մերձեցման հարցը:³⁹⁷

Հարցի առթիվ թերթում ելույթ ունեցավ նաև «Մշակի» խմբագիր, քրդական հարցի գիտակ Համբարձում Առաքելյանը: «Քրդստանի գաղափարը» վերնագրով հոդվածում նա գրում էր, որ Բիթլիսի ապստամբությունը քաղաքական բնույթ է կրում, և նրա շարժառիթը ոչ թե ալան-թալանն է, ոչ թե կրոնական մոլեռանդությունն է, ինչպես եղել է մինչև այժմ, այլ «Քրդստան» գաղափարի իրագործումը, որ քուրդ ժողովրդի մոտ ար-

դեն սկսել է զարթնել ազգայնական զգացումն ու ձգտումը և այլն: Հ. Առաքելյանի կարծիքով, եվրոպական կրթություն ստացած մի խումբ քրդեր մտահոգացել են միացնել քրդական ցեղերը ի մի ազգություն, ի մի քաղաքական մարմին և ստեղծել ինքնավար Քրդստան և որ Բիթլիսի ապստամբական հուզումները այդ ձգտման ազդանշաններն են և կարապետները:³⁹⁸

Իսկ Ստամբուլում հրատարակվող «Բյուզանդիոնը» գրում էր. «Թուրքական կարգ մը թերթեր այնպես ցույց տվին, որ քրդական այս շարժումներն ուղղված են հայկական բարենորոգմանց դեմ, բայց սխալ է այդ ենթադրությունը, ընդհակառակն, քուրդ ապստամբներն հայերուն հանդեպ շատ բարյացակամորեն վերաբերվեցան, հանդիպած հայ գյուղերուն նշանավոր վնաս մը չտվին ... Շարժման արտաքին նպատակն էր շերիաթ պահանջել, ճիշտ Կ. Պոլստ «շերիաթիներուն» նման... որովհետև քուրտ տգետ ժողովուրդը անկարող է ըմբռնել կառավարության դեմ շարժման այլ նպատակ»:³⁹⁹

Վանում ռուսական փոխյուպատոս Օլֆերևը և Բիթլիսում նույն պաշտոնը զբաղեցնող Շիրկովը տեղեկացնում էին Կ. Պոլսում ռուսական դեսպանին, որ ապստամբած քրդերը կապի մեջ են տեղի հայերի հետ և բանակցում են համատեղ հանդես գալու համար:⁴⁰⁰ Այդ բանը հայտնի էր նաև թուրքական իշխանություններին, որոնց հանձնարարված էր ամեն զնով զժտեցնել հայերին և քրդերին և խափանել նրանց միջև համաձայնություն ստեղծվելու հնարավորությունը: Ուստի Բիթլիսում և նրա մերձակա վայրերում տեղակայված թուրքական բանակի հրամանատար Իհսան փաշան, որին հանձնարարված էր ճնշել ապստամբությունը, դիմեց մի սադրիչ քայլի: Նա առաջարկեց Մուշի հայոց «ազգային ղեկավարներին» կառավարությունից զենք ստանալ, կամավորական վաշտեր կազմել և կռվել ապստամբների դեմ:⁴⁰¹ Սակայն այդ սադրանքն ավարտվեց կատարյալ ձախողմամբ: Իհսան փաշային հաջողվեց հայերին բաժանել ընդամենը 150 մաուզեր տեսակի զենք:⁴⁰² Ընդ որում, Տարոնի ղեկավարները անմիջապես գաղտնի սուրհանդակ ուղարկեցին Սեյիդ Ալիի մոտ, հայտնելով նրան, որ եթե ցույցի համար հայ կամավորական խմբեր կազմվեն, նա այլ բան չմտածի, որովհետև հայերը հավատարիմ պիտի մնան ստորագրված պայմանագրին և հանդես չեն գալու քրդերի դեմ:⁴⁰³

Բիթլիսի շուրջը կենտրոնացնելով Մուշից, Դիարբեքիից և Վանից բերված մեծ քանակությամբ զորքեր, թուրքական բանակը անցավ հարձակման: Քրդերը կատաղի ու անմուրաց դիմադրություն էին ցույց տալիս: Սակայն ուժերը անհավասար էին: Պարտվածների հետ դատաստանը անողոք էր: 1914 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ռազմադաշտային դատարանները հարյուրավոր մարդկանց դատապարտեցին

զնդակահարության ու կախաղանի: Ի հասան փաշայի հրամանով բազմաթիվ քրդական գյուղեր, որոնց բնակչությունը մասնակցել էր ապստամբությանը, ջնջվեցին երկրի երեսից:⁴⁰⁴ Ապստամբության ղեկավարներից միայն մուլլա Սելիմին հաջողվեց ապաստան գտնել Բիթլիսի ռուսական հյուպատոսարանում: Ի դեպ, նա այնտեղ մնաց մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը: Պատերազմը բռնկելուց հետո թուրքերը խախտեցին դիվանագիտական անձեռնմխելիության իրավունքը և ներխուժելով հյուպատոսարան՝ ձերբակալեցին մուլլա Սելիմին և Բիթլիսի քաղաքային հրապարակում կախաղան բարձրացրին: Բիթլիսի արտակարգ դատարանի վճռով կախաղան բարձրացվեցին նաև Սեյիդ Ալին, նրա որդի Սյուլիեդդինը և նրանց մերձավոր զինակիցները թվով 14 հոգի, իսկ 45 հոգու բանտարկեցին Տրապիզոնի և Սինոպի բանտերում:

Երիտթուրքական պաշտոնաթերթ «Թանհինը» քուրդ ապստամբների դատավճռի առթիվ գրում էր. «Այս կերպով իրենց պատիժը կգտնեն սարքիչներն ու թելադրիչներն ապստամբական այն շարժումին, որ այս փափուկ ժամանակներում մեջ կրնար ցավալի հետևանքներ ունենալ տերության ու ազգին համար:⁴⁰⁵ Իսկ Ռ. Բեկգուլյանցի հետ գրույցի ժամանակ Թահսին փաշան հայտարարել էր. «Քրդերը դաժանորեն պատժվեցին հարևան պետության (իմա՝ Ռուսաստանի: - Վ. Բ.) հետ բարեկամություն ունենալու ու ավելորդ երազանքների համար ...Քրդերը մահնեղականներ են և պետք է որ դա հիշեն: Իսկ քանի որ նրանք սկսել էին մոռանալ այդ, ապա դաժանորեն հատուցեցին»:⁴⁰⁶

Չափազանց հետաքրքրական է «Թանհին» թերթի թղթակցի հարցազրույցը Կոստանդնուպոլսի պատրիարք Ջավեն Եվգյանի հետ: Բիթլիսի ապստամբության վերաբերյալ թղթակցի այն հարցին, թե արդյոք պատրիարքի կարծիքով այդ ապստամբությունը դրսի միջամտության արդյունք չէ՞, պատրիարքը խայթիչ տոնով պատասխանել է. «Ճիշտ է գրգռություն մը ու թելադրություն մը կա, բայց չեմ կրնար ըսել, թե այն դուրսե՞ն է, թե ներսեն»:⁴⁰⁷

Անտարակույս, 1914 թ. Բիթլիսի ապստամբությունը քուրդ ժողովրդի հակաթուրքական պայքարի աչքի ընկնող դրվագներից մեկն է: Այն, որ այդ ապստամբությունը մեկուսացված, զուտ տեղական բնույթ ունեցող և, հետևաբար, պատահական երևույթ չէր, վկայում է այն փաստը, որ նրա հետ միաժամանակ, համարյա նույն օրերին, քրդական հակակառավարական հուզումներ էին տեղի ունենում նաև Վանի, Դիարբեքիի, Էրզրումի և Մոսուլի վիլայեթներում:⁴⁰⁸

Երիտթուրքական կառավարությանը հաջողվեց ապստամբությունը հեշտությամբ ճնշել, որովհետև շարժումը չհասցրեց արձագանք գտնել քրդական լայն զանգվածների շրջանում, այնուհետև այն թույլ

կազմակերպված, նույնիսկ տարերային բնույթ էր կրում: Ապստամբությունը չունեց հստակ ձևակերպված նպատակներ: Նրա առաջնորդները ի վիճակի չէին իրենց հետևից տանելու զանգվածներին: Ապստամբությանը մասնակից քրդական ավատատերերի մեջ տասնամյակներով ստեղծված անվստահության մթնոլորտը, որը համաշխարհային պատերազմի նախօրյակին ավելի էր թանձրանում իթթիհարդի սադրիչ քայլերի շնորհիվ, թույլ չտվեց, որ հայերը ևս մասնակցեն քրդերի հակակառավարական այդ ելույթին:

Քրդական մի շարք ազդեցիկ դեմքեր, օրինակ, սենատոր Աբդուլ Ղադերը, շեյխ Թահան, Բիթլիսի մուֆթի Աբդուլ Մեջիդը, օսմանյան խորհրդարանի նախկին երեսփոխան Ֆևադի էֆենդին, Գենջի երեսփոխան Մեհմեդ Էմինը և բազմաթիվ շեյխեր ու աշիրեթապետեր կառավարության նկատմամբ իրենց հավատարմությունը ցուցադրելու նպատակով, ապստամբությունը ճնշվելուց հետո սկսեցին հեռագրեր ուղարկել Բ. Դռանը, որոնցում բառեր չէին խնայում իրենց հավատարմության հավաստիքը հայտնելու համար: Նրանք գրում էին, թե իբր Բիթլիսում օտարների թելադրանքով առաջ եկած «ցավալի կացությունը» «քրդերի ընդհանուր պարսավանքի առարկա է» և որ շեյխերը, բեկերն ու աղաները և բոլոր աշիրեթները կատարելապես հավատարիմ են խալիֆայությանը:⁴⁰⁹

Արևմտյան Հայաստանի զանազան անկյուններից խորին հպատակության զեղումներով գրված այդ հեռագրերի հետ միաժամանակ կառավարական թերթերը խմբովին սկսեցին ընդարձակ առաջնորդող հոդվածներ տպագրել ի պաշտպանություն «Ճիշտ է, դեռևս տգետ, բայց և ասպետական ոգի ունեցող քրդերի մասին, որոնք անսահման նվիրված են խալիֆին և օսմանյան կառավարությանը»:⁴¹⁰

Դարձյալ օգտագործելով թուրքական ավանդական «փափուկ բարձը», «Թասֆիրի էֆեյար» թերթը իր խմբագրականում գրում էր, թե ըստ էության Բիթլիսի դեպքերը չի կարելի գնահատել որպես ապստամբություն: «Քյուրտերն, որ ի բնե ուշիմ և սկզբունքով հայրենասեր են, հայրենիքին վնաս չեն հասցներ և այդ տեսակ անպատշաճ արարքներու համար գտնվելու աստիճանեն շատ վեր են: Կրոնքի և հայրենիքի կապերն իրենց կյանքին գլխավոր կապերը կնկատեն և այդ արժեքավոր ու քաջարի հայրենակիցները շատ հեռու են հայրենիքը վտանգի ենթարկելիք և իսլամության վնասելիք ընթացքներ»:⁴¹¹

Կարծես ի հեծուկս այդ խոսքերի, 1914 թ. գարնան վերջին բռնկեց բարզանցի քրդերի ապստամբությունը: Շեյխ Բարզանին հաջողվեց կառավարության դեմ հանել ավելի քան 500 քրդական գյուղեր: Քրդերին միացան նաև ասորիները: Տեղի ունեցած արյունահեղ ու անհավասար մարտերում, սակայն, ապստամբները պարտություն կրեցին և

ստիպված էին անցնել Իրան, թուրք ասկյարների վրեժխնդրությունից փրկություն գտնելու համար:⁴¹²

Քրդական այդ պատամբությունները, հատկապես Բիթլիսի պատամբությունը, ցնցող տպավորություն գործեցին երիտթուրքական կառավարության վրա: Ստամբուլում համոզված էին, որ պատերազմը ուր որ է կայաթի, իսկ քրդերին երիտթուրքական կառավարությունը մտադիր էր լայնորեն օգտագործել Ռուսաստանի դեմ որպես թնդանոթի միս, ինչպես նաև հայերին զսպող գործոն: Կարևորագույն խնդիր էր նաև թիկունքի ապահովության հարցը: Ուստի երիտթուրքների առջև կանգնած էր անհետաձգելի մի խնդիր. «քրդական հարցի» վերաբերյալ անհապաղ մշակել քաղաքական ծրագիր: 1914 թ. մարտի 22-ին «Իթթիհադ վե օրաթը» կուսակցության կենտրոնական կոմիտեն գումարեց արտակարգ նիստ՝ որի օրակարգում բացառապես դրված էր այդ հարցը: Որոշվեց Քրդստանի և Արևմտյան Հայաստանի ազդեցիկ ցեղերի առաջնորդներին իթթիհադի հետ ավելի սերտ կապերով կապելու համար նրանց առատորեն հատկացնել դրամական նպաստներ, շնորհել զանազան պաշտոններ, տրամադրել պատվանշաններ, մի քանիսին ընտրել օսմանյան խորհրդարանի պատգամավորներ և այլն:⁴¹³

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին քուրդ ազգայնականները ակտիվացրին իրենց գործունեությունը: 1913 թ. հունիսից սկսած «Խիվա» ընկերությունը ձեռնամուխ էր եղել «Ռոժա քուրդ» («Քրդի օր» կամ «Քրդի արև») թուրքերեն և քրդերեն լեզուներով ամսագրերի հրատարակությանը, որը չորրորդ համարից սկսած լույս էր տեսնում «Խաթավի քուրդ» անվանումով: Ամսագիրը բարձրացնում էր քրդերին հուզող հարցեր, կոչ էր անում համախմբվել քուրդ ժողովրդի առջև կանգնած մարտահրավերներին դիմակայելու համար և այլն: Համարելով, որ «քրդական ազգային գաղափարի» իրականացման համար կարևոր կռվան է հանդիսանում քուրդ ժողովրդի կրթական ու մշակութային զարգացման նակարդակի բարձրացումը, ամսագիրը խնդիր էր առաջադրում ստեղծել քրդական այբուբեն, լուսավորել քուրդ ժողովրդին, նրան հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթին և այլն:⁴¹⁴

1913 թ. երկրորդ կեսին իր գործունեությունը ակտիվացրել էր նաև «Կոմալա Քուրդիստան» («Քրդստանի միություն» կամ «Քրդստանի դաշինք») կազմակերպությունը, որը զուտ քարոզչական աշխատանքից անցել էր գործնական աշխատանքի: Նա կազմակերպեց զենքի մատակարարում ցեղերին, նրանց նախապատրաստում էր «առաջիկայում

սպասվելիք իրադարձությունների» համար և այլն: Ազգայնականները ողջ Քրդստանով ու Արևմտյան Հայաստանով մեկ քուրդ բնակչության շրջանում տարածեցին «մազբաթա» (դիմում, կոչ), որոնցում հորդորում էին քրդերին պայքարի դուրս գալ հանուն ազատության:⁴¹⁵

Քրդական ազգայնականների ծրագիրը այդ էտապում պարունակում էր հետևյալ պահանջները. Քրդստանի վարչական ինքնավարություն, հարկերի նվազեցում ու կարգավորում, տարածքային քրդական բանակի ստեղծում, տեղական վարչության արմատավորում, քրդական դպրոցների հիմնադրում, որոնցում դասավանդումը իրականացվելու էր քրդերեն լեզվով, Քրդստանում բոլոր պաշտոնյաներն ու սպաները պարտադիր կարգով պետք է լինեն քրդեր:⁴¹⁶

Սակայն այդ բոլորով հանդերձ, քրդական իրականության մեջ դեռևս բացակայում էր կենտրոնացված քաղաքական ղեկավարությունը, գոյություն չուներ նպատակների միասնություն: Քրդական ազգայնականների և ազդեցիկ ցեղապետների մի մասը համոզե էր գալիս անկախ քրդական պետության՝ բեյլիքի պահանջով, մի այլ խումբ պահանջում էր լոկ ինքնավարություն, իսկ ոմանք պարզապես պահանջում էին, որ կառավարությունը հրաժարվի հայկական բարենորոգումներ իրականացնելուց:⁴¹⁷

Համաձայնություն գոյություն չունեի նաև այն հարցում, թե քրդական բեյլիքի գաղափարի իրականացման դեպքում ով պետք է գլխավորի այն: Տարբեր էր նաև այդ գործիչների արտաքին քաղաքական կողմնորոշումը: Աբդուրբեգակի «կուսակցությունը» համարվում էր ռուսամետ, նրա հորեղբորորդի Հասան-բեյի «կուսակցությունը» անգլիամետ, Աբդուլադները թուրքերի հետ էր և այլն:⁴¹⁸

ՀԱՅԿԱՎԱՆ ԵՎ ԶՐԴԱՎԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ 1919 Թ. ՓԱՐԻՉԻ ՎԵՂԱԺՈՂՈՎՈՒՄ

Համաշխարհային պատերազմի փոթորիկը հողս ցնդեցրեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու այն ծրագիրը, որը Ռուսաստանի համառ ու հետևողական ջանքերի հետևանքով 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) վեր էր անվել դիվանագիտական-քաղաքական փաստաթղթի և ընդունվել մեծ տերությունների, ինչպես նաև Օսմանյան կառավարության կողմից: Այդ փաստաթուղթը որոշ իրավական երաշխիքներ էր տալիս հայերին պաշտպանվելու թուրքական իշխանությունների և քրդերի կողմից իրականացվող բռնություններից ու սանձարձակություններից: Սակայն վերահաս պատերազմը հնարավորություն տվեց երիտթուրքական կառավարությանը պատռել ու ոչնչացնել այն: Երիտթուրքական կառավարությունը որոշեց մտնել այդ պատերազմի մեջ, հետամուտ լինելով մի շարք հեռահար ծրագրերի իրագործման: Իթթիհադի նվիրական իղձն էր գործնական իրագործում տալ պանթուրքիզմի գաղափարին և ստեղծել թուրքական մի հսկա կայսրություն, որն իր մեջ ամփոփելու էր ողջ Մերձավոր Արևելքն ու Կենտրոնական Ասիան՝ մինչև Չինաստանի սահմանները: Իթթիհադականները ձգտում էին պատռել ու ոչնչացնել նաև իրենց նախորդների՝ օսմանյան սուլթանների կողմից եվրոպական տերությունների հետ կնքած անիրավահավասար և նվաստացուցիչ կապիտուլյացիոն պայմանագրերը, վերջ տալու համար եվրոպական տերությունների միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին, երկիրը ազատագրելու իր կիսանկախ վիճակից և ձեռք բերելու լրիվ և անբողջական անկախություն: Նրանք ենթադրում էին, որ այդ նպատակի կենսագործումը կարող էր թուրք երիտասարդությանը ներշնչել խանդավառություն, ինքնավստահություն ու հպարտություն, որի կորուստը հատկապես նկատելի էր Բալկանյան առաջին պատերազմում ջախջախիչ պարտություն կրելուց հետո, երբ թրքության ազգային ու պետական արժանապատվությունը խորապես սասանվել էր մանավանդ այն պատճառով, որ նա այդ պարտությունը կրել էր նախկին ռայա համարված բալկանյան ժողովուրդներից:¹

Թուրքական կառավարող շրջանները մտադիր էին նաև ռևանշ վերցնել տարածքային այն կորուստների համար, որ ունեցել էին վերջին մի քանի տարիների ընթացքում: 1908 թ. Թուրքիան վերջնականապես կորցրեց Բոսնիան և Հերցեգովինան, որոնք բռնազավթվեցին Ավստրո-Հունգարիայի կողմից և գրկվեց Բուլղարիայի նկատմամբ իր նախկին ինքնիշխանության մնացուկներից: Իսկ 1912 թ. Իտալիան, Տրիպոլիտա-

նական պատերազմի հետևանքով յուրացրեց թուրքական վերջին տիրությունները հյուսիսային Աֆրիկայում՝ Տրիպոլիս և Կիրենայիկան, ինչպես նաև Էգեյան արշիպելագի ռազմավարական առաջնակարգ նշանակություն ունեցող կղզիների խումբը՝ Դոդեկանեսյան կղզիները: 1913 թ. բալկանյան պետությունների դաշինքը Օսմանյան կայսրությանը գրկեց եվրոպայում նրա երկու հիմնական տիրություններից՝ Մակեդոնիայից և Արևմտյան Թրակիայից: Երիտթուրքերի կարծիքով այժմ հերթը հասել էր Արևելյան Անատոլիային (Արևմտյան Հայաստանին), որի վրա մշտապես կախված էր ռուսական սպառնալիքը:

Արդարացնելով երիտթուրքերին երկիրը պատերազմի մեջ ներքաշելու հարցում, Մուստաֆա Քեմալը գրում էր. «...Տերությունները համաշխարհային պատերազմի հենց սկզբից և մեր կողմից պատերազմի մեջ մտնելուց չորս ամիս առաջ հայտարարում էին, որ իրենք որոշում են կայացրել ստեղծելու հայկական հանրապետություն անբողջապես Օստոմանյան կայսրության հաշվին: Վերջապես, ինչպես պարզվում է բուլղարիկների կողմից հրապարակված գաղտնի պայմանագրերից, Կոստանդնուպոլիսը խոստացված էր ցարական Ռուսաստանին: Այս բոլոր փաստերը պարզորոշ կերպով ցույց են տալիս, թե ինչ աստիճանի անխուսափելի էր, որ Թուրքիան մասնակցի Անտանտի պետությունների դեմ ուղղված պատերազմին»:²

Անկախ նրանից, թե հայ ժողովրդին ով ինչ էր խոստացել, իթթիհադի պարագլուխները անշուշտ հիանալի գիտակցում էին, որ Հայկական հարցի տրամաբանական լուծումը կարող էր հանդիսանալ Հայաստանի անկախությունը: Սակայն իրենք, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նույնիսկ կարող էին հաշտվել ընդարձակ ու հարուստ արաբական հողերի կորստի հետ, բայց ոչ երբեք Հայաստանի, քանի որ նա ընկած էր Թուրան տանող ճանապարհի վրա, որտեղից թուրք ազգը երազում էր ծծել իր կենսունակության ավիշը:³

Այսպիսով, երիտթուրքական կառավարության կողմից պատերազմի մեջ մտնելու մյուս կարևոր դրոշապատճառն էր մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին, որը Օսմանյան կայսրության առջև մշտապես ցցվում էր քաղաքական տագնապների ընթացքում: Կասկածից վեր է, որ իթթիհադի կողմից 1915 թ. կազմակերպած արևմտահայոց ցեղասպանության կարևորագույն նպատակներից մեկն էր նաև կանխել հետպատերազմյան շրջանում Հայկական հարցը միջազգային դիվանագիտության սեղաններին դնելու հնարավորությունը, անկախ նրանից, թե Թուրքիան պատերազմից դուրս կգար հաղթանակած թե պարտություն կրած: Հիրավի, դժվար է հավատալ, որ երիտթուրքերը հաշվարկած չլինեին պատերազմի ժամանակ Թուրքիայի պարտության հնարավորությունը: Սակայն նույնիսկ այդ դեպքում, իթթիհադի պարագլուխների կարծի-

քով, Թուրքիան շահած դուրս կգար պատերազմից, քանի որ արմատապես լուծված կլինեն Դայկական հարցը, որը երիտթուրքերը համարում էին Օսմանյան կայսրության վրա կախված մի մղձավանջ:

Երիտթուրքական պարագլուխները շնականորեն իրենց որոճած հանցագործությունը «արդարացնում» էին ազգային շահերի անվան տակ: Թալաթ փաշան, օրինակ, ասել է. «Երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ և դա հաջողվում է նրան, աշխարհն ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար»:⁴

Երիտթուրքական արկածախնդրական այդ լայնահուն ծրագրերը լիակատար աջակցություն էին գտնում Գերմանիայի կողմից: Մասնավորապես պատերազմի մեջ մտնելու դիմաց Բեռլինը պարտավորվել էր ապաշտպանել Ռուսաստանի կողմից վտանգված օսմանյան երկրամասերը, բ. օգնել Թուրքիային վերացնելու կապիտուլյացիաները, և գ. Թուրքիայի համար ապահովել նրա արևելյան սահմանի որոշ սրբազրություն, որպեսզի նա հնարավորություն ունենա ուղղակի շփման մեջ մտնել Ռուսաստանի մահմեդականների հետ:⁵

Պատերազմին կրոնական բնույթ հաղորդելու և երկրի մահմեդական բնակչությանը, ինչպես նաև իսլամական աշխարհը Անտանտի դեմ ուղքի հանելու նպատակով 1914 թ. նոյեմբերի 11-ին շեյխ-ուլ-իսլամ Խայրի-էֆենդին ջիհադ՝ «սրբազան պատերազմ» հայտարարեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնք, ինչպես նշվում էր շեյխ-ուլ-իսլամի ֆեթվայում, «ցանկանում են հանգցնել իսլամի բարձր լույսը»:⁶ Ֆեթվայում նշվում էր, որ «անհավատներ» պետք է համարել միայն եռյակ Դամաձայնության պետություններին, իսկ Գերմանիան և Ավստրո-Յունգարիան հանդիսանում են իսլամի պաշտպաններ:

Սակայն ջիհադի այդ կոչը մեծ արձագանք չգտավ ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև մահմեդական աշխարհում, քանի որ այն դիտվեց իսլամի օրենքներին հակասող: Բանը նրանումն էր, որ սուլթան-խալիֆը պատերազմ էր հայտարարում մի քանի քրիստոնյա պետությունների դեմ, դաշնակցելով քրիստոնյա պետությունների մեկ այլ խմբի հետ: Մինչդեռ իսլամական օրենքների համաձայն, սրբազան պատերազմ կարող է հայտարարվել միայն այն ժամանակ, երբ վտանգ է սպառնում իսլամին կամ նրա նկատմամբ հայտարարվում է հալածանք: Հետևաբար սուլթանի և շեյխ-ուլ-իսլամի կողմից հայտարարված ջիհադը մահմեդականների կողմից ընկալվեց որպես Գերմանիայի օգտին «իսլամական աշխարհը շարժման մեջ դնելու» մի քայլ:⁷

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունը որոշեց լայնորեն օգտագործել քրդերի ռազմական ուժը ինչպես ռազմաճակատներում, այնպես էլ ներ-

քին ոստիկանական ֆունկցիաներ իրականացնելու համար: Մեծ աշիրեթները իրենց ամբողջ կազմով պարտավոր էին միանալ թուրքական բանակին այն կամ այն ճակատի վրա գործելու, ինչպես նաև Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջանները պաշտպանելու համար: Եռանդուն քայլեր կատարվեցին համիդիե անկանոն զորամասերը վերածնելու և նրանց մարտունակությունը բարձրացնելու ուղղությամբ:⁸ Երիտթուրքական իշխանությունները քրդերից ձևավորում էին թշնամու քիկունքում գործելու ընդունակ ջոկատներ, որոնք հաճախակի խախտելով ռուսական սահմանը ասպատակ էին սփռում Անդրկովկասում, շարքից հանում կարևորագույն ռազմական օբյեկտները, իրագործում էին ահաբեկչական գործողություններ և այլն: Թուրքիայից Ատրպատական և Իրանական Քրդստան էին ներթափանցում թափառող դերվիշներ, որոնք քրդերին ու ազերիներին կոչ էին անում սրբազան պատերազմ՝ ջիհադ ծավալել ռուսների դեմ:⁹ Ստամբուլում հույսեր էին փայփայում, որ հսկայական կորուստներ ունենալով արևմուտքում, իրենք տարածքային փոխհատուցում ձեռք կբերեն իրենց թույլ հարևանի՝ Իրանի հաշվին:¹⁰ Ուստի Իրանական Քրդստանի քրդական աշիրեթներին, որոնց համակրանքը թուրքերի կողմն էր, առատորեն բաժանում էին զենք և զինամթերք:¹¹ Այս բոլորն ուժեղացվում էր պանիսլամիստական քարոզչության ծավալմամբ: Գաղտնի ժողով գումարելուց հետո Իրանի քրդական ցեղապետերը Ստամբուլի մեջլիս մեխուրգանի (պատգամավորների պալատ) անունով ուղարկեցին մի «աղերսալից դիմում», որտեղ խնդրում էին իրենց վերցնել թուրքական հովանավորության տակ:¹² Թուրքիայում գործող քրդական ազգայնական կազմակերպությունները որոշակի ազդեցություն ունեին իրանական քրդերի վրա և մեծապես նպաստում էին Իրանում քրդական ազգայնականության ձևավորմանը:

Քրդական առավել մեծ զանգվածների պատերազմի մեջ ներգրավելու համար, իթթիհադը շռայլ խոստումներ էր տալիս քրդերին՝ բավարարել նրանց ազգային ձգտումները և պատերազմի հաղթական ավարտից հետո տրամադրել ինքնավարություն,¹³ օրինականացնել նրանց կողմից հայերից բռնագրավված հողերը, վերականգնել նախկին իրավունքներն ու արտոնությունները և այլն: Երիտթուրքերի քարոզչական մեքենան լծվել էր եռանդուն գործունեության, քրդերին ներշնչելու համար, որ նրանց հայրենասիրական պարտքն է հանդես գալ Թուրքիայի ներքին ու արտաքին թշնամիների դեմ: Ներքին թշնամիների ցուցակում անշուշտ առաջին տեղը զբաղեցնում էին հայերը, իսկ որպես գայթակղիչ խայծ, Բ. Դուռը քրդերին խոստանում էր անպատիժ թողնել երկրի այդ «ներքին թշնամիներին» կողոպտելիս:

Երիտթուրքական եռապետության անդամ, ներքին գործերի նախարար Թալաթ-փաշան քրդական ազդեցիկ առաջնորդներից մեկին

Աբղուլ Ղադերին առաջարկեց մեկնել Քրդստան և «կատարելով իր հայրենասիրական պարտքը» քրդերին ուղքի հանել Ռուսաստանի դեմ:¹⁴

Հարկ է նշել, որ քրդական առաջնորդների շրջանում կային նաև մարդիկ, որոնք «անկախ Քրդստանի» հարցը լուծելու համար կողմնորոշվում էին դեպի եռյակ համաձայնության երկրները: Դրանցից մեկն էր, օրինակ, գեներալ Շերիֆ-փաշան, որը զբաղեցնում էր Շվեդիայում թուրքական դեսպանի պաշտոնը: Նա կապերի մեջ մտավ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության հետ, առաջարկելով, որ ինքը և իր համախոհները ի վիճակի են քրդերին բարձրացնել ապստամբության թուրքիայի դեմ, դրա փոխարեն խնդրելով դաշնակիցների աջակցությունը անկախ Քրդստանի ստեղծման գործում:^{15a} Սակայն Փարիզում ընդառաջ չգնացին այդ առաջարկին ոչ միայն այն պատճառով, որ ֆրանսիական կառավարության ծրագրերի մեջ չէր մտնում «անկախ Քրդստանի» ստեղծումը, այլև այն պատճառով, որ ֆրանսիական քաղաքական շրջանները լուրջ չէին համարում այդ առաջարկը, գլխավորապես նկատի ունենալով այն, որ Շերիֆ-փաշան որպես գործիչ ընդունակ ու պիտանի չէր մի այդպիսի վիթխարի ծրագիր գլուխ բերելու համար: Բացի այդ, ֆրանսիական քաղաքական գործիչները ստույգ տեղեկություններ ունեին, որ ոչ միայն թուրքիայի քրդական վերնախավը, ցեղային ավագանին և այլն, այլև քրդության ջախջախիչ մեծամասնությունը իր ճակատագիրը կապել է երիտթուրքական կառավարության հետ: Հիրավի, իր քաղաքական ու սոցիալ-տնտեսական հետամնացության, կրոնական ու տոհմացեղային նախապաշարմունքների, ապագայի առումով իր ազգային նպատակների պարզ գիտակցությունը չունենալու, թուրքական պետության մեքենայությունների, քաղաքական պատեհապաշտությունից մղված և այլ պատճառների հետևանքով պատերազմի ողջ տևողության ընթացքում քրդերը դաշնակցեցին թուրքերի հետ: Ընդ որում, դա հավասարապես վերաբերվում է ինչպես աշիրեթային ցեղերին, այնպես էլ նստակյաց կյանք վարող ռայա քրդերին: «Զարմանալի իրողություն մըն է այն,— գրում է Կարո Սասունին,— որ 1915 թ. ապրիլյան եղեռնի մեջ մեծ դեր կատարած են նաև ռայա քրդերը: Կառավարությունը զինել է նրանց որպես ժամանակավոր ժանդարմերի, լայն ազատություն է տվել նրանց հայերին կոտորելու և նրանց «լքյալ գույքով» հարստանալու համար: Քյուրտ ռայաները՝ կառավարության արտոնություններեն շփացած՝ կատարյալ փորձանք մը դարձած են հայության գլխուն: Եղած են վերին աստիճանի անգութ և կրցած են կառավարության մատնել այն հայերը, որ ապաստան գտած են այս ու այն աշիրեթներում քով»:¹⁵

Այսպիսով, երիտթուրքական կառավարությանը հաջողվեց հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրն իրագործելու համար, որպես գործիք լայնորեն օգտագործել նաև քրդական ցեղային ավագանուն, մեծ ու

փոքր աշիրեթներին, քոչվոր, կիսաքոչվոր ու նստակյաց քրդերին, որոնք դարձան հայ ժողովրդի բնաջնջման մեքենայի կարևորագույն մասերից մեկը: Մի խոսքով քրդերը դարձան երիտթուրքական կառավարության հայասպան ծրագրերի իրականացման մեղսակիցներ: Նրանք որոշակի դերակատարություն ունեցան նաև Վասպուրականում, Սասունում, Մուշում, Շատախում, Շապին-Պարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռում և այլ վայրերում տեղի ունեցած հայերի գոյամարտը ճնշելու գործում, մեծապես ջլատելով հայկական ինքնապաշտպանությունը: Քրդական աշիրեթների զինված խմբերը «կը բռնեին հայկական լեռները, ծորերն ու պուրակները, և որսկան շուներու պես, անհնարին կը դարձնեին ամեն հաղորդակցություն, ու անապահով՝ ամեն թաքստոց: Թուրքական բանակները, այս օժանդակություններուն շնորհիվ, հայ ինքնապաշտպանությանը կը հարվածեին ճակատեն և գլխավոր գիծերեն»:¹⁶

Ռուս քրդագետ Վ. Նիկիտինը քրդերի զորակցությունը օսմանյան կառավարությանը բացատրում է նրանով, որ վերջինիս հաջողվեց կրոնական կարգախոսների քողի ներքո շարժման մեջ դնել քրդերի մարտական բնագոյները:¹⁷ Դա անշուշտ ճշմարիտ, սակայն միակողմանի մեկնաբանություն է: Առկա է նաև տեսակետ, որ պատերազմին, իրենց եռանդուն մասնակցությունը բերած և արևմտահայոց ցեղասպանությանը մասնակից դարձած քրդական ցեղերը պարզապես մղված էին կողոպուտի պատեհությունից, մասնավաճ որ դա անվտանգ (հայերի անգն լինելու պատճառով) և անպատիժ մնալու մի ձեռնարկ էր, քանի որ իշխանությունները քրիստոնյաներին հայտարարել էին պետության թշնամիներ: Այդ գործում պակաս դեր չխաղաց նաև այն, որ երիտթուրքերը հավատացրել էին քրդերին, որ պատերազմից հետո նրանց ծառայությունները կհատուցվեն:

Որոշ հետազոտողներ քրդերի այդ վարքագիծը մեկնաբանում են պատերազմի ժամանակ Ռուսաստանի որդեգրած հակաքուրդ քաղաքականությամբ: Հայտնի է, որ նախապատերազմյան շրջանում, առաջնորդվելով պատերազմի հավանական թատերաբեմի ժողովուրդներին իր կողմը գրավելու հեռանկարներով, Ռուսաստանը շեշտված ձևով վարում էր քրդերին սիրաշահելու քաղաքականություն: Սակայն պատերազմը սկսվելուց հետո, համոզվելով, որ քրդերը անվերապահորեն թուրքիայի հետ են, Պետերբուրգը հարյուր ութսուն աստիճանով փոխեց իր քրդական քաղաքականության կուրսը, այսուհետև աննշան հետաքրքրություն դրսևորելով քրդերի նկատմամբ: Ավելին, ռուսական զորքերը իրենց անցած ճանապարհների վրա գտնվող քրդական գյուղերն ու բնակավայրերը, անկախ այն բանից, թե դրանց բնակիչները թշնամի են թե ոչ, որպես կանոն վեր էին ածում անապատի:¹⁸

հրողություն է, սակայն, որ քրդերի շրջանում գտնվեցին հավաքականություններ, որոնք ոչ միայն չմասնակցեցին հայերի զանգվածային կոտորածներին, այլև ապաստան տվեցին նրանց: Օրինակ, Դերսիմում կարողացան պատսպարվել և փրկություն գտնել մոտ 20 հազար հայեր: Սասնո Խույթ-Մոթըզանի շրջանում, մասնավորապես Մուշում, զանազան աշիրեթների մոտ թաքնվեցին և պաշտպանություն գտան մոտ 12 հազար հայեր: Կոտորածից ազատվել է նաև Հարավային Քրդստանի մեծ թվով հայ բնակչությունը:¹⁹ Բազմաթիվ ցեղապետեր ենթարկվել են թուրքական հալածանքների միայն նրա համար, որ հայերին վերցրել են իրենց պաշտպանության տակ և նրանց չհայտնաբերելու համար պահել են քրդական տարազով:²⁰ Քուրդ առաջնորդները հաճախ նախագզուլացրել են հայերին թուրքական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ նախապատրաստվող գործողությունների վերաբերյալ:²¹ Քուրդ պատմաբան Յամուլքին գրում է, որ Անատոլիայում փրկված ու վերապրած հայերի երեք քառորդը «փրկվել և թաքցվել են քրդերի կողմից»:²² Քրդական գործիչների մեջ գտնվեցին նաև մարդիկ (օրինակ գեներալ Շերիֆ-փաշան), որոնք կտրուկ դատապարտեցին իթիհադականներին, հայկական արյունոտ ջարդերը կազմակերպելու համար:²³

Ուշագրավ է նաև նշել, որ քրդական շրջաններում կրոնական մեծ հեղինակություն վայելող մոլլա Սայիդը բողոքեց թուրքական կառավարության կողմից քրիստոնյաների դեմ հայտարարված սրբազան պատերազմի՝ «ջիհադի» դեմ, նշելով, որ կառավարությունը չարաշահում է իսլամը: Նա հրապարակեց մի ֆեթվա (բարձրագույն կրոնական հայտարարագիր – Վ. Բ.), որտեղ պնդում էր, որ իսլամական կրոնի սկզբունքները անհամատեղելի են քրիստոնյաների անխտիր սպանության ու կողոպուտի հետ:²⁴ Իր այդ հանդուգն քայլի պատճառով մոլլա Սայիդը կառավարության կողմից ամբաստանվեց դավաճանության մեջ և ձերբակալվեց:

Իթիհադից պատասխանատվությունը վանելու համար հետագայում Թալաթ փաշան փորձել է հայոց ցեղասպանության ողջ մեղքը բարդել քրդերի վրա, հայկական հսկա մարտիրոսագրությունը ներկայացնելով որպես հայերի և քրդերի ռասայական հակամարտության արդյունք:²⁵

Ընդհանրապես հայ իրականության մեջ քրդերը մշտապես դիտվել են որպես կույր գործիք թուրքական կառավարող շրջանների ձեռքում և ոչ որպես ինքնուրույն քաղաքական միավոր, որը պատասխանատվություն է կրում իր արարքների համար: Սակայն Հայոց ցեղասպանության տարիներին քրդերի վարվելակերպի հանգամանալից ուսումնասիրությունը աներկբայորեն վկայում է, որ քրդերը նույնքան պատասխանատվություն են կրում, որքան և թուրքերը: Կասկածից վեր է, որ «եթե չլինեք քրդական գործոնի կործանիչ մասնակցությունը, թուրքերին չէր հաջողվի

բռնի ուժով վերջնականապես լուծել հայկական հարցը»:²⁶ Այդ նույն միտքը Կ. Սասունին ձևակերպում է հետևյալ կերպ. «Կասկած դուրս է, որ եթե քրդական օժանդակությունը չըլլար, թուրքերը շատ մեծ դժվարության պիտի մատնվեին հայերուն դեմ իրենց ձեռնարկներուն մեջ»:²⁷

Հայ ժողովրդի ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը բնաջնջվեց և դուրս մղվեց իր դարավոր հայրենիքից: Դրանից հետո հայությունը այլևս իրենից հաշվի առնվելիք ուժ չէր ներկայացնում երկրի ներքին կյանքի բնագավառում: Ճիշտ է, որպես թշնամի տարր դեռևս մնում էր դրսի հայությունը, Արևմտյան Հայաստանից հեռացած հայ գաղթականները և կամավորական գնդերը, սակայն դրանք բոլորը միասին այժմ թուրքերի համար ներկայացնում էին մի արտաքին ուժ, որի դեմ թուրքական բանակը պետք է կռվեր, ինչպես որ կռվում էր ռուսական բանակի դեմ: Ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնիկական տարրը ձեռք բերեց գերակշիռ դիրք և կազմեց մեծամասնություն: Կարծես թե իրականացնում էր երիտթուրքերի կողմից քրդերին խոստացած ինքնավար Քրդստան ստեղծելու գաղափարը: Սակայն, իրականում հենց այդ ժամանակվանից սկսած, թուրքական պետության համար օրակարգի անհետաձգելի հարց էր դառնում նաև «քրդական պրոբլեմի» լուծումը: Նկատի ունենալով Օսմանյան կայսրության մեջ բնակվող քրդական տարրը, «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարներից մեկը գրել է, որ «մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»:²⁸

Այսպիսով, ազգայնամուլ և համաթրքական ծրագրի երկրորդ արարը լինելու էր կայսրության արևելյան նահանգները վտանգավոր ու անհանգիստ քրդերից մաքրելը: Ծրագրված էր նախ խեղդել հայ ժողովրդին քրդերի աջակցությամբ, և ապա՝ դառնալ թուրք ժողովրդին, որը կայսրության արևելյան նահանգներում, հատկապես Արևմտյան Հայաստանում, մեծապես էր մնում թուրքական կառավարության դեմ: Հայերի տեղահանությունից ու ցեղասպանությունից հետո թուրքերը քայլեր ձեռնարկեցին լուծելու նաև քրդական հարցը: Պանթուրքիզմի մոլուցքով տարված երիտթուրքական կառավարությունը չէր կարող թույլ տալ, որ հայերից դատարկված նահանգներում կազմվի քրդական մեծամասնություն: Սակայն քրդական հարցը հայ ժողովրդի բնաջնջման ձևով իրականացնելը բավականին դժվար գործ էր: Նախ թուրքական կառավարությունը չուներ նման մի վիթխարի ծրագիր իրականացնելու համար այնպիսի հուսալի դաշնակից, ինչպիսին եղան քրդերը հայ ժողովրդի գողգոթան իրականացնելու գործում: Այնուհետև, ի տարբերություն հայերի, քրդերը գլխավոր զինված էին և նրանց տոտալ ձևով ոչնչացնելու և արմատախիլ անելու համար անհրաժեշտ կլինեք շատ խոշոր բանակներ ռազմաճակատից հետ քաշել և ներքին պատերազմի բռնվել քրդության հետ, որն անհ-

նարին էր և անցանկալի երիտթուրքերի համար: Ուստի նրանք որոշեցին քրդերի նկատմամբ առավելապես կիրառել համաձուլման և թուրքացման քաղաքականությունը, թեև, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, չէր բացառվում նաև քրդական խոշոր զանգվածների ոչնչացումը: Քուրդ գործիչ Ջիլադեթ Ալի Բադրխանը 1933 թ. Մուստաֆա Քեմալին ուղղված իր բաց նամակում գրում էր. «Ըստ երիտթուրքերի ծրագրերի, քրդերը գտնվում էին ոչ թե ոչնչացվողների, այլ այն ժողովուրդների քվում, որոնք ենթակա էին համաձուլման»:²⁹

Պատերազմի ժամանակ թուրքիայի ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվել էր «Ցեղերի և գաղթականների ընդհանուր տնօրինություն» անունով մի կառույց, որի ղեկավար էր նշանակվել նախկին նախարար, երիտթուրքական կոմիտեի անդամ Շյուքրի Գայա-բեյը: Այդ մարմինը իր գործունեության համար ուներ մի գաղտնի կանոնադրություն, բաղկացած հինգ կետերից:

Համաձայն այդ կանոնագրի, հայ ազգաբնակչության տեղահանությունից հետո, քրդերը ևս պետք է ենթարկվեին տեղահանման և ցրվեին Անատոլիայի խորքերում, թուրք զանգվածի մեջ, այն հաշվով, որ նոր վայրերում նրանք չկազմեին ազգաբնակչություն հինգ տոկոսից ավելի:³⁰ Քրդական տեղահանության նպատակն էր թույլ չտալ, որ պատերազմի դժնդակ պայմաններին ենթակա քրդերը միանան ռուսների և հայերի հետ, որ հայերի տեղահանության ու ցեղասպանության հետևանքով արևելյան նահանգներում ստեղծվի քրդական մեծամասնություն:

Վերոհիշյալ ծրագրով նախատեսված էր նաև քրդերին արգելել ազատորեն խոսելու իրենց մայրենի լեզվով, նրանց պարտավորեցնել սովորել ու խոսել թուրքերենով, առանց հատուկ արտոնության նրանց արգելվում էր փոխել իրենց բնակավայրը³¹ և այլն:

1916 թ. սկսած Արևմտյան Հայաստանից և Քրդստանից Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան շրջաններ տեղահանվեցին տասնյակ հազարավոր քրդեր: Այդ միջոցառման կարևորագույն նպատակներից մեկն էր նաև խոչընդոտել ու խաթարել քրդերի ապագա քաղաքական համախմբումն ու միավորումը: Ընդ որում, այդ տեղահանությունները, ելնելով ունեցած փորձից, ըստ գաղտնի հրահանգի համապատասխան կետի, կատարվում էին այնպիսի ձևերով, որպեսզի ճանապարհներին հիվանդությունների, քաղցի և բռնությունների հետևանքով ոչնչանան հնարավորին չափ շատ մարդիկ: Այլ կերպ ասած, տեղական իշխանություններին հրահանգված էր քրդերին կոտորել ճիշտ հայերին ոչնչացնելու ձևով: Գոյություն ունեն տվյալներ, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ընդհանուր առմամբ տեղահանվեցին ավելի քան 700 հազար քրդեր, որոնց մոտ կեսը զոհվեց ճանապարհներին կամ ոչնչացվեց թուրքական բանակի ու ոստիկանության կողմից:³²

Իսկ մի շարք շրջաններում, որտեղ քրդերը աչքի էին ընկնում իրենց «անհանգիստ վարքագծով», իթթիհաղը որոշեց չդիմել տեղահանության մարտավարությանը, այլ պարզապես կանոնավոր բանակի միջոցով կոտորեց քուրդ բնակչությանը:

Երիտթուրքերը քրդերի նկատմամբ բնաջնջման այդ նույն քաղաքականությունը իրագործում էին նաև ռազմաճակատում, անխնա և միտումնավոր կերպով նրանց լցնելով պատերազմի հսկա մսաղացի մեջ: Այդ տեսակետից խիստ հատկանշական է հետևյալ փաստը. Սարիղամիշի ճակատամարտից (1914 թ. դեկտեմբերի 4 – 1915 թ. հունվարի 18) հետո, որի ընթացքում ճակատամարտին մասնակցած 90 հազար զինվորներից թուրքերը կորցրին 70 հազար մարդ, վերադառնալով Ստամբուլ՝ երիտթուրքական եռապետության անդամ, ռազմական մինիստր էնվեր փաշան իթթիհաղի կենտրոնական կոմիտեի նիստում հայտարարել է. «Թեև Սարիղամիշի ճակատամարտում մենք արտաքնապես պարտվեցինք, սակայն իրականում հաղթական էինք, որովհետև Սարիղամիշի անտառներից մինչև Էրզրում ձգվող ճանապարհների վրա թողեցինք մի քանի տասնյակ հազար քուրդ երիտասարդների դիակներ»:³³

Զնայած նրան, որ թուրքական կառավարությունը կարողացավ մեծապես կոտորակել քրդերին, ջլատել ու թուլացնել նրանց ուժերը, բայց ի վիճակի չեղավ վերջնականապես «լուծել» քրդական հարցը, ինչպես դա նրան հաջողվել էր Հայկական հարցի կապակցությամբ: Դրան խանգարեց աշխարհամարտում Թուրքիայի պարտությունը:

Այսպիսով քրդական խոշոր զանգվածների մեղսակցությունը արևմտահայոց ցեղասպանությանը վերջնականապես հայերին և քրդերին բաժանեց թշնամի բանակների:

Պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանի տարածքի զգալի մասը ռուսական զորքերի կողմից գրավման ենթարկվելուց հետո քրդերի մոտ կատարելապես ամրակայվեց այն համոզումը, որ այդ գրավումը վերջնական է և, որ Ռուսաստանը այլևս չի հեռանալու այդ տարածքներից: Դա քրդերին ներշնչեց այն համոզումը, որ այդ նոր տիրապետության տակ իրենք դառնալու են երկրորդական մի ուժ, իսկ կացության տերը պիտի հանդիսանան հայերը:³⁴ Նրանց այդ մտավախությունը շեշտված ձևով ուրվագծվեց նաև այն պատճառով, որ եռյակ համաձայնության դաշինքի անդամ պետությունների ռազմաքաղաքական ծրագրերի առաջնահերթ խնդիրներից մեկն էր հռչակվել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների՝ մասնավորապես հայ ժողովրդի ազատագրումը: Քրդերին խորապես մտահոգում էր այն հարցը, թե արդյոք «ազատագրվող ու ճնշված ժողովուրդների» ցուցակի մեջ իրենք կան թե ոչ: Այդ մտահոգությունը ուներ իր հիմնավոր պատճառները, քանի որ պատերազմի ռազմաճակատներում թուրքական բանակի շարքերում քրդերը եռանդուն կեր-

պով կռվում էին եռյակ համաձայնության պետությունների դեմ: Բացի այդ, նրանց չէր կարող տազնապ չներշնչել նաև այն իրողությունը, որ իրենք մասնակից են դարձել հայոց մեծ եղեռնի իրագործմանը, որը հետպատերազմյան խաղաղության պայմանագրեր ստորագրելու ժամանակ չէր կարող պետությունների կողմից հաշվի չառնվել:

Դեռևս պատերազմի հենց սկզբին, 1914 թ. հոկտեմբերի 27-ին, անգլիական ականավոր քաղաքական գուրծիչներից մեկը Յերբերտ Յենրի Աքքվիթը հայտարարել էր. «...Օտտոմանյան կառավարությունը պատյանից հանեց սուրը, և հենց ինքն էլ, համարձակվում են կանխատեսել, կոչնչանա սրով: Չնչեց Օտտոմանյան կայսրության հուղարկավորության դողանքը ոչ միայն եվրոպայում, այլև Ասիայում, և ոչ թե մենք, այլ հենց ինքը, Օտտոմանյան կառավարությունն է դրանում մեղավոր: Թուրքական տիրապետության չքացումից հետո, ես հավատում եմ, որ այն խոցը, որը կրծում է երկրագնդի ջքնաղ շրջանները, նույնպես կջքանա... Թուրքական կայսրությունը ինքնասպանություն գործեց և սեփական ձեռքերով փորեց իր գերեզմանը:»³⁵ Իսկ պատերազմը պայթելուց մի քանի օր առաջ Կ. Պոլսում անգլիական դեսպան Մալլեթը սպառնացել էր մեծ վեզիրին, որ «եթե Թուրքիան այն աստիճանի անմիտ գտնվի, որ մարտահրավեր նետի եռյակ համաձայնության երկրներին, ապա դա կնշանակի Օսմանյան կայսրության վախճանը»:

Քիչ ավելի ուշ, իր զորակցությունը հայտնելով ողջակիզման ենթարկված հայ ժողովրդին, Գ. Աքքվիթը հայտարարեց. «Որոշված է, որ պատերազմից հետո ազատության ու փրկության մի դարաշրջան է բացվելու այդ հինավուրց ժողովրդի համար»:»³⁶ Իսկ Դեյվիդ Լյոյ Ջորջը կանխատեսում էր, թե «արդարության և անիրավության միջև մղվող այս ճակատամարտին մեջ, Արևելքի Թուրքիան և Արևմուտքի Թուրքիան Դայաստանը ավերողներուն և Ֆլենտերսը ամայացնողներուն անկումը խաղաղություն և ուրախություն պիտի բերեր՝ սերունդներն ի վեր անոնց դաժան ներկայությամբ կեղեքված և մթագնած աշխարհի մը»:»³⁷ 1917 թ. դեկտեմբերի 23-ին պատերազմի նպատակների մասին իր հայտարարության մեջ վարչապետ Լյոյ Ջորջը նշեց. «Մենք չենք վիճարկում թուրքական կայսրության պահպանումը թուրքերով բնակեցված երկրներում Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով. նեղուցները պետք է չեզոքացվեն և միջազգայնացվեն, բայց և այնպես մենք գտնում ենք, որ պետք է ճանաչվի Արաբիայի, Դայաստանի և Միջագետքի ազգային անկախությունը... Դայաստանը այլևս երբեք չի դրվի թուրքերի նողկալի տիրապետության տակ»:»³⁸ «Այժմ անհրաժեշտություն չկա քննարկելու, թե ինչպիսին պետք է լինի այդ ճա-

նաչման ճշգրիտ ձևը ամեն մի կոնկրետ դեպքում. միայն անհրաժեշտ է հայտարարել, որ նախկին ինքնիշխանության վերականգնումը այն տարածքներում, որոնց մասին ես հիշատակեցի, այլևս անհնարին է», - գրում էր Լյոյ Ջորջը:³⁹

Այդ հայտարարությունից քիչ ժամանակ առաջ Կարմիր խաչի թուրքական առաքելության ղեկավար Մուխթար-բեյի հետ անջատ հաշտության մասին բանակցությունների ժամանակ, որը վարում էին Լյոյ Ջորջի քարտուղար Ֆիլիպ Յենրի Քերրը և գեներալ Յան-Քրիսթիան Սմեթսը, վերոհիշյալ խնդրի վերաբերյալ անգլիական դիրքորոշումը շարադրված էր ավելի որոշակիորեն: Դայաստանում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում և Արաբիայում նախատեսվում էր ինքնավար կառավարությունների կամ տեղական ու եվրոպական աստիճանավորներից կազմված խառը վարչության ստեղծում մեկ կամ մի քանի դաշնակցային երկրների հովանու ներքո, ինչպես դա արվել էր Եգիպտոսում:⁴⁰

«Օսմանյան ժառանգության» քաղաքական և դիվանագիտական նախապատրաստության նպատակով 1918 թ. մարտին Լյոյ Ջորջի կառավարության կազմում ստեղծվեց այսպես կոչված «Արևելյան կոմիտե», կաբինետի անդամ Ջորջ Նաթանիել Քերզընի գլխավորությամբ, որը կոչված էր կողողինացնել բրիտանական ողջ արևելյան քաղաքականությունը Դունաստանի և Աֆղանստանի միջև ընկած ընդարձակ տարածքներում:⁴¹

1916 թ. կնքված Սալթս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի ստորագրողներից մեկը՝ անգլիացի դիվանագետ Մարկ Սալթսը, Պետրոգրադում բրիտանական դեսպան Ջորջ Բյուկենենին գրած իր 1916 թ. մարտի 12-ի թվակիր նամակում հանգամանորեն մեկնաբանում էր հայերին վերաբերող բաժինը. «Ինձ թվում է, - գրում էր նա, - որ մենք պետք է ընդունենք, որ հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանության և անգթության հետևանքով, չի կարելի հանդուրժել բուն Դայաստանը օսմանյան իշխանության տակ թողնելու հնարավորությունը»:

Իր մերձավորարևելյան քաղաքականության լծակներից մեկը՝ հայկական խաղաթուղթը ինչպես միշտ, շրջանառության մեջ էր դրել նաև Ռուսաստանը: 1915 թ. ապրիլի 25-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սերգեյ Սազոնովը հանձնարարեց Փարիզի և Լոնդոնի դեսպաններ Իզվոլսկուն և Բենկենդորֆին ֆրանսիական և անգլիական կառավարությունների հետ համաձայնեցնել հայկական ջարդերի կապակցությամբ համատեղ հայտարարությամբ համդես գալու հարցը, թեև Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը թերահավատ էր նման հավաքական ելույթի արդյունավետության հարցում՝ թուրքերի մտահղացած ծրագիրը խափանելու իմաստով: Ավելին, նա չէր էլ կասկածում, որ համատեղ հայտարարությունը ոչ մի ազդեցություն չի կարող գործել թուր-

քական կառավարության վրա, մանավանդ որ, հայտարարությամբ հանդես եկողները արդեն պատերազմի մեջ էին գտնվում Օսմանյան կայսրության հետ: Ս. Սազոնովին անշուշտ հետաքրքրում էր լոկ Ռուսաստանի քաղաքական շահը: Նա գտնում էր, որ դա «համենայն դեպս կբարձրացնի հայերի ոգին, որոնք մեզ կարող են օգտակար լինել Թուրքիայի դեմ մղվող պատերազմում»:⁴²

Քրիտանական Ֆորին օֆիսը ևս, ինչպես նաև դաշնակից Ֆրանսիայի դիվանագիտությունը, աշխատում էին հետ չմնալ ռուսներից հայկական խաղաքարտը օգտագործելու հարցում, խոստումներ տալով, որ հաղթական պատերազմից հետո հայերի զոհողությունները փոխհատուցելու են Հայկական հարցին լուծում տալու ձևով:

Նման խոստումների ու հայտարարությունների ներքին դրդապատճառների մասին անկեղծորեն խոստովանել է Լլոյդ Ջորջը: Նա գրում էր, որ «քննամական պետությունների մեջ բնակվող ժողովուրդներին ազատագրելու մասին հայտարարությունները նպատակ ունեն թարգմանական ազդեցություն ունենալ: Նրանք կոչված էին նաև խարխլել ու քանդել թշնամի երկրների համերաշխությունը և նրանց մեջ առաջ բերել պառակտում»: Ավելին, ռազմական հարցերով Գերագույն խորհրդի նիստերից մեկի ժամանակ Լլոյդ Ջորջը հայտարարել էր, թե «ոչ ոք իր ասած խոսքերի համար որևէ պատասխանատվություն չի կարող կրել»:⁴³

1917 թ. հունվարի 10-ին Եռյակ համաձայնության գծով դաշնակից պետությունները հանդես եկան հավաքական մի հայտարարությամբ, որտեղ առաջ էր քաշվում Օսմանյան կայսրության մասնատման ու տրոհման հարցը: Հայտարարության մեջ նշվում էր, որ «անհրաժեշտ է եվրոպայից քշել Օսմանյան կայսրությանը, որի գոյությունը խորթ է արևմտյան քաղաքակրթությանը»: Պատերազմի գլխավոր նպատակներից մեկն էր հայտարարվում «այն ժողովուրդների ազատագրումը, որոնք ընկել են թուրքերի արյունոտ տիրապետության տակ»:⁴⁴

Այդ տեսակետը հավասարապես բաժանվում էր ԱՄՆ-ի պետական ու քաղաքական գործիչների կողմից: 1917 թ. ապրիլին ԱՄՆ-ի համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «թուրքերը, քրիստոնյաների այդ մարդասպանները, պետք է վճարվեն եվրոպայից»:⁴⁵ Այդ ժամանակ Վուդրո Վիլսոնի մոտ նախնական սևագիր վիճակում արդեն հասունացել էր «թուրքական հարցը» լուծելու ծրագիրը: Այդ առթիվ նախագահի մերձավոր օգնական և արտաքին քաղաքական հարցերի գծով խորհրդական, գնդապետ Էդվարդ Մենդել Հաուզը վկայում է. «Պրեզիդենտի կարծիքով Թուրքիան պետք է ջնջվի որպես պետություն և նրա ճակատագրի տնօրինումը պետք է դրվի խաղաղության խորհրդաժողովի վրա: Ես ավելացրի, որ անհրաժեշտ է սահմանել, որ

Թուրքիան չի բաժանվի պատերազմի մասնակիցների միջև, այլ պետք է նրա տարբեր մասերը ռասայական հատկանիշի համաձայն վերածվեն ինքնավար միավորների: Նա դրան համաձայնվեց և իր տեսակետը ձևակերպեց հետևյալ կերպ. «Ժամանակակից Թուրքիայի կայսրության թուրքական մասը պետք է ունենա ապահովված ինքնուրույնության երաշխիք, մյուս ազգերին, որոնք այժմ գտնվում են թուրքական կառավարման ներքո, պետք է ապահովվի լրիվ հնարավորություն բարեբեր զարգացման համար»:⁴⁶

1918 թ. հունվարի 8-ին Վուդրո Վիլսոնը Կոնգրեսում հանդես եկավ «Համընդհանուր հաշտության մասին» ճառով, որը հայտնի է Վիլսոնի «14 կետեր», կամ վիլսոնյան խաղաղության ծրագիր անունով: Այն հետպատերազմյան շրջանում նոր աշխարհակարգի ստեղծման վերաբերյալ մի ծավալուն ծրագիր էր: Նրա 12-րդ կետը վերաբերում էր Թուրքիային: Այնտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը, իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և հաստատուն իշխանություն, սակայն ներկայիս թուրքերի տիրապետության ներքո գտնվող մյուս ազգությունները պետք է ստանան իրենց գոյության ամերկբա երաշխիք և ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխախտելի պայմաններ: Դարդանելը պետք է միջազգային երաշխիքների ներքո մշտապես բաց լինի նավերի ազատ անցման և բոլոր ազգերի առևտրի համար»:⁴⁷

Հայերի և Հայկական հարցի առթիվ Վուդրո Վիլսոնի կատարած բազմաթիվ հայտարարություններից թերևս ամենաբնորոշը 1918 թ. ապրիլի 22-ին արած նրա հետևյալ հայտարարությունն էր. «Դուք կարող եք հավատացած լինել, որ ես խոր հետաքրքրություն եմ տածում Հայաստանի ճակատագրի նկատմամբ»:⁴⁸ Իսկ 1918 թ. նոյեմբերի 18-ին Վիլսոնը գրում էր պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգին. «Իմ հետաքրքրությունը հայերի նկատմամբ խորն է և իմ համակրանքը նրանց նկատմամբ իրոք մեծ է»:⁴⁹ Սեկ այլ առիթով նա ասել է. «Այս մեծ ու առատածեռն ժողովուրդը (իմա՝ ամերիկացիները) – Վ. Բ.՝ սրտանց ընդունեց Հայկական հարցը իբրև իր սեփական հարց»:⁵⁰

Սպիտակ տան կողմից պետ. դեպարտամենտին հանձնարարված էր մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ մշակել համապատասխան հանձնարարականներ, նկատի ունենալով Վաշինգտոնի հատուկ շահերը: Ընդ որում, այդ հանձնարարականներում հատուկ շեշտվում էր, որ Օսմանյան կայսրությանը առնչվող խնդիրներից Միացյալ Մահագներին հատկապես հետաքրքրում է Հայաստանի հարցը: «Անհրաժեշտ է դաշնակիցների ուժեղ վերահսկողություն սահմանել Թուրքիայի էական մասը կազմող Հայաստանի նկատմամբ», – ասվում էր նման հրահանգներից մեկում:⁵¹

Ի կատարումն այդ հրահանգների, ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերատեսչությունը կազմեց 1917 թ. դեկտեմբերի 22-ի թվակիր մի հուշագիր, որտեղ Վաշինգտոնի հայկական քաղաքականությունը ստանում էր հետևյալ ձևակերպումը. ԱՄՆ-ը «պետք է երաշխավորի հայերի ինքնավարությունը ոչ միայն որպես արդարության և հումանիզմի կենսականորեն կարևոր հարց, այլ որպեսզի Փոքր Ասիայում վերականգնվի մի ժողովուրդ, որն ընդունակ է կանխելու Գերմանիայի կողմից թուրքիայի տնտեսական մենաշնորհացումը»:⁵²

Դժվար չէ նկատել, որ Մերձավոր Արևելքում ամերիկյան երկրաքաղաքական ծավալում ծրագրերում հայերին հատկացվում էր չափազանց կարևոր առաքելություն: Այդ հարցում դեմոկրատների հետ համամիտ էին նաև Հանրապետական կուսակցության ընդդիմադիր ծակատի ներկայացուցիչները: Օրինակ, հանրապետական կոնգրեսմեն, ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ թեոդոր Ռուզվելտը 1918 թ. սեպտեմբերի 6-ին կոնգրեսում հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Օսմանյան կայսրությունը պետք է տապալվի, բոլոր սուբյեկտ ժողովուրդները պետք է ազատություն ստանան, թուրքը պետք է քշվի Եվրոպայից, Հայաստանը պետք է ազատ լինի»:⁵³ Դեմոկրատ ընդդիմադիր գործիչներից մեկ ուրիշը, սենատոր Դ. Լոջը 1918 թ. դեկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց մի ծավալուն զեկուցագիր ու բանաձև անկախ Հայաստան ստեղծելու մասին, որն անցնելու էր ամերիկյան մանդատի տակ: 1919 թ. փետրվարին Դ. Լոջի նախաձեռնությունը պաշտպանող նոր բանաձևով հանդես եկավ ազդեցիկ սենատորներից մեկը՝ Վ. Բինգը:⁵⁴

Սենատոր Դ. Լոջի վերոհիշյալ նախաձեռնությունը ողջ Միացյալ Նահանգներում առաջ բերեց աներևակայելի մի ծավալում շարժում, որը վկայում էր այն մասին, որ Հայաստանի անկախության գաղափարը ոչ միայն ամերիկյան կառավարության կողմից առաջ քաշվող քաղաքական խնդիր էր, այլև լայն տարածում ուներ զանգվածների շրջանում և համակել էր ամերիկյան հասարակության համարյա բոլոր խավերին: Եվրոպական տարբեր մայրաքաղաքներում ևս տեղի էին ունենում հայանպաստ հանրահավաքներ, որոնց մասնակցում էին պետական ու հասարակական անվանի գործիչներ, որոնք դիմում էին Վուդրո Վիլսոնին, խնդրելով պաշտպանել հայ դատը Փարիզի առաջիկա վեհաժողովում:

Այդ օրերին բրիտանական Ֆորին օֆիսը ևս հանդես եկավ առաջարկով, որ Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից հսկողության իրագործումը կարող է հանդիսանալ լավագույն տարբերակը՝ հայերի անվտանգությունն ու ապահովությունը երաշխավորելու համար:⁵⁵

Ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ի պրեզիդենտի հանձնարարությամբ պետ. քարտուղար Ռոբերտ Լանսինգը կազմել և 1918 թ. Վուդրո Վիլսոնին էր ներկայացրել մի նոր ծավալում հուշագիր, որի մեջ շոշափ-

վում էր նաև Հայաստանի ապագա ստատուսի վերաբերյալ հարցը: Ըստ պետ. քարտուղարի առաջարկի, այն պետք է անցներ մի որևէ երկրի, կամ երկրների խմբի հովանավորության տակ: Սակայն Լանսինգը դեռևս չէր նշում, թե որ պետությունը նկատի ուներ:⁵⁶

Դժվար չէ նկատել, որ օսմանյան լծից արևմտյան մեծ պետությունների կողմից Հայաստանի ազատագրման հարցը դրվում էր կոնկրետ և հատուկ շեշտադրմամբ: Ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանք մտնում էին կայսրության այն բոլոր «սուբյեկտ ժողովուրդների» խմբի մեջ, որոնք ենթակա էին ազատություն և ինքնուրույն զարգացման պայմաններ ստանալու, սակայն առանց կոնկրետացնելու այդ հարցը:

Եռյակ համաձայնության անդամ պետությունների ծրագրերում նախատեսվում էր Օսմանյան կայսրությունը անդամահատել հինգ հիմնական էթնիկական գոտիների՝ թուրքական Անատոլիայի, Հայաստանի, Սիրիայի, Քրդստանի և Արաբիայի: Այսպիսով, եթե Հայկական հարցը 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո դարձել էր միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա, ապա քրդերին վերաբերող խնդիրը առաջին անգամ էր արժարժվում տերությունների քաղաքական ծրագրերում, ընդ որում քրդական առանձին պետականություն ստեղծելու, կամ ծայրահեղ դեպքում քրդերի համար ինքնուրույն քաղաքական կյանքով ապրելու հնարավորություն ստեղծելու հարցադրումով: Դա անշուշտ վկայում է այն մասին, որ այսպես կոչված «քրդական հարցը» XX դարի սկզբին աստիճանաբար բարձրանում էր քաղաքական իրողությունների մակերես՝ իր վրա հրավիրելով տերությունների ուշադրությունը:

Գաղտնիք չէ, որ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը քրդերի մոտ ըստ էության բացակայում էր ազգային զգացումը: Նրանց մոտ տիրապետող ցեղային կազմակերպությունը լուրջ արգելք էր ազգային գաղափարների ծննդի, համաքրդական հայրենասիրության և քրդերի՝ որպես ժողովուրդ ձևավորվելու գործընթացի համար:⁵⁷ Հետևաբար, քրդերին բնորոշ էր ռասայական, բայց ոչ ազգային զգացումը: Քրդական նացիոնալիզմը, որպես գաղափարական-քաղաքական հոսանք ձևավորվել է հենց XX դարի սկզբին, որպես վերջնական նպատակ առաջ քաշելով «էթնիկական Քրդստանի» տարածքում քրդական ազգային պետության ստեղծման պահանջը:

1914 թ. ռուսական բանակը և հայ կամավորները մտան Բասեն և Ալաշկերտ: 1915 թ. նրանք առաջ շարժվեցին Բուլանջիս - Մալազկերտ ուղղությամբ, գրավեցին Վանը և հասան մինչև Շատախ: 1916 թ. գարնանը գրավեցին Էրզրումը, Խնուսը, Մուշը և Բիթլիսը: 1916 թ. սկզբներին

ռուսական գործերը հասնում էին Հայկական Տավրոսին: Այդ գրավյալ վայրերի քրդերի մեծ մասը թուրքական բանակի հետ նահանջեց դեպի Թուրքիայի խորը ընկած շրջանները: Ռուսական գործերը, ինչպես նաև հայ կամավորները, բնականաբար հանձնին քրդերի տեսնում էին թուրքերին դաշնակից թշնամի մի ուժ, ավելի ճիշտ թուրքական բանակի բաղկացուցիչ մաս: «Տաճկահայաստանի ժողովուրդը, գրավման գոտիներում հետ, աստիճանաբար իր հայրենիքը կը դառնար, և այս անգամ զինված ու վրեժխնդիր: Թուրք տարրը և թուրք գործը կը բացակայեին. մնացող քյուրտերը կենթարկվեին ռուս կազակներու և հայերու վրեժխնդրության: Ազգամիջյան կռիվը կանոնավոր պատերազմի իր բնույթը կորսնցուցած էր և դարձած էր ցեղերու փոխադարձ ջնջման ահռելի տեսարան մը...»:⁵⁸

Վանից ռուսական գործերի հետ քաշվելու կապակցությամբ Ալադաղի և Աբադայի քրդերը ցած իջան լեռներից և կոտորեցին մոտ չորս հազար հայեր: Սակայն անպատիժ չմնացին: 1915 թ. աշնանը ռուս կազակների և հայկական կամավորական ջոկատների մի միացյալ խմբավորում ձեռնարկեց պատժիչ գործողություն: Քրդերի մոտ 40 գյուղեր ավերվեցին և կռվող ուժերը կոտորվեցին, մնացածը ապաստանեցին Ջիլանի ձորը:⁵⁹

Վանի, Բիթլիսի, Մուշի և Խնուսի շրջանների քրդերի մի զգալի մասը, որոնք լեռներն էին քաշվել ռուսների ու հայ կամավորականների վրիժառությունից խուսափելու համար, քաղցից մահացան:

Քրդերի մոտ հետզհետե ձևավորվում էր այն ըմբռնումը, որ թուրքական կոտորածները վերջ չէին տվել հայերի գոյությանը, որ Ռուսաստանը և արևմուտքի մեծ պետությունները ծրագրել են անկախ Հայաստանի ստեղծում և որ հայկական նահանգները պատկանում են հայերին: Ուստի բնական է, որ այս վիճակից դուրս գալու համար նրանք որոնելու էին ուղիներ: Արևմտյան Հայաստանի տարածքում 1916 թ. ռուսական գործերի սրընթաց առաջխաղացման պայմաններում մի խումբ քրդական առաջնորդներ շփումների մեջ մտան ռուսական բանակի հրամանատարության հետ և նույնիսկ շտապեցին ռուսական կառավարության առջև դնել քուրդ ժողովրդի ազգային ինքնորոշման հարցը, դրանով իսկ փորձելով կանխել Ռուսաստանի հովանու ներքո անկախ Հայաստանի գաղափարի իրագործումը: Քրդական ազդեցիկ առաջնորդներից Յուսուֆ Քյամիլ Բադրխանը Կովկասի փոխարքային և Կովկասյան ռազմաճակատի հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչին ներկայացրեց քրդերի «ազգային պահանջները»: Սակայն թեև ռուսական իշխանությունները դեմ չէին օգտագործելու «քրդական խաղաքարը», սակայն տվյալ պահին նպատակահարմար չհամարեցին քաղաքական առումով շրջանառության մեջ դնելու այն:⁶⁰

Առաջին համաշխարհային պատերազմը Մերձավոր Արևելքի երկրների համար քաղաքական շրջանառության մեջ դրեց մի շարք նոր իրողություններ, որոնք իրենց մարմնավորումը ստացան 1916 թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրում: Դեռևս 1915 թ. Եռյակ համաձայնության պետությունները սկսել էին բանաձևել Մերձավոր Արևելքում իրենց հետպատերազմյան քաղաքականությունը:⁶¹ Որոշվել էր լուծարքի ենթարկել Օսմանյան կայսրությունը և նրա տարածքները բաժանել միմյանց միջև: Այդ ծրագրի առաջին էտապը հանդիսացավ 1915 թ. մարտին կնքված անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագիրը նեղուցների մասին, ըստ որի հաղթական պատերազմից հետո Ռուսաստանը պետք է ստանար Կոստանդնուպոլիսը, Բոսֆորն ու Դարդանելը: Ծրագրի երկրորդ մասը գործողության մեջ մտավ 1915 թ. նոյեմբերին, երբ Անգլիան և Ֆրանսիան Լոնդոնում բանակցություններ սկսեցին Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ: Այդ բանակցությունները, որոնք տևեցին մինչև 1916 թ. փետրվարը, առաջին հերթին վերաբերում էին Օսմանյան կայսրության արաբական տիրույթներին, սակայն դրանցում կարևոր տեղ էին գրավում նաև Արևմտյան Հայաստանի և Քրդստանի խնդիրները: 1916 թ. փետրվարին անգլիացի դիվանագետ Մարկ Սայքսը և ֆրանսիացի ժորժ Պիկոն մշակեցին Ասիական Թուրքիայի բաժանման մի նախնական տարբերակ, և նույն թվականի մարտին մեկնեցին Պետրոգրադ այն Ռուսաստանի կառավարության հավանությանը ներկայացնելու համար: Այդ փաստաթուղթը նախատեսում էր Հայաստանի և Քրդստանի բաժանումը Եռյակ համաձայնության երկրների միջև: Քրդստանից Ֆրանսիային բաժին էր հասնում Գյուսիսային Իրաքը (Իրաքյան Քրդստանը), Հարավ-Արևելյան Անատոլիայի մի շարք շրջաններ և Ուրմիա լճից հարավ ընկած Իրանի սահմանամերձ շրջանները: Իրաքյան Քրդստանի մի մասը՝ Քիրքուքի շրջանը, մտնելու էր անգլիական գոտու մեջ:⁶²

Պետրոգրադում ֆրանսիական և անգլիական դեսպաններին ուղղված 1916 թ. մարտի 4/17-ի հուշագրում Ռուսաստանի արտգործմինիստր Ս. Սազոնովը հայտնում էր, որ իր կառավարությունը «ոչ մի շահագրգռվածություն չունի այն մարզում, որն ընկած է Անդադի-Իբրն Օմար-Դիարբեքի, Սամսատ-Մարաշ-Ադանայի վրայով անցնող գծից դեպի հարավ, և առանց որևէ դժվարությունների կընդունի յուրաքանչյուր համաձայնագիր, որը կարող է այդ մասին կայանալ Ֆրանսիայի և Անգլիայի միջև»:⁶³ Այլ կերպ ասած, «Սայքս-Պիկո» նախագծի այն մասը, որը վերաբերում էր գլխավորապես արաբական երկրներին, էական առարկություններ առաջ չէր բերում ռուսական կառավարության մոտ, որը հատուկ շահեր չէր հետապնդում արաբական երկրներում: Սակայն նույն հուշագրում Ս. Սազոնովը պնդում էր, որ ռուսական գոտու մեջ մտցվեն Բիթլիսի անցուղիներն ու Ուրմիա լճի մարզը, փոխարենը առաջարկելով Ֆրանսիա-

յին զիջել Փոքր Հայքի այն տարածքը, որն ընկած է Արվաս-Խարբերդ-Կեսարիա գծի միջև:⁶⁴

1916 թ. ապրիլի 13/26-ին Պետրոգրադում ֆրանսիական դեսպանին ուղղված հուշագրում Ս. Սազոնովը գրում էր, որ Ռուսաստանը պատրաստ է հաստատել Սայքս-Պիկոյի համաձայնագիրը այն դեպքում, եթե կպահպանվեն հետևյալ պայմանները. 1. Ռուսաստանը աննեքսիայի է ենթարկում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերը մինչև Սև ծովի ափի՝ առաջիկայում որոշվելիք այն կետը, որն ընկած է լինելու Տրապիզոնից դեպի արևմուտք: 2. Վանից, Բիթլիսից դեպի հարավ՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրե-իբն Օմարի, Ամադիայի վրա իշխող լեռնագագաթների գծի և Մերզեբի միջև ընկած Զուրդիստանի մարզը կզիջվի Ռուսաստանին, որը դրա փոխարեն որպես Ֆրանսիայի սեփականություն կճանաչի այն տարածքները, որոնք ամփոփված են Ալա-Ղադի, Կեսարիայի, Աք-Ղադի, Իլդիզ-Ղադի, Ջարայի, Ակնի և Խարբերդի միջև:⁶⁵

Անդրադառնալով Ռուսաստանին բաժին հասնող երկրամասին, Սազոնովը Նիկոլայ II-ին ուղղված գրության մեջ նշում էր. «Զգված լինելով գլխավոր լեռնային զանգվածների ուղղությամբ, տեղեկագրական տեսակետից այն թվում է բավական բնական, բայց քաղաքական և ստրատեգիական նկատառումներով այն հազիվ թե կարելի լինի համարել ընդունելի: Պետք է անցանկալի համարել այն, որ խառն ու անհանգիստ բնակչություն ունեցող վայրերում, մեր ասիական սահմանագծի մեծ երկայնության վրա հայտնվում է եվրոպական մեծ, թեկուզ հենց ներկայումս մեզ դաշնակից տերություն (նկատի ունի Ֆրանսիային – Վ. Բ.), և անկյունով այն մխրձվում է ռուս-պարսկական սահմանագծի մեջ: Մեզ համար ամենից ավելի շահավետ կլիներ հարավում ընդհանուր սահման ունենալ որևէ ասիական մուսուլմանական պետության հետ, լինել դա արաբական խալիֆայություն, թե թուրքական սուլթանություն»:⁶⁶

Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարի այս դատողությունները վկայում են, որ ռուսական կառավարության համար հայկական շահերի ապահովման հարցը երկրորդական երրորդական նշանակություն ուներ:

Անգլիայի միջնորդությամբ Ֆրանսիան վերանայեց իր պահանջները, դրանք որոշ չափով հարմարեցնելով ռուսական առաջարկներին և 1916 թ. մարտի 31-ին տվեց իր վերջնական համաձայնությունը:⁶⁷ Ըստ այնմ, Սայքսը Սազոնովին ներկայացրեց մի նոր քարտեզ, Ռուսաստանի համար ցանկալի փոփոխություններով:

Ռուսական կառավարությունը Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ իր վերջնական համաձայնությունը տվեց 1916 թ. սեպտեմբերի 1-ին:

Սայքս-Պիկոյի համաձայնագրին միանալուց հետո երեք-չորս ամիս անց Սազոնովը սկզբունքորեն նոր դիրքորոշումներից հստակեցնում էր Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում: Նշելով, որ ռուսական զորքերի կողմից գրեթե ամբողջ Մեծ Հայքի գրավումը և այն ռուսական կայսրության սահմանների մեջ առաջիկա ներառումը հերթի են դնում այդ երկրամասի ապագա կառուցվածքի հարցը, Ս. Սազոնովը փորձում էր ուրվագծել ընդհանուր ուղեցույց սկզբունքներ, դրանց առաջ քաշումը հիմնավորելով նրանով, որ արդեն մշակված է և շուտով կիրառության մեջ է դրվելու «պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի կառավարման» ժամանակավոր կանոնագրի նախագիծը:

Հարյուր ութսուն աստիճանի շրջադարձ կատարելով պատերազմի նախօրյակին Հայկական հարցի կապակցությամբ Ռուսաստանի որդեգրած քաղաքականությունից, Սազոնովը գրում էր. «Ինչ վերաբերում է հայերին լայն ինքնավարություն տալուն, ապա չպետք է մոռանալ, որ Մեծ Հայքում, որն այսօր նվաճված է Ռուսաստանի կողմից, հայերը երբեք չեն կազմել մեծամասնություն, իսկ նրանց նկատմամբ պատերազմի ժամանակ թուրքերի գործադրած պատժիչ միջոցառումներից հետո, որոնք բուն հայերի վկայությամբ եղել են ահավոր չափերի, – այդ հարաբերակցությունն էլ ավելի է փոխվել ի վնաս հայերի, որոնք այժմ հազիվ թե կազմելիս լինեն բնակչության մեկ քառորդ մասը: Այս պայմաններում հայկական ինքնավարությունն իրականում կհասցնի փոքրամասնության կողմից մեծամասնության անարդար ստրկացմանը»: Սազոնովը հնարավոր էր համարում հայերին վերապահել միայն դպրոցական և եկեղեցական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն:⁶⁸

Իր համաձայնությունը հայտնելով Սազոնովի առաջ քաշած տեսակետներին, Կովկասի փոխարքա, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը ավելի առաջ էր գնում նշելով, որ Հայաստանի ինքնավարության հարցը «առայժմ կյանքի չի կոչվելու», քանի որ «կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ ծնունդ առած հարցերի լուծումը»: Նա ևս հայերին վերապահում էր դպրոցական և եկեղեցական անկախություն, եկեղեցական հարստությունների և գույքերի կառավարման իրավունք, մայրենի լեզվից օգտվելու իրավունք՝ բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով:⁶⁹

Այսպիսով իրողություն է, որ «Հայաստանի ավտոնոմիայի» շուրջ տարված բանակցությունները լավագույն դեպքում «ակադեմիական» զրույցներից դեմը չէին անցնում և որ «այդ զրույցների նյութն իսկ սպառվել էր արդեն 1915-1916 թվականին տաճկահայերի կոտորածների ընթացքում»:⁷⁰

Ուշագրավ է նշել, որ նշված շրջանում Անտանտի պետություններից անկախ, քրդական հարցի լուծման տարբերակներ էին առաջադրում նաև հայ ազգային գործիչները: Այսպես, դեռևս 1915 թ. հունիսին Պոզոս Նուբար փաշան Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Դելկասսեին հանձնեց մի հուշագիր, որում Հայկական հարցի լուծման նախագծի հետ միաժամանակ առաջարկ էր կատարվում նաև քրդական հարցի կապակցությամբ: Մասնավորապես առաջարկվում էր ինքնավար Քրդստանի ստեղծման մի ծրագիր եռյակ համաձայնության երկրներից մեկի և կամ նրանց (Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի) հավաքական հովանավորության ներքո: Սակայն այն բանից հետո, երբ Ֆրանսիայում ռուսական դեսպան Իզվոլսկին մերժեց այդ պլանը,⁷¹ այն այլևս դադարեց քննարկման առարկա հանդիսանալուց:

Արևմտյան Հայաստանի խնդրի քննարկումների ժամանակ Մարկ Սայքսը հայտնել էր այն կարծիքը, որ եթե այդ երկրամասում ստեղծվի հայկական պետություն թուրքական սյուզերենության ներքո, դա կլինի մի ոչ կենսունակ ծրագիր, քանի որ Սայքսի կարծիքով «հայերն ի վիճակի չեն մրցակցելու քրդերի հետ»:⁷²

Առհասարակ պետք է նշել, որ հայկական և քրդական հարցերի կապակցությամբ բրիտանական դիվանագիտությունը խարխափումների մեջ էր հատկապես այն խնդրում, թե որտեղ տեղադրել Հայաստանը և որտեղ Քրդստանը: Հաճախ Ֆորին օֆիսի չինովիկները հարցի լուծումը փնտրում էին լորդ Բիքոնսֆիլդի ժամանակների մոտեցումներով, Արևմտյան Հայաստանը համարելով Քրդստան, կամ պարզապես քրդական հարցի լուծումը տեղափոխելով Հայաստանի տարածքը:

Այդպիսի մի առաջարկով, օրինակ, 1917 թ. դեկտեմբերի 18-ին հանդես եկավ անգլիացի դիվանագետ, բրիտանական վարչապետի քարտուղար Ֆ. Գ. Քերրը (հետագայում մարկիզ Լոտիան): Իրավացիորեն նշելով, որ թուրքական կառավարումը Հայաստանում «վերին աստիճանի անհաջող է», որ «թուրքերի կատարած սպանություններն ու դաժանությունները առաջ են բերում ամբօրին խորը զգացում», որ «Հայաստանի ճակատագրի լուծումը ամբողջապես պետք է հանձնել եվրոպական պետություններին» և այլև, բրիտանացի դիվանագետը հանգում էր արտառոց եզրահանգման, առաջարկելով քրդերին առանձնացնել հայկական վիլայեթներից մի առանձին վիլայեթի մեջ:⁷³ Այլ կերպ ասած, անգլիացի դիվանագետը առաջ էր քաշում բուն Հայաստանի տարածքում քրդական պետություն ստեղծելու մի ծրագիր: Որքան էլ որ անհավատալի ու հակաբնական էր այդ առաջարկությունը, հետագայում այն աստիճանաբար մտցվեց շրջանառության մեջ և ինչպես կտեսնենք ստորև, նույնիսկ ընկավ Սևրի դաշնագրի հիմքում:

Ի՞նչն էր դրդում Ֆորին Օֆիսին Քրդստան ստեղծել Հայաստանի տարածքում: Նախ, Սայքս-Պիկոյի համաձայնագրով Միջագետքը (այդ թվում նաև նրա հյուսիսային մասը կազմող այսպես կոչված Իրաքյան Քրդստանը) անցնում էր Անգլիային, հետևաբար Լոնդոնը երբեք չէր համաձայնվի, որ ենթադրյալ Քրդստանը կյանքի կոչվի այդ տարածքում: Այդ առթիվ Լլոյդ Ջորջը նշում է, որ թուրքերը ավելի հետամուտ էին ձեռք գցելու Արևելյան Անատոլիան, քան վերատիրանալու Միջագետքին կամ Պարսիստանին: Այս վերջին երկրամասերից թուրքերին հեռացնելու համար մեծ Բրիտանիայի վարչապետը պատրաստ էր շատ հեշտությամբ լքելու Հայաստանը, որն ինքը հրապարակավ անվանել էր «անմեղների արյունով թրջված երկիր»:⁷⁴

Իսկ ամենակարևորը թերևս այն էր, որ հայկական նահանգները կամ Արևմտյան Հայաստանը երբեք չէին մտնում բրիտանական հողային շահագրգռության շրջանակների մեջ: Անգլիայի հողային բաղձանքները գտնվում էին Անատոլիայից հարավ, Միջագետքում, Պարսից ծոցի ավազանում և այլև: «Բրիտանիան, – գրում է սփյուռքահայ հետազոտող Ազաթի Նասիբյանը, – տրամադիր չեղավ դրան վատնելու կամ մարդ զոհելու հեռավոր և անմատչելի երկրի մը վրա, որ զինք ոչ ռազմական և ոչ ալ տնտեսական տեսակետով կը շահագրգռեր: Ամայացած երկիր մըն էր ան, որ միայն թշվառությամբ էր հարուստ: Ուրեմն պատերազմի վերջավորության Հայկական հարցը թվեցավ ըլլալ ավելորդ պարտավորություն մը Բրիտանիո պետական մարդոց համար»:⁷⁵

Սա անշուշտ չէր նշանակում, որ բրիտանական դիվանագիտությունը անտեսում կամ հրաժարվում էր «հայկական խաղաքարտը» օգտագործելու հնարավորությունից: Լլոյդ Ջորջը, արտաքին գործերի նախարար Արթուր Ջեյմս Բալֆուրը, նրա տեղակալ Ռոբերտ Սեսիլը և ուրիշներ հավաստիացնում էին հայերին, որ «Հայաստանի ազատագրումը դաշնակիցների պատերազմական նպատակներից մեկն է»: Լլոյդ Ջորջը նույնիսկ խնդրում էր Մանչեստրի հայերին հավատալ, որ «նրանք, ովքեր պատասխանատու են այս երկրի կառավարման գործին՝ անտարբեր չեն ձեր մարտիրոսացած ժողովրդի նկատմամբ և այդ առնչությամբ կատարելապես գիտակցում են իրենց պատասխանատվությունը»:⁷⁶

Պատերազմի ողջ տևողության ընթացքում բրիտանական դիվանագիտությունը խոստումներով օրորում էր նաև քուրդ ազգայնականներին և քրդական քիչ թե շատ աչքի ընկնող առաջնորդներին, որ աշխարհամարտի ավարտից հետո իրենց ժողովուրդը ոչ միայն կազատագրվի թուրքական լծից, այլև կատարյալ գոհացում կտրվի նրա քաղաքական իրավունքից, այսինքն կստեղծվի անկախ կամ ինքնավար Քրդստան: Միաժամանակ անգլիացիները հուշում էին քրդերին նախաձեռնություն հանդես բերել քուրդ-հայկական լարված հարաբերությունները մեղմելու հա-

մար, քանի որ նրանց կարծիքով հայկական և քրդական հարցերը փոխկապակցված են: «Հայկական հարցը դա նաև քրդական հարց է», այսպիսին էր բրիտանական տեսակետը:

Քրդական կողմից առաջինը այդ հարցադրմանը արձագանքեց գեներալ Շերիֆ-փաշան, որն առաջարկեց Լոնդոնում ստեղծել մի կոմիտե, որի առաքելությունն էր լինելու հայ-քրդական «հաշտեցման» գործը: Այդ առթիվ բրիտանական պատկան իշխանություններին նրա ներկայացրած հուշագրում զետեղված էր նաև հետպատերազմյան Քրդստանի կարգավիճակի վերաբերյալ մի նախագիծ: Նրանում մասնավորապես առաջարկվում էր ստեղծել անգլո-քրդական մի հանձնաժողով Քրդստանի տարածքը որոշելու համար:

Սակայն Լոնդոնը չարձագանքեց Շերիֆ-փաշայի առաջարկներին: Հարցը միայն այն չէր, որ քրդական առաջնորդը Լոնդոնում համարում չունեն, քանի որ բրիտանական գաղտնի ծառայությունների կողմից բնութագրվում էր որպես տեղական քրդական արմատներից կտրված և ցեղային վերնախավի շրջանում աննշան ազդեցություն ունեցող և հեղինակություն չվայելող մեկը:⁷⁷ Մերձավոր Արևելքի հիանալի գիտակ, ընդունակ ու շրջահայաց բրիտանացի հետախույզ Գերտրուդա Բելլը, օրինակ, տեղեկացրել էր Լոնդոնին, որ «Շերիֆ-փաշայի հայացքները կրում են չափից ավելի ակադեմիական բնույթ»:⁷⁸ Անգլիացիները նաև լուրջ կասկածներ ունեին, որ Շերիֆ-փաշան խաղում է երկակի խաղ և սերտորեն կապված է թուրքերի հետ: Այդ բոլորի հանրագումարում Շերիֆ-փաշայի հետ վարվող բանակցությունները անգլիացիների համար կրում էին նախնական զոնդաժի բնույթ:⁷⁹

Փաստերը վկայում են, որ առհասարակ անգլիացիները թերահավատ էին, որ քուրդ ազգայնականների ձեռքում առկա են իրական լծակներ Արևելյան Անատոլիայի և Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջանների իրավիճակի վրա ազդելու համար: Ձգույշ, կասկածամիտ ու հաշվենկատ բրիտանացի դիվանագետները իրենց կառավարությանը խորհուրդ չէին տալիս հույսեր կապել այդ մարդկանց հետ, որոնց քաղաքական վարքագիծը անկանխատեսելի էր, իսկ իրենք անկառավարելի: Նրանց կարծիքով նման մարդկանց հետ չափից ավելի սերտ քաղաքական կապերը կարող էին ունենալ անցանկալի հետևանքներ Մերձավոր Արևելքի առանց այն էլ ամենամահամգիստ ու պայթյունավտանգ շրջաններից մեկում:

Սակայն այդ բոլորը, ի վերջո, ածանցյալ նշանակություն ունեցող խնդիրներ էին: Կարևորն այն էր, որ բրիտանական դիվանագիտության թղթածրարում չէր նախատեսված քրդական անկախ կամ ինքնավար պետության ստեղծման կոնկրետ ծրագիր: Բրիտանական պաշտոնական տեսակետը «քրդական պրոբլեմի» վերաբերյալ, որը ժամանակ առ ժա-

մանակ սպրդում էր նաև մամուլի էջերը, հանգում էր նրան, որ քրդական հարցը անլուծելի մի պրոբլեմ է, քանի որ քրդերի մոտ տիրապետում է ցեղային համակարգը, ցեղերը կատարելապես տարաբաժանված են, ունեն ներհարկ շահեր, նրանց մոտ բացակայում է ազգային զգացումը և միասնական հայրենիքի գաղափարը, որ առհասարակ նրանց չի համախմբում ու միավորում քաղաքական մի ընդհանուր գաղափար կամ ծրագիր, ցեղերի միջև առկա են սուր հակասություններ, իսկ հաճախ նաև խորը ատելություն ու թշնամանք և այլն:⁸⁰ Այդ բոլորից եզրակացվում էր, որ քրդերի քաղաքական համախմբման ու պետականություն կերտելու հարցը իրական հիմքեր չունի: Ուստի անգլիացի դիվանագետները, որպես կանոն, քրդերի քաղաքական ապագան զնահատում էին որպես խիստ անորոշ և մշուշապատ: Բայց դրանով հանդերձ նրանք Ֆորին օֆիսի կողմից հանձնարարություն ունեին հանուն բրիտանական կենսական շահերի «խաղացնել» քրդերին և նրանց կերակրել հույսերով:

Քրդական հարցի վերաբերյալ նմանատիպ տեսակետներ ունեին նաև Անգլիայի դաշնակից ֆրանսիացիները, թեև նրանց «խաղացնելու» վարպետությունը ակնառու կերպով զիջում էր իրենց բրիտանացի գործընկերների վարպետությանը: Պատերազմի հենց սկզբից Մարսելում Շերիֆ-փաշան բանակցություններ էր վարում ֆրանսիացիների հետ: Թեման նույնն էր՝ քրդական պետություն ստեղծելու հարցը: Ֆրանսիացիները ոչ միայն խուսափում էին տալ որևէ կոնկրետ պատասխան, այլև լուրջ չընդունեցին քաղաքական համագործակցության վերաբերյալ քրդական առաջնորդի հարցադրումներն ու առաջարկները:⁸¹ Միանգամայն ակներև էր, որ Ֆրանսիան ևս չունեի քրդական պետություն ստեղծելու մտադրություններ: Այդ թեմայով Շերիֆ-փաշայի հետ բանակցությունները նույնպես կրում էին զոնդաժի բնույթ, այսինքն Փարիզը ցանկանում էր տեղեկանալ քրդերի կողմից փայփայվող քաղաքական ծրագրերին:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցած բուրժուադեմոկրատական հեղափոխության հետևանքով ցարիզմը տապալվեց: Մերձավոր ու Միջին Արևելքում ստեղծվում էր միջազգային-քաղաքական նոր իրավիճակ: Պետական դուռնայի լիբերալ-ազատական պատգամավորների կողմից ստեղծված ժամանակավոր կառավարությունը իր արտաքին-քաղաքական սկզբունքները մշակելիս, որոշակի տեղ էր հատկացնում նաև Արևմտյան Հայաստանի խնդիրներին և առհասարակ Հայկական հարցին: Մասնավորապես ժամանակավոր կառավարության կողմից հռչակված ազգերի ինքնորոշման հիման վրա հաշտության հասնելու հայտարարությունը կրկին հրապարակ բերեց Հայկական հարցը:⁸²

Ժամանակավոր կառավարությունը հրապարակեց նաև հռչակագիր ազգերի ինքնորոշման հիման վրա պատերազմող կողմերի միջև հաշտություն կնքելու վերաբերյալ: Նրանում հայտարարվում էր, որ Ռուսաս-

տանում ստեղծված նոր իշխանությունը իր հերթական խնդիրներից մեկն է համարում Ասիական թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը:⁸³ Նշվում էր, որ ազատ Ռուսաստանը ձգտումներ չունի իր տիրապետությունը հաստատելու այլ ժողովուրդների նկատմամբ և նրանցից խլելու իրենց ազգային ստացվածքը և հափշտակելու ուրիշների տարածքները:

1917 թ. ապրիլի 6-ին ժամանակավոր կառավարությունը ընդունեց որոշում Հայաստանի պատերազմի օրենքներով գրավված մարզերի կառավարման մասին: Մի քանի օր անց, ապրիլի 25-ին (մայիսի 6-ին) ընդունված մեկ այլ որոշումով Ռուսաստանի զորքերի կողմից գրավված թուրքահայաստանի տարածքը, մինչև խաղաղության դաշնագրով թուրքահայաստանի կարգավիճակի վերջնական որոշումը, հանվում էր կովկասյան իշխանությունների և Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջականորեն ենթարկվում ժամանակավոր կառավարությանը: Որոշման մեջ նշվում էր, որ գրավված տարածքներից ռուսական զորքերը դուրս չէին բերվելու:⁸⁴

1917 թ. ապրիլի 26-ին (մայիսի 7-ին) հրապարակվեց ժամանակավոր կառավարության մինիստրների խորհրդի նախագահ իշխան Ե. Լվովի և արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» որոշումը:⁸⁵

Ժամանակավոր կառավարությունը սահմանեց թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի պաշտոն, որը զբաղեցրեց Արևմտյան Հայաստանի և Թուրքական Քրդստանի խնդիրներին քաջատեսակ զինվորական գեներալ Պ. Ի. Ավերյանովը: Քաղաքացիական հարցերի գծով նրա օգնական նշանակվեց հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ Հակոբ Զավրիևը (Զավրյանը):

Ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանի պատերազմի օրենքներով գրավված տարածքը բաժանեց առանձին հատվածների, դրանց կառավարումը ռազմա-վարչական առումով արդյունավետ դարձնելու համար: Այդ առթիվ 1917 թ. մայիսի 15-ին ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարին տվեց հետևյալ ցուցումը. «Չկանխորոշելով Հայաստանի ապագա աշխարհագրական-քաղաքական սահմանները, Ասիական թուրքիայի պատերազմի օրենքներով գրավված մարզերից կառավարությունը զուտ հայկական է համարում Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները»:⁸⁶ «Թրքահայաստանը, — այդ առթիվ գրում է Կարո Սասունին, — որքան ալ որպես ամբողջություն, մեկ երկրամաս կը նկատվեր ռուսական կառավարության աչքին, ներքնապես բաժանվեցավ չորս նահանգներու: Այս վերջին նահանգին միացան Ալաշկերտի դաշտը և Խնուսի գավառը, որոնք Էրզրումի նահանգի մասերն էին: Այս նահանգներու նահանգապետերը կը նշանակվեին

զոր. Ավերյանովի և Զավրիևի կողմն: Պետք է ըսել, որ անոնք, չգիտեմ ինչ հաշվով, նախընտրությունը կուտային ռուսներուն»:⁸⁷

Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հայտարարությունները Հայկական հարցի և Արևմտյան Հայաստանի խնդիրների մասին ընկալվեց ու մեկնաբանվեց որպես Հայկական հարցի վերաբացում:⁸⁸ Հայ հասարակական կարծիքը ողջունեց այն: Սակայն կային նաև մի շարք հայ գործիչներ, առավելապես արևմտահայ, որոնք չափազանց մտահոգ էին հայության ապագայի նկատմամբ: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության զաղտնի ծառայությունների պաշտոնատարներից մեկի՝ Առնոլդ Ջոզեֆ Թոյնբիի հետ հանդիպման ժամանակ, որի քննարկման նյութը հայկական հարցի վրա ռուսական հեղափոխության ազդեցության խնդիրն էր, Պոլոս Նուբարը հայտնում է այն տեսակետը, թե իր «միակ վախճ» այն է, որ «Ռուսիո կցումներե հրաժարումին արդյունքը «Հայաստանի լքումը» ըլլար թուրքերուն»:⁸⁹

Փետրվարյան հեղափոխության կողմից ընձեռնված հնարավորության հետևանքով 150.000 հայ գաղթականներ վերադարձան Արևմտյան Հայաստան և տեղավորվելով հայրենի օջախի մեջ, ձեռնամուխ եղան իրենց ավերված երկրի վերակառուցմանը: Ռուսական իշխանությունների թույլտվությամբ արևմտահայությունը երկրի վարչական մեքենան վերցրեց իր ձեռքը: Հայությունը ստանում էր ազատ շարժվելու իրավունք: Այդ ամենը մեծ անհանգստություն ու տագնապ էր ներշնչում քրդերին, որոնք ոչ անհիմն կերպով հայերի վերադարձը և ռուսական իշխանությունների կողմից նրանց հովանավորությունը ընկալում էին այն իմաստով, որ Ռուսաստանի կողմից Հայկական հարցը կրկին իջեցվում է հրապարակ:

Այդ ենթադրությունը համարյա դարձավ համոզումը 1917 թ. ապրիլի 26-ին (մայիսի 7-ին) ժամանակավոր կառավարության մինիստրների խորհրդի նախագահ, իշխան Ե. Լվովի և արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» որոշման հրապարակումից հետո: Քրդերին հայտնի էր նաև, որ Եռյակ համաձայնության պետությունների կողմից ծրագրեր են մշակվում Հայկական հարցի ուղղությամբ և որքան էլ որ դժվարին լինեին նրանց իրականացման հնարավորությունները, այնուամենայնիվ չէր կարելի բացառել Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետականության ստեղծման հավանականությունը: Քրդական քաղաքական մտքի ներկայացուցիչների կողմից դա համարվում էր միանգամայն ռեալ, քանի որ արդեն վաղուց մեծ տերությունների կողմից հայերը դիտվում էին որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ: Դա ստիպում էր ենթադրել, որ հայերի և քրդերի միջև պայքարի հանգուցալուծումը միևնույն տարածքների վրա հայրենիք կերտելու ուղղությամբ հայերի օգտին ավարտվելու ավելի մեծ

հնարավորություններ ուներ: Իսկ դա նշանակում էր, որ հոգս կցնդեին ինքնավարության կամ անկախության հասնելու քուրդ ազգայնականների փայփայած երազանքները: Այս ծանր մտորումները քրդերի մոտ առաջ էին բերում խորը տագնապի և անհանգստության զգացումներ, մանավանդ որ նրանք այժմ մեծ-մեծակ էին մնում Արևմտյան Հայաստանում հայկական վրեժխնդրության և ռուսական զորքերի դիմաց, որոնց դեմ եռանդուն կերպով պայքարել էին ողջ պատերազմի ընթացքում: 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումը կտրուկ փոփոխության ենթարկեց քաղաքական իրադարձությունների ընթացքը ոչ միայն Եվրոպայում, այլև Մերձավոր ու Միջին Արևելքում: Այդ հեղաշրջումից հետո «թուրքերը լավ հասկացան այն երկրներում, որի առջև կանգնած էր Անդրկովկասը, և գիտեին իրենց շանքը՝ վերջնականապես անջատել Անդրկովկասը Ռուսաստանից (արագացնելով նրա դիվանագիտական ճանաչումը) և երբ որ Անդրկովկասը կդառնա անկախ, հրաժարվել իրենց այն խոստումներից, որ նրանք տվել էին վերջինիս անկախության մղելու նպատակով: Եվ այդ դեպքում անցնել սահմանը և շարժվել դեպի Արևելք, դեպի թուրքեստան, Բուխարա և այլն: Պանթուրքական երազանքը կարող էր դառնալ իրականություն»:⁹⁰

Շուտով իրադարձությունների մեջ կատարվեց կտրուկ շրջադարձ: Պատերազմից հոգնած և «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» կարգախոսով տարված ռուս զինվորները, դիմելով դասալքության, լքում էին իրենց դիրքերը և զանգվածորեն հեռանում: Ռուսական կովկասյան ճակատը քայքայվեց: «Ռուսները ոչ միայն մեզ լքեցին ու հեռացան, թողնելով մեզ ժառանգություն մի պատերազմ, որ մեր ուժերից վեր էր մինակ տանել, այլև... մեր երկրի մի քանի մասերը՝ Կարս, Արդահան, Կարզվան գիջեցին թուրքերին»:⁹¹ - գրում է Ավետիս Ահարոնյանը: Դա ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Դրա հետևանքով սրի քաշվեց նաև արևմտահայության այն մասը, որը Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել էր Արևմտյան Հայաստան:

Բոլշևիկյան Ռուսաստանի այն պնդումները, որ զորքերի դուրս բերումը, որ իբր անհրաժեշտ էր հայերի ազատ կամքի դրսևորման համար, այն ժամանակվա գոյություն ունեցող պայմաններում ցինիկ կեղծիք էր, որովհետև ռուսական զորքերը ջարդերից փրկված ու վերապրած հայության միակ անվտանգության երաշխիքն էին: Ընդ որում, բոլշևիկյան կառավարությունը տեղեկացված էր, որ ռուսական զորքերի դուրս բերման հետևանքով անխուսափելիորեն տեղի է ունենալու հայերի կոտորած: Ռուսաստանի ներկայացուցիչ, Կովկասի գործերով արտակարգ կոմիսար Ստեփան Շահունյանը դեռևս 1917 թ. դեկտեմբերի 20-ին «Կավկասկի ռաբոչի» թերթում գրել էր. «Ռուսական զորքերի անակնկալ դուրս

գալը ծայրահեղ ծանր վիճակ է ստեղծում Թուրքական Հայաստանում: Մենք արդեն գիտենք այն հարյուր հազարավոր զոհերի մասին, որ տվել են հայերը այդ անիծյալ պատերազմի ժամանակ... Քաջատեղյակ լինելով այդ դժբախտ երկրում իրերի վիճակի մասին, մենք պետք է վստահ լինենք, որ այնտեղ ստեղծվում է նոր դժոխք, կիոսեն անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր: Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ այդ բնակչության ճակատագրի նկատմամբ»:

1917 թ. դեկտեմբերին ժողովմխորիի հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը «ինքնորոշման սկզբունքը հռչակում էր իբրև ծխածածկույթ՝ նրա տակ ռուսական բանակները հետ կանչելու համար: ... Փաստորեն, այս ծրագիրը անիրագործելի էր, եթե ոչ ցինիկ պատրվակ՝ ռուսների կողմից Արևմտահայաստանը լքելու համար»:⁹²

Ռուսական զորքերի հեռացումը գրաված Արևմտյան Հայաստանից տարածաշրջանային քաղաքականության հավասարակշռության մեջ ստեղծեց մի հսկայական վակուում: Բրիտանացի դիվանագետ Հարոլդ Լիկոլտոնը այդ առթիվ արձանագրեց. «Ռուսական հեղափոխությունը փոխեց Հայկական հարցի ողջ ուղղությունը»:⁹³ Իսկ ռազմական, քաղաքական և տնտեսական կործանման եզրին հասած թուրքական պետությունը, միանգամայն անսպասելիորեն, ստացավ իր պանթուրանական փառասիրություններին հագուրդ տալու նոր հնարավորություն և չհապաղելով օգտվել ստեղծված հնարավորությունից, փորձեց իր օգտին շրջել դեպքերի զարգացումը: 1917 թ. դեկտեմբերի 18-ին ստորագրվեց Էրզինջանի զինադադարը: Այդ պայմանագրի 11-րդ կետում նշվում էր. «Թուրքական հրամանատարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը ստիպելու քրդերին կատարելու զինադադարի պայմանները: Թշնամական գործողությունների դեպքում ռուսական զորքերը սահմանագծում քրդերի հանդեպ կվարվեն որպես իշխանություն չճանաչող ավազակների»:⁹⁴

Օգտվելով ռուսական բանակի անակնկալ հեռանալուց, թուրքական զորքերը խախտեցին Էրզինջանի զինադադարը և «մահմեդական բնակչության պաշտպանության» պատրվակի ներքո ռազմարշավ կազմակերպեցին դեպի արևելք: Թուրքական արշավող բանակի դեմ-հանդիման 1918 թ. հունվարին հայկական զինված ուժերը և ժողովուրդը երզնկայից մինչև Վան մեծակ էին մնացել, ստիպված լինելով պաշտպանել մի ընդարձակ ճակատ:

Թուրքական բանակի ճնշման ներքո հայերը աստիճանաբար հետ էին քաշվում Արևմտյան Հայաստանից դեպի Կովկաս: Թուրքերը կրկին գրավեցին ողջ Արևմտյան Հայաստանը:

Թվում էր, թե մոտենում է Թուրքիայի համար հիվանդագին Հայկական հարցի լուծումը այն տարբերակով, որը մշակվել է մասամբ իրա-

գործվել էր երիտթուրքական հայատյաց շովինիստների կողմից: Կովկասյան ճակատի քայքայումով կորստյան վտանգի տակ էին ընկնում ոչ միայն պատերազմի ընթացքում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև ողջ Արևելյան Հայաստանը: Հայությունը կրկին դեմ առ դեմ հայտնվում էր մահացու սպառնալիքի առաջ և մատնվում անորոշության:

Քրդերի մեծամասնությունը, որը Արևմտյան Հայաստանի ռուսական գրավման շրջանում ակնդետ սպասում էր թուրքական բանակի վերադարձին, կրկին թշնամական դիրք գրավելով հայության հանդեպ, կանոնի միացավ դեպի Կովկաս արշավող թուրքական զորքերին: Իթքիհադականների հետ միավորված քրդությունը մեկ անգամ ևս դառնալով թուրքական դավադրական խաբեության զուգընթաց՝ դուրահավատությամբ ենթադրում էր, որ լծվելով թուրքական քաղաքականության սայլին, լուծում է իր անկախության ու պետականության խնդիրները: Այդ պատրանքներն էլ ավելի բորբոքելու նպատակով, թուրքական քաղաքական շրջանները և ճակատի զինվորական հրամանատարությունը ծավալեցին լայն հակահայկական քարոզարշավ, հայերի գլխին թափելով ստահող մեղադրանքներ, մահմեդական բնակչության և հատկապես քրդերի նկատմամբ «գազանություններ» թույլ տալու վերաբերյալ: Այլ կերպ ասած, հետևողականորեն հող էր նախապատրաստվում վերջնականապես պառակտելու հայ և քուրդ ժողովուրդներին և բացառելու Արևմտյան Հայաստանի տարածքում նրանց հնարավոր քաղաքական համագործակցությունը: Այդ անշնորհակալ գործին եռանդուն մասնակցություն էր բերում նաև դեռևս 1916 թ. իթքիհադական մութ ուժերի կողմից կազմակերպված «Իսլամի միություն» («Իթքիհադ-ի էլամ») անունով ռազմաշունչ կազմակերպությունը, որը թուրքերին և քրդերին մղում էր արյունոտ բախումների հայերի հետ, իսկ ապա այդ միջադեպերի կազմակերպման ողջ պատասխանատվությունը բարդում հայերի վրա:⁹⁵ Դեպի Կովկաս արշավող թուրքական երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշայի նախածեռնությամբ կազմակերպվել էին անկանոն քրդական ջոկատներ, որոնք նախատեսված էին թիկունքում ասպատակ սփռելու և հայ բնակչության նկատմամբ ահաբեկչական գործողություններ, սպանություններ ու ջարդեր իրականացնելու համար:⁹⁶ Քրդական այդ ջոկատները մի շարք վայրերում (Էրզինջան, Բայբուրդ, Դերսիմ, Կարս, Արդահան և այլն) արյունոտ հաշվեհարդարներ իրականացրին հայ խաղաղ բնակչության նկատմամբ, հանդուգն հարձակումներ էին գործում հեռացող ռուսական զորքերի վրա և այլն:⁹⁷ Թուրքական գործակալությունը Իրանում ևս քրդական մի շարք ցեղերի օգնությամբ հայ և ասորի բնակչության նկատմամբ կազմակերպում էր ահաբեկչական գործողություններ, քրիստոնյա բնակչության հալածանքներ, ջարդեր և այլն: Այսպես, օրինակ, 1918 թ. մարտին շեքքաք

քրդական ցեղի առաջնորդ Իսմայիլ աղա Արմկուն սպանեց Հաքյարիի ասորիների պատրիարք Բենիամին Մար-Շիմունին և մի շարք վայրերում սրի քաշեց տեղական ասորի և հայ բնակչությանը:⁹⁸ Այդ նույն կերպ վարվեց նաև Իրանական Քրդստանի ազդեցիկ քուրդ առաջնորդներից սեյիդ Թա-ն (Թահան):

1918 թ. փետրվարի 12-ին թուրքական զորքերը անցան Էրզինջանի զինադադարով նախատեսված սահմանազատման գիծը և սկսեցին շարժվել դեպի արևելք՝ Էրզրում-Ալեքսանդրոպոլ ուղղությամբ: Հարձակման մասնակից թուրքական հինգ դիվիզիաներին տրամադրվեցին քրդական մեծաթիվ անկանոն ջոկատներ, որոնք կոչված էին գործել գլխավորապես ճակատը պահող հայկական զորամասերի դեմ:

Իթքիհադի ռազմա-քաղաքական ղեկավարությունը ներշնչել էր քրդերին, որ Արևմտյան Հայաստանը հայ բնակչությունից իսպառ մաքրելուց հետո ռեալ նախապայմաններ կստեղծվեն քրդական ինքնավարության վերաբերյալ բաղձանքները կյանքի կոչելու համար:⁹⁹

Արդեն 1918 թ. մարտի վերջին և ապրիլի սկզբին թուրքական զորքերը հասան 1914 թ. ռուս-թուրքական սահմանին, իսկ մեկ ամիս անց՝ 1877 թ. սահմանին: Այնուհետև խորանալով Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի տարածքով, պատրաստվում էին շարժվել դեպի իրենց նվիրական նպատակը՝ Բաքու: Այդ իրադարձությունների մասին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգը 1918 թ. ապրիլի 3-ին գրում էր Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Փեյչին. «Թուրքերն առաջ են շարժվում... հայերը գտնվում են բնաջնջման իրական վտանգի մեջ... Հայկական գյուղերն ու զորախմբերը մշտապես հարձակման են ենթարկվում զինված մահմեդականների կողմից... թուրքերը կարող են Կովկասում այնքան տարածքներ բռնազավթել, որքան ցանկանան... Հայերի կոտորածը երկու ամսվա ընթացքում գործնականում անխուսափելի է»: Դրությունից միակ ելքը Լանսինգը համարում էր Անգլիայի կողմից անհապաղ օգնությունը, այլապես «հայերը կարող են գլխովին ոչնչացվել»: «Քանի որ ԱՄՆ-ը պատերազմի մեջ չէ Թուրքիայի հետ, նրա կառավարությունը զուրկ է որևէ գործողություն ձեռնարկելու հնարավորությունից», - իր խոսքը եզրափակում էր պետքարտուղարը:¹⁰⁰

Յուլիս 14-ին թուրքական զորքերը գրավեցին Թավրիզը, իսկ 1918 թ. օգոստոսին նրանք ավարտեցին Ատրպատականի և Իրանական Քրդստանի հյուսիսային շրջանների (Ուրմիա լճից հարավ) ռազմակալումը: Թուրքական զավթիչներին այդ ճակատում դիմադրություն էին ցույց տալիս միայն հայերի և ասորիների զինված ջոկատները:¹⁰¹

Իսկ կովկասյան ճակատում հայկական զորամիավորումները ստիպված էին կենաց և մահու կռիվներ մղելով «թուրք-թաթարական-քրդական կռալիցիայի դեմ»¹⁰² պաշտպանել մի ընդարձակ ճակատ:

Այդ պարագաներում տրամաբանությունը հուշում էր մի ընդհանուր հասկացողություն գտնել քրդերի հետ, նրանց բացատրելով, որ թուրքական արշավանքին մասնակցությունն անհարիր է իրենց ազգային շահերին, որովհետև նախ այն հանդիպելու է ռուսական զորքերի և հայ կանավորական զորամասերի վճռական հակահարվածին և բացի այդ, խորացնելու է թշնամական առճակատումը հայ և քուրդ ժողովուրդների միջև: Վկայելով այդ մասին, դեպքերին ժամանակակից ու մասնակից Կարո Սասունին գրում է. «Հակառակ հայության արդար վրեժխնդրության դարձյալ կային հայ ազգային մարմիններ, որոնք կը ձգտեին մնացորդ քրտության հետ համերաշխության լեզու մը գտնել և դիմագրավել թրքական վտանգը: Համերաշխության և համագործակցության կարգ մը փորձեր կատարվեցան, բայց անհաջող, որովհետև քյուրտերը վերապահ էին և չէին գիտակցեր տակավին, թե գրավված վայրերն դուրս գտնված քյուրտերուն ինչ բախտ վիճակված է»:¹⁰³

1918 թ. հունվարին քրդերի հետ համերաշխություն ու բարեկամություն հաստատելու մի փորձ է կատարվում նաև Խնուսում: Կարո Սասունիի նախաձեռնությամբ այստեղ են հրավիրվում Բինգյուլի, Շուշարի, Թեքմանի և Վարդոյի քուրդ երևելիները և ներկայացուցիչները «քուրդ-հայկական մի համագումարի»: Քրդերին պարզաբանվում է երկու ժողովուրդների անցյալի հարաբերությունների ողջ պատմությունը, խոսվում է հայերի և քրդերի նկատմամբ թուրքական ջարդերի մասին և շեշտվում հայ-քրդական բարեկամության ու գործակցության անհրաժեշտությունը: Այդ բոլորը որոշ քուրդ պատգամավորների մոտ առաջ է բերում դրական արձագանք, սակայն մեծամասնությունը, հակառակ արտաքուստ հավանություն տալուն, չի թաքցնում իր մեջ սնուցվող թշնամական ոգին հայերի նկատմամբ:¹⁰⁴ Ավելին, երբ թուրքական բանակը 1918 թ. փետրվարի վերջերին ուժեղացրեց ճնշումը հայկական գորամասերի վրա, հակառակ ժողովում իրենց տված հավատարմության ու բարեկամության երդումներին, քրդերի մեծ մասը դարձյալ օժանդակեց թուրքերին: «Այս հարվածներուն և դժբախտ անցքերու օրերուն դարձյալ բաժանված մնացին հայերն ու քյուրտերը,— գրում է Կարո Սասունին,— կարծես ճակատագրական անեծքով մը, որպեսզի քայքայման դուռը հասած թուրք կառավարությունը ազատորեն իր կրունկներուն տակ առներ և՛ մեկը և՛ մյուսը, գլխավորաբար օգտվելով անոնց հակամարտութենն և փոխադարձ տկարացումներն»:¹⁰⁵

Քրդերի աջակցությունն իթիհադականներին մեծապես օգնեց վերջիններիս Ատրպատականը և Իրանական Քրդստանը ևս գրավելու գործում: Երբ 1918 թ. փետրվարին թուրքական բանակի չորրորդ բանակային կորպուսը սկսեց շարժվել դեպի իրանական սահմանը և ապրիլին Միջագետքում տեղակայված վեցերորդ բանակի զորամասերի հետ

մուտք գործեց Ատրպատական և Իրանական Քրդստան, որտեղից ռուսական զորքերն արդեն հեռացել էին, թուրքերին անմիջապես միացան ոչ շատ վաղուց նրանց դեմ կռվող քրդական ցեղապետեր՝ շեքքաք ցեղի Ավդո ճյուղի առաջնորդներ Իսմայիլ աղա Արմկոն և սեյիդ Թան (Թահա), որոնք սկսեցին ուժգին հարվածներ հասցնել հայերի և ասորիների մարտական ջոկատներին:¹⁰⁶ Նրանց օրինակին հետևեցին նաև Սուլջբուլաղի (Մեհաբադ) և այլ վայրերի քրդերը: Նրանց այդ վարքագիծը Իրանում անգլիացիների համար ստեղծում էր տագնապալի վիճակ նաև այն պատճառով, որ Ատրպատականում և Իրանական Քրդստանում նրանք զորքեր չունեին և այդ երկրամասում իրենց ռազմական քաղաքականությունն իրականացնելիս հենվում էին առավելապես հայկական ու ասորական զորամիավորումների վրա:

Ուստի բրիտանական հատուկ ծառայությունները սկսեցին եռանդուն աշխատանք տանել Եվրոպայում և Մերձավոր Արևելքում քրդական ազգայնական վտարանդության ներկայացուցիչներ Բադրխան-բեկի, Սուրեյա Բադրխանի, Աբդուրրեզակ-բեյի, Յուսուֆ Քյամիլ-բեյի և այլոց հետ, աշխատելով համոզել նրանց, որ հանուն դաշնակիցների շահերի անհրաժեշտ է համագործակցել հայերի հետ, խոստանալով, որ պատերազմից հետո քրդերը կազատագրվեն թուրքական լծից:¹⁰⁷ Անշուշտ անգլիացիները համոզելու այդ գործելակերպը ամրակայում էին քուրդ երևելիներին խոշոր կաշառքներ հատկացնելու կամ նրանց անձնական պատվախնդությանը հագուրդ տալու շայլ խոստումներով: Արձագանքելով բրիտանական առաջարկներին, մի շարք ցեղեր շփումների մեջ մտան անգլիացիների հետ, առաջ քաշելով որոշ նախապայմաններ: Այսպես, Սուլջբուլաղի շրջանում բնակվող մուքրի քրդերը բանակցություններ սկսեցին քերմանշահում (ներկայումս Բախթարան) նստող անգլիական հյուպատոսի հետ, նրան հավաստիացնելով, որ պատրաստ են ընդունելու անգլիացիների առաջարկները: Միաժամանակ հյուպատոսի հետ բանակցողները խորհրդապահորեն նրան հայտնեցին, որ քրդերը կարող են աջակցել «դժվարին հայկական հարցի լուծմանը», պայմանով, որ անգլիացիներն էլ իրենց համաձայնությունը տան բրիտանական հովանու ներքո «Անկախ Քրդստան» ստեղծելուն:¹⁰⁸ Անտարակույս քրդերի կողմից դա միանգամայն նոր հարցադրում էր, որը դատելով հետագա իրադարձություններից, հետաքրքրեց անգլիացիներին: Հարցի ավելի ընդլայնված ձևաչափով 1918 թ. հունիսին ժնևում բանակցություններ սկսվեցին բրիտանական հայտնի քաղաքական գործիչ Պերսի Քոքսի և Շերիֆ-փաշայի միջև: Բանակցությունների թեման այսպես կոչված Իրաքյան Քրդստանի (Սոսուլ կենտրոնով) ինքնավարության հարցն էր, որը գեներալի կարծիքով, նույնպես պետք է գտնվեր բրիտանական հովանու ներքո: Ընդ որում, Շերիֆ փաշան խորհուրդ էր տալիս այդ ինքնավարությունը հռչակել մինչև

Փարիզի խաղաղության վեհաժողովի բացումը և դրանով իսկ պետություններին դնել կատարված փաստի առջև:¹⁰⁹ Հանդիպման ընթացքում քննարկման առարկա դարձավ նաև հայ-քրդական հարաբերությունների հարցը: Երկու ժողովուրդների միջև առկա և ընթացքում ծագող հակասությունների լուծման համար Շերիֆ-փաշան առաջարկեց Լոնդոնում ստեղծել մի մշտական գործող կոմիտե: Սակայն նրա առաջարկությունների այդ ամբողջ փաթեթը մնաց անիրագործելի և ընթացք չտրվեց անգլիացիների կողմից նախ այն պատճառով, որ 1916 թ. Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Միջագետքը Մոսուլի նավթաբեր շրջանով հանդերձ արդեն մտցվել էր բրիտանական շահերի գոտու մեջ և ապա անգլիացիները բնավ մտադրություն չունեին քրդերին հատկացնելու ինքնավարություն:

1918 թ. Բրեստ-Լիտովսկում բանակցությունների ժամանակ թուրքիան Կովկասյան ռազմածակատում ուժեղացնում էր ճնշումը ռուսներին ավելի զիջող դարձնելու համար: Նրա նպատակն էր տարածքային առումով ընդարձակել իր սահմանները այն հաշվով, որ դրանք գերազանցեն 1878 թ. հաստատված սահմանագիծը:¹¹⁰

Իզգեթ-փաշան բողոք ներկայացրեց ռուսական պատվիրակությանը, թե իբր ռուսական զորքերի գրաված տարածքներում հայերը գործադրում են ամենադաժան բռնություններ մուսուլմանների հանդեպ, թե հայկական և վրացական զինված ուժերի կազմավորվելը օսմանյան բանակին թույլ չի տալիս պաշտպանելու մահմեդական բնակչությանը: Նա իր կառավարության անունից հույս էր հայտնում, որ ռուսական իշխանությունները անհապաղ միջոցներ կծեռնարկեն ինչպես հայերի և վրացիների հարձակումներից մուսուլման բնակչության պաշտպանության, այնպես էլ նրանց կողմից զինված հրոսակախմբերի հետագա կազմավորման դեմ, նաև գոյություն ունեցող հրոսակախմբերը զինաթափելու և ցրելու համար: Իսկ թալաթ փաշան բողոքում էր, որ հեռացող ռուսական բանակի տեղը գրավում են «զինված հայերից և վրացիներից կազմված ելուզակները», որոնք գործադրում են «ամենահավոր չարաշահումներ և սարսափեր»:¹¹¹

Հակադարձելով թուրքական այդ մեղադրանքներին, ռուսական պատվիրակության ղեկավար Լ. Տրոցկին հայտարարում է. «Մեզանից յուրաքանչյուրը բավականին լավ գիտի թուրքիայի պատմությունը, որպեսզի իրավունք ունենա հաստատելու, որ քրդերը զինված են, որ Օսմանյան կառավարությունը երբևիցե պարտավորություն չի վերցրել նրանց զինաթափելու և ունեցած զենքի օգնությամբ քրդերը միշտ չէ, որ արել են բարություն»:¹¹²

Թուրքական պատվիրակության անդամ Հաքքը փաշան առարկում է, որ «քրդերի մեղքն ավելի քիչ է, քան մյուս կողմի»: Իսկ մեծ վեպիր

թալաթը ավելացնում է, որ «Օսմանյան կառավարությունը քրդերին չի զինել և, եթե ռուսների կողմից գրավված տարածքում կան զինված քրդեր, ապա ռուսները թող բարի լինեն զինաթափելու թե՛ հայերին և թե՛ քրդերին»:¹¹³

1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանն իր վրա պարտավորություն էր վերցնում «իր զորքերը Արևելյան Անատոլիայի նահանգներից դուրս բերելու և դրանք կանոնավորապես թուրքիային վերադարձնելու համար»: Այսպիսով բոլշևիկյան կառավարությունը ճանաչում էր Օսմանյան կայսրության գերիշխանության իրավունքը ամբողջ Արևմտահայաստանի նկատմամբ: Ավելին, ժողկոմխորի իր վրա պարտավորություն էր վերցնում ցրելու Ռուսաստանում և Թուրքիայից գրավված նահանգներում գործող հայկական զինված խմբերը:

Տրոցկին Բրեստի դաշնագիրը անվանել է «աղետ հայ ժողովրդի համար»:¹¹⁴ Իսկ Յու. Մարտովը այն գնահատել է որպես «գործարք», որով Ռուսաստանին չպատկանող մարզերը հանձնվեցին Թուրքիային: Դաշնագրի դեմ Պետրոգրադի հայերի բողոքագրում ասվում էր. «Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը մահապատժի վճիռ է հայերի համար... Բրեստի դաշնագրի Հայաստանին վերաբերող մասը հանդիսանում է արդարության և Հայաստանի իրավունքի դեմ ուղղված կոպիտ բռնության ակտ»:¹¹⁵

Արձագանքելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքմանը, Ռևինստոն Չերչիլը գրեց, որ այդ պայմանագիրը «դարձավ սկիզբ դեպի Արևելք Թուրքիայի ընդհանուր հարձակման համար»:¹¹⁶

Թուրքերի պնդմամբ Բրեստի պայմանագրի մեջ մտցվեց կետ այն մասին, որ մահմեդական դավանանքի ռուսահպատակները իրավունք ունեն տարագրվելու Թուրքիա: Բնականաբար այդ կետը իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի դեմ: Թուրքական քաղաքագետները, — գրում էր Ն. Ադոնցը, — ցանկանում են, օգտվելով պատերազմական խառնաշփոթությունից, իրագործել այդ հրեշավոր ծրագիրը: «Թուրքիան ցանկանում է բնակեցնել հայկական մարզերը, որոնք այժմ թափուր են բնակչությունից, մահմեդականներով և դրանով պատերազմից հետո եվրոպան դնել քրիստոնեական Հայաստանի մահմեդական երկրի փոխակերպման փաստի առջև»:¹¹⁷

Այդ ժամանակ ռուսական բանակը որպես կազմակերպված մարտական ուժ վերջնականապես դադարել էր գոյություն ունենալուց: Իսկ թուրքերի նվաճողական ծրագրերը չէին սահմանափակվում միայն Անդրկովկասով, նրանք հեռահար ծրագրեր էին փայփայում զավթելու ողջ Կովկասը, թուրք և մահմեդական բնակչություն ունեցող Սերժկասայան շրջանները, Ատրպատականը, Միջին Ասիան, Պովոլժիեն: Այդ ռազմարշավը իրագործվում էր պանթուրքիզմի և պանիսլամիզմի դրոշմերի ներքո:

Հայության համար ստեղծված իրադրությունը «Ասպարեզ» թերթը գնահատում էր հետևյալ կերպ. «Կովկասյան ռազմաճակատի անխնամ վիճակը, թուրքերու հակահարձակման հնարավորությունը, քյուրտերու մշտական թալանն ու սպանություններն, տեղական քաթարներու հապճեպ զինվելն ու վրացիների երկդիմի քաղաքականությունը վտանգի նոր դուռ բաց կանեն հայության համար: Մենակ ենք մեր անզորության մեջ և մեր թշվառության հետ, շրջապատված ենք մեզ չսիրող և մեզ հետ մրցակցող տարրերով, որոնք առիթը չեն փախցնի հարվածելու մեզ»:¹¹⁸

Թուրքական աճող սպառնալիքի և քաղաքական անորոշության պայմաններում 1918 թ. մայիսի 23-ին հիմք էր դրվում հայոց պետականության ստեղծմանը: Հայաստանի անկախության հռչակումը նոր մտահոգություններ պատճառեց քրդերին: Թեև հայկական փոքրիկ հանրապետությունը «կը կծկվեր իր մեղ մորթին մեջ... քյուրտերը, սակայն, սկսան մտածել, որ անկախ Հայաստան մը գոյություն ունի, փոքր կամ մեծ, այդ մանուկը վաղը կըրնա մեծնալ»:¹¹⁹ Բացի այդ, քրդերը արդեն կատարելապես տեղյակ էին, որ Մեծ Բրիտանիան թուրք քաղաքական գործիչների հետ ամբաստանապետություններում հարց էր բարձրացրել Հայաստանում, Սիրիայում, Միջագետքում ու Արաբիայում (Արաբական թերակղզում) «ինքնավար կառավարությունների» ստեղծման մասին, միանգամայն զանց առնելով քրդական հարցը:¹²⁰

1918 թ. հուլիսի 4-ին Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության միջև ստորագրված «Հաշտության և Բարեկամության» Բաթումի պայմանագիրը ստորագրվելու պահին ողջ Արևմտյան Հայաստանը արդեն վերանվաճված էր թուրքական զորքերի կողմից, իսկ Արևելյան Հայաստանը սեղմվել էր 11 հազար քառակուսի կիլոմետր ունեցող սահմանների մեջ: Թվում էր, թե եկել էր այն պահը, երբ երիտթուրքերը պետք է իրագործեին իրենց տված խոստումները քրդերին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ: Սակայն իթթիհադական գործիչները քրդական առաջնորդներին կերակրում էին հույսերով, որ իրենք անպայման այդ հարցը կբարձրացնեն առաջիկայում գումարվելիք Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Ինչ վերաբերում է նորաստեղծ Հայաստանի Հանրապետության «քրդական» քաղաքականությանը, ապա այն ոչ միայն մշակված չէր, այլև իսպառ դուրս էր մնում Հանրապետության ղեկավարության տեսադաշտից: «Հայաստանի Հանրապետությունը, - գրում է Կ. Սասունին, - միջոց չունեցավ մտածելու քյուրտո-հայ հարաբերությունների մասին: Հայկական հարցը ընդհանուր ընդունելություն գտած էր: Լայն Հայաստանի խնդիրը լուծված կը նկատվեր: Աշխարհի հզորներու խոստումները շատ էին ու հայկական դաւարահավատությունը անկարևոր խնդիր մը նկատած էր մեր և փոքր դրացիներու փոխհարաբերությունը»:¹²¹ Սակայն հայերի

հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ քայլեր չձեռնարկվեցին մաև քրդերի կողմից: «Քյուրտերը (Հայաստանին սահմանակից և մաս մըն ալ Հայաստանի սահմաններեն մերս) հաշտության և համագործակցության մտածումը երբեք չունեցան», - նկատում է Կ. Սասունին:¹²² Նման իրավիճակի գլխավոր պատճառը անշուշտ այն էր, որ տվյալ պատմական ժամանակաշրջանում հայերի և քրդերի շահերը կատարելապես ներհակ էին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր արտաքին քաղաքականության գերխնդիրն էր համարում Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետականության վերականգնումը կամ հնարավորության դեպքում Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի միավորումը և «միացյալ ու անկախ Հայաստանի» գաղափարի իրագործումը, մի հանգամանք, որը կտրականապես մերժվում էր քրդերի կողմից և առաջ բերում նրանց վճռական հակազդեցությունը, այդ թվում նաև զինված ճանապարհով: Դա միանգամայն հասկանալի էր, որովհետև քրդերը երազում էին համարյա այդ նույն տարածքների վրա ստեղծել «անկախ Քրդստան»: Այս իրողությունը կատարելապես անիմաստ էր դարձնում «փոքր դրացիների» հետ փոխհարաբերությունների զարգացումը:

«Հայերը 1919 թ. աշունեն սկսած, մտահոգված էին Տաճկահայաստանի վերագրված խնդրով, - նշում է Կ. Սասունին, - և պետք է ըստել, թե ամենեն մեծ խոչընդոտը քրդական թշնամի զանգվածը կը ներկայանար: Հայաստանի Հանրապետությունը կը զիտակցեր թրքական ուժի մեծության: Կը տեսներ, որ ան հետզհետե կը վերականգնվի և եթե հայկական հարցը չլուծվի խորհրդածողովներում մեջ, մեր սահմաններուն վրա այդ հարցի կարգադրությունը սվինի ներկայության պետք պիտի ունենա»:¹²³

1918 թ. աշնանը թուրքական ռազմաշունչ միլիտարիզմը արդեն գտնվում էր հոգևարքի մեջ: Հոկտեմբերի 30-ին Մուդրոսի նավահանգստում բրիտանական «Ազամեմնոն» ռազմանավի վրա ստորագրվեց զինադադարի վերաբերյալ պայմանագիր: Երիտթուրքական կառավարությունը ստիպված էր ընդունել պատերազմում իր պարտությունը: Չինադադարը նշանակում էր Օսմանյան կայսրության փաստական կապիտուլյացիա Համաձայնության պետությունների առջև: Տասներկու օր հետո, նոյեմբերի 11-ին, անձնատուր եղավ նաև Գերմանիան: Պատասխանատվությունից խուսափելու համար տապալված երիտթուրքական վարչակարգի պարագլուխները՝ Թալաթը, Էնվերը, Չեմալը, Թոփալ Իսմայիլ փաշան, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Բեդրին, Ազմին և հայկական սպանդի կազմակերպիչ իթթիհադական այլ պարագլուխները փախուստի դիմեցին արտասահման: Սուլթան Մեհմեդ (Մուհամմեդ) VI Վահիդդինը նորանշանակ մեծ վեզիր Իզզեթ փաշային հրամայել էր կառավարությանը

անդամակցող իթթիհադականներին հեռացնել և ձերբակալել:¹²⁴ Սակայն Ահմեդ Իզզեթ փաշան, իթթիհադի ճնշման ներքո սուլթանին էր ներկայացրել մի գրություն, որում նշում էր, որ նրա այդ հրամանը հակասում է սահմանադրությանը և որ սուլթանը ոտնակոխ անելով սահմանադրության հողվածները, մտադիր է «շարժվել դեպի միապետություն»: Ուստի կառավարությունը չի կարող ընդառաջ գնալ վեհապետի հրամանին:¹²⁵

Սուլթանը կառավարություն կազմելու պարտականությունը դնում է Լոնդոնում դեսպան, ծերակուտական թեմվֆիկ փաշայի վրա:

«Իթթիհադ վեթերաքը» կուսակցությունը անմիջապես փոխում է իր անվանումը և «Վերանորոգչական խմբակ» անվան տակ կրկին խորհրդարանում կազմում է մեծամասնություն, ճնշում գործադրելով կառավարության վրա, որպեսզի հրաժարական տա: Այս անգամ մեծ վեզիր է նշանակվում Դամադ Ֆերիդ փաշան (1919 թ. մարտին): Օրակարգում դրված էր Օսմանյան կայսրությունը մասնատելու հարցը: Դաշնակիցներն այժմ կարող էին բավարարել արդարության և հատուցման հայկական պահանջը:¹²⁶ Սակայն շուտով արևմտահայության շրջանում համատարած ոգևորությունը փոխարինվեց դառն հիասթափությամբ, որովհետև Մուղոսի զինադադարը, որին անհամբեր սպասում էր ողջ հայությունը, շրջանցում ու լռության էր մատնում Հայկական հարցը: Նախ «զինադադարի թուլությունը նրանում էր, որ Անատոլիայի թուրքերի գիտակցությանը չէր հասցնում նրանց կրած լիակատար պարտությունը, և որ ոչ մի բավարար նախազուշական միջոցներ ձեռք չէին առնվել հայերի անվտանգության համար», - ասվում էր զինադադարի մասին մի ժամանակակից գնահատականում:¹²⁷ Ուրիշ ճակատներում ջախջախված ու պարտված թուրքիան մնում էր հայկական վեց վիլայեթների փաստական տերը: Տեղի չունեցավ այնքան բաղձալի Արևմտյան Հայաստանի հողերի ազատագրում: Ձինադադարը չհանգեցրեց Արևմտյան Հայաստանում թուրքական զորքերի իրական զինաթափմանը և թուրքերը հնարավորություն ստացան վերազինվելու և ի վերջո հենց հայկական նահանգներում սկսեց զարգանալ թուրքական միլի-ազգայնական քեմալական շարժումը: Այդ զինադադարը ըստ էության հանդիսացավ «հայկական ըղձանքներուն տրված առաջին հարվածը»:¹²⁸ Մարկ Սայքսը լորդ Ռոբերտ Սեսիլին ուղղված հեռագրում իրավացիորեն նշում էր, որ զինադադարի պայմանները հայկական տեսանկյունից դավաճանությանը հավասարագոր մի բան էր:

Հայ հետազոտողներից շատերը այդ հանգամանքը բացատրում են միայն պատերազմում հաղթանակ տարած պետությունների անտարբերությամբ Հայկական հարցի նկատմամբ: Սակայն այդ դառը ճշմարտությունը այնուամենայնիվ միակողմանի մոտեցում է: Չի կարելի չընդունել, որ զինադադարի մեջ Հայաստանի կացության արդյունավետ ապահովումը որոշակի ռժվարությունների էր հանդիպում աշխարհագրական

ու ռազմական առումով: Եթե Պաղեստինում և Միջագետքում անգլիացիները վճռական պարտության էին մատնել թուրքերին, ապա իրավիճակը բոլորովին այլ էր հայկական նահանգներում, ուր դաշնակիցների զորքերը ըստ էության ոտք չէին դրել, իսկ ռուսական զորքերի զանգվածային դասալքությունը և ճակատի մերկացումը թուրքերին տվել էր իրենց առիթը: Գաղտնիք չէ, որ նույնիսկ Մուղոսի զինադադարի ստորագրումից հետո Արևելյան Անատոլիայի այդ խուլ անկյուններում Արևմտյան Հայաստանում, առկա էին թուրքական զորքերի խոշոր կուտակումներ և դաշնակիցներին չհանձնված մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, որն հետագայում ընկավ քեմալականների ձեռքը: Հետևաբար զինադադարի ստորագրումից հետո ևս արևմտահայության մնացորդների վրա շարունակում էր կախված մնալ մեծագույն վտանգ: Դա չէր բացառում նաև Բալֆուրը, որը գրում էր, որ այդ մեծ վտանգը այն է, որ զինադադարը կնքելուց հետո թուրքերը կարող էին Հայաստանում կամ Կովկասում «մի տխմար բան անել»: Բալֆուրը միայն այն հույսին էր, որ թուրքերը այնքան էլ տխմար չպետք է լինեին նման քայլ կատարելու համար:¹²⁹

Մուղոսում մեծ վեզիր Իզզեթ փաշան առաջ քաշեց թուրքիայի և կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու հարցը՝ թեև դաշնակիցների հովանու ներքո, սակայն իրականում այդ դաշնությունում թուրքիային էր պատկանելու «մեծ եղբոր» կարգավիճակը: Դա ըստ էության Կովկասը դիվանագիտական ճանապարհով աննեքսիայի ենթարկելու մի հեռահար ու լավ մշակված ծրագիր էր:

Մուղոսի զինադադարը կտրուկ մեծացնում էր բրիտանական ազդեցությունը Արևելյան Անատոլիայում, որովհետև անգլիացիները լցնում էին այն վակուումը, որն առաջացել էր ռուսական զորքերի հեռանալու պատճառով: Ձինադադարի 7-րդ հոդվածը դաշնակիցներին իրավունք էր վերապահում ռազմակալման ենթարկել թուրքիայի ցանկացած ռազմավարական կետ, «եթե հանգամանքները դառնային սպառնալից դաշնակիցների անվտանգության համար»: Իսկ 24-րդ հոդվածում կարդում ենք հետևյալ ձևակերպումը. «Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են նրանց մի մասը զբաղելու իրավունքը»:¹³⁰ Փաստորեն այս հոդվածը թույլատրում էր դաշնակիցների միջամտությունը Հայաստանում միայն նոր ջարդերի վտանգի դեպքում, կարծես թե մեկ և կես միլիոն արևմտահայերի ջարդը բավարար փաստարկ չէր միջամտության համար:

Մուղոսի զինադադարը սառը ցնցուղի դեր խաղաց նաև քրդերի համար: Թուրքիան, որի հետ իրենք կապել էին իրենց ճակատագիրը և պատերազմի ողջ ընթացքում ռազմաճակատներում նրա համար առատորեն արյուն էին թափել, ջախջախված էր: Հետևաբար այն խոստումները, որ տրվել էին իրենց երիտթուրքական կառավարության կողմից,

Քրդստանի անկախության կամ ինքնավարության վերաբերյալ, հոգս էին ցնդել: Դերսիմից մինչև Բինգյոլ, Սասունից մինչև Վանի Շատախ գտնվում էր ռուսական և հայկական տիրապետության տակ: Միջազգային դիվանագիտության կողմից քննարկման նյութ էր դարձել Հայաստանին անկախություն տրամադրելու հարցը: Ավելին, քրդերը ենթադրում էին, որ հայկական հարցի լուծումը օրերի խնդիր է, մինչդեռ իրենց ազգային իղծերը արհամարվում կամ անտեսվում են: Քրդերին թվաց նաև, որ հայերի և քրդերի հետ հարաբերությունների հարցում անգլիացիները իրականացնում են կողմնապահ քաղաքականություն՝ անտեսելով քրդերի շահերը: Վերջապես քրդական վերնախավը Մուդրոսի զինադադարը գնահատեց որպես հայերի օգտին ընդունված միջազգային իրավական մի փաստաթուղթ:

Քրդերի այս տրամադրությունների վրա յուր էր ավելացնում նաև «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, որի ծպտված գործիչները թե՛ մայրաքաղաքում և թե՛ նահանգներում շարունակում էին ակտիվորեն գործել: Ստամբուլի նոր կառավարության թողտվությամբ այդ կոմիտեն խթանեց քրդերի գործունեությունը հայկական վեց վիլայեթներում, մասնավորապես Վանում, աշխատելով նրանց միջոցով արգելել Կովկասից ու Պարսկաստանից հայ գաղթականների վերադարձը: Միաժամանակ իթթիհադականները Փոքր Ասիայի տարբեր մասերում կազմակերպում էին «չեթե» հրոսակախմբեր, ջարդերից վերապրած հայ բնակչության դեմ գործողություններ իրականացնելու համար, այդ նույն նպատակով զինում էին տեղական մահմեդական բնակչությանը և այլն:¹³¹ Պանթյուրքիստ-իթթիհադականները, որոնց ոգեշնչում էր անսամ լայսերապաշտությունը և մոլի շովինիզմը, թեև կտրականապես մերժում էին քրդերի ազգային պահանջները և լի էին վճռականությամբ թույլ չտալու, որ հայերից դատարկված նահանգներում ստեղծվի քրդական մեծամասնություն, որը կարող էր լուրջ կռվան հանդիսանալ նրանց անկախության կամ ինքնավարության պահանջների համար, միաժամանակ չէին խորշում քուրդ ժողովրդի քաղաքական իղծերը և մասնավոր կրոնական զգացումները դարձնել իրենց քաղաքական սադրանքների առարկա: Նրանք ահաբեկում էին քրդերին, որ Արևմտյան Հայաստանի տարածքում Անտանտի տերությունները ծրագրել են ստեղծել մի ընդարձակ ու ծավալուն Հայաստան, որի իրականացումից հետո քրդերին ոչինչ չի մնա, եթե ոչ վերցնել գաղթականի ցուպը կամ դառնալ հայերի ստրուկ-ռայա ու նրանց վրիժառության զոհը: Ընդ որում, հակահայկական այդ քարոզչությունը ամբողջապես ներծծված էր իսլամական համերաշխության ու պահիսլամիզմի գաղափարներով:

Երիտթուրքական գործակալության կողմից հրահրված այդ սադրիչ գործողությունները անվրեպ ազդեցություն էին գործում քուրդ զանգ-

վածի և քրդական գործիչների վրա: Դրանք բնականաբար քրդերի մոտ խթանում էին նաև հակահայկական տրամադրություններ:¹³² Այդ ներշնչումները հախուռն մղում էին ստանում նաև Եվրոպայից եկող հայասպաստ լուրերով, որ Հայկական հարցը շուտով ստանալու է իր լուծումը: «Այս միջոցին Եվրոպա և Ամերիկա գտնվող թուրքի ոչ-իսլամ տարրերը, մասնավորապես հայերը,– գրում է Մեվլան զադե Բիֆաթը,– Օսմանյան տերության պատերազմեն վերջ մնացած հողերու բաժանման ձգտող խիստ բողոքականտի մը սկսած էին: Տրապիզոնի և շրջակայքի հույները՝ Պոնտոսյան անկախության, Հունաստանի նշանավոր վարչապետ Վենեզելուս Իզմիրի և շրջակայքին հանուն Համաձայնականներու գրավման, հայերն ալ երևանի հանրապետության ձգված հողերով չգոհանալով, Արևելյան նահանգները, Քյուրտիստանը և Կիլիկիան պարունակող ընդարձակ Հայաստանի մը կազմության երևակայությամբ՝ Փարիզ գումարվող հաշտության վեհաժողովը կը ծանծրացնեին»:¹³³

Քրդերին ծանր մտորումների մեջ էր գցում նաև այն իրողությունը, որ հայոց ցեղասպանության ժամանակ իրենք գործիք էին դարձել թուրք ջարդարարների ձեռքին: Նրանք ենթադրում էին, որ ոչ միայն հայերը, այլև առհասարակ քրիստոնյա պետությունները վաղ թե ուշ այդ արյունոտ արարքների համար հաշիվ են պահանջելու ոչ միայն թուրքերից, այլև քրդերից: Այստեղից ենթադրվում էր, որ հայերի և քրդերի միջև այլևս բոլոր կամուրջները այրվել են և փոխադարձ հասկացողության գալու բոլոր հնարավորությունները սպառվել: Այդ ամենը, անշուշտ, քրդերին դարձնում էր թուրքական քաղաքականության պատանդը:

Բնականաբար այս իրողությունները մեծապես մտահոգում էին նաև քուրդ ազգայնականներին, որոնց ձեռքերում էր գտնվում քրդերի ազգային շարժումը ղեկավարելու գործը: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ քուրդ ժողովրդի այս խավը ևս գերծ չէր եթնիկական նախապաշարմունքներից ու մահմեդական շովինիզմից: Պահի թելադրանքի ազդեցության ներքո քրդական ազգայնական կազմակերպությունների ղեկավարները իրենց ազգային իղծերի իրականացման հույսերը սկսեցին կապել Եռյակ համաձայնության պետությունների հետ, միաժամանակ մերժելով թուրքերի դեմ ակտիվ պայքարի գաղափարը: Նշված ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեության էին լծվել քրդական հետևյալ ազգայնական կազմակերպությունները. «Իսթիխլաս-ի Քուրդիստան» («Քրդստանի ազատություն»), «Քուրդ իսթիքյալ ջամիաթ»-ին («Քրդական անկախության կոմիտե»), «Քուրդիստան թեալի ջամիաթ»-ին («Քրդստանի վերածնության ընկերակցություն»), «Թեքքիլյաթ-ի իջթիմայե ջամիաթի»-ին («Սոցիալական ասոցիացիայի ընկերությունը») և այլ կազմակերպություններ, որոնք կապեր հաստատելով անգլո-ֆրանսիա-

կան ուժերի հետ, փորձում էին ձեռք բերել նրանց հովանավորությունը անկախ քրդական պետություն ստեղծելու հարցում:¹³⁴

«Քրդստանի վերածնության ընկերակցությունը» համագործակցության մեջ մտավ նաև իթթիհադին ընդդիմադիր «Յուրդիեթ վե իթթիլ-յաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության հետ և նրա հետ կնքեց համաձայնագիր Օսմանյան կայսրության կազմում Քրդստանին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ:¹³⁵

Այսպես կոչված «երիտքրդերը» սկսել էին նաև մեծ հույսեր կապել Վուդրո Վիլսոնի «14 կետերի» հետ: Նրանք տարբեր վայրերում քրդերեն լեզվով սկսեցին հրատարակել զանազան գրքույկներ, քարոզչական նյութեր, գրական ժողովածուներ, ինչպես նաև «Ժիյան» («Կյանք») և «Քորդեսթան» թերթերը, որոնցում դարձյալ զարգացնում էին քրդերի համար անկախություն ձեռք բերելու գաղափարը:

Սուդրոսի զինադարի կնքումից հետո Քրդստանի անկախության համար պայքարի մեջ ակտիվորեն ներգրավվել էր նաև քուրդ ազդեցիկ ազգայնական գործիչ Սուրեյա Բադրխանի կողմից Կահիրեյում հիմնադրված «Էսթեղյալ-ե Քուրդիստան» (Քրդստանի անկախություն) կազմակերպությունը:

«Ապագա Քրդստանի» հարցում այս կազմակերպությունները և անհատ գործիչները միասնական տեսակետ չունեին: Ավելին, այդ հարցում նրանք կանգնած էին ծայրահեղ հակադիր դիրքերի վրա: Մի մասը գտնում էր, որ Քրդստանը պետք է կատարելապես անկախ լինի: Մեկ այլ խումբ այն տեսակետին էր, որ Քրդստանը պետք է ունենա ներքին ինքնավարություն՝ թուրքական հովանու ներքո: Քրդական գործիչների մեկ այլ խումբ նախապատվությունը տալիս էր հետևյալ ֆորմատին՝ անկախություն Իրանի հովանու ներքո: Եվ վերջապես ազգայնական գործիչների մի ստվար զանգված պահանջում էր անկախ Քրդստան՝ բրիտանական հովանու տակ:¹³⁶

1918 թ. հոկտեմբերին բրիտանական զորքերը զեներալ Ու.Մարշալի հրամանատարությամբ ձեռնամուխ եղան Մոսուլի գրավմանը, որն այդ ժամանակ դեռ գտնվում էր թուրքերի ձեռքում: Նոյեմբերի 10-ին ողջ Մոսուլի վիլայեթը արդեն գրավված էր անգլիական զորքերի կողմից:¹³⁷

Թուրքական արձագանքը Մոսուլի նավթաբեր շրջանի կորստի վերաբերյալ վերին աստիճանի սուր էր: Այդ վիլայեթի քրդական հոծ բնակչությանը անգլիացիների դեմ հրահրելու նպատակով, թուրքերը լծվեցին բուռն հակաանգլիական քարոզչության, լայնորեն օգտագործելով նաև «հայկական սպառնալիքի» վերաբերյալ վարկածը: Միաժամանակ թուրքական գործակալությունը սկսեց լուրեր տարածել, որ այդ վայրերում ոչ շատ վաղուց տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով «դուրս քշված» ասորիները, անգլիական զենքերով զինված,

վերադառնում են Մոսուլի վիլայեթ՝ քրդերի դեմ վրիժառության պատերազմ մղելու համար:¹³⁸ Կրքերն ավելի բորբոքելու համար, որպես հարյուր տոկոսանոց ճշմարտություն, թուրքերը նաև թուրքիկներ էին տարածում այն մասին, որ անգլիացիների աջակցությամբ շուտով ստեղծվելու է անկախ հայկական պետություն, որի սահմանների մեջ են մտնելու նաև բուն քրդական հողերը:¹³⁹ Հակահայկական կրքերի բորբոքումը ձեռնտու էր նաև քրդական ցեղային և հոգևոր վերնախավին: Ուստի նաև մեծ եռանդով լծվեց քարոզչության ծավալմանը:

Եռյակ Համաձայնության երկրների և ԱՄՆ-ի կողմից Հայկական հարցի արծարծումները քրդական վերնախավի կողմից մեկնաբանվում էր որպես անվիճելի ապացույց այն իրողության, որ քրիստոնյա պետություններն ու նրանց «հայկական գործակալությունը» դավադրություն է նյութում քուրդ-մահմեդականների դեմ: Կառչելով այս մտացածին վարկածից, իթթիհադականներն ու թուրք ազգայնականները սկսեցին ճարակորեն ահաբեկել մահմեդական զանգվածներին ու հատկապես քրդերին, «հայ-քրիստոնեական» սպառնալիքի ուրվականով,¹⁴⁰ միաժամանակ աշխատելով իրենց կողմը ներգրավել տարածաշրջանի իրական ռազմաքաղաքական ուժը՝ քրդական առաջնորդներին և նրանց զինված ջոկատները, որոնք թուրքերի կարծիքով ունակ էին հակակշռելու բրիտանական քաղաքականությունը: Հատկանշական է, որ հակաանգլիական այդ քարոզչությունը զաղտնի աջակցություն էր գտնում նաև Ստամբուլի իթթյաֆիստական կառավարության կողմից, որը համարվում էր բրիտանամետ: Հատկապես Միջագետքի հյուսիսում, Մոսուլի նահանգում, թուրք-քրդական քարոզչական պատերազմը այնպիսի վտանգավոր չափեր ընդունեց, որ բրիտանական վարչությունը 1919 թ. մայիսի 12-ին պաշտոնապես հայտարարեց, որ այն տարածքները, որոնց վրա գերազանցապես բնակվում են քրդեր, ազատ են լինելու «հայկական հավակնություններից»:¹⁴¹ Սակայն այդ հայտարարությունը չբավարարեց քրդերին, որոնք անգլիացիներից պահանջում էին ռեալ երաշխիքներ: Այսպես, 1919 թ. մայիսին Բաղդադում անգլիացիների հետ բանակցությունների ժամանակ սեյիդ Թահան հայտարարեց, որ ինքը պատրաստ է համագործակցել նրանց հետ պայմանով, որ ընդունեն իր մի քանի պահանջները, այդ թվում նաև հետևյալը. բրիտանոնյա ժողովուրդների (խոսքը հայերի և ասորիների – մետոռականների մասին է – Վ. Բ.) վերադարձը քրդաբնակ շրջաններ չպետք է հանգեցնի նրանց տիրապետության հաստատմանը քրդերի նկատմամբ: Անգլիական վարչությունը մասամբ ընդունեց այդ պահանջը, շահագրգռված լինելով Սուլեյմանիեի քրդերի ապստամբությանը սեյիդ Թահայի աջակցության մեջ: Իր հերթին Իրաքում բրիտանական վարչության ղեկավար Առնոլդ Վիլսոնը Թահային հղեց մի նամակ, որտեղ ի թիվս մի շարք այլ խնդիրների, խոստանում էր նաև իր բարի ծառայությունները հայերի

հետ քրդերի հաշտեցման գործում, ինչպես նաև քրդական շահերի պաշտպանությունը առաջիկայում գումարվելիք Փարիզի խաղաղության վեհաժողովում:¹⁴² Միանգամայն ակնհայտ էր, որ հայերի և քրդերի հետ հարաբերությունների հարցում բրիտանական դիվանագիտությունը որոշել էր կիրառել բարդ խուսամբվումների քաղաքականություն, նպատակ ունենալով նրանց երկուսին էլ պահել իր քաղաքական ազդեցության շրջանակների մեջ: Ըստ այնմ սկսեցին երևան գալ հայկական և քրդական առանձին պետությունների ստեղծման անգլիական նախագծեր, որոնց իրականացման ցանկությունը, սակայն, հավասար էր զերոյի և ամենակարևորը այդ խոստումները ոչնչով պարտավորեցնող չէին անգլիացիների համար: Այսպես, դեռևս 1918 թ. դեկտեմբերին, բրիտանական ռազմական մինիստրության ներկայացուցիչ Ֆ. Մաունսելը առաջ քաշեց մի այդպիսի նախագիծ, ըստ որի հայկական պետությունը զբաղեցնելու էր Վանա լճից մինչև Սև ծով ընկած տարածքը, իսկ քրդական պետությունը՝ Վանա լճից հարավ ընկած շրջանները:¹⁴³ Բրիտանական մեկ այլ նախագծի համաձայն, առաջարկվում էր քրդական պետություն ստեղծել Ջազիրա-իբն-Օմարից, Նուսայբիցից (Մծբին), Ռաս-էլ-Այնից, Բիրեջիբից հյուսիս ընկած գծով, որի սահմանը այնուհետև եփրատով գնալու էր դեպի հյուսիս՝ իր մեջ ներառելով Խարբերդ, Բիթլիս և Վան վիլայեթները, իսկ ապա ուղղվելու էր դեպի արևելք՝ իրանական սահմանի կողմը:¹⁴⁴ Այլ կերպ ասած, բրիտանական այդ նախագիծով առաջարկվում էր Քրդստան ստեղծել գլխավորապես Արևմտյան Հայաստանի տարածքում: Իսկ 1919 թ. հունիսի 13-ին Բաղդադում բրիտանական քաղաքական ծառայությունը Առնոլդ Վիլսոնի գլխավորությամբ կազմեց մի փաստաթուղթ, որտեղ առաջ էր քաշվում իրաքյան և քրդական հարցերի միաժամանակյա լուծման մի նորացված նախագիծ: Նրանում տեղ էին գտել նաև հայկական ու քրդական առանձին պետությունների ստեղծման ծրագրեր: Այսպես, Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթները պետք է կազմեին հայկական պետություն ամերիկյան հովանու ներքո, իսկ Դիարբեքի, Խարբերդ, Վան և Բիթլիս վիլայեթները՝ քրդական պետություն՝ անգլիական հովանու ներքո: Մոսուլ, Բաղդադ, Բասրա վիլայեթներից կազմվելու էր արաբական պետություն՝ նույնպես բրիտանական հսկողության ներքո: Որպես այս ծրագրի եզակի այլընտրանք, առաջարկվում էր թուրքական տիրապետության վերականգնումը հայկական վեց վիլայեթներում՝ եվրոպական հսկողության ներքո:¹⁴⁵ Դժվար չէ նկատել, որ սա ըստ էության նախապատերազմյան շրջանում մշակված «Հայաստանում իրագործվելիք բարեփոխումներին» վերադարձի մի ծրագիր էր, հստակ քրդամետ հակվածությամբ: Ջարմանալին, սակայն, անգլիացիների քրդամետությունը չէր, այլ այն, որ հենց այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ շփումների ժամանակ անգլիական իշխանություն-

ները գծում էին Հայաստանի միանգամայն այլ, անհամեմատ ընդարձակ սահմաններ:

Բրիտանական կառավարության հաշվարկները հայկական և քրդական հարցերի կապակցությամբ կառուցվում էին նաև այլ սկզբունքների վրա: Անգլիական հետախույզ մայոր Նոյելը, օրինակ, գտնում էր, որ բրիտանական շահերի տեսակետից ավելի նախընտրելի էր քրդերի վրա խաղաթուղթ դնելը: Հայկական պահանջների ընդունումը, նրա կարծիքով, կհանգեցնի մեկ հայի տիրապետությանը տասը քրդերի նկատմամբ: Այսինքն կհաստատվի փոքրամասնության տիրապետություն մեծամասնության նկատմամբ, որն ինքնին անխուսափելիորեն կհանգեցնի վտանգավոր հանգուցալուծումների: Ուստի նա եզրակացնում էր, որ գործնական առումով զերադասելի է, որ մեկ քուրդը իշխի տասը հայերի նկատմամբ: Բրիտանացի հետախույզը դրա մեջ տեսնում էր նաև քաղաքական իմաստ այն առումով, որ ապագայում «վերածնվող» Ռուսաստանը կզրկվեր «հայերին հովանավորելու» իր ավանդական քաղաքականությունը իրազրոծելու հնարավորությունից:¹⁴⁶

Քուրդ ազգայնականները ի սկզբանե (ընդհուպ մինչև մեր օրերը) փայփայել են «Միացյալ անկախ Քրդստանի գաղափարը»,¹⁴⁷ որը ենթադրում էր Իրանական, Իրաքյան և այսպես կոչված «Թուրքական Քրդստանի» միավորում մեկ միասնական քրդական պետական կազմավորման մեջ: Սակայն առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունը և Անտանտի կողմից նրա մասնատման ծրագրերը քուրդ ազգայնականներին բերել էին այն համոզման, որ «Միացյալ» Քրդստանի գաղափարի իրագործումը տվյալ պահին անհնարին է, թեկուզ այն պատճառով, որ ուղղակի բախվում է Մերծավոր ու Միջին Արևելքում եռյակ համաձայնության պետությունների աշխարհաքաղաքական կենսական շահերի հետ: Քուրդ ազգայնականներին թվում էր, թե «թույլ օղակը», որից կարելի էր կառչել, դա Արևելյան Անատոլիայում, այսինքն Արևմտյան Հայաստանի տարածքում, քրդական պետության ստեղծման հնարավորությունն էր, քանի որ այդ տարածքը չէր մտնում բրիտանական շահերի գոտու մեջ: Դա էական խնդիր էր այն առումով, որ քուրդ ազգայնական գործիչները «Անկախ Քրդստանի» գաղափարի իրագործումը կապում էին հիմնականում Անգլիայի հետ:

Այս բոլորի հետևանքով քրդական ազգայնականների քաղաքական ծրագրերի համարյա եզակի օբյեկտ էր դառնում Արևմտյան Հայաստանը, որը հայերի ցեղասպանության հետևանքով դարձել էր մարդաթափ ու ամայի դարձած մի երկիր, մինչդեռ թուրքական հոծ բնակչություն ունեցող բուն Անատոլիայում, նրանց մտայնության համաձայն, անհնարին էր կերտել քրդական պետություն: Քուրդ ազգայնականների կողմից Արևմտյան Հայաստանի նկատմամբ մտասևեռումը պայմանավորված էր

նաև նրանով, որ իբր Թուրքիայում բնակվող քրդերի քաղաքական հասունացման մակարդակը ավելի բարձր էր, քան Իրանական կամ Իրաքյան Քրդստանում, հետևաբար պետականություն ստեղծելու օբյեկտիվ նախապայմանները ևս առկա են հենց այդ տարածքում: Քուրդ ազգայնականների հեռահար ծրագրերում միայն Արևմտյան Հայաստանին էր նախանշված դառնալու «քրդական ազգային զգացման կենտրոն»:

1919 թ. սկզբին, Ստամբուլում, «Քրդստանի վերածնության ընկերության» ներկայացուցիչ «երիտքրդերը» պահանջեցին հայտարարել Քրդստանի անկախության մասին, կոնկրետ չնշելով, թե որ տարածքների վրա էր նախատեսվում ստեղծել այդ «միացյալ Քրդստանը»: Նրանք խնդիր դրեցին նաև «քրդական նահանգներից» վտարել բոլոր օտարերկրյա, այդ թվում նաև թուրքական ուժերին: Ընկերության նախագահ սեյիդ Աբդուլղադերը կտրուկ հանդես եկավ երիտքրդերի այդ առաջարկի դեմ, վկայակոչելով այն հանգամանքը, որ թուրքերը համաձայնվել են ստեղծելու սուլթանից կախում ունեցող ինքնավար Քրդստան (Աբդուլղադերը նկատի ուներ ընկերության ստորագրած պայմանագիրը «Հյուրրիեթ վե իթթիլաֆ») կառավարող կուսակցության հետ): Այնուհետև սեյիդ Աբդուլղադերը խորհուրդ էր տալիս ընկերության երիտասարդ անդամներին մեկնել քրդաբնակ շրջաններ և այնտեղ քարոզչություն մղել ընկերության ծրագրի շրջանակներում, ինչպես նաև բոլոր ուժերով հակազդել ու դիմակայել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի սկզբունքներին համապատասխան անկախ ազգային հայկական պետության ստեղծմանը:¹⁴⁸ Աբդուլղադերը վճռականորեն հանդես էր գալիս հայերի և քրդերի միավորման դեմ հայկական և քրդական հարցերը լուծելու համար: Նա կտրականապես դեմ էր նաև սուլթանաթից ու խալիֆայությունից անկախ քրդական պետության ստեղծմանը:

Քուրդ ազգայնականների կողմից Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում ստեղծվել էին քրդական ակումբներ, որոնց հիմնականում անդամակցում էին քրդական վերնախավի ներկայացուցիչները, բրիտանական հետախույզ Նոյելի արտահայտությամբ «վաճառված ու այլասերված» մարդիկ: Գերտրուդա Բելլը տեղեկացնում էր իր ղեկավարությանը, որ իթթիհադականները աշխատում էին քրդական այդ ակումբները վերածել գործիքի՝ «բրիտանական ինտերվենցիայի և հայերի դեմ մղվող պայքարում», ուստի քրդերին խոստանում էին ինքնավարություն:¹⁴⁹

Այսպիսով, քրդական անկախ պետության ստեղծման գաղափարը դեռևս կատարելապես հստակեցված չէր ոչ միայն քուրդ ազգայնականների, այլև քրդական ցեղապետ-աշիրեթապետերի կողմից: Այդ գաղափարի արծարծումները մեծ պետությունների կողմից ևս ըստ էության կրում էին նախնական դիվանագիտական զոնդաժի բնույթ: Եռյակ համա-

ծայնության պետությունները իրենց առջև խնդիր չէին դրել ստեղծելու «Անկախ Քրդստան»: Հետևաբար քրդերը, համենայն դեպս այդ ժողովրդի այն մասը, որը երազում էր անջատվել Օսմանյան կայսրությունից և ստեղծել իր ազգային պետությունը, մեծ հույսեր էր կապում առաջիկայում գումարվելիք Փարիզի խաղաղության վեհաժողովի հետ:

1919 թ. հունվարի 18-ին փոխադարձ մրցակցության, բախումների, հակասական ծրագրերի և բացահայտ պայքարի պայմաններում բացվեց Փարիզի խաղաղության վեհաժողովը Եռյակ համաձայնության երկրների՝ մի կողմից և Քառյակ դաշինքի պետությունների միջև՝ մյուս կողմից: Նրա բացման մասին Անտանտի բոլոր երկրները արդեն հստակեցրել էին իրենց դիրքորոշումները «թուրքական ժառանգության» հարցի վերաբերյալ: Սակայն հասկանալի է, որ սպասվում էր համառ և անգիջում դիվանագիտական պայքար, քանի որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում առանց մարտի հրաժարվել իր հավակնություններից այն տարածքների նկատմամբ, որոնց տիրապետումը նրանց խոստանում էր կարևորագույն տնտեսական և ստրատեգիական օգուտներ:

Ողջ հայ ժողովուրդը անձկությամբ ու հույսերով սպասում էր Փարիզի վեհաժողովի գումարմանը, նրանից սպասելով բազմաչարչար Հայկական հարցի լուծում: Սակայն Հայաստանի Հանրապետությունը ընդգրկված չէր պատվիրակությունների ցուցակում: Դաշնակից կառավարությունների ղեկավարները որոշել էին, որ վեհաժողովի աշխատանքներին մասնակցելու են միայն պատերազմում հաղթանակած երկրները և այն պետությունները, որոնք խզել էին հարաբերությունները Կենտրոնական տերությունների հետ:¹⁵⁰ Արտահայտելով դաշնակիցների դիրքորոշումը հայերի մասնակցության հարցին, Վուդրո Վիլսոնը նշել էր, որ «Հաշտության վեհաժողովի պատվիրակների մեջ ամեն տեղ ես ամենուրեք առավել անկեղծ և ամմիջական համակրանք են տեսնում հայերի հանդեպ», բայց, ցավոք, «տեխնիկապես շատ դժվար է ներկայացուցչություն հատկացնել քաղաքական միավորների, որոնք դեռևս չեն ընդունվել պետությունների ընտանիք»: Նա դրան ավելացրել էր, որ Հայաստանի դատը առաջ կմղվի այնպիսի առումով, որ համարժեք կլինի հայկական պատվիրակների՝ փաստորեն միստերի դահլիճում գտնվելուն:¹⁵¹ Այս տեսակետը ամենդուրեք էր հայերի համար, որոնք «չէին կարողանում հասկանալ, թե ինչ հիման վրա չէիսերը, լեհերը և արաբները տեղ պետք է ստանային, մինչդեռ մի ժողովրդի, որը զոհաբերել էր իր կեսից ավելին, մերժվում էր տեղ չնորիս Հաշտության վեհաժողովում:¹⁵²

Այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունը Փարիզ ուղարկեց մի պատվիրակություն Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, իսկ մինչ այդ, այնտեղ էր գտնվում Հայկական ազգային պատվիրակությունը Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Այս երկու պատվիրակությունների միջև համաձայնություն կայացավ այն մասին, որ այսուհետև իրենց անհատական ինքնությունը պահպանելով հանդերձ, բոլոր հիմնական հարցերի շուրջ համդես կգան միասնաբար, իբրև «Ամբողջական Հայաստանի պատվիրակություն»: Ընդ որում, Պողոս Նուբարը պետք է ներկայացներ գլխավորապես արևմտահայերին, իսկ Ավետիս Ահարոնյանը՝ արևելահայերին և Հայաստանի Հանրապետությունը:

Քրդերը հատուկ պատվիրակություն չէին ուղարկել Փարիզ: Այնտեղ քրդական հարցի բարձրացմամբ պետք է հանդես գար ծագումով քուրդ, թուրքական բանակի զեներալ Շերիֆ փաշան, որը տարված էր իր ժողովրդի անկախության գաղափարներով: Սակայն նա Փարիզ էր մեկնում «ոչ միայն պառակտված մի շարժում ներկայացնելու համար, այլև մի շարժում, որ տակավին աննշան ու փոքր ազդեցություն ուներ միջին քրդի վրա»:¹⁵³ Իսկապես, իրականության մեջ որոշակիորեն շատ հեռու էր, որ Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր քրդերը փափագեին ունենալու անկախ պետություն: Այդ առթիվ բրիտանական Ֆորին օֆիսը արձանագրում էր, որ «քրդերը ցեղային գիտակցությունից մի քիչ ավելին ունեն և բնավ չունեն ազգային քաղաքականություն»:¹⁵⁴ Այդ նույն հարցի մասին լորդ Քերզընը մտորում էր. «Դժվար է գտնել քրդերի ուզածը... Պոլսում, Բաղդադում և այլուր հարցապնդումներից հետո ես անդրադարձա, որ անկարելի է գտնել ներկայացուցչական մի քուրդ: Ոչ մի քուրդ չի ներկայացնում իր ցեղից ավելին: Շերիֆ փաշան գալիս է իբրև քրդերի ներկայացուցիչ, բայց քրդերը իբրև այդպիսին չեն ընդունում նրան»:¹⁵⁵

Հարկ է նշել, որ դեռևս Փարիզի վեհաժողովին նախորդող շրջանում համակրանքը Հայկական հարցի նկատմամբ չափազանց մեծ էր հաղթանակած պետությունների քաղաքական գործիչների շրջանում: «Հայասերները բոլոր մայրցամաքներում, և՛ կառավարության մեջ գտնվողները, և՛ դուրս կանգնածները, բարձրաձայն պահանջում էին արդարության արագ գործադրում: Ոչ ոք ավելի բարձրագույն չէր որքան ամերիկացիները»:¹⁵⁶ Անկասկած այդ շարժման առաջին շարքերում կանգնած էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը: 1918 թ. հունվարի 8-ին հրապարակված նրա հայտնի «14 կետերի» 12-րդ կետը հավասարապես վերաբերում էր և՛ Հայաստանին և՛ Քրդստանին: Նրանում ասվում էր, որ Օսմանյան կայսրության ոչ թուրքական նահանգները «պետք է ստանան գոյության ոչ երկիմաստ երաշխիքներ և ինքնավար զարգացման բացարձակապես անխախտ պայմաններ»:¹⁵⁷ 1918 թ. մարտին ի պատասխան իրեն ուղղված ամերիկացիների համախոսականի, որտեղ նրանք պրեզիդեն-

տին առաջարկում էին վերցնել Հայաստանի մանդատը, Վուդրո Վիլսոնը առանց տատանումների պատասխանել է, որ «ԱՄՆ-ը կհամաձայնի վերցնել Հայաստանի մանդատը»: Քիչ ավելի ուշ, ապրիլի 22-ին վերստին անդրադառնալով այդ հարցին, պրեզիդենտը ոչ միայն կրկնել է իր հայտարարությունը, այլև նշել, որ «Դուք կարող եք հավատացած լինել, որ ես խոր հետաքրքրություն եմ տածում Հայաստանի ճակատագրի նկատմամբ»:¹⁵⁸

Հայանպաստ հայտարարություններով ու նախաձեռնություններով հանդես էր գալիս նաև Հայաստանի անկախության Ամերիկյան Կոմիտեն (ACTA), որը կազմակերպվել էր 1918 թ. և գլխավորում էր Գերմանիայում նախկին դեսպան Ուաթսոն Ջերարդը: 1918 թ. դեկտեմբերին այդ կազմակերպության անդամներից Հենրի Քեբոտ Լոջը առաջարկեց Սենատի բանաձև, որը պաշտպանում էր անկախ հայկական հանրապետության հիմնադրումը՝ ընդգրկելով Ռուսահայաստանը, Թուրքահայաստանի վեց վիլայեթները և նույնիսկ Հյուսիսային Պարսկաստանի մի շրջան:¹⁵⁹ Նախագահ Վիլսոնը չթաքցրեց իր համակրանքը Ամերիկյան կոմիտեի ծրագրի գրեթե բոլոր կետերին, և առանց երկմտության, հավանություն տվեց հայկական անկախության գաղափարին: Հայասիրական զգացմունքների հեղեղումը ընդհանրաքրեց սենատոր Ուիլյամ Հ. Քինգը. «Հայաստանը պետք է ազատագրվի թուրքական տիրապետությունից և ստանա Դաշնակից տերությունների համակրական աջակցությունն ու հովանավորությունը, մինչև որ կստեղծի ազգային պետության և ինքնիշխանության կառույցները: Հայ ժողովրդին պետք է տրվեն նրա սեփական հողերը, թեկուզ և ավերված ու մարդաբափ: Նյութական, ինչպես և բարոյական օգնություն պետք է հասցվի, որպեսզի նա կարողանա հիմնել առնական և ազատական գործը հանրապետություն»:¹⁶⁰

Դեռևս 1917 թ. հունվարի 22-ին պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը ամերիկյան կոնգրեսի ամբիոնից հայտարարել էր, որ ինքը խոսում է «որչո մարդկության լուռ զանգվածների անունից» և աշխարհի պետական ղեկավարներից ինքը միակ մարդն է, որն արտահայտում է բոլոր ժողովուրդների հույսերը:¹⁶¹ Սեկ այլ առիթով նա հայտարարել է. «Ներկայումս ամբողջ աշխարհը իր հույսերով ու բողոքներով դիմում է Ամերիկային: Սովյալները սպասում են, որ մենք կկերակրենք իրենց, տնանկները հույս ունեն մեզնից ստանալու տանիք, հոգով ու մարմնով հիվանդները մեզնից սպասում են ապաքինում: Այդ բոլորի հույսերի իրագործումը չի հանդուրժում հետաձգում»:¹⁶²

1918 թ. դեկտեմբերի 4-ին Վուդրո Վիլսոնը «Ձորջ Վաշինգտոն» նավով ամերիկյան պատվիրակության հետ մեկնեց Փարիզ, խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար: Ամերիկյան քաղաքական միջոցները պրեզիդենտի համար ուժգին կերպով ստեղծում էին «խաղաղա-

րարի» փառք: Ֆրանսիայի մայրաքաղաքը նրան դիմավորեց բացառիկ հանդիսավորությամբ: Մամուլը չէր խնայում գովեստի խոսքեր պրեզիդենտի հասցեին: Սոցիալիստների օրգան «Յունամիտե» թերթը գրեց, որ բոլոր պետական գործիչներից միայն նա գիտի, «թե ինչպես պետք է խոսել բարի կամքի, մարդկայնության և միջազգային արդարության լեզվով»:¹⁶³ Վիլսոնի ժամանան օրը Փարիզում հայտարարվեց տոնական օր: 20 րոպե շարունակվում էր հրետանային համազարկը ի պատիվ ԱՄՆ-ի պրեզիդենտի: Վիլսոնի և նրա տիկնոջ տրամադրության տակ դրվեց Փարիզի գեղեցկագույն շենքերից մեկը՝ Մոնսո զբոսայգում Մյուրատի առանձնատունը: Նրան հանձնվեց ոսկյա գրիչ «արդար, մարդասիրական ու կայուն խաղաղություն կնքելու համար»:

ԱՄՆ-ի պրեզիդենտը հույսեր էր փայփայում վեհաժողովում հաղթողների և պարտվածների միջև գրավել դատավորի դեր, իր հայտնի «14 կետերը» վերածելով պատվիրանների, որոնք ի վիճակի են ստեղծելու այնպիսի մի աշխարհ և ժողովուրդների միջև հարաբերություններում այնպիսի մի կարգ, որը ձեռնտու էր ԱՄՆ-ին: Նա վստահ էր, որ իրեն հնարավորություն է տրված անմիջականորեն դիմելու ժողովուրդներին նրանց կառավարությունների գլխի վրայով:¹⁶⁴

Փարիզի վեհաժողովի առջև դրված էին երկու գլխավոր խնդիրներ. հաշտության պայմանագրեր կնքել պատերազմում պարտված պետությունների, այդ թվում նաև Թուրքիայի հետ և որոշել հետպատերազմյան խաղաղության պայմանները: Վեհաժողովի նախագահին էր Ֆրանսիայի վարչապետ ժորժ Կլեմանսոն: Վեհաժողովում տոն տվող պետություններն էին ԱՄՆ, Սեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան:

1919 թ. հունվարի 18-ին 4ե դ՝ Օրսե գետափնյա ֆրանսիական արտաքին գործերի մինիստրության շենքում 27 պետությունների պատվիրակներ հավաքվեցին առաջին լիազուար նիստի: Այն բաց արեց Ֆրանսիայի պրեզիդենտ Ռայմոն Պուանկարեն: Փարիզում ԱՄՆ-ի դիրքերը չափազանց ուժեղ էին:

Ձևականորեն խաղաղության պայմանագիրը կառուցվում էր Վուդրո Վիլսոնի «14 կետերի» հիմքի վրա: Այդ մասին չխորշեցին հայտարարել երկու հակառակորդ խմբավորումները: ԱՄՆ-ի պրեզիդենտը խոսում էր քաղաքականության մեջ «նոր ոգու» մասին: Վեհաժողովում Վիլսոնի գլխավոր հակառակորդը Կլեմանսոն էր: Համաշխարհային հարաբերությունների ապագա կառուցման երկու հակադիր ծրագրեր մաքառում էին միմյանց հետ՝ Վիլսոնի «14 կետերը» և Կլեմանսոնի «Կարթագենյան խաղաղությունը»: Բնութագրելով Վիլսոնի գործունեությունը խաղաղության վեհաժողովում, մի շարք հեղինակներ հայտնել են այն կարծիքը, որ ԱՄՆ-ի նախագահը հանդիսանում էր «լույսի և բարության» մարմնավորումը, այն դեպքում, երբ Կլեմանսոն մարմնավորում էր «խավարի ու չա-

րության» ուժերը: Առհասարակ առ այսօր ամերիկյան նախագահի գործունեությանը Փարիզի վեհաժողովի ժամանակ տրվում են տարբեր և շատ դեպքերում հակասական գնահատականներ: Ամերիկացի Ջ. Քեյնսը, օրինակ, գրում է, որ Վիլսոնը «չէր հանդիսանում ոչ հերոս և ոչ էլ մարգարե»: Նա պրեզիդենտին բնութագրում է որպես «նոր Դոն-Կիխոտ, կույր և խուլ»:¹⁶⁵ Սա անշուշտ ծայրահեղ տեսակետ է:

«Ծեր վագր» հորջորջված Կլեմանսոն Հարոլդ Նիկոլսոնի վկայությամբ, բոլոր հպատակ ազգերի հետ վարվում էր «խելահեղ կոպտությամբ»:¹⁶⁶ Նա Վիլսոնի առաքելությանը նայում էր միանգամայն այլ աչքով: Օրինակ, «14 կետերը» նա դիտում էր որպես քարոզչական կարգախոսներ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից գովաբանվող «ժողովուրդների դաշինքը» համարում էր գրքային մարդու միամիտ երազանք: Նշելով, որ անձամբ ինքը բարձր է գնահատում Վիլսոնի գաղափարները, Կլեմանսոն անմիջապես ավելացնում էր, որ սակայն արդեն երկու հազար տարի առաջ «Քրիստոսը ևս քարոզում էր գաղափարներ, գործնականում ցույց չտալով, թե ինչպես կարելի է դրանք կյանքում կենսագործել: Ֆրանսիայի վարչապետը սակայն հեռու էր այն մտքից, որ ԱՄՆ-ի պրեզիդենտը սին պատրանքների մեջ գտնվող Դոն-Կիխոտ է: Նրա մի քանի շտրիխներով վարպետորեն գծել է Վիլսոնի կերպարը, նրան ներկայացնելով որպես ամերիկյան պրագմատիզմի տիպիկ ներկայացուցիչ: Նրա կարծիքով քաղաքականության մեջ Վիլսոնը բնավ իդեալիստ չէ, այդ բառի հանրահայտ իմաստով: «Իդեալիստը դա այն մարդն է, – գրում է Կլեմանսոն, – որ սոցիալական շենքը կառուցում է իր իդեալին համապատասխան: Իսկ Վիլսոնը՝ գործնական մարդ է, որը սկզբում իր համար կառուցում է մի լավ տուն, չափազանց ընդարձակ, միանգամայն լավ հիմքի վրա, և երբ տունն արդեն պատրաստ է, նրա կատարին նա ամրացնում է իր «գաղափարը» ճիշտ այնպես, ինչպես պատշարները այնտեղ ամրացնում են իրենց դրոշակը»:¹⁶⁷

Փարիզում Կլեմանսոնի կողքին էր գտնվում ճկուն, դյուրաշարժ և սուր մտքի տեր Լյուդ Ջորջը: Նա խոստովանել է, որ թեև Վիլսոնի «14 կետերը» իրենք ընդհանուր առմամբ ընդունում էին որպես գործունեության ուղեցույց, սակայն շարժվում էին իրենց ուրույն ճանապարհով: «Դաշնակիցներից և ոչ մեկը Վիլսոնի հռչակագիրը իր հիմնական հարցադրումներով չէր համարում իրենց սեփական հռչակագրերին հակասող մի բան, – գրում է նա, – թեև դաշնակցային տերություններից և ոչ մեկը ձևականորեն այն երբեք չէր ընդունում և այդ «14 կետերը» չէին կազմում դաշնակիցների պաշտոնական քաղաքականությունը»:¹⁶⁸ Այլ կերպ ասած, մենք «կողմ ենք», բայց միշտ հետապնդելու ենք սեփական շահերը: Հենց այս սկզբունքով էլ Փարիզում գործում էին անգլիացիները և Անտանտի գծով նրանց դաշնակիցները: Միանգամայն ակնհայտ է, որ երբ Վիլսոնը մեծակ

մնաց Կլեմանտոյի և Լլոյդ Ջորջի հետ, նրա վերամբարձ խոսքերը բարձր գաղափարների մասին նրանց վրա տպավորություն չգործեցին: Սակայն մինչև վերջ նա տեղի չտվեց ու չնահանջեց:

Ահա այս միջավայրում եվրոպական դիվանագիտության սադրանքների մեջ անփորձ ԱՄՆ-ի պրեզիդենտը կանգնած էր մեծ բարդությունների առաջ: Ընդ որում, Վաշինգտոնում նախագահի խախուտ դիրքերը Փարիզում հեշտացնում էր նրա ընդդիմախոսների խնդիրը: Վիլսոնը, որը սովորել էր երկրներին ու ժողովուրդներին դիմել մինիստրների ու կառավարությունների գլխի վրայով, վեհաժողովում սկսեց զգալ, թե ինքը որքան կաշկանդված է իր գործողություններում և որքան իր իշխանությունը սահմանափակված է հանրապետական մեծամասնության առաջնորդ և սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Յենրի Կեբոթ Լոջի ուժեղ ձեռքի հետևանքով: Խաղաղության վեհաժողովում ԱՄՆ-ի պատվիրակության մեջ միակ հանրապետականի՝ Ուայթի միջոցով, Լոջը գրավոր ձևով, խիստ գաղտնապահորեն, տեղեկացրել էր Կլեմանտոյին և Բալֆուրին, որ Փարիզում Վիլսոնի հետ սակարգությունների ժամանակ նրանք կարող են կատարելապես հույս դնել Վաշինգտոնում սենատի մեծամասնության աջակցության վրա: Իսկ Լոջի զինակից, նախկին պրեզիդենտ Թ. Ռուզվելտը 1918 թ. նոյեմբերի 27-ին, իր մահվանից վեց շաբաթ առաջ, և Վիլսոնի Փարիզ մեկնումից ութ օր առաջ, հայտարարեց. «Մեր դաշնակիցներն ու մեր թշնամիները, և, վերջապես ինքը Վիլսոնը պետք է հասկանային, որ ներկայումս Վիլսոնը բացարձակապես լիազորված չէ խոսելու ամերիկյան ժողովրդի անունից»:¹⁶⁹

Դժվար չէ նկատել, որ Փարիզում սակարգությունը գնում էր ոչ թե հաղթողների ու պարտվածների միջև, այլ հենց իրենց՝ հաղթողների միջև: Յենց նկատի առնելով բուն Ամտանտի երկրների ճամբարում առկա լուրջ տարածայնությունները, Կլեմանտոն մտավախություն ուներ, որ հակառակորդը կօգտվի հաղթողների շրջանում տիրող այդ տարածայնություններից, ինչպես հարյուր տարի առաջ դա կարողացավ անել Թալեյրանը Վիեննայում:

1919 թ. մարտի 20-ի գաղտնի նիստում Վիլսոնը առաջին անգամ տեղեկանում է Թուրքիայի բաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագրերի, մասնավորապես 1916 թ. Սայքս-Պիկո պայմանագրի գոյության մասին: «Սայքս-Պիկո, – հետագայում ոչ առանց հեզմանքի նշել է նա, – դա հնչում է որպես թեյի վաճառքի նոր ընկերություն, գաղտնի դիվանագիտության տիպիկ օրինակ»: Դրսևորելով գաղտնի պայմանագրերի վերաբերյալ իր կտրուկ բացասական վերաբերմունքը, այդ նիստի ժամանակ Վիլսոնը հայտարարեց, որ ինքը չի ճանաչի տարածքային հավակնությունները, եթե դրանք հիմնված չեն կառավարվողների համաձայնության վրա:

Ի դեպ, Ստեննարդ Բեքերի գիրքը,¹⁷⁰ որը շարադրված է պրեզիդենտ Վիլսոնի անձնական արխիվի հիմքի վրա, տալիս է եզակի և անգնահատելի հնարավորություն բացահայտելու վեհաժողովի գաղտնի զսպանակները, քանի որ նրա գլխավոր մարմնի, այսպես կոչված «Մեծ քառյակի» (Big Four) արձանագրությունների մեծ մասը մեզ չի հասել:

Դեռևս մինչև Փարիզի վեհաժողովը ամերիկյան կառավարությունը ընդհանուր գծերով մշակել էր իր «թուրքական», «հայկական» և «քրդական» հարցերի հիմնական սկզբունքները: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 21-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգը պրեզիդենտ Վիլսոնին ներկայացրեց 29 կետից բաղկացած մի ծավալուն հուշագիր, որը նախատեսված էր ծառայել որպես ուղեցույց ամերիկյան ներկայացուցիչների համար խաղաղության տարածքային պայմանները մշակելիս: Լանսինգը առաջարկում էր սահմանափակել Օսմանյան կայսրությունը Անատոլիայի տարածքով (ընդ որում նշելով, որ դա պահանջում է հավելյալ քննարկում), իսկ Կոստանդնուպոլիսը վերածել «միջազգային հովանավորության գոտու», նրա կառավարման ձևի որոշումը հանձնելով միջազգային հանձնաժողովի, կամ մի կառավարության, որը հանդես գար որպես տերությունների կողմից մանդատը ներկայացնող կողմ:¹⁷¹ Այդ շրջանում Վիլսոնը դեռևս տատանվում էր Թուրքիան եվրոպայում թողնել չթողնելու հարցում: Խոսքը վերաբերում էր նրան, թե Կ. Պոլիսը պետք է մնա՞ թուրքական տիրապետության ներքո թե ոչ: Նա ևս գտնում էր, որ այդ հարցը պահանջում է հատուկ քննարկում:

1918 թ. մարտի 20-ին Փարիզի վեհաժողովին նախապատրաստվելու շրջանում ԱՄՆ-ի պետ. դեպարտամենտը պատրաստել էր ևս մի փաստաթուղթ հայկական և քրդական հարցերի վերաբերյալ, որը պարունակում էր հետևյալ հարցադրումները. հայկական տարածքների սահմանների որոշումը, քրդերի կողմից հավակնություն ներկայացվող շրջանների ուսումնասիրումը և առհասարակ տեղական էթնիկական խմբերի, մասնավորապես քրդերի և նեստորականների հետ կապված խնդիրների քննությունը և այլն:¹⁷²

Ուշագրավ է նշել, որ դեռևս մինչև խաղաղության վեհաժողովի աշխատանքները սկսելը Վուդրո Վիլսոնը հանգել էր այն տեսակետին, որ Արևմտյան Չայաստանում ցեղասպանություն ապրած ժողովրդի վրա դեռևս կախված է վերջնական ոչնչացման սպառնալիքը: Ուստի նա գտնում էր, որ եթե դաշնակցային զորամասեր չուղարկվեն Չայաստան, ապա «հայերը կթողնվեն քրդերի ողորմածությանը»:¹⁷³ Այդ պատճառով երբ պրեզիդենտը 1918 թ. դեկտեմբերի 13-ին ժամանեց Փարիզ, Լլոյդ Ջորջը և Ա. Բալֆուրը նրան հարցրին. «Ո՞վ է իր վրա վերցնելու այն բեռը, որ մի զույգ դիվիզիա կամ այլ անհրաժեշտ զորքեր ուղարկվեն հայերին կտորածներից պաշտպանելու համար»: Վիլսոնը պատասխանեց, որ

անհրաժեշտ է սպասել մինչև Ազգերի լիգայի ստեղծումը: «Այն ժամանակ, – ասաց նա, – Միացյալ Նահանգները, հավանաբար, կդրսևորեն մեծ պատրաստակամություն մանդատի հիմքի վրա այդ երկրի գործերին միջամտելու համար»:¹⁷⁴ Այլ կերպ ասած, որպես օրակարգային հարց, քննարկվում էր Արևմտյան Հայաստան գործեր ուղարկելու և այդ երկրամասը ռազմակալման ենթարկելու խնդիրը:

Փարիզի վեհաժողովի սկզբնական շրջանում թուրքական հարցը ընդհանրապես առանձին քննարկման չէր ենթարկվում: Այն հանդիսանում էր մի յուրատեսակ «մանրադրամ» այլ հարցերի, գլխավորապես եվրոպական խնդիրների հետ առնչվող հարցերի քննարկման ժամանակ: Սակայն թեև թուրքիան պարտված պետություն էր, հնարավոր չէր նրան հաշվից դուրս գցել, մանավանդ որ այդ ժամանակ թուրքական կառավարությունը դեռևս ի վիճակի էր ազդել Արևելյան Անատոլիայի հայ և քուրդ բնակչություն ունեցող շրջանների իրադրության վրա:

Փարիզի վեհաժողովում օսմանյան շահերը պաշտպանելու համար Ֆրանսիայի մայրաքաղաք էին մեկնել մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան և նախկին մեծ վեզիր Թեվֆիկ փաշան: Այդ առթիվ Մուստաֆա Բենալը գրում էր. «Նորին գերազանցություն մեծ վեզիրը, անկասկած, բոլոր ջանքերը կգործադրի կոնֆերանսում օտտոմանյան շահերը պաշտպանելու համար: Այդ շահերի մեջ, որոնց պաշտպանությունը բացարձակապես անհրաժեշտ է ազգի համար, առկա են երկու հիմնական կետեր, 1. պետության ու ազգի լրիվ անկախությունը, 2. երկրի այն մասերում, որոնք իրենց կազմով գերազանցապես թուրքական են, մեծամասնությունը չպետք է զոհաբերվի փոքրամասնությանը: Անհրաժեշտ է, որ այդ երկու կետերի կապակցությամբ գոյություն ունենա կատարյալ համաձայնություն Փարիզ մեկնող պատվիրակության ծրագրի և ազգային զիտակցության ձևական պահանջների միջև: Հակառակ դեպքում ազգը կարող է հայտնվել ողբալի վիճակի մեջ և կանգնել մի շարք անուղղելի փաստերի առջև»:¹⁷⁵

Թուրքական պատվիրակությունը մեկնում էր Փարիզ, իր հետ չտանելով հայկական և քրդական հարցերի լուծման որևէ նախագիծ: Թուրքական կառավարությունը պարզապես չուներ այդ օրախնդիր հարցերի վերաբերյալ որևէ ծրագիր, կամ թեկուզ գաղափար, քանի որ նրա կարծիքով լավագույն տարբերակը իրերի վիճակը անփոփոխ թողնելն էր, կամ ստատուս-քվոյի պահպանումը:

Վերջապես 1919 թ. հունիսի 17-ին Դամադ Ֆերիդ փաշային թույլատրվեց հանդես գալ վեհաժողովում: Նա փորձում էր օգտագործել Վիլսոնի «14 կետերը» ի շահ կայսրության ամբողջականության պահպանման: Նա երիտթուրքերի կողմից քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ, իրականացված հանցագործությունները հավասարեց-

նում էր այն աղետների հետ, որոնք պատերազմի ժամանակ բաժին էին ընկել «երեք միլիոն մահմեդականներին»: Սակայն Ֆերիդ փաշայի ճարպիկ «փաստարկումները» ոչ մի ազդեցություն չգործեցին վեհաժողովի մասնակիցների վրա: Կլեմանսոն նշեց, որ մեծ վեզիրը «բոլորովին չի որոնում ներողության խոսքեր կառավարության (երիտթուրքական – Վ. Բ.) գործած ոճիրների համար»: Միաժամանակ նա վճռականորեն մերժեց Ֆերիդ փաշայի այն պնդումը, թե իբր «Թուրքիան միշտ լավ վերաբերմունք է ունեցել իր հպատակ ազգերի նկատմամբ, որ Օսմանյան կայսրության պահպանումը անհրաժեշտ է աշխարհի կրոնական հավասարակշռության պահպանման համար, որ քաղաքակրթությունը և արդարությունը պահանջում են անփոփոխ թողնել Օսմանյան կայսրության նախապատերազմյան տարածքները և այլն: «Ոչ վերոպայում և ոչ էլ Ասիայում անհնարին է գտնել մի երկիր, որտեղ թուրքական կայսրության տիրապետության ընթացքում չնվազեր նրա նյութական բարեկեցությունը և ամբողջովին անկման չենթարկվեր նրա նյութական մակարդակը: Թուրքիայի նորագույն պատմությունը չի կարելի համարել ուրախության ու հպարտության ակունք», – այսպիսի բառերով էր եզրափակում իր խոսքը Կլեմանսոնը:¹⁷⁶

Հունիսի 23-ին թուրքական պատվիրակությունը դաշնակիցներին ներկայացրեց մի հուշագիր, որտեղ հստակեցվում էին Ստամբուլի տեսակետները Օսմանյան կայսրության առանձին մասերի հետագա ճակատագրի վերաբերյալ: Այդ փաստաթղթում ոչ մի հիշատակություն չկար Կոստանդնուպոլսի և նեղուցների վերաբերյալ, իսկ Հայաստանի մասին խոսելու մշուշապատ կերպով ասվում էր, որ «թե երևանում ստեղծված Հայկական Հանրապետությունը» ճանաչվի դաշնակիցների կողմից, ապա օսմանյան պատվիրակությունը կհամաձայնվի քննարկել (ad referendum) նրա հետ սահմանային գիծը»:¹⁷⁷

Փարիզի վեհաժողովում թուրքական պատվիրակությունը ամեն կերպ աշխատում էր համոզել դաշնակիցներին, որ կայսրության կազմում պահպանվեն նրա ասիական տիրույթները: «Տավրոսի լեռնաշղթան, – հայտարարեց Ֆերիդ փաշան, – ավելին չէ, քան երկրաբանական սահմանագատման գիծ: Նրա մյուս կողմում գտնվող շրջանները, Միջերկրական ծովից մինչև Արաբական ծով, թեև պատկանում է մի բնակչության, որը չի խոսում թուրքերեն լեզվով, սակայն զգացումներով անխզելիորեն կապված է Կոստանդնուպոլսի հետ, և այդ զգացումները ավելի խորքային են, քան լեռնաշղթայի երկու կողմերում բնակվող մարդկանց ազգային սկզբունքները. նրանց կապում են միևնույն իդեալները, հայացքները, բարոյական զգացումներն ու նյութական շահերը: Դա մի միասնական կառույց է և նրա տրոհումը կործանարար կլինի Արևելքում խաղաղության ու հանգստության համար»:¹⁷⁸

Սակայն Դամադ Ֆերիդ փաշայի հուշագիրը և առհասարակ նրա բերած փաստարկները ամբողջապես մերժվեցին վեհաժողովի կողմից: Վուդրո Վիլսոնը հանդես եկավ կտրուկ հայտարարությամբ. «Մենք նրանց լսեցինք, սակայն նրանք դրսևորեցին առողջ դատողության կատարյալ բացակայություն... Նրանք կարծում էին, թե կոնֆերանսը բոլորովին անտեղյակ է պատմությանը և պատրաստ է կուլ տալու աներևակայելի սուտը»: «Ավելի լավ է, որ թուրքերը մեկնեն Փարիզից»,¹⁷⁹ – եզրափակում էր իր խոսքը պրեզիդենտը:

«Չորսի խորհուրդը» օսմանյան պատվիրակությանը պատասխանեց մի նոտայով, որտեղ աներկիմաստ ձևով ասվում էր, որ թուրքերը չեն կարող հույս դնել դաշնակիցների ներդրամտության վրա, որ նրանք առհասարակ «ընդունակ չեն կառավարելու այլ ռասաների» և ընդհանրապես «երբեք ընդունակություն չեն դրսևորել խաղաղ ճանապարհով զարգացնելու այն, ինչ ձեռք են բերել ռազմական ճանապարհով»:¹⁸⁰

Իր ելույթում Բալֆուրը հանգամանորեն ծանրանալով բոլոր ոչ թուրք ժողովուրդների համար թուրքական տիրապետության կործանարար լինելու հանգամանքի վրա, մասնավորապես նշեց. «...Քանի որ Թուրքիան առանց որևէ պատճառի ու հրահրման կանխատեսված ձևով հարձակվել է Անտանտի պետությունների վրա և արդյունքում կրել է պարտություն, հաղթողների վրա ընկել է ծանր պարտականություն որոշելու բազմազեղ կայսրության տարբեր ժողովուրդների ճակատագիրը: Գլխավոր դաշնակցային և միացյալ տերությունների խորհուրդը ցանկանում է իր այդ պարտականությունը կատարել այդ ժողովուրդների ցանկություններին և մշտական շահերին առավելագույն համապատասխանությամբ»:¹⁸¹

Քեմալականները, որոնք ուշի-ուշով հետևում էին Փարիզի վեհաժողովի աշխատանքներին, խիստ դժգոհ էին, որ Դամադ Ֆերիդ փաշայի բերանով արձարծվել է Հայաստանի վերաբերյալ հարցը: «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության» ընկերության ներկայացուցչական կոմիտեի անունից հրապարակված ուղերձում, ուղղված Ստամբուլի բնակչությանը, Մուստաֆա Քեմալը գրում էր, որ Ստամբուլի սուլթանական կառավարությունը Փարիզի կոնֆերանսում մեծ վեզիրի բերանով հայտարարել է, որ ինքը դեմ չէ, որ «արևելյան նահանգներում ստեղծվի ծավալուն Հայաստան»: «Արևելյան վիլայեթների բնակչությունը շատ է դառնացած այդ փաստով և իրեն պարտավորված է համարում պահանջել բացատրություններ», – նշում էր Մ. Քեմալը:¹⁸² Իրականում Ֆերիդ փաշան Փարիզում ոչ թե համաձայնություն էր տվել «ծավալուն Հայաստան» ստեղծելու վերաբերյալ, այլ համաձայնվել էր հայկական ինքնավարության սկզբունքին:¹⁸³

1919 թ. մայիսի 21-ի «Երեքի» նիստում Լլոյդ Ջորջը առաջ քաշեց թուրքական հարցի կարգավորման նոր տարբերակ: Նա հայտնեց իր կատարյալ պատրաստականությունը ոչ միայն հաստատելու իր նախկին որոշումը ԱՄՆ-ին փոխանցելու Կ. Պոլսի, նեղուցների և Հայաստանի (Վիլիկիայով հանդերձ) «լրիվ մանդատը», այլև լրացուցիչ կերպով ԱՄՆ-ին տրամադրել Անատոլիայի նկատմամբ, ինչպես նաև Ռուսահայաստանի, Ադրբեջանի և ողջ Կովկասի շրջանի «ժամանակավոր մանդատը», մինչև «ռուսական պրոբլեմի լուծումը»:¹⁸⁴ Այսպիսով, այդ «միասնական մանդատի» տարածքն ընդգրկելու էր Կ. Պոլսից ու նեղուցների գոտուց մինչև Բաբու ընկած շրջանները, իր մեջ ներառնելով նաև ողջ «Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը»:

«Հայաստանի և Կ. Պոլսի նկատմամբ մանդատների հեռանկարը համապատասխանում էր նախագահ Վիլսոնի իդեալներին: Նրան հարկ չկար համոզելու», – գրում էր Լլոյդ Ջորջը:¹⁸⁵ Իսկապես Վիլսոնը հաճույքով համաձայնվեց վերցնել այդ տարածքների նկատմամբ մանդատի իրավունքը, սակայն զգուշորեն վերապահում անելով, որ այդ հարցը պետք է վերջին հաշվով լուծի ամերիկյան ժողովուրդը: Վիլսոնյան «Կ. Պոլսից մինչև Կովկաս» միասնական մանդատի տեսակետը խարսխված էր այն հիմնարար գաղափարի վրա, որ տարածաշրջանում տարբեր ազգերի ու ժողովուրդների, հետևաբար տարբեր շահերի գոյությունը, պարտադիր պայման է առաջադրում, որ այդ վիթխարի տարածքը գտնվի մեկ ուժային կենտրոնի հովանավորության տակ, այլապես խաղաղությունը մշտապես կբացակայի աշխարհի այդ պայթյունավտանգ գոտուց: «Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնաժողովի» ամերիկացի անդամներ Չենրի Քինգը և Չարլզ Կրեյնը այդ միտքը ձևակերպում էին հետևյալ կերպ. «Փոքր Ասիայում տարբեր պետությունների պրոբլեմները խիստ փոխկապակցված են, որպեսզի հնարավոր լինեն հովանավորությունը հանձնարարել տարբեր մանդատներին, որոնք անխուսափելիորեն միմյանց հետ կմտնեն բախման մեջ»:¹⁸⁶

Ամերիկացիները նաև այն կարծիքին էին, որ տնտեսական տեսակետից Փոքր Ասիան և Անդրկովկասը իրենցից ներկայացնում են մի անբաժանելի ամբողջություն, որը հոգատար մանդատների տեսակետից անկարելի է բաժանել:¹⁸⁷ Գեներալ Ջեյմս Հարբորդի առաջելության կարծիքով¹⁸⁸ միասնական մանդատի դեպքում «հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ»: Վերջապես Հարբորդի հանձնաժողովի կարծիքով, Հայկական հարցը կարելի էր լուծել միայն այն դեպքում, երբ ողջ Փոքր Ասիան գտնվեր մեկ պետության տվյալ դեպքում ԱՄՆ-ի հովանավորության տակ:

Անատոլիայի մանդատը ամերիկացիներին հանձնելու որոշման դեմ դժգոհության ձայներ հնչեցին միայն ֆրանսիական պատվիրակու-

յան կողմից: Կլեմանտնոսն դժգոհում էր, որ ինքը տվեց Մոսուլը, տվեց Պաղեստինը, ոչ մի կերպ չի կարողանում ստանալ Սիրիան, իսկ այժմ իրեն զրկում են նաև Անատոլիայից: Նա նույնիսկ համարձակվեց նկատել, որ «վտանգավոր է ԱՄՆ-ին մտցնել Փոքր Ասիա»: Ծաղրի ենթարկելով Վիլսոնի և Լլոյդ Ջորջի «ճամարտակութունները» «մահմեդական աշխարհի նշանակության մասին», Կլեմանտնոսն հայտարարեց, որ Կ. Պոլսից ու Հայաստանից բացի եթե Ամերիկային տրվի նաև նրանց միջև ընկած Անատոլիան, ապա դա առաջ կբերի «պառակտում ողջ եվրոպական աշխարհում»:¹⁸⁹

Ֆրանսիայի վարչապետը առիթը չկորցրեց թունոտ հեզմանքով դիմելու Վիլսոնին. «Երբ դուք դադարեք նախագահ լինելուց, մենք ձեզանից կսարքենք Մեծ թուրք» (ժամանակին եվրոպայում այդպես էին անվանում սուլթանին – Վ. Բ.):

Գաղտնիք չէ, որ Մերձավոր Արևելքում անգլիական բաղձանքների գլխավոր օբյեկտը Կ. Պոլիսն էր և նեղուցները: Սակայն դրանց նկատմամբ մանդատը առաջարկելով ԱՄՆ-ին, ըստ էության Լոնդոնը ծրագրել էր բազմաբայլ մի կոմբինացիա: Ամենայն հավանականությամբ նրա այդ առաջարկը կրում էր փորձաքարի բնույթ: Միանգամայն հնարավոր է, որ Ամերիկայի մերժումից հետո նախատեսվում էր բարձրացնել անգլիական մանդատի վերաբերյալ հարցը:

Առհասարակ Փարիզի վեհաժողովում առավել բարդ խնդիրը ոչ թե «օտտոմանյան ժառանգության» անգլիական կամ ֆրանսիական, այլ ամերիկյան բաժնի որոշումն էր: Նկատի ունենալով, որ այդ վեհաժողովում ԱՄՆ-ը ակտիվ ու եռանդուն հետաքրքրություն էր դրսևորում մերձավորարևելյան գործերի նկատմամբ և սկսել էր հավակնել ղեկավար դերի «թուրքական խնդիրը» լուծելու հարցում, Անգլիան և Ֆրանսիան դիմում էին ճարպիկ դիվանագիտական խուսանավումների Վաշինգտոնի հետ բաց առճակատումից խուսափելու համար: Նրանք միանգամայն հանգիստ էին ընկալում ամերիկյան այդ ակտիվությունը, որովհետև ամերիկացիները հենց սկզբից հավակնություններ չէին ներկայացնում Օսմանյան կայսրության արաբական տիրույթների նկատմամբ, իսկ ամենակարևորը նրանք Մերձավոր Արևելքում չունեին ոչ մի զինվոր, հետևաբար այդ տարածաշրջանում նրանց կողմից որևէ տարածքի ձեռք բերումը գործնականում հնարավոր չէր: Բացի այդ, պրեզիդենտ Վիլսոնի քաղաքական դիրքերը հենց բուն Միացյալ Մահանգներում այդ ժամանակ լրջորեն թուլացել էին. նրա երկրորդ նախագահական ժամկետը արդեն ավարտվելու վրա էր. 1918 թ. միջանկյալ ընտրությունների հետևանքով նրա կողմից ղեկավարվող Դեմոկրատական կուսակցությունը կոնգրեսի զույգ պալատներում կորցրեց մեծամասնությունը. երկրում և Կապիտոլիում աճում էր ընդդիմությունը նրա արտաքին քաղաքականության

նկատմամբ, որը հասարակական կարծիքի և կառավարող վերնախավի ազդեցիկ ուժերի կողմից գնահատվում էր որպես ծախսատար, թանկ և ոչ արդյունավետ:

Անշուշտ բազմափորձ ու թրժված քաղաքական գործարարներ Լլոյդ Ջորջը և Կլեմանտնոսն հասկանում էին այդ բոլորը և չէին հապաղում ի շահ իրենց օգտվել այդ բոլորից: Ի վերջո նրանց այդ հաշվարկները ճիշտ դուրս եկան: Ինչպես հայտնի է, 1919 թ. նոյեմբերի 19-ին ամերիկյան սենատը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ մանդատը վերցնելուց: Դրանից հետո, 1919 թ. դեկտեմբերի սկզբից, ամերիկյան պատգամավորները գործնականում դադարեցրին իրենց մասնակցությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի աշխատանքներին: Ըստ էության ամերիկյան սենատում վերոհիշյալ քվեարկությունը իրենով նշանավորում էր նաև քաղաքական ավելի խոշոր նշանակություն ունեցող երևույթի հաստատագրում. դա այն էր, որ ԱՄՆ-ը հեռանում էր «Վերսալյան համակարգին» մասնակցություն բերելուց: Սա նշանակում էր նաև, որ Օսմանյան կայսրության բաժանման հարցը վերադարձավ իր ելակետային դիրքին (1916 թ. Սալթս-Պիկոյի պայմանագիրը) և որպես գործող անձիք ասպարեզում դարձյալ մնում էին Անգլիան և Ֆրանսիան, որոնց միջև դիվանագիտական սակարկությունները ժամանակ առ ժամանակ ընդունում էին միմյանց նկատմամբ զենք շաչեցնելու բնույթ:

Քրդական հարցի մասին Փարիզի վեհաժողովում առաջին անգամ խոսակցություն գնաց 1919 թ. հունվարի 29-ին: Այդ օրը այսպես կոչված «Տասի խորհրդին» ներկայացվեց բրիտանական պատվիրակության անդամ, հարավաֆրիկյան ակամավոր ռազմական ու քաղաքական գործիչ, գեներալ Յան-Քրիստիան Սմեթսի (Սմաթս) կողմից մշակված բանաձևը, որտեղ ասվում էր, որ իրենց ողջ պատմության ընթացքում թուրքերը չափազանց վատ են կառավարել իրենց իշխանության ներքո գտնվող ժողովուրդներին: Իսկ ոչ վաղուցվա անցյալում նրանք ահավոր կոտորածների են ենթարկել հայերին և այլ ժողովուրդների: Ուստի «դաշնակից ու չմիացված պետությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Քրդստանը, Պաղեստինը և Արաբիան պետք է կատարելապես անջատվեն թուրքական կայսրությունից»:¹⁹⁰ Ընդ որում, Պաղեստինը և Հայաստանը Սմեթսը առանձնացնում էր որպես առանձնահատուկ տեսակի տարածքներ, «քանի որ նրանց բնակչությունը խիստ տարասեռ ու բազմազան է և ընդունակ չէ համագործակցության: Ուստի, – նշում էր բանաձևի հեղինակը, – տվյալ դեպքում նրանց ինքնավար կառավարումը բառի ամբողջական իմաստով բացառվում է և այն կարող է իրականացվել միայն որևէ արտաքին իշխանության կողմից»:¹⁹¹

1919 թ. հունվարի 30-ին բանաձևը ենթարկվեց համակողմանի քննարկման: Այդ նիստում ներկա գտնված Դ. Միլլերը նշում է, որ քննարկ-

ման մասնակիցները, մասնավորապես Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդոն, հայտնել են այն կարծիքը, որ Հայաստանի և Քրդստանի մասին հիշատակումը կարող է տեղիք տալ մեծ դժվարությունների: ¹⁹² Ուշագրավ է նշել, որ նախնական բանաձևում «Քրդստան» բառը չի եղել: Լլոյդ Ջորջը այն հետո է մտցրել բանաձևի մեջ, ցավ հայտնելով, որ ինքը բաց է թողել Թուրքիայի կազմի մեջ մտնող մի երկիր: Միաժամանակ նա նշել է Քրդստանի գտնվելու վայրը, այն է՝ «Միջագետքի և Հայաստանի միջև»: Այսպիսով բրիտանական վարչապետը Քրդստանը տեղավորում էր Վանա լճի և Մոսուլի վիլայեթի արանքում: Նա նիստի մասնակիցներին առաջարկել է, որ եթե առաջարկություններ չկան, նախագծի մեջ կմտցվի նաև Քրդստանը: ¹⁹³ Ի դեպ, բանաձևի քննարկումների ժամանակ Լլոյդ Ջորջը հայտարարում է, որ Անգլիան փոքր իսկ ցանկություն չունի վերցնելու ռազմակալման ենթարկված այնպիսի տարածքների մանդատը, ինչպիսին է Սիրիան և Հայաստանի մի մասը (խոսքը Կիլիկիայի մասին է՝ Վ. Բ.): Դրան նա ավելացնում է, որ «իր կարծիքով այդ նույնը կարելի է ասել նաև Քրդստանի և Կովկասի մի մասի վերաբերյալ, թեև դրանք հարուստ են նավթային պաշարներով»: ¹⁹⁴

Նույն օրը, հունվարի 30-ին, պրեզիդենտ Վիլսոնի առաջարկով նիստը ընդունեց հետևյալ որոշումը: Թուրքիայի կազմից անջատվում են Հայաստանը, Քրդստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան: Նախատեսվում էր այդ երկրները մանդատային համակարգի միջոցով և Ազգերի լիգայի տնօրինությամբ դնել Եռյակ համաձայնության պետությունների հովանավորության ներքո: Նշված երկրների նկատմամբ մանդատային համակարգի բուն եությունը պարզաբանվում էր Սմեթսի կազմած հուշագրում: Նրանում ասվում էր. «Ռուսաստանից, Ավստրիայից և Թուրքիայից անջատված ժողովուրդները իրենց մեծ մասով քաղաքականապես հասունացած չեն. կամ նվազ ընդունակ ինքնակառավարման համար: Նրանց մեծ մասը ծայրահեղորեն աղքատացել են և իրենց նկատմամբ պահանջում են վերին աստիճանի ուշադիր հոգատարություն, նախքան իրենց կողմից տնտեսական և քաղաքական անկախության ձեռք բերումը: ¹⁹⁵ Պաղեստինը և Հայաստանը Սմեթսը դասում էր մանդատների առանձնահատուկ կատեգորիաների թվին: «Նկատի ունենալով նրանցում բնակչության այլացեղությունը և կառավարման բնագավառում նրանց անընդունակությունը համագործակցության համար, ինքնավարությունը բառի լիակատար իմաստով տվյալ դեպքի համար բացառվում է. կառավարումը մեծագույն չափով կարող է իրականացվել միայն որևէ արտաքին իշխանության կողմից», - գրում էր Սմեթսը: ¹⁹⁶

Անդրադառնալով 1919 թ. հունվարի 30-ի պատմական նիստին, ամերիկյան պատմաբան Դ. Հովարդը նրան տալիս է հետևյալ գնահատա-

կանը. «Այսպիսով, այդ օրը եվրոպական պետությունների կողմից հայտարարվեց թուրքական կայսրության վերջը»: ¹⁹⁷

Փարիզի վեհաժողովի «Տասի խորհրդի» 1919 թ. փետրվարի 26-ի նիստում լավեց Ավետիս Ահարոնյանի ելույթը: Նրա բերանով Հայաստանը Թուրքիային ներկայացնում էր իր տարածքային պահանջները: Ուշագրավ է նշել, որ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը վեհաժողովին հայտարարում էր, որ Հայաստանը դեմ չէ, որ ստեղծվի անկախ Քրդստան: Ընդ որում, նա հատուկ շեշտում էր, որ հայկական կողմը տալիս է իր համաձայնությունը, որ մի շարք տարածքներ, որոնք կազմել են պատմական Հայաստանի բաղկացուցիչ մասը (Հաքյարին, Դիարբեքիի վիլայեթի հարավային մասը և այլն) մտցվի ապագա Քրդստանի կազմի մեջ: ¹⁹⁸

Փարիզում դաշնակիցների առջև որպես քուրդ ժողովրդի ներկայացուցիչ հանդես եկավ գեներալ Շերիֆ-փաշան: Նա տևական ժամանակ, սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիներին, որպես օսմանյան ծառայության մեջ գտնվող դիվանագետ ապրել էր Եվրոպայում (Բեռլինում, Ստոքհոլմում, Փարիզում և այլն): «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի իշխանության գլուխ գալուց հետո նա Փարիզում հրատարակում էր երիտթուրքերի նկատմամբ ընդդիմադիր «Մաշրուքիեթ» թերթը: ¹⁹⁹ Շերիֆ-փաշան տիպիկ քրդական ազգայնական էր և «ազատ ու անկախ Քրդստանի» ջատագով: Օսմանյան կառավարությունը նրան ընդգրկել էր թուրքական պատվիրակության մեջ վերսալի կոնգրեսին մասնակցելու համար: Սակայն կատարելով վերջնական ընտրություն, նա իր վրայից ցած դրեց թուրքական պատգամավորի պարտականությունները և «Քրդստանի վերածնության ընկերություն» կազմակերպության առաջարկով իրեն հայտարարեց «քրդական պատվիրակության նախագահ»: Սակայն Փարիզի վեհաժողովի դիվանագիտական շրջաններում չճանաչեցին նրա այդ կարգավիճակը, համարելով, որ նախ Փարիզում «քրդական պատվիրակություն» գոյություն չունի և ապա, թեև նա ուներ մի շարք քուրդ ղեկավարների համաձայնությունը վարելու քրդական դատը Փարիզում, սակայն նա այդ գործի համար լիազորված չէր իր ժողովրդի, կամ ծայրահեղ դեպքում նրա մի մասի՝ ազդեցիկ քրդական ցեղերի կողմից:

Սակայն քանի որ Փարիզում քրդական հարցը ներկայացնող այլ մարմին գոյություն չունեի, վեհաժողովը տվեց իր համաձայնությունը, որ Շերիֆ-փաշան ներկայացնի այդ հարցը:

1919 թ. մարտի 22-ին նաև խաղաղության վեհաժողովին ներկայացրեց մի հուշագիր քրդերի պահանջների մասին և տարբեր փասթաթղթեր քրդական բաղձանքների վերաբերյալ: ²⁰⁰ Հուշագրում շարադրված էին «քուրդ ազգի օրինական պահանջները» «Միացյալ և Անկախ քրդա-

կան պետության» ստեղծման վերաբերյալ՝ Վուդրո Վիլսոնի հռչակած «14 կետերի» սկզբունքներին համապատասխան, ինչպես՝ դա արվում էր Հայաստանի և Արաբիայի կապակցությամբ: Ընդ որում, նա Վիլսոնի հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքը հասկանում ու մեկնաբանում էր յուրովի: Քանի որ ինքը հստակ գաղափար չուներ ապագա Քրդստանի հավանական սահմանների մասին, առաջարկում էր ստեղծել միջազգային մի հանձնաժողով, որի խնդիրն էր լինելու գծել Քրդստանի սահմանները «ազգության» սկզբունքով՝ ներառելով նրա մեջ բոլոր այն տարածքները, որտեղ քրդերը կազմում էին մեծամասնություն: Միանգամայն ակներև է, որ շահարկվում էր այն հանգամանքը, որ 1915 թ. արևմտահայոց ցեղասպանությունից հետո հայկական վեց վիլայեթներում հայ ազգաբնակչության թիվը կտրուկ նվազել էր կամ իսպառ վերացել էր բնականաբար այդ տարածքներում քրդերը արդեն կազմում էին մեծամասնություն: Հենց դա էլ նկատի ունենալով Շերիֆ-փաշան առաջարկում էր Արևելյան Անատոլիայում, այսինքն Արևմտյան Հայաստանում անց կացնել հանրաքվե: Ընդ որում, հանրաքվեի գծով ապագա միջազգային հանձնաժողովին «կողմնորոշելու» համար Շերիֆ-փաշան, իբրև ապագա Քրդստանի տարածք, առաջարկում էր Դիարբեքիրի, Խարբեքիրի, Բիթլիսի, Մոսուլի վիլայեթները և Ուրֆայի սանջակը: Սակայն սա մինիմում պահանջ էր, որը գեներալն անվանում էր «անկատար Քրդստան» կամ «Արևմուտքի համակրանքը վայելող և հայերի համար նպաստավոր պայմաններով ստեղծված Քրդստան»: Նա գտնում էր, որ եթե աշխարհի ուժեղները «ցանկանային արդարացիորեն կիրառել ազգության սկզբունքը», ապա երկիրը, որտեղ քրդերը մեծամասնություն են կազմում, կտարածվեր շատ հեռուները՝ դեպի հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք, կամ իր մեջ կներառներ նաև Էրզրումի վիլայեթի մի պատկառելի մասը և ողջ պարսկական Քրդստանը:

Համաձայն Շերիֆ-փաշայի այդ «մաքսիմում. ծրագրի», Քրդստանի սահմանները հյուսիսում անցնելու էին կովկասյան սահմանով, արևմուտքում՝ Էրզրում-Էրզինջան-Արաբկիր-Դիվրիկ գծով, հարավում՝ Սինջարի, Թել-Աֆարի-Էրբիլի-Քիրքուքի-Սուլեյմանիեի լեռներով և Սեննեյով (Սեննեդեք), արևելքում՝ Ռևանդուզ-Բաշկալե գծով և ապա իրանական սահմանով մինչև Արարատ լեռը: Այսպիսով, իր աներևակայելի թափի մաքսիմալիստական ծրագրով թուրքական բանակի քուրդ գեներալը Արևմտյան Հայաստանի նշանակալից մասը մտցնում էր Քրդստանի մեջ: Որպես դրա «հիմնավորում» նա բերում էր հետևյալ մտացածին «փաստարկները». նրա կարծիքով Քրդստանի հարցը լուծելիս պետք է նկատի ունենալ, որ քրդերի ազգային հարստությունը կազմում է բացառապես ոչխարաբուծությունը, որը պահանջում է, կլիմայի պատճառով, ամառային և ձմեռային արոտավայրերի առկայություն: «Եթե այդ արոտավայրե-

րից գեթ մեկը դուրս մնա Քրդստանին հատկացված ապագա սահմաններից, ապա տնտեսական կյանքը ուժգնորեն կխաթարվի և ժողովուրդը կարճ ժամանակամիջոցի ընթացքում կմատնվի թշվառության», - մտորում էր գեներալը: Այդ դեպքում, նրա կարծիքով, քրդերը ստիպված կլինեն զբաղվել ավազակությամբ և հարևանների հողերի ասպատակություններով՝ ստեղծելով մշտական անհանգիստ ու անկայուն վիճակ: Շարունակելով ահաբեկել տերություններին, նա գտնում էր, որ եթե նոր ստեղծվելիք Հայաստանի մեջ ընդգրկվեն այնպիսի տարածքներ, որտեղ քրդերը կազմում են մեծամասնություն, ապա անկասկած, ռազմատենչ ու իրենց ազգային անկախության նախանձախնդիր այդ ցեղերը չեն կարողանա հանդուրժել այդ բանը, որի հետևանքով ապագա Հայաստանում անկարգությունը կթագավորի անընդմեջ, եթե իհարկե դաշնակիցները այնտեղ մշտապես ուժեղ բանակ չպահեն, որն իր հերթին կենթարկվի պարտիզանական պատերազմին բնորոշ հարձակումների: Վերջապես հուշագրում ասվում էր, որ Քրդստանի բոլոր բնական հարստությունները պետք է պատկանեն միայն քրդերին:

Շերիֆ-փաշան ճգնում էր նաև արդարացնել դեռևս Աբդուլ Համիդ II-ի ժամանակներից սկսված և երիտթուրքերի տիրապետության շրջանում հախուռն թափով շարունակված քրդերի կողմից հայերի հողերի զավթումը: Ընդ որում, հայ փախստականների վերադարձը Արևմտյան Հայաստան բացառելու միտումով դիմում էր քաղաքական շանտաժի, քաջ տեղյակ լինելով վեհաժողովի մասնակից պետությունների ծրագրերին ու տեսակետներին: «Ասիայի բոլոր ժողովուրդներից միակը քուրդ ժողովուրդն է, - ասվում էր Շերիֆ-փաշայի հեղինակած հուշագրում, - որն ի վիճակի է ձևավորել առաջնակարգ բուֆերային պետություն բոլշևիկյան հեղեղի առջև ճանապարհը փակելու համար, նկատի ունենալով, որ հայերը ուժգնորեն վարակված են այդ վտանգավոր գաղափարներով և նրանց քաղաքական կուսակցությունների միջև գոյություն ունեցող անտազոնիզմի ու դրանց հեղափոխական կոմիտեների մրցակցության պատճառով երբեք չեն կարող նույն երաշխիքները տալ իրենց հարևաններին: Բոլշևիկյան գաղափարները կայծակնային արագությամբ ներթափանցում են հայերի մեջ և չկա այդ սոսկալի վարակը կանգնեցնելու կարող սահման: Միայն մահմեդական երկրներն են դիմացկունակ և չեն վախենում այս ահեղ վարակից»:

Դժվար չէ նկատել, որ նախ Շերիֆ-փաշայի հուշագիրը աչքի էր ընկնում իր անսասն ճաքսիմալիզմով: Այնուհետև այն ուներ բացահայտ հակահայկական ուղղվածություն: Հուշագիրը վճռականորեն մերժում էր հայ ժողովրդի իրավունքները Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Այդ հուշագիրը, սակայն, ոչ միայն չդրվեց քննարկման, այլև առհասարակ լուրջ չընդունվեց վեհաժողովի մասնակիցների կողմից: «Շե-

րիֆ-փաշայի հուշագրի քաղաքական արդյունավետությունը, – գրում է ռուս քրդագետ Մ. Լազարևը, – հավասար էր գերոյի: Այդ փաստաթղթին, ինչպես նաև նրա հեղինակին, Փարիզի կոնֆերանսի առաջին դեմքերը ոչ մի նշանակություն չտվեցին, քանի որ նրանց հետևում ոչ ոք կանգնած չէր, որոնց հետ կարելի էր հաշվի նստել»:²⁰¹ Միանգամայն ժամանակավրեպ ու քաղաքականապես սնանկ էր նաև Շերիֆ-փաշայի հուշագրի հայատյաց ոգին, որովհետև թուրքիայի վերաբերյալ դիվանագիտական ուղղումների մեջ Հայկական հարցը այդ ժամանակ գրավում էր ոչ վերջին տեղերից մեկը և Հայաստանի ու հայ ժողովրդի խնդիրները դիվանագիտական աշխարհի հրատապ քննարկման հարցերից մեկն էր հանդիսանում:

Փարիզում Շերիֆ-փաշան անսքող կերպով ցուցադրում էր իր համակրանքը Մեծ Բրիտանիայի նկատմամբ, միաժամանակ աշխատելով անգլիացիներին հավատացնել, որ քուրդ ժողովուրդը ևս իր քաղաքական կողմնորոշմամբ բրիտանամետ է: Նա առիթը բաց չէր թողնում շեշտելու համար, որ քրդերը իրենց անկախության հույսերը կապում են միայն այդ պետության հետ: 1919 թ. հունվարին նա ուղղակի դիմել էր Անգլիային, խնդրելով ստեղծել քրդական պետություն բրիտանական հովանու ներքո:²⁰² Այդ պետությունը, իր իսկ փաշայի բնորոշմամբ, պետք է լիներ «անգլիական պրոտեկտորատ»: Նրա քաղաքական կարգավիճակը Շերիֆ-փաշան համարում էր էմիրությունը, իսկ իրեն առաջարկում էր որպես էմիրի թեկնածու:²⁰³ Սակայն հարցը նրանում էր, որ այդ նույն պաշտոնին հավակնում էին նաև քրդական հին տոհմերի այլ ներկայացուցիչներ ևս. Աբդուլ Ղադերը, Սեյիդ Թահան, Սուրեյա Բադրխանը, Սուլեյման Նազիֆը, միլլի ցեղերի հզոր համադաշնության առաջնորդ Իբրահիմ փաշայի որդի Մահմուդ-բեյը,²⁰⁴ որին պատերազմի ժամանակ թուրքերը մեկուսացրել էին և պահում էին բանտում: Վերջինիս նկատմամբ հատկապես անգլիացիները համարում չունեին, նրան համարելով մի մարդ, որը «սեփական կարծիք չունի», և բացի այդ անընդունակ է այդպիսի մեծ ծրագրի դերակատար լինելուց:

Քրդական այս բոլոր առաջնորդները «ինքնավար» կամ «անկախ Քրդստանը պատկերացնում էին բրիտանական հովանու ներքո գտնվող մի երկիր: Առհասարակ համարյա բոլոր քուրդ ազգայնականները ծրագրվող Քրդստանը տեսնում էին որպես բրիտանական պրոտեկտորատ: Նրանց կարծիքով միայն Անգլիան, որին քուրդ ազգայնականները համարում էին հայկական հարցի նախաձեռնողն ու ոգեշնչողը, ի վիճակի էր ձախողել այդ նույն հարցի լուծումը:

Անգլիան, սակայն, չէր շտապում ընդառաջ գնալ քուրդ ազգայնականների այդ ձգտումներին: Անկախ նրանից, որ «անկախ Քրդստանի» ստեղծումը չէր մտնում բրիտանական կառավարության քաղաքական

հաշիվների մեջ, անգլիացիները այն համոզմանն էին, որ քուրդ ազգայնականները իրենց քաղաքական տկարության և քրդական զանգվածների վրա իրենց սահմանափակ ազդեցության պատճառով, ի վիճակի չէին նույնիսկ կարևոր դերակատարություն ունենալ իրենց քաղաքական ծրագրերում: Հենց այդ նույն պատճառով նրանք Շերիֆ-փաշային ևս լուրջ չընդունեցին, համարելով, որ նա և իր նմանները ի վիճակի չեն ռեալ կերպով ազդել Արևմտյան Հայաստանի քրդական բնակչություն ունեցող շրջաններում տիրող իրադրության վրա:

Անգլիացիների կարծիքով Շերիֆ փաշան պիտանի չէր որպես «Քրդստանի հետպատերազմյան կարգավորման» նախագծի մասնակից նաև իր առաջացած տարիքի և այն բանի պատճառով, որ նա երկար տարիներ ապրել էր Փարիզում:²⁰⁵ Անգլիացիների կարծիքով նպատակահարմար չէր ընդառաջ գնալու Շերիֆ-փաշայի քաղաքական առաջարկներին, քանի որ մեծ չէին նաև նրա ծառայությունները դաշնակից պետություններին:

Բրիտանական Ֆորին օֆիսի և զանազան ռազմական ու քաղաքական ծառայությունների եզրակացությունը մեկն էր՝ անցանկալի է, որ Շերիֆ-փաշան լինի «ապագա քրդական պետության ղեկավար»:²⁰⁶ Ամբողջ խնդիրը նաև այն էր, որ փաշային որպես առաջնորդ չէին ընդունում նաև քրդական շրջանները, որոնք նրան կնքել էին «բոշ հորուֆ» (փուլ տղա) մականունը:

Կարևոր է նշել, որ չնայած հայկական հարցի նկատմամբ Շերիֆ-փաշայի բացասական դիրքորոշմանը և «Անկախ Քրդստանի» վերաբերյալ նրա մաքսիմալիստական պահանջներին, Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունը անդադրում քայլեր էր կատարում նրա հետ շփումների մեջ մտնելու և դիվանագիտության բնագավառում հայ-քրդական միացյալ ճակատ ստեղծելու համար:

Կասկածից վեր է, որ Փարիզում Շերիֆ-փաշան համոզվելու էր, թե որքան թույլ են քրդերի քաղաքական դիրքերը վեհաժողովում: Կամա թե ակամա, նրա մոտ հասունանալու էր այն գաղափարը, որ անհրաժեշտ է ոչ միայն պատասխանել հայերի կողմից շփումներ սկսելու նախաձեռնությանը, այլև այդ ուղղությամբ կատարել որոշակի քայլեր, փորձելով ընդհանուր ճակատ հարդարելու միջոցով հասնել հաջողությունների: Դրան նրան մղում էր նաև այն հանգամանքը, որ փաշան ակնառու կերպով տեսնում էր, որ Փարիզում Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ համակրանքը կրում է հանընդհանուր բնույթ: Այդ բոլորի հետևանքով Շերիֆ-փաշան որոշում է ակտիվ շփումների մեջ մտնել հայ պատվիրակների, հատկապես Պողոս Նուբար փաշայի հետ:

Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ 1919 թ. նոյեմբերին ստորագրվեց մի համատեղ դիմում հուշագրի ձևով, ուղղված խաղաղության

վեհաժողովին: Այդ փաստաթղթի տակ ստորագրել էին Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը, Հայաստանի Հանրապետության պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանը և «Քրդական ազգային պատվիրակության նախագահ» Շերիֆ-փաշան:²⁰⁷

Այդ համատեղ դիմում-հուշագիրը 1919 թ. նոյեմբերի 20-ին ներկայացվեց Փարիզի վեհաժողովին: Քանի որ այդ հուշագրի ամբողջական բնագիրը եվրոպական պատմական գրականության մեջ չի տրվում, այլ աղբյուր ձեռքի տակ չունենալու պատճառով հարկադրված ենք այն ներկայացնել քաղված՝ Կարո Սասունիի գրքից. «Հաշտության վեհաժողովին Տեր Նախագահ, մենք, ներկա ստորագրյալներս, հայ և քյուրտ ազգերու ներկայացուցիչներ, պատիվն ունինք հայտնելու հաշտության վեհաժողովին, որ մեր երկու ժողովուրդները, երկուքն ալ արիական ցեղեն, ունին նույն շահերը և կը հետապնդեն նույն նպատակը, այսինքն իրենց ազատագրումը և անկախությունը: Մասնավորապես հայերը կծգտին ազատագրվիլ անգութ քրքական կառավարությունեն և ընդհանրապես թե՛ հայերը թե՛ քյուրտերը կը պահանջեն իրենց փրկությունը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի լուծեն, որուն պաշտոնական և զաղտնի կառավարությունները այնքան աղետաբեր եղան թե՛ մեկին և թե՛ մյուսին:

Բոլորովին համաձայն ենք ուրեմն Հաշտության վեհաժողովեն միասնաբար խնդրելու ստեղծումը, ըստ ազգայնությանց սկզբունքին, Միացյալ Անկախ Հայաստանի մը և Անկախ Քյուրտիստանի մը, մեծ պետության մը օգնությամբ, որ պիտի որոշվի մեր ժողովուրդներու կամքը լսելեն հետո և որ մեր երկրներուն պիտի տա իր տեքնիկական և տնտեսական օգնությունը՝ վերաշինության շրջանին համար:

Գալով վեճի նյութ եղող հողամասերուն, որոնք ցույց են տրված մեկ երկու պատվիրակություններուն կողմե Հաշտության վեհաժողովին հաջորդաբար ներկայացված հիշատակագիրներով, որոշապես կը հայտարարենք, որ այդ կարգադրությունը կը թողունք Հաշտության ժողովի որոշման, կանխավ վստահ ըլլալով, որ անոր վճիռը արդարության և իրավունքի հիման վրա պիտի դրվի:

Կը հաստատենք նաև մեր կատարյալ համաձայնությունը հարգելու համար փոքրամասնությանց օրինական իրավունքները մեր երկու պետությանց մեջ»:²⁰⁸

Այս հուշագիր-համաձայնագիրը շժմեցնող ներգործություն ունեցավ եվրոպական դիվանագետների վրա, որովհետև մինչ այդ հայ-քրդական հարաբերություններում նրանց համար բնական ու սովորական երևույթ էր երկու ժողովուրդներին միմյանցից բաժանող թշնամանքը:²⁰⁹

Լորդ Քերզընի տեսակետով, ըստ այդ համաձայնագրի, հայերն ու քրդերը ունեն «նույնատիպ շահեր ու ձգտումներ, պահանջում են թուրքիայից ազատություն և Միացյալ անկախ Հայաստանի և անկախ

Քրդստանի ստեղծում մանդատային իշխանության ներքո»: Թուրքիայում Անգլիայի գերագույն կոմիսար ծովակալ ղե Ռոբեթը հայ-քրդական համաձայնագիրն անվանեց «երջանիկ նախանշան»: 1919 թ. դեկտեմբերի 20-ի իր հեռագրով Քերզընը հրահանգում էր թուրքիայում գերագույն կոմիսարի գերատեսչությանը ամեն կերպ աջակցել այդ «շարժմանը», թեև Ավետիս Ահարոնյանի հետ զրույցի ժամանակ ասել էր, որ ինքը «չի հավատում ու չի վստահում» Շերիֆ-փաշային:²¹⁰

Հայ-քրդական համաձայնագրի նկատմամբ շեշտված թերահավատություն դրսևորեց լուկ Արևելյան Միջերկրածովյան ավազանում բրիտանական ռազմա-ծովային ուժերի հրամանատար ծովակալ Վեբը, որը 1920 թ. հունվարի 8-ին գրում էր, որ չնայած այդ համաձայնագրի ցանկալիությանը, այն առայժմ ոչինչ չտվեց գլխավորապես այն պատճառով, որ Շերիֆ-փաշան անտեղյակ է երկրում գոյություն ունեցող իրական վիճակից և չի պատկերացնում «քուրդ ժողովրդի իրական ձգտումներն ու զգացումները»:²¹¹

Վերոհիշյալ համաձայնագիրը միանշանակ չընդունվեց նաև հայկական շրջանակներում: Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) մի բողոք-հայտարարության հրապարակեց Պողոս Նուբարի և Համո Օհանջանյանի դեմ, որոնք համաձայնվել էին ստորագրել վերոհիշյալ համաձայնագրի տակ: Ըստ Արմեն Գարոյի, այդ համաձայնությամբ հայ ժողովուրդը «հողային ուրոշ իրավունքներ զիջած կը ըլլար քյուրդ ազգին և անոր միջամտությունը կը բերեր հայկական անվիճելի հողամասերուն մեջ»:²¹² Մեկնաբանելով Արմեն Գարոյի այդ քայլը, Կ. Սասունին գրում էր. «Իհարկե այս բողոքին տոն կուտար այն տիրական մտայնությունը, որ այդ ժամանակ հայ քաղաքական մտքի ղեկավարները ունեին և կը կարծեին, թե ծովե-ծով մեր հողային իրավունքները անվիճելի էին»:²¹³ Խնդիրը վեճի նյութ դարձավ հայկական մամուլում: Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը, այսինքն Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունը, միացյալ ձևով անհրաժեշտ համարեցին տալ հրապարակային մի բացատրություն և դրանով իսկ վերջ տալ վեճին: Ըստ այնմ, Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզից 1920 թ. հունվարի 29-ի քվակիր մի հեռագիր ուղարկվեց Ամերիկա մամուլում հրապարակելու համար: Այնտեղ ասվում էր. «Վերջին ծայր ցավալի կը գտնենք, որ մամուլի մեջ վեճ հարուցած ըլլան հայ-քրդական համաձայնության մասին: Այդ համաձայնությունը, որ ստորագրված է Ազգային պատվիրակությունեն, ոչ մեկ կերպով չի վտանգեր հայկական շահերն ու պահանջները»:²¹⁴

Շերիֆ-փաշան երկար չմնաց «քրդական պատվիրակության ղեկավարի» իր դերում: Նա հեռացավ իր այդ կարգավիճակից և տարբեր

շրջանակներում իր կատարած հայտարարություններում ուրացավ հայերի հետ համաձայնության գոյությունը:

Փարիզի վեհաժողովը որևէ դրական տեղաշարժ չարձանագրեց Հայկական հարցի լուծման գործում: Այն որևէ շոշափելի արդյունք չգրանցեց մահ քրդական հարցում: Պողոս Նուբար փաշայի կողմից առաջ քաշված «ծովից ծով» Հայաստան ստեղծելու մաքսիմալիստական նախագիծը և նրանից ոչ պակաս Շերիֆ-փաշայի ծավալապաշտական առաջարկներն անկասկած վատ ծառայություն մատուցեցին և՛ Հայկական և՛ քրդական հարցերին: Բնական է, որ երկուստեք դրսևորած այս ծայրահեղությունները խանգարում և արգելք էին հանդիսանում կայացնելու փոխադարձ համաձայնություն: Անշուշտ նման պարագաներում ելքը կարող էին վճռել մեծ պետությունները, որոնց ընդունած վճիռը կողմերին կարող էր դնել կատարված իրողության առջև: Սակայն դա ևս տեղի չունեցավ: Առաջիկայում հայ և քուրդ ժողովուրդներին սպասում էին նոր փորձություններ, որոնք ճակատագրական էին լինելու հատկապես հայ ժողովրդի համար:

Գ Լ ՈՒ Խ Յ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐԷ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՎԱԿԱՆ ՈՒ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎԱՏՄԱՍԲ

1919 թ. գարնանը իրադարձությունները Օսմանյան կայսրությունում և նրա շուրջը զարգանում էին սրընթաց արագությամբ: 1919 թ. մայիսի 19-ին հույները զորքեր հանեցին Իզմիր, ռազմական գործողություններ սկսելով թուրքիայի դեմ: Սկսվեց հույն-թուրքական պատերազմ: Ամմիջապես թուրք միլի ազգայնականների ապագա պարագլուխ գեներալ Մուստաֆա Քեմալը իր համախոհների հետ որոշում է մեկնել Արևելյան Անատոլիա, որտեղ գոյություն ունեին առավել բարենպաստ ռազմաստրատեգիական և քաղաքական պայմաններ. կազմակերպելու դիմադրության շարժում թուրքիայի անդամահատման ծրագրերի դեմ: Մեվլան Ջատե Ռիֆաթը նշում է, որ Մուստաֆա Քեմալին որպես նախկին «Կայծակ» կոչված զորամասերի հրամանատար, երկրի արևելյան շրջաններն էին հրավիրել «Իթթիհադ վե քերաքքը» կուսակցության պաշտոնաթող սպաները, որոնք ստեղծել էին «մահիկ Աստղ» անունով գաղտնի կազմակերպություն և նրա նախագահի պաշտոնում առաջադրել էին Մուստաֆա Քեմալի թեկնածությունը:¹ Իթթիհադական այդ գաղտնի կազմակերպության ծրագիրը նախատեսում էր թույլ չտալ Օսմանյան կայսրության մասնատումը օտար պետությունների կողմից:² Ուշագրավ է նշել, որ սուլթան Մեհմեդ VI Վահիդդդինը տեղյակ էր այդ բոլորին և տվել էր իր հավանությունը:³ Օգտվելով նրանից, որ Մուղոթսի զինադադարի պայմանները չէին նախատեսում համապատասխան մեխանիզմներ Անատոլիայի խորքերում գտնվող թուրքական զորքերի զորացրման ու զինաթափման վերաբերյալ և բացի այդ, նշված շրջաններում առկա էին զենքի հսկայական պաշարներ, Մուստաֆա Քեմալը արագորեն Անատոլիայում կազմակերպեց իշխանության այլընտրանքային կենտրոն: Սուլթանական բանակի մնացուկներից, աշխարհագրային ջոկատներից և այլն նա ստեղծեց բանակի կորիզ և իր ստեղծած «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանություն» կազմակերպության շուրջը սկսեց համախմբել համակիրների՝ «Հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսի ներքո: Թուրք ազգայնականների նախապես փոքրիկ խմբակը հետզհետե ուժ հավաքելով, վեր էր ածվում Անատոլիայի իրական տիրոջ:

Մեվլան Ջատե Ռիֆաթը հաղորդում է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Թագավորին փափագին վրա «Մահիկ-Աստղ» զինվորական միությունը՝ իր անդամներեն 3 հոգիի պաշտոն տված էր, որ «Արևելյան նահանգներու Իրավանց Պաշտպան» միության հետ հարաբերություն մշակե: «Մահիկ-Աստղ» զինվորական միության այս պատվիրակությունը

«Արևելյան նահանգներու Իրավանց Պաշտպան» միության հասկցուցած էր, թե բրոքերականը արդյունավորելու համար միացյալ ճակատի կը կարողի. եթե Բ. Դուռը ստիպվի Արևելյան նահանգները Հայաստանին միացնող դաշնագիրը մը ստորագրել, այս նահանգներուն վրա Հայաստանի կառավարության ունենալիք իշխանությունը պետք չէր ճանչնալ և ի հարկին զենքի դիմելով, պաշտպանության համար այժմեն Արևելյան նահանգներու մեջ զինված ուժի մը պատրաստության աշխատիլ: Ապա փաստերով ցույց տված էր, որ եվրոպական տերությունները՝ Հայաստանին կցվելիք այս հողամասին մեջ հայերու գերիշխանությունը պաշտպանելու համար ուժ պիտի չկրնային դրկել:

Համոզված էին նաև, թե Արևելյան նահանգներու մեջ պատրաստվելիք այս ուժով՝ կարելի է տակավին նորակազմ և հայերու Դաշնակցություն և կուսակցության վարչության տակ գտնված Երևանի կառավարության բանակները ցրել»:⁴

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ քեմալական շարժման հիմքուն ընկած էր իթթիհադականների ծրագիրը, քանի որ այն «Արևելյան նահանգներու Իրավանց Պաշտպան» միության կողմե գնահատվելով և յուրացվելով անոր գործադրության սկսված էր»:⁵

Այդ շարժման նշանակությունը ինչպես մասշտաբների, այնպես էլ քաղաքական կարևորության առումով անհրաժեշտ խորությամբ չզիտակցվեց, կամ գուցե թերագնահատվեց, Եռյակ համաձայնության տերությունների կողմից: Դժբախտաբար Հայաստանում ևս ընդունակ չեղան այդ դեպքերը բավարար խորությամբ վերլուծության ենթարկելու, որի հետևանքով Հայկական հարցը արդյունքում ունեցավ ծանր ու անդառնալի կորուստներ: Թուրքական պետությունից քաղաքական անջատման հայ ժողովրդի իղծերը բախվելով թուրքական վերելք ապրող նացիոնալիզմի ալիքին փշուր-փշուր եղան:

Բոլոր դեպքերում, սակայն, Թուրքիայի անդամատման սպառնալիքը շարունակում էր կախված մնալ երկիշխանության պայմաններում ապրող երբեմնի հզոր պետության վրա: Եիշտ է, նրա վերջնական ճակատագիրը լուծվելու էր Եվրոպայում, Փարիզի միջազգային վեհաժողովում, որտեղ որպես թելադրողներ հանդես էին գալու Օսմանյան կայսրության վաղեմի «բարեկամ», իսկ պատերազմի ժամանակ ռիսերիմ թշնամի դարձած Անգլիան և Ֆրանսիան: Սակայն առայժմ, քեմալականների ընկալմամբ «Հունական վտանգի» հետ միաժամանակ արևելքից Թուրքիայի վրա կախված էր նաև «Հայկական վտանգը»:

1919 թ. ամռանը դրությունը հայ-թուրքական սահմանազխում արտակարգ լրջանում էր: Կռիվներ էին գնում Օլթիի շրջանում, ինչպես նաև Նախիջևանի մոտ: Թուրք սպաների հրահրումով տասը հազար քրդեր Բայազետի և Ղարաքիլիսայի միջև սպառնում էին ոտքի ելնել հա-

յերի դեմ: Բրիտանական ծովակալ Քալթորփը հուլիսի 29-ին գրում էր արտաքին գործերի նախարար Քերզընին, որ «Մեծ Հայաստանի մասին խոսակցությունները բորբոքում են ազգային շարժման բոցը, օգտագործվում են ծայրահեղականների կողմից և, քրդերին նետելով թուրքերի գիրկը, ամրապնդում են պանիսլամիզմի ուժերը»:⁶ Հուլիսի 30-ի թվակիր մեկ այլ նամակում Քալթորփը ահազանգում էր Ֆորին օֆիսի ղեկավարությանը, որ «Թուրքիայում հասարակական անվտանգության վիճակը գնալով վատթարանում է, «ազգային շարժման» (խոսքը քեմալական շարժման մասին է – Վ. Բ.) տարածումը նոր թափ է հաղորդել օրինազանցությանն ու ավազակությանը, որով զբաղվողներն այժմ հավաքագրվում են մի խաչակրաց արշավանքի մեջ՝ անվանապես պաշտպանելու համար թուրքական անկախությունը»:⁷ Այնուհետև ծովակալն ավելացնում էր, որ Մուստաֆա Քեմալ փաշան և նրա կողմնակիցները խզել են կապերը կենտրոնական կառավարության հետ, որ «հունական օկուպացումը և իտալական ներխուժումը, զուգակցված ապագա Պոնտական հանրապետության և անկախ Հայաստանի մասին լուրերին, տագնապի և անհանգստության զգացումներ են արթնացրել Անատոլիայի մուսուլմանների մեջ, իդեալական հող ստեղծելով ազգայնական ազիտատորների գործունեության համար, որոնց հետ թույլ և սնանկ կենտրոնական կառավարությունն ի վիճակի չէ հաշվի նստել»:⁸

Ուշագրավ է նշել, որ Քալթորփը տեղեկացնում էր նաև, որ քեմալական շարժումը չպետք է համարել տարերային մի բան: Նա շեշտում էր, որ նրան աջակցում և ուժ են տալիս «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, որը «դեռևս գոյություն ունի բոլոր նահանգներում»:⁹ Իսկապես, Արևելյան Անատոլիայում ռեալ իշխանությունը դեռևս գտնվում էր իթթիհադականների հսկողության տակ: Չափազանց մեծ էր նրանց ազդեցությունը նաև այդ երկրամասում տեղակայված թուրքական բանակի վրա: Քեմալականների քաղաքական ասպարեզ իջնելու հենց առաջին օրերից թուրք միլի-ազգայնականների և իթթիհադականների միջև գոյություն ունեցող բացահայտ ու գաղտնի սերտ համագործակցություն: Բազմաթիվ խնդիրների շուրջ նրանց տեսակետները կատարելապես համընկնում էին, կամ հեռու չէին միմյանցից: Նրանք երկուսն էլ առաջնորդվում էին «Թուրքիան թուրքերի համար» և «Թուրքիա ազատ ամեն մի օտար միջամտությունից» ազգայնական կարգախոսներով: Նրանց տեսակետները նույնական էին նաև Հայկական հարցի կապակցությամբ: Առհասարակ, ի սկզբանե իրենց որդեգրած ազգային հարցի վերաբերյալ քաղաքականությամբ քեմալականները ազդարարեցին, որ իրենք կտրականապես դեմ են անկախություն կամ ինքնավարություն շնորհելու Օսմանյան կայսրության կազմում գտնվող որևէ ժողովրդի: Բրիտանական ծովակալ Ռոբեկը տեղեկացնում էր Քերզընին, որ Մուստաֆա Քեմալը «ի դեմս վերապ-

րած հայերի և հույների տեսնում է ավելի շատ պատանդների՝ դաշնակիցներից իր սեփական երկրի համար հաշտության առավել բարենպաստ պայմաններ նվաճելու նպատակով»:¹⁰

Քեմալականների քաղաքական ասպարեզ իջնելը արևմտահայության մնացուկներին կանգնեցրեց նոր ահեղ սպառնալիքների առջև:

Դրություները բարվոք չէր նաև Անդրկովկասում: Արթուր Ջեյմս Բալֆուրը 1919 թ. օգոստոսի 9-ին Փարիզից գրում էր վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջին. «Ես անհանգստացած եմ Կովկասում տիրող դրությունից: Ամեն կողմից մեզ վկայություններ են հասնում, որ բրիտանական զորքերի հեռացմանը կհետևի հայերի ամենազարհուրելի կոտորած և ընդհանուր արյունահեղություն ողջ Կովկասով մեկ»:¹¹ Նրա կարծիքով ստեղծված իրադրության պայմաններում կա միայն մի ելք և դա այն է, որպեսզի Ամերիկան հոգսն իր վրա վերցնի: Անգլիացի դիվանագետը համոզվում էր հայտնում, որ նա կարող է դա անել, որովհետև միշտ հետաքրքրություն է հանդես բերել դեպի Չայաստանը և այն տպավորությունն է ստեղծել, որ մտադիր է վերցնել այդ երկրի մանդատը:

Անգլիայի արտաքին գործերի նախարար Քերզընը 1919 թ. հուլիսի 28-ին գրում էր Վաշինգտոնում անգլիական դեսպանության խորհրդական Բերկլիին, որպեսզի նա փորձի ոչ պաշտոնական հարցմամբ պարզել, թե Միացյալ Նահանգների կառավարությունը որևէ պատրաստություն տեսնո՞ւմ է ամերիկյան զորքեր ուղարկելու Թուրքահայաստան այն դեպքում, եթե ԱՄՆ-ն որոշի ընդունել այդ երկրի մանդատը:¹²

Հիշյալ հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Քերզընը իր մոտ է հրավիրում Լոնդոնում ամերիկյան դեսպան Դեյվիսին և նրան տալիս հետևյալ հարցերը. «Կարծո՞ւմ է նա արդյոք, որ ամերիկյան կառավարությունը հավանական կհամարի ընդունել մնացած խնդրանք, եթե այն արվի: Ունե՞ն նրանք Եվրոպայում կամ այլուր առկա զորքեր, որոնց կարելի լիներ օգտագործել այդ նպատակով: Հավանական է արդյոք, որ կոնգրեսը կամենա ընդունել Չայաստանի կամ թուրքական կայսրության որևէ մեծ կամ փոքր հատվածի մանդատը: Եթե այո, ապա ո՞րն է մերձավոր ժամկետը, երբ ենթադրաբար մնացած որոշում կընդունվի: Եթե ամերիկյան կառավարությունը որոշի ընդունել պատասխանատվություն Չայաստանի համար, հավանակա՞ն է, որ նա տարածի իր շահագրգռությունները ողջ Կովկասի վրա»:

Դեսպանը պատասխանում է, որ ինքը չի կարող այդ հարցադրումների վերաբերյալ պաշտոնապես պատասխանել իր կառավարության անունից, սակայն չի խորշում հայտնելու իր անձնական կարծիքը, որը հանգում է հետևյալին. ամերիկացիներն այժմ Եվրոպայում ունեն միայն հարյուր հազար զորք, որի հիմնական մասը հրաման է ստացել վերադառնալու իր երկիրը: Հետևաբար անհնարին կլինի այդ զորքերի որևէ

մաս շարժել դեպի Չայաստան: Բացի այդ, ամերիկյան զորքերի ամեն մի ուղարկում այդ շրջան չի կարող իրագործվել առանց կոնգրեսի գիտության կամ համաձայնության: Ինչ վերաբերում է մանդատի հարցին, ինքն անձամբ չի հավատում, որ մարդասիրական հողի վրա ամերիկյան ժողովրդի խորը հետաքրքրության նկատառումները Չայաստանի նկատմամբ կարող է ստիպել իր երկրին հեռանալ իր արտաքին քաղաքական կրկնակի ավանդական հիմունքներից, ինչպիսիք են ա) օտար դաշինքների կամ հանձնառությունների մեջ խառնվելու հրաժարումից և բ) Մոնրոյի դոկտրինին խորապես հավատարիմ մնալուց: Դրան դեսպան Դեյվիսը ավելացնում է, որ հենց ամերիկյան հասարակությունը սկսի պատկերացնել, ինչ-որ հավանաբար չի անում այժմ, թե հայկական հարցին հատուկ ինչ քաղաքական, ազգագրական, ֆիզիկական կամ այլ տեսակի դժվարություններ կան, նա խիստ կասկածի տակ կանձի, թե արդյոք ֆիլանտրոպիան կհաղթանակի՞ նպատակահարմարության հետ մրցապայքարում: Վերջում ի մի բերելով իրադրությունը, դեսպանը նշում է, որ ինքը պարոն Բալֆուրի խնդրանքը կհաղորդի ամերիկյան կառավարությանը, սակայն թերահավատ է, որ այն կարող է հանգեցնել զործնական արդյունքների:¹³

Թեև ամերիկյան սենատոր Ուիլյամսը 1919 թ. սեպտեմբերի 9-ին սենատին առաջադրեց մի միացյալ բանաձև, որը նպատակ էր հետապնդում լիազորել կառավարությանը ամերիկյան զորքերն օգտագործելու Չայաստանում, սակայն ընդդիմությունը հանձինս Հանրապետական կուսակցության մերժեց այդ առաջարկը, պատճառաբանելով, որ զորքեր չեն կարող ուղարկվել մի երկիր, որի հետ Միացյալ Նահանգները պատերազմի մեջ չեն:

Այսպիսով Չայաստանի համար ստեղծվել էր մի վիճակ, որը Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի բերանով ձևակերպվում էր հետևյալ կերպ. «Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, Իտալիան ոչինչ չի կարող անել, Մեծ Բրիտանիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել: Մնում է տեսնել, որպես արդյունք այս ամենի, արդյոք հայեր կմնա՞ն»:¹⁴

1919 թ. աշնանից սկսած Չայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրն էր Արևմտյան Չայաստանի վերագրված հարցը: Այդ գործում ամենամեծ խոչընդոտները երկուսն էին՝ քեմալական իշխանությունները և քրդերը:

Դեռևս 1919 թ. ամռանը (հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը) «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» կողմից էր գրումուն կայացած համաժողովը ընդունեց հետևյալ որոշումները. «Փոքր ասիայի արևելյան վիլայեթները, Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջաքը, Էրզրումի, Սըվասի, Դիարբեքիի, Մամուրեթ-ուլ-Ազի-

զի (Խարբերդի – Վ. Բ.), Վանի, Բիթլիսի վիլայեթները և այս վիլայեթների մեջ մտնող բոլոր անկախ սանջաքները, չեն կարող ոչ մի ձևով, ոչ մի պատրվակով և ոչ մի պատճառաբանությամբ անջատվել մեկը մյուսից: Դրանք բոլորը միասին կազմում են մի ամբողջություն, որի բոլոր մասերը կատարյալ համերաշխության մեջ են իրար նկատմամբ՝ ինչպես ուրախության, այնպես էլ դժբախտության պահին, և իրենց ապագա ճակատագրի տեսակետից բոլորը ձգտում են միևնույն նպատակին»:

Համաժողովի ընդունած երկրորդ հոդվածում ասվում էր.«Մեր տարածքի ամեն մի գրավում և ամեն կարգի միջամտություն մեր գործերին դիտելով որպես ձգտում ուղղված հունական կամ հայկական համայնքի ստեղծմանը, մենք առաջ ենք քաշում ինքնապաշտպանության ու փոխադարձ աջակցության սկզբունքը»: Այնուհետև ասվում էր. «Մենք երբեք թույլ չենք տա, որ հույներն ու հայերը մեր նկատմամբ գրավեն այնպիսի մի դիրք, որը կարող է սպառնալ մեր գոյությանը, մահմեդականների իրավունքներին և օսմանյան ինքնապաշտպանությանը՝ ուղղակի կամ անուղղակի, քողարկված թե բացահայտ, կամ որևէ այլ հնարավոր ձևով»:

Ուստի մեր ազգը իրեն իրավասու և կարող է համարում պաշտպանվելու իր տրամադրության տակ գտնվելիք հնարավոր բոլոր միջոցներով՝ լինեն դրանք նյութական թե բարոյական, նպատակ ունենալով ձեռնարկել բոլոր միջոցները կանխելու համար այն փորձերը, որ հույներն ու հայերը կարող են ձեռնարկել մեր հայրենիքին վնասելու նպատակով: Նման պարագայում, մենք Անտանտի մեծ տերությունների ամեն մի միջամտություն կդիտենք որպես օժանդակություն այն պլանների ու ծրագրերի իրականացմանը, որոնք մենք մերժում ենք»:¹⁵

Համաժողովի աշխատանքները ամփոփելիս Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ «մերկայումս մեր երկիրը գտնվում է երկու վտանգի միջև՝ հունական վտանգը և հայկական վտանգը»:¹⁶

Այդ նույն ոգով որոշումներ կայացվեցին նաև քեմալականների գումարած Սըվասի համաժողովում (1919 թ. սեպտեմբերի 4-ից 11-ը): Սակայն այս վերջինս, ի տարբերություն նախորդի, հանդես էր գալիս ոչ միայն արևելյան վիլայեթների, այլև ընդհանրապես Օսմանյան կայսրության ողջ տարածքի անձեռնմխելիության ու միասնության նշանաբանով: Ընդ որում, հակահունական ու հակահայկական շեշտադրումները Աըվասում արտահայտված էին ավելի վճռական ձևով:¹⁷ Դա բնորոշ էր նաև համաժողովի հանձնախմբի անունից Մուստաֆա Քեմալի սուլթանին ուղղված 1919 թ. սեպտեմբերի 10-ի թվակիր հեռագրին, որտեղ նշվում էր, որ անհնար է «մեր վիլայեթների հողերի գեթ մեկ թիզը հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության»:¹⁸

Չետագայում Էրզրումի և Սըվասի համաժողովների որոշումներն ընկան քեմալականների կողմից 1920 թ. հունվարի 28-ին հռչակված «Ազ-

գային ուխտի» (Misaki milli) հիմքում,¹⁹ որը բացառում էր Արևելյան Անատոլիայի, այսինքն Արևմտյան Հայաստանի փաստական կամ իրավաբանական բաժանումն ու մասնատումը: Անշուշտ «Ազգային ուխտի» ընդունումը նշանակում էր, որ քեմալականները բացառում են ոչ միայն Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետության, այլ նաև քրդական պետության կամ քրդական ինքնավարության ստեղծումը: Այդ բոլոր որոշումները հաստատում էին, որ քեմալականները չեն ճանաչում հայ ժողովրդի անկախության իրավունքը և առհասարակ նրա ազգային իրավունքները: Մուստաֆա Քեմալը թուրքիայի ճնշված ժողովուրդների անկախության ձգտումները անվանում էր «արշավանք մեր մեծ պետության դեմ»: 1919 թ. հուլիսի 13-ին արտասանած իր ճառում նա հայտարարեց. «Մեր հայրենիքի մասնատման հարցը ոչ միայն դրված է օրակարգում, այլ նույնիսկ կանխորոշված է: Արդեն որոշվել է ստեղծել «Հայաստան» մեր արևելյան վիլայեթներում: Մեկ այլ Հայաստան «Կիլիկիա» անվան տակ, ենթադրվում է ստեղծել Ադանայում, Կոզանում և հարակից շրջաններում: Հունաստանում ենթադրում են իրենց միացնել Ջմյուռնիայի և Այդինի շրջանները, ինչպես նաև Թրակիայի տարածքները մինչև մեր մայրաքաղաքի դարպասները: Սև ծովի մեր ափամերձ շրջաններում ենթադրվում է ստեղծել «Պոնտոս» թագավորությունը: Մնացած հողերը կամ ենթարկվելու են օտարերկրյա ռազմակալման, կամ անցնելու են պրոտեկտորատի տակ: Այդ հարցը լուծելիս բացարձակապես հաշվի չեն նստում մարդասիրության և մարդկային քաղաքակրթության սկզբունքների հետ, իսկ ավելի քիչ ազգերի ինքնորոշման իրավունքների հետ: Մի ազգի, որը 650 տարվա ընթացքում եղել է անկախ, փորձում են վերածել ծառաների ու ստրուկների և դա այն ազգին, որն իր ժամանակին իր արդարության ու խիզախության դրոշմ հասցրել է մինչև Հնդկաստանի սահմանները, մինչև Աֆրիկայի սիրտը և մինչև Հունգարիայի արևմտյան սահմանները»:²⁰

Ահա թե ինչպես էր հասկանում «թուրքերի հայրը» մարդասիրությունը, մարդկային քաղաքակրթության սկզբունքները և ազգերի ինքնորոշման իրավունքը:

Արևմտյան Հայաստանում հայկական պետության ստեղծման հեռանկարը ոչ պակաս չափով, քան քեմալականներին, անհանգստացնում էր նաև քուրդ ազգայնականներին և առհասարակ քրդական զանգվածին: Քրդերի մոտ կրկին արմատավորվել էր այն վախը, որ Արևմտյան Հայաստանը հայերին անցնելու և այնտեղ հայկական իշխանության պայմաններում իրենց շահերը կտուժեն և իրենք կվերածվեն երկրորդական մի ուժի: Այդ օրերին թե՛ թուրքական և թե՛ քրդական հասարակական կարծիքում հաստատում կերպով արմատավորվել էր այն տեսակետը, որ Արևմտյան Հայաստանում անխուսափելիորեն տեղի կունենա «Իզմիրի քաղաքակա-

նության կրկնություն», այսինքն արևելքից Թուրքիայի վրա կգրոհի Հայաստանի Հանրապետությունը, որի արդյունքում և եռյակ համաձայնության տերությունների աջակցությամբ Արևմտյան Հայաստանի տարածքում կստեղծվի հայկական պետություն:

Անկասկած այդ վախը կարող էր քրդերին մերծեցնել այնպիսի ուժերի հետ, ինչպես Ստամբուլի կառավարությունն էր, կամ միլի-ազգայնականները, որոնք երկուսն էլ ոչ միայն չէին ընդունում հայերի անկախության ու սեփական պետականություն ունենալու ձգտումները, այլև պատրաստ էին իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պայքարել դրա դեմ: Հետևաբար բոլոր հիմքերը կային շահերի ընդհանրության հողի վրա քրդերի մոտ թուրքամետ տրամադրությունների ուժեղացման համար:

Հարկ է նշել, որ առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ստեղծված նոր իրողությունները մեծ ազդեցություն չունեցան քրդերի քաղաքական հասունացման վրա: Նախկինի նման նրանց մոտ դեռևս բացակայում էր ժամանակակից տիպի քաղաքական կուսակցության գոյությունը, որն ի վիճակի լիներ համախմբելու այդ ժողովրդի մի ազդու զանգվածի ինչ որ քաղաքական գաղափարի շուրջ: Եիշտ է, արդեն առկա էր քուրդ մտավորականության մի բարակ շերտ, որը սակայն նույնպես հավաքական կամք չէր ներկայացնում: Հատկապես գյուղական շրջաններում, որտեղ բնակվում էր քուրդ ժողովրդի ջախջախիչ մեծամասնությունը, այդ մտավորականությունը չուներ ազդեցություն և ուժ: Ավատապետերն ու ցեղապետերը այդ մտավորականության նկատմամբ վերաբերվում էին կասկածանքով, իբրև անկրոն ու հեղափոխական գաղափարներ կրող մի խավի:²¹

Վերլուծության ենթարկելով քրդական հասարակության կառուցվածքը, անգլիացի Առնոլդ Թոյնբին գրում էր, որ քրդական ազգային զգացումը իրեն կարող է դրսևորել թուրքերին, արաբներին, անգլիացիներին կամ որևէ այլ օտար տարրի դեմ հակադրվելու ձևով, սակայն այն կատարելապես բացակայում է, երբ խոսքը գնում է մեկ ընդհանուր քրդական համադաշնության մասին: Թոյնբիի կարծիքով քրդերի մեծամասնության քաղաքական հորիզոնը դեռևս սահմանափակվում է ցեղերի ու նրանց հակամարտության շրջանակներում: Բավականին կենսունակ լինելով հանդերձ, քրդերը «ամբողջությամբ մնացին անհատական, բայց ոչ համապետական հոգեբանությամբ օժտված ժողովուրդ»:²²

Կ. Պոլսում հաստատված քրդերը համարյա բոլորն էլ Ստամբուլ աքսորված քրդական աշիրեթապետերի ժառանգներ էին, որոնք սովորել էին այսպես կոչված «աշիրեթ մեքթեբլերիներ»-ում (ցեղային դպրոցներ), կամ կայսրության ռազմական ուսումնարաններում, որոնք 1870 թվականից սկսած իրենց դռները բաց էին արել երիտասարդ քրդերի առջև:²³

Քրդական այդ վերնախավը բազմաթիվ թելերով կապված էր թուրքական պետականության հետ, որպես կանոն իրեն հեռու էր պահում քաղաքական խնդիրներից և կտրված էր իր ժողովրդից:

Միասնություն գոյություն չունեղ նույնիսկ քրդական ազգայնականների ճամբարում: Նրանց երկբևեռացումը ավելի հստակորեն ուրվագծվեց քենալական շարժման շրջանում: Այսպես կոչված «ինքնավարականները» շեյխ Աբդուլ Ղադերի գլխավորությամբ հետապնդում էին Օսմանյան կայսրության կազմում Քրդստանի ինքնավարության գաղափարը: Շեյխ Աբդուլ Ղադերը իր այդ տեսակետը բացահայտեց թուրքական «Թասֆիրի էֆքեր» թերթի հետ հարցազրույցի ընթացքում, որն արտատպվեց «Նյու-Յորք թայմս» թերթի 1920 թ. մարտի 9-ի համարում: Շեյխ Աբդուլ Ղադերը հայտնի շեյխ Օբեյդուլլայի որդիներից էր: Նա իր ողջ կյանքի ընթացքում կապված էր սուլթանական կառավարության հետ և օգտվել էր սուլթան Աբդուլ Համիդի «առատածեռությունից»: Երիտթուրքական հեղաշրջումից հետո նա դարձել էր օսմանյան ժերակույտի նախագահ, իսկ ապա Պետական խորհրդի նախագահ: Օսմանյան շրջանակներում նա հայտնի էր որպես «խորապես կրոնական մի մարդ», որը հարգում էր սուլթանին որպես «համայն մահմեդականների խալիֆի»:²⁴

Շեյխ Աբդուլ Ղադերի կողմնակից «ինքնավարականների» գնահատականը տվել է Ամին Ալի Բադրխանի որդիներից մեկը. «Նրանց մեկ ոտքը քրդական ճամբարի մեջ էր, իսկ մյուսը՝ օսմանյան և իսլամական ճամբարի... Նրանք ուզում էին նախարար դառնալ»:²⁵

Քուրդ «ինքնավարականներին» թուրքական կառավարությունը խոստացել էր Քրդստանի համար ինքնավար կարգավիճակ՝ սուլթանի և օսմանյան խորհրդարանի իշխանության ներքո:

Քրդական ազգայնականների մյուս խմբավորումը, որին անվանում էին «անկախականներ», Ամին Ալի Բադրխանի գլխավորությամբ ցանկանում էին անջատվել Թուրքիայից և ստեղծել քրդական անկախ պետություն: Ի դեպ, բադրխանների ազդեցիկ տոհմի մեծամասնությունը 1908 թ. «Պոլսի գարունից», այսինքն երիտթուրքական հեղաշրջումից հետո կամ բանտարկված էր և կամ աքսորված, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավված էր կառավարության կողմից: Տոհմի գլխավորին՝ Ամին Ալի Բադրխանին, երիտթուրքերը հեռակա կարգով դատապարտել էին մահվան:

Շուտով հստակ դարձավ, որ քրդական շարժման երկու ուղղությունների միջև տարբերությունները անկամրջելի են և բացառվում է նրանց միջև քաղաքական համագործակցությունը: Այսպիսով քրդական անկախության կուսակիցների հեռացումը միմյանցից այլևս դարձավ անշրջելի:

Անկախ այդ բոլորից, քեմալական շարժումը սկսվելուց հետո ակնառու կերպով զգացվում էր քրդերի հակահայկական տրամադրությունների շեշտակի վերելք, որովհետև նրանք ցանկանում էին պետություն ստեղծել կամ ծայրահեղ դեպքում ինքնավարություն ձեռք բերել հիմնականում այն տարածքների վրա, որոնք հանդիսանում էին հայ ժողովրդի պատմական բնօրրանը: 4. Պոլսում Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսար ծովակալ Քալթրոփը լորդ Քերզընին հասցեագրված իր հաղորդագրություններից մեկում նշում էր, որ Թուրքիայի տարածքի «հունական օկուպացումը և իտալական ներխուժումը, զուգակցված ապագա Պոնտական հանրապետության և անկախ Չայաստանի մասին լուրերին, տագնապի և անհանգստության զգացումներ են արթնացրել Անատոլիայի մուսուլմանների մեջ, իդեալական հող ստեղծելով ազգայնական ազիտատորների գործունեության համար, որոնց հետ թույլ և սնանկ կենտրոնական կառավարությունն ի վիճակի չէ հաշվի նստել:»²⁶ Մյուս վտանգը, – շարունակում էր ծովակալը, – կայանում է նրանում, որ «հնարավոր է քրդական ազգային կուսակցության մերձեցումը քեմալականների հետ»: ²⁷

Այսպիսով ստեղծված քաղաքական իրավիճակը քրդերի առջև դրել էր հետևյալ երկրորդնախնդիրը. կամ ենթարկվել հայերին, եթե Արևմտյան Չայաստանի տարածքում ստեղծվեր հայկական անկախ պետություն և կամ անցնել թուրքերի հետ համագործակցության կողմը: Քրդերի մեծամասնությունը գերադասեց գործակցել թուրքերի հետ և թշնամական դիրք բռնեց հայերի ու նրանց ազգային իղձերի նկատմամբ: քեմալականները մեծ ճկունությամբ կարողացան օգտվել քուրդ ժողովրդի և նրա վերնախավի շրջանում տիրապետող դարձած այդ տրամադրություններից: Առհասարակ պետք է նշել, որ քաղաքական ասպարեզ իջնելու հենց առաջին օրերից Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները ոչ միայն ուշի-ուշով հետևում էին Արևմտյան Չայաստանում ծավալվող իրադարձություններին, այլև նրանց հատուկ ուշադրության կենտրոնում էր գտնվում քրդական հարցը, որովհետև վերջին հաշվով քրդերի քաղաքական կողմնորոշումից էր նաև նշանակալից չափով կախված այն հարցը, թե արդյոք իրենց հաջողվելու է Արևմտյան Չայաստանը պահել Թուրքիայի կազմում թե ոչ: Քեմալականները հավաստի տեղեկություններ ունեին այն մասին, որ քրդերը ծրագրեր են փայփայում անկախ պետություն ստեղծելու կամ ինքնավարություն ձեռք բերելու ուղղությամբ: Իր ելույթներից մեկի ժամանակ Մուստաֆա Քեմալը առաջին անգամ հայտարարեց. «Քրդստանի վերածնության կազմակերպությունը», որն իր բաժանմունքներն ունի Դիարբեքիրում, Բիթլիսում և Խարբեռդում, և որի ղեկավար կենտրոնը գտնվում էր Կ. Պոլսում, ձգտում է ստեղծել քրդական պետություն՝ օտարերկրյա հովանու ներքո»: ²⁸ Դիարբեքիրի վալիին հասցեագրած իր նամակում Քեմալը խորհուրդ էր տալիս չխստացնել հետապնդումները վերո-

հիշյալ քրդական կազմակերպության անդամների նկատմամբ, այլ ընդհակառակը, աշխատել ամեն կերպ նրանց ներգրավել իրենց կողմը և համախմբվելով նրանց հետ՝ հանդես գալ եռյակ համաձայնության դեմ՝ Անատոլիայում կյանքի կոչված «Թուրք ժողովրդի իրավունքների պաշտպանության» և «ընդդեմ աննեքսիայի» կազմակերպությունների շրջանակներում: ²⁹

Բրիտանական ծովակալ Դե-Ռոբեկը լորդ Քերզընին Կ. Պոլսից հղած 1919 թ. դեկտեմբերի 26-ի հեռագրում հաղորդում էր, որ դեկտեմբերի 5-ին «Մուստաֆա Քեմալը երզրումում թուրք, քուրդ և արաբ ղեկավարների մի ընդհանուր ժողով է հրավիրել, քննարկելու համար հայկական պետության ստեղծմանը խոչընդոտելու ուղիները, ինչպես նաև Չայաստանի դեմ պայքարում ձեռնարկվելիք միջոցառումները: Հատկանշական է, որ այդ հավաքին ներկա էին նաև մուսավաթական Ադրբեջանի ներկայացուցիչները: Հեռագրում հաղորդվում էր նաև, որ Մուստաֆա Քեմալ փաշան ձեռնամուխ է եղել «խլամական ուժեր» («ղուվվա-ի իսլամի-յե») ստեղծելու գործին, որոնց մեջ թուրքերից բացի ընդգրկվելու են նաև քրդեր և արաբներ: ³⁰

Քրդերի չեզոքացման և նրանց իրենց քաղաքականության ոլորտը ներքաշելու նպատակով քեմալականները առաջ քաշեցին այսպես կոչված «հասարակական միասնության» գաղափարը: Նրանք հայտարարեցին, որ «քրդերը Թուրքիայում իրավահավասար ժողովուրդ են թուրքերի հետ»: Դրա իմաստը միանգամայն պարզ էր: Այն պայմաններում, երբ քրդերը Իրաքյան և Իրանական Քրդստանում համառ պայքար էին մղում ազգային անկախության համար, իսկ Թուրքիայում ևս քրդական որոշ շրջանակներ ոգևորված էին ազգային ինքնորոշման գաղափարներով, քեմալականների համար բնավ ձեռնտու չէր ընթանալու Թուրքիայում քուրդ ժողովրդի գոյության մերժման ավանդական ճանապարհով: Ուստի՝ հենց իր՝ Մուստաֆա Քեմալի և նրա շրջապատի նախաձեռնությամբ մի որոշ ժամանակ լուկ խոսքով խրախուսվում էր նոր Թուրքիայում «քրդերի իրավահավասար վիճակի» գաղափարը: ³¹ Քեմալականները նաև հաստատուն կերպով առաջ էին մղում այն գաղափարը, որ թուրքերի և քրդերի միջև լակն տարբերություններ գոյություն չունեն և թուրքական պետության լիակատար ինքնիշխանությունը պետք է տարածվի Արևելյան Թրակիայի, Փոքր Ասիայի և Արևելյան Անատոլիայի նկատմամբ, որտեղ «բնակչությունը մեծ մասամբ թուրքեր են կամ քրդեր»: ³²

Քեմալականներին հաջողվեց ոչ միայն աստիճանաբար «մարել» քրդական հարցի սրությունը, այլև քրդերին լծել իրենց քաղաքականության կառքին: 1919 թ. հունիսի 21-ին Մուստաֆա Քեմալը իր համախոհներին գրում էր. «Անգլիական քարոզչությամբ ծնունդ առած շարժումները, օրինակ, այժմ ծավալվող շարժումը հանուն քրդական անկախության,

երբ բարձրացել է կայսրության մասնատման հարցը, փառք աստօժ, շրջվեցին մեր օգտին: Շնորհիվ այդ շարժման մասնակիցների հետ գրագրության, վերջիններս ընդգրկվեցին ընդհանուր գործի մեջ և մեզ հետ միասին համախմբվեցին խալիֆաթի և թագի շուրջը: Մեր միջև հաստատվեց կատարյալ համաձայնություն և նրանք հրավիրվեցին կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու:»³³ (Խոսքը վերաբերում է 1919 թ. հուլիս-օգոստոսին գումարված էրզրումի համաժողովին – Վ. Բ.):

Դժվար չէ կրահել, թե իր գրագրությամբ Քեմալը ինչ էր խոստացել քրդերին: Դա երևում է նաև նրանից, որ «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերությունը», որի կազմի մեջ գտնվում էին նաև քրդեր, էրզրումի համաժողովի օրակարգի մեջ քննարկման համար մտցրեց նաև հետևյալ հարցերը. 1) արևելյան վիլայեթներում քարոզչության նպատակը, 2) թուրքիզմի և քուրդիզմի խնդիրները, 3) տարբերություններ կրոնի մեջ և այլն:³⁴

1919 թ. հունիսին էրզրումում գումարվեց քրդական ազգային շարժման գործիչների համագումար, որի ընդունած բանաձևում արտահայտվում էր համակրանք քեմալական շարժման նկատմամբ: Համագումարը հայտարարում էր, որ ինքը անվերապահորեն պաշտպանում է քեմալական շարժումը, պայմանով, որ թուրք ազգայնականները Քրդստանին տրամադրեն ինքնավարություն: Համագումարում քրդական ազգայնական շարժման ղեկավարները հստակորեն շեշտեցին, որ իրենք դեմ չեն թուրքական ազգային պետության ստեղծմանը, եթե նրա կազմում Քրդստանը ստանա ինքնավարություն:

Միաժամանակ որոշում կայացվեց քրդերին բարձրացնել ապստամբության սուլթանի ու նրա կառավարության դեմ: Ի նշան թուրք միլիտարիզմի և ազգայնականների հետ համերաշխության, համագումարի մասնակիցները որոշեցին իրենց մասնակցությունը բերել էրզրումի համաժողովին:³⁵

Սակայն քեմալականները թե՛ էրզրումի և Սըվասի համաժողովներում ընդունած որոշումներում ու մանիֆեստում և թե՛ իրենց ընթացիկ քաղաքականության մեջ կտրականապես մերժեցին ազգային փոքրամասնությունների տարածքային և ցանկացած այլ կարգի ինքնավարության սկզբունքը: Ավելին, խաղալով ոչ թուրք մահմեդական փոքրամասնությունների՝ քրդերի, լազերի, չերքեզների և այլն կրոնական զգացումների վրա, և լայնորեն օգտագործելով խոստումների քաղաքականությունը, քեմալականները կարողացան ճարպիկ խոստումներով նրանց համախմբել իրենց շուրջը և պայքարի հանել հույների և հայերի դեմ: Հատկանշական է, որ քրդական ցեղային վերնախավին ուղղված դիմումներում քեմալականները իրենց ներկայացնում էին որպես խալիֆաթի և սուլթանի ջերմ կողմնակիցներ ու ջատագովներ, թեև իրականում իրենց ապագա քաղաքականության հիմքում նրանք դնելու էին լաիցիզմի (աշ-

խարհիկության) սկզբունքը և խալիֆաթի ու սուլթանաթի վերացումը: Անշուշտ նրանց այդ քաղաքական վարվելակերպը կատարելապես բացահայտում է քեմալիզմի ամբոխավարական-պոպուլիստական էությունը: Նրանք հաճախ շրջանառության մեջ էին դնում նաև «կրոնի ու ազգի անխախտ միասնության» սկզբունքը, որը սուլթան չէր համապատասխանում նրանց գաղափարական-քաղաքական հիմնարար սկզբունքներին:

Սակայն քրդերին իրենց կողմը գրավելու թիվ առաջին լծակը իհարկե Հայկական հարցն էր: Այդ առումով սուլթան Աբդուլ Համիդ II-ը և իթթիհադականները կարող էին քեմալականների համար հանդիսանալ ուսուցիչներ: Քրդերին ներշնչվում էր այն գաղափարը, որ թուրք-քրդական դաշինքի հիմք պետք է հանդիսանա հայերի անկախության ձգտումների չեզոքացումը: Այդ դաշինքի գլխավոր նպատակն էր հռչակվում երկրի տարածքային ամբողջականության պահպանումը և «թուրքական ու քրդական մեծամասնության» շահերի ապահովումը:³⁶

Քեմալը կտրուկ առարկում էր «արևելյան վիլայեթներից» հայերին թեկուզ մեկ թիզ հող տալու դեմ: «Նույնիսկ մինչև պատերազմը, գրում էր նա, – այդ շրջանների բնակչությունը բաղկացած էր մեծ մասամբ թուրքերից, չնչին քանակությամբ այսպես կոչված զազա քրդերից և աննշան թվով հայերից»:³⁷

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ քեմալականներն աշխատում էին Արևմտյան Հայաստանի քրդական առաջնորդներին և առհասարակ քուրդ բնակչությանը համախմբել հակահայկական պլատֆորմի վրա:

Էրզրումի համաժողովում Մուստաֆա Քեմալի կողմից ղեկավարվող ներկայացուցչական կոմիտեի մեջ (9 մարդ) մտան երեք քրդեր. շեյխ Օմեր Ֆեվզի բեյը, Սադուլլա-էֆենդին և Հաջի Մուսա բեյը: Քեմալականների հետ ակտիվ համագործակցության մեջ էր գտնվում նաև ազդեցիկ քրդական առաջնորդ Ջեմիլ Չատո-բեյը: Սակայն Մուստաֆա Քեմալը չէր վստահում ներկայացուցչական կոմիտեի քուրդ անդամներին, նրանց համարելով ոչ մի «քաղաքական և ռազմական փորձ չունեցող պատահական մարդիկ», ուստի այդ կոմիտեն ոչ մի անգամ չհավաքվեց: Իր հերթին կոմիտեի քուրդ անդամները ևս, հատկապես Օմեր Ֆեվզի-բեյը, հավատ չէին ընծայում Քեմալի նկատմամբ:³⁸ Սակայն չնայած այդ անվստահությանը, էրզրումի կոնգրեսից հետո Մուստաֆա Քեմալը, պայքարելով հույների դեմ և խուսանավելով սուլթանի ու խալիֆաթի նկատմամբ, շարունակում էր հենվել քրդական առաջնորդների վրա: Այսպես, նրանցից մեկի՝ Շիրնաքցի Աբդուրրահման աղայի անունով գրված ուղերձում նա նշում էր. «Ամբողջ աշխարհին է հայտնի Ձեր նվիրվածությունը խալիֆաթին ու սուլթանաթին: Ոչ պակաս ակներև է նաև, որ դուք երբեք չեք համաձայնվի այն բանի հետ, որ Ձեր հայրենիքի սուրբ հողը ոտնահարվի հայերի կողմից: Ձեզ եմ ուղարկում էրզրումի կոնգրեսի կողմից ընդունված մանիֆեստ»:

տի ու որոշումների որոշ քանակությամբ օրինակներ: Խնդրում են անհապաղ ձեռնամուխ լինել ազգային ուժերի կազմակերպմանը և եռանդուն կերպով վերջ տալ մեր հակառակորդների դավաճանական գործողություններին: Հավատարմվ Ձեր հայրենասիրությանը, մնում են սպասող Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքներին»:³⁹

1919 թ. օգոստոսի 10-ին մուքբի ցեղի առաջնորդ Հաջի Մուսաբեյին ուղղված ուղերձում Մուստաֆա Քեմալը մասնավորապես նշում էր. «Գովեստով ու երախտագիտությամբ մենք մշտապես հիշում ենք այն արժեքավոր օգնության մասին, որ դուք բազմիցս ցուցաբերել եք բանակին մեր կողմից Բիթլիսը վերստին հետ վերցնելիս, ինչպես նաև Ձեր եռանդը Մուքբի (Մոթկանի – Վ. Բ.) շրջանը թշնամուց պաշտպանելիս... Մեր թշնամիները այժմ ձգտում են մասնատել մեր երկիրը և ստրկացնել մեր ազգին, որը դարեր շարունակ այնքան արյուն է թափել հանուն իսլամի, զրկել նրան ինքնիշխան իրավունքներից ու անկախությունից: Նրանք ձգտում են այն բանին, որպեսզի մեր նախնիներից ժառանգած մեր մայրհայրենիքի տարածքում ստեղծեն Հայաստան...»:⁴⁰ Նմանատիպ հեռագրեր ուղարկվեցին նաև շեյխ Աբդուլբակի էֆենդի Քյուֆրևի գաղեին (Բիթլիսից), Օմեր-աղային (Դերշահից), Ռեսուլ-աղային (Մուշասից), Սադուլլա-էֆենդիին, շեյխ Մահմուդ-էֆենդիին, շեյխ Ջիյա-էդ-դին էֆենդիին (Նուրշիհից), Ջեմիլ Չատո-բեյին (Գարզանցի քրդերի ցեղապետ) և շատ այլ քրդական երևելի առաջնորդներին: Մուստաֆա Քեմալը նաև շրջաբերական նամակի ձևով ուղերձներ էր ուղարկում նշանավոր աշիրեթապետներին, որոնցում կոչ էր անում նրանց պայքարել հայերի և այլ «թշնամիների սադրանքների դեմ»:⁴¹

Քրդական առաջնորդներից շատերը արձագանքեցին Մուստաֆա Քեմալի այդ կոչերին: Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից Անկարա էին ուղարկվում հեռագրեր ու նամակներ, որոնցում հավաստիացվում էր, որ քրդերը հավատարիմ են խալիֆաթին ու սուլթանաթին, ինչպես նաև թուրք և քուրդ ժողովուրդների բարեկամությանը:⁴²

Սակայն ոչ բոլոր քրդական առաջնորդներն էին պատրաստակամություն հայտնում համագործակցելու քեմալականների հետ: Թուրք ազգայնականների դեմ մերթ մեկ, մերթ մյուս վայրերում բռնկում էին քրդական ապստամբություններ ու խռովություններ: Ավատատերի ու ցեղապետերի մի մասը, որը կողմնորոշվում էր դեպի սուլթանը և անվստահությամբ էր վերաբերվում քեմալականների նկատմամբ, չընդունեց էրզրումի համաժողովի որոշումները և հրաժարվեց համագործակցել քեմալականների հետ: Պատահական չէ, որ 1919 թ. աշնանը գումարված Սըվասի համաժողովին մասնակցեցին համեմատաբար քիչ թվով քրդեր:⁴³ Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ էրզրումի համաժողովի կողմից ընդունված քաղաքական որոշման մեջ տեղ էր գտել մի պարբերություն, որ-

տեղ ասվում էր, որ արևելյան յոթ վիլայեթներում բնակվող մահմեդական տարրերը «իրենց դիտում են որպես միևնույն ծնողներից սերած եղբայրական խմբեր», որը ըստ էության, նշանակում էր քուրդ ժողովրդի գոյության բացասում:

Սըվասի համաժողովի գումարման օրերին քեմալականները լուրեր ստացան, որ Մալաթիայի շրջանում քրդերը, որոնց թվում էին գտնվում նաև «Քրդստանի վերածնության ընկերության» մեծ թվով անդամներ, ինչպես նաև Բադրխանների անվանի ցեղի ներկայացուցիչներ՝ Քյամուրան Ալի-բեյը, նրա եղբայր Ջեյադեթ-բեյը, Դիարբեքիրից Ջեմիլ փաշազադե էքրեմ-բեյը, Մալաթիայի մյութեսարիֆ Խալիլ Ռահմի-բեյ Բադրխանը պատրաստվում են բարձրացնել ապստամբություն «Անկախ Քրդստան» ստեղծելու նպատակով:⁴⁴ Մալաթիայից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Շիրո վայրում տեղի ունեցած քրդական ղեկավարների համաժողովում Խալիլ Ռահմի-բեյը քրդերի «իրավունքների պաշտպանության կոմիտեի» անունից հրապարակում է «Անկախ Քրդստանի» հիմնական սկզբունքները: Այդ փաստաթուղթը ուղերձի ձևով շրջաբերական նամակով ուղարկվեց մի շարք քրդական ազդեցիկ առաջնորդների, որտեղ կոչ էր արվում բարձրացնել ապստամբության դրոշը Մուստաֆա Քեմալի «արկածախնդրությանը վերջ տալու համար»: Այսպիսով քրդերը իրենց առջև դնում էին նաև համապետական նշանակություն ունեցող նպատակներ:

Համաժողովում Խալիլ Ռահմի-բեյ Բադրխանը քրդական շեյխերի կողմից հայտարարվեց «Անկախ Քրդստանի» կառավարիչ:

Այս շարժման մասին Մուստաֆա Քեմալը տեղեկացել էր դեռևս 1919 թ. հուլիսի սկզբին: Նա կարգադրել էր Դիարբեքիրում տեղակայված բանակային 13-րդ կորպուսի հրամանատարին, ինչպես նաև Ջանիկի (Սամսուն) մյութեսարիֆին ուշի ուշով հետևել և իրեն հաղորդել քրդական առաջնորդների վարքագծի վերաբերյալ տեղեկություններ:

Այդ շարժումը Մուստաֆա Քեմալը համարում էր անգլիական սադրանքի հետևանք: Այն հենց սաղմում ոչնչացնելու նպատակով ձեռնարկվեցին կտրուկ միջոցառումներ: 1919 թ. սեպտեմբերի 10-ին 15-րդ գնդի հրամանատար Իլյաս-բեյին դիրեկտիվ իջեցվեց «ամենաարմատական ձևով» և «բոլոր անհրաժեշտ միջոցներով» ճնշել խռովությունը և «Փաղիշախի ու բանակի դեմ» բոլոր ապստամբներին, որոնք սպառնում են Թուրքիայի ազգային գոյությանը, անխնա կոտորել:⁴⁵ Մուստաֆա Քեմալի հրամանով էլյազիցից, Սեվերիքից և Սըվասից ուղարկվեցին նաև լրացուցիչ ուժեր պատժիչ գործողությունը արագ իրականացնելու համար:

Մինչև որ զորքերը կհասնեին Մալաթիա, քրդական ղեկավարները դիմեցին Հալեպում նստող բրիտանական «Ինտելիջենս սերվիս» գաղտ-

նի ծառայության գնդապետ Բելլին, խնդրելով օգնություն: Սակայն վերջինս համոզեց ձեռնպահ մնալ ելույթ ունենալուց, միաժամանակ վստահեցնելով, որ դաշնակիցները կլուծեն քրդական հարցը:⁴⁶

Այսպիսով ապստամբությունը չսկսված մարեց: Մալաթիայում կենտրոնացած ապստամբական ուժերը ցրվեցին: Ապստամբների աչքի ընկնող ղեկավարներից էլյազիզի վալի Ղալիբ-բեյը փախուստի դիմեց Զալեա: Քեմալականները Մալաթիայից վտարեցին ապստամբների հետ սերտ կապերի մեջ գտնվող բրիտանական բանակի մայրո Նոյելին:

Ամստարակոյս ձախողման գլխավոր պատճառը այն էր, որ քրդական ցեղերի մեծ մասը հրաժարվեց քեմալականների դեմ ելույթ ունենալուց: Ուշագրավ է նշել, որ այդ իրադարձությունների առթիվ քրդական «Դոյբուն» կազմակերպության կողմից 1928 թ. ԱՄՆ-ում հրատարակած գրքույկում (“The Case of Kurdistan against Turkey”) ասվում է, որ եթե քրդերը հարավից, իսկ հայերը հյուսիսից այդ ժամանակ զենքի դիմեին, 1919 թ. ամռանը սեփական ուժերով կարող էին լուծել իրենց հարցը:

Ցանկանալով պարզել քրդական այդ ձախողված ապստամբության դրդապատճառները, Մուստաֆա Քեմալը կարգադրում է Սըվասի նահանգապետ Ռեշիդ փաշային, որ նա ձերբակալի և իր մոտ բերի ապստամբության գլխավոր կազմակերպիչներ Քյամուրան Ալի և Ջելադեթ-բեյ Բադրխաններին, Ջեմիլ-փաշազադե Էքրեմ-բեյին և մյուսներին: Սակայն նրանցից միայն քոչգիրի ցեղի առաջնորդ Ումրանիե գավառի գավառապետ Ալիշան-բեյին հաջողվեց տանել Քեմալի մոտ: Զարցաքննության ժամանակ Ալիշան-բեյը հայտարարում է, որ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի սկզբունքների համաձայն, արևելյան նահանգները տրամադրվում են Զայաստանին և դրանով իսկ ոտնահարվում են քրդերի շահերը: Ուստի իրենց նպատակն է քրդական մեծամասնություն կազմող վիլայեթներում ստեղծել ինքնավար Քրդստան օսմանյան սուլթանաթի հովանավորության ներքո: Զարցաքննությունը անձամբ իրականացրած Մուստաֆա Քեմալը հայտարարում է, որ Վիլսոնի սկզբունքները ոչ մի ուժ չունեն և ինքը առաջարկում է քրդական առաջնորդներին համագործակցել քեմալականների հետ, ավելացնելով, որ Էրզրումի համաժողովում քրդերի բոլոր ներկայացուցիչները հավաստիացրել են իրեն, որ կաջակցեն «հայրենիքի փրկության» համար մարտնչող ազգայնականներին:⁴⁷

Միանգամայն ակնհայտ է, որ քրդական իրականության մեջ գոյություն չի ունեցել միասնական տեսակետ ինչպես քրդական պետության ստեղծման ուղիների, այնպես էլ Արևմտյան Զայաստանի տարածքում հայկական պետության վերածնունդի հարցի կապակցությամբ: Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնաժողովի ամերիկյան սեկցիայի անդամներ Դենրի Քինգը և Չարլզ Քրեյնը, որոնք 1919 թ. հունիսի 10-ից մինչև հուլիսի 29-ը Օսմանյան կայսրության տարածքում անց էին

կացրել մանրամասն քննախույզ՝ ի թիվս այլ խնդիրների պարզելու համար նաև հայկական և քրդական հարցերին վերաբերող մանրամասները, հաղորդում են վերին աստիճանի ուշագրավ տեղեկություններ: Նրանք, օրինակ, իրենց զեկուցագրում նշում են, որ հայտնի թուրք լրագրող, «վաքըթ» թերթի հրատարակիչ-խմբագիր Ահմեդ Էմինը (Յալման) փորձում էր համոզել իրենց, որ Փարիզի վեհաժողովը մեծ սխալ գործած կլինի, եթե հայերին տրամադրի այն տարածքները, որտեղ թուրքերը և քրդերը կազմում են մեծամասնություն: Նա կարծիք է հայտնում, որ այդ տարածքներում քրդերը պետք է նախապատրաստվեն ինքնավարություն ստանալու համար:⁴⁸

Քինգ-Քրեյնի հանձնաժողովի անդամները իրենց շրջագայության ժամանակ հանդիպումներ են ունեցել նաև մի շարք քուրդ գործիչների հետ, որոնք իրենց անվանել են «Քրդական դեմոկրատական կուսակցության» անդամներ: Այդ գործիչներից Նեջմուդդին-բեյը, Դուսեյին-բեյը, Ազիզ Բաբան բեյը և ուրիշներ հայտնում են, որ իրենք կողմնակից են բրիտանական մանդատի ներքո ձևավորելու քրդական պետություն այնպիսի շրջաններում, որտեղ իրենց կարծիքով քրդերը կազմում են «նշանակալից մեծամասնություն»: Որպես այդպիսի շրջաններ նրանք հիշատակում են Խարբերդի, Դիարբեքի, Վանի, Բիթլիսի, Բայազետի և Մոսուլի շրջանները՝ ելքով դեպի Միջերկրական ծով: Նրանք չեն տում են, որ իրենք դեմ են թուրքերի և արաբների հետ ամեն տեսակի քաղաքական կապեր ունենալուն: Ինչ վերաբերում է ապագա հայկական պետությանը, ապա իրենք պատրաստ են ճանաչելու այն, «եթե իհարկե այդ պետությունը գտնվի այն տարածքներից դուրս, որոնց նկատմամբ իրենք ունեն հավակնություններ»: Նրանք առաջարկում են նաև կատարել բնակչության փոխանակություն, այսինքն ապագա քրդական պետության տարածքից հայերը պետք է տեղափոխվեն ապագա Զայաստանի տարածքը և հակառակը, Զայաստանի տարածքից քուրդ բնակչությունը պետք է տեղափոխվի Քրդստան:

Ինչ վերաբերում է ասորիների հավակնություններին ունենալու համար առանձին տարածք կամ «Ազգային տուն», ապա քուրդ գործիչները կտրուկ առարկում էին դրան, պատճառաբանելով, որ ասորիները ոչ մի վայրում մեծամասնություն չեն կազմում:⁴⁹

Մուստաֆա Քեմալը վճռականորեն պայքարում էր այն բոլոր քուրդ գործիչների և կազմակերպությունների դեմ, որոնք չէին մերժում Արևելյան Ամատոլիայում հայկական պետություն ստեղծելու գաղափարը: Այսպես, 1919 թ. նոյեմբերի 17-ին «թուրքերի հայրը» Սըվասից հանդիմանական ոգով նամակ է ուղարկում քուրդ գործիչ, օսմանյան սենատի անդամ Մահմուդ Չյուրուք Սուլու փաշային, որտեղ նրան հիշեցնելով, որ «Լե Բոսֆոր» ֆրանսալեզու թերթին տված հարցազրույցում նա հայտարարել

է, որ «Թեև մենք չենք ճանաչում հայերի կողմից առաջադրվող հսկայական տարածքային պահանջների հիմնավորվածությունը, սակայն կզնայինք նրանց հետ սահմանների որոշ ճշտման», Քեմալը առանց իր զայրույթը քաջցնելու գրում է. «Մենք կարծում ենք, որ նման կարգի հայտարարությունը, որն իր մեջ պարունակում է Հայաստանի նկատմամբ տարածքային զիջումների խոստում և արված է պետական գործչի, խաղաղության պայմանագրի գծով հանձնաժողովի անդամի կողմից, անկասկած առաջ կբերի մեծ զայրույթ Արևելյան Անատոլիայի բնակչության շրջանում: Երգրումի և Սըվասի կոնգրեսներում ժողովուրդը որոշել է Հայաստանին չզիջել թուրքական հողի և ոչ մի թիզ և ամբողջ աշխարհին հայտարարել է, որ եթե նույնիսկ կառավարությունը հայտնվի այնպիսի ողբերգական վիճակում, որ ստիպված լինի իր վրա վերցնելու նման պարտավորություններ, թուրք ժողովուրդը իր սեփական ձեռքերը կվերցնի իր օրինական իրավունքների պաշտպանությունը: Այդ ազգային որոշումը առաջին հերթին պետք է հայտնի լիներ խաղաղության բանակցությունների գծով նախապատրաստական հանձնաժողովի անդամներին»:⁵⁰

Անկասկած քրդական իրականության մեջ գերակշռող էր այն մտայնությունը, որ Արևելյան Անատոլիան պետք է կազմի Թուրքիայի անբաժանելի մասը: Դա նշանակում էր, որ մերժվում է Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետության ստեղծման գաղափարը:⁵¹

Հարկ է սակայն նշել, որ հայկական պահանջների վերաբերյալ Կ. Պոլսի սուլթանական կառավարության դիրքորոշումը այն աստիճանի կտրուկ ու բացասող չէր, որքան թուրք ազգայնականներինը՝ քեմալականներիը: Վկայելով այդ մասին, Ալ. Խատիսյանը գրում է, որ 1920 թ. ամռանը ինքը Կ. Պոլսում հանդիպում է ունեցել սուլթանական կառավարության ներքին գործոց նախարար Բեշար փաշայի հետ: «Բեշար փաշային ես պարզեցի մեր բաղձանքները, բացատրեցի, թե որքան ցանկալի է փոխադարձ համաձայնության միջոցով որոշել Միացյալ Հայաստանի սահմանները՝ մտցնելով հայկական հողամասերու մեջ վեց վիլայեթներու կարևոր մասը, նավահանգիստ մը և այսպիսով լուծել մեր դարավոր վեճը»: Որպես պատասխան Բեշար փաշան թղթի վրա գծում է Հայաստանի թուրքական տեսակետից հնարավոր սահմանները, Հայաստանի տարածքի մեջ մտցնելով ամբողջ Ռուսահայաստանը, Ալաշկերտի և Բասենի հովիտները և Սև ծովի Բիզե նավահանգիստը:⁵² Այն, որ այս մոտեցումը միայն Բեշար փաշայի անձնական կարծիքը չէր, այլ հանդիսացել է սուլթան Մեհմեդ VI Վահիեդդինի կառավարության քաղաքական դիրքորոշումը, հաստատվում է նաև այլ փաստերով: Սակայն ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ 1919 թ. վերջերին և 1920 թվականին Կոստանդնուպոլսի կառավարությունը իրենից այլևս ռեալ ուժ չէր ներկայացնում և ի-

րական իշխանությունը անդամալիորեն գտնվում էր քեմալականների ձեռքերում:

Այսպիսով իրողությունը այն էր, որ առանձին աննշան դեպքերից բացի տեղի չունեցան քրդերի հակաքեմալական շարժումներ, կամ լուրջ զինված ելույթներ: Դա վերստին վկայում է այն մասին, որ քեմալականների և քրդերի շահերը Հայկական հարցի կապակցությամբ կատարելապես համընկնում էին: Հենց դրա պատճառով Արևմտյան Հայաստանում քեմալականների դեմ չստեղծվեց ներքին քրդական ճակատ: Ընդհակառակը, քուրդ բնակչության զգալի մասը ներգրավվեց Հայաստանի և Հունաստանի դեմ զինված պայքարի մեջ: Քրդերը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Կիլիկիայում ֆրանսիացիների և հայերի դեմ մղվող պայքարում: Արձագանքելով քեմալականների հատուկ կոչին, քրդերը հատկապես «աչքի ընկան» Ուրֆայի և Մարաշի շրջաններում, կազմակերպելով հայ բնակչության զանգվածային ջարդեր:

1920 թ. սկզբներին Կողբի, Կաղզվանի, Արարատի և Օլթիի քրդերը իրենցից ներկայացնում էին վտանգավոր ուժ Հայաստանի Հանրապետության համար: Նրանք կարող էին հայկական ուժերը ջլատել կամ թիկունքից վտանգել, եթե այդ ուժերը փորձեին մտնել Ալաշկերտ և Բասեն «զենքի ուժով տեր հանդիսանալու համար հայրենի հողին»:⁵³

Այս մտահոգություններից դրդված, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, 1920 թ. հունվարից սկսած, մեծ ուշադրություն դարձրեց Հայաստանի սահմանների մեջ ամփոփված քրդության վրա, նրանց եթե ոչ Հայաստանի բարեկամ դարձնելու, այլ գեթ նրանց լոյս-լույսությունը ապահովելու համար:

Հայաստանի կառավարության որոշմամբ և ներքին գործոց նախարարության հրահանգով Կարո Սասունին, 1920 թ. մարտից մինչև ապրիլի վերջը, շրջագայել է վերոհիշյալ շրջանները և Կարսի նահանգապետ Ղորղանյանի հետ միասին տեսակցություններ է ունեցել քուրդ և աղբբեջանցի ներկայացուցիչների հետ՝ միջցեղային համերաշխության քարոզ-ներով: Այդ նույն ժամանակ Կ. Սասունին առանձին տեսակցություններ է ունեցել քրդական ղեկավարների հետ, աշխատելով հասկացնել նրանց քուրդ-հայկական համագործակցության անհրաժեշտությունը: Սակայն բացի եզիդներից, մոտ 60 հազար քրդեր գրավել են վերապահ դիրք: Թեև խոսքով նրանք միշտ իրենց ցուցադրում էին որպես Հայաստանի քաղաքացի, բայց գործով «հակվանծ էին թուրքին կողմը»:⁵⁴ «Քյուրտերը սպառազեն մնացին մեր սահմաններուն վրա, — շարունակում է Կ. Սասունին, — և հայ բանակը ստիպվեցավ մեկ աչքը պահել թրքական կանոնավոր զորքերուն ու թաթար ազգաբնակչության վրա, իսկ մյուս աչքով հսկել սահմաններս և սահմանակից զինված քրտության վրա»:⁵⁵

1920 թ. սեպտեմբերին, հայ-թուրքական պատերազմը սկսվելուց հետո, Արևմտյան Հայաստանի քրդերի մի մասը միանալով Քյազիմ Կարաբեքիր փաշայի բանակին, կռվեց Հայաստանի Հանրապետության դեմ: Հատկապես իրենց հակահայկական գոլծեկներապի ակտիվությամբ աչքի ընկան Օլթիի և Կողբի քրդերը, ինչպես նաև Մալազկերտ-Արճեշի հայտարանցի աշիրեթը Քյոռ Հյուսեին փաշայի գլխավորությամբ: Սրանք մասնակցեցին նաև Կարսի և Ալեքսանդրապոլի կռիվներին:

1920 թ. դեկտեմբերի 2-ին թուրք-հայկական պատերազմում պարտություն կրած Հայաստանը ստիպված էր ստորագրել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, փակելով առաջին հանրապետության պատմական տարեգրության վերջին էջը:

Մինչդեռ Թուրքիայում քրդական հարցը տալիս էր նոր առկայծումներ: 1920 թ. քուրդ առաջնորդներից մեկը՝ Խալիտ-բեյ Ջիբրանլին և թուրքական բանակի մի խումբ քուրդ սպաներ Վարդո, Կարլուվա, Մալազկերտ, Բուլանըլս և Խնուս գավառներում բանակցություններ էին վարում քրդական ցեղապետերի ու շեյխերի հետ պայքար կազմակերպելու համար Էրզրումի և Սըվասի համաժողովների, ինչպես նաև «Ազգային ուխտի» այն հոդվածի դեմ, որն ըստ էության ժխտում ու բացատում էր քուրդ ժողովրդի գոյության փաստը և տապանաքար էր դնում անկախ Քրդստանի գաղափարի վրա:⁵⁶

1920 թ. ամռանը Խալիտ-բեյ Ջիբրանլին կապեր հաստատեց Ստամբուլում «Քրդստանի վերածնության ընկերության» անդամներ Աբդուլ Ղադերի և Աբդուրրահման Հաքյարիի հետ: Նրանց միջոցով նա պայմանավորվեց Թուրքական Ազգային Մեծ ժողովի (ԹԱՄԺ) քուրդ պատգամավոր Յուսուֆ Ջիյայի և նրա կողմնակիցների հետ այն մասին, որ իրենք պետք է պայքարեն հանուն Քրդստանի անկախության Ազգերի լիգայի միջոցով: Միաժամանակ Խալիտ-բեյի կողմնակիցները զինված ապստամբության պատրաստություններ էին տեսնում Դերսիմ-Քոչգիրի շրջանում, որն առավելապես բնակեցված էր թուրքական կառավարության նկատմամբ թշնամական զգացումներ տածող ղզլբաշ (ալի-իլլահի) բնակչությամբ:

1920 թ. սկզբին Դերսիմում տեղի ունեցավ քրդական մի շարք ազդեցիկ ցեղերի, ինչպես օրինակ ջանբեկյան, քուրմեշան և այլն, ներկայացուցիչների ժողով, որի մասնակիցները միահամուռ կերպով երդվեցին սկսել զինված պայքար հանուն անկախ Քրդստանի ստեղծման, որի մեջ նրանք ենթադրում էին ընդգրկել նաև Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի, Էյլազիգի, Դերսիմ-Քոչգիրի վիլայեթները, այսինքն Արևմտյան Հայաստանի տարածքի զգալի մասը:

1920 թ. նոյեմբերին Դերսիմի կենտրոն խոզաթում տեղի ունեցավ Դերսիմի և Չմշակածագի քրդական առաջնորդների մի նոր ժողով, որը որոշեց համախմբել բոլոր ուժերը ազգային իրավունքներ ձեռք բերելու համար: Նոյեմբերի 15-ին ժողովը Անկարայի կառավարության հասցեով ուղարկեց մի նամակ, որտեղ պահանջվում էր, որ կառավարությունը անհապաղ դերսիմցիներին հաղորդի իր տեսակետը Քրդստանի ինքնավար կառավարման վերաբերյալ: Նամակում միաժամանակ պահանջվում էր անհապաղ ազատ արձակել Էյլազիգում, Մալաթիայում, Սըվասում և Էրզինջանում բանտարկված բոլոր քրդերին, անհապաղ թուրքական զորքերը դուրս բերել Քոչգիրիի շրջանից և քրդական մեծամասնություն կազմող բոլոր շրջաններից հետ կանչել թուրք աստիճանավորներին: Ի պատասխան այդ նամակի, Անկարայի կառավարությունը Էյլազիգ և Դերսիմ ուղարկեց մի պատվիրակություն, որը քրդերին հանգստացնելու նպատակով հայտարարեց, որ նրանց պահանջները արդարացի են, միաժամանակ խորհուրդ տալով, որ նրանք ձեռնպահ մնան ելույթներից:⁵⁷

Իրենց ներկայացնելով որպես քրդերի «բարեկամներ», քեմալականները զանազան խոստումներով ու կաշառքի ուժով աշխատում էին քրդական ազդեցիկ առաջնորդներին գրավել իրենց կողմը: Օրինակ, նրանց հաջողվեց Դերսիմի ցեղապետերից Մեչո-աղային, Դիապ-աղային, Մուստաֆա Ջեքի-բեյին, Ռեմիզ-բեյին, Աբդուլհաք Թեֆթիկ-բեյին, Հասան Հայրի-բեյին և շատ ուրիշների գրավել իրենց կողմը: Քեմալականները նրանց նշանակեցին ԹԱՄԺ-ի պատգամավոր, որից հետո այդ նախկին ընդդիմադիրները սկսեցին սերտորեն համագործակցել քեմալականների հետ և նրանցից մի քանիսը նույնիսկ հետագայում օգնեցին ազգայնականներին Դերսիմում ճնշելու հակաքեմալական ապստամբությունը:⁵⁸

Ժամանակ առ ժամանակ քրդերին հանգստացնելու և իրենց հետ համագործակցող քուրդ գործիչների ինքնասիրությունը շոյելու նպատակով քեմալականները չէին խորշում տալու սին, ոչնչով չհիմնավորված խոստումներ: Օրինակ, Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում Էրզրումի պատգամավոր Հուսեյին Ավնի-բեյը 1922 թ. հայտարարեց. «Այս երկիրը պատկանում է քրդերին ու թուրքերին»:⁵⁹ Նման ոչնչով չպարտավորեցնող հայտարարությունները դույզն ինչ չափով չէին կարող գոհացում տալ քրդական քաղաքական այն շրջանակներին, որոնք պահանջում էին իրենց ազգային իղծերի բավարարում միասնական դաշնային պետության շրջանակներում:

Անհրաժեշտության դեպքում քեմալականները չէին խորշում դեմ տեղի քրդերի «բարեկամի» իրենց դիմակը: Այսպես, 1921 թ. գարնանը քեմալական իշխանությունները պահանջեցին Դերսիմում ցրել հակակառավարական պայքար մղող քրդական ջոկատները, սպառնալով, որ հակառակ դեպքում հրաման կտրվի ոչնչացնել քրդերի բնակավայրերը:

Քրդերը դրան պատասխանեցին ապստամբությամբ, որը տարածվեց նաև քրդաբնակ այլ շրջաններում, ընդգրկելով 15 հազար քառակուսի կիլոմետր տարածք:⁶⁰ Անկարայի կառավարությունը նախ իրեն կողմնակից առանձին քուրդ գործիչների միջոցով աշխատեց պառակտել քրդական շարժումը և ոչ առանց հաջողության: Այնուհետև ապստամբական օջախներում կուտակելով նշանակալից ուժեր, 1921 թ. մարտի 15-ին Սըվաս, Էյսազիզ և Էրզինջան վիլայեթներում հայտարարեց պաշարողական դրություն: Ի պատասխան կառավարության կողմից ապստամբների ղեկավարներին ուղղված հեռագրի, որում պահանջվում էր հանձնվել, վերջիններս պատասխանեցին, թե «քանի որ իրենք գիտեն, որ թուրքական կառավարությունը նպատակ ունի ոչնչացնելու քրդերին, ինչպես որ ոչնչացրեց հայերին, իրենք շարունակելու են պայքարը հանուն ազգային իրավունքների»:⁶¹

Ապստամբությունը գնալով ծավալվում էր և ընդունեց այնպիսի հուժկու բնույթ, որ Անկարայի կառավարությունը ստիպված էր հունական ճակատից հանել թուրքական զորքերի մի մասը և ուղարկել ապստամբների դեմ:

Ի վերջո մեծ դժվարությամբ քեմալականները կարողացան ճնշել այդ ապստամբությունը ևս:

1921 թ. Մուստաֆա Քեմալը և նրա կառավարությունը լծվել էին եռանդուն գործունեության, հույս ունենալով քրդերի ազգային ու կրոնական զգացումներն օգտագործել նավթով հարուստ Մոսուլի վիլայեթը անգլո-ֆրանսիական երախից պոկելու և «նոր թուրքիային» միացնելու համար: Այդ կարևոր գործը գլուխ բերելու հանձնարարությունը Մուստաֆա Քեմալը դրել էր իր մերձավորագույն զինակիցներից մեկի՝ գեներալ Օզդեմիր փաշայի վրա, որը քանիցս ընդունակություն էր դրսևորել նաև դիվանագիտության բնագավառում, գտնելով ծագած հարցերի ոչ սովորական լուծումներ: Թուրքերին և քրդերին անվանելով «մեկ միասնական կրոնի զավակներ», գեներալը կոչ էր անում նրանց միավորվել Անկարայի կառավարության շուրջ և արյուն թափել «հանուն հավատի»՝ ընդդեմ իսլամի ռիսեթիմ թշնամիների և առաջին հերթին անգլիացիների:⁶² Միաժամանակ նա հաջողությամբ շրջանառության մեջ էր դնում քեմալականների քաղաքական զինանոցի հիմնական գեները՝ «հակահիմպերիալիստական» կարգախոսները: Ընդ որում, քրդական այն բոլոր առաջնորդները, որոնք հրաժարվում էին ենթարկվել քեմալականների կամքին, պիտակավորվում էին իբրև «իմպերիալիզմի գործակալներ», «կրոնական մոլեռանդներ», «հետադիմականներ և այլն:

Մոսուլի խնդիրը հօգուտ Թուրքիայի լուծելու համար քեմալական իշխանությունները փորձում էին օգտվել նաև բուլղարիայից Ռուսաստանի աջակցությունից, որպես խայծ օգտագործելով «հակահիմպերիալիստա-

կան» և «հակաբրիտանական» կարգախոսները: Այսպես, 1921 թ. օգոստոսի 4-ին արտաքին գործերի գծով քեմալականների կոմիսար Յուսուֆ Քեմալ-բեյը Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինին հասցեագրված հուշագրում փորձում էր համոզել նրան, որ Մոսուլի նավթը ստանալու, ինչպես նաև Դոդլիաստանում իրենց զաղութային տիրապետությունը հավերժացնելու նպատակով անգլիացիները ձեռնամուխ են եղել այնպիսի քայլերի իրականացման, որոնք անմիջականորեն դիպչում են Ռուսաստանի շահերին: «Այդ նպատակով, - գրում էր Յուսուֆ Քեմալը, - անգլիացիները պլանավորել են Միջագետքի և Սև ծովի միջև ստեղծել մեկ կամ մի քանի պետություններ, որոնք պետք է գտնվեն բրիտանական հովանու ներքո: Քանի որ Դայաստանի մասին, որը նախատեսված էր այդ նպատակի համար, ներկայումս խոսք անգամ չի կարող, ուստի Անգլիան աշխատում է այդ նույն ծրագրի համար օգտագործել, ի միջի այլոց ապարդյուն կերպով, սրիկաների կողմից ղեկավարվող քրդական բանդաները»:⁶³ Խոսքն անշուշտ գնում էր Թուրքիայի տարածքում Անգլիայի հովանու ներքո քրդական պետություն ստեղծելու վերաբերյալ հարցին:

Դժվար է հավատալ, որ Մոսկվան չէր կռահում քեմալականների այս «հեղափոխական-հակահիմպերիալիստական» ճամարտակությունների թաքցնված իմաստը: Սակայն առաջնորդվելով զուտ պրագմատիստական հաշվարկներով, խորհրդային ղեկավարները ոչ միայն ձևացնում էին, թե կատարելապես ընդունում էին դրանք, այլև տուրք էին տալիս Անկարայի շովինիստական նկրտումներին:

Ի շահ Մոսուլի խնդրի լուծման, քեմալականները ճարպկորեն սկսեցին օգտագործել «անկախ Քրդստանի» խաղաքարտը: Մասնավորապես Իրաքի քրդերին իրենց կողմը գրավելու նպատակով, քեմալականները նրանց ազդեցիկ առաջնորդների հետ ստորագրեցին մի պայմանագիր, որով խոստանում էին նպաստել Իրաքյան Քրդստանի անկախության «սուրբ գործին»: Այսպիսով Անկարան իր համաձայնությունն էր տալիս ստեղծելու «անկախ Քրդստան» սակայն Իրաքի հաշվին:⁶⁴

1920-ական թվականների սկզբին քեմալականները սևեռուն ուշադրության կենտրոնում էին գտնվում նաև Իրանական Քրդստանը: Այստեղ որպես պատասխան ինքնազլխության ձգտող ցեղերի հնազանդեցման իրանական կառավարության հետևողական քաղաքականության, 1922 թ. կեսերին բռնկեց քրդական մի հուժկու անջատողական շարժում շեքքաք ցեղի առաջնորդ Իսմայիլ աղա Սըմկոյի գլխավորությամբ: Ապստամբներն առաջ քաշեցին Իրանի տարածքում անկախ Քրդստանի ստեղծման պահանջ:⁶⁵

Փաստեր կան այն մասին, որ Իրանական Քրդստանի ազատագրմանը ձգտող քրդական ուժերը իրենց ներշնչումն ստանում էին թուրքե-

րից ու բուլշևիկներից: Քեմալականներն աշխատում էին պարսկական շրջանները պահել մշտական ապստամբության մեջ, որպեսզի պարսիկները թշնամանան քրդերի հետ և դրանով իսկ թուրքերը ունենան իրանական կառավարության գործակցությունը ընդդեմ քրդական շարժման: Բացի այդ, քեմալականները ձգտում էին այդ շարժումներով քրդերի ուշադրությունը շեղել թուրքիայից և այն կենտրոնացնել Իրանական Քրդստանի վրա:⁶⁶ Թուրքական գլխավոր շտաբի վարչության պետ Բասրի-բեյը 1922 թ. գաղտնի հրահանգ էր իջեցրել Օզդեմիր փաշային, որտեղ ասվում էր, որ Սըմկոյի հաղթանակը և նրա ազդեցության մեծացումը քրդերի շրջանում չի համապատասխանում թուրքիայի շահերին: «Սակայն շարունակվում էր հրահանգում, — ներկա պահին նրա հետ թշնամանալը ևս բնավ մեր օգտին չէ: Ուստի դուք մեծ ժառանգություն մատուցած կլինեք հայրենիքին, եթե կարողանաք խաբել ցեղերին և նրանց տրամադրել Սըմկոյի դեմ, օրինակի համար տարածելով լուրեր, որ Սըմկոն այդ հեղափոխությունը բարձրացրել է անգլիացիների փողերով և քրդերի արյունը թափում է ժառանգելով անգլիացիներին և բացառապես հանուն սեփական շահերի»:⁶⁷

Անկարայում սովետական դեսպան Ս. Արալովի հետ «անկեղծ զրույցի» ժամանակ Մուստաֆա Քեմալը «բարեկամ երկրի» դիվանագիտական ներկայացուցչից չէր թաքցնում, որ «Ուրմիա լճի շրջակայքում բնակվող քրդերը ցանկություն են հայտնել գործելու թուրքիայի հետ համատեղ»: Որ նրանք իրենց տրամադրության տակ ունեն անհրաժեշտ քանակությամբ զենք, դրամ և պատրաստ են հանդես գալու «անգլիական իմպերիալիզմի դեմ»: Այնուհետև ընկնելով քաղաքական խորհրդածությունների գիրկը, «թուրքերի հայրը» իր զրուցակցին պարզաբանում է. «Քրդական հարցը խճողված ու բարդ խնդիր է: Անգլիան օգտվում է նրանից, որ քրդերը պատկանում են երկու պետության՝ թուրքիային և Պարսկաստանին, և խաղում են դրա վրա: Անգլիան ցանկանում է իր տիրապետության տակ ստեղծել քրդական պետություն և դրանով իսկ հանդես գալ հրամայողի դերում մեր, Պարսկաստանի և Անդրկովկասի նկատմամբ... Այժմ քրդական առաջնորդները բաժանվել են. մի մասը հակված է դեպի Իրանը, մյուսները դեպի Անգլիան, երրորդները դեպի մեզ ... Սուլեյմանիեում անգլիացիները շեյխ Մահմուդին ստիպեցին հանդես գալու մեր դեմ... Մենք, թուրքերս, — քննադատում շարունակում է Քեմալը, — նույնպես պարտքի տակ չենք մնում: Քուրդիստանի հարավում մենք օգնեցինք քուրդ Ֆեթթիկին և ուրիշներին ապստամբելու անգլիացիների դեմ»:⁶⁸

1922 թ. օգոստոսին Ռըզա-խանի զորքերը ջախջախեցին Սըմկոյի ապստամբությունը և գրավեցին նրա նստավայրը Չեիրիք-կալեն, դրանով իսկ միառժամանակ վերջ տալով թուրքերի միջամտությանը Իրանի ներքին գործերին:

Օգտագործելով «երկակի ստանդարտի» քաղաքականություն և Իրաքի ու Իրանի քրդերի ազգային իղձերի նկատմամբ ընդունելով «անկախության ջատագովի» կեցվածք, քեմալականները թուրքական Քրդստանում և Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջանների նկատմամբ, ընդհակառակը, իրականացնում էին ավանդական «արյան ու երկաթի» քաղաքականություն, անխնա կերպով ճգնելով անկախության որևէ ձգտում և առհասարակ նպատակադրվելով հիմքից վերացնել քրդական հարցը: Քեմալականները ծրագրեր էին փայտալարում թուրքիան վերածելու ազգային-էթնիկական առումով համատարր մի պետության: Ուստի նրանք պատրաստվում էին շարունակել երիտթուրքերի կողմից սկսած Արևմտյան Հայաստանը «խորթ տարրերից» սրբել-մաքրելու քաղաքականությունը, կազմելու համար էթնիկապես մի միապաղաղ թուրքիա: Այժմ հերթը հասել էր քրդերին և Անկարան որոշել էր իր հասկացած ձևով լուծում տալու քրդական հարցին:

Ներկայացնելով այդ խնդրում Մուստաֆա Քեմալի քաղաքականության շրջադարձը դեպի «ծանր ձեռքի» մարտավարությունը, քուրդ ազգային գործիչ Քյամուրան Բադրխանը նշում էր, որ երբ քրդերը նրան հիշեցրին իր ժամանակին իրենց տված առատ խոստումների մասին, նա որպես պատասխան քրդերին ցույց տվեց թնդանոթներ և սվին, հրամայեց փակել քրդական դպրոցները, ձերբակալել ազդեցիկ ու հայրենասեր գործիչներին և նրանց հանձնել տխրահռչակ «անկախության դատարաններին»:⁶⁹

1923 թ. հոկտեմբերի 18-ին թուրքական Ազգային Մեծ ժողովը ընդունեց «ավազակային շարժումները ճնշելու վերաբերյալ» օրենք, որը կառավարությանը հնարավորություն էր տալիս ցանկացած շարժում որակել որպես «ավազակային-բանդիտական» և անողորմ դաժանությամբ ճգնել դրանք:

Այսպիսով, հայերի նկատմամբ արդեն փորձարկված «տոտալ մաքրագործման» գործելակերպը մտնում էր իր հերթական փուլը: Քրդերը համոզվեցին, որ հայերի, հույների և ասորիների կոտորվելուց և բիրտ ուժով երկրից քշվելուց հետո, իրենք թուրքիայի մեջ մնացել են մենակ և այժմ թրջական վտանգը բացառապես կենտրոնացած է իրենց դեմ: Նրանք հասկացան նաև, որ իրենց իսլամությունը, ազգայնական քեմալականների համար ոչ մի արժեք չի ներկայացնում, առավել ևս հաշվի չեն լավանների համար ոչ մի արժեք չի ներկայացնում, առավել ևս հաշվի չեն առնվում իրենց նախկին օժանդակությունները թուրքական պետությանը: Միաժամանակ նրանք խորապես զղջացել էին, որ «թուրքի մեռած ժամանակ», այսինքն համաշխարհային պատերազմի եզրափակիչ էտապում, երբ պարտված թուրքիան Մուղրոսի գինադադարով հանձնվել էր դաշնակիցների ողորմածությանը, իրենք պահը ձեռքից բաց թողեցին և չդիմեցին ապստամբության:

Այս ժամը մտորումները քրդերին մղում էին ներքին կազմակերպվածության: Դեռևս 1920 թ. աշնանը մի խումբ ազդեցիկ քրդական առաջնորդներ՝ ջիբրանլի աշիրեթապետ գնդապետ Խալիտը, Քիթլիսի երեսփոխան Ալի Ռզան, Քենալ Ֆեվզի բեյը, շեյխ Սայիդ Նախշբանդին և ուրիշներ ստեղծեցին մի կազմակերպություն, որն ընդամենը հնգամյա աշխատանքներից հետո դարձավ կատարյալ մի ցանց, և արմատ բռնեց Թուրքիայի քուրդ բնակչության շրջանում, իսկ ամենակարևորը՝ համախոհներ գտավ Իրանում, Իրաքում, Սիրիայում և նույնիսկ Եգիպտոսում:

Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ
ՔՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՍԵՎՐԻՑ
ՄԻՆՉԵՎ ԼՈՋԱՆ ԸՆԿԱԾ ՇՐՋԱՆՈՒՄ

Դեռևս մինչև միջազգային վեհաժողովներում Թուրքիայի հետ կապված հարցերի քննարկումը, բրիտանական դիվանագիտությունը լծվել էր եռանդուն գործունեության, «թուրքական հարցի» վերաբերյալ մշակելով զանազան տարբերակներ, որոնք նա մտադիր էր շրջանառության մեջ դնել առաջիկայում գումարվելիք զանազան միջազգային աստիճաններում: Այդ բազմաթյալ ու հեռահար նպատակներ հետապնդող ծրագրերում իր որոշակի տեղն ունեին նաև հայկական և քրդական խնդիրները: Անշուշտ բրիտանական կառավարության նպատակը այդ հարցերի արմատական լուծումը չէր: Առաջին պլանում գտնվում էին սեփական երկրաքաղաքական շահերը: Դրանք ապահովելու համար Ֆորին օֆիսը չէր խորշում նաև հարցը արհեստականորեն շիկացնելու փորձված մեթոդից, հակառակորդին ավելի զիջող դարձնելու համար: Այդպիսի մի փորձ կատարվեց 1919 թ. ամռանը: Բրիտանական գնդապետ և քաղաքական գործակալ Վիլսոնը հանդես եկավ Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ մի ծրագրով, որը միտված էր նաև «լուծելու» հայկական և քրդական պրոբլեմները: Գնդապետն առաջարկում էր Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներից կազմել մեկ միասնական հայկական պետություն՝ գերազանցապես ամերիկյան հովանավորության ներքո, իսկ մնացյալ չորս վիլայեթներից քրդական պետություն ենթադրաբար բրիտանական հովանավորության ներքո: Այս առաջարկը այն աստիճանի արտառոց էր, որ նույնիսկ կտրուկ առարկության հանդիպեց բրիտանական քաղաքական շրջանների կողմից: Այսպես, անգլիական ծովակալ Ռեբբը լորդ Քերզընին ուղղված իր 1919 թ. օգոստոսի 19-ի թվակիր մամուլում գրում էր, որ ինքը շատ լուրջ առարկություններ ունի գնդապետ Վիլսոնի առաջարկության կապակցությամբ: Ծովակալը պարզաբանում էր, որ գործնականում Տրապիզոնը հայկական բնակչություն չունի, մինչդեռ Վանը և Մուշսաուղը (այդպես էր ծովակալն անվանում Մուշը - Վ. Բ.), որոնք միշտ էլ եղել են միակ գերազանցապես հայաբնակ շրջանները Թուրքահայաստանում, պետք է թողնվեն քրդական պետությանը: «Դա կդիտվեր, - նշում է ծովակալը, - դավաճանություն հայկական շահերին և ուղղակի կհակասեր այն հավաստիացումներին, որոնք տրվել են հայերին դաշնակից տերությունների կողմից»: Այնուհետև նա ավելացնում էր, որ «բոլորովին անժամանակ և խիստ վտանգավոր կլինի փորձել ներկայումս սահմանագծել Հայաստանի և Քուրդիստանի սահմանները»:¹

Գնդապետ Վիլսոնի ծրագրի քննադատությամբ հանդես եկավ նաև բրիտանական մեկ այլ դիվանագետ՝ Թ. Յոհլերը, որը 1919 թ. օգոստոսի 27-ին Կ. Պոլսից գրում էր Քերրին, որ ինքը խիստ անհանգստացած է, քանի որ «փոքրիշատե լավատեղյակ է քրդական գործերին», որի կապակցությամբ ունի 25 տարվա փորձառություն: Այնուհետև նա նշում էր, որ ինքը այդ խնդրին մոտենում է բուլղոսի տարբեր հայեցակետից և վստահ է, որ այն ճիշտ է: «Ես կարծում եմ, - ասում էր Յոհլերը, - որ մենք կարիք չունենք մի շարան քորոցների՝ քրդերին իրար և ոչ էլ հայերին հանգուցելու համար»: «Չեմ կարծում, - շարունակում էր նա, - որ այս դժվարին ժամանակներում կարողանանք մեզ թույլ տալ չափից դուրս հեռուն գնալու մարդասիրության առումով և պետք է հիմնվենք առաջին հերթին բրիտանական շահերից բխող նկատառումների վրա»:

Յոհլերը գտնում էր, որ Մեծ Բրիտանիան պետք է քրդական հարցին մոտենա գրեթե բացառապես Միջագետքի տեսանկյունից: Պա մշակում էր, որ Անգլիան պետք է ձեռնպահ մնա բուն Թուրքիայում հայկական և քրդական հարցերը բարձրացնելուց, քանի որ տվյալ պահին դա չի համապատասխանում Մեծ Բրիտանիայի շահերին:

Գնդապետ Վիլսոնի մասին Յոհլերը արտահայտվում էր խիստ բացասական տոնով: «Ես բավական վախեցած եմ Վիլսոնից, - գրում էր նա, - նա ինձ չափից դուրս եռանդուն է թվում և առ այսօր նրա միտքը սխալ, և հետևաբար, նրա գործողությունները բավականին անզգույշ են, իսկ նրա գործակալները հավատ չեն ներշնչում»:

Ընդհանրացնելով իր տեսակետները, Յոհլերը գտնում էր, որ Յաստամի և Քրդստանի սահմանները պետք է թողնել անորոշ վիճակում և ամենից առաջ զբաղվել «մեր Միջագետքի սահմանը ճշտելով»:² Ավելի պարզ ու հստակ դժվար թե հնարավոր լիներ ասելու: Անգլիան խուսափում էր խաղալ կրակի հետ մի տարածքում, որտեղ իրական ու հեռանկարային շահեր չունեիր: Նրա մտասևեռումը Միջագետքն էր, որը Սալբս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով «հասնում էր» իրեն:

Վերոհիշյալ հարցադրումներից համարյա չէր տարբերվում Կ. Պոլսում բրիտանական գերագույն կոմիսարի տեսակետները: Նրա կարծիքով «քրդերի նկատմամբ մեր գործելակերպի ողջ հիմքը պետք է լինի Միջագետքի հետ բավարար սահմանագծի երաշխավորումը»: Տարբերությունը այն էր, որ «նման սահմանագիծը չի կարող ապահովվել հարթավայրերում, այլ պետք է գտնվի քրդական լեռներում», դա մշակում էր, որ Միջագետքի սահմաններն ապահովվելու համար անգլիացիներին անհրաժեշտ էր, ինչպես կոմիսարն էր ասում, «Քուրդիստանի լեռկ լեռներից վերցնել այնքան, որքան անհրաժեշտ կլինի այս նպատակի համար»:

Այնուհետև իր պատճենական սերն արտահայտելով հայ և քուրդ ժողովուրդների նկատմամբ, կոմիսարը գրում էր. «Ես մազաչափ իսկ

կասկած չունեմ, որ բրիտանական վարչագետները կհաջողեն խաղաղություն և արդարություն ապահովել քրդերի, ինչպես նաև հայերի համար, թեև այս երկու բաները հոգեպես առավել մոտ են վերջիններսին, քան առաջիններին»:

Կոմիսարի եզրակացությունը մեկն էր. նա ցանկալի էր համարում քրդական և հայկական գոտիների որոշումը թողնել «ճիշտ նույնքան անորոշ, որքան անորոշ է մեր ներկա ժամոթությունը նրանց այժմյան պահանջների իրական արժեքին, որոնք երկուսն էլ, անկասկած, հավասարապես անհեթեթ են»:³

Այսպիսով բրիտանական բարձրաստիճան գործիչը պարզապես «անհեթեթ» էր որակում հայերի և քրդերի ազգային ինքնորոշման ձգտումները:

Ավելի ուշագրավ է Մեծ Բրիտանիայի հնդկական գործերի մինիստրության աստիճանավորներից մեկի՝ Ֆ. Շուքրուդի 1919 թ. օգոստոսի 1-ի արտաքին գործերի մինիստրության պաշտոնատար լորդ Յարդինգին գրած նամակում արտահայտված մտքերը հայկական ու քրդական հարցերի վերաբերյալ: Խոսելով Քրդստանի ապագա կացության մասին, հեղինակը գրում է, որ Բաղդադի քաղաքացիական կոմիսարը լիազորված է ձեռնամուխ լինել «բրիտանական քաղաքական խորհրդականներով քրդական ցեղապետերի գլխավորությամբ ինքնավար քրդական ծայր նահանգներին սահմանակից Մոսուլի արաբական նահանգի» ստեղծմանը: Նա սակայն վերապահում էր ամուսնացնելու, որ այդ և նմանատիպ հրահանգները ժամանակավոր բնույթ ունեն, քանի որ բուլղոսի վերջնական կարգադրություններն անհրաժեշտաբար կթողնվեն անորոշ մինչև Թուրքիայի հետ հաշտության կնքմամբ ընդհանուր լուծում ստանալը:

Նամակում ասվում է, որ Յնդկաստանի գործերի նախարար Էդվին Սոնթրոպուի կարծիքով քրդական պորբլեմի վերջնական լուծումը կախված է տարատեսակ գործոններից, որոնցից մեկ այն է, որ հայկական պետության տարածության և բնույթի հարցը դեռևս անորոշ է: Նա առարկում էր այն բանի դեմ, որ Մեծ Բրիտանիան «զերազանցապես քրդական երկրամասի» պատասխանատվությունը վերցնի իր վրա, քանի որ «բրիտանական ռազմական և քաղաքական պարտականություններն այսպիսի հեռավոր շրջաններում» տարածելը նա համարում էր աննպատակարամար: Միաժամանակ Սոնթրոպուն գտնում էր, որ «դժվար է հավատալ, թե մի որևէ այլ արևմտյան տերություն կընդունի Քուրդիստանի մանդատը կամ իր վրա կվերցնի նրա գործերը կառավարելու անշնորհակալ խնդիրը»:⁴ Նա դեմ էր նաև թուրքական իշխանության վերականգնմանը հայկական վեց վիլայեթներում, թեկուզ եվրոպական հսկողության տակ, որի վերաբերյալ բրիտանական դիվանագետների կողմից եղել էին համապատաս-

խան առաջարկներ:⁵ Դա նշանակում էր Արևմտյան Հայաստանը թողնել թուրքական տիրապետության ներքո:

Բրիտանական դիվանագիտությունը նաև լուրջ առարկություններ ուներ այն բանի դեմ, որ սեփական կառավարման գործը թողնվի քրդերին, առանց որևէ եվրոպական վերահսկողության, քանի որ այդ դեպքում կզոհաբերվեին «տեղական քրիստոնեական տարրերի շահերը»: Լոնդոնի կարծիքով հսկողությունից դուրս Քրդստանը կարող էր տիպիկ հարևան հանդիսանալ ոչ միայն նոր Իրաքի պետության, այլև ծայր հյուսիսում գտնվող հայկական մանդատային պետության համար:⁶

Թուրքիայի բաժանման հարցը հնարավորին չափ արագ ավարտելու համար 1920 թ. մարտի 16-ի գիշերը անգլիական զորքերը ավի հանվեցին Ստամբուլում և ռազմակալման ենթարկեցին քաղաքը: Անգլիացիները ցրեցին օսմանյան խորհրդարանը և պատգամավորների մեծ մասին աքսորեցին Մալթա կղզին: Բրիտանական ռազմական իշխանությունները կրկին մեծ վեճերի պաշտոնում նշանակված Դամադ Ֆերիդ փաշային ստիպեցին բացասական բնույթի հայտարարություններ կատարել քեմալական շարժման դեմ: Իսկ շեյխ-ուլ-իսլամը նույնիսկ այդ շարժումը հայտարարեց «խռովություն սուլթանի դեմ», իսկ իրեն՝ Քեմալ փաշային անվանեց «հանցագործ»:

Քեմալականները այդ բոլորին պատասխանեցին նոր խորհրդարանի բացմամբ: Դա տեղի ունեցավ 1920 թ. ապրիլի 23-ին, երբ Անկարայում բացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը:

Այսպիսով, Օսմանյան կայսրության մայրաքաղաքը՝ Կոնստանդուպոլիսը անցել էր անգլիացիների ձեռքը, ըստ էության նրանք իրենց վերահսկողությունն էին հաստատել նեղուցների գոտու նկատմամբ և անհրաժեշտության դեպքում այն ևս կարող էին ռազմակալել, հույներն այդ ժամանակ տիրում էին Ջնյուռնիային ու շրջակա գոտուն, Կիլիկիան և արաբական երկրներն ըստ էության արդեն օկուպացված էին անգլիացիների ու ֆրանսիացիների կողմից: Նման պայմաններում, բրիտանական իշխանությունների կարծիքով, դժվարությունը մնում էր արևելյան, այսինքն հայկական և քրդական վիլայեթների կապակցությամբ: Անգլիացի դիվանագետ էյրե Քրոուլը Փարիզից Քիդսթոնին գրած 1919 թ. նոյեմբերի 17-ի թվակիր նամակում այն տեսակետն էր հայտնում, որ եթե նույնիսկ Ամերիկյան հրաժարվի վերոհիշյալ տարածքների նկատմամբ մանդատը վերցնելուց և առհասարակ ոչ մեկ այլ պետություն չցանկանա այդ երկրամասերի հովանավորությունը վերցնելու իր ձեռքը, ինքը հավատում է, որ «հնարավոր կլինի որևէ մեթոդ գտնել դնելու այս ամբողջ երկրամասը Ազգերի լիգայի կամ մեկ այլ ձևի միջազգային հսկողության տակ, բաժանելով այն հայկական և քրդական գոտիների (հնարավոր և ցանկալի է թվում ունենալ միաժամանակ և՛ հայկական և՛ քրդական քաղաքականութ-

յուն)»:⁷ Ընդ որում, Քրոուլը գտնում էր, որ առաջին գոտին կարող է «Կիլիկիան կապել Երևանի հանրապետությանը, իսկ քրդականը ներառել «Դիարբեքիից մինչև պարսկական սահմանագիծն ընկած իսկապես քրդական տարածքները: Իսկ թե քրդական գոտին որևէ ձևով կապվելու է Միջագետքի մանդատի հետ, կամ թողնվելու է միջազգային հսկողության տակ, պետք է դառնա քննարկման առարկա»:⁸

Քիդսթոնին գրած 1919 թ. դեկտեմբերի 1-ի մեկ այլ նամակում Քրոուլը իրավացիորեն գրում էր, որ «Հայկական հարցը հաշվի առնել և որոշել զուտ հայերի ներկա թվաքանակի հիմքի վրա, անշուշտ, կնշանակի վավերացնել և քաջալերել հպատակ ազգությունների հարցի նկատմամբ թուրքական անցյալ մոտեցման մեթոդը»:⁹

Այս առաջարկներն ու հակաառաջարկները վկայում էին, որ բրիտանական իշխանությունները հստակ ծրագրեր ու նախանշումներ չուներին ոչ միայն քրդական, այլև հայկական հարցի կապակցությամբ: Բրիտանական ռազմական իշխանությունները, մասնավորապես գլխավոր շտաբը, 1920 թ. ապրիլին հնարավորություն չէր տեսնում, «թե ինչպես հայկական պետությունը, եթե նա ընդգրկելու է նախկին թուրքական վիլայեթներից որևէ մաս, կարող կլինի ուղքի կանգնել առանց Թուրքիայի բարի կամեցողության...»:¹⁰ Գլխավոր շտաբին նույնիսկ թվում էր, թե «Հայաստանի բուն շահերը պահանջում են նրա ներկայացուցիչներին անկեղծորեն ասել, որ նրա գոյությունն իբրև ինքնաբավ պետություն, եթե նա ցանկանում է յուրացնել նախկինում թուրքական որևէ տարածք, կարող է երաշխավորվել միայն թուրքական գերիշխանության տակ»: Գլխավոր շտաբը փորձում էր հավատացնել, որ «եթե մեկ անգամ այս փաստերի երեսին նայվի, Հայաստանի հետ կապված դժվարությունների մեծ մասը կանհետանա»:¹¹

Դեռևս 1918 թ. փորձելով հիմնավորել, որ Հայաստանը ի վիճակի չէ տիրանալու իր պապենական հողերին, Անգլիայի ռազմական նախարար Յենրի Ուիլսոնը հարց էր տվել. «ինչպե՞ս եք պատկերացնում, որ Հայաստանը անզեն լինելով, կարողանա դիմադրել զինված Թուրքիային և վերագինված Ադրբեջանին»:¹² Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը Մուդրոսի զինադադարը ստորագրվելուց հետո ճնշում էր գործադրում կառավարության նկատմամբ, որ նա աստիճանաբար մեղմացնի իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ և նույնիսկ զիջումներ անի: Այդ նախարարությունը հանձինս թուրքական ազգայնական շարժման տեսնում էր մի հայրենասիրական կազմակերպություն, որի գլխավոր նպատակը Օսմանյան կայսրության անդամահատությանը ընդդիմանալն էր: Նա սպառնում էր սեփական կառավարությանը, որ եթե Բրիտանիան չցանկանար կարգավորել իր հարաբերությունները քեմալականների հետ, ապա նա պետք է պատրաստ լինի նրան, որ քեմալիզմն ու բուլշևիզ-

մը միմյանց հետ դաշնակցած Անդրկասսայան շրջանից մինչև Յնդկաստան կտարածեն պանիսլամիստական զգացումներ, Մերձավոր ու Միջին Արևելքում կիրառեն խռովություններ և այլն: Ավելին, թուրքիայի «հայրենասիրական տարրերին» թշնամացնելը արգելք կհանդիսանա կրճատելու եզիպտոսում, Պաղեստինում և Միջագետքում տեղակայված բրիտանական զորքերը, որը բրիտանացի հարկ վճարողների ուսին կոներ անհարկի միլիոններ վճարելու ծանր պարտականությունը:¹³

Այս տեսակետը բազմաթիվ կողմնակիցներ ուներ ոչ միայն բրիտանական բանակում և ռազմածովային նավատորմում, այլև Ֆորին օֆիսում: Օրինակ, Մոնթբլայուն հետևողականորեն զգուշացնում էր Լլոյդ Ջորջին, որ եթե թուրքիայի հետ հարաբերությունները չկարգավորվեն, արևելքում խաղաղությունը լրջորեն վտանգի կենթարկվի: «Բարեկամ» թուրքիան օգտակար կարող է լինել Բրիտանիային, իսկ «զայրացած» թուրքիան երբեք չի դադարի խլրտումներ գրգռել Յնդկաստանում, – պնդում էր Մոնթբլայուն:

Կասկածից վեր է, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդական շարժման ծանրության կենտրոնը գտնվում էր ոչ թե Իրաքյան կամ Իրանական Քրդստանում, այլ հենց Արևմտյան Չայաստանում, և բնավ պատահական չէ, որ հենց այդ երկրամասն էլ դարձավ արթնացող քրդական ազգայնականության օրրանը: Թե որքանով էր լուրջ ընկալվում Արևմտյան Չայաստանի տարածքում թուրքական զանգվածի կողմից քրդական պետության ստեղծման հեռանկարը, երևում է հետևյալ փաստից. 1919 թ. սեպտեմբերին բրիտանական կառավարությունը Արևմտյան Չայաստան գործուղեց հայտնի հետախույզ, քրդական հարցի ճանաչված գիտակ մայոր Նոյելին, պարզելու համար այդ երկրամասում քաղաքական ուժերի դասավորությունը, վարելու գործակալական-քաղաքական աշխատանքներ և առհասարակ հավաքելու համակողմանի տեղեկություններ: Մայոր Նոյելին ուղեկցում էին իրենց անգլիամետ հայացքներով հայտնի քուրդ ազգայնականներ Քամուրան և Ջելադեթ Բադրխանները, որոնք հայտնի էին որպես քրդական պետության ստեղծման ջատագույններ: Ոտքի տակ տալով համարյա ողջ Արևմտյան Չայաստանը, անգլիացի հետախույզը իր համար պարզեց մի կարևոր հանգամանք, որն առաջին պահ զարմանք պատճառեց նաև իրեն: Պարզվեց, որ տեղական թուրք բնակչությունը, որը մեծ երկյուղներ ուներ այդ երկրամասում քրդական իշխանության հաստատման լուրերի կապակցությամբ, գերադասում էր ավելի շուտ այնտեղ տեսնել հայկական, քան քրդական իշխանություն:¹⁴

Բրիտանական քաղաքական շրջաններում մի շարք գործիչներ հայտնում էին այն տեսակետը, որ հայկական և քրդական հարցերը սերտորեն փոխկապակցված են: Յնդկաստանի գործերի նախարարության

փորձագետ Արթուր Խիրցելը իր հուշագրում հենց այդպես էլ գրում էր. «հայկական հարցը դա քրդական հարց է»: Նա գտնում էր քրդական պետության ստեղծման համար առկա է ռեալ հեռանկար: Նրա կարծիքով, այդ պետության մեջ, որն ինքնստիճեյան պետք է գտնվի անգլիական, ֆրանսիական կամ ամերիկյան մանդատի ներքո, հայերը ևս կստանան իրավունքներ, ընդ որում շնորհիվ իրենց հարաբերականորեն բարձր կուլտուրական մակարդակի ավելի մեծ իրավունքներ, քան իրենք կարող էին սպասել Չայաստանում իրենց թվաքանակի փոքրության պատճառով: Որպես պարզաբանում Խիրցելը նշում էր, որ այդ ենթադրյալ քրդական պետության մեջ հայերը կստանան մոտավորապես այն նույն իրավունքները, ինչ ենթադրվում էր տալ հնդկի մահնդականներին 1909 թ. ընդունված Մորլի-Մինթո հայտնի օրենքով:¹⁵ Անշուշտ Խիրցելի դատողությունները վկայում էին այն մասին, որ հայկական հարցով զբաղվող բրիտանական վերոհիշյալ հիմնարկությունը առանձնապես աչքի չէր ընկնում իր հայասիրությամբ: Ընդ որում, Արևմտյան Չայաստանի տարածքում Խիրցելի և նրան ծայնակցող քրդական գործիչների կարծիքով, հայկական պետության ստեղծումը հակասելու է «ինքնորոշման սկզբունքին», քանի որ պատերազմի ժամանակ «հայերի հետ տեղի ունեցած հայտնի իրադարձություններից» հետո (իմա՝ ցեղասպանության – Վ. Բ.) Չայաստանում, ի բացառյալ Կիլիկիայի, շատ քիչ հայեր են մնացել և քրդերը չեն ցանկանա նրանց ենթարկվել: Այդ նույն տեսակետը բրիտանական գլխավոր շտաբի կապիտան Վուլլիի հետ զրույցում զարգացնում էր նաև քրդական միլիցեղի առաջնորդ Մահմուդ-բեյը: Ընդ որում, նա փորձում էր հավաստիացնել անգլիացուն, որ դրսևորելով հանդուրժողականություն ու լայնախոհություն, Քրդստանի կառավարությունը բանակ կզորակոչի նաև հայերին, որպես ավելի կրթված մարդկանց, դրան ավելացնելով, որ քրդական դպրոցներ բացվելուց հետո քրդերը կթթան մակարդակով առաջ կանցնեն հայերից:¹⁶

Արևմտյան Չայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ Բադրխանում անգլիական գլխավոր կոմիսար Առնոլդ Վիլսոնը ևս համակարծիք էր Ֆորին օֆիսի և գլխավոր շտաբի մի շարք գործիչների արտահայտած վերոհիշյալ տեսակետներին: Նրա կարծիքով հայկական վեց վիլայեթներում պետք է պահպանվի թուրքական ինքնիշխանությունը: Չայկական կամ քրդական պետության ստեղծումը կախված է ԱՄՆ-ի կողմից Ասիական թուրքիայի մի մասի նկատմամբ մանդատը վերցնելուց: Նա պնդում էր, որ բրիտանական կառավարությունը չպետք է այդ վիլայեթներում վերցնի լրացուցիչ պատասխանատվություն:¹⁷

Չայտնի պատճառներով 1919 թ. գարնանից սկսած քեմալական շարժման նկատմամբ անգլիացիները որդեգրեցին թշնամական դիրքորոշում: Ծիշտ է, առանձին փորձեր կատարվեցին նաև հետևյալ սխեմայով՝

հենվելով Բ. Դռան վրա որպես թուրքիայում իրենց քաղաքականության գլխավոր լծակի, իրենց բուռը հավաքել նաև քեմալականներին: Այս ծրագրի իրագործումը թվում էր միանգամայն ռեալ, մասնավաճ որ Ստամբուլի իթթիլյաֆիստական կառավարության գլուխ էր կանգնած իրենց մարդը՝ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան, որն օգտվում էր Սուլթան Մեհմեդ VI Վահիդդինի կատարյալ վստահությունից: 1919 թ. հոկտեմբերին մեծ վեզիրի պաշտոնում Ֆերիդ փաշային փոխարինած Ալի Ռեզա փաշան ևս համարվում էր անգլիացիների հետ կապված մարդ: Լոնդոնի տրամադրության տակ կար նաև պահեստային կամ այլընտրանքային տարբերակ՝ փորձել քեմալականներին հաշտեցնել Ստամբուլի հետ և այդպիսով կրկին դառնալ դրության տերը: Սակայն կյանքը ցույց տվեց, որ անգլիացիների մշակած այդ երկու տարբերակներն էլ կենսունակ չեն և չունեն գործնականում իրագործվելու ռեալ հնարավորություններ:

Անտարակույս քեմալական շարժումը և նրա ձեռք բերած հաջողությունները հարկադրում էին հայ գործիչներին թուրքիայում փոփոխված իրադրության համեմատ որդեգրել նոր դիրքորոշումներ Հայկական հարցի հետ կապված բազմաթիվ խնդիրների, այդ թվում նաև քրդական հարցի նկատմամբ: Այդ կապակցությամբ վերին աստիճանի ուշագրավ է հետևյալ փաստը. 1920 թ մարտի 20-ին Լոնդոնում հայկական պատվիրակությունը Կոստանդնուպոլսի Ջավեն պատրիարքի, Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի մասնակցությամբ հանդիպում է ունենում «Հայաստանի սահմանները որոշող հանձնախմբի» հետ: Հանդիպման ժամանակ հանձնախմբի անդամ, անգլիացի դիվանագետ Ռոբերտ Վանսիտարտը հարց է տալիս, թե ապագա հայկական պետության մեջ ինչպիսի վերաբերմունք է լինելու քրդերի նկատմամբ, «որոնց վիճակված կլինի ապրել»: Հայաստանում որպես փոքրամասնություն: Այդ հարցին Ավ. Ահարոնյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Հայաստանում ներկա պահին շատ քիչ են հայերի դեմ անհաշտ, ըմբոստ մնացած քուրդ աշիրեթները, մասնավաճ որ նրանց թիվն էլ պատերազմի պատճառով զգալիորեն նվազել է: Հեռավոր կասկած իսկ չունենք, որ այն օրը, երբ քյուրտերը ազատ կմնան թյուրքական ապականող ազդեցությունից, նրանք ևս մեզ հետ խաղաղ ապրելու ճամփան կնախընտրեն: Անշուշտ փոքրամասնությունն էլ երևի կամ կերթա դեպի թուրքիա, կամ Քուրդիստան»:¹⁸

1920 թ. մարտի սկզբներին Անտանտի Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց մի որոշում, որը նախատեսում էր ստեղծել անկախ Հայաստան: Այդ նույն որոշման մեջ ձևակերպվում էր նաև հետևյալ միտքը.

«հնարավոր է նաև անկախ Քրդստանի ճանաչումը»,¹⁹ առանց սակայն նշելու, թե ինչ սահմանների մեջ է պարփակվելու այդ պետությունը:

1920 թ. ապրիլի 18-26-ը Սան-Ռեմոյում տեղի ունեցած միջոցառակցային կոնֆերանսում, որտեղ մշակվեց թուրքիայի հետ Անտանտի խաղաղության պայմանագրի կնքման հարցը, հայկական և քրդական պրոբլեմները կրկին հանդիսացան քննարկումների առարկա: Հայկական հարցի առթիվ Լլոյդ Ջորջը հայտարարեց. «Ես չեմ կարող ինձ վրա պատասխանատվություն վերցնել և համաձայնություն տալ Մեծ Հայաստանի ստեղծման համար, եթե ԱՄՆ-ը չընդունի մանդատը: Այն պահից, երբ Ամերիկան դեմ նետեց Հայաստանի նկատմամբ մանդատն ընդունելու վերաբերյալ ամեն մի միտք, ես խիստ կասկածում եմ, որ հնարավոր է ստեղծել ու պահպանել ծովից ծով անկախ հայկական պետություն»:²⁰ Լլոյդ Ջորջը Հայաստանի վիճակը ներկայացրեց հետևյալ կերպ. «Նրա մի կողմում ադրբեջանցիներն են... մյուս կողմում անատոլիացիներ, իսկ մյուս կողմում էլ քրդերը: Ինձ համար արտառոց առաջարկ է թվում հայերին խորհուրդ տալը նվաճելու մի լայնածավալ տարածք, երբ նրանք ներկայումս դժվարությամբ են պահում ունեցած խիստ սահմանափակ տարածությունը...»:

Լլոյդ Ջորջը գտնում էր, որ ամեն մի լուծում, որի իրականացումը կպահանջեր Փոքր Ասիայի հենց սրտում ռազմական գործողությունների ծավալում, դաշնակիցներից կպահանջեր ռեսուրսների լուրջ և երկարատև վատնում և ինքը համոզված է, որ ոչ մի պետություն չի գնա դրան, առավել ևս, որ այդ նկատառումները վերաբերում են այնպիսի շրջանների, որտեղ բնակչության մեծամասնությունը թշնամաբար է տրամադրված դաշնակիցների նկատմամբ և որտեղ տեղանքի պայմանները նպաստում են համառ պարտիզանական պայքար մղելուն: Անգլիայի վարչապետը համոզմունք է հայտնում, որ խոսք լինել անգամ չի կարող այն մասին, որ դաշնակիցները ներքին Անատոլիայում մխրճվեին պատերազմի մեջ:²¹

Լլոյդ Ջորջի կողմից հստակորեն ձևակերպված նշված տեսակետի ֆոնի վրա միանգամայն ցինիկորեն էր հնչում լորդ Քերզընի այն հայտարարությունը, որ Հայաստանը ազատագրելը եղել է «դաշնակիցների կողմից ամենից հաճախ հայտարարված պատերազմի նպատակներից մեկը» և որ այդ կապակցությամբ դաշնակիցները «բարոյական ծանր պատասխանատվություն ունեն իրենց վրա»:²²

Ապրիլի 19-ի նիստում հատուկ քննարկման դրվեց Քրդստանի հարցը, որի հանգամանակից վերլուծությամբ հանդես եկավ լորդ Քերզընը: Նա նշեց, որ դա դժվարին ու բարդ խնդիր է, քանի որ Օսմանյան կայսրության մի մասը կազմող Քրդստանը բնակեցված է ռազմաշունչ ցեղերով, որոնք թշնամաբար են տրամադրված իրենց հարևանների և բուրքական կառավարության նկատմամբ: Այդ պրոբլեմը առնչվում է նաև Լվ-

րոպական տերությունների հետ, քանի որ Քրդստանը Հայաստանի հարևանն է: Միաժամանակ նրա ճակատագիրը կապված է նեստորական կամ քաղղեական ասորիների հետ:

Հարավային Քրդստանի, այսինքն Միջագետքի հյուսիսային շրջաններում գտնվող քրդաբնակ տարածքի (ներկայիս Իրաքյան Քրդստանի) հարցը Քերզնի համար միանգամայն հստակ էր: Քանի որ այն հանդիսանում էր նավթառատ Մոսուլ վիլայեթի մի մասը, որի նկատմամբ հավակնություններ ուներ Անգլիան, հետևաբար «այն ցանկալի էր հանձնել Մեծ Բրիտանիայի մանդատային հսկողությանը»:

Ինչ վերաբերում է Արևելյան Անատոլիայում ապրող քրդերի ստատուսին, ապա լորդ Քերզնը առաջարկեց մի քանի տարբերակ, որոնցից ինքը նախապատվությունը տալիս էր հետևյալին՝ քրդական բնակչություն ունեցող երկրի տարածքները դնել Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորության տակ: Եթե հնարավոր չլիներ այդ տարբերակը կյանքի կոչել, լորդ Քերզնը առաջարկում էր Քրդստանը անջատել Թուրքիայից և նրան հատկացնել ինքնավարություն: Իր իսկ առաջադրած այս տարբերակի նկատմամբ լորդը տրամադրված էր թերահավատորեն, քանի որ կասկած էր հայտնում, թե արդյոք քրդերը իրենք կդրսևորեն հավաքական կամք ինքնավար Քրդստան ստեղծելու հարցում, քանի որ նրանց մտադրությունները խիստ անորոշ ու մշուշապատ են և բացի այդ դժվար է քրդական իրականության մեջ գտնել «ներկայացուցչական մի քրդի», որը ընդունելի լիներ բոլորի համար: Նրա ասելով «յուրաքանչյուր քուրդ ներկայացնում էր միայն իր կլանը»: Նրա կարծիքով Շերիֆ-փաշան ևս չի կարող դիտվել որպես Քրդստանի ներկայացուցիչ հենց այդ նույն պատճառով:

Վերջապես լորդ Քերզնի առաջադրած հաջորդ տարբերակը այն էր, որ եթե անկախությունը քրդերի համար անհասանելի լինի և կամ Անգլիան ու Ֆրանսիան չհամաձայնվեն Քրդստանի նկատմամբ հաստատելու իրենց հովանավորությունը, լավագույնը կլինի այն, որ քրդերը թողնվեն թուրքական կառավարման ներքո, որին նրանք «վարժվել են»: Իսկ առհասարակ լորդ Քերզնի համոզմամբ, քրդերը չեն կարող ինքնուրույն գոյություն ունենալ առանց մեծ պետությունների աջակցության:²³

Քրդական հարցի վերաբերյալ տարբերակների բազմազանությունը անշուշտ վկայում էր այն մասին, որ Ֆորին օֆիսը դեռևս վերջնականապես չէր հստակեցրել իր դիրքորոշումը այդ խնդրի վերաբերյալ:

Սան-Ռեմոյի կոնֆերանսում ընդունվեց անգլիացիների կողմից կազմած մի փաստաթուղթ, որն ընկնելու էր Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի հիմքում: Նրանում Քրդստանի վերաբերյալ ասվում էր հետևյալը. Ստամբուլում պետք է աշխատի Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով, որը պետք է թուրքական խաղաղության պայմանագրի ուժի մեջ մտնելուց վեց ամիս

անց մշակի «տեղական ինքնավարությունների» մի սխեմա այն տարածքների համար, որոնք քրդաբնակ են և ընկած են Եփրատից արևելք, Հայաստանի հարավային սահմաններից հարավ և Սիրիայի ու Միջագետքի սահմաններից հյուսիս: Այդ սխեման պետք է նախատեսի ասորիների և այլ ռասայական ու կրոնական փոքրամասնությունների պաշտպանությունը նշված տարածքում: Կազմվելու է նաև մի հանձնաժողով Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի և քրդերի ներկայացուցիչներից թուրքական և հատկապես թուրք-իրանական սահմանը «ուղղելու» համար: Այնուհետև ասվում էր, որ եթե թուրքական խաղաղության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո նշված տարածքի «քուրդ ժողովուրդը» դիմի Ազգերի լիգայի խորհրդին, մեծամասնության անունից պահանջելով իրեն տրամադրել Թուրքիայից անկախություն և եթե խորհուրդը որոշի, որ այդ ժողովուրդը «ընդունակ է նման անկախության» և երաշխավորում է այն, ապա Թուրքիան պարտավոր է իրագործել այդ երաշխավորությունը, զիջելով հիշյալ տարածքի նկատմամբ բոլոր իրավունքները:²⁴

Հիշյալ նախագծի լայն քննարկումից հետո ընդունվեց որոշում, որը նախատեսում էր. 1. Ընդունել բրիտանական նախագիծը այն վերապահությամբ, որ Եփրատից արևելք թույլ չտրվեն Ֆրանսիայի իրավունքների սահմանափակում, որոնք երաշխավորված են նրա համար Սան-Ռեմոյում կնքված եռյակ համաձայնագրով Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև: 2. Եթե «քրդական հանձնաժողովի» անդամները որևէ հարցի կապակցությամբ չկարողանան հանգել միահամուռ կարծիքի, խնդիրը կհանձնվի շահագրգիռ երկրների կառավարությունների ղեկավարների քննությանը:²⁵

Այսպիսով Սան-Ռեմոյի կոնֆերանսում քրդական հարցի քննարկումները վկայում էին այն մասին, որ եռյակ համաձայնության պետությունների ծրագրերում քրդական պետության ստեղծման հարցը շարունակում էր գտնվել անորոշ դատողությունների մակարդակում: Նախ այդ տեղությունները կասկած էին հայտնում, որ քրդերը ընդունակ են անկախ գոյության: Անգլիացիները, օրինակ, չէին հավատում «քրդական ազգային գաղափարի» առկայությանը, առանց որի, նրանց կարծիքով, հնարավոր չէ ստեղծել պետականություն: Նրանք գտնում էին, որ քրդերը միջնադարյան սովորույթներով ապրող մարդիկ են, նրանց մեծ մասը չի ձերբազատվել ցեղային մտածողությունից, որ նրանք չեն պատկերացնում այլ իշխանություն, բացի աղաների և շեյխերի իշխանությունից, ուստի նրանց նկատմամբ կիրառելի չէ «ժամանակակից դեմոկրատական չափանիշները»: Անգլիացիները քրդերին անվանում էին «ալքանացիների ասիական տեսակը», նկատի ունենալով նրանց վերոհիշյալ հատկանիշները: Իսկ կրթված այն քրդերը, որոնց մոտ առկա է Թուրքիայից «անջատման»

ծգտումներ, անգլիացիների կարծիքով զուրկ էին նշանակալից ազդեցությունից:

Սան-Ռեմոյի կոնֆերանսում Թուրքիայի հետ Անտանտի խաղաղության պայմանագրի տեքստը հիմնական գծերով համաձայնեցվեց դաշնակիցների միջև: Որոշվեց նաև նրա ստորագրելու վայրը, որը լինելու էր Փարիզի Սևր արվարձանը:

1920 թ. մայիսի 11-ին եռյակ համաձայնության պետությունները բուրջական կառավարությանը հանձնեցին Սան-Ռեմոյում մշակված խաղաղության պայմանները: Բ. Դուռը անհապաղ ստեղծեց մի հանձնաժողով հակաառաջարկներ ներկայացնելու համար: Մշակվեց մի հուշագիր, որը Անտանտի Գերագույն խորհրդին ներկայացնելու համար Դամադ Ֆերիդ փաշան մեկնեց Փարիզ: Այդ հուշագրի բուն նպատակն էր կորզել զիջումներ: Քրդական հարցի կապակցությամբ թուրքերը պահանջ էին ներկայացնում Քրդստանը թողնել Օսմանյան կայսրության կազմում:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի դաշնագիրը, որն այսպես կոչված Վերսալյան համակարգի պսակն էր: Ըստ ելույթի այդ պայմանագիրը մահվան դատավճիռ էր Օսմանյան կայսրության համար: Ի թիվս բազմաթիվ այլ միջազգային-քաղաքական խնդիրների, Սևրի պայմանագիրը կոչված էր նաև լուծում տալու անկախ Հայաստանի և Քրդստանի պրոբլեմներին:²⁶ Այն Հայաստանը դե-յուրե ճանաչեց որպես ազատ, անկախ և ինքնիշխան պետություն: Քանի որ Հայաստանի սահմանների հարցը համարյա թե մնաց բաց, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին թողնվեց Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշումը էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթների շրջանակում: Մոտ երեք ամիս հետո պրեզիդենտը որոշեց սահմանները (հրապարակվեց նոյեմբերի 22-ին) և Հայաստանը քարտեզի վրա ստացավ մի տարածք, որը հավասար էր մոտ 127.000 քառակուսի կիլոմետրի: Վուդրո Վիլսոնի «Իրավարարական վճռի» համաձայն, հայ-թուրքական սահմանը սկսվում էր Իրանական սահմանի մոտ գտնվող Դոթուր քաղաքից, այնուհետև հատելով Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայեթները, Հայաստանի սահմաններից դուրս էր թողնում Վանի վիլայեթի մոտ կեսը: Այնուհետև սահմանը շարժվում էր դեպի հյուսիս, անցնելով Եթզնկայի մոտով: Դերսիմից հյուսիս սահմանը գծվում էր մի այնպիսի ձևով, որ Հայաստանը ունենա հարմար ելք դեպի ծովը:

Նշված սահմաններով ստեղծվելիք հայկական պետության մեջ բոլոր եթնիկական խմբերը, ինչպես նշվում էր ամերիկյան պրեզիդենտի ուղերձում, ստանալու էին հավասար քաղաքացիական իրավունքներ:²⁷

Վիլսոնյան սահմաններով Արևմտյան Հայաստանի մաս պետք է կազմեին Վանի նահանգից Վանի սանջակը, Բիթլիսի նահանգից Բիթլիսի և Մուշի սանջակները, էրզրումի նահանգը գրեթե ամբողջությամբ, Հին

Բայազետի և Երզնկայի սանջակները, Տրապիզոնի սանջակի և Գյումուշխանեի արևելյան մասերը: Այդ սահմաններով Արևմտյան Հայաստանը իր մեջ էր ներառում ամբողջապես Վանա լիճը, Արածանիի և արևմտյան Եփրատի վերին և միջին հովիտները, ճորոխ գետի վերին և միջին հովիտը:

Սակայն այդ տարածքները գտնվում էին թուրքերի հսկողության տակ և դաշնակիցները չասացին, թե ինչպես էին հայերը ստանալու թղթի վրա իրենց տրված հողերը (Ֆ. Նանսեն), մանավանդ որ իրենց դեմ կանգնած էր ոչ թե քայքայված ու նստացած սուլթանական բանակը, այլ ազգայնական ներշնչանքներով ոգևորված քեմալականների նորաստեղծ զինված ուժերը: Նիկողայոս Ադոնցի կարծիքով Սևրի պայմանագրով «Հայկական հարցի» լուծումը Թուրքիայում փաստորեն հետաձգվում էր: Իսկ «Հայկական հարցի» պատմությունը ցույց է տալիս, որ ամեն մի անորոշություն, ամեն մի ձգձգում կործանարար անդրադարձ է ունենում հայերի ճակատագրի վրա»:²⁸

Կարևոր է նշել, որ Սևրի պայմանագրով հայկական վեց վիլայեթներից երեքը դուրս նետվեցին նրա տարածքից: Մերժված վիլայեթներից մի մասը մնաց Թուրքիային, իսկ մյուս մասը՝ Եփրատից արևելք, ամրակցվեց Քրդստանին: Այսպիսով քրդական հարցը ընդգրկվեց Սևրի պայմանագրի մեջ (Երրորդ բաժին, «Քրդստան», հոդվածներ 62-64): Դա նշանակում էր, որ առաջին անգամ միջազգային-իրավական պայմանագրային պրակտիկայում դրվում էր քրդական հարցը: Ընդ որում, այդ պայմանագիրը ըստ ելույթի վերաբերում էր միայն Թուրքիայում ապրող քրդերին: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Քրդստանը այնտեղ չէին ստեղծում, որտեղ պետք էր ստեղծել: Օրինակ, Քրդստանին հատկացվող Դերսիմի և Խարբերդի սանջակները եթնիկական և աշխարհագրական առումով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժանելի մասը: Դա «բացահայտ քայլ էր, ուղղված Հայաստանի կենսական շահերի դեմ, - գրում է Ն. Ադոնցը: Իհարկե հայերը դաշնակիցներից պակաս շահագրգռված չեն անկախ Քրդստանի ստեղծմամբ, - շարունակում է նա: Այդ ուղիով անգիտակից ջուրը ցեղապետերը կդադարեն, վերջապես թուրքական քաղաքագետների ձեռքին չար գործիք լինելուց... Օտար հողում նման արիեստական կառույցի գաղափարը ավելի շատ կվայելեր ծեր մոլլա Իդրիսին կամ թուրքական կառավարողներից նրան ընդօրինակողներին, ովքեր երազում են հայկական շրջանների քրդացման մասին: Բայց որ եվրոպական դիվանագետները ընկալեին և սրբագործեին հայկական կոտորածների ոգեշնչողների ստոր քաղաքականությունը, ապշեցուցիչ ու անսպասելի բան էր: Այդ ակտի քաղաքական աստառը, ըստ երևույթի, այլ է, և կարելի է հասկանալ, եթե հիշենք 1916 թ. Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած գաղտնի համաձայնություն-

ընդ Չայաստանի բաժանման մասին: Ճիշտ և ճիշտ Խարբերողի գծով»: ²⁹ Անկասկած է. Ադոնցը նկատի ունի 1916 թ. ապրիլի 16-ին Պետրոգրադում կնքված անգլո-ֆրանս-ռուսական պայմանագիրը, որի համաձայն պատերազմի ավարտից հետո ռուսական կայսրությանն էին միանալու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: ³⁰

Սևրի դաշնագիրը ճանաչում էր Թուրքիայի արևելյան նահանգների՝ Արևմտյան Չայաստանի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած իրավունքները, ընդ որում դա կատարվում էր մի այնպիսի ժամանակ, երբ դրանք անբողոքյաճառ անայացվել ու դատարկվել էին իր վաղեմի բնակիչներից: Սակայն անբողոք խնդիրը կայանում էր նրանում, որ Անտանտի գծով դաշնակիցները «ավելի լավ բան չմտածեցին, քան Չայաստանը խցկելը մահմեդական պետությունների շղթայի մեջ, վանել նրան իրենցից հարավում, կտրելով նրան Ռուսաստանից հյուսիսում: Հայերը ջանում էին ձեռք բերել ազատ անկախ հայրենիք, բայց ոչ լույսից կտրված բանտ, որը պահպանում են թուրքերը, թաթարները, քրդերը և նրանց նմանները», ³¹ – նշում է Ն. Ադոնցը:

Ի՞նչ դրական կողմեր էր պարունակում Սևրի պայմանագիրը հայ ժողովրդի համար. նախ Չայաստանը մտնում էր միջազգային դաշնագիր ստորագրողների շարքը իբրև անկախ պետություն: Այնուհետև տերությունները ճանաչեցին հայ ժողովրդի պետականություն ունենալու անկապտելի իրավունքը: Նույնիսկ այն բանից հետո, երբ պայմանագրի՝ Չայաստանին վերաբերող հոդվածները կորցրին իրենց իրավական ուժը, դրանք երբեք չկորցին իրենց նշանակությունը և այսօր էլ շարունակում են մնալ որպես հայկական հարցի միջազգային ճանաչման խորհրդանիշ, իսկ Չայաստանը որպես միջազգային հարաբերությունների համակարգում ինքնուրույն սուբյեկտ: Այլ կերպ ասած, Սևրի պայմանագրի բարոյական ուժը մնում է ընթացքի մեջ: Մի խոսքով Սևրը ինքնին դիվանագիտական հաջողություն էր Չայաստանի համար:

Սակայն այդ դաշնագիրը միաժամանակ եղավ Հովհաննես Քաջազունու արտահայտությանը «մի տեսակ կապույտ թռչուն», «անշոշափելի ու անհասանելի»: ³² Այն բորբոքեց թե՛ քեմալական Թուրքիային և թե՛ Խորհրդային Ռուսաստանին: Երկու պետություններն էլ կտրակամապես հրաժարվեցին ճանաչել այն, համարելով «իմպերիալիստական» և Չայաստանը դիտեցին իբրև իրենց ամենավտանգավոր թշմաճու՝ Մեծ Բրիտանիայի արբանյակը: Մեջլիսի միստում Մուստաֆա Քեմալը սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինին, մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշային և մի շարք այլ աստիճանավորների, որոնք մասնակից էին Սևրի պայմանագրի ստորագրմանը, կամ առնչություն ունեին դրա հետ, անվանեց դավաճան: Նրա առաջարկով մեջլիսում օրենք ընդունվեց հեռակա կարգով նրանց դատապարտելու պետական դավաճանության համար: ³³ Բացի այդ,

«թուրքերի հայրը» Սևրի պայմանագիրը ստորագրած թուրքական պատվիրակության 150 հոգուց բաղկացած անդամներին մտցրել էր սև ցուցակի մեջ: ³⁴

Անշուշտ Սևրի պայմանագրի ծախողունը հետևանք էր միջազգային դրության կտրուկ փոփոխության, որն իր արձագանքներն ունեցավ նաև Մերձավոր Արևելքում: Սկզբնական հաջողություններից հետո հույները բախվեցին քեմալականների աճող դիմադրությանը և սկսեցին կրել պարտություններ: Ամրապնդվեցին նաև քեմալականների արտաքին քաղաքական դիրքերը, գլխավորապես շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի հետ քաղաքական սեփեթանքների և «բարեկամական հարաբերությունների» հաստատման: Չարգանում էին շփումները նաև Եռյակ համաձայնության պետությունների՝ Ֆրանսիայի և Իտալիայի հետ, որոնք չէին թաքցնում իրենց դժգոհությունը Սևրից: Կարևոր գործոն էր նաև այն, որ 1920 թ. ամռանը քեմալական բանակի մարտական հատկանիշները և ազգայնական ներշնչումներով տոգորված բարոյական ոգին վերելք էր ապրում:

Անկասկած Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո թուրքական վտանգը Չայաստանի համար ավելի մեծացավ, որովհետև քեմալական Թուրքիան ցանկանում էր զենքի ուժով պատռել այդ պայմանագիրը: Քեմալականները ակնառու կերպով տեսնում էին, որ Եվրոպան հոգնել է և ձգտում է կարգավորել իր հարաբերությունները Թուրքիայի նոր իշխանությունների հետ, որի ղեկավարները, պետք է խոստովանել, ցուցադրեցին մեծ եռանդ և ընդունակություն:

Ինչպես նշվեց, Սևրի պայմանագիրը առաջին միջազգային-իրավական ակտն էր, որն անդրադառնում էր քրդական պրոբլեմին և ճանաչում էր քրդերի իրավունքները որպես առանձին էթնոսի: Քրդերին վերաբերող 62-ից 64 հոդվածներում պարունակվում էին այն պայմանները, որոնց հիմքի վրա ենթադրվում էր լուծել քուրդ ժողովրդի նշանակալից մասի ազգային ինքնորոշման խնդիրը: Ընդ որում, Իրանական Քրդստանի և Սիրիայի քրդական բնակչությանը վերաբերող հարցերը այդ պայմանագիրը չէր շոշափում:

62-րդ հոդվածում ասվում էր. «Կոստանդնուպոլսում գտնվող և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից նշանակված երեք հոգուց բաղկացած հանձնաժողովը վեց ամսվա ընթացքում կպատրաստի մի կանոնակարգ գերակշիռ քուրդ բնակչություն ունեցող այն շրջանների ինքնավարության վերաբերյալ, որոնք ընկած են Եփրատից արևելք և Չայաստանի հարավային սահմանից հարավ: Հանձնաժողովի ներսում անհամաձայնություն ծագելու դեպքում հարցը լուծում են իրենք՝ համապատասխան կառավարությունները: Միաժամանակ պետք է մշակվեն կատարյալ երաշխիքներ վերոհիշյալ շրջանների ասորի-քաղղեական և

այլ էքնիկական ու կրոնական փոքրամասնությունների պաշտպանության համար: Այդ նպատակով հատուկ հանձնաժողովը, որի մեջ բացի բրիտանական, ֆրանսիական և իտալական ներկայացուցիչներից պետք է մտնեն նաև պարսկական և քրդական ներկայացուցիչները, կուսումնասիրեն և անհրաժեշտության դեպքում կճշտեն թուրք-պարսկական սահմանը:

63-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր երեք ամսյա ժամկետում ընդունել և իրագործել այդ զույգ հանձնաժողովների որոշումները: 64-րդ հոդվածը ազդարարում էր, որ եթե մեկ տարի անց 62-րդ հոդվածում նշված շրջանների քուրդ բնակչությունը դիմի Ազգերի լիգայի խորհրդին նշելով, որ նրանց բնակչության մեծամասնությունը ցանկանում է Թուրքիայից անկախ լինել, իսկ Լիգայի խորհուրդը վերջիններիս կհամարի անկախություն ունենալու ընդունակ, ապա Թուրքիան պարտավոր է իրաժարվել այդ շրջանների նկատմամբ իր իրավունքներից: Եթե քրդական պետության կազմի մեջ ցանկություն կունենան մտնելու նաև Մոսուլի վիլայեթի քրդերը, ապա դաշնակիցները չեն առարկի դրա դեմ:³⁵

Այսպիսով Սևրի պայմանագիրը նախատեսում էր սկզբում Թուրքիայի տարածքում ստեղծել ինքնավար Քրդստան, նրան տրամադրելով իրավունք, որ մեկ տարուց հետո այն անջատվի Թուրքիայից և վերածվի անկախ Քրդստանի: Հետևաբար Քրդստանի հարցը ստանում էր մասնակի լուծում, դուռ բանալով ապագա դժվարությունների համար:³⁶

Սևրի պայմանագրի քրդերին վերաբերող բաժինը ստացել է հակասական մեկնաբանություններ: Օրինակ, Կարո Սասունին գտնում է, որ նրանում նկատելի է անգլիական ազդեցությունը և որ առհասարակ Քրդստանին վերաբերող հոդվածներով անգլիացիները հետապնդում էին հեռահար նպատակներ: Նրանք գիտակցում էին, որ բոլորովին անհնարին է Իրաքի սահմանները տարածել մինչև Դիարբեքիր և Մալաթիա և դրանք վերցնել բրիտանական հովանավորության ներքո, քանի որ մրցակից պետությունները ևս պահանջում էին իրենց բաժինը: Ուստի Անգլիան ձգտում էր ստեղծել անկախ քրդական պետություն, Մոսուլը միավորել նրա հետ և իր տիրապետությունը Միջագետքի հյուսիսից հասցնել մինչև Փոքր Ասիայի խորքերը, առանց իր դաշնակիցների հետ խնդիրներ ունենալու: Հետևաբար Սևրի պայմանագրի մեջ քրդերի վերաբերյալ հոդվածների առկայությունը Կարո Սասունին համարում է բրիտանական դիվանագիտության հաջողությունը:³⁷

Ուս թրդագետ Վ. Նիկիտինը քրդերի համար Սևրի պայմանագրի գնահատականը տալիս է հետևյալ կերպ. «Թեև Սևրի պայմանագիրը մնաց միայն թղթի վրա, այնուամենայնիվ այն իրենով նշանավորեց չափազանց կարևոր շրջադարձ քրդական հարցի զարգացման մեջ: Պատ-

մության մեջ առաջին անգամ դիվանագիտական փաստաթղթում քննության ենթարկվեց...քրդերի հոծ բնակեցման շրջանների «տեղական ինքնավարության մասին հարցը: Այդ պահից սկսած, քրդական պրոբլեմի միջազգային նշանակությունը այլևս կասկած չէր հարուցում»:³⁸ «Պետք է խոստովանել, - գրում է ռուս քրդագետ Մ. Լազարևը, - որ Սևրի պայմանագրի 62-64 հոդվածները չմեռան պայմանագրի հետ միասին, այլ մնացին քրդական նացիոնալիզմի և ամբողջությամբ վերցրած քրդական ազգային-ազատագրական շարժման գաղափարական-քաղաքական գինանոցում: Լինելով ի սկզբանե գործնականում անիրագործելի, և շուտով կորցնելով նաև իրենց իրավական ուժը, այդ հոդվածները միաժամանակ ընդհուպ մինչև մեր օրերը մնում են որպես խորհրդանիշ այն իրողության, որ պատմության մեջ առաջին անգամ միջազգայնորեն ճանաչվել է քուրդ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը, քրդական ազգային հարցի գոյությունը որպես միջազգային հարաբերությունների համակարգում ինքնուրույն սուբյեկտի: Եվ այդ ճանաչումը ի վերուստ շնորհիվ չէր, այլ ձեռք էր բերվել Քրդստանի ազատության հազարավոր մարտիկների արյան գնով, որոնք ընկել էին բազմաթիվ քրդական ապստամբությունների ժամանակ»:³⁹

Հայտնի քուրդ ազգային գործիչ Քամուրան Ալի Բադրխանը հետևյալ կերպ էր արտահայտվում Սևրի պայմանագրի մասին. Այդ պայմանագիրը «քուրդ ժողովրդի համար ապահովում էր միասնության ու անկախության իրավունք. այն ձեռք էր բերվել շնորհիվ երկարատև ջանքերի ու ծանր զոհողությունների: Եվ թեև այդ պայմանագիրը երբեք չի կենսագործվել, սակայն նրա բարոյական ուժը ամրապնդվել է նոր գործոններով...»:⁴⁰

Անգլիացի Ա. Թոյնթին ընդհակառակը, գտնում է, որ Սևրի պայմանագիրը որևէ եական ազդեցություն չի ունեցել քրդական հարցի վրա: «Թվում է, թե որևէ ապացույց չկա, - գրում է նա, - թե այս երաշխավորությունը (62-րդ հոդվածը - Վ. Բ.) որևէ ազդեցություն գործել է այդ նույն քուրդ բնակչության մտքերի վրա, կամ թե նրանք գիտակցում են, որ այն ներառնված է դաշնագրում»:⁴¹ Ա. Թոյնթին նկատում է, որ քրդերի համար շատ ավելի կարևոր էր «հավանականությունը, որ իրենց շրջանների վրա հայկական պետություն կարող է հաստատվել և այդ պետությանը հակադրվելու համար նրանք անհրաժեշտության դեպքում պատրաստ էին թուրքերի հետ համագործակցել»:⁴²

Իրողությունը նաև այն է, որ Սևրի պայմանագրի հոդվածները Քրդստանի մասին հենց սկզբից լրջորեն չընդունվեցին տերությունների կողմից:⁴³ 62-64 հոդվածների խոցելի կողմը նաև այն էր, որ պայմանագրում հստակեցված չէր, թե ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պետք է իրակա-

մացվեր անցումը ինքնավարությունից դեպի անկախություն և թուրքիայի կազմից անջատում:

Արդեն 1922 թ. դաշնակցային տերությունները մոռացության մատնեցին «քրդական» հողվածները և առհասարակ իրենց առաջարկներում այլևս չէին բարձրացնում քրդական հարցը, որի հետևանքով, ինչպես կտեսնենք ստորև, քեմալականները հնարավորություն ստացան այն չընդգրկելու Լոզանի կոնֆերանսի օրակարգի մեջ: Կարևոր է նաև նշել, որ այդ պայմանագիրը ստորագրող պետությունները, բացառությամբ Իտալիայի, այն ռատիֆիկացման չենթարկեցին: Ընդ որում, հետագայում Անգլիան, փոփոխված միջազգային իրադրության հետևանքով, վերանայման ենթարկեց իր իսկ առաջ քաշած պլանները անկախ քրդական պետություն ստեղծելու վերաբերյալ:

Սևրի պայմանագրից բխող նախատեսությունները շատ արագ կորցրին իրենց արժեքը, որովհետև քեմալական իշխանությունը բավականին ուժեղացել ու ամրապնդվել էր: Թուրք-բուլղարիայի համագործակցությունը վերելք էր ապրում: Բուլղարիայի Ռուսաստանը ռազմական, քաղաքական և բարոյական մեծ աջակցություն էր ցույց տալիս թուրք ազգայնականներին: Անկարայի և Մոսկվայի կառավարությունները վճռակամորեն հայտարարեցին, որ չեն ճանաչելու և հարգելու Սևրի դաշնագիրը:

1921 թ. գարնանը Մեծ Բրիտանիայի գաղութների գծով նախարար Ուինստոն Չերչիլը հետևյալ կերպ է գնահատում միջազգային իրադրությունը Անատոլիայում Ինքնուրույն վայրի մոտ քեմալականների կողմից հունական բանակին հասցված ծանր հարվածից հետո. «Մեզ համար դրա հնարավոր հետևանքները ծայրահեղ կերպով անբարենպաստ են: Թուրքերը կհայտնվեն բուլղարիայի գրկում, Միջագետքում կբռնկեն հուզումներ ճիշտ այն ճգնաժամային պահին, երբ բանակը այդ շրջաններում կրճատվում է. ամենայն հավանականությամբ մեզ չի հաջողվի պահել Մոսկուն ու Բաղդադը առանց մեծ ու ծախսատար բանակի... Հայերը ստիպված են ենթարկվելու նոր փորձությունների»:⁴⁴

Նման իրադրության պայմաններում 1921 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցավ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարների և արտաքին գործերի մինիստրների խորհրդաժողովը: Վերջինս «արդյունք էր այն դիմադրության, զոր Թուրքիա ցույց տվավ Սևրի դաշնագրի պայմաններում ենթարկվելու դեմ», - գրում է Ալեքսանդր Խատիսյանը:⁴⁵ Լոնդոնի խորհրդաժողովի քննարկումների գլխավոր առարկան էր Սևրի դաշնագրի պայմանների վերաքննությունը: Լոնդոն էր ուղարկվել թուրքական երկու պատվիրակություն՝ Կ. Պոլսի և Անկարայի: Սակայն համաժողովի բացումից անմիջապես հետո Կ. Պոլսի պատվիրակությունը հրաժարվեց իր լիազորություններից և նրա ղեկավար Ռեշիդ փաշան հայտարարեց, որ

Անկարայի պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյը լիազորվում է արտահայտելու միացյալ թուրքական տեսակետը:

Համաժողովում Թուրքիայի ներկայացրած հաշտության ծրագիրը, ըստ էության, արտահայտում էր «Ազգային ուխտի» բոլոր հիմնական սկզբունքները: Այն չէր ճանաչում հայերի ինքնորոշման իրավունքը: Բեքիր Սամի-բեյը պահանջեց վերականգնել 1914 թ. Թուրքիայի սահմանները, վերադարձնել Իզմիրը և Կիլիկիան: Լոնդոնի խորհրդաժողովում քննարկումների առարկա դարձավ նաև Հայկական հարցը: Իրենց ելույթներում Պոլոս Նուբար փաշան և Ա. Ահարոնյանը զուր ջանքեր էին գործադրում, որ տերությունները ճանաչեն հայերի իրավունքը Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Քրդական հարցի կապակցությամբ բրիտանական պատվիրակության ղեկավար լորդ Քերզընը հայտարարեց, որ թուրքերը պետք է ինքնավարություն տրամադրեն քրդերին: Փետրվարի 24-ին Բեքիր Սամի-բեյը իր ծավալուն ելույթում հանգամանորեն շարադրեց թուրքական միացյալ պատվիրակության դիրքորոշումը հայկական և քրդական հարցերի կապակցությամբ: Նա հայտարարեց. «մենք գտնում ենք, որ հողային խնդիրների ուշադիր ուսումնասիրությունը, մասնավորապես Հայաստանի և Քրդստանի վերաբերմամբ, հնարավորություն է տալիս արդարացի լուծում գտնելու էական կետերի մեջ»: Այնուհետև նա ավելացրեց, որ Թուրքիան ճանաչում է Հայաստանի հետ իր ունեցած սահմանը, որը որոշվել է 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրոպոլի պայմանագրով: Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա ըստ Բեքիր Սամի-բեյի, քրդերը ոչինչ չեն ցանկանում, բացի նրանից, որ թուրքերի հետ ապրեն ինչպես եղբայրներ:⁴⁶ Այլ կերպ ասած, թուրքական պատվիրակությունը հանդես եկավ քրդերի ազգային ինքնորոշման դեմ, իսկ դա նշանակում էր, որ Անկարան և Ստամբուլը փաստորեն պահանջում էին չեղյալ հայտարարել քրդերին վերաբերող Սևրի պայմանագրի համապատասխան հողվածները: Միաժամանակ մեջտեղ բերելով թուրքական ավանդական «փափուկ բարձր», Բեքիր Սամի-բեյը հայտարարեց, որ «Թուրքիայի համար Հայաստանի և Քրդստանի ապագա ճակատագրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ նրանք հարում են նրա սահմաններին»: Միաժամանակ թուրքական պատվիրակության ղեկավարը հասկացրեց, որ քրդական հարցը իրենք դիտում են որպես Թուրքիայի ներքին հարց:⁴⁷

Սակայն լորդ քերզընը համառ հետևողականությամբ պահանջեց Սևրի պայմանագրի հայկական և քրդական հողվածները ենթարկել նոր քննարկման, ընդ որում շեշտելով, որ Անտանտի տերությունները դրանով գնում են Թուրքիայի նկատմամբ որոշակի զիջման, համաձայնվելով, որ Հայաստանի և Քրդստանի ապագայի հարցերը ենթարկվեն կրկնակի քննարկման: Հնարավորին չափ շրջանցելով Հայկական հարցը, Բեքիր

Սամի-բեյը կաշվից դուրս էր գալիս խորհրդատուի մասնակիցներին հանոգելու համար, որ քրդերը հավուր պատշաճի ներկայացված են Թուրքական Ազգային Մեծ Ժողովում, որ քրդերը միշտ հայտարարել են, որ իրենք «մշտապես Թուրքիայի հետ կազմել են անբաժան մաս, որ երկու ռասաները միավորված են ընդհանուր զգացումներով, ընդհանուր մշակույթով և ընդհանուր կրոնով»: Այնուհետև վերապահում անելով, Բեքիր Սամի-բեյը նշեց, որ ճիշտ է, զինադադարից հետո ոչ մեծ թվով քրդեր ցանկություն են հայտնել անջատվել Թուրքիայից և նրանց ջանքերով Կ. Պոլսում ստեղծվել է մի «ոչ մեծ կոմիտե» օսմանյան երկու սենատորների զլխավորությամբ, որոնցից մեկը եվրոպացիներին ոչ անհայտ Շերիֆ-փաշան է: Սակայն այդ կոմիտեն ինքնակոչ մի մարմին էր, ոչ մեկին չէր ներկայացնում և առաջնորդվում էր ավելի շուտ անձնական, քան ազգային մոտիվներով: Դրան թուրքական պատվիրակության ղեկավարը ավելացնում է, որ հիշյալ կոմիտեի անդամներին ներկայումս չեն ծանաչում նույնիսկ Կ. Պոլսի քրդերը, որոնք չեղյալ են հայտարարել կոմիտեի անդամ լինելու նրանց իրավունքները: Իր այդ հայտարարությունը ճշմարտության տեղ դաշնակիցներին մատուցելու համար, Բեքիր Սամի-բեյը չի խորշում նաև հայտարարել, որ Անկարայի կառավարությունը պատրաստ է Քրդստանում ընդունելու մի հանձնաժողովի, որն իրավասու է կազմակերպելու հետաքննություն և նույնիսկ հանրաքվե: Վիլայեթների համար Թուրքական Ազգային Մեծ Ժողովի կողմից մշակված նոր «Օրգանական ստատուսը» քրդերին հատկացնում է տեղական ինքնավարություն, — ստում է Բեքիր Սամին: Նման ինքնավարություն կստանան գերակշիռ քրդական տարր ունեցող շրջանները: Սակայն Սևրի պայմանագրի 62-րդ հոդվածում նշված Քրդստանի սահմանները, ավելացնում է նա, — «չեն համապատասխանում ռեալ ազգագրական իրադրությանը»: Մամուրեթ-է-Ազիզ և Դիարբեքիր վիլայեթների արևմտյան և հարավային մասերը, հատկապես Սիվերեք սանջակը, մաքուր թուրքական են, — նշում է նա: Դիարբեքիր վիլայեթում միայն Դերսիմի գավառն է քրդական: Քրդերը առավել խիտ զանգվածներով բնակեցված են Բիթլիս, Վան և մասամբ Մոսուլ վիլայեթներում: Նրանք գերակշռում են նաև իրանական սահմանների երկայնքով և ապա դեպի հյուսիս ուղղությամբ: Մոսուլի վիլայեթում էրբիլի, Ալթինքյոփուրուի և Տուզ-խուրմաթլիի շրջանները գերազանցապես բնակեցված են քրդերով:

Երբ լորդ Քերզընը պահանջեց կոնկրետ փաստեր բերել քրդերին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ թուրքական կառավարության մտադրությունների մասին, ստույգ նշել այդ ինքնավար Քրդստանի սահմանները և այլն, Բեքիր Սամի-բեյը խուսափելով պատասխանից, սկսեց ճամարտակել այն մասին, որ Անկարայի կառավարությունը որոշել է վարել ապակենտրոնացման քաղաքականություն, որ թուրքերի և քրդե-

րի միջև տարբերությունը մեծ չէ, քան անգլիացիների և շոտլանդացիների միջև և այլն:⁴⁸

Թուրքական պատվիրակության նման գործելակերպը անկասկած վկայում էր այն մասին, որ Լոնդոնում թուրքական փորձված դիվանագետները եկել էին այն համոզման, որ Եռյակ համաձայնության երկրներն արդեն նախապատրաստված են թուրքերի նկատմամբ զիջումների գնալու հայկական և քրդական հարցերի կապակցությամբ և վերանայման ենթարկելու Հայաստանի և Քրդստանի վերաբերյալ Սևրի դաշնագրի համապատասխան կետերը: Չի բացառվում նաև, որ քեմալական հետախուզությունն այդ առթիվ ուներ հավաստի տեղեկություններ: Իսկ որ այդպիսի տրամադրություններ գոյություն ունեին Լոնդոնում և Փարիզում, վկայված են բազմաթիվ փաստերով:⁴⁹ Այսպես, օրինակ, 1921 թ. մարտի 9-ին Լոնդոնում Բեքիր Սամի-բեյը Ֆրանսիայի արտգործնախարար Բրիանի հետ ստորագրեց անջատ ռազմական, քաղաքական ու տնտեսական մի համաձայնագիր, ըստ որի Ֆրանսիան Կիլիկիայում և նրան հարող Անատոլիայի հարավ-արևելյան շրջաններում իր ռազմական ներկայությունը դադարեցնելու դիմաց Կիլիկիայում, Դիարբեքիրում և Ալվասում (Սեբաստիա) ձեռք էր բերում գերակշիռ տնտեսական դիրքեր: Հարավային և հարավ-արևելյան Անատոլիային վերաբերող մանատիպ պայմանագիր 1921 թ. մարտի 12-ին Լոնդոնում կնքվեց նաև Թուրքիայի և Իտալիայի միջև:⁵⁰ Այն ստորագրեցին Իտալիայի արտգործնախարար կոմս Աֆարցան և Բեքիր Սամի-բեյը: Այդ փաստաթղթով Իտալիան հանձն էր առնում հաշտության պայմանագրի կնքման ժամանակ պաշտպանել Թուրքիայի շահերը: Ճիշտ է, Լոնդոնում Բեքիր Սամիի կողմից կնքված այդ համաձայնագրերն ու պայմանագրերը չվավերացվեցին ԹԱՄԺ-ի կողմից, որպես Սևրի ոգով կնքված փաստաթղթեր և ինքը Բեքիր Սամի-բեյը հեռացվեց իր պաշտոնից, սակայն այդ բոլորը այնուամենայնիվ վկայում էր այն մասին, որ Անտանտի մարաքաղաքներում Թուրքիայի նկատմամբ հովերը սկսել էին փչել այլ ուղղությամբ: Դա հատկապես ցայտուն կերպով սկսեց նկատվել 1921 թ. մարտի 16-ին Թուրքիայի և ՌՍՖՍՀ-ի միջև «Բարեկամության ու եղբայրության պայմանագրի» ստորագրումից հետո, ինչպես նաև նույն օրը կնքված Անգլիա-խորհրդային Ռուսաստան համաձայնագրից հետո, որով Մոսկվան պարտավորվում էր դադարեցնել իր հակաանգլիական քարոզչությունը բրիտանական գաղութներում, իսկ Լոնդոնը պարտավորվում էր չպաշտպանել նախկին ռուսական կայսրության երկրներից ստեղծված նորակազմ պետություններին: Դա մահացու հարված էր Հայաստանի համար, որովհետև Անգլիան դադարեցնելու էր իր օգնությունը հայերին:⁵¹

Լոնդոն մեկնած հայկական պատվիրակությունը բազմամարդ էր: Հայաստանի Հանրապետության (որը արդեն գոյություն չուներ) պատվի-

րակության ղեկավարն էր Ավետիս Ահարոնյանը: Ազգային պատվիրակությունը գլխավորում էր Պողոս Նուբար փաշան: Այս զույգ պատվիրակություններին անդամակցում էին գեներալ Բագրատունին, Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության գործիչներ Մ. Վարանդյանը, Գ. Փաստրմաջյանը (Արմեն Գարո), Սեպուհը և Ս. Արարատյանը: Հայ պատվիրակության խորհրդականն էր Հովհաննես խան Մասեհյանը: Հայկական զույգ պատվիրակությունները հատկապես համերաշխորեն պահանջում էին Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող կետերի անփոփոխ պահպանում: Ա. Ահարոնյանը հայտարարեց, որ Ալեքսանդրոպոլի պայմանագիրը, որը մատնացույց արեց Բեքիր Սամի-բեյը, ստորագրվել է սպառնալիքի և ճնշման տակ և այն վավերացված չէ:

Ի վերջո Լոնդոնի խորհրդաժողովում ընդունված փաստաթղթում Հայաստանի մասին ընդունվեց առանձին հոդված (9-րդ հոդվածը), որտեղ Սևրի պայմանագրի Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին 88-րդ հոդվածը փոխարինվում էր հայերի համար «Ազգային տուն» («Ազգային օջախ») ստեղծելու մի կետով: «Ի՞նչ էր օջախը, և ուրկե՞տ առաջ եկավ այն», – գրում է Ալ. Խատիսյանը:⁵² Ճիշտ է, 1921 թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգան միաձայն որոշեց, որ ինքը գտնում է, որ այդ Օջախը պետք է միանգամայն անկախ լինի Թուրքիայից,⁵³ սակայն դա բնավ չէր փոխում հարցի էությունը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Օջախի գաղափարին վերաբերվեց անբարյացկամորեն, ավելին, թշնամաբար, գտնելով, որ ինքը, ինչպես և բոլոր հայերը, պարտավոր են շարունակել պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Մինչդեռ Ազգային պատվիրակությունը հաշտվում էր Օջախի գաղափարի հետ և ընդունում էր այն:⁵⁴

Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա 1921 թ. մարտի 11-ին դաշնակիցները հայտարարեցին, որ իրենք պատրաստ են ընդունելու Սևրի պայմանագրի փոփոխությունները այն «գոյություն ունեցող իրադրության փաստերին հարմարեցնելու իմաստով»:⁵⁵ Դա նշանակում էր, որ եռյակ համաձայնության քաղաքական ծրագրերից իսպառ հանվում էր անկախ կամ ինքնավար Քրդստան ստեղծելու հարցը:

Վերին աստիճանի ուշագրավ է Լլոյդ Ջորջի և Բեքիր Սամի-բեյի միջև տեղի ունեցած զրույցը, որը կայացավ Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո, մարտի 16-ին, բրիտանական համայնքների պալատի շենքում: Անգլիական վարչապետը, խոսելով այն զիջումների մասին, որ Լոնդոնը կարող է անել Թուրքիային, հիշատակեց Հայաստանի ու Քրդստանի անունները: Իսկ Բեքիր Սամի-բեյը հայտարարեց, որ Միջագետքը «թանկ գին չէ հանուն բրիտանական բարեկամության», դրան ավելացնելով, որ Անկարան մտադիր չէ Անգլիային անախորժություններ պատճառել Մոսուլում:⁵⁶ Միանգամայն ակնհայտ

է, որ քաղաքական այդ սակարգությունը գնում էր հայ և քուրդ ժողովուրդների հաշվին: Իսկ Ֆրանսիան ձգտում էր ամեն գնով հաշտություն կնքել Թուրքիայի հետ: 1921 թ. հոկտեմբերի 20-ին ֆրանսիական կառավարության կողմից լիազորված Ֆրանկլեն-Բույոնը Անկարայում քեմալական կառավարության հետ կնքեց անջատ ֆրանս-թուրքական խաղաղության պայմանագիր, որը հանդիսացավ Մերձավոր Արևելքում Սևրի համակարգի կործանման կարևոր էտապներից մեկը: Այդ պայմանագիրը նաև իրենով նշանավորում էր եռյակ համաձայնության հակաթուրքական ճակատի քայքայում: Ֆրանսիան դրանով ըստ էության հրաժարվում էր Սևրի պայմանագրից և ճանաչում էր քեմալական կառավարությանը: Անկարա մեկնելուց առաջ Ֆրանկլեն-Բույոնի և Ալ. Խատիսյանի միջև տեղի է ունենում հանդիպում, և ֆրանսիացի դիվանագետը խոստանում է իր բանակցությունների ժամանակ աչքի առջև ունենալ նաև հայերի շահերը, միաժամանակ խորհուրդ տալով, որ «հայերու շահերը պաշտպանելու համար պետք է հաշտվիլ թուրքերուն հետ, անոնց վստահությունը ձեռք բերել»:⁵⁷

Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը ողբալի հետևանքներ ունեցավ հայության համար: Կիլիկիան անցնում էր Ֆրանսիային, որի հետևանքով այն դատարկվեց հայերից և 150 հազար մարդ ստիպված եղավ ապաստան գտնել Սիրիայում և Հունաստանում:

Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը անուղղակի առնչություն ունեցավ նաև քրդական հարցի հետ այն առումով, որ եռյակ համաձայնության անդամ երկրներից մեկը դուրս էր գալիս Սևրի համակարգից, դրանով իսկ Սևրի պայմանագիրը իր պարունակած քրդական հարցի վերաբերյալ հողվածներով դատապարտելով չգոյության: Արտահայտելով ֆրանսիական կառավարող շրջանների այդ տրամադրությունները, Փարիզի քաղաքական շրջաններում մեծ հեղինակություն վայելող հրապարակախոս Մորիս Պերնոն գրեց. «Այլևս մենք չպետք է փորձարկումների ենթարկենք ոչ ինքնավար Քրդստանի և ոչ էլ անկախ Հայաստանի հարցերը»:⁵⁸

1922 թ. մարտի 22-ից 26-ը Փարիզում տեղի ունեցած Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրների մերձավորարևելյան հարցի վերաբերյալ խորհրդաժողովի ժամանակ Անտանտի տերությունները նոր զիջումներ արեցին Թուրքիային, ի թիվս որոնց, Լոնդոնի խորհրդաժողովում հայերին խոստացված «Հայ Ազգային օջախը», որը «կը դառնար հայտնի չէ թե ո՞ր տեղավորված օջախ»:⁵⁹

Խորհրդաժողովի մասնակիցների կողմից ընդունված համատեղ հուշագրում հայերի մասին տեղ էր գտել հետևյալ ոչ մեկին ոչնչով չչարտավորեցնող ձևակերպումը. «Հայերի վիճակը պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա ինչպես այն պատճառով, որ պատերազմի ժամանակ դաշնակցային տերությունները նրանց նկատմամբ իրենց վրա էին

վերցրել որոշակի պարտավորություններ, նույնպես և այն պատճառով, որ այդ ժողովուրդը կրել է դաժան տառապանքներ»:⁶⁰ Իսկ քրդերի մասին հուշագրում առհասարակ ոչ մի խոսք չկար:

1922 թ. հուլյանի նկատմամբ քեմալականների տարած վճռական հաղթանակից հետո արդեն պառակտված եռյակ համաձայնության պետությունները սկսեցին նախապատրաստական աշխատանքներ տանել Թուրքիայի հետ պայմանագիր ստորագրելու համար: Այդ նպատակով Լոզանում գումարվեց խորհրդաժողով (1922 թ. նոյեմբեր – 1923 թ. հուլիս), որը կոչված էր վճռել Թուրքիայի և դաշնակիցների միջև բոլոր վիճելի խնդիրները:

Մինչև խորհրդաժողովի բացվելը, Ալ. Խատիսյանը Լոնդոնում հանդիպում է ունենում Ֆորին օֆիսի Մերձավոր Արևելքի բաժնի ղեկավարներ Վանսիտարտի և Օսբորնի հետ, որոնք բառացիորեն նրան ասում են հետևյալը. «Թուրքերու բռնած դիրքը լավ նախագուշակում չէ համագումարի հաջողության տեսակետով և որ դաշնակիցները այսօր գուրկ են իրական միջոցներե թուրքերու վրա ազդեցություն գործադրելու համար: Հասկցուցին, թե ոչ ոք պատերազմ կուզե: Թե թուրքերը լավ ըմբռնելով այս հանգամանքը՝ պիտի համառին մինչև ծայրը: Թե դաշնակիցներու մեջ ալ այս խնդրի նկատմամբ չկա միական ոգի և մինչև իսկ անոնցմե ոմանք կօգնեն թուրքերուն դրամով և զենքով: Թե հայերու պահանջները կենսական խնդիրներ չեն դաշնակիցներու համար, որոնք զբաղված են ավելի նեղուցներու հարցով և միայն Հայկական հարցի համար դաշնակիցները հազիվ թե խզեն հարաբերությունները Թուրքիո հետ»:⁶¹

Երբ այս դառը ճշմարտությունը լսելուց հետո Ալ. Խատիսյանը հիշեցնում է Օսբորնին, որ Անգլիան բազմիցս խոստումներ է տվել հայ ժողովրդին, հետևում է հետևյալ պատասխանը. «Ի՞նչ ընենք, մենք խոստացեր էինք հույներուն Ձմյուռնիան և Թրակիան, սակայն չկրցանք իրագործել մեր խոստումը»:⁶²

Նմանատիպ պատասխաններ Ալ. Խատիսյանը ստացավ նաև Փարիզում: Առանց ուժի գործադրման թուրքերի նկատմամբ հնարավոր չէ հասնել որևէ արդյունքի, իսկ ուժ բանեցնող չկա. ժողովուրդները չեն ցանկանում այլևս պատերազմել, – ահա ֆրանսիացիների պատասխանը:

Հայկական զույգ պատվիրակությունների մասնակցությունը Լոզանի խորհրդաժողովին մերժվեց դաշնակիցների կողմից այն պատճառաբանությամբ, որ Հայաստանն ընդունել է խորհրդային իրավակարգ, որի իշխանությունը ճանաչված չէ դաշնակիցների կողմից: Դա նշանակում էր, որ հայկական պատվիրակությունը զրկվում էր խորհրդաժողովի նիստերին անմիջական մասնակցություն բերելուց: Խորհրդաժողովում լրոր քերզընը դիմելով թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուլին հայտարարեց. «Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը նայում է մեզ,

սպասելով, որ դուք բավարարություն կտաք հայերին»: Դրան հետևեց Ինենյուլի պատասխանը. «Քաղաքակիրթ աշխարհը ավելի շատ ձեզ է նայում, որովհետև դուք եք, որ անվերջ խոստումներ եք տվել հայերին, իսկ մենք որևէ խոստում չենք տվել»:⁶³

Թուրքական պատվիրակությունը փորձում էր մերժել Հայկական հարցի քննարկումը այն պատճառաբանությամբ, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով որոշված են Հայաստանի և Թուրքիայի սահմանները, իսկ Թուրքիայում բնակվող հայերի հարցը իրենց ներքին խնդիրն է:

Խորհրդաժողովի քաղաքական հանձնաժողովը Թուրքիայի սահմանների խնդրի քննության առնչությամբ որոշեց քննարկման առարկա դարձնել նաև Հայկական հարցը: Այդ կապակցությամբ հայկական զույգ պատվիրակությունների ներկայացուցիչները հրավիրվեցին մասնակցելու ենթաժողովի ղեկտեսմբերի 26-ի նիստին:

Լոզանում անգլիացիները համառորեն պնդում էին, որ հայերի համար Ազգային օջախ ստեղծվի Կիլիկիայում, մինչդեռ ֆրանսիացիները առաջարկում էին այն հիմնել Թուրքիայի արևելյան վիլայեթներում, Կովկասահայաստանի մոտ: Դրա պատճառը կայնում էր նրանում, որ Անգլիան ցանկանում էր Սիրիայի սահմանների հարևանությամբ իր համար ստեղծել մի հենակետ: Հենց այդ նույն պատճառով ֆրանսիացիները չէին ցանկանում, որ հայկական օջախը ստեղծվի իրենց հովանավորության ներքո գտնվող երկրի սահմանների մոտ:

Հայկական պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի միջոցով առաջադրեց Ազգային օջախի հետևյալ տարբերակը. այն պետք է ստեղծվի Արևմտյան Հայաստանի տարածքում ելքով դեպի ծովը: Ընդ որում նշվում էր, որ հայկական պատվիրակությունները չեն առարկի, եթե Ազգային օջախը ստեղծվի Կիլիկիայում:⁶⁴

Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ապա վերջինս Լոզանում իր պատվիրակության միջոցով պաշտպանեց Ազգային օջախի գաղափարը: Իր 1922 թ. ղեկտեսմբերի 30-ի բվակիր հայտարարությամբ ամերիկյան պատվիրակությունը տեղեկացնում էր խորհրդաժողովի մասնակից պետություններին, որ հայկական անկախ Ազգային օջախի ստեղծման առաջարկը առաջ է բերել Միացյալ Նահանգների բնակչության մեծ մասի խորունկ հետաքրքրությունն ու համակրանքը:⁶⁵

«Արմենիա-Ամերիկա» միությունը խորհրդաժողովին ներկայացրեց Ազգային օջախի մի մանրամասն ծրագիր, միաժամանակ նշելով այն կյանքի կոչելու համար անհրաժեշտ նյութական միջոցների աղբյուրը: Հիշյալ միությունը գտնում էր, որ Հայկական օջախի հաստատման վայրը կարող է որոշել այդ նպատակով ստեղծվելիք իրազեկ հանձնախումբը: Միաժամանակ միությունը գտնում էր, որ Հայկական օջախի հաստատման լավագույն վայր կարելի է համարել Եփրատից արևմուտք ընկած Սիրիայի հյու-

սիսային մասը: Այդտեղ հաստատված Օջախը պետք է ունենար ելք դեպի ծովը: Նրա տարածքը կազմելու էր 18 հազար քառակուսի մղոն: Ըստ ամերիկյան տեսակետի՝ Օջախը պետք է լիներ անկախ՝ Ազգերի Դաշնակցության հովանավորության ներքո և արտաքին քաղաքականության բնագավառում պետք է վարեր չեզոքության գիծ: Նախագծի հեղինակները այն տեսակետին էին, որ տարբեր վայրերում ցրված արևմտահայ փախստականների մեծագույն մասը ցանկություն կհայտնի վերադառնալ և բնակություն հաստատել Հայկական օջախում:⁶⁶

Սակայն ամերիկյան այս ծրագրին գործնական իրականացում տալու համար, բնականաբար, անհրաժեշտ էր «գործադրել ազդու միջոցներ», մի բան, որ վաշինգտոնը չցանկացավ անել: Խորհրդաժողովում բրիտանական ներկայացուցիչները (լորդ Քերզըն, Գորացիոս Ռումբուտ և այլն) աշխատում էին համոզել թուրքական պատվիրակությանը, որ սիրիական սահմանների մոտ կամ որևէ այլ վայրում հայերի համար Ազգային օջախի ստեղծումը նպատակ ունի նրանց հավաքել մի տեղ, որտեղ նրանք կարողանային պահպանել իրենց ազգությունը, լեզուն և իրենց մշակույթը: Ընդ որում անգլիացիները շեշտում էին, որ այդ տարածքը պետք է մնա թուրքական իշխանության ներքո և կառավարվի թուրք գեներալ-նահանգապետի կողմից:⁶⁷

Խորհրդային Ռուսաստանը ևս չցանկացավ մթազնել իր հարաբերությունները քեմալական թուրքիայի հետ՝ հանուն հայերի համար Ազգային օջախի: Ի պատասխան այսպես կոչված «Հայասերների միության» հուշագրի, 1923 թ. հունվարի 26-ին արտաքին գործերի ժողովում Գեորգի Չիչերինը իր պատասխան նամակում ընդհանրապես խուսափելով «հայերի համար Ազգային օջախ» բառակապակցության օգտագործումից, գրում էր, որ Ռուսաստանի և Ուկրաինայի կառավարությունները առաջարկում են իրենց սահմանների մեջ տեղավորել հայ փախստականներին: Սա նշանակում էր, որ Չիչերինը Հայկական օջախը տեղափոխում էր Ռուսաստան: Իսկ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սպանել թուրքահայաստանի դատը:⁶⁸

Լոզանում թուրքական պատվիրակությունը Իսմեթ Ինենյուկի և Ռիզա Նուր բեյի գլխավորությամբ զարգացնում էին այն տեսակետը, որ Հայկական օջախի ստեղծումը իբր հավասարազոր է թուրքիայի մասնատմանը: Որ առանց այն էլ թուրքիան սեղմվել է իր եթնիկական սահմանների մեջ: Որ թուրքիան չի կարող իր տարածքում գտնել հողի մի կտոր նման ծրագրի իրականացման համար: Իսմեթ Ինենյունը նույնիսկ անցնելով դիվանագիտական պատշաճության սահմանները, ցինիկորեն հայտարարեց, որ եվրոպայում կան չքնաղ անկյուններ, եվրոպացիները, որոնց տիրապետության տակ գտնվող տարածքները անհամեմատ ավելի մեծ են, քան թուրքիայինը, արդյոք չեն ցանկանում շնորհի անել հայերին

և նրանց համար հատկացնել տարածքներ Ազգային օջախ ստեղծելու համար:⁶⁹ Ավելին, Ռիզա Նուր բեյը, ոտքի կանգնելով կտրականապես հայտարարում է, որ ինքը չի մասնակցի մի այնպիսի նիստի, որտեղ խոսք է գնում Հայկական հարցի մասին: Այս հայտարարությունից հետո նա իր խորհրդակցանների հետ դուրս է գալիս ժողովասրահից, իր հետևից ուժգին շրխկացնելով դուռը:

Այլ. Խատիսյանը վկայում է, որ այս միջադեպից հետո «Հայկական Հարցի քննությունը դադարեցավ քաղաքական տեսակետով»: Այլ կերպ ասած, հարցը հանվեց քաղաքական հարթությունից և տեղափոխվեց ֆիլանտրոպիստական հարթություն և լորդ Քերզընի արտահայտությամբ «լուռ մահացավ»:⁷⁰ Այսպիսով, Լոզանում Հայկական հարցը Ազգային օջախի գաղափարից հասավ թուրքիայի որևէ անկյունում հայերի կենտրոնացման մտքին: Սա էր վերջին պահանջը, որ ներկայացվեց թուրքերին: Դրանից հետո խորհրդաժողովը առհասարակ իր օրակարգից հանեց Հայկական հարցը: Այսպիսով, մեծ տերությունների հավաքական կամքով տապանաբար դրվեց Սևրի դաշնագրի վրա: Լոզանի եզրափակիչ արձանագրության մեջ հայերի մասին այլևս փոքրիկ հիշատակություն անգամ չկար:⁷¹ Հիրավի, «Լոզանը դարձավ Հայկական Դատի ողբերգական փուլերեն մեկը» (Այլ. Խատիսյան):

Լոզանի կոնֆերանսը հանդիսացավ ոչ միայն Հայկական հարցի գերեզմանում, որն առաջին աշխարհամատի տարիներին և հետպատերազմյան քաղաքական սակարկումների շրջանում տևականորեն չարչրկվում էր վերսայան համակարգի դիվանագիտական ատյաններում, այլև վերջնականապես փակեց քրդական հարցը, որը նույնպես Սևրի դաշնագրի ծնունդ էր, սակայն մեռավ առանց հասակ քաշելու: Միանգամայն իրավացի է Արշակ Սաֆրաստյանը, երբ դառնությամբ գրում է, որ չնայած իրենց տված բազում խոստումներին և Սևրի դաշնագրի տակ դրված ստորագրությանը, դաշնակցային տերությունները Լոզանում «ծախեցին և Քրդստանը և՛ Հայաստանը»:⁷²

Ի տարբերություն Հայկական հարցի, որը չնայած ծախողմանը, այնուամենայնիվ քննարկման հարց հանդիսացավ Լոզանում, քրդական հարցը առհասարակ դուրս մնաց քննարկումների օրակարգից, որովհետև դեռևս 1921 թ. դաշնակիցները փաստորեն հրաժարվել էին քրդերի ազգային ինքնորոշման պահանջ առաջադրելուց:⁷³

Կոնֆերանսում քրդական հարցը քննարկվեց գլխավորապես որպես Մոսուլի խնդրի բաղկացուցիչ մաս: Ի դեպ, Վերսալի կոնֆերանսում անհաջողության մատնվելով իր տարածքը Իրաքյան Քրդստանի հաշվին ընդարձակելու հավակնությունից, Իրանը Լոզանում կրկնեց իր այդ պահանջը՝ 1922 թ. դեկտեմբերի վերջին դիմելով Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներին, որպեսզի նրանք թեհրանի նկատմամբ

դրսևորեն «բարյացակամություն» և իրանա-թուրքական «Քրդստանյան սահմանը» վերանայեն հօգուտ Իրանի: Որպես իր այդ պահանջի հիմնավորում, իրանական դիվանագիտությունը վկայակոչում էր այն, որ 1919 թ. օգոստոսի 9-ի անգլո-իրանական պայմանագրին համապատասխան անգլիացիներն իբր իրենց խոստացել են վերոհիշյալ հարցում ընդառաջ գնալ Իրանի ցանկություններին:

Սակայն անգլիացիների պատասխանը վերին աստիճանի կոշտ էր, ավելին՝ կոպիտ: Լորդ Քերզընը, որը ղեկավարում էր անգլիական պատվիրակությունը, հայտարարեց, որ պարսիկներին առհասարակ ոչ մի խոստում չի տրվել, իսկ եթե նրանք վկայակոչում են 1919 թ. պայմանագիրը, ապա այն այլևս գոյություն չունի: Դրան լորդ Քերզընն ավելացրեց, որ «այլևս գոյություն չունի նաև թուրքիայում քրդական պետության, կամ քրդական ինքնավար նահանգի ստեղծման հարց՝ ինչպես ենթադրվում էր Սևրի պայմանագրում»:⁷⁴ Նա կտրականապես մերժեց նաև Իրանի պահանջը՝ թույլատրելու, որ իր ներկայացուցիչը մասնակցի Լոզանի կոնֆերանսին, քանի որ այնտեղ քննարկվելու էր Մոսուլի հարցը, որտեղ իրանական դիվանագիտության պնդումով «Իրանը թուրքիայի հետ ուներ ընդհանուր շահեր»:⁷⁵ Այսպիսով լորդ Քերզընը վրեժ էր լուծում պարսիկներից, որոնց հետևողական պահանջների հետևանքով 1921 թ. Անգլիան ստիպված էր իր զորքերը դուրս բերել Իրանից:

Լոզանի կոնֆերանսի բացման օրվանից սկսած քեմալական կառավարությունը կտրականապես պահանջեց քրդական հարցը չընդգրկել կոնֆերանսի օրակարգում,⁷⁶ դա հիմնավորելով նրանով, որ թուրքիայի բոլոր մահնդակական փոքրամասնությունները, լինեն դրանք քրդեր, արաբներ, լազեր, չերքեզներ և այլն, դրանք թուրքիայի քաղաքացիներ են, հետևաբար նրանց խնդիրը ներքին հարց է: Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հարցի քննարկումների ժամանակ թուրքական պատվիրակությունը քրդական հարցի կապակցությամբ ընդունեց հետևյալ դիրքորոշումը. քրդերը թուրքիայում օգտվում են բոլոր իրավունքներից և չեն ցանկանում բաժանվել թուրքիայից, ինչպես որ նախատեսվում էր Սևրի պայմանագրով: Անատոլիայի քրդերը պատրաստ են թուրքերի հետ կողք-կողքի, զենքը ձեռքին պայքարել Քրդստանը թուրքիայից անջատելու ամեն մի փորձի դեմ, - հայտարարեց թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուն:⁷⁷ Թուրքիան չի ճանաչի որևէ մանդատ իր տարածքի որևէ մասի նկատմամբ, ոչ մի քուրդ չի ցանկանում, որ Քրդստանը վերածվի գաղութի:⁷⁸

Որպես պատասխան անգլիացիները հայտարարեցին, որ այդ բոլորը իրենք կցանկանային լսել ոչ թե թուրքական պատվիրակության անդամների, այլ հենց քրդերի բերանից, ավելացնելով, որ խնդրին իրավասու են պատասխանելու միայն թուրքական Ազգային Մեծ ժողովի քուրդ

պատգամավորները: Պահանջվեց, որ վերջիններս հանդես գան պաշտոնական հայտարարությամբ:

Անկարայի քեմալական կառավարությունը ստիպված էր 1922 թ. ԹԱՄԺ-ում հարցում իրականացնել: Այդ կապակցությամբ գումարվեց մեջլիսի արտակարգ նիստ, որի ժամանակ Մուստաֆա Քեմալը քուրդ պատգամավորներին առաջարկեց հարցի առթիվ արտահայտվել և հայտարարել իրենց տեսակետները, նախապես վստահ լինելով, թե ինչպիսին է լինելու քուրդ պատգամավորների պատասխանը: Առաջինը ելույթ ունենալով երգումից պատգամավոր Յուսեյին Ավնի-բեյը հայտարարեց. «այս երկիրը պատկանում է քրդերին ու թուրքերին: Այս ամբողջից միայն երկու ազգեր իրավունք ունեն խոսելու՝ քուրդ և թուրք ազգերը»:⁷⁹ Ավնի-բեյին պաշտպանեցին Դերսիմից պատգամավորներ Չասան Խայրին և Ռամիզը, Ուրֆայից՝ Բոզան բեյը և Շահինը, ինչպես նաև Բալուի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Մալաթիայի և այլ վայրերի պատգամավորները: Այդ նույն ոգով ելույթներ ունեցան անխտիր ԹԱՄԺ-ի բոլոր քուրդ պատգամավորները: Թատերականացված այդ ներկայացումը կոչված էր ոչ միայն անգլիացիներին, այլև ամբողջ աշխարհին ցուցադրել «քրդերի նվիրվածությունը թուրք-քրդական հայրենիքին»:

Ստանալով ԹԱՄԺ-ի քուրդ պատգամավորների այդ պատասխանաբար, ԹԱՄԺ-ը անմիջապես հեռագրեց Լոզան, որտեղ ասվում էր, որ «քրդերը երբեք չեն բաժանվի թուրքիայից»:⁸⁰

Հեռագիրը ստանալուն պես Իսմեթ-փաշան կոնֆերանսում հայտարարեց, որ թուրքիան պատկանում է երկու ժողովուրդների՝ թուրքերին ու քրդերին, որոնք իրավահավասար են և օգտվում են միանման ազգային իրավունքներից:⁸¹ Միաժամանակ թուրքիայում քրդական վերնախավի մի խումբ ներկայացուցիչների կողմից Լոզան կոնֆերանսի անունով ուղարկվեցին հեռագրեր, որոնցում նրանք արտահայտում էին իրենց հավատարմությունը թուրքական պետությանը, որն իբր խոստանում է բավարարել քրդերի ազգային իրավունքները:

Հայտնվելով փաստի առջև, կոնֆերանսի մասնակիցները անմիջապես օրակարգից հանեցին քրդերին վերաբերող հարցը: Լորդ Քերզընը հայտարարեց, որ «այլևս գոյություն չունի թուրքիայում քրդական պետության կամ քրդական ինքնավար նահանգի ստեղծման հարց՝ ինչպես ենթադրվում էր Սևրի պայմանագրում»:⁸²

Արտառոցը սակայն այն էր, որ այդ նույն Իսմեթ Ինենյուն մեկ այլ առիթով առհասարակ ժխտեց քրդերի՝ որպես ինքնուրույն էթնիկական միավոր գոյություն ունենալու հարցը, նրանց նույնացնելով թուրքերի հետ: Այդ առթիվ լորդ Քերզընը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «ամբողջ աշխարհում կա միայն մի մարդ, որը կարող է նման թեզ առաջ քաշել. դա Իսմեթ Ինենյուն է: Թուրքական մեջլիսում կան քուրդ

պատգամավորներ: Դրանք այնպիսի մարդիկ են, որոնք նույնիսկ թուրքերեն չգիտեն և մեջլիսի աշխատանքներին չեն մասնակցում: Նրանք չեն ընտրվում, այլ՝ նշանակվում են: Քուրդ ժողովուրդը մեջլիսում ներկայացված չէ: Քրդերը բոլորովին այլ ժողովուրդ են իրենց լեզվով, երկրով և ավանդույթներով: Քրդերը, որոնց թուրքերը հայտարարում են իրենց ցեղակիցները, հազարավոր տարիներ ի վեր անկախ կյանք են վարել իրենց լեռներում: Նրանք միշտ էլ դիմադրություն են ցույց տվել Ստամբուլի կառավարության միջամտություններին»:⁸³

Որպես այդ բոլորի հետևանք, 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում դաշնակից պետությունների և թուրքիայի միջև կնքված խաղաղության պայմանագրի տեքստում ոչ մի հիշատակում չէր պարունակում ոչ միայն քրդերի անկախության կամ ինքնավարության, այլև առհասարակ Քրդստանի մասին: Դրանով իսկ գերեզման էին իջեցվում նաև Սևրի պայմանագրում պարունակված հողվածները քուրդ ժողովրդի ազգային երազանքների մասին:

Այդ նույն կերպ Լոզանում անուշադրության մատնվեց նաև թուրքիայի մեկ այլ ազգային փոքրամասնություն հանդիսացող ասորիների հարցը: Թուրքական պատվիրակությունը կտրուկ հրաժարվեց այդ հարցը դարձնելու քննարկումների առարկա:

Լոզանի պայմանագրի մեջ պարունակվում էր լույս մի հատուկ բաժին, որը վերնագրված էր, «III բաժին. Փոքրամասնությունների պաշտպանությունը» (հոդվ. 38-45): 38-րդ հոդվածում ասվում էր. «Թուրքական կառավարությունը պարտավորվում է թուրքիայի բոլոր բնակիչներին տրամադրել իրենց կյանքի ու ազատության համապարփակ ու կատարյալ պաշտպանություն, առանց ծագման, ազգության, լեզվի, ռասայի կամ կրոնի տարբերության»:⁸⁴

39-րդ հոդվածը պարտավորեցնում էր թուրքական կառավարությանը «ոչ մի սահմանափակում և արգելք չդնել, որպեսզի ցանկացած թուրքական քաղաքացի օգտվի որևէ լեզվից»:

Սակայն այդ հոդվածները հայ ժողովրդի համար մեռած տառ էին, որովհետև ցեղասպանության կործանարար մրրիկը հայաթափ էր արել ողջ Արևմտյան Հայաստանը, որտեղ այլևս հայեր չէին մնացել, որպեսզի օգտվեին Լոզանի խորհրդածողովի կողմից տրամադրված այդ ձևական ու չնչին իրավունքներից:

Ինչ վերաբերում է քրդերին, ապա Լոզանի պայմանագրի նշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավաբանական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսքը գնում էր բացառապես ոչ մահմեդական փոքրամասնությունների մասին: Առհասարակ, Լոզանի պայմանագիրը չէր ճանաչում ոչ թուրք մահմեդականների, այդ թվում նաև քրդերի, «փոքրամասնություն» լինելու ստատուսը:⁸⁵

Եթե Լոզանից հետո բազմաչարչար հայկական հարցը հանվում էր միջազգային դիվանագիտության թրթածրարներից և ուղարկվում արխիվ այն պատճառաբանությամբ, որ Արևմտյան Հայաստանը հայաթափ է եղել (չկա հայ, հետևաբար չկա նաև հայկական հարց), իսկ Հայաստանի արևելյան հատվածում պրոբլեմը գտել է լուծում ի դեմս հայկական երկրորդ հանրապետության խորհրդային Հայաստանի գոյության, ապա քրդական հարցին վիճակված էր շարունակել խաղալու քաղաքական մանրադրամի դեր, այս անգամ թուրք նորահայտ ազգայնականների՝ միլի-լի-բեմալականների ձեռքերում, նոր տառապանքներ բերելով քուրդ ժողովրդին:

Լոզանի կոնֆերանսից հետո Քյամուրան Բադրխանը գրեց. «Լոզանի պայմանագիրը դեռ նոր էր ստորագրվել, երբ Մուստաֆա Քեմալը կտրուկ շրջադարձ կատարեց համագործակցության քաղաքականությունից դեպի իր խոստումների և ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ թուրքական կառավարության նույնիսկ պայմանագրային պարտավորությունների դրժումը... Երբ թուրքերին հիշեցրին ժամանակին նրանց տված խոստումների մասին, նա (Մուստաֆա Քեմալը:– Վ. Բ.) հրամայեց փակել դպրոցները և բանտարկել հայրենասերներին ու ազդեցիկ դեմքերին: Նորից սկսեցին գործել ապօրինություններ... Մի քանի նախկին պատգամավորներ ձերբակալվեցին ու հանձնվեցին ռազմադաշտային դատարանին: Ամբողջ Քրդստանում սկսեցին իրականացնել բռնի միջոցառումներ»:⁸⁶

Գ Լ Ո Ւ Խ Յ Ո Յ Ե Ր Ո Ր Դ
XX ԴԱՐԻ 20-30-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔՐԴԱԿԱՆ
ԱՊՍԱՍՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՄԱՍԼԻՉԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ: ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷԶԵՐ

Լոզանի կոնֆերանսից հետո քեմալական կառավարության նկատմամբ քուրդ ժողովրդի ատելությունը Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի և Թուրքական Քրդստանի – Վ. Բ.) առանձին վայրերում պոռթկումներ էր ունենում տարերային ապստամբությունների, խռովությունների, քաղաքացիական անհնազանդության և այլ ձևերով: Սակայն 1925 թ. փետրվարի 8-ին արևելյան վիլայեթներում բռնկեց քրդական մի հուժկու ապստամբություն շեյխ Սայիդի գլխավորությամբ, որն իր թափով և կազմակերպվածությամբ տարբերվում էր նախորդ բոլոր շարժումներից: Ապստամբներն իրենց առջև դրել էին հետևյալ քաղաքական խնդիրը. ռազմական ճանապարհով հասնել միացյալ անկախ Քրդստանի ստեղծմանը, հենվելով գլխավորապես սեփական ուժերի վրա:¹

Ապստամբության ղեկավարությունը իր ձեռքը վերցրեց Փիրանի (Էյլազիզի վիլայեթ) շեյխ Սայիդը, որը հանդիսանում էր Քրդստանում մեծ ազդեցություն ունեցող նաքշբենդի (նաքշբանդիյա) սուֆիական միաբանության ղեկավարը: Նա հանդիսանում էր «Քրդստանի անկախության կոմիտեի» անդամ և նրա ջախջախումից հետո հանդիսացավ Թուրքիայում քրդական շարժման միանձնյա ղեկավարը:²

Ապստամբության հիմնական օջախը գտնվում էր Վանա լճից արևմուտք ընկած շրջանում: Կարճ ժամանակաշրջանում ապստամբական հրդեհն ընդգրկեց 50-60 հազար քառակուսի կիլոմետր տարածք:³

Թուրքիայի ժողովրդա-Հանրապետական կուսակցության կառավարությունը շեյխ Սայիդի ապստամբությունը որակեց որպես «հետադիմական», «քրդերի կրոնական մոլեռանդության պայթյուն», որը նպատակ ունի վերականգնել քեմալականների կողմից վերացված խալիֆաթը, սահմանել շարիաթական նորմեր, տապալել կառավարող «աշխարհիկ-աթեիստական» վարչակարգը և խափանել Թուրքիայի եվրոպականացումն ու արդիականացումը: Ընդդրում թուրքական մամուլը վարչապետ Ալի Ֆեթհի-բեյի և ներքին գործոց նախարար Ջեմիլ-բեյի հրամանով սկսեց բուռն քարոզչություն մղել այն առումով, որ քրդերն ապստամբել են օտարերկրյա տերության (իմա՝ անգլիացիների – Վ. Բ.) սադրանքների հետևանքով:⁴

Ի դեպ, ապստամբության առիթ ծառայեց Ֆեթհի-բեյի կառավարության հրաժարականը, որին ժՀԿ-ն ծայրահեղ ազգայնականները մե-

ղադրեցին քրդական շարժումը ճնշելու ժամանակ ցուցաբերած անվճարականության մեջ:

Ապստամբության շրջանում Անկարան հետևողականորեն աշխատում էր խորհրդային Ռուսաստանի ղեկավարներին ևս ներշնչել հակաքրդական տրամադրություններ, քրդական ազգային շարժումը ներկայացնելով որպես պրոֆիպերիալիստական, արևմտամետ, գործակալական: Դեռևս 1921 թ. օգոստոսի 4-ին արտաքին գործերի գծով թուրքական կոմիսար Յուսուֆ Քեմալ-բեյը Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին հասցեագրված հուշագրում նշում էր, որ անգլիացիների նվիրական իղձն է պատնեշ ստեղծել Հնդկաստանը պաշտպանելու և Մոսկվի նավթը ստանալու համար: «Այդ նպատակով, – շարունակում էր նա, – անգլիացիները պլանավորել են Միջագետքի և Սև Ծովի միջև ստեղծել մեկ կամ մի քանի փոքր պետություններ, որոնք պետք է գտնվեն բրիտանական հովանու ներքո: Քանի որ Հայաստանի մասին, որը նախատեսված էր այդ նպատակի պամար, ներկայումս խոսք անգամ լինել չի կարող, ուստի Անգլիան աշխատում է այդ նույն ծրագրի համար օգտագործել, ի միջի այլոց ապարդյուն կերպով, սրիկաների կողմից ղեկավարվող քրդական բանդաները»:⁵

Դժվար է հավատալ, որ Մոսկվան չէր կռահում քեմալականների այս «հեղափոխական-հակաֆեդերալիստական» ճանարտակությունների թաքնված իմաստը: Սակայն առաջնորդվելով զուտ պրագմատիստական հաշվարկներով, խորհրդային ղեկավարները ոչ միայն ընդունում էին դրանք, այլև տուրք տալիս Անկարայի շովինիստական նկրտումներին, այդ թվում նաև քրդական հարցում:

1925 թ. մարտի 3-ին թուրքական կառավարությունը նորից գլխավորեց իսմեթ Ինենյուն: Այն մշակեց վարչական և քաղաքական միջոցառումներ շեյխ Սայիդի ապստամբությունը ճնշելու համար: Մոստաֆա Քեմալի պաշտոնական խոստովանությամբ, թուրքական կառավարությունը ստիպված էր դրա համար ռազմական դրության մեջ պահել կանոնավոր զորքերի ութ-ինը դիվիզիա: Թուրքական զորքերի թվական ու տեխնիկական գերազանցությունը, միասնության բացակայությունը քուրդ առաջնորդների միջև, հասուն քաղաքական կազմակերպության բացակայությունը, որն ունենար գործողությունների հստակ ծրագիր, և մի շարք այլ պատճառներ կանխորոշեցին քրդական ապստամբության պարտությունը: Մինչև 1925 թ. ապրիլի կեսերը ապստամբների գլխավոր ուժերը շրջապատվեցին ու ջախջախվեցին Գենջոյի գոգահովտում: Շեյխ Սայիդը և ապստամբության մյուս ղեկավարները բռնվեցին Մուրադ չայ գետի կամրջի վրա: Հունիսի վերջին նրանք բոլորն էլ «անկախության դատարանի» վճռով կախաղան հանվեցին Դիարբեքիրում:

Հետաքրքիր է նշել, որ այդ ապստամբությանը իրենց եռանդուն մասնակցությունն էին բերել նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հայ, ասորի և չեքոսլովակացի բնակչությունը, որի մասին մեզ են հասել առանձին կցկտուր տեղեկություններ: Այսպես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին Դիարբեքիի «անկախության դատարանը» մահվան դատապարտեց Չմշկածափ բնակիչ դարբին Պոլոսին, որը մեղադրվեց քրդական ապստամբությանը եռանդուն մասնակցություն ունենալու և խարբերելու ապստամբների օգտին լրտեսությամբ զբաղվելու մեջ: Ընդ որում «Հաքիմիեթի միլիտե» թերթը գրում էր, որ հայ և ասորի կամավորները միանում էին ապստամբներին, Քրդստանի հետ միավորված անկախ Հայաստան ստեղծելու համար:⁶ Տեղական նահանգապետի անունով թուրքական բանակի հրամանատարության կողմից իջեցված շրջաբերական նամակում ասվում էր, որ «ներշնչվելով մեր դեմ անզուսպ վրիժառության զգացումներով, հայերն անկասկած սպասում են հարմար առիթի, որպեսզի ոչնչացնեն բոլոր ոչ հայկական տարրերին, այդ թվում նաև քրդերին, որոնց այժմ օգնում են: Մեր տարածքում և մեր մահմեդական ռասայի ոսկորների վրա նրանք ցանկանում են վերականգնել նոր Հայաստան»:⁷

Մինչև շարժումը սկսելը, քուրդ ապստամբները ենթադրում էին, որ օտար պետությունները օգնություն չեն ցուցաբերի թուրքերին: Սակայն դա այդպես չեղավ: Սահմանակից տերություններից ոմանք ուղղակի կամ անուղղակի ձևով օժանդակեցին նրանց: Օրինակ, Սիրիայի ֆրանսիական իշխանությունները թույլ տվեցին թուրքերին օգտագործել սիրիական երկաթուղիները ապստամբության շրջանը գործեր ու սպառազինություն ուղարկելու համար:

Շեյխ Սայիդի ապստամբությունը ճնշելուց հետո թուրքական իշխանությունները քրդերի նկատմամբ սկսեցին կիրառել պետական ահաբեկչության և բնաջնջման քաղաքականություն: Անգլիացի դիտորդ Արմստրոնգը այդ առթիվ գրում էր. «Քրդստանը հրով և սրով ավերածության ենթարկվեց: Տղամարդկանց տանջում և մահապատժի էին ենթարկում, կանանց և երեխաներին տանում էին անհայտ ուղղությամբ և սպանում, գյուղերն այրում էին, իսկ դաշտերը ամայացնում: Թուրքերը կազմակերպեցին քրդերի մի այնպիսի կոտորած, որը իր դաժանությամբ չէր զիջում սուլթանության ժամանակ հայերի նկատմամբ կատարված հաշվեհարդարին: Նրանք կոտորում էին ոչ միայն քրդերին, այլև հույներին, հայերին, բուլղարացիներին... Դատարանների որոշմամբ զուտ զինվորական արագությամբ քրդերին կախաղան էին բարձրացնում, աքսորում ու բանտերը նետում»:⁸

Այդ անագորույն դաժանությունների նպատակն էր սարսափի միջոցով անդամալուծել քուրդ ժողովրդի կամքը: Ապստամբությունից հետո

թուրքերի և քրդերի միջև բացվել էր շատ խորը մի անդունդ: Հաշտության եզր այլևս չէր մնացել: Ողջ քրդությունը վառված էր ատելության և վրեժխնդրության զգացումներով: Թուրք-քրդական հարաբերությունները սոսկալի կերպարանք էին ստացել: Այդ բոլորը հիմնավորապես համոզեցին քրդական զանգվածներին ու նրանց ղեկավարներին, որ չդիմադրելու դեպքում իրենք դատապարտված են տանելու հայերի ճակատագիրը: 1925 թ. հունիս-հուլիսին Իրան-իրաքյան սահմանի հարևանությամբ, Հաքյարիում, ապստամբության դրոշ պարզեց «անկախության դատարանի» որոշմամբ կախաղան բարձրացված անվանի քրդական առաջնորդ Սեյիդ Աբդուլ Ղադերի որդին՝ Սեյիդ Աբդուլլահը: Վանի և Բիթլիսի շրջաններում ծավալվեցին թե՛ մարտեր քրդական ապստամբների ու կառավարական զորքերի միջև: 1926 թ. աշնանը ջեյալի, հասանան, ջիբրան և հայդարան ցեղերը նահանջելով դեպի Արարատ լեռը, բարձրացրին նոր ապստամբություն: Մեծ և Փոքր Արարատների միջև ընկած թամբարդը, որը թուրքերն անվանում են Քիրե, դարձավ քրդական ապստամբական նոր շարժման գլխավոր օջախը և հենակետը: Այստեղ սկսեցին կենտրոնանալ մեծ թվով քրդական ջոկատներ: Ողջ 1926-1927 թթ. ընթացքում այդ ջոկատները հանդուգն մարտարշավներ էին կազմակերպում նաև դեպի Խնուսի, Վարդոյի, Մուշի, Սուլիանի, ճապաղջրի, Դերջանի, Գենջի, Լիջեի և այլ շրջաններ:

Ապստամբների դեմ հսկայական ռազմական ուժեր, այդ թվում նաև մեծ քանակությամբ ինքնաթիռներ օգտագործելուց զատ, թուրքական իշխանությունները լայնորեն սկսեցին կիրառել նաև վարչական միջոցառումներ: Այսպես, 1927 թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը ընդունեց 1097 օրենքը քրդերին երկրի արևելյան վիլայեթներից արևմտյան վիլայեթներ տեղահանելու վերաբերյալ:⁹ Այդ օրենքի համաձայն մեկ միլիոն քրդեր աքսորվեցին Արևմտյան Անատոլիա: Ընդ որում, Վ. Նիկիտինի արտահայտությամբ, այդ բռնի տարագրությունը իրագործվում էր ճիշտ նույն մեթոդներով, ինչպես հայերի դեպորտացումը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:¹⁰

Արարատի շրջանում քրդական ապստամբական շարժումը նախապատրաստել էր «Հոյուն» («Անկախություն») ռազմաքաղաքական կոմիտեն, որը ստեղծվել էր 1927 թ. օգոստոսին Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցած քրդական կազմակերպությունների համագումարում:¹¹ Այստեղ ձևակերպվեց «Հոյունի» քաղաքական ուղեգիծը և մշակվեց նրա կանոնադրությունը: Ըստ էության «Հոյունը» վերածվեց քաղաքական կուսակցության: Նրա նպատակն էր հռչակվում Թուրքական Քրդստանի անկախությունը: Կուսակցության յուրաքանչյուր անդամ, տալիս էր «եղբայրության ուխտ» կամ երդում պայքարելու համար հանուն անկախ

Քրդստանի ստեղծման: Քրդական հարցի վերաբերյալ Թուրքիայի սահմաններից դուրս քարոզչություն ծավալելու նպատակով «Հոյբունը» արտասահմանում Սիրիայում, Լիբանանում, Եվրոպայի մի շարք երկրներում և ԱՄՆ-ում ստեղծեց կուսակցության մասնաճյուղեր: Կուսակցության ծրագրում հատկապես կարևոր ուշադրություն էր դարձվում «իրանական կառավարության և եղբայրական իրանական ժողովրդի հետ մշտական եղբայրական հարաբերություններ հաստատելու հարցի վրա» (հոդ. 4):

«Հոյբունի» գործունեությունը եռանդուն աջակցության արժանացավ սփյուռքում գործող Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից: Հարկ է նշել, որ դեռևս 1926 թվականից սկսած քուրդ և հայ գործիչները միմյանց հետ սերտ համագործակցությամբ զբաղված էին քուրդ զանգվածների մտքերը պատրաստելով և տարամերժ ուժերը հաշտեցնելով: Առհասարակ Հայաստանի առաջին հանրապետության կործանումից հետո, 1921 թվականից սկսած, հայ քաղաքական տարագիրները, մասնավորապես ԳՅԳ ղեկավարները, բոլորում էին վերագնահատության մի շրջան, վերլուծության ենթարկելով անցած և գալիք քաղաքական իրողությունները և կշեռքի վրա դնելով ապագա կարելիությունները: Դեպքերի ընթացքը համոզել էր քրդերին և վտարանդության մեջ գտնվող հայ գործիչներին, որ նախ, եթե պետք է շարունակել պայքարը իրենց ժողովուրդների իրավունքները ոտնահարող Թուրքիայի դեմ, ապա անհրաժեշտ է իրար մոտենալ ու հասկանալ միմյանց և ապա, մեծ տերությունների տված խոստումների անհրակա լինելու պայմաններում ավելի իրական արժեք կարող է ունենալ երկու դրացի ժողովուրդների համագործակցությունը: Անշուշտ այլ հարց է, թե այդ մտահղացումը հիմնված էր քաղաքական հեռանկար պարունակող ստույգ հաշվարկի վրա, թե ոչ: Սակայն բոլոր դեպքերում վերոհիշյալ մտածումը աստիճանաբար տեղ էր գտնում երկու կողմերի ղեկավարության մտքի մեջ, դառնալով «անհրաժեշտ ազդակ մը երկու ժողովուրդներու ազատագրական շարժման»:¹²

«Հոյբունի» առաջին կոնգրեսին իր մասնակցությունն էր բերել դաշնակցության ներկայացուցիչ Վահան Փափագյանը, իսկ «Հոյբունի» և դաշնակցության ռազմական կառույցի միջև կապը իրականացնում էր Ռուբեն Տեր-Մինասյանը:

Քուրդ հետազոտող Ղասեմլուն գրում է, որ «Հոյբունը» գտնվում էր դաշնակցության անմիջական ազդեցության ներքո, որը նրան ցուցաբերում էր «քաղաքական, կազմակերպչական և նյութական աջակցություն»:¹³

«Հոյբունը» հայտարարում էր, որ իր ողջ գործունեությունը կենտրոնացնելու է Թուրքիայի վրա:¹⁴ Այսպիսով դաշնակցությունը կրկին հե-

տապնդեց հայ-քրդական համերաշխության գործը և թե՛ Թուրքիայում, թե՛ նրանից դուրս կարողացավ գտնել քուրդ ղեկավարներ, որոնք ըմբռնեցին միասնության խորհուրդը ընդդեմ «մեծ թշնամու»: Դեռևս 1924 թ. դաշնակցության և «Քրդստանի անկախության կոմիտեի» միջև կնքվել էր մի նախնական համաձայնություն, նկատի առնելով Սևրի պայմանագրի սահմաններն ու հիմունքները:

Ըստ այնմ, «Հոյբունի» կանոնադրության մեջ մտցվեց հայերի հետ համագործակցության վերաբերյալ հատուկ կետ, որտեղ ասվում էր. «բարեկամություն և գործակցություն հայ ժողովրդի հետ, որպես բախտակից ազգի՝ հանդեպ հասարակաց թշնամին, Հայաստանի և Քուրդիստանի անկախության և հողային ամբողջության փոխադարձ ճանաչումն ընդունելով որպես անվիճելի նախադրյալ»:¹⁵

«Հոյբունը» հանդես եկավ 4 կետից բաղկացած մի հայտարարությամբ, որի 4-րդ կետում ասվում էր. «Համագումարը կը հայտարարե հրապարակավ, որ Հայաստանը ու Քուրդիստանը, ուր դարերով բնակած են այս երկու ժողովուրդները, կը մերժեն ենթարկվիլ որևէ օտար իշխանության, ձգտելով իրենց անկախության: Եվ որ այդ երկու երկրները կը պատկանին միայն հայ և քուրդ ժողովուրդներուն»:¹⁶

1925 թ. շեյխ Սայիդի ապստամբության շրջանում սփյուռքի հայկական մամուլը հայ-քրդական համագործակցությունը գնահատեց որպես երկու դրացի ժողովուրդների քաղաքական ապագայի առումով կարևորագույն խնդիր: Այդ նույն թվականին դաշնակցության բյուրոյի նախաձեռնությամբ ընկերվարական միջազգայնականի (սոցիալիստերն) Մարսելի համագումարի դաշնակցության պատվիրակները ներկայացրին մի հիշատակագիր, որտեղ գնահատական էր տրվում քրդական ազատագրական շարժմանը: Դրանից հետո ևս դաշնակցության ներկայացուցիչը թե՛ Լոնդոնի և թե՛ Ցյուրիխի մեջ տեղի ունեցած համագումարներում մանրամասն ներկայացրել է քրդական շարժումը, պահանջելով Քրդստանի ճանաչումը:¹⁷

Իր հերթին «Հոյբունը» ևս քրդական զանգվածների շրջանում մղում էր հետևողական քարոզչություն հայ-քրդական բարեկամության անհրաժեշտության և կարևորության մասին: 1928 թ. Սուրբյա Բեդիթանին հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր. «1927 թ. հոկտեմբերին քուրդ ժողովրդի և հայ ժողովրդի ներկայացուցիչների անունից, որոնք համերաշխորեն միավորվել են ընդհանուր թշնամու՝ Թուրքիայի դեմ, «Հոյբունը» իրականացրեց համընդհանուր հաշտեցում: Իմ ժողովրդի անունից հերոսական հայ ժողովրդի նկատմամբ ես արտահայտում եմ իմ խորին համակրանքը և հավաստիացնում նրան, որ մեծա-

գույն հարգանքով եմ վերաբերվում դեպի նրա օրինական ազգային իղծը, որպիսին հանդիսանում է միացյալ անկախ Հայաստանը»:¹⁸

Անրադառնալով «Հոյբունի» և դաշնակցության միջև ձևավորված համաձայնության դրդապատճառներին, քուրդ ազգային գործիչներից Ձիննար Սիլուպին գտնում էր, որ «գոյություն չունեն ոչ մի կազմակերպություն և ոչ մի երկիր, որը օգնության ձեռք մեկներ «Հոյբունին» և դրսևորեր բարեկամական վերաբերմունք դեպի նա: Ուստի մենք նպատակահարմար համարեցինք բարեկամություն հաստատել հայերի հետ»: Քրդստանի և Հայաստանի միջև սահմանների որոշման հարցը, ըստ Սիլուպիի, թողնվելու էր «ապագա քրդական և հայկական կառավարությունների որոշմանը»: Տեղի էր ունեցել նաև պարտականությունների բաժանում: Հայերը իրենց վրա պարտավորություն էին վերցրել նյութական օգնություն ցուցաբերել «Հոյբունին», իրականացնել նրա կապը տարբեր երկրների քրդական համայնքների հետ, ապահովել կապը Արարատի ապստամբների և «Հոյբունի» միջև: Սիլուպին հայտնում է նաև, որ Ամերիկայում և Եվրոպայում հրատարակվող բարյացակամ հայկական մամուլը մեծ ծառայություններ էր մատուցում քրդերի վերաբերյալ կանխակալ կարծիքը վերացնելու, ինչպես նաև հակաքրդական քարոզչությանը դիմագրավելու առումով:¹⁹

Իր հերթին դաշնակցությունը ևս 1929 թ. ապրիլին գումարված իր 11-րդ ընդհանուր ժողովում ընդունեց մի դիմում, որտեղ ասվում էր. «Ժողովը հատկապես ողջունում է քրդերի ապստամբությունը թուրքերի դեմ: Ժողովը գտնում է, որ այդ շարժումն անհրաժեշտ է հայկական և քրդական հարցերի լուծման համար և հրավիրում է գիտակից հայության ուշադրությունն ու համակրանքը այդ անօրինակ և հերոսական պայքարի նկատմամբ»:²⁰

Քրդական շարժման նկատմամբ իր համակիր դիրքորոշումն ու աջակցությունը դաշնակցությունը հիմնավորում էր հետևյալ փաստարկներով. ա) քրդական շարժումը զարգանում էր թուրքահայաստանի տարածքում, ուստի ամեն մի հայ, որ հետաքրքրված է իր հայրենիքի ճակատագրով, պետք է համակրանքով վերաբերվի քրդական հարցի նկատմամբ. բ) քրդերի հակաթուրքական պայքարը խոչընդոտ է հանդիսանում թուրքահայաստանում թուրք-մուսուլմանների տեղավորման համար, որոնք մեծ վտանգ են ներկայացնում հայ ժողովրդի համար. գ) անկախ Քրդստանի ստեղծումը խափանում է թուրքիայի պանթյուրքիստական ձգտումների իրագործումը. դ) քրդական շարժումը թուլացնում է թուրքիան և դրանով իսկ նախադրյալներ ստեղծում «միացյալ անկախ Հայաստանի» համար պայքարի ծավալմանը:²¹

Ուշագրավ է ներկայացնել հետևյալ փաստը ևս. 20-ական թվականների վերջին դաշնակցության ականավոր գործիչներից Ռուբեն Տեր-Մինասյանը «Դոշակ»-ում հանդես եկավ «Արիական ցեղերի միության մասին» մի հոդվածով, որի տակ հեղինակը հասկանում էր հայ-պարսիկքուրդ համերաշխ գործակցություն պատմեշելու համար թուրքական կառավարությանը: Ոգևորված իր ծրագրի իրագործման հեռանկարով, Ռ. Տեր-Մինասյանը մեկնում է Իրան, անձամբ ղեկավարելու համար իր առաջադրած ծրագրի գործադրությունը և լծվում եռանդուն գործունեությանը:²² Նրա ծրագրի շրջանակներում, ինչպես նաև 11-րդ ընդհանուր ժողովի որոշմանը համաձայն, դաշնակցության Իրանի կենտրոնը «որոշ համոճարարականներով» գործիչներ էր ուղարկում Արարատի շրջանը, որոնցից շատերը հենց այնտեղ էլ զոհվեցին: Շահական կառավարությունը Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին և Իրանի դաշնակցական ղեկավարության մի խումբ գործիչների մեղադրեց Արարատի քրդական խնդրի հետ մասնակցություն ունենալու մեջ և պալատական նախարար Թեյմուր Թաշի միջոցով նրանց որպես ամբաստանյալների թավրիզից կանչեց Թեհրան սաստելու համար:²³

Այս փաստը անշուշտ վկայում է այն մասին, որ Ռեզա շահի կառավարությունը հավանություն չէր տալիս ոչ միայն «Արիական ցեղերի միության» գաղափարին, այլև դաշնակցություն—«Հոյբուն» համագործակցությանը:

1925 թվականից հետո թուրքիայի քրդերի ազատագրական շարժումը թևակոխեց նոր փուլ: Այն նշանակալից չափով հրաժարվեց կրոնական կարգախոսներից և սկսեց առաջնորդվել հիմնականում ազգայնական մոտիվներով: Լայն քարոզչություն էր մղվում ողջ Քրդստանի (ներառյալ նրա իրանական, իրաքյան և սիրիական մասերի) անկախության համար: Դրանով զբաղվում էր ոչ միայն «Հոյբունը», այլև այլ քրդական քաղաքական կազմակերպություններ: Օրինակ, երգումուն շեյխ Սայիդի որդու՝ Սալահեդդինի կողմից հիմնադրված «Հյուսիսային Քրդստանի ընկերությունը», որն իր բաժանմունքներն ուներ նաև Դամասկոսում և Հալեպում, տարածում էր կոչեր և թռուցիկներ հայ-քրդական պետության ստեղծման անհրաժեշտության մասին:²⁴ Իր հերթին դաշնակցությունը ևս քարոզչական լայն գործունեություն էր ծավալել հոգուտ քրդերի հետ միավորման «համատեղ պայքար մղելու համար հանուն անկախ Քրդստանի և Հայաստանի ստեղծման»:²⁵ Առհասարակ, այդ օրերին հայ-քրդական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը հասել էր աննախընթաց չափերի:²⁶

Ինչ վերաբերում է թուրքական կառավարության դիրքորոշմանը հայ-քրդական համագործակցության նկատմամբ, ապա վերջինս ինչպես

և սպասելի էր, որդեգրեց խիստ թշնամական վերաբերմունք, հանձինս նրա տեսնելով լուրջ սպառնալիք թուրքիայի ազգային անվտանգության համար: Քեմալականները «Հոյբուն» կուսակցությանը և նրա անդամներին հռչակեցին որպես «իմպերիալիզմի գործակալներ»: Անկարայում լույս տեսավ պաշտոնական «Կանաչ գիրք» («Հոյբուն-Դաշնակ»), որտեղ զարգացվում էր այն միտքը, որ 1925 թ. շեյխ Սայիդի ապստամբությունը ճնշելուց հետո քրդական շարժումը «վերակենդանացավ» շնորհիվ «Հոյբունի» և դաշնակցության համագործակցության: «Հոյբունի» արտակարգ ռազմական ներկայացուցչի հանգամանքով 1926 թ. Արարատի շրջան ուղարկվեց հայտնի քուրդ գործիչ, թուրքական բանակի նախկին սպա Իհսան Նուրին, որը գլխավորելու էր Արարատյան շարժումը, որպես «հեղափոխական բանակի հրամանատար»: Նրանից բացի կային նաև երկու գլխավոր ղեկավարներ, որոնցից մեկը ջելալի ցեղի առաջնորդ Իբրահիմ Չըսգե թեյլին էր, իսկ մյուսը Ջիլան բեյը, որի անվան տակ հանդես էր գալիս խնուսցի Արտաշես Մուրադյանը: Վերջինս ապստամբական ղեկավարության մեջ ներկայացնում էր «հայկական թևը»: Սակայն մինչև ապստամբության պայթելը, Ջիլան բեյը «բոլշևիկյան թակարդի մը զոհ գնաց, բանտարկվեցավ և անհայտ մնաց, թե ինչ եղավ իր վախճանը»:²⁷ Կազմվեց քաղաքացիական վարչակազմ, որը գլխավորեց Չըսգե թեյլին: Ապստամբները հրատարակում էին «Աղրի» թեթը: 1930 թ. հունվարին Իհսան Նուրին այդ թերթում հրապարակեց մի հոդված, որով բոլոր քրդերին կոչ էր անում ապստամբներին օգնություն ցույց տալ զենքով ու պարենամթերքով: Քրդական զինված ջոկատները Իհսան Նուրին վերակազմակերպեց լեռնային հրոսակային պատերազմ մղելու համար: Միաժամանակ նա կապեր հաստատեց Իրանում շահական վարչակարգի դեմ զինված պայքարը վերսկսած Իսմայիլ-աղա Սըմկոյի հետ: Արարատի ապստամբական կենտրոնը Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Սիրիայի քրդերի շրջանում տարածեց մի դիմում, որտեղ կոչ էր արվում միավորվել թուրքական լծից ազատագրվելու պայքարում: Դիմումի պատճեն ուղարկվեց Ազգերի Լիգա:²⁸

1927 թ. գարնան վերջերին մոտ 10.000-ոց թուրքական մի բանակ Իզդիրի և Բայազետի կողմից միաժամանակ հարձակում ձեռնարկեց Արարատի դեմ: Այսպիսով Արարատի շրջանում սկսվեց առաջին ապստամբությունը: Ընդհուպ մինչև 1930 թ. հունիսը թուրքական կառավարական զորքերի և քրդական ջոկատների միջև ընթանում էին կատաղի մարտեր, որոնց ընթացքում թուրքերը տվեցին մարդկային և նյութական խոշոր կորուստներ: Քրդերին հաջողվեց նույնիսկ զգետնել 12 ռազմական ինքնաթիռներ:²⁹ 1930 թ. սկզբներին Թուրքիայի բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները ըստ էության գտնվում էին քրդերի հսկողության տակ: Այդ պայ-

մաններում թուրքական կառավարությունը ստիպված էր ճարպկորեն խուսանալ: Նա մի կողմից քրդերի դեմ ուժեղացնում էր ռազմական ճնշումը, մյուս կողմից հրատարակում ներում քրդական աշիրեթները մոլորեցնելու և պառակտելու նպատակով: Անկարան որպես ընդհանուր քննիչ Իբրահիմ Թալիին ուղարկեց արևելյան նահանգներ, իբր թե դրանք բարեկարգելու համար, սակայն իրականում նրա խնդիրն էր ողջ քրդաբնակ շրջաններում հայտարարել ռազմական դրություն, ջարդերը ավելի արագ ու անաղմուկ կազմակերպելու համար: Քեմալական այդ գործիչը իսկապես դրսևորեց «փայլուն ընդունակություններ» քրդական շարժման ղեկավարներին կաշառելու և ծուղակը գցելու արվեստում: Նա նույնիսկ մի հատուկ պատվիրակություն ուղարկեց Իհսան Նուրիի մոտ, առաջարկելով քրդերի համար ընդհանուր ներում, իսկ անձամբ նրա համար մի բարձր պաշտոն կամ Թուրքիայում կամ արտասահմանում: Այդ բոլորի դիմաց ապստամբական բանակի հրամանատարից պահանջվում էր միայն մեկ բան՝ քրդերին մղել հնազանդության: Կտրականապես մերժելով այդ առաջարկը, Իհսան Նուրին հայտարարում է, որ քրդերը վերջ կտան պայքարին միայն այն դեպքում, երբ թուրքական զորքերը կպարպեն Քրդստանը և Թուրքիան կճանաչի նրա անկախությունը:³⁰

1930 թ. հունիսի սկզբներին պայթեց Արարատի վերջին մեծ ապստամբությունը: Արարատի շրջանից ապստամբները շարունակում էին ռազմերթ կազմակերպել դեպի Ջիլան, Վան, Բուլանդը-Մանազկերտ, Մուշ, Կաղզվան, Խնուս, Կողբ, Կարս և այլն: Թուրքական կառավարությունը զենքի կոչեց մեծաթիվ պահեստայինների, ռազմական գործողությունների շրջանում կենտրոնացրեց հսկայական քանակությամբ կրակային հզորություններ և ինքնաթիռներ: Արևելք ուղարկվեց բոլոր զորքերի գրեթե մեկ երրորդ մասը և ծախսվեց մի քանի տասնյակ միլիոն լիրա: Անցնելով վճռական գործողությունների, կառավարական զորքերին հաջողվեց ավիացիայի աջակցությամբ քրդերին բռնել իրանա-թուրքական սահմանին եղած լեռնային կիրճերը, որտեղից փրկության ճանապարհը մեկն էր՝ անցումը իրանական սահմանը:

Սակայն Բըզա-շահ Փեհլևի կառավարությունը, որն այդ շրջանում շարունակում էր վարել քրդական շարժումները ճզմելու քաղաքականություն, թույլ տվեց, որ թուրքական զորքերն անարգել անցնեն իրանական սահմանը և հետապնդեն ապստամբներին մինչև նրանց կատարյալ ոչնչացումը: Բանը նրանում էր, որ դեռևս 1926 թ. ապրիլի 22-ին, Խորհրդային Միության միջնորդությամբ, թեիրանում Իրանի և Թուրքիայի միջև կնքվել էր բարեկամության և անվտանգության վերաբերյալ պայմանագիր, որի մեջ պարունակվում էին նաև հոդվածներ քրդական շարժումները համատեղ ուժերով ճնշելու վերաբերյալ: Պայմանագրի 5-րդ հոդվա-

ծի համաձայն, կողմերը պարտավորվում էին թույլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբավորումների կազմավորումը կամ ներկայությունը, որոնք նպատակ ունեին խախտելու մյուս կողմի խաղաղությունն ու անվտանգությունը, կամ փոփոխության ենթարկելու կառավարման համակարգը, ինչպես նաև այնպիսի անձանց կամ խմբավորումների ներկայությունը, որոնք իրենց առջև նպատակ են դրել իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պայքարելու մյուս երկրի դեմ:

Պայմանագրի 6-րդ կետում ասվում էր, որ սահմանամերձ գոտու բնակիչների հանգստությունն ու անվտանգությունն ապահովելու համար, պայմանավորվող կողմերը բոլոր միջոցները կձեռնարկեն, որպեսզի վերջ տան սահմաններին հարակից տարածքներում բնակվող ցեղերի հանցավոր գործողություններին ու սադրանքներին, որոնք կարող են վնաս հասցնել երկու երկրների խաղաղությանը:³¹

Թուրք-իրանական սահմանների ճշտված չլինելը երկու երկրների միջև մշտապես առաջացնում էին թյուրիմացություններ: Ուստի 1929 թ. ապրիլին Անկարայում ստորագրվեց կոնվեցիա սահմանների անվտանգության մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրանական և թուրքական զորքերի կողմից քրդերի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու ժամանակ նրանք անարգել անցնում էին սահմանը և փրկություն գտնում մյուս երկրի տարածքում, 1930 թ. Իրանը և Թուրքիան կնքեցին մի նոր կոնվենցիա «սահմանային միջադեպերի կարգավորման գծով համատեղ գործողությունների վերաբերյալ», որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի համաձայնագիր անհնազանդ քրդական ցեղերի դեմ համատեղ գործողություններ իրագործելու վերաբերյալ:³² Առհասարակ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական պատճառներով Թուրքիան և Իրանը երկուսն էլ շահագրգռված էին հնարավորին չափ շուտ վերացնել իրենց գլխացավանք պատճառող քրդական հարցը:

Յենվելով վերոհիշյալ պայմանագրային իրավասությունների վրա, քեմալական պատժիչ զորամասերը Բազիրգյան-Յարըմբայա-Այբեկ-Դոնբաթ-Քիրե գծով շարժվելով առաջ, կտրեցին քրդերի տեղաշարժի բոլոր ուղիները, աշխատելով նրանց վերցնել աքցանի մեջ: Սակայն անակնկալ կերպով Մակույի շրջանից իրանական քրդերը Սըմկոյի գլխավորությամբ արագ երթով հասան ապստամբներին օգնության: Շրջապատման վտանգը, ինչպես նաև Բաշկալայի, Սարայի, Բադրիկալայի, Արճեշի, Պատնոցի, Վանի, Ջիլյանի և մի շարք այլ շրջաններում բռնկված քրդական ապստամբության լուրը ստիպեց թուրքական իրամասնատարությանը հապշտապ զորքերը դուրս բերել Իրանի տարածքից, դրանք

նետելու համար ապստամբական նոր հրդեհի դեմ: Ծավալվեցին կատաղի մարտեր, որոնց մասնակցում էին նաև իրանական քրդերի զինված ջոկատները: 1930 թ. հուլիսի 14-ին քրդերի շեշտակի գրոհը Արալըխի մոտ կենտրոնացած թուրքական վաշտի վրա ունեցավ այն հետևանքը, որ դիմելով մազապուրծ փախուստի, թուրքական այդ զորամասը Ղամարլուի շրջանում անցավ հորհրդային Չայաստանի սահմանը և Մոսկվայի կարգադրությամբ միառժամանակ մնաց այնտեղ:³³

Սակայն չնայած այդ մասնակի հաջողություններին, ապստամբների ուժերը գնալով նվազում էին, մինչդեռ քեմալականները Արարատի շրջանում կենտրոնացնում էին նոր թարմ ուժեր և ավելի լայնորեն էին օգտագործում ռազմական ավիացիան: Միաժամանակ թուրքական հատուկ ծառայություններին հաջողվում էր պառակտել քրդերին և նույնիսկ համոզել առանձին ցեղերի իրենց զինված ջոկատներով հանդես գալու ցեղակիցների դեմ:

Նոսրացած ուժերով մինչև սեպտեմբերի 25-ը շարունակելով դիմադրությունը, Իհսան Նուրին մի քանի այլ առաջնորդների հետ ստիպված եղավ անցնել Իրան: Մինչդեռ իբրահիմ Չըսգե Թելլին, հայտնվելով թշնամական շրջապատման մեջ, դաժան ծնեռվա պայմաններում շարունակում էր դիմադրությունը: Քանի որ այլևս անհնարին էր դառնում ապստամբներին հարած տեղական բնակչության կերակրելը, Չըսգե Թելլին որոշեց «սուրե անցնել բոլոր կիները, անգոր ծերերը և երեխաները, որով կը մնային հեղափոխական զորամասերը, որոնք իրենց հետևի բոլոր կամուրջները այրած՝ պետք է կռվեն մինչև վերջին մարդը: Ու Չըսգե Թելլին, հեղափոխական անգթությամբ մը, կը ձեռնարկեր ամենն առաջ այդ ծրագիրը գործադրել իր ազգականներուն վրա, ահռելի ու հուզիչ ողբերգության մը տեսարանը բանալով Արարատի բարձրունքներուն վրա»:³⁴

Դժվար մարտերից մեկի ժամանակ Իբրահիմ Չըսգե Թելլին ևս սպանվեց, իսկ նրա զինակիցները գերի ընկան: Այսպիսով փակվեց քրդերի հակաթուրքական պայքարի այդ հերոսական էջը ևս, որը տևեց հինգ տարի (1927-1931):

Թեև Արարատի ապստամբությունը չընդգրկեց ամբողջ Քրդստանը և զանգվածային մեծ տարրեր հրապարակ չբերեց, սակայն ի տարբերություն քրդական այլ շարժումների, այն աչքի ընկավ իր քաղաքական հստակ ըմբռնումներով և տոկունությամբ: Արդարև, այն կարող է համարվել քրդական ազատագրական շարժման մեծագույն դրվագը:

Այդ ապստամբությունը ի չիք դարձրեց Արևմտյան Չայաստանը «յուրացնելու» ուղղությամբ քեմալական կառավարության կողմից հղացված մի շարք մտահղացումներ: Այսպես, դեռևս 1927 թ. Անկարան որոշել էր 100.000 թուրք մոհաջիրներ բնակեցնել Արևելյան մահազներում: Այդ

նպատակով ԹԱՄԺ-ը քվեարկել էր հոգուտ մեկ միլոն ոսկի բյուջեի:³⁵ Ծրագիրը ամբողջապես տապալվեց:

Պատերազմական ծախսերը Թուրքիայի ֆինանսները հասցրեցին ծայրահեղ լարվածության: Արտաքին փոխառություն հաջողեցնելու ուղղությամբ կատարված փորձերն ավարտվեցին կատարյալ ծախողմամբ, որի հետևանքով Թուրքիան բախվեց ավելի մեծ դժվարությունների: Անկարայում սկսվեց կառավարական ճգնաժամ: Սուր հակասություններ սկսվեցին թուրքական հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալի և վարչապետ Իսմեթ Ինենյուի միջև: Քեմալի հավանությամբ Ալի Ֆեթհի բեյը ստեղծեց «Ազատ հանրապետական կուսակցությունը», որը խստորեն քննադատեց Ինենյուի քրդական քաղաքականությունը:

Արարատի ապստամբությունը ճնշելուն հետևեց դաժան հաշվեհարդարը ոչ միայն ապստամբների, այլև առհասարակ քրդերի հետ: Պատժիչ զորամասերը կազմակերպում էին զանգվածային կոտորածներ, տեղահանություններ: «Հոյունի» տվյալներով սպանված ապստամբների թիվը հասնում էր 10-15 հազար մարդու, ավերվել էին 660 գյուղեր, կրակի ճարակ դարձել 15.206 բնակավայրեր: Քրդերեն լեզուն պաշտոնապես արգելվեց, քրդական հրատարակությունները բռնազրկվեցին ու այրվեցին: Դասագրքերից իսպառ հանվեց «քուրդ» և «Քրդստան» բառերը: Այսուհետև քրդերը կոչվելու էին «լեռնային թուրքեր»: Վերջապես Քրդստանը մեկուսացվեց մնացած աշխարհից և օտարերկրացիների մուտքն այնտեղ խստիվ արգելվեց:³⁶

1930 թ. նոյեմբերի 1-ին հանդես գալով ԹԱՄԺ-ի բացման արարողության ժամանակ, Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ Թուրքիայի արևելքում տեղի ունեցող իրադարձությունները «սպառնալիք էին հանդիսանում մեր անկախության համար»:³⁷ Իսկ վարչապետ Իսմեթ Ինենյուն ի լուր աշխարհի հայտարարեց. «Այս երկրում միայն թուրք ազգը կարող է պահանջներ ներկայացնել էթնիկական և ռասայական իրավունքների վերաբերյալ: Մնացած տարրերը դրա իրավունքը չունեն»: Ավելի զգալի հայտարարությամբ հանդես եկավ արդարադատության նախարար Մահմուդ Էսադ բեյը. «Մենք ապրում ենք Թուրքիայում, աշխարհի ամենաազատ երկրում: ...Թուրքը այս երկրի միակ տերն է: Ծագունով ոչ մաքուր թուրքերը (իմա՝ քրդերը Վ. Բ.) այս երկրում ունեն միայն մեկ իրավունք. լինել ծառաներ ու ստրուկներ: Այս ճշմարտությունը թող հիշի և բարեկամը, և՛ թշնամին, թող այն իմանան նույնիսկ լեռները»: Իսկ «Միլլիեթ» թերթը տպագրեց մի նկար. Արարատ լեռան վրա պատկերված էր մի գերեզման, որի տապանաքարի վրա գրված էր «այստեղ թաղված է ենթադրյալ Քրդստանը»:³⁸

Հետաքրքիր է նշել, որ Արարատի ապստամբության առաջին շրջանում թուրքական մամուլը մեծ թվով նյութեր էր տպագրում հայերի մասնակցության մասին, բայց կռահելով, որ այդ նյութի լայն լուսաբանումը իրենց շահերի օգտին չէ, «վերեն եկած հրամանի մը հետևանքով այլևս բառ մ'իսկ չարտասանեցին, երևի հայ-քրդական միացյալ դատի ծանրութենեն զգուշանալով»:³⁹

Ապստամբության ճնշումից հետո դաշնակցությունը լծվեց եռանդուն գործունեության տեղի ունեցած իրադարձությունների իրական պատկերը եվրոպայի և Ամերիկայի հասարակական կարծիքին հասցնելու համար: Այդ կուսակցության ջանքերով արևմտյան մամուլում տպագրվեցին ցնցող տեղեկություններ թուրքական անագորույն դաժանությունների վերաբերյալ: Հայկական սփյուռքում կազմակերպվեցին հանգանակություններ հոգուտ ապստամբների ընտանիքների: Միաժամանակ դաշնակցությունը դիմումներ էր կատարում Սոցիալտերմին, նրան հորդորելով հանդես գալ քրդերի պաշտպանության քայլերով:⁴⁰

Չնայած այն հանգամանքին, որ Արարատի ապստամբության շրջանում Ռզա Շահի կառավարությունը պայմանագրային հիմքի վրա աջակցում էր թուրքական կառավարությանը ջախջախելու համար քրդական շարժումները, չբավարարվելով այդ համագործակցության ծավալներից, Անկարան իրանական կառավարությանը մեղադրեց Թուրքիայի նկատմամբ ոչ բարեկամական վերաբերմունքի մեջ: Այսպես, 1930 թ. հուլիսի 8-ին «Հիքիմիեթի միլլիեթ» պաշտոնաթերթը հանդես եկավ մի կոշտ հոդվածով, որտեղ մասնավորապես ասվում էր. «Թուրքական հասարակական կարծիքը չի կարող հասկանալ, թե ինչպես կարող էին հարևան պետության տարածքում կազմակերպվել բազմաթիվ բանդաներ մեր տարածքի վրա ասպատակ սփռելու նպատակով և ինչպես կարող էին այդ բանդաները սահման անցնելուց հետո կապեր պահպանել իրենց կենտրոնական կազմակերպության հետ»: Իսկ «Ռեպյուբլիկ» թերթը 1930 թ. հուլիսին էլ ավելի կտրուկ տոնով գրեց. «Եթե Իրանը ի վիճակի չէ ինքը դաս տալ բանդաներին, որոնք զինվում են նրա տարածքում, ապա նա իրավունք չունի առարկելու, որ այդ դասը տան ուրիշները»:⁴¹

4. Սասունին հայտնում է այն տեսակետը, որ Արարատի շրջանի ապստամբության ժամանակ գոյություն ունեցող թուրք-բուլղարական համագործակցություն, որն ուղղված էր ոչ միայն քրդերի, այլև Իրանի դեմ: «Ռուսական գործերը, – գրում է նա, – Արաքսը անցան և իրենց աջակցությունը բերին թրքական բարբարոս գործին խեղդելու քրդական հեղափոխությունը: Այսքանով չբավականացան, այլ ռուս-թրքական միացյալ դիվանագիտությունը ճնշումներ բանեցուց պարսկական կառավարության վրա, որպեսզի այս վերջինը համաձայն գտնվի փոքր Արարատը ձգել

Թուրքիո և իր զինական ուժով գործակցի Արարատի ճնշման: Պարսկաստանը երկար ժամանակ ընդհանաջավ այս քաղաքական ճնշումներուն: Ժամանակ մը այնքան լարվեցան Պարսկաստանի և Թուրքիո հարաբերությունները, որ մեծ մտահոգության մատնեցին աշխարհը, թուրք-պարսկական պատերազմի մը հավանականության առջև, որ կրնար միջազգային մեծ բարդություններու դուռ բանալ»:⁴²

Իսկապես Արարատի ապստամբության թեժ շրջանում թուրքական կառավարությունը դիմել էր Թեհրանին, պահանջելով իրեն զիջել փոքր Արարատի փեշեքին գտնվող մի տարածք, պատճառաբանելով, որ այն անհրաժեշտ է Թուրքիային խափանելու համար քրդերի շարժումները Իրանից Թուրքիա և հակառակը, ինչպես նաև վերջնականապես ջախջախելու համար ապստամբներին: Սակայն առաջնորդվելով ռազմատարատեգիական ու քաղաքական նկատառումներով, իրանական կառավարությունը մերժել էր այդ պահանջը: Թեհրանում մասնավորապես գտնում էին, որ սահմանի այդ հատվածը ռազմավարական առումով տիրապետող է հանդիսանում թուրքալեզու ազերիներով բնակեցված Ատրպատականի համար, որի նկատմամբ Թուրքիայի ղեկավարները փայփայում էին թաքնված, իսկ երբեմն նաև բացահայտ պանթուրքիստական հավակնություններ: Թեհրանի համար մտահոգիչ էր նաև այն, որ նշված տարածքով Թուրքիան ուղիղ ելք կստանար դեպի Նախիջևան, որի նկատմամբ այդ ժամանակ հավակնություններ ուներ ինքը՝ Իրանը:

Շահական կառավարության մերժմանը Թուրքական մամուլը խսկույն պատասխանեց սուր քննադատական հոդվածներով, նույնիսկ կասկածի տակ դնելով թուրք-իրանական բարեկամության ու պայմանագրային հարաբերությունների անկեղծությունը: Իրանի նկատմամբ թուրքական ճնշմանը անմիջապես միացավ նաև Խորհրդային Միությունը: «Բոլշևիկյան կարմիր բանակեն, – գրում է Կ. Սասունին, զորամասեր անցան Ատրպատականի շրջանը և բռնաբարեցին պարսկական հողերը, պատրվակելով, թե Կովկասի մեջ ապստամբություն հարուցողները անցած են պարսկական հողը և բոլշևիկյան բանակը ստիպված է եղել գանոնք հետապնդել: Բայց այս բոլոր գործողությունները, ինչպես նաև Թեհրանի մեջ բանեցված ճնշումները (բոլշևիկյան և թրքական դեսպաններու կողմե) ցույց կուտային, թե թուրքերը առիթ մը կը փնտրեին իրենց զորքերը մտցնելու Ատրպատական և քրտական շարժման հետ, լուծելու նաև համաթրքական ծրագրի մեկը մասը»:⁴³

Սակայն քեմալականների պահանջները չէին սահմանափակվում միայն նրանով, որ թուրքական զորամասերը մտնեին Մակուի շրջանը և գրավեին փոքր Արարատը: Նրանք պահանջում էին նաև, որ «պարսկական զորքը գործակցի թրքական բանակին՝ Արարատի գործողություններ

րու ընթացքին և այդ սահմաններուն վրա գտնված պարսկական զորքերը ենթարկվին թրքական ընդհանուր հրամանատարին»:⁴⁴

Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Իրանի պետական ինքնիշխանության կոպիտ ոտնահարում: Ուստի Իրանը ինքնապաշտպանության նպատակով զորքեր կենտրոնացրեց Ատրպատականի սահմանների վրա, նաև այդ քայլով մտադիր լինելով արգելել պարսկահպատակ քրդերի անցումները պետական սահմանը, որպեսզի չմասնակցեն Թուրքիայում ընթացող քրդական շարժմանը: Միաժամանակ Թեհրանը հասկացրեց Թուրքիային, որ իրանական զորքերը լի են վճռականությամբ պաշտպանելու հայրենիքի սահմանները, եթե թուրքերը փորձեին ներխուժել Իրան:

Այս իրադարձությունները հուզել էին միջազգային հասարակական կարծիքը, որը հանդես եկավ Իրանի պաշտպանությամբ: «Այս հանրային կարծիքը և միջազգային միջամտության մը հավանականությունը թուրք-պարսկական պատերազմին կը ստիպեին թուրքերը գործնականի մեջ ըլլալ չափավոր, իսկ խոսքի մեջ՝ ծայրահեղ»:⁴⁵

Սակայն կշռադատելով մի շարք կարևոր հանգամանքներ, Իրանը հետզհետե գիջեց իր դիրքերը, գործը ծայրահեղության չտանելու համար: Նախ դիրքորոշման այդ փոփոխության մեջ կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ քրդական ազատագրական շարժումները և առհասարակ «Ազատ Քրդստանի» և քրդական անկախության գաղափարը նույնքան վտանգավոր էր Իրանի համար, որքան և Թուրքիայի: Այդ գաղափարի իրականացման դեպքում Իրանը կկորցներ երկրի քրդաբնակ ընդարձակ հողամասերը՝ Իրանական Քրդստանը, որի տարածքում կարող էր ստեղծվել «անկախ Քրդստան» և որ ավելի վտանգավոր էր, այդ տարածքը կարող էր միանալ Թուրքական Քրդստանին, եթե իհարկե այնտեղ ստեղծվեր քրդական անկախ պետություն: Առհասարակ պետք է նշել, որ քրդական ապստամբությունը և անկախ Քրդստանի հարցը վերջին հաշվով իրար մոտ բերեց այն պետություններին, որոնց տարածքներում քրդական զանգվածներ էին բնակվում և պատմականորեն քրդական երկրամասեր ունեին իրենց տիրապետության տակ: Ինչպես հայտնի է այդ պետություններն էին Թուրքիան, Իրանը, Իրաքը և Սիրիան: Մյուս կողմից Իրանի համար մտահոգիչ էր այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը քրդական հարցում գործակից էր Թուրքիային, եռանդուն կերպով շահարկում էր քրդական հարցը և Իրանի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով նույնիսկ չէր խորշում ռազմական միջամտություններից: Թեհրանում հիանալի գիտակցում էին նաև, որ թեև միջազգային հասարակական կարծիքը գործում էր Իրանի օգտին, սակայն ճգնաժամի պարագաներում կարող էր սահմանափակվել լոկ բողոքներով:

Վերջապես նշված շրջանում Իրանի ներսում ևս ցեղերի ապստամբություններն ընդունել էին սպառնալից թափ: Դեռևս 1929 թ. զենքի էին դիմել բահարլու, դաշդայի և բախթիարական ցեղերը: Այդ շարժումը աջակցություն գտավ էն-նեջեֆի և Քարբալայի բարձրագույն շիթական հոգևորականության կողմից, որը հրապարակեց հատուկ ֆեթվա, որտեղ հավանություն էր տալիս «հերետիկոս կառավարության» դեմ ցեղերի մղած պայքարին: 1929-1933 թթ. ցեղերի զինված ելույթներ էին տեղի ունենում նաև Քրդստանում, Լորեսթանում և Բալուչեսթանում:

Այս բոլորը ստիպեցին Ռզգա շահի կառավարությանը Թուրքիայի նկատմամբ մշակել քաղաքական նոր գիծ՝ այսինքն գործակցել նրա հետ ընդդեմ քրդության: Ընդ որում իրենց երկրների և արտասահմանի հասարակական կարծիքը մոլորության մեջ զցելու համար երկուստեք սկսեցին օգտագործել «մանվածապատ դիվանագիտությունը»:

Այդ բոլորի հետևանքով թուրք-իրանական հարաբերությունների զարգացման թափանիվը սկսեց արագորեն պտտվել: 1932 թ. հունվարի 23-ին Թեհրանում ստորագրվեց արձանագրություն սահմանների ճշտման վերաբերյալ, ըստ որի Իրանը Արարատի փեշերին գտնվող հողի մի նեղ շերտ զիջեց Թուրքիային, որը աննախադեպ կերպով ուժեղացրեց Թուրքիայի ռազմավարական դիրքերը ոչ միայն սահմանի այդ հատվածում, այլև թերևս ողջ տարածաշրջանում: Այդ նույն թվականին ստորագրվեց նաև թուրք-իրանական պայմանագիր արբիտրաժի և այսպես կոչված «հաշտեցման ընթացակարգի» վերաբերյալ:⁴⁶ Իսկ 1932 թ. նոյեմբերի 5-ին կնքվեց թուրք-իրանական բարեկամության պայմանագիր, որը ռատիֆիկացվեց 1933 թ. դեկտեմբերի 28-ին:

Թուրք-իրանական հարաբերությունների զարգացման համար նոր խթան հանդիսացավ 1934 թ. Ռզգա-շահի պաշտոնական այցը Թուրքիա: Ընդհանրապես Իրանի շահը համակրանքով էր վերաբերվում Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի իրականացրած բարեփոխումների նկատմամբ և շատ հարցերում ընդօրինակում էր նրա կառավարման մեթոդները: Այցի ընթացքում Աթաթյուրքը բացառիկ ջերմ վերաբերմունք դրսևորեց դեպի Իրանի մենատերը: Նրանք իրար դիմում էին ոչ այլ կերպ, քան «եղբայր» արտահայտությամբ: Այդ այցը սկիզբ դրեց թուրք-իրանական պայմանագրերի ու կոնվենցիաների մի ամբողջ շարքի ստորագրմանը, այդ թվում նաև «քրդական հարցի» լուծման վերաբերյալ մի համաձայնագրի,⁴⁷ ըստ որի կողմերը համաձայնվում էին փակել իրենց սահմանները քրդերի շարժումները մեկ երկրից մյուսը արգելակելու նպատակով և պայմանավորվում էին քրդական ապստամբությունների բռնկման դեպքում իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով «վերականգնել կարգն ու հանգստությունը»:

1937 թ. հուլիսի 8-ին Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Աֆղանստանի արտգործնախարարները Թեհրանի Սաադաբադյան պալատում կնքեցին քառակողմ մի համաձայնագիր, որը ստացավ Սաադաբադյան պակտ անվանումը: Դա ըստ էության մերձավորարևելյան մի իսլամական դաշինք էր, որի մեջ իր տեղն էր գտել նաև քրդական հարցը: Նրանում չտալով քրդերի անունը, նշվում էր, որ այդ դաշինքը ստորագրած պետությունները պարտավորվում են համատեղ պայքար մղել իրենց երկրների ազգային անվտանգությանը սպառնացող անջատողական շարժումների դեմ: Ընդ որում Սաադաբադյան պակտի ստորագրումից հետո քրդական հոծ բնակչություն ունեցող վերոհիշյալ երեք պետությունները մշտապես «խորհրդակցություններ» էին անցկացնում միմյանց հետ երեքի համար էլ հրատապ ու կարևոր քրդական հարցի կապակցությամբ, մշակելով համատեղ ծրագրեր իրենց երկրներում կամ սահմանակից շրջաններում քրդական ազատագրական շարժումները համատեղ ուժերով հենց սաղմում խեղդելու համար:

Լոզանի կոնֆերանսից հետո, երբ մեծ տերությունների հավաքական կամքով հայկական և քրդական հարցերը հանվեցին միջազգային քննարկումների ատյաններից և այլևս այդ հարցերը վտանգ չէին ներկայացնում քեմալականների համար, նրանք անօրինակ ուժգնությամբ սկսեցին ճնշում գործադրել քրդերի նկատմամբ: 1923 թ. հոկտեմբերի 18-ին Թուրքական Ազգային Մեծ ժողովը (ԹԱՄԺ) ընդունեց «ավազակային շարժումները ճնշելու վերաբերյալ» օրենք, որը կառավարությանը հնարավորություն էր տալիս ցանկացած շարժում որակել որպես «ավազակային-բանդիտական» և անողոք դաժանությամբ ճզմել դրանք:

Քրդերը հանդգնեցին, որ հայերի և հույների կոտորվելուց և բիրտ ուժով երկրից քշվելուց հետո, իրենք Թուրքիայի մեջ մնացել են մենակ և այժմ թրքական վտանգը բացառապես կենտրոնացած է իրենց դեմ: Նրանք հասկացան նաև, որ իրենց իսլամությունը ազգայնական քեմալականների համար ոչ մի արժեք չի ներկայացնում, առավել ևս հաշվի չեն առնվում իրենց նախկին օժանդակությունները թուրքական պետությանը: Միաժամանակ նրանք խորապես զղջացել էին, որ առաջին համաշխարհային պատերազմի եզրափակիչ տապում, երբ պարտված Թուրքիան Մուդրոսի զինադադարով հանձնվել էր դաշնակիցների ողորմածությանը, իրենք պահը ձեռքից բաց թողեցին և չդիմեցին ապստամբության:

Այս ծանր մտորումները քրդերին մղում էին ներքին կազմակերպվածության: Սակայն քեմալականները ևս քնած չէին: 1924 թ. ընդունված հանրապետական սահմանադրությունը Թուրքիայում բնակվող բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ազգությունից, հայտարարում էր թուրք:

Հանրապետական Թուրքիայի շովինիստական և համաձուլման քաղաքականությանը քուրդ ժողովուրդը պատասխանեց ազատագրական պայքարով: Այս նոր էտապում այդ պայքարը թե գաղափարապես ու քաղաքականապես և թե կազմակերպչական առումով ավելի հասուն էր: Այն վկայում էր, թե որքան խոշոր առաջընթաց է տեղի ունեցել քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման մեջ: XX դարի 20-30-ական թվականներին տեղի ունեցան քրդական մի շարք զանգվածային ապստամբություններ, որոնք ցնցեցին թուրքական հանրապետության հիմքերը: 1925 թ. պայթեց շեյխ Սայիդի ապստամբությունը, որի նպատակն էր ձերբազատվել թուրքական լծից և ստեղծել անկախ քրդական պետություն:

Թուրքիայի ժողովրդա-Հանրապետական կուսակցության կառավարությունը այդ ապստամբությունը որակեց որպես «հետադիմական», «քրդերի կրոնական մոլեռանդության պայթյուն», որն իբր նպատակ ունի

վերականգնել խալիֆաթը, սահմանել շարիաթական նորմեր, տապալել կառավարող աշխարհիկ-աթեիստական վարչակարգը և խափանել Թուրքիայի եվրոպականացումն ու արդիականացումը: Քրդական այդ շարժումը ճնշելու գործում խորհրդային Միության աջակցությունը ստանալու նպատակով, քեմալական կառավարությունը այն որակեց իբրև «պրոիմպերիալիստական, արևմտամետ և գործակալական»:

Շեյխ Սայիդի ապստամբությունը ճնշելուց հետո թուրքական իշխանությունները քրդերի նկատմամբ սկսեցին կիրառել պետական ահաբեկչության քաղաքականություն: Այդ անագորույն դաժանությունների նպատակն էր սարսափի միջոցով անդամալուծել քուրդ ժողովրդի կամքը: Ապստամբությունից հետո թուրքերի և քրդերի միջև բացվել էր շատ խորը մի անդունդ: Քրդերի մոտ ձևավորվեց այն գիտակցությունը, որ չդիմադրելու դեպքում իրենք դատապարտված են տանելու հայերի ճակատագիրը:

1927 թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը ընդունեց օրենք քրդերին արևելյան վիլայեթներից արևմտյան վիլայեթներ տեղահանելու վերաբերյալ: Այդ օրենքի համաձայն մեկ միլիոն քրդեր տարագրվեցին Արևմտյան Անատոլիա: 1927 թ. ստեղծվեց «Հոյբուն» («Անկախություն») անունով քրդական ռազմաքաղաքական կոմիտե, որը վերածվեց քաղաքական կուսակցության: Նրա նպատակն էր հռչակվում Թուրքական Քրդստանի անկախությունը: «Հոյբունի» գործունեությունը եռամիսյան աջակցության արժանացավ սփյուռքում գործող Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից, որը կրկին հետապնդեց հայ-քրդական համերաշխության գաղափարը:

«Հոյբունի» կանոնադրության մեջ մտցվեց հայերի՝ «բախտակից ազգի» հետ համագործակցության վերաբերյալ հատուկ կետ: 1925 թ. շեյխ Սայիդի ապստամբության շրջանում սփյուռքի հայկական մամուլը հայ-քրդական համագործակցությունը գնահատեց որպես երկու դրացի ժողովուրդների քաղաքական ապագայի առումով կարևորագույն խնդիր: Իր հերթին «Հոյբունը» ևս քրդական զանգվածների շրջանում մղում էր հետևողական քարոզչություն հայ-քրդական բարեկամության անհրաժեշտության և կարևորության մասին: 1928 թ. քրդական ազատագրական շարժման կարկառուն դեմքերից մեկը՝ Սուրբեյա Բադրխանը (Բեդիրխանի) հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ «Հոյբունը» հայ և քուրդ ժողովուրդների միջև իրականացրեց համընդհանուր հաշտեցում: «Իմ ժողովրդի անունից, – ասվում էր հայտարարության մեջ, – հերոսական հայ ժողովրդի նկատմամբ ես արտահայտում եմ իմ խորին համակրանքը և հավաստիացնում նրան, որ մեծագույն հարգանքով եմ

վերաբերվում դեպի նրա ազգային իղծը, որպիսին հանդիսանում է միացյալ անկախ Հայաստանը»:

1927 թ. կրկին ապստամբության դրոշ պարզեցին Իգդիր-Քայազե-տի շրջանի քրդերը: Այդ ապստամբության հետևանքով Թուրքիայի բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները 1930 թ. կեսերին գտնվում էին քրդերի հսկողության տակ: Այդ շրջանում հուժկու ապստամբական շարժում էին ծավալել Արարատի շրջանի քրդերը: Այդ ապստամբությունը ճնշելուն հետևեց դաժան հաշվեհարդարը ոչ միայն ապստամբների, այլև առհասարակ քրդերի հետ: Թուրքական պատժիչ զորամասերը կազմակերպում էին զանգվածային կոտորածներ, տեղահանություններ և այլն:

Բռնի ուժի հետ միաժամանակ հանրապետական Թուրքիայի կառավարող շրջանները XX դարի 30-ական թվականներին ընդունեցին մի շարք օրենքներ, որոնք կոչված էին քրդերի մեջ մեռցնելու ազգային արժանապատվության ու ինքնագիտակցության, ինչպես նաև ազգային պատկանելության զգացումները, որոնց նպատակն էր համաձուլել և թուրքացնել քուրդ զանգվածներին: Քրդերեն լեզուն պաշտոնապես արգելվեց, քրդերեն գրքերը բռնագրավվեցին ու այրվեցին, դասագրքերից իսպառ հանվեց «քուրդ» և «Քրդստան» բառերը, այսուհետև քրդերը կոչվելու էին «լեռնային թուրքեր»: Նույնիսկ արգելվեց քրդական տարազի կրումը: Թուրքիայի արևելքում քրդաբնակ շրջանները մեկուսացվեցին և խստիվ արգելվեց օտարերկրացիների մուտքն այնտեղ:

1930 թ. նոյեմբերի 1-ին հանդես գալով ԹԱՄԺ-ի նոր նստաշրջանի բացման արարողության ժամանակ, Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ Թուրքիայի արևելքում տեղի ունեցող իրադարձությունները «սպառնալիք էին հանդիսանում մեր անկախության համար»: Իսկ Թուրքիայի «երկրորդ մարդը» հորջորջված վարչապետ Իսմեթ Ինենյուն ի լուր աշխարհի հայտարարեց. «Այս երկրում միայն թուրք ազգը կարող է պահանջներ ներկայացնել էթնիկական և ռասայական իրավունքների վերաբերյալ: Մնացած տարրերը դրա իրավունքը չունեն»:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ աշխարհում տեղի ունեցան խոշոր փոփոխություններ, զաղութատիրությունը կործանվեց, մարդու իրավունքների հարցը մղվեց առաջին պլան և այլն, Թուրքիայում ազգայնականները շարունակում էին պնդել, որ քուրդ ժողովուրդը գոյություն չունի: 1961 թ. ընդունված թուրքական հանրապետության նոր սահմանադրությունը Թուրքիայի բոլոր քաղաքացիներին հռչակում էր «անխառն» թուրք:

1980 թ. սեպտեմբերի 12-ին զինվորական հեղաշրջումից հետո թուրքական իշխանությունները երկրի քուրդ բնակչության դեմ սանձագերոճեցին զանգվածային հալածանքների ու հետապնդումների քաղաքա-

կանություն: Ինքնավարության, ազգային ինքնության վերաբերյալ քրդերի հարցադրումները պատժվում էին դաժան խստությամբ: Քուրդ ժողովուրդը դրան պատասխանեց դիմադրության շարժմամբ, որը ղեկավարում էր «Քրդական աշխատավորական կուսակցությունը»: Քրդերի պայքարը հանուն իրենց ինքնության պահպանման, քաղաքական ու մարդկային իրավունքների ձեռք բերման դեռ շարունակվում է: Կասկածից վեր է, որ մեր օրերում քրդական գործոնը հանդիսանում է Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանի խաղաղության ու կայունության կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Վերին աստիճանի բարդ ու հակասական է եղել հայ և քուրդ ժողովուրդների անցած պատմական ուղին: Ներկա պահին, երբ այս դրացի ժողովուրդները կանգնած են տարբեր բնույթի մարտահրավերների առջև, պարտավոր են ամենալրջազույն կերպով հաշվի առնել և դասեր քաղել անցյալի իրենց պատմությունից:

Մեր օրերի հրամայականն է նաև, որ այդ երկու ժողովուրդները, զգաստ մտքով ու խորաթափանց հայացքով վերագնահատման ենթարկեն իրենց անցյալի հարաբերությունները, որպեսզի կարողանան հավատով ու վստահ հայացքով նայել դեպի ապագան:

The Kurds, the Armenian Question and History of the Armenian-Kurdish Relations
in the Context of International Diplomacy

by Prof. Vahan Baibourtian

The historical links between the Armenians and the Kurds, who resided in the high mountain region south and south-east of Lake Van, have come from the depth of centuries. Being close neighbors nearly in the same geographical, historical and cultural environment, Armenian and Kurdish nations had many grounds for interaction. In the 16th century the Ottoman Empire almost simultaneously conquered Western Armenia and Kurdistan. Since that time the Armenians and the Kurds have lived under the Ottoman dominance more than five centuries. This period has been the darkest and sinister time in both nations' history. Throughout the centuries the Turkish government's policy towards the Armenians and the Kurds has been that of forced assimilation, denationalization and physical extermination.

Some modern Kurdish ultra-chauvinists and nationalists, engaged in counterfeiting of history, including of their own people and inspired by political motivation, are trying to "prove" that the Kurds have "historical rights" over the Western Armenia on equal terms with the Armenian people. These pseudo-scholars and political speculators are ready for everything to "prove" that the Kurds are indigenous inhabitants or autochthonous to the Western Armenia and claim that the historical life of the Kurds in this territory allegedly began from "times immemorial". However, it is a well-known fact that up until the late Medieval Age, that is the 16th century, no noteworthy number of Kurds lived in the Armenian Highland. Neither Kurdish, foreign, nor even Armenian sources contain any information on the existence of significant ethnic Kurdish element in this area. In reality, the massive influx or, better said, ethnic expansion of the Kurds to the Armenian Plateau took place from the beginning of the 16th century, when the Ottoman Sultan Selim Yavuz the First, after conquering the Western Armenia, started a purposive campaign of encouraging the massive migration of the Kurds from Northern Mesopotamia and Iran to the Western Armenia. As a result of this policy, nomadic and settled Kurdish tribes established residence throughout the Western Armenia. This process continued during the 16th and 17th centuries by means of "Kurdization" of the Armenian land that had been inhabited by Armenians for millenniums. The chiefs of Kurdish tribes, who were closely collaborating with the Turkish authorities, used arms to forcefully invade Armenian-owned lands, and declared themselves the owners of these lands.

Starting from the 16th century, the Kurds of the Ottoman Empire were Turkish-oriented. The Kurds became Ottoman allies not only in the countless wars waged by the Ottomans in Europe and Asia, but also in the conquering of the Western Armenia by the Ottomans and its further keeping within the Empire. Indeed, the Ottoman Empire would have hardly succeeded in maintaining its rule over the Western Armenia for centuries, had it not possessed the military and political assistance of the Kurds.

It is an established fact that, despite geographical and cultural proximity, the Armenian and Kurdish nations chose different paths for their national struggle against the Turkish dominance. There are several reasons for that.

As it is explored in the book, the Armenian Question became point at issue of the international diplomatic discussions consequent to the Berlin Congress of 1878. Facing internationalization of the Armenian Question with panic, the Ottoman government tried to address it by methods of massacre and state terror. At the same time, the Turkish government vigorously made efforts to create a counterbalance to the Armenian national liberation movement by instigating the Kurds against the Armenians. The ill-famed Kurdish "Hamidie" detachments served a tool to oppress and destroy the Armenian national liberation movement in Western Armenia. The stirring up of Armenian-Kurdish enmity became the cornerstone of Turkish state's Eastern policy. To this end the Turkish government launched a propaganda campaign. One of its gadgets was calling Armenian lands – Kurdistan. The usage of the word Armenia was banned in official communication, replacing "Armenia" with "Kurdistan". This was targeted at putting Armenians out of legal protection, enabling the Kurds to freely apply violence against the Armenians.

To unleash the conflict Turkish agents were sent to spread amongst the Kurds that Armenians are determined to establish an independent state in the eastern provinces of the Empire and oust the Kurds out. They also assured the Kurds that the only way out of the situation was the extermination of the Armenians.

Thus, as many Turkish politicians had the perception that the Empire could lose its Asian part in case of an Armenian-Kurdish alliance, the cornerstone of Ottoman government's Eastern policy becomes the deliberate aggravation of the Armenian-Kurdish relations.

After the Young Turk coup in 1908 the Ottoman Empire's "Armenian" and "Kurdish" policies did not undergo considerable changes. Inheriting the policy of the Sultan Abdul Hamid II, the Young Turk government continued to exploit the Kurds against the Armenian national liberation movements. In 1909 the Ittihadists

sent their numerous agents into the Western Armenia with an instruction to ignite hostilities between the Armenians and the Kurds.

After the heavy defeat in Balkan war the notion and slogan "Anatolia is in danger" prevailed among the Turkish ruling circles. The primary causes of these presumptions were the growing Armenian aspirations for national liberation. Thus Turkey was switching more decisively its focus from the West to the East.

Pan-Turkism looked upon Armenians as a "wedge" driven between Turkey and Turan (the Caucasian Tartars and Turkic nations of Central Asia and the Siberian steppes). Kurds were allocated a certain role in the plans to remove this "wedge".

It is known that the liberation of small in number peoples based on the principle of self-determination was one of the slogans on the background of which was running World War I. The plans of the Allied countries envisaged partition of the Ottoman Empire into five main ethnic areas: Turkish Anatolia, Armenia, Syria, Kurdistan and Arabia. Moreover, it was foreseen that independent Armenian and Kurdish states would be created on the territory of the Western Armenia and Turkish Kurdistan.

When during the years of the World War I the government of Young Turks organized the Genocide of the Western Armenians, a crime that did not have a historical precedent in the history of humankind, it also succeeded in exploiting the Kurds who became their accomplice in the implementation of these far-fetched plans. A great mass of Kurds took part in the Armenian genocide. This fact aroused hostility between Armenians and Kurds. Kurdish nationalists intended to form "independent Kurdistan" on the territory of the Western Armenia and therefore they made efforts to prevent the idea of creation of an independent Armenian state, raised by some of the Great Powers.

The declaration of independence by Armenia on May 28th 1918 created new anxiety among the Kurds. The government of the Republic of Armenia set as a foreign policy priority the reestablishment of Armenian statehood on the territory of Western Armenia, while Kurds dreamt of "independent Kurdistan" on that very territory. In spite of the consecutive steps taken by the first Armenian republic to cooperate with Kurdish leaders and to solve the discord between two nations with admissible conditions, Kurdish nationalists, who served to the Turkish state system frustrated those attempts both during the rule of sultan and Kemalists. On the grounds of numerous documents is shown the way, how Kemalists and Turkish nationalists tried to raft the Kurdish leaders of Western Armenia on the anti-Armenian platform.

As far as the Kurdish Question is concerned, it was first reflected in political schemes of the Great Powers during the years of World War I and at the

post-war period international diplomatic forums, particularly at Paris Peace Conference of 1919, Conference of San Remo of 1920, Conference of London of 1921 etc.

Once more, in 1919, during the Paris Conference another attempt was made to form a united Armenia-Kurdish diplomatic front, which failed too. The Kurds through General Sherif Pasha, the head of their delegation, presented at the conference the Kurdish claims that sharply opposed those of the Armenians. Moreover, the Kurdish arguments included the sweeping decline of the Armenian population in six Armenian vilayets after the 1915 Genocide and the prevalence of the Kurds as a result.

In the provisions of the Treaty of Sèvres, signed on August 10th 1920, for the first time in the international legal practice specific decisions were taken in regard of the Armenian and Kurdish issues. Upon those provisions the issue of forming Armenian and Kurdish independent states on the territory of the Ottoman Empire was put on the agenda. It seemed that the centuries-old Armenian-Kurdish problem was going to find its final and just solution.


However, the Treaty of Sèvres was never implemented, stipulated by the Kemalist - Turkish nationalist movement in Turkey, Turkish-Bolshevik rapprochement, as well as consequent improvement of relations between the Allies and the Kemalists. The Conference of Lausanne, that took place in 1922-1923, was pursuing the aim of resolving all the disputable issues between Turkey and the Allies. The Treaty of Sèvres was revised during Conference of Lausanne upon common desire of the Great Powers. As a result the issues of Armenia and Kurdistan specified in the articles of the Treaty were removed from the agenda of international deliberations. The Armenian and Kurdish issues were not only neglected, but a tombstone was laid on the Treaty of Sèvres and on the Armenian and Kurdish Questions on the whole.

Kemalists, the Turkish nationalists, carried on the policy of double-dealing standards. They encouraged the struggle of the Kurds of Iran and Iraq against their own governments. Whereas in Turkish Kurdistan guided by the chauvinistic slogan "Turkey is for the Turks", they carried on the policy of state terrorism, national and social oppressions. The Kurdish people answered them with national liberation movements. In particular, the strong rebellion of Sheikh Said broke out in 1925. Another great uprising of the Kurds, concentrated near Mount Ararat, took place in 1927-1931. The government of Ankara oppressed it with much difficulty. The Kurdish military-political committee of "Hoybun", a political party, virtually prepared and led that uprising having the aim to free the Kurds from the Turkish yoke and to form independent Kurdistan in the territory of Turkey. A close cooperation existed between "Hoybun" and the Armenian

Revolutionary Federation party. Correspondingly, political agreement was concluded between these two parties, and the articles of the Sèvres Treaty concerning the independent Armenia and independent Kurdistan served as the basis of that agreement.

The governments of Mustafa Kemal Atatürk and Reza Shah Pehlevi concluded several agreements with the aim of oppressing the Kurdish movements in their countries, which presupposed the joint struggle of the two states of Iran and Turkey against Kurdish movements. The political and military cooperation of those two states made it possible for them to defeat the Kurdish liberation movements in their territories.





Բրտական Վարչական սահման

 Իրատարական սահման

Սուղի խոսք

1. Տե՛ս Ակոպով Գ. Բ., Критическая история проблемы происхождения курдов. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1969. Տե՛ս նաև Ակոպով Գ. Բ., Критический обзор версий туранийско-турецкого происхождения курдов. "Вестник общественных наук АН АрмССР", 1966 N 4; Waheed A., The Kurds and their Country, A History of the Kurdish people (from Earliest Times to the Present). 2nd ed., Lahore, 1958.
2. Տե՛ս Սոլադյան Ա., Курды в VII-X веках по арабским источникам, Ереван, 1987.
3. Лазарев М. С., Мгой Ш. Х., Васильева Е. И., Гасратян М. А., Жигалина О.И., История Курдистана, Москва, 1999, стр. 36.
4. Minorsky V. Kurden, Encyclopédie de l'Islam, t. II, p. 1200.
5. Սոլադյան Ա., Курды..., стр. 76-88.
6. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, Երևան, 1996, էջ 102-103:
7. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 103:
8. Տե՛ս [Nuzhat-al-Qulub], The geographical part of the Nuzhat-al-Qulub, composed by Hamdallah Mustawfi of Qazwin in 740 (1340), ed. by G. Le Strange, "E. F. Gibb Memorial" series, vol. XXIII, Leyden-London, 1915, p. 102-103.
9. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), Պէյրուք, 1969, էջ 68:
10. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 132:
11. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 132:
12. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 67:
13. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 132:
14. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 132:
15. Նույն տեղում, էջ 104:
16. Лазарев М. С., Мгой Ш. Х. и др. История Курдистана, стр. 19; Ակոպով Գ. Բ., Курды и курдский вопрос в турецкой историографии. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. V, Թուրքիա, Երևան, 1970:
17. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 105:
18. Նույն տեղում, էջ 87:
19. Նույն տեղում, էջ 132:

20. Նույն տեղում, էջ 108:
21. St' u Brown E. G., A History of Persian Literary in Modern Times A. D. 1502-1924, Cambridge, 1924, p.p. 58-59.
22. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969:
23. Münecsim başı tarihi, Istanbul, 1858, s. 450.
24. Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948, p. 40.
25. Петрушевский И. А., Азербайджан в XVI-XVII вв. - Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, стр. 263.
26. Moukbil Bey M. La Camagne de Perse 1514, Paris, 1928; St' u նաև A Chronicle of the Early Safavis being the Ahsanut-tawarikh of Hasan-i Rumlu, trans. and ed. by C. N. Seddon, Baroda, 1934.
27. A Chronicle of the Early Safavis..., p. p. 67-68.
28. Սասունի Կ. Քյուրտ ազգային շարժումները..., էջ 36:
29. Arfa Hassan, The Kurds: A Historical and Political Study. London-New York-Toronto, 1966, p. 95.
30. Տե՛ս Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 16:
31. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 87:
32. Այվազովսքի Գ., Պատմութիւն օսմանեան պետութեան, Վենետիկ, 1841, էջ 320:
33. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 106:
34. Sur'eya Bedirkhan, The Case of Kurdistan against Turkey, Princeton, New York, 1928, p. 27.
35. Chèref-nameh ou histoire des Kourdes par Chèrèf, prince de Bidlis, vol. 2, 1ème, SPB, 1868, p. 169-172.
36. Հայ ժողովրդի պատմություն (ուր հատորով), հ. 4, Երևան, 1972, էջ 280:
37. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 113:
38. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Գալուստ Տեր-Մկրտչանի արխիվ, թղթ. 16, վավ. 7:
39. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 414:
40. Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 88:
41. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 97:
42. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, մասն Ա, հ. Ա, էջ 97:
43. Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси. Шараф-наме, т. I, Москва, 1967, стр. 85-86.

44. Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 397:
45. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 174:
46. Minorsky V., Kurden - Enziklopaedie des islam, Bd. 2, Leiden-Leipzig, 1927, p. 1206.
47. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 176:
48. Аграрный строй Османской империи XV-XVII вв. Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой, Москва, 1963, стр. 93.
49. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 109:
50. Նույն տեղում, էջ 87:
51. Նույն տեղում, էջ 87:
52. Նույն տեղում, էջ 88-89:
53. Սասունի Կ., Քյուրտ..., էջ 42:
54. Նույն տեղում, էջ 50:
55. Սասունի Կ., Պատմություն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1956, էջ 107:
56. Շահպազեան Յ., Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 92:
57. Dersimi N., Kürdistan tarihinde Dersim. Halep, 1952, s. 22-23.
58. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 104:
59. Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, т. 2, Тифлис, 1910, стр. 541.
60. St' u Народы Турции. Двадцать лет пребывания среди болгар, греков, албанцев и армян. Перевод с английского, т. I, СПб, 1879, стр. 89.
61. Գրիգոր վարդապետ Կամախեցի (Պարանաղցի), ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 69:
62. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 60:
63. Նույն տեղում:
64. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 158, 161, 200:
65. Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 148:
66. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 41:
67. Babinger Fr. Sheich Bedr-ed-din, der Sohn des Richters von Simaw. Ein Beitrag zur Geschichte des Sektenwesens im altosmanischen Reich. Berlin-Leipzig, 1921, s. 43.
68. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., հ. Ե, էջ 51:
69. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 51:
70. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 321:

1. Ментешашвили А. М., Курды. Очерки общественно-экономических отношений, культуры и быта. Москва, 1984, с. 6. Баязиди Мела Махмуд. Нравы и обычаи курдов. Пер., предисл. и примеч. М. Б. Руденко, Москва, 1963; Вильчевский О. Л., Курды. Введение в этническую историю курдского народа, Москва-Ленинград, 1961.
2. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, "Известия Штаба Кавказского Военного Округа", Тифлис, 1907, N 20, с. 15 (Այսօրիս ԻՏԿՎՕ); Васильевский П. Е., К аграрным отношениям в Курдистане, Анализ курдского деребейлика. - "Аграрные проблемы", кн. 1-2, Москва, 1932.
3. Sykes P. M., The Kurdish Tribes of the Ottoman Empire. "Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland", London, 1900, p. 430-431.
4. Карцев А., Заметки о курдах, Тифлис, 1896, с. 22-23.
5. Ментешашвили А. М., Աշխարհագրական և ժողովրդագրական Կուրդիստանի մասին, հ. 1, 1915; Գրքեր և եզիդներ, Երկրի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958; Егiazаров С. А., Краткий географический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1884; Семенов А. А., Поклонение сатане у переднеазиатских курдов-езидов, "Бюллетень Средне-Азиатского Госуд. университета", Ташкент, 1927, вып. 16; Empson R. H. W. The Cult of the Peacock Angel. A Short Account of the Yezids of Kurdistan, London, 1928; Вильчевский О. Л., Очерки по истории езидства. "Атенст", N 51, 1930; Ивановский А. А., Езиды (по исследованию К. И. Горощенко), "Русский антропологический журнал", Москва, 1900, N 3.
6. Никитин В., Курды. Пер. с франц., Москва, 1964, с. 193.
7. Отчет о поездке в Макинское ханство драгомана ген. консульства в Азербайджане Минорского, в октябре 1905 г. "Материалы по изучению Востока", вып. I, СПб, 1909, с. 72.
8. Погорелов М., Курдский вопрос, - "Война и революция", 1925, кн. 3-5, с. 140; Шамилов А. Ш., К вопросу о феодализме у курдов, Эривань, 1936.
9. Никитин В., Курды, с. 198.
10. Никитин В., Курды, с. 201. Տե՛ս նաև Պուտեշեստվո ընդ Կուրդիստանի և Արմենիայի մասին, Կ. Ս. Պետրովիչի կողմից, 1873, տ. 2. (Այսօրիս ԻԿՕԻՐԳՕ).
11. Джалиле Джалил, Курды Османской империи в первой половине XIX в., Москва, 1973, с. 30.
12. Колобакин А. М., Материалы для военно-статистического обозрения Турции, т. I, ч. I, СПб, 1888, с. 75-76.
13. Առաքելյան Հ., Քրդերը իրենց տանը: «Ազգագրական հանդես», Թիֆլիս, N 2, գիրք Դ, 1898, էջ 150:
14. Միջին դարերում եզիդներին անվանում էին նաև «դասեմի»:
15. Ռեկլյու էլիզե, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 38-39: Березин И. Н., Езиды, - "Магазин землевладения и путешествий", т. III, Москва, 1854; Արքայան Խ., Քրդեր և եզիդներ, Երկրի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958; Егiazаров С. А., Краткий географический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1884; Семенов А. А., Поклонение сатане у переднеазиатских курдов-езидов, "Бюллетень Средне-Азиатского Госуд. университета", Ташкент, 1927, вып. 16; Empson R. H. W. The Cult of the Peacock Angel. A Short Account of the Yezids of Kurdistan, London, 1928; Вильчевский О. Л., Очерки по истории езидства. "Атенст", N 51, 1930; Ивановский А. А., Езиды (по исследованию К. И. Горощенко), "Русский антропологический журнал", Москва, 1900, N 3.
16. Колобакин А. М., Материалы..., с. 84.
17. Տե՛ս Օ տորգվե տուրքոգո Կուրդիստանի մասին, "Սոբորնիկ սվեդենի և մատերիալո ընդ մինիստերստվո մինիստերստվո ֆինանսո", տ. II, 1865, N 6.
18. Троттер, Малоазиатские курды. "Известия Кавказского отдела Императорского Русского Географического общества", т. VII, Тифлис, 1882-1883, с. 13 (Այսօրիս ԻԿՕԻՐԳՕ).
19. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), Москва, 1972, с. 37-38.
20. Путешествие по Армении, Курдистану, стр. 36.
21. Bishop, Journey in Persia and Kurdistan, vol. II, London, 1893, p. 372.
22. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Բաժանմունքի հնուց մինչև մեր օրերը, Պէյրուս, 1974, էջ 302:
23. Երանեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 26:
24. Müller Simonis, L'Arménie, le Kurdistan et la Mesopotamie, Paris, 1892, p. 237.
25. «Քյաֆիր» արարքերն բառ է նշանակում է անհավատ, անաստված: Այսպես էին մահմեդականներն անվանում բոլոր ոչ մահմեդականներին:
26. Бекгулянц Р. (Северянин), По Турецкой Армении, Впечатления от поездки летом 1914 г., Ростов на Дону, 1914, с. 74-76.
27. Համբարյան Ա. Ա., Ազրարայի հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, (1856-1914), Երևան, 1965, էջ 73:
28. Արքայան Խ., Քրդեր և եզիդներ, էջ 248:
29. Колобакин А. М., Материалы..., с. 133.

30. Contenson L. de, Chrétiens et Musulmans, Voyages et études, Paris, 1901, p. 193.
31. «Մասիս» լրագիր, Կ. Պոլիս, 1872, N 1239:
- 31ա. «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889 թ., N 4-5, էջ 442:
32. Բղէան Սարգիս և Միսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 9:
33. Չախսուրեան Գ., Պատմութիւն Բալահովտի..., էջ 9:
34. Երամեան Գ., Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 25-26:
35. Walker J. Christopher, Armenia. The Survival of a Nation, London, New York, 1980, p. 108.
36. Երեւանեան Գ. Ս., Պատմութիւն Չարսանճազի հայոց, Պէյրութ, 1956, էջ 370:
37. Մեւրոպ Մաշտոցի անվան մատենադարան, Ֆոնդ կաթողիկոսական դիվան, թղթ. 219, վավ. 136, 152, 157 և շարունակութիւնը:
38. Տե՛ս Զուլպյան Մ. Կ., Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 60:
39. Չախսուրեան Գ., Պատմութիւն Բալահովտի..., էջ 258:
40. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 41.
41. Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 83-84:
42. Никитин В., Курды, с. 221.
43. Ա.Դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 278:
44. Երեւանեան Գ. Ս., Պատմութիւն Չարսանճազի հայոց, էջ 361:
45. Бартольд В. В., Мусульманский мир. Сочинения, т. VI, Москва, 1966, с. 240.
46. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 29.
47. Տե՛ս Трубецкой В. В., Роль оседло-кочевых племен Ирана в период нового времени. "Очерки новой истории Ирана", Москва, 1978, с. 176.
48. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, Петроград, 1915, с. 39.
49. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Բ. հատ., Պէյրութ, 1974, էջ 91-92:
50. Չորմիսյան Լ., նույն տեղում, էջ 91-92:
51. Джалале Джалил, Курды Османской империи, с. 32.

52. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, Վենետիկ, 1806, էջ 52-53:
53. Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, том II, Тифлис, 1910, с. 191-192.
54. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 79-80:
55. Никитин В., Курды, с. 247.
56. Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов. Исторический очерк, Тифлис, 1900, с. 7.
57. «Պիւան հայոց պատմութեան», գիրք 7, Թիֆլիս, 1912, էջ 144-145: Տե՛ս նաև Термен Р. И., Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 г., Тифлис, 1910.
58. Ղազարյան Գ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացութիւնը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 57: Երամեան Գ., Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 28:
59. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, էջ 160-161: Տե՛ս նաև Срвандзтыц Г., Очерки Васпураканской области и смежных с ней местностей. - ИКОИРГО, т. X, 1860, вып. 1.
60. Друвиль Г., Путешествие в Персию в 1812 и 1813 годах, содержащее в себе малоизвестные подробности о нравах, обычаях и духовных обрядах персиян, ч. 1-2, Москва, 1826, с. 168.
61. Դերսիմի մեջ էին մտնում Խոզաթի, Չարսանջակի և Չմշկածազի շրջանները: Ունենալով լեռնային և դժվարամատույց դիրք, Դերսիմը համարվում էր անառիկ մի ամրոց: Այստեղ բնակվում էր ալի-իլլահի (ալի) շիիթական դավանանքին հարող բնակչություն: Նրանք իրենց անվանում էին նաև «Ճշմարտության մարդիկ»: Թուրքերը և պարսիկները նրանց կոչում էին *ղզլբաշ*, իսկ հայերը՝ *տուժիկ*: Նրանք խմբավորված էին գլխավորապես հետևալ վայրերում. դժվարամատչելի լեռնային Դերսիմի շրջանում, Արածանի (Մուրադ) գետի հովտում, Երզինգյանի և Խարբերդի միջև, Բինգյուլ-դաղ լեռների հարավում՝ Վարդո կազայում: Ոչ մեծ թվով ղզլբաշներ էին ցրված նաև Երզրումի, Մուշի, Խնուսի, Ճապաղջրի, Արաբկիրի, Մալաթիայի և Մարաշի շրջաններում: Դերսիմցիներն ապրում էին հարևան մահմեդական քրդերից առանձնացած և անընդհատ պայքարում էին իրենց անկախությունը պահելու համար:

Ղզլբաշները դավանում էին մի կրոն, որը տարբերվում է ինչպես քրիստոնեությունից, այնպես էլ մահմեդականությունից: Նրանց կրոնը, ըստ էության, քրիստոնեության, մանիքեականության և շիակականության մի յուրատեսակ համաձուլում էր: Մի շարք հետազոտողներ ղզլբաշներին սխալմամբ համարել են քրդեր: Ն. Ադոնցը, օրինակ, գտնում է, որ ղզլբաշները աղանդավորական մի համայնք են, որը կազմվել է պավլիկյան շարժման հետևանքով: Նրա կարծիքով *տուժիկ* հայկական անվան տակ պետք է հասկանալ *աղանդավոր*, իսկ Դերսիմ անվանումը պետք է մեկնաբանել որպես «աղանդավորների երկիր»: (Դյուզ հնագույն Դյուրզ անվանումից, այստեղից էլ Դյուրզաանա և համապատասխանաբար Դյուրիսիմ արաբական ձևը): «Պավլիկյան շարժման աղանդավորները, գրում է Ն. Ադոնցը, գրավում էին մի տարածք, որն ընկած էր Դերսիմի լեռներից մինչև Խարբերդ հասնող տարածությունների միջև: Բյուզանդիայի ճնշման տակ նրանցից ոմանք միացան պաշտոնական եկեղեցուն և մինչև օրս ապրում են Ալևի (Էգիմի) տարածքում ռումեր կամ քաղկեդոնական հայեր անվան տակ: (Адонц Н. Из истории армянского вопроса. "АН АрмССР, Центр научной информации по общественным наукам. Научно-информационный бюллетень. Арменоведение за рубежом", серия 111, N 7 (72), с. 16.

Ն. Ադոնցը նկատում է նաև, որ ղզլբաշների ավանդույթներն ու սովորույթները նրանց ավելի են կապում քրիստոնյաների հետ, քան մահմեդականների: Ղզլբաշների «... ազգային խառնվածքը և խաղաղասեր բարքերը նրանց ուժգին կերպով տարբերում են քրդերից: Ոչ մի հիմք չկա դրանց, մասամբ քրիստոնյա տարրերին, քրդական ծագում վերագրելը», եզրակացնում է Ն. Ադոնցը: (Адонц Н., Из истории армянского вопроса, с. 16).

Ղզլբաշների մասին տե՛ս Аверьянов П. И., Некоторые сведения о турецких курдах - кизилбашах, - "Известия штаба Кавказского военного округа", 1907, N 19, 1-ая треть; Նույն հեղինակի Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб, 1912; Гордлевский В. А., Из религиозных исканий в Малой Азии. Кызылбашаи. "Русская мысль", 1916, N 11; Гордлевский В. А., Из религиозной жизни кызылбашей Малой Азии. "Новый Восток", 1922, N 1; Религиозная секта кызылбашей в Малой Азии, - "Известия штаба Кавказского военного округа", 1905, N 7-8. Հալաճյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, մաս Ա, Երևան, 1973: Նաթանեան Պ., Ար-

- տուր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանձագի, ճապաղջուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1883: Հատկանշական է, որ Դերսիմի ղզլբաշների ներքին կյանքը և նրանց հակակառավարական շարժումները XVI դարից սկսած ընթանում էին ուրույն ուղիներով, միանգամայն անջատ Օսմանյան կայսրության քրդական զանգվածների շարժումներից:
62. Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 85:
 63. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց..., Բ հատոր, էջ 142:
 64. Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 85: Տե՛ս նաև Ամատունի Գ., Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրդացած հայեր, Բեյրութ, 1980:
 65. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 67:
 66. Ղազարյան Հ., Արևմտահայերի..., էջ 78: Տե՛ս նաև Շվոտ Մ. Տ., Քրդերը Տաճկաց Հայաստանում (ազգագրական նյութեր), հ. Ա, Սանկտ-Պետերբուրգ, 1905:
 67. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, էջ 163:
 68. Լիլլեճեան Լ., Հայ և քուրտ յարաբերութիւնները. Տերսիմի քուրտները, «Պայքար» օրաթերթ, 14 մարտի, 1923 թ.:
 69. Аверьянов П. И., Курды в войнах России, с. 3.
 70. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 16:
 71. Անդրանիկ, Տերսիմ. Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1901, էջ 51:
 72. Նույն տեղում, էջ 52-53:
 73. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1889, N 3, էջ 153:
 74. Տե՛ս Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163, վավ. 963, 967:
 75. Kinneir J. M., Journey through Asia Minor, Armenia and Kurdistan in the years 1813 and 1814, London, 1818, p. 143.
 76. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1889, N 3, էջ 37:
 77. Լեո, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1984, էջ 388-389:
 78. Նույն տեղում, էջ 389:
 79. Տե՛ս "Tarih", cilt 3, Istanbul, 1933, s. 188.
 80. Аверьянов П. И., Курды в войнах России, с. 7.
 81. Տե՛ս Об отношениях курдов в Азиатской Турции к турецкому правительству. "Сборник главного управления генерального штаба", вып. II, СПб, февраль, 1910 г., с. 60.

82. Moltke Helmuth von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1841, s. 267.
83. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854, с. V-VI.
84. Նույն տեղում, էջ VIII.
85. Araste R., Man and Society in Iran, Leyden, 1970, p. 13.
86. Rich C. J., Narrative of a residence in koordistan, vol. I, London, 1836, p. 487.
87. Никитин В., Курды, с. 285.
88. Потто В., Кавказская война, т. IV, вып. II, СПб, 1889, с. 220-221.
89. «Դրօշակ», 1901, N 4(115), էջ 67:
90. Троттер, Малоазиатские курды. ИКОИРГО, т VII, Тифлис, 1882-1883.
91. Адамов А., Ирак Арабский (Бассорский вилайет в его прошлом и настоящем), СПб, 1912, с. 432.
92. Rawlinson H. C., Notes on a journey from Tabriz Through Persian Kurdistan to the ruins of Takhti-Soleiman and from thence by Zenjan and Tarom to Gilan in Oktober and November 1838, with a memoir on the site of the Athropatenian Ekbatana, - "Journal of the Royal geographical Society", vol. 10, 1841, p. p. 23-24.
93. Потто В., Кавказская война, т. IV, вып. II, с. 221-223, 236.
94. Քոնթանսոն դը Լյուդովիկ, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, առանց թվականի, էջ 19:
95. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 196:
96. Մելիքյան Յ. Եղիշե, Հարք-Խնուս, Անթիլիաս, Լիբանան, 1964, էջ 188:
97. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1889, N 5, էջ 272:
98. Իզմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պէյրուս, 1964, էջ 75:
99. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 9.
100. Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1957, с. 25.
101. Poujoulat M. B., Voyage dans l'Asie Mineure, en Mesopotamie, a Palmyre, en Syrie, en Palestine et en Egipte, Paris, t. I, 1840, p. 273-274.
102. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 275-276.
103. Նույն տեղում, էջ 277:
104. Мольтке Г., Письма о событиях и приключениях в Турции от 1835 до 1839 гг., СПб, 1877, с. 72-73.

105. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 386-387.
106. Мольтке Г., Письма о событиях..., с. 65.
107. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 53.
108. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 51.
109. Мольтке Г., Письма о событиях..., с. 65.
110. «Մանգումե» լրագիր, Կ. Պոլիս, 1912, 11/24 սեպտեմբերի, N 2629:
111. Քոնթանսոն դը Լյուդովիկ, Հայկական հարցին վերջին փուլերը, էջ 12:
112. Անդրանիկ, Տերսիմ. Ճանապարհորդություն և տեղագրություն, էջ 53-55:
113. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական..., էջ 233:
114. Poujoulat M. B., Voyage dans l'Asie Mineure..., t. 2, Paris, 1841, p. 112. Տես նաև Բужулат, Курдистан, Малатия и Гафис-паша, перев. с немец., вырезка, 1899, N 76.
115. Ռեկլյու Էլիզե, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 39:
116. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 381-387
117. Березин И. Н., Современная Турция. - Отечественные записки, СПб, 1856, N 2, с. 403.
118. Fraser J. B., Travels in Koordistan, Mesopotamia. Including an Account of Parts of those Countries Hitherto Unvisited by Europeans, London, 1840, vol. 2.
119. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 89:
120. Սասունի Կ., Քյուրտ..., էջ 91:
121. Новичев А. Д., История Турции, т. III, Ленинград, 1973, с. 30.
122. Marechal de Moltke, Lettres du Marechal de Moltke sur l'Orient, Trad. Alfred Marchand, Paris, S. D., p. 268.
123. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 389.
124. Սասունի Կ., Քյուրտ..., էջ 90:
125. Շահապազեան Յ., Քիրտո-հայ պատմութիւն, էջ 64:
126. Березин И., Современная Турция, с. 397.
127. Resim A., Resimli ve haritali Osmanli tarihi, с. 4, Istanbul, 1328(1910), s. 1911; Juchereau-de Saint-Denys, A l'histoire de l'Empire Ottoman depuis 1792, jusqu'en 1844, t. 4, Paris, 1844, p. 191.

82. Moltke Helmuth von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1841, s. 267.
83. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854, с. V-VI.
84. Նույն տեղում, էջ VIII.
85. Araste R., Man and Society in Iran, Leyden, 1970, p. 13.
86. Rich C. J., Narrative of a residence in koordistan, vol. I, London, 1836, p. 487.
87. Никитин В., Курды, с. 285.
88. Потто В., Кавказская война, т. IV, вып. II, СПб, 1889, с. 220-221.
89. «Պրոշակ», 1901, N 4(115), էջ 67:
90. Троттер, Малоазиатские курды. ИКОИРГО, т VII, Тифлис, 1882-1883.
91. Адамов А., Ирак Арабский (Бассорский вилайет в его прошлом и настоящем), СПб, 1912, с. 432.
92. Rawlinson H. C., Notes on a journey from Tabriz Through Persian Kurdistan to the ruins of Takhti-Soleiman and from thence by Zenjan and Tarom to Gilan in Oktober and November 1838, with a memoir on the site of the Athropatenian Ekbatana, - "Journal of the Royal geographical Society", vol. 10, 1841, p. p. 23-24.
93. Потто В., Кавказская война, т. IV, вып. II, с. 221-223, 236.
94. Քոնքանսոն դը Լյուդովիկ, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, առանց թվականի, էջ 19:
95. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 196:
96. Մելիքյան Յ. Եղիշե, Հարք-Խնուս, Անթիլիաս, Լիբանան, 1964, էջ 188:
97. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1889, N 5, էջ 272:
98. Իզմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պէյրուս, 1964, էջ 75:
99. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 9.
100. Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1957, с. 25.
101. Roujoulat M. B., Voyage dans l'Asie Mineure, en Mesopotamie, a Palmyre, en Syrie, en Palestine et en Egipte, Paris, t. I, 1840, p. 273-274.
102. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 275-276.
103. Նույն տեղում, էջ 277:
104. Мольтке Г., Письма о событиях и приключениях в Турции от 1835 до 1839 гг., СПб, 1877, с. 72-73.

105. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 386-387.
106. Мольтке Г., Письма о событиях..., с. 65.
107. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 53.
108. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 51.
109. Мольтке Г., Письма о событиях..., с. 65.
110. «Մանգոլներ» լրագիր, Կ. Պոլիս, 1912, 11/24 սեպտեմբերի, N 2629:
111. Քոնքանսոն դը Լյուդովիկ, Հայկական հարցին վերջին փուլերը, էջ 12:
112. Անդրանիկ, Տերսիմ. ճանապարհորդություն և տեղագրություն, էջ 53-55:
113. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական..., էջ 233:
114. Roujoulat M. B., Voyage dans l'Asie Mineure..., t. 2, Paris, 1841, p. 112. Տե՛ս նաև Բужулат, Курдистан, Малатия и Гафис-паша, перев. с. немец., вырезка, 1899, N 76.
115. Ռեկլյու Էլիզե, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 39:
116. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 381-387
117. Березин И. Н., Современная Турция. - Отечественные записки, СПб, 1856, N 2, с. 403.
118. Fraser J. B., Travels in Koordistan, Mesopotamia. Including an Account of Parts of those Countries Hitherto Unvisited by Europeans, London, 1840, vol. 2.
119. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 89:
120. Սասունի Կ., Քյուրտ..., էջ 91:
121. Новичев А. Д., История Турции, т. III, Ленинград, 1973, с. 30.
122. Marechal de Moltke, Lettres du Marechal de Moltke sur l'Orient, Trad. Alfred Marchand, Paris, S. D., p. 268.
123. Moltke Helmuth von, Briefe über Zustände..., p. 389.
124. Սասունի Կ., Քյուրտ..., էջ 90:
125. Շահպազեան Յ., Քիւրտո-հայ պատմութիւն, էջ 64:
126. Березин И., Современная Турция, с. 397.
127. Resim A., Resimli ve haritali Osmanlı tarihi, с. 4, Istanbul, 1328(1910), s. 1911; Juchereau-de Saint-Denys, A l'histoire de l'Empire Ottoman depuis 1792, jusqu'en 1844, t. 4, Paris, 1844, p. 191.

128. Ainsworth W. F., Travels and Researches in Asia Minor. Mesopotamia, Chaldea and Armenia, vol. I, London, 1842, p. 346-348.
129. Watson R. G., A History of Persia from the beginning of the 19th Century to the year 1858, London, 1866, p. 335-338.
130. Յերիդուն Աղանյաթ, Ամիր քարիր վե Իրան, Թեհրան, 1906, էջ 39 (պարսկերեն լեզվ.):
131. Երանեան Յ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, էջ 26:
132. Никитин В., Курды, с. 280.
133. Вакс Л., Очерки истории национально-буржуазных революций на Востоке (1905-1914), Москва-Ленинград, 1931, с. 39.
134. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 458:
135. Լեո, Թուրքահայ յեղափոխութեան զաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 39-40:
136. Նույն տեղում, էջ 40:
137. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 518:
138. Вронченко М. В., Обзорение малой Азии в нынешнем ее состоянии, СПб, 1839-1840, ч. II, с. 225.
139. Халфин Н. А., Борьба за Курдистан. (Курдский вопрос в международных отношениях XIX в.), Москва, 1963, с. 54.
140. Ֆերուհիսան Բարունակ պէյի ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, յԱրնաշ, 1876, էջ 62:
141. Курдское движение в новое и новейшее время, Москва, 1987, с. 12.
142. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 457:
143. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854, с. 99.
144. Reclus E., Nouvelle Geographie Universelle, t. 9, l'Asie Anterieure, Paris, 1844, p. 342.
145. Mueller Simonis, L'Arménie, le Kurdistan, p., 373.
146. Карцев А., Заметки о курдах, Тифлис, 1896, с. 16-17.
147. Адамов А., Ирак Арабский. (Бассорский вилайет в его прошлом и настоящем), СПб, 1912, с. 448-449.
148. Layard A., Discoveries in the Ruins of Nineveh and Babylon, vol. I, London, 1853, p. 24, 127, 134-135, 169; Layard A., Nineveh and its Remains, London, 1849, vol. I, p. 106-108.
149. Диттель В., Очерк путешествия по Востоку с 1842 по 1845 гг., Курды и Бедр-хан-бек, - "Библиотека для чтения", 1849, ч. 95, отд. I, май-июль, с. 1-56, 191-210.
150. Никитин В., Курды, с. 75.
151. Карцев А., Заметки о курдах, с. 17.
152. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 457:
153. Джалиле Джалил, Курды Османской империи в первой половине XIX в., Москва, 1973, с. 128.
154. Курдское движение в новое и новейшее время, с. 13.
155. Soane E. B., To Mesopotamia and Kurdistan in Disquise, With Historical Notices of the Kurdish Tribes and the Chaldeans of Kurdistan, London, 1912, p. 451.
156. (Гамазов М.), От Босфора до Персидского залива. Из записок, веденных во время четырехлетнего путешествия демаркационной комиссии по Турции и Персии, "Время", СПб, 1861, т. VI, N 11, с. 116.
157. Joseph J., The Nestorians and their Muslim Neighbours, Princeton, 1961, p. 489.
158. Երանեան Յ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 22:
159. Малама Я. Д., Несториане и округ Хеккяри, ИКОИРГО, т. II, 1873-1874, с. 155-156.
160. Soane E. B., To Mesopotamia and Kurdistan..., p. 156.
161. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 56.
162. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 458:
163. Նույն տեղում, էջ 458: Երահեան Լ., Ժամանակակից ընդարձակ ըննական պատմութիւն հայոց, հատ. Ա, Մարտիլ, 1933, էջ 152-153:
164. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 86:
165. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 458:
166. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 88:
167. Նույն տեղում:
168. Չախսուրեան Յ., Պատմութիւն Բալահովիտի..., էջ 249:
169. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 81:
170. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 109:

171. Ղազարյան Յ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, էջ 59:
172. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 321:
173. Նույն տեղում, էջ 322:
174. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 81:
175. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմութիւն, էջ 86, 88:
176. Լուսֆի, Թարիխ-ե Լուսֆի, ջելդ-ե 8, Էսթանբուլ, 1328, էջ 144 (թուրքերեն լեզվ.):
177. Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 458:
178. Ղուկասյան Վ. Գ., Պոլսահայ մանուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, 1975, էջ 68:
179. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 322:
180. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 322:
181. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 322:
182. «Արշալոյս Արարատեան», Ջնյուռնիա, 1847, 5 սեպտեմբերի, N 293:
183. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 555:
184. (Гамазов М.), От Босфора..., с. 116.
185. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 321-322:
186. Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 458:
187. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 60.
188. «Արշալոյս Արարատեան», Ջնյուռնիա, 1847, 25 հունիսի, N 290:
189. Աճեմյան Յ., Հայոց հայրիկ, Թավրիզ, 1929, էջ 154:
190. Soane E. B., To Mesopotamia and Kurdistan..., p. 374.
191. Джалиле Джалил, Курды Османской империи..., с. 149.
192. Никитин В., Курды, с. 279.
193. Ֆերիդուն Աղամյաթ, Ամիր Քարիբ վե Իրան, էջ 44-48:
194. "Материалы для географии Азиатской Турции и Персии. Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению 1849-1852 гг. ЭКОИРГО, кн. IX, Тифлис, 1875, с. 631, 638. "Correspondence respecting the demarcation of the frontiers between Turkey and Persia, Presented to both Houses of Parliament", London, 1865, p. 2-4.
195. Джалиле Джалил, Курды Османской империи..., с. 149.
196. Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 323:

197. Նույն տեղում, էջ 324-325:
198. Ղուկասյան Վ. Գ., Պոլսահայ մանուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, էջ 70:
199. «Հայաստան» լրագիր, Կ. Պոլիս, 1849 թ., N 160:
200. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 82.
201. Բաֆֆի, Տաճկահայր (հայոց հարցը), Վիեննա, 1913, էջ 110-111:
202. Աճեմյան Յ., Հայոց հայրիկ, էջ 154:
203. Մոսճեան Յ., Հայ լեզուն քուրդ բերնի մեջ և փոխադարձաբար, Պէյրուս, 1950, էջ 17:
204. «Հայտարար գիր լրոյ», Կ. Պոլիս, 1947 թ., N 51:
205. Չախսուրեան Յ., Պատմութիւն Բալահովսի..., էջ 250:
206. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 97:
207. St'u Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1957, с. 45-46.
208. (Лихутин М.), Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. Из записок о военных действиях Эриванского отряда, СПб, 1863, с. 146.
209. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 125:
210. Погорелов М., Курдский вопрос, - "Война и революция", 1925, кн. 3-5, с. 140-141.
211. Никитин В., Курды, с. 34.
212. Гордлевский В. А., Из жизни курдов, "Известия Кавказского отдела русского географического общества", кн. 22, вып. 4, 1914, с. 31 (Սյունիետն ԻԿՕՐԳՕ); Вильчевский О. Л., Социально-политическая роль сектантства и дервишизма в Курдистане. - "Антирелигиозник", 1931, N 12.
213. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 67:
214. Карцев А., Заметки о курдах, с. 13.
215. Никитин В., Курды, с. 236.
216. St'u Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 50.
217. Погорелов М., Курдский вопрос, с. 142.

ԳԼՈՒԽ II

1. Երեւանեան Գ. Ա., Պատմութիւն Չարսանձազի հայոց, էջ 90:
2. Муравьев Н. Н., Война за Кавказ в 1855 г., СПб, 1877, с. 33-35.
3. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 61.
4. (Лихутин М.), Русские в Азиатской Турции..., с. 128-130.

5. Лазарев Як. Д., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895, с. 2.
6. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 9.
7. Акты Кавказской археографической комиссии, т. 10, 11, Тифлис, 1878, с. 326.
8. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 148.
9. "Кавказ", 1855, N 23, приложение.
10. Акты Кавказской археографической комиссии, т. 10, 11, с. 326.
11. Лихутин М., Русские в Азиатской Турции..., с. 257.
12. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 289:
13. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 155.
14. Лихутин М., Русские в Азиатской Турции..., с. 257.
15. Лихутин М., Русские в Азиатской Турции..., с. 260.
16. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 9.
- 16ա. Տե՛ս Դիվան հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, Վավերագրեր 1801-1888, հատ. ժԳ, Թիֆլիս, 1893, էջ 45-48:
17. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, էջ 80-81:
18. Լեո, Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, էջ 41:
19. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 80-81:
20. Малькольм Макколь, Ответственность Англии перед Арменией. В книге: "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", Москва, 1896, с. 191-192.
21. Архив Внешней Политики Российской империи. "Политархив", 1866-1870 гг., д. 4, л. л. 96-97 (Այսուհետև ԱՎՔՐԻ).
22. Контансон Людовик де, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, Москва, 1914, с. 23-24.
23. «Արոր», 1910, N 6-7, էջ 177-187:
24. Bailey, British Policy and the Turkish Movement: A Study in Anglo-Turkish relations 1826-1853, New York, 1970, p. p. 277-279.
25. Чихачев П. А., Письма о Турции, Москва, 1960, с. 61.
26. Фадеева И. Е., Мидхат-паша, жизнь и деятельность, Москва, 1977, с. 20.
27. Noradounghian G., Recueil D'Actes Internationaux de l'Empire Ottoman, vol. 3, Paris, 1902, p. 70-79.
28. Noradounghian G., Recueil..., p. 79.

29. Гордлевский В. А., Силуэты Турции. "Избранные сочинения", т. III Москва, 1962, с. 127.
30. «Երկրի ծայնը», Թիֆլիս, 1906 թ., N 8, էջ 8:
31. «Մշակ», Թիֆլիս, 1878 թ., N 146:
32. Диллон Эм., Положение дел в Турецкой Армении. В кн.: "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.", Москва, 1896, с. 6.
33. «Մուրճ», Թիֆլիս, 1895 թ., N2, էջ 262:
34. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 524:
35. Չախսուրեան Գ., Պատմություն Բալահովիտի..., էջ 302:
36. Շահպազեան Յ., Քիրդո-հայ պատմություն, էջ 89-90:
37. Հայելի գործոց և աշխատութեանց Մկրտիչ վարդապետի Տիգրանեան, Կոստանդնուպոլիս, 1864, էջ 2:
38. Դիվան հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, էջ 63:
39. Նույն տեղում, էջ 62:
40. Чихачев П. А., Письма о Турции, с. 64.
41. Դիվան հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, էջ 59-61:
42. Ազգային տեսություն: Արևելյան խնդիրը և հայերը (ա. տ. և. թ.), էջ 186:
43. Նույն տեղում:
44. «Հայաստան», Լոնդոն, 1889 թ., օգոստոս, էջ 6:
45. «Հայաստան», 1890 թ., 1-15 դեկտեմբերի, էջ 5:
46. Նույն տեղում:
47. Чихачев П. А., Письма о Турции, с. 68-69.
48. Temon Ives, Les Arméniens, histoire d'un génocide, Paris, 1977, p. 52-53.
49. Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 153.
50. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, էջ 198-199:
51. Մոմճեան Գ., Հայ լեզուն քուրդ բերնի մեջ և փոխադարձաբար, Պէրոս, 1950, էջ 3:
52. Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 271.
53. Նույն տեղում, էջ 270:
54. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 127:
55. Նույն տեղում, էջ 128:
56. «Արժուի Վասպուրական», Կ. Պոլիս, 1863 թ., N 2:
57. Джемаль-паша, Записки, 1913-1919, Тифлис, 1923, с. 199.
58. Garzou Jean-Marie, Un Genocide exemplaire, Arménie 1915, Paris, 1975, p. 30.

59. Краткий обзор путешествия Г. И. Радде в Турецкую Армению в 1867 г. "Известия императорского русского географического общества", 1868, том IV, с. 236-241 (Այսուհետև ИИРГО).
60. Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, СПб, 1874, с. 3-6.
61. Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией, с. 159.
62. Րաֆֆի, Տաճկահայք (հայոց հարցը), էջ 98:
63. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 135-136:
64. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1111:
65. Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. Բ, Ժընեւ, 1912, էջ 65:
66. Նույն տեղում, էջ 50:
67. Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 71:
68. Նույն տեղում, էջ 72:
69. Տե՛ս Հայելի գործոց և աշխատութեանց...:
70. Այբբեմարան քրդերեն և հայերեն («Ալիֆպեճիչ գուրմանցի ու արմենի»), Կ. Պոլիս, 1860:
71. «Լապտեր լուսատու» (Զրայե ըռոնի), Կ. Պոլիս, 1866:
72. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից, Երևան, 1965, էջ 14-15:
73. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 290:
74. Չէյթունի գործերը, Քիւրտիսթանի եւ Մուշի վանորէից եւ վարժարաններու վիճակը, Կ. Պոլիս, 1869, էջ 9:
75. Կոստանոյան Է. Ա., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979, էջ 123:
76. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 61-62.
77. Գյուզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Պեյրուք, 1954, էջ 43-44:
78. Նույն տեղում, էջ 194-196: Տե՛ս նաև Խրիմյան Հայրիկ, «Ծրագիր բարենորոգմանց»: Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929, էջ 858-859:
79. Խրիմյան Հայրիկ, «Ծրագիր բարենորոգմանց», էջ 854:
80. Նույն տեղում, էջ 855:
81. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների..., էջ 16-17:
82. «Մշակ», Թիֆլիս, 1878, N 152:
83. Պետրոս Դուրյան, Երկեր, Երևան, 1947, էջ 21:
84. Ռաֆայել Պատկանյան, Երկերի ժողովածու, հատ. Ա, Երևան, 1963, էջ 109:
85. Դիվան հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, էջ 55-58:
86. Նույն տեղում, էջ 55-58:

87. Դիվան հայոց պատմության: Հարստահարություններ Տաճկահայաստանում, էջ 55-58:
88. Կիրակոսյան Ջ. Ա., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 53:
89. Նույն տեղում, էջ 45:
90. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1115:

ԳԼՈՒԽ III

1. Տե՛ս Սեդրոսյան Ս. Ա., "Новые османы" и борьба за конституцию 1876 г. в Турции, Москва, 1957; Сафрастян Р. А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван, 1985; Mardin S., The Genesis of Young Ottoman Thought, Princeton, 1962.
2. Ottoman Constitution. "Armenian Journal of International Law", N 2, 1909, p. 369.
3. Նույն տեղում, էջ 367-368:
4. Գուշակյան Թ., Խրիմյան Հայրիկ, Փարիզ, (ա. թ.), էջ 78:
5. Mariott J., The Eastern Question (Historical Study in European Diplomacy), Glasgow, 1958, p. 318-334.
6. Коллюбакин А. М., Материалы для военно-статистического ..., с. 67.
7. Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией, с. 326.
8. Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 106:
9. Պողոսյան Հ.Մ., Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ 145:
10. Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и трактаты, В кн. "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.", Москва, 1895 г, с. 58.
11. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, "Известия Штаба Кавказского Военного Округа", Тифлис, 1907, N 20, с. 2 (Այսուհետև ИШКВО).
12. Ատրպետ, ճիվաղը: Քյոռ Հուսեին փաշա քուրդը: Թիֆլիս, 1911, էջ 4:
13. Երեւանեան Գ. Ա., Պատմութիւն Չարսանձագի հայոց, էջ 91-93:
14. Անդրանիկ: Տերսիմ: Ճանապարհորդություն և տեղագրություն, էջ 221-222:
15. Ճանկուլեան Հ., Յիշատակներ հայկական ճգնաժամեն, Պոլիս, 1913, էջ 148:
16. Коллюбакин А. М., Материалы для ..., с. 82.
17. Կիրակոսյան Ջ. Ա., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), Երևան, 1978, էջ 30-31:
18. Ճանկուլեան Հ., Յիշատակներ հայկական ճգնաժամեն, էջ 51:

19. Նավասարդեան Վ., Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 25:
20. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), էջ 30-31:
21. Գուշակյան Թ., Խրիմյան Հայրիկ, էջ 82-83: Տե՛ս նաև Աճեմյան Հ., Հայոց հայրիկ, Թավրիզ, 1929: Աճեմյան հայոց հայրիկ, Պոսթըն, 1957:
22. Գուշակյան Թ., նույն տեղում, էջ 84:
23. Коллюбакин А. М., Материалы для ..., с. 115.
24. Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Ереван, 1977, с. 157.
25. Տե՛ս "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., с. 312.
26. Адонц Н. Из истории армянского вопроса. "АН АрмССР, Центр научной информации по общественным наукам. Научно-информационный бюллетень. Арменоведение за рубежом", серия III, N 7 (72), с. 52.
27. Кишмишев С. О, Война в Турецкой Армении 1877-1878 гг., СПб, 1884, с. VI.
28. Արամ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Բ հատոր, Լոս Աճելըս, 1952, էջ 253:
29. «Մշակ», 1882, N 11:
30. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968, էջ 191: Վարդանյան Հ. Գ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 84:
31. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները..., էջ 137-138:
32. Բաֆֆի, Տաճկահայք (հայոց հարցը), էջ 20:
33. «Մասիս», Կ. Պոլիս, 1887, էջ 1885:
34. «Մասիս», 1877 թ., հունիսի 19:
35. Վարանդեան Միք., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ա հատոր, Թեհրան, 1981, էջ 40:
36. Ադոնց Ն., Թուրքական հայտագիրը և Թուրքահայաստանը, «Հայկական հարց», հատ. Ա, էջ 67:
37. Ադոնց Ն., Թուրքիայի անդամահատումը, «Հայկական հարց», հատ. Ա, էջ 110:
38. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 110:
39. Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 92:
40. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), էջ 151:

41. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները..., էջ 138:
42. «Մշակ», Թիֆլիս, 1879 թ., N 6:
43. Ваакн Н. Дадрян, История армянского геноцида. Этнографический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 2007, с. 43-44.
44. Շահպազեան Յ., Քիրո-հայ պատմութիւն, էջ 156:
45. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները..., էջ 140:
46. Livre Jaune, Affaires Arméniens. Projets de réformes dans l'Empire Ottoman 1893-1897. Doc. N 6, p. 10-13.
47. Լազեան Գ., Հայաստան և հայ դատը, Գահիրե, 1957, էջ 51-52:
48. «Փորձ», Թիֆլիս, 1879 թ., N 6-8, էջ 204-205:
49. "Blue book" (Great Britain, Parliament. Stationary office), Correspondence, respecting the Turkey and the Persia. A century of diplomatic blue books. Ed. by H. Temperley and Lilian M. Penson, Turkey, 1880, no. 71.
50. «Հայաստան», Լոնդոն, 1889 թ., օգոստոս, էջ 6:
51. "Blue book", Turkey, 1879, n. 10, p. 8.
52. Гордлевский В. А., Силуэты Турции, с. 127.
53. Коллюбакин А. М., Материалы для ..., с. 122.
54. «Հայաստան», Լոնդոն, 1889 թ., օգոստոս, էջ 6:
55. Коллюбакин А. М., Материалы для..., с. 63.
56. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 105:
57. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), էջ 325:
58. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), էջ 44:
59. "Blue book" (Great Britain, Parliament. Stationary office), Correspondence..., N 4, p. 151.
60. Аверьянов П. И., Курды в войнах России ..., с. 164-165.
61. Российский государственный военно-исторический архив, ф. 450, д. 98, л. 28-29 (Այսուհետև ԲԳՎԻԱ).
62. Архив Внешней Политики Российской империи. (Այսուհետև ԱՎՊՐԻ), ф. 30, оп. 517, д. 15656, л. 5-8. Донесение К. П. Камсаракана А. Б. Лобанову-Ростовскому от 6 октября 1879 г.
63. Տե՛ս "Correspondence respecting the Turkish (Kurdish) invasion of Persia, - "Blue book Turkey", 1881. N 5, p. 16.
64. Камсаракан К. П. Вторжение шейха Обейд-Уллы в Персию в 1880 г. "Сборник географических, топографических и статистических материалов по Азии", вып. XI, СПб, 1884, с. 45 (Այսուհետև ՏԳՏՄԱ).
65. ԲԳՎԻԱ, ф. 450, д. 98, л. 16օб.
66. ԱՎՊՐԻ, СПб главный архив, 1-9, оп. 8, 1889 г., д. 29, л. 15-16.

67. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները..., էջ 145-146:
68. Սասունի Կ., Քիւրտ ..., էջ 146:
69. Լեո, Անցյալից, էջ 35:
70. Բաֆֆի, Տաճկահայք (հայոց հարցը), 108, 114, 116:
71. «Մշակ», 1880 թ., N 158:
72. «Մշակ», 1880 թ., N 166:
73. «Մուրճ», Թիֆլիս, 1906 թ., N 6, էջ 13-14:
74. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, հատ. Գ, Թիֆլիս, 1882, էջ 50-51:
75. «Մշակ», 1880 թ., N 158:
76. Լեո, Անցյալից, էջ 36:
77. «Մշակ», 1880 թ., N 135:
78. «Մշակ», 1880 թ., N 166:
79. «Մշակ», 1880 թ., N 168:
80. Բաֆֆի, Տաճկահայք (հայոց հարցը), էջ 117:
81. «Մշակ», 1880 թ., N 168:
82. Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, 1934, էջ 117:
83. «Մուրճ», 1906 թ., N 6, էջ 16:
84. Аверьянов П. И., Курды в войнах России ..., с. 228.
85. Եկատի ուներ 1856 թ. «Չաթթը հումայունը» և առհասարակ Թանգի-մաթի բարեփոխումները:
86. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 230.
87. АВПРИ, "Миссия в Персии", 1877-1896, оп. 528а, д. 1202, л. 12.
88. "Blue book", Turkey, 1881, N 5, p. 53-54.
89. "Correspondence respecting the Turkish (Kurdish) invasion..., p. 58.
90. АВПРИ, "Главный архив", д. 29, л. 47.
91. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 292.
92. «Մշակ», 1882 թ., N 216:
- 92ա. «Մշակ», 1882 թ., N 216:
93. Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները, էջ 233:
94. "Кавказ", Тифлис, 1880 г., N 343; «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1880 թ., N 98:
95. Շահպազեան Յ., Քիրո-հայ պատմութիւն, էջ 158:
96. «Մշակ», 1882 թ., N 244:
97. Коллюбакин А. М., Материалы для..., с. 80-81.
98. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ, Բեյրութ, 1973, էջ 212:

99. «Մշակ», 1880 թ., N 62:
100. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից, էջ 15-16:
101. «Մշակ», 1880 թ., N 211:
102. Երանեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, էջ 113:
103. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների ..., էջ 18:
104. «Մշակ», 1880 թ., N 162:
105. «Մշակ», 1880 թ., N 184:
106. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 36:
107. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 266:
108. Երեւանեան Գ. Ս., Պատմութիւն Չարսանձագի հայոց, (Ա. Ալպոյաճյանի գրած ներածությունը, էջ VIII):
109. Թոխմախյան Ա., Մասիս լեռների..., էջ 52:
110. Թոխմախյան Ա., Մասիս լեռների..., էջ 55-57:
111. «Հայաստան», Լոնդոն, 1890 թ., 1-15 դեկտեմբերի:
112. Փափազյան Վրթ., Նամակներ Թուրքաց Հայաստանից, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1959, էջ 422:
113. Լեո, Անցյալից, էջ 55:
114. «Հայաստան», 1889 թ., 1-15 մայիսի:
115. Гордлевский В. А., Силуэты Турции, с. 399.
116. Տամատեան Սիիրան (1863-1945), գրեց Պ. Յ. Տեփոեան, Գահիրե, 1956, էջ 39:
117. «Հնչակ», 1889, սեպտեմբեր, N 3:
118. Լեո, Անցյալից, էջ 57:
119. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 7716, л. 554.
120. Лойко, Битлисский вилайет, "Известия МИД", СПб, 1913, с. 123.
121. Cuinet V., La Turquie d'Asie, vol. II, p. 399.
122. Տե'ս Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:
123. Термен Р. И., Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909, с. 75.
124. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1962, էջ 254:
125. «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910 թ., N 205:
126. Իզմիրյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 129:
127. Նույն տեղում, էջ 135:
128. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 11.
129. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 250.

130. «Անահիտ», 1900 թ., N 1-5, էջ 132:
131. Карцев А., Заметки о курдах, с. 41.
132. Հանքարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 376:
133. РГВИА, ф. 450, д. 127, л. 43.
134. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 242-243.
135. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, с. 18.
136. Карнаухов М., Кавказ, Турция и Персия. Военно-статистический очерк, Тифлис, 1908, с. 18.
137. Creagh J., Armenians, koords and turks, vol. 1-2, London, 1880, p. 182.
138. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 11.
139. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, с. 21.
140. Малькольм Макколь, Ответственность Англии перед Арменией. В книге: "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", Москва, 1896, с. 163.
141. Լեո, Անցյալից, էջ 103:
142. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 193:
143. АВПРИ, ф. 30, оп. 517, д. 1571, л. 5.
144. Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, с. 11.
145. Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и трактаты, с. 161.
146. Contenson L. de, Chrétiens et Musulmans, Voyages et études, Paris, 1901, p. 49-50; Контансон Людовик де, Реформы в Азиатской Турции, Армянский вопрос, Москва, 1914, с. 26.
147. St'ou "Documents diplomatiques français", 1871-1914", Paris, 1^{ère} série (1871-1907), vol. 11, p. 72-73.
148. Taylor E., The Fossil Monarchies, London, 1962, p. 156.
149. Deliorman Altan, Turklere Karsi Ermeni Komitecileri, Istanbul, 1973, s. 34.
150. St'ou Yalcin Ayhan, Belgelerin işiginda Türk-Ermeni Meselesinin içyüzü, Istanbul, 1975.
151. Macler Fr., Les arméniens en Turquie, - "Revue du monde musulman", 1913, Septembre, p. 152.
152. Սասունի Կ. Քյուրտ ազգային շարժումները..., էջ 158:
153. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1907 г., д. 4087, л. 76-79.
- 153ա. St'ou Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, с. 36.
154. Аверьянов П. И., Курды в войнах России..., с. 241-242.
155. Колюбакин А. М., Материалы для..., с. 180-181.
156. Սասունի Կ. Քյուրտ ազգային շարժումները..., էջ 157:
157. Отчет о поездке по Азиатской Турции ген. штаба подполковника Томилова в 1904 г., ч. 1, СПб, 1907, с. 68.

158. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница, с. 22, 25.
159. Երեւանեան Գ. Ա., Պատմութիւն Չարսանճազի հայոց, էջ 94-96:
160. АВПРИ, "Политархив", 1889-1894 гг., л. 87.
161. АВПРИ, ф., "Среднеазиатский стол", 1892 г., д. 43, л. 217-218.
162. «Անահիտ», 1901, N 3:
163. "Материалы по изучению Востока", вып. I, СПб, 1909, с. 72-73.
164. «Անահիտ», 1901 թ., N 3:
165. Ատրպետ, ճիվաղը: Քյոռ Յյուսեին փաշա քուրդը, էջ 8:
166. "Blue book", Turkey, 1892, no. 1, p. 23.
167. Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и трактаты, с. 161.
168. Said pašanin hatirati, Istanbul, 1323, s. 373.
169. «Հայաստան», 1891 թ., 1-15 փետրվարի:
170. Диллон Эм., Положение дел в Турецкой Армении. с. 329.
171. АВПРИ, ф., "Политархив", 1889-1894 гг., д. 1630, л. 187.
172. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, ք. 19-20: «Սուրճ», 1894 թ., N 10, հոկտեմբեր, էջ 1596:
173. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 435: Адамов А., Ирак Арабский. (Бассорский вилайет в его прошлом и настоящем), СПб, 1912.
174. Բդեան Սարգիս և Սիսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 67:
175. St'ou Лазарев Як. Д., Причины бедствий армян в Турции...
176. Ալփոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 435:
177. Walker J. Christopher, Armenia. The Survival of a Nation. New York, 1980, p. 146-147.
178. Лазарев Як. Д., Причины бедствий армян в Турции..., с. 102.
179. Բդեան Սարգիս և Սիսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 65:
180. Диллон Эм., Положение дел в Турецкой Армении, с. 7.
181. Թառոյան Կ., Ժողովրդական շարժումները Սասունում, Երևան, 1966, էջ 92:
182. Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 143:
183. Նույն տեղում, էջ 148-149:
184. Маевский В. Т., Ванский вилайет. Военно-статистическое описание, Тифлис, 1901, с. 165.
185. Walker J. Christopher, Armenia, p. 145-146.
186. Նույն տեղում, էջ 176:
187. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1895 г., д. 26, т. II, л. 505-506.
188. St'ou Гордлевский В. А., Силуэты Турции, с. 117.
189. Bravley E. A., Hodgetts Round about Armenia, London, 1896, p. 100.
190. Սասունի Կ. Քյուրտ ազգային շարժումները..., էջ 159:

191. Термен Р. И., Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1809, с. 89.
192. АВПРИ, ф., "Политархив", 1895, д. 985, л. 397.
193. Вакс Л., Очерки истории национально-буржуазных революций на Востоке (1905-1914), Москва-Ленинград, 1931, с. 58.
194. Термен Р. И., Отчет о полевой поездке..., с. 51.
195. Բղէան Սարգիս և Միսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 74-76:
196. Маевский В. Т., Ванский вилайет, с. 146.
197. Լեոն, Թուրքահայ յեղափոխութեան զաղափարաբանութիւնը, հ. Ա, էջ 65:
198. Փարամազի ճառը, Շիրակո, 1919, էջ 30:
199. Ազիզյան Ս., Հերոսական Շատախի Արմաշտ գյուղը, Բեյրութ, 1974, էջ 11-12:
200. «Մուրճ», 1903 թ., N 12, էջ 84-85:
201. Маевский В. Т., Ванский вилайет, с. 179-180.
202. Սասունի Կ, Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 587:
203. «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1900 թ., N 1-5, էջ 132:
204. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ, էջ 212-213:
205. Անդրանիկ, Տերսիմ, էջ 69:
206. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1901 г., д. 1587, л. 6.
207. Contenson L. de, Chrétiens et Musulmans, p. 192.
208. Նույն տեղում, էջ 120-121:
209. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854, с. 34.
210. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1897 г., д. 3516, л. 1-4.
211. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ, էջ 226:
212. Տե՛ս Инджикян О. Г., Буржуазия Османской империи, с. 60.
213. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1898 г., д. 26, л. 491-492.
214. Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, том II, Тифлис, 1910, с. 331.
215. Տե՛ս "Verhandlungen der Gessellschaft für Erdkunde", Berlin, 1900, Band, 27, s. 132.
216. Термен Р. И., Отчет о полевой поездке..., с. 60.
217. Бекгулянц Р. (Северянин), По Турецкой Армении, с. 32.
218. «Դրօշակ», 1901 թ., N 5 (116):
219. АВПРИ, ф., "Политархив", 1901 г., д. 1000, л. 212-213.
220. «Դրօշակ», 1901 թ., N 7 (118):
221. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1907 г., д. 4087, л. 76-79.
222. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 72.
223. «Դրօշակ», 1899 թ., N 2:
224. «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1900 թ., N 1-5, էջ 138-139:
225. «Մշակ», 1898 թ., N 117, 4 հուլիսի:
226. «Անահիտ» ամսագիր, 1900 թ., N 1-5, էջ 115:
227. Նույն տեղում, էջ 139:
228. Նույն տեղում, էջ 140:
229. Նույն տեղում, էջ 132-133:
230. Նույն տեղում:
231. Վարանդեան Ս., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ա. հատոր, էջ 271:
232. «Դրօշակ», 1901 թ., N 4 (115), էջ 67-68:
233. Նույն տեղում:
234. «Դրօշակ», 1901 թ., N 5, էջ 81:
235. Վարանդեան Ս., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ա. հատոր, Փարիզ, 1932, էջ 258:
236. Հնչակյան կուսակցության ծրագիր, 1887, էջ 18:
237. Սապահ-Գուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե, էջ 84-85:
238. Մալխաս, Ապրումներ, Բեյրութ, 1956, էջ 210:
239. «Դրօշակ», 1901 թ., N 5 (116):
240. «Անահիտ» ամսագիր, 1900 թ., N 3, էջ 88-89:
241. АВПРИ, ф., "Политархив", 1903 г., д. 1639, л. 139-141.
242. «Դրօշակ», 1903 թ., N 7, էջ 98:
243. «Դրօշակ», 1904 թ., N 11 (152), էջ 173:
244. Տե՛ս Смирнов К., События в Сасуне весной 1904 г., ИШКВО, 1904, N5-6; Սասուն-Մուշի կռիվները 1904-ին, Ժնև, 1906:
245. «Մուրճ», 1905 թ., էջ 93:
246. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները, էջ 173:
247. «Դրօշակ», 1904 թ., N 6 (147), էջ 79:
248. Նույն տեղում:
249. "Тифлисский листок", 1905, 7 октября.
250. АВПРИ, ф., "Политархив", 1905 г., д. 539, л. 41.
251. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, л. 2-3.
252. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1908 г., д. 38, л. 176-177.
253. Wiedemann M., Ibrahim Paschas Glück und Eende, "Asien", 1908, N 3, s. 35-37.
254. Սյուրմեյան Գ., Երզնկա, Գահիրե, 1947, էջ 36:

255. «Մշակ», 1907 թ., N 124:
 256. ԲԴՄԻԱ, ֆ. 2000, օպ. 1, ճ. 991, լ. 557.
 257. Փանգրունի Դ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ, էջ 56:
 258. «Մշակ», 1907 թ., N 127:
 259. Basmadjian, Le mouvement revolutionnaire en Asie Mineure. "Revue du monde musulman", Paris, 1908, no. 4, p. 819-820.
 260. «Երկրի ծայնը», Թիֆլիս, 1906 թ., N 6, էջ 12:
 261. ԱՎՓՐԻ, ֆ., "Փոլիտարխիվ", 1908 թ., ճ. 1642, լ. 35.
 262. «Դրօշակ», 1908 թ., N 9 (189):
 263ա. ԱՎՓՐԻ, ֆ., "Փոլիտարխիվ", 1907 թ., ճ. 79, լ. 126; ճ. 641, լ. 275; 1908 թ., ճ. 542, լ. 52.
 263. Ergin O., Türkiyede maarif tarihi, cilt 3., Istanbul, 1941-1942, s. 979.
 264. «Երկրի ծայնը», 1908 թ., N 2, էջ 12-13:
 265. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 183.
 266. ԱՎՓՐԻ, ֆ., "Փոլիտարխիվ", 1907 թ., ճ. 79, լ. 126; ճ. 641, լ. 275; 1908 թ., ճ. 542, լ. 52.
 267. "Тифлисский листок", 1907 թ., 11 октября.
 268. Термен Р. И., Отчет о полевой поездке, с. 57.
 269. "Санкт-Петербургские ведомости", 1905 թ., 10 июля.
 270. «Մշակ», 1907, N 101:
 271. «Երկրի ծայնը», 1907 թ., N 6-18, էջ 1-2:
 272. Զորավար Սմբատի հուշերը, Ա հատոր (1900-1914), Փարիզ, (ա. թ.), էջ 194:
 273. «Երկրի ծայնը», 1907 թ., N 6-18, էջ 1-2:
 274. «Երկրի ծայնը», 1907 թ., N 6-18, էջ 1-2:
 275. «Դրօշակ», 1908 թ., N 9 (189), էջ 2:
 276. «Դրօշակ», 1908 թ., N 9 (189), էջ 4:
 277. Վարանդեան Ա., Դ. Յ. Դաշնակցության պատմություն, հատ. Բ, Փահիրե, 1950, էջ 9:
 278. «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1909 թ., N 3732:
 279. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 71.
 280. «Բյուզանդիոն», 1908 թ., N 3, 6 օգոստոսի:
 281. «Մշակ», 1908, N 202:
 282. Ramsaur E. E., The Young Turks. Prelude to the Revolution of 1908, New York, 1957, p. 92.

283. Burchard B., Zu einigen Problemen der Geschichte der Kurdischen Nationalbewegung, Wissenschaftliche Zeitschrift der Martin Luther Universität. XIII, 1964, s. 681; Никитин В., Курды, с. 284.
 284. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 70.
 285. Սաաունի Կ., Բյուրստ ազգային շարժումները, էջ 206:
 286. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 147.
 287. Սաաունի Կ., Բյուրստ ազգային շարժումները, էջ 205:
 288. Никитин В., Курды, с. 290.
 289. Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, с. 113.
 290. ԱՎՓՐԻ, ֆ. "Փոսօլտստվօ Եոնստանտինօօլս", 1909 թ., ճ. 2677, լ. 15-17.
 291. "British Documents on the Origins of the War 1898-1914", vol. 5, London, 1933, p. 253.
 292. «Դրօշակ», 1908 թ., N 10 (196), օգոստոս, էջ 113:
 293. «Բյուզանդիոն», 1909 թ., N 3760, 7 փետրվարի:
 294. ԱՎՓՐԻ, ֆ. "Փոսօլտստվօ Եոնստանտինօօլս", 1908 թ., ճ. 1595, լ. 76.
 295. Инджикян О. Г., Буржуазия Османской империи, с. 39.
 296. Об отношениях курдов в Азиатской Турции к турецкому правительству. "Сборник Главного управления Генерального штаба", вып. II, СПб, февраль, 1910 г., с. 61.
 297. Счастье и смерть Ибрагима паши. (Эпизод из сражений курдов в Малой Азии). Пер. с немец. Н. Каблицкого, ИШКВО, 1909 թ., 2-я треть, N 26, с. 46-48.
 298. ԱՎՓՐԻ, ֆ., "Փոլիտարխիվ", 1908 թ., ճ. 1644, օպ. 482, լ. 83; ճ. 716, լ. 135.
 299. Центральный государственный исторический архив Грузии, ф. 521, д. 492, л. 51, 113 (Այսուհետև՝ ԱԴԻԱ Գրուզիա).
 300. ԲԴՄԻԱ, ֆ. 2000, ճ. 7692, լ. 6.
 301. ԱՎՓՐԻ, ֆ., "Փոլիտարխիվ", ճ. 544, օպ. 482, լ. 10 օօ.
 302. ԱՎՓՐԻ, ֆ. "Կանցելարիա ՄԻԴ", 1910 թ., ճ. 149, լ. 15-17.
 303. ԱԴԻԱ Գրուզիա, ֆ. 15, ճ. 299, լ. 78.
 304. Նույն տեղում, թ. 78-79: ԱՎՓՐԻ, ֆ. "Փոսօլտստվօ Եոնստանտինօօլս", 1907-1913 թթ., ճ. 3572, լ. 11-12.
 305. ԱՎՓՐԻ, ֆ. "Կանցելարիա ՄԻԴ", 1909 թ., ճ. 33, լ. 118-119, 123.
 306. ԱԴԻԱ Գրուզիա, ֆ. 521, ճ. 492, լ. 34.
 307. Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914), Երևան, 1974, էջ 200-201:
 308. ԱԴԻԱ Գրուզիա, ֆ. 521, օպ. 2, ճ. 492, լ. 112-113.
 309. Նույն տեղում, թ. 36-37:

310. Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը, էջ 48-106:
311. Zarzecki S., La question kurdo-arménienne, - "La revue de Paris", apr. 15, N 8, 1914, p. 888.
312. Бекгулянц Р. (Северянин), По Турецкой Армении, с. 75-76.
313. Երեւանեան Գ. Ս., Պատմութիւն Չարսանճագի հայոց, էջ 392:
314. ЦГИА Грузии, ф. 521, оп. 2, д. 492, л. 133.
315. АВПРИ, ф., "Политархив", 1909 г., д. 717, л. 52-53.
316. РГВИА, ф. 2000, д. 7716, л. 31.
317. ЦГИА Грузии, ф. 521, оп. 2, д. 492, л. 112-113. Տե՛ս նաև Ատոմ, Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910:
318. «Մշակ», 1909 թ., N 155:
319. «Մշակ», 1909 թ., N 144:
320. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, л. 351-351 об.
321. Ատրպետ, Գիվաղը: Քյոռ Յյուսեի՛ն փաշա քուրդը, էջ 24:
322. АВПРИ, ф., "Политархив", 1910 г., д. 718, оп. 482, л. 60.
323. ЦГИА Грузии, ф. 521, д. 492, л. 133.
324. ЦГИА Грузии, ф. 13, оп. 1, д. 802, л. 51-52.
325. ЦГИА Грузии, ф. 521, оп. 2, д. 492, л. 86-87.
326. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 71.
327. ЦГИА Грузии, ф. 13, оп. 1, д. 802, л. 114.
328. Гордлевский В. А., Силуэты Турции, с. 128.
329. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1910 г., д. 33, л. 118-119, 123.
330. Լեո, Անցյալից, էջ 239:
331. Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914-1918), Կ. Պոլիս, 1921, էջ 3:
332. Uriel Heyd, Foundation of Turkish Nationalism, London, 1950, p. 190.
333. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1911 г., д. 1602, л. 60-69.
334. Տե՛ս Ջորավար Անդրանիկ և իր պատերազմները, գրեց Արսեն Մարմարյան, Կ. Պոլիս, 1920:
335. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները, էջ 195:
336. «Դրօշակ», թիվ 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր 1909 թ.:
337. Նույն տեղում:
338. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 200-201:
339. Նույն տեղում, էջ 202:
340. АВПРИ, ф., "Политархив", 1911-1914 гг., д. 179, л. 64-65; Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917 гг., серия II, 1900-1913, т. 20, ч. II, Москва, 1940, с. 231.

341. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 149-150:
342. «Բյուզանդիոն», 1913 թ., N 5040:
343. Ջորավար Անդրանիկ և իր պատերազմները, էջ 164:
344. АВПРИ, ф., "Политархив", 1912-1913 гг., д. 546, л. 140-141.
345. «Բյուզանդիոն», 1912 թ., N 907:
346. Ջարևանը, ինչ կը ծրագրեն թուրքերը՝ Միացյալ անկախ Թուրանիա: Ա. տ., 1926, էջ 128:
347. Տե՛ս Գարո Արմեն, Ապրված օրեր, Պեյրուս, 1948, էջ 192:
348. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 266:
349. Porбах П., Война и германская политика, Москва, 1915, с. 62.
350. Rohrbach P. Die anatolische Bahn. Sonderabdruck aus den Preußischen Jahrbüchern. Band 110, 3 Heft, Berlin, 1902, s. 391-392.
351. "Die Grosse Politik der Europäischen Kabinette. 1871-1914". Berlin, 1926, band 38, s. 15333-15334.
352. Аветян А. С., Германский империализм на Ближнем Востоке, Москва, 1966, с. 44.
353. Տե՛ս Лойко Л. П., Битлисский вилайет, с. 119.
354. «Մշակ», 1913 թ., N 94:
355. Сборник дипломатических документов Министерства иностранных дел. Реформы в Армении. 26 ноября 1913 г. - 10 мая 1914 г., Петроград, 1915, с. 45.
356. Контансон Людовик де, Реформы в Азиатской Турции, с. 9-10.
357. Zarzecki S., La question kurdo-arménienne, - "La revue de Paris".
358. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 285:
359. «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1913 թ., N 5041:
360. Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի..., էջ 7:
361. Տե՛ս Геноцид армян в Османской империи., с. 265-266.
362. Տե՛ս Гисаров М. А., Курдский вопрос в Турции (от начала кемалистского движения до Лозаннской конференции). «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», VII, Քրդագիտություն, Երևան, 1975, էջ 44: Dersimi Nur, Kürdistan tarihinde Dersim, Halep, 1952, s. 120-121.
363. Ադոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 41-42:
364. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, էջ 291:
365. «Մշակ», 1913 թ., N 246:

366. «Բաքվի ծայր», 1913 թ., N 129:
367. АВПРИ, ф. "Политархив", 1911-1914 гг., д. 719, оп. 482, л. 50-51.
368. АВПРИ, ф. "Миссия в Персии", 1913 г., д. 69, л. 172.
369. ЦГИА Грузии, ф. 15, оп. 1, д. 372, л. 129-133.
370. Лазарев М. С., Курдский вопрос (1891-1917), с. 234.
371. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1913 г., д. 1605, л. 134-135.
372. Տե՛ս Քանալ Սազզհար Ահմադ, Քուրդիստան ֆի սանավաթ ալ-հարր ալ-ալամիա ալ-ուլա, Բաղդադ, 1977, էջ 52, 265: (Արաբերեն լեզվ.):
373. «Բյուզանդիոն», 1913 թ., N 5043:
374. «Մշակ», 1914 թ., N 109:
375. ЦГИА Грузии, ф. 521, д. 492, л. 112-113.
376. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1912-1913 гг., д. 3573, л. 247.
377. АВПРИ, ф. "Политархив", 1912-1914 гг., д. 546, л. 140-141.
378. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1912-1914 гг., д. 3573, л. 83. Տե՛ս նաև Кавказский военный округ. "Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой", N 42, Тифлис, 1913 г., стр. 40.
379. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1913 г., д. 2684, л. 89-90.
380. Кавказский военный округ. "Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой", N 57, Тифлис, 1913 г., стр. 4-5.
381. Նույն տեղում, էջ 4-5:
382. «Մշակ», 1913 թ., N 206:
383. Кавказский военный округ. "Сводка сведений ...", N 57, 1913 г., стр. 1-3.
384. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1914 г., д. 1606, л. 19-21.
385. Տե՛ս Лойко Л. П., Битлисский вилайет, "Известия МИД", СПб, 1913, кн. 2, стр. 26-27.
386. АВПРИ, ф. "Персидский стол", 1911 г., д. 1204, л. 34.
387. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 211-212:
388. Лойко Л. П. Битлисский вилайет, стр. 115-130; Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1914 թ., N 5:
389. «Մշակ», 1914 թ., N 64:
390. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1912-1914 г., д. 3573, л. 340.
391. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 73.
392. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 991, л. 525.
393. «Բաքվի ծայր», 1914 թ., N 86:
394. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 311:
395. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 310:
396. «Մշակ», 1914 թ., N 64:
397. «Մշակ», 1914 թ., N 76:
398. Նույն տեղում:
399. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 330:
400. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 991, л. 417-430.
401. «Բյուզանդիոն», 1914 թ., N 318:
402. «Բյուզանդիոն», 1914 թ., N 308:
403. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 214:
404. ЦГИА Грузии, ф. 85, д. 149, л. 63-64.
405. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 333:
406. Бекгуляни Р. (Северянин). По Турецкой Армении, стр. 76-77.
407. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 308:
408. «Մշակ», 1914 թ., N 64:
409. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 208:
410. «Մշակ», 1914 թ., N 75:
411. «Բյուզանդիոն», 1914 թ., N 5, էջ 308:
412. ЦГИА Грузии, ф. 85, д. 149, л. 45-50.
413. Տե՛ս "Международные отношения в эпоху империализма". Документы из архивов царского и временного правительств. 1878-1917 гг., серия III, том II, стр. 297-298.
414. Տե՛ս Восточный сборник, кн. 1, СПб, 1913, стр. 233-234; Джалиле Джалил, Журнал "Рожа курд" как источник изучения курдской общественно-политической мысли начала XX в. - "Страны и народы Ближнего и Среднего Востока", том VII, Курдоведение, Ереван, стр. 75-89.
415. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1913 г., д. 1405, л. 192-193.
416. Տե՛ս Jung E., La révolte Arabe. Vol. I, Paris, 1924, s. 184.
417. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1913-1914 гг., д. 3573, л. 309-310.
418. АВПРИ, ф. "Посольство в Константинополе", 1913 г., д. 1605, л. 117, 135.

ԳԼՈՒԽ IV

1. Չորմիսյան Լևոն, Կուսակցությունները, Երևան, 1995, էջ 71-72:
2. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. II, Москва, 1932, с. 203.
3. St'u Larcher M., La guerre turque dans la guerre modiale, Paris, 1926, p. 41.
4. Memories of Halide Edip, New York, London, p. 347.
5. Trumpener U., Germany and the Ottoman Empire 1914-1918. Princeton, 1968, p. 15, 28.
6. Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, Москва, 1966, с. 60.
7. Տե՛ս Մեվլան Չատե Բիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 71:
8. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1914 г., д. 110, л.л. 15-16.
9. АВПРИ, ф. Миссия в Персии, 1914, д. 85, л. 80-81, 95.
10. ЦГИА Грузии, ф. 521, д. 603, л. 7-8, 29-30.
11. Տե՛ս Բայրուրդյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները..., էջ 336:
12. "Сводка сведений о сопредельных стран, добытых разведкой". Штаб Кавказского военного округа, 1913, N 42, стр. 33.
13. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1914 г., д. 110, л.л. 15-16, т. 1, л. 100. РГВИА, ф. 2000, оп. 1, д. 104, л. 148.
14. АВПРИ, ф. "Канцелярия МИД", 1914 г., д. 55, л. 808.
- 15ա. Jung E., La révolte Arabe, vol. I, p. 109-110.
15. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 218-219: Տե՛ս նաև Othman S., Participation des Kurdes dans le massacre des Armeniens 1915. Critique socialiste, Paris, 1982, N 44.
16. Նույն տեղում, էջ 217:
17. Nikitine, Les Kurdes, Etude sociologique et historique. Paris, 1956, p. 195.
18. St'u Powell E. A., The Struggle for Power. Muslim Asia, New York, 1923, p. 135; Archibald Hamilton, Road through Kurdistan: The Narrative of an Engineer in Iraq, London, 1958, p. 92.
19. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 218:
20. Նույն տեղում:
21. "Армянский вестник», 1916, N 3, стр. 3; Барби А., В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919, стр. 53-55.
22. Տե՛ս Կатоев Х. М., Курды Советской Армении, Ереван, 1965, стр. 40.
23. Курдское движение в новое и новейшее время, стр. 77.

24. Nikitine, Les Kurdes, p. 222.
25. "Армянский вестник», 1916, N 23, стр. 1-2.
26. Տե՛ս Փափազյան Դ., Հայ հեղափոխությունը և հարևան ժողովուրդները, «Իրան-նամե», 1955 թ., թիվ 4-5, (Գ. Ասատրյանի «Խմբագրության կողմից» խոսքը), էջ 9:
27. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 222:
28. Архив В. П. Никитина (в Институте востоковедения АН Российской Федерации. Папка I, IV, рукопись "Les Kurdes et le Kurdistan (Chemdinan)", N 95, s. 363-364.
29. Bedirhan Ciladet, Türkiye Cumhuriyeti Reisi Mustafa Kemal Paşa Hazretlerine açık mektup, 1933.
30. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 220-221:
31. Նույն տեղում:
32. The Massacres of Kurds in Turkey, Cairo, 1928, p. 9; Safrastian A., Kurds and Kurdistan, p. 76-81.
33. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 222:
34. Նույն տեղում, էջ 228:
35. Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, том I, Москва, 1929 г., предисловие В. Гурко-Кряжина, стр. XXXIII.
36. Նասիպեան Ազապի, Բրիտանիա և Հայկական հարցը 1913-1923 թթ., Պէրոս, 1994, էջ 87:
37. Նույն տեղում, էջ 72:
38. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, с. 5-6.
39. Նույն տեղում, էջ 10-11:
40. Ллойд Джордж Д, Военные мемуары, т. V, Москва, 1938, с. 54.
41. Darwin John. Britain, Egypt and the Middle East. Imperial Policy in the Aftermath of War. 1918-1922, New York, 1981, p. 162.
42. Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е. А. Адамова, Москва, 1924, с. 158-159.
43. Lloyd George D., The truth about the Peace Treaties, London, 1938, p. 1118.
44. Papers Relating to the Foreign Relations of the United States". (Այսուհետև՝ PRFR), 1917, Supplement 1, p. 6-8.
45. Pernot, La question Turque, Paris, 1923, s. 263.
46. Архив полковника Хауза. Подготовлен к печати профессором истории Изльского университета Чарльзом Сеймуром, т. III, Москва, 1939, стр. 227, 233.

47. Ключников Ю. В., Сабанин А. В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России, Москва, 1926, N 88, стр. 109.
48. "Congressional Record", vol. LXIV, part 3, p. 2496.
49. Papers Relating to the Foreign Relations of the United States". (Այստեղևտև PRFR), 1919. The Paris Peace Conference", vol. II, Washington, 1942, p. 272.
50. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. 2, с. 447.
51. "Papers Relating to the Foreign Relations of the United States", 1919, The Paris Conference, vol. I, Washington, 1942, p. 33.
52. Նույն տեղում, էջ 43-44, 52:
53. Williams W. A., Some Presidents. From Wilson to Nixon, New York, 1972, p. 31-32.
54. "Armenia and Her Claims to Freedom and National Independence". Memorandum Presented by Mr. Logge. Washington Government Printing Office, 1919, p. 3, 6, 7-8.
55. Նասիպեան Ա., Բրիտանիան..., էջ 132:
56. Lansing R., The Peace Negotiations. A Personal Narrative, London, 1927, p. 171.
57. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, էջ 58:
58. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 223:
59. Նույն տեղում, էջ 224:
60. Nikitine B., Les Kurdes racontés par eux-mêmes, L'Asie Francaise, Paris, 1925, N 231, p. 24-25.
61. St'iu Harry N. Howard, The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1932.
62. "Раздел Азиатской Турции", стр. 154-157; Ключников Ю. В., Сабанин А. В., Международная политика..., ч. II, Москва, 1926, стр. 40-41.
63. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 391:
64. Նույն տեղում:
65. Hurewitz J. C., Diplomacy in the Near and Middle East: A documentary Record, vol. II, 1914-1956, Princeton, 1956, p. 20-22.
66. Раздел Азиатской Турции, стр. 160-161.
67. Նույն տեղում, էջ 170-171:
68. Раздел Азиатской Турции, стр. 207-209.
69. Раздел Азиатской Турции, стр. 211-212.
70. Հայաստանի «ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր ինպերիալիստական պատերազմի շրջանից, Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926:
71. Раздел Азиатской Турции, стр. 138.
72. Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 385-386:
73. Ллойд Джордж Д., Военные мемуары, т. V, с. 52.
74. Lord Beaverbrook, Men and Power 1917-1918, London, 1956, p. 92, 344.
75. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 123, 127:
76. Lloyd George D., The truth about the Peace Treaties, London, 1938, p. 1118.
77. Precis of Affairs in Southern Kurdistan during the Great War. Baghdad, 1919, p. 7-9.
78. Bell G., Review of the Civil Administration of Mesopotamia, London, 1920, p. 60.
79. Schmidt D. A., Journey among Brave Men. Boston-Toronto, 1964, p. 192-193; Yung E., La Revolte arabe, p. 109-110.
80. Wilton Arnold T., Mesopotamia 1917-1920. A Clash of Loyalties. A personal and Historical Record, London, 1931, p. 84-86.
81. Schmidt D. A., Journey among Brave Men, p. 192-193; Yung E., La Revolte arabe, p. 109-110.
82. Մելիքյան Վ. Հ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և հայկական հարցը 1917 թ., «Պատմա-բանասիրական հանդես», 1994, թիվ 1-2, էջ 115-131: ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության մասին տե՛ս Игнатъев А. В., Внешняя политика временного правительства, Москва, 1974.
83. История дипломатии, т. III, Москва, 1965, с. 44.
84. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999 թ., էջ 13:
85. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 14-15:
86. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., 1997, էջ 15:
87. Սասունի Կ., Թրքահայաստանը և Աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրուք, 1996, էջ 152:
88. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., էջ 14-15:
89. Նասիպեան Ա., Բրիտանիա և հայկական հարցը, էջ 116:
90. Walker Chr., Armenia. The Survival of a Nation, p. 246-247.
91. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, էջ 10:
92. Հովհաննիսյան Ռիչարդ Գ., Հայաստանի Հանրապետություն, հատ. 1, Երևան, 2005, էջ 21:
93. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 117:
94. Հայաստանը միջազգային դիվանագիտության ..., էջ 415:

95. Шамсутдинов А. М., Участие султанской Турции в интервенции против Советской России в 1918 г. "Ученые записки Института востоковедения", т. XIV. История и экономика стран Ближнего и Среднего Востока, Москва, 1956, с. 168.
96. Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, с. 161-162.
97. Allen W. E. D., Muratoff Paul, Caucasian Battlefields. A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1818-1921, Cambridge, 1953, p. 459-460.
98. Матвеев К. П. (Бар-Маттай), Мар-Юханна И. И., Ассирийский вопрос во время и после первой мировой войны (1914-1933 гг.), Москва, 1968, с. 64-79.
99. Allen W. E. D., Muratoff Paul, նշվ. աշխ., էջ 460:
100. PRFR, 1918. Russia, vol. II, p. 623-624.
101. Лудшувейт Е. Ф., նշվ. աշխ., էջ 193-197:
102. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, էջ 9:
103. Սասունի Կ., Բյուրտ ազգային շարժումները..., էջ 224-225:
104. Նույն տեղում:
105. Նույն տեղում:
106. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 153, л. 38.
107. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 36, л. 106-107; д. 37. л. 55.
108. Precis of Affairs in Southern Kurdistan, p. 7-8.
109. Лазарев М. С., Империализм и курдский Вопрос, стр. 21.
110. Mariote L., The Eastern Question, p. 405.
111. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հատ. 3, գիրք առաջին, մաս Ա, Երևան, 2004, էջ 152:
112. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նույն տեղում, էջ 153:
113. Նույն տեղում, էջ 153:
114. «Դրօշակ», 1928, թիվ 78:
115. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 161:
116. Черчилль У., Мировой кризис, Москва-Ленинград, 1932, с. 278.
117. Ադոնց Ե., Հայկական հարց, հատ. Ա, էջ 66:
118. «Ասպարեզ», 1918, թիվ 488:
119. Սասունի Կ., Բյուրտ ազգային շարժումները..., էջ 229:
120. Darwin John, Britain, Egypt and the Middle East, p. 162.
121. Սասունի Կ., Բյուրտ ազգային շարժումները..., էջ 229:
122. Նույն տեղում:
123. Սասունի Կ., Բյուրտ ազգային շարժումները..., էջ 230:
124. Մեվլան Ջատե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան..., էջ 185:
125. Նույն տեղում:
126. Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատ. 1, էջ 59:
127. Նույն տեղում, էջ 60:
128. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 127:
129. Harold Nicolson, Curzon: The Last Phase 1919-1925, London, 1934, p. 136.
130. Ключников Ю. В., Сабанин А. В., Международная политика новейшего времени, ч. II, Москва, 1926, с. 188-189.
131. Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 147:
132. St'u Précis of Affairs..., p. 10-11.
133. Մեվլան Ջատե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ժալքերը և իրօրհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 199:
134. Zinnar Silopi, Doza Kurdistan, [ա. տ.], 1969, էջ 60:
135. Toker M., Şeyh Sait ve isyani, Ankara, 1968, s. 115.
136. Ляхути, Курдистан и курды, - "Новый Восток", 1923, кн. 4, с. 66.
137. Ireland Ph. W., Iraq. A Study in Political development, London, 1937, p. 155.
138. St'u Stafford R. S., The Tragedy of the Assyrians, London, 1935; J. Joseph, The Nestorians and their Muslem Neighbours, Princeton, 1961.
139. Précis of Affairs..., p. 10-11.
140. Лазарев М. С., Империализм и курдский вопрос, с. 68.
141. Bell G., Review..., p. 66.
142. Bell G., Review..., p. 69.
143. Nassibian A., Britain and the Armenian Question, 1915-1923, London, 1984, p. 139-142.
144. Précis of Affairs..., p. 7.
145. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 153, л. 20.
146. Noel E. W. C., major. Note on the Kurdish Situation, July 1919, Baghdad, 1919, p. 11.
147. St'u Nader Entessar, Kurdish Ethnonationalism. London, 1992.
148. Dersimi M. N., Kürdistan Tarihinde Dersim, s. 120-121.
149. Bell G., Review..., p. 66-67, 70.
150. Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատ. I, էջ 279:
151. Նույն տեղում, էջ 280:
152. Նույն տեղում:
153. Օրմեն Սայամենթ, Քրդական ազգայնականություն - դրդողներ և պատմական ազդեցություններ, «Դրօշակ», 1990, թիվ 6-7 (1253), էջ 58:

154. Great Britain. Foreign Office. Historical Department, "Armenia and Kurdistan", ծեռագիր, թիվ 62, 1920. (Յիսուսն է ըստ Օթմեն Ա., նշվ. աշխ., էջ 58):
155. Wilson N. Howell, The Soviet Union and the Kurds. A Study of National Minority Problems in Soviet Policy, University of Virginia, 1965, p. 143.
156. Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատ. I, էջ 285:
157. Ключников Ю. В., Сабанин А. В., Международная политика новейшего времени, ч. II. От империалистической войны до снятия блокады с Советской России. М., 1926, N 88, с. 109. Տե՛ս նաև A History of the Peace Conference of Paris. Ed. by H. W.V. Temperley. vol. VI, London, 1924.
158. "Congressional Record", vol. LXVI, part 3, p. 2496.
159. Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատ. I, էջ 285:
160. Տե՛ս Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատ. I, էջ 285:
161. Wilson W., The New Democracy. Presidential Messages. Addresses and Other Papers (1913-1917), Ed. By R. S. Baker and W. E. Dodd, vol. II, New York, 1926, p. 413.
162. Greel G., The War, the World and Wilson, New York, 1920, p. 163.
163. Thompson J. M., Russia, Bolshevism and the Versailles Peace, Princeton, 1966, p. 19.
164. Lamont T., Across World Frontiers, New York, 1950, p. 112.
165. Кейнс Дж. М., Экономические последствия Версальского договора, М. Л., 1924, с. 13, 17-18, 25.
166. Никольсон Г., Как делался мир в 1919 г., Москва, 1945, стр. 204.
167. Тарле Е. В., Сочинения, т. 5, Москва, 1958, с. 454.
168. Ллойд Джордж Д, Военные мемуары, т. V, Москва, 1937, с. 41.
169. Tumuley J., Woodrow Wilson as I Know Him, New York, 1921, p. 340.
170. Սյր գրքի ռուսական կրճատ հրատարակությունը տե՛ս Вудро Вильсон, Мировая война и версальский мир, М., 1923.
171. Lansing R., The Peace Negotiations. A Personal Narrative, London, 1927, p. 174.
172. PRER, 1919, The Paris Peace Conference, vol. I, Washington, 1942, p. 69.
173. PRER, vol. XI, Washington, 1945, p. 576.
174. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. I, Москва, 1955, с. 167.

175. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т. I, Москва, 1929, стр. 29-30.
176. Réponse du président de la Conférence de la Paix au Memorandum présenté par la délegation Ottomane. Paris, 25 juin, 1919, p. 1-4.
177. PRFR, 1919, The Paris Peace Conference, vol. I, Washington, 1942, p. 691-694.
178. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. II, с. 203.
179. "Papers Relating ...", vol. I, p. 711.
180. "Papers Relating ...", vol. I, p. 577-580.
181. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. II, с. 206.
182. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т. I, с. 291.
183. Kinross Lord, The Ottoman centuries, London, 1977, p. 169.
184. PRFR, vol. V, Washington, 1946, p. 707-711.
185. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. II, с. 393.
186. The King-Crane Report on the Near East. A Superessed official Document of the US Government. Editor and Publisher LV, 27 (December 2, 1922).
187. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 190-191:
188. Տե՛ս Report of the American Military Mission to Armenia. May, Gen. James Harbord US Army, Washington, 1919.
189. PRFR, vol. V, p. 711.
190. Տե՛ս Miller David Hunter, The Drafting of the Covenant. New York - London, 1928, vol. II, p. 109-110.
191. Նույն տեղում: Տե՛ս նաև Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. I, с. 529-531.
192. Miller David Hunter, նշվ. աշխ., հ. I, էջ 186:
193. Miller David Hunter, նշվ. աշխ., հ. II, էջ 220:
194. Նույն տեղում, էջ 223, 226:
195. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. II, с. 199-200.
196. Նույն տեղում, հատ. I, էջ 529-531:
197. Howard H. N., The Partition of Turkey, p. 221.
198. PRFR, The Paris Peace Conference, vol. IV, Washington, 1943, p. 153.
199. Silopi Z., Doza Kurdistan, Kürd Milletin' in 60 Senedenberi Esaretten Kurtuluş savaşı, Hatirati, 1969, s. 166.
200. Տե՛ս General Shérif Pasha. Memorandum on the Claims of the Kurd people, Paris, 1919.
201. Лазарев М. С., Курдский вопрос..., с. 137.
202. Bell G., Review..., p. 65-66.
203. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 153, л. 2.

204. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 147, л. 26; Տե՛ս նաև Лазарев М. С., Курдский вопрос..., с. 74-75, 114-116.
205. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 154, л. 2.
206. Նույն տեղում, թերթ 1, 20:
207. Տե՛ս Rambout R., Les Kurdes et le droit. Des textes, des faits, Paris, 1947, p. 24. Տե՛ս նաև A History of the Peace Conference of Paris, vol. VI, London, 1924; Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 235:
208. Սասունի Կ., Քյուրտ ազգային..., էջ 235:
209. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 77.
210. Մհարրոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Քաղաքական օրագիր 1919-1927, Երևան, 2001, էջ 41-42:
211. Documents on British Foreign Policy, 1919-1939. 1st Series, vol. IV, London, 1952, N 621, p. 928 (Դետագայուն DBFP).
212. Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 235:
213. Նույն տեղում, էջ 236:
214. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 236:

ԳԼՈՒԽ V

1. Մեվյան Ջատե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան..., էջ 202:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, էջ 203:
6. Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 540-541:
7. Նույն տեղում, էջ 541:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 542:
10. Նույն տեղում, էջ 582:
11. Նույն տեղում, էջ 478:
12. Նույն տեղում, էջ 549:
13. Նույն տեղում, էջ 546-548:
14. Նույն տեղում, էջ 565:
15. Pémot Maurice, La Question Turquie, p. 282-295.
16. Pech Edgar, Les Alliés et la Turquie, Paris, 1925, p. 80.
17. Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т. 1, стр. 414; т. II, стр. 381; Aşkun V. E., Sivas kongresi, Istanbul, 1963, s. 127.
18. Pémot Maurice, նշված աշխ., էջ 313:

19. Տե՛ս Karal E. Z., Türkiye Cumhuriyeti Tarihi (1918-1960), Istanbul, 1963, s. 52.
20. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т. 1, стр. 222-223. Քեմալյան շարժման մասին տե՛ս Ататюрк Кемаль. Избранные речи и выступления, Москва, 1966.
21. Տե՛ս Kinnane Derek, The Kurds and Kurdistan, London-New York, 1964, p. 25.
22. Toynbee A. J. Survey of International Affairs, vol. I, London, 1927, p. 479-480.
23. Nezan Kendal, The Kurds in the Ottoman Empire. People without a country. "Kurds and Kurdistan", ed. Gerard Chaliand, London, 1980, p. 34.
24. Kutschera Chris, Le mouvement national Kurde, Paris, 1971, p. 32.
25. Նույն տեղում:
26. DBFP, 1919-1939, First Series, vol. IV, p. 704-705.
27. Նույն տեղում, էջ 705, 714:
28. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т. 1, стр. 9.
29. Նույն տեղում, էջ 203-204, 208-209:
30. DBFP, 1919-1939, First Series, vol. II, London, 1948, p. 563-564. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 190, л. 50.
31. Лазарев М. С., Мгон Ш. Н., Васильева Е. И., Гасратян М. А., Жигалина О. И., История Курдистана, М., 1999, с. 246.
32. DBFP, vol. XVII, N 288, p. 301.
33. Aşkun V. E., Sivas Kongresi, s. 73.
34. Նույն տեղում:
35. Memorandum sur la situation des Kurdes et leurs revendications, présenté à: Mr. Trygve Lee aux Etats membres de L.O. N. U. P., "Bulletin du Centre de l'études Kurdes", Paris, 1948, p. 2.
36. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, стр. 99-100.
37. Мустафа Кемаль, Путь ..., т. 1, стр. 101.
38. Atatürk K., Nutuk, Cilt I, Istanbul, 1962, s. 68-69.
39. Atatürk K., Nutuk, Cilt III, s. 940.
40. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, Москва, стр. 231-238.
41. Atatürk K., Nutuk, Cilt II, Istanbul, 1962, s. 940.
42. Gologlu M., Uçüncü Meşrutiet, 1920, Ankara, 1970, s. 81.
43. Aşkun V. C., Sivas Kongresi, s. 149.
44. Kemali A., Erzincan Tarihi, coğrafi, içtimai, etnografi, idari, ihsai tetkikat tecrubesi, Erzincan, 1932, s. 951.
45. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, стр. 255-256.

46. Blau G., La problème Kurde, Bruxelles, 1963, p. 147; Badr Khan, The Case of Kurdistan against Turkey, New York, 1928, p. 37.
47. Dersimi M. N., Kürdistan Tarihinde Dersim, s. 122-129.
48. St'u Howard H. N., The King-Crane Commission. An American Inquire in the Middle East, Beirut, 1963, p. 161, 166, 168.
49. Howard H. N., The King-Crane, p. 172.
50. Dersimi M. N., Kürdistan Tarihinde ..., s. 122-129.
51. Howard H. N., The King-Crane..., p. 173.
52. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 231:
53. Սասունի Կ., Զյուրտ ազգային շարժումները..., էջ 230:
54. Նույն տեղում:
55. Նույն տեղում:
56. Firat M. S., Doğu illeri ve Varto tarihi, Ankara, 1961, s. 117-118.
57. Курдское движение в новое и новейшее время, Москва, 1987, стр. 93.
58. Նույն տեղում, էջ 94:
59. Bedir Khan, La Question Kurde, Paris, 1959, s. 9-10.
60. Dersimi M. N., Kürdistan Tarihinde Dersim, s. 130; Kemali A., Erzincan. Tarihi, coğrafi..., s. 163.
61. Dersimi M. N., նշվ. աշխ., էջ 146:
62. Edmonds C. Y., Kurds, Turks and Arabs. Politics, travel and research in North-Eastern Iraq (1919-1925), London, 1957, p. 245-246.
63. St'u Документы внешней политики СССР, т. 4, Москва, 1960, с. 406.
64. Гасратян М. А., Курды Турции в новейшее время, Ереван, 1990, стр. 45.
65. Nader Entessar, Kurdish Ethnonationalism, p. 12. St'u նաև Beşikçi I., Kurdistan üzerinde emperyalist bölüşüm mücadelesi 1915-1925, birinci baski, Ankara, 1992.
66. Սասունի Կ., Զյուրտ ազգային շարժումները..., էջ 265:
67. St'u Кемаль М. А., Национально-освободительное движение в Иракском (Южном) Курдистане 1918-1932, кандидатская диссертация, Москва, 1963.
68. Аралов С. И., Воспоминания советского дипломата (1922-1923), Москва, 1960, стр. 107-108.
69. Toker M., Şeyh Sait ve isyani, Ankara, 1968, s. 22. Cemal B., Şeyh Sait ve isyani, Istanbul, 1955.

1. DBFP, vol. IV, p. 735-736.
2. Նույն տեղում, էջ 742:
3. Նույն տեղում, էջ 743:
4. DBFP, vol. IV, p. 813-815.
5. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 153, л. 20.
6. DBFP, vol. IV, p. 815.
7. Նույն տեղում, էջ 892-895:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 912-914:
10. DBFP, vol. XIII, p. 54-55.
11. Նույն տեղում, էջ 56-57:
12. St'u Lord Beaverbrook, Politicians and the War 1914-1916, London, 1960, p. 191-192.
13. Նասիպեան Ա., Բրիտանիան..., էջ 179:
14. Bell G., Review..., p. 71; АВПРИ, ф. НАИ, серия А, д. 154, л. 34-35.
15. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 154, л. 66.
16. Лазарев М. С., Империализм и курдский вопрос, с. 107, 292.
17. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 154, л. 63.
18. Սահրոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, էջ 64-67:
19. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 190, л. 121.
20. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, т. 2, с. 447.
21. Նույն տեղում:
22. DBFP, vol. VIII, p. 252.
23. DBFP, vol. VIII, N 5, p. 43-44.
24. DBFP, vol. VIII, N 5, p. 43-44; St'u նաև Лазарев М. С., Империализм и курдский вопрос, с. 158.
25. DBFP, vol. VIII, N 8, p. 77.
26. St'u Ключников Ю. В., Севр и Лозанна. К дипломатической истории договоров. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, 1927; Treaty of Peace with Turkey, signed at Sévres, August 10, 1920. The Frontier between Armenia and Turkey. As decided by President Woodrow Wilson, November 22, London, 1920.
27. Foreign Relations of the United States. Diplomatic Papers, 1920, vol. VIII, p. 792, 795-804.
28. Արոնց Ն., Հայկական հարցը Սևրում, Հայկական հարց, հատ. Ա, էջ 121:
29. Նույն տեղում, էջ 122-123:

30. Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам, док. N XCII.
31. Աղոնց Ն., Հայկական հարց, հատ. Ա, էջ 131:
32. Քաջազնունի Հ., Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 51:
33. Миллер А. Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, Москва, 1983, с. 125.
34. Տե՛ս Մեծկան Ջատե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան..., էջ 176:
35. Տե՛ս Ключников Ю. В. и Сабинин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть III, Москва, 1929, стр. 33-34; Севрский мирный договор..., стр. 24-25.
36. Սաաունի Կ., Քյուրտ ազգային շարժումները..., էջ 239:
37. Նույն տեղում:
38. Никитин В., Курды, стр. 292.
39. Лазарев М. С., Империализм и курдский вопрос, с. 191.
40. Տե՛ս Gavan S. S., Kurdistan, p. 7.
41. Тоунбее А., նշվ. աշխ., հատ. I, էջ 192:
42. Նույն տեղում:
43. Տե՛ս A History of the Peace Conference of Paris, vol. VI, p. 31.
44. Черчилль У., Мировой кризис, с. 271.
45. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 337:
46. Documents on British Foreign Policy, vol. XV, International Conferences and Conversations 1921, N 26, p. 213-214.
47. Նույն տեղում, N 24, էջ 194, 197-198:
48. Documents on British Foreign Policy, vol. XV, International Conferences and Conversations 1921, N 26, p. 213-214.
49. Տե՛ս օրինակ, DBFP, vol. XVII, London, 1970, N 41.
50. Տե՛ս Шамсутдинов А. М., Национально-освободительная борьба в Турции, 1918-1923, Москва, 1966, стр. 238-239.
51. Գաբրիել Լազեան, Հայաստան և հայ դատը, էջ 283:
52. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 341:
53. Նույն տեղում:
54. Նույն տեղում, էջ 342:
55. Лазарев М. С., Империализм и курдский вопрос, с. 247.
56. DBFP, vol. XV, N 65, p. 441.
57. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 348:
58. Pernot Maurice, La Question Turque, Paris, 1923, s. 253.
59. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 350:
60. Ключников Ю. В., Севр и Лозанна, с. XXIV-XXVI.

61. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 356-357:
62. Նույն տեղում, էջ 357:
63. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 378:
64. Նույն տեղում, էջ 391-392:
65. Նույն տեղում, էջ 394:
66. Նույն տեղում, էջ 395-398:
67. Армянский вопрос на Лозаннской конференции, с. 27.
68. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 398-399:
69. Армянский вопрос на Лозаннской конференции, с. 19-20.
70. Նույն տեղում:
71. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 402:
72. Safrastian A., Kurds and Kurdistan, p. 78.
73. Darwin John, Britain, Egypt and the Middle East, p. 209.
74. Documents on British Foreign Policy, 1919-1939, vol. XVIII, N 289, p. 405.
75. Документы внешней политики СССР, т. 4, Москва, 1960, с. 154-155 (Այսուհետև ДВП).
76. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. IV, с. 140.
77. АВПРИ, ф. НАИ, серия А, д. 26, л. 86-93.
78. Նույն տեղում, p. 104-108.
79. Bedir Khan E., La Question Kurde, p. 9.
80. Dersimi M. N., Kürdistan Tarihinde, s. 189.
81. Beşikçi I., Doğu Anadolunun Düzeni, 2 baskı, İstanbul, 1970, s. 288.
82. DBFP, 1919-1939, vol. XIII, N 289, p. 405.
83. «Սարխարուն», 1988 թ., փետրվար:
84. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, с. 145.
85. Նույն տեղում, էջ 152-154:
86. Bedir-Khan C., La Question Kurde, p. 10.

1. Лазарев М. С., Империализм и курдский вопрос (1923-1945), Москва, 2005, с. 47.
2. Նույն տեղում, էջ 50:
3. Olson R., The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925, Austin, 1989, p. 97; Olson R., Tucker W. The Sheikh Said Rebellion in Turkey (1925). - "Welt des Islams", Leiden, 1978, vol. 18, N. 3-4.
4. Toker M., Şeyh Sait ve isyanı, Ankara, 1968, s. 22.
5. ДВП, т. 4, стр. 406.
6. Гасратян М. А., Курды Турции в новейшее время, с. 103; Տե՛ս նաև նույն հեղինակի "Политика турецких правящих кругов к курдскому населению (1924-1939)", "Краткие сообщения Института народов Азии", т. 30, 1964.
7. Гасратян М. А., Նույն տեղում, էջ 104:
8. Armstrong H. G., Grey Wolf. Mustafa Kemal, An Intimate Study of Dictator, London, 1938.
9. Kökdemir N., Eski ve yeni toprak, iskan hükümleri ve uygulama klavuzu. Ankara, 1952, s. 28-30.
10. Никитин В., Курды, стр. 90.
11. Silopi Z., Doza Kurdistan, s. 110.
12. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները, էջ 242:
13. Ghassemlou A. R., Kurdistan and the Kurds, Praha, 1965, p. 53-54.
14. Elphinston W. G., The Kurdish Question – International Affairs, 1946, vol. 23 (January N 1), p. 96.
15. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները, էջ 262:
16. Նույն տեղում, էջ 263-264: Տե՛ս նաև Акопов А., Курдский вопрос и дашнаки. – "Большевик Закавказья", 1931, N 2, с. 38.
17. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 263:
18. Հղումը ըստ Гасратян М. А., Курды..., с. 153.
19. Silopi Z., նշվ. աշխ., էջ 114-116.
20. Акопов А., Курдский вопрос..., с. 37.
21. Акопов А., Курдский вопрос..., с. 38.
22. Հովհաննիսյան Հ., Հուշեր, մասն Բ, Երևան, 1996, էջ 14:
23. Հովհաննիսյան Հ., նշվ. աշխ., էջ 14-15:
24. Arfa H., The Kurds, p. 39.
25. Ю. К. В Курдистане неспокойно. – Бюллетень прессы Среднего Востока, Ташкент, 1928, N 4-5, с. 73-74.

26. Armstrong H. C., Grey Wolf, Mustafa Kemal, p. 324.
27. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 284:
28. Arfa H., The Kurds, p. 41.
29. August K., Le Pays de Kemal Ataturk, Leipzig, 1938, p. 30.
30. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 280-281:
31. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, вып. II, Москва, 1929, стр. 304-305.
32. Иран. Очерки новейшей истории, Москва, 1976, стр. 87, 119.
33. Васильев К., Причины и движущие силы курдских восстаний. "Аграрные проблемы", Москва, 1931, кн. 9-10, стр. 112.
34. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 293:
35. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 285:
36. Gavan S. S., Kurdistan: divided nation, p. 26.
37. Atatürkün söylev ve demeçleri, Cilt 1, Istanbul, 1945, s. 349.
38. Bedirhan C. A., Mektub Türkiye Reiscumhur Çazi Mustafa Paşa hazretlerine, 1933, s. 76.
39. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 295:
40. Memorandum sur la situation des Kurdes, p. 18.
41. Гасратян М. А., Курды..., с. 161.
42. Սասունի Կ., Քյուրտ ..., էջ 289:
43. Նույն տեղում, էջ 290:
44. Նույն տեղում:
45. Նույն տեղում, էջ 291:
46. Nader Entessar, Kurdish Ethnonationalism, p. 12.
47. Иран. Очерки новейшей истории, с. 141-142.

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	
XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ.....	29
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ՀԱՅ – ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՄԱՆ	
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ.....	86
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՔՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՈՒԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ	
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.....	108
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ	
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ 1919 Թ. ՓԱՐԻՋԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ.....	220
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ	
ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐԶ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ	
ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....	287
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ	
ՔՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՍԵՎՐԻՑ	
ՄԻՆՉԵՎ ԼՈՋԱՆ ԸՆԿԱԾ ՇՐՋԱՆՈՒՄ.....	313
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ	
XX ԴԱՐԻ 20-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔՐԴԱԿԱՆ	
ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՔԵՄԱԼԱԿԱՆ ՄԱՍԼԻՉԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ	
ՄԵՋ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԷՋԵՐ.....	344
ՎԵՐՋԱՔԱՆ.....	362
SUMMARY.....	366
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	371
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	420
CONTENTS.....	421

Acknowledgments.....	4
Foreword.....	5
Chapter 1	
The Armenian-Kurdish Relations in Western Armenia in the	
First Half of the Nineteenth Century.....	29
Chapter 2	
The Armenian-Kurdish Relations on the Eve of Emergence	
of the Armenian.....	86
Question.....	86
Chapter 3	
The Kurds and the Armenian Question Since the Congress of	
Berlin until the First World War.....	108
Chapter 4	
The Armenian and the Kurdish Questions During the	
Years of the First World War	
and at Paris Peace Conference of 1919.....	220
Chapter 5	
The Kemalist Movement and the Position of Turkish Nationalists	
Towards the Armenian and the Kurdish Questions.....	287
Chapter 6	
The Reflections of the Kurdish and Armenian Questions	
in the Period Between Sèvres to Lausanne.....	313
Chapter 7	
The Kurdish Uprisings of 20-30s of the Twentieth Century:	
the Kemalist Squeezing Force in Action and New Pages of	
Armenian-Kurdish Cooperation.....	344
Conclusion.....	362
Summary.....	366
Commentaries.....	371
Contents.....	421
Author's Biography.....	423

ՎԱՅԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ

ՔՐԴԵՐԸ, ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՐՅԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱՎԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

ВАН БАЙБУРТЯН

КУРДЫ, АРМЯНСКИЙ ВОПРОС И АРМЯНО-КУРДСКИЕ
ОТНОШЕНИЯ В СВЕТЕ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ

ՏԵՆԻՎԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ՝
ԱՎԱԳՑԱՆԻ

ԳԱՅԱՆԵ ԲՈՒՐՅԱՆ
ՀԱՅՎԱՆՈՒՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՍԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^ա

ԲԱՅԲՈՒՐՅԱՆ ՎԱՅԱՆ ԱՈՒՔԵԼԻ



Արևելագետ, պատմաբան, միջազգայնագետ, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է 1933 թ. Վրաստանի Ախալցխա քաղաքում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան (իրանական) բաժինը: Ասպիրանտական ուսումնառություն անցել է Մոսկվայում, Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում: Աշխատել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում, Երևանի Ս. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում (ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, պրոռեկտոր), Երևանի պետական համալսարանում (միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր), Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանում Արևելագիտության և ռոմանո-գերմանական ֆակուլտետների ղեկան, արևելագիտության ամբիոնի վարիչ):

1992 թ. անցել է դիվանագիտական աշխատանքի: 1992-1998 թթ. եղել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպանը: Նրան շնորհվել է արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

1992 թ. անցել է դիվանագիտական աշխատանքի: 1992-1998 թթ. եղել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպանը: Նրան շնորհվել է արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

2-ափազանց ընդգրկում ու լայն է պրոֆեսոր Վ. Բայբուրտյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը. Իրանի և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմություն, հայ ժողովրդի և Հայկական հարցի պատմություն, հայ զաղթաբանների պատմություն, հայ առևտրական կապիտալի պատմություն, հայ-իրանական պատմական և միջպետական հարաբերություններ, քրդագիտություն և հայ-քրդական հարաբերություններ, միջազգային հարաբերություններ, քաղաքականություն և այլն:

Վահան Բայբուրտյանի գիտական հետազոտություններն ամփոփված են Հայաստանում և արտասահմանում տարբեր լեզուներով հրատարակված մի շարք մեծածավալ մենագրություններում և բազմաթիվ հոդվածներում, որոնք նրան բերել են միջազգային ճանաչում: Նրա մենագրություններից են «Նոր Ջուղայի հայկական գաղութը XVII դարում (Նոր Ջուղայի դերը իրանա-եվրոպական քաղաքական և տնտեսական կապերում)» (Երևան, 1969, ռուսերեն), «Նոր Ջուղա» (Երևան, 2007թ.), «Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914 թ.թ.», (Երևան, 1974), «Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դարի սկզբներին» (Սպահան, 1976, պարսկերեն), «Իրանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» (Երևան, 1984), «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» (Երևան, 1989), «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը» (Թեհրան, 1996), «Հայերի դերը միջազգային առևտրի մեջ XVII դարում» (Թեհրան, 1996, պարսկերեն), «Իրանն այսօր» (Երևան, 1999), «Միջազգային առևտուրը և հայ վաճառականները XVII դարում» (Նյու Դելի, 2004, անգլերեն), «Իրանի պատմություն» (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը), (Երևան, 2005) և այլն: